

**ՀԱՅԱՍՏԱՆԸ  
ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ**

ԵՐԵՎԱՆ  
2014

ՀՏԴ 355/359 (479.25):941(479.25)  
ԳՄԴ 68.49(2Հ)+63.3(2Հ)  
Հ 247

Հ 247      Հայաստանը պատերազմներում.- Եր.:Նորավանք, 2014.- 434 էջ

Գրքում «Նորավանք» հիմնադրամի հրատարակած «Մեր հաղթանակները» քառահատորի հիման վրա համառոտ ներկայացված է Հայաստանի մոտ հինգհազարամյա ռազմական պատմությունը: Գրքում տեղ է գտել շուրջ հարյուր պատերազմների և ճակատամարտերի նկարագրությունը՝ սկսած Բելի դեմ Հայկ Նահապետի վարած ճակատամարտից մինչև Արցախյան պատերազմ: Պատերազմների և առանձին ռազմական գործողությունների վերլուծությունն ավելի պատկերավոր և ընկալելի են դարձնում կցված քարտեզները, սխեմաները և տվյալ ժամանակաշրջանին բնորոշ զինատեսակների նկարները:

«Հայաստանը պատերազմներում» գիրքը նախատեսված է ինչպես պատմության և ռազմարվեստի մասնագետների, այնպես էլ ընթերցողների ամենալայն շրջանակների համար:

ՀՏԴ 355/359 (479.25):941(479.25)  
ԳՄԴ 68.49(2Հ)+63.3(2Հ)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԳԼՈՒԽ I

<b>ՀԱՅԱՍՏԱՆԸ Ք.Ա. III-II ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ</b> .....	<b>6</b>
ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ. ՀԱՅԿԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԲԵԼԻ ԴԵՄ	7
ՀԱՅԱՍՏԱՆԸ Ք.Ա. III-II ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ	12
ԱՔԱԴԱ-ԱՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (Ք.Ա. XXIII-XXII ԴԱՐԵՐ)	18
ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻՑ ԱՌԱՋ	22
Ք.Ա. XVIII ԴԱՐԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ	27
ԱՆՆԻԱՍ. ՀԱՅԱՍՏ-ԽԵԹԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (Ք.Ա. 1340-1310-ԱԿԱՆ ԹԹ.)	30

### ԳԼՈՒԽ II

<b>ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՍՈՐԵՍԱՆԻ ԴԵՄ</b> .....	<b>37</b>
ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ	45
ՎԱՆԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ ԱՐԳԻՇՏԻ Ա-Ի ՕՐՈՔ	49
ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՉՈՐՄ ԾՈՎԵՐԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ	52
ՀԱՅԱՍՏԱՆԸ Ք.Ա. VII-IV ԴԴ.	58

### ԳԼՈՒԽ III

<b>ՀԱՅԱՍՏԱՆԸ Ք.Ա. III ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻ</b>	
<b>ԵՎ Ք.Ա. II ԴԱՐԻ ՍԿՁԲԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ</b> .....	<b>63</b>
ԱՐՏԱՇԵՍ Ա ԲԱՐԵՊԱՇՏ. ՄԻԱՎՈՐԻՉ ՀԱՂԹԱՐՇԱՎՆԵՐ	67
ՏԻԳՐԱՆ Բ ՄԵԾԻ ԵՎԱՃՈՒՄՆԵՐԸ	72
ՀԱՅ-ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (Ք.Ա. 87-86թթ.)	73
ԵՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ. ԱՍՈՐԻՔԻ, ՓՅՈՒՆԻԿԻԱՅԻ ԵՎ ՀՐԵԱՍՏԱՆԻ ՄԻԱՅՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆԸ (Ք.Ա. 83-70թթ.)	78

### ԳԼՈՒԽ IV

<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐԱԾ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ I-IV ԴԱՐԵՐՈՒՄ</b> .....	<b>82</b>
ՏԱՄՆԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ 54-64թթ.	84
ՀՈԱՆԴԵԱՅԻ ԸՆԿԱՏԱՄԱՐՏԸ (62թ.)	86
ՎԱՂԱՐՇ Բ. ՀԱՂԹԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ԿՈՎԿԱՍԻ ԼԵՈՆԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՄ	89
ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ III ԴԱՐՈՒՄ ԵՎ IV ԴԱՐԻ ՍԿՁԲԻՆ	92
ՊԱՏԵՐԱԶՄ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԻՄՈՒԺԱԾ ՄԱՋՔՈՒԹՆԵՐԻ ԴԵՄ 336-337թթ.	93
ՀԱՅ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 363-371թթ.	97
ԱՐՏԱԳԵՐՍԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԱՐՏԱԳՐՈՂԸ	103
ՊԱՐՍԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ 370թ.	106
ՁԻՐԱԿԻ ԸՆԿԱՏԱՄԱՐՏԸ 371թ.	108

### ԳԼՈՒԽ V

<b>ՊԱՅՔԱՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱՆԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ (V-IX ԴԴ.)</b> .....	<b>113</b>
ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ 450-451թթ.	116
ԽԱՂԽԱՂԻ ԸՆԿԱՏԱՄԱՐՏԸ 450թ.	117
ԱՎԱՐԱՅՐԻ ԸՆԿԱՏԱՄԱՐՏԸ (451թ. ՄԱՅԻՍԻ 26)	122
ՎԱՀԱՆԱՆՑ ԱՋԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 481-484թթ.	128
ՋԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԴԵՄ 571-572թթ.	132
ԽԱՂԱՄԱԽԻ ԸՆԿԱՏԱՄԱՐՏԸ ԵՎ ԱՊՍԱՄԲՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱԿԱՆ ԱՎԱՐՏԸ	133
ՊԱՐՍԿԱԿԱՆ ՉՈՐՔԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՕՉ ԲԵՐԴԱՔԱՂԱՔՈՒՄ 602թ.	136
ԱՋԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ VII-IX ԴԴ.	142
ԵՂԲԱՐՔ ՍԱՐԱԿԻ ԸՆԿԱՏԱՄԱՐՏԸ 643թ.	145

ՎԱՐԴԱՆԱԿԵՐՏԻ ԳԱԿԱՏԱՄԱՐՏԸ. 703Թ. ՓԵՏՐՎԱՐ .....	148
ԶԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ (774Թ.) .....	151
ՄՈՒՇԵՂ ՄԱՍԻԿՈՆՅԱՆԻ ՀԱԴԹԱՆԱԿՆԵՐԸ (774Թ.) .....	152
ՀԱԴԹԱՆԱԿՆԵՐԸ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ 849-855ԹԹ.	
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ .....	154
ՄՈՒՇԻ ԳԱԿԱՏԱՄԱՐՏԸ 851Թ. ....	155
ՔԹԻՇ ԱՄՐՈՑԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 854Թ. ....	160

**ԳԼՈՒԽ VI**

<b>ԱԿՆԱՐԿՆԵՐ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....</b>	<b>163</b>
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ .....	165
ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ԳԱԿԱՏԱՄԱՐՏԸ 863Թ. ....	167
ԱՇՈՏ Բ-Ի ՓԱՅԼՈՒՆ ՀԱԴԹԱՆԱԿՆԵՐԸ 924-925ԹԹ. ....	171
ՍԵՎԱՆԱ ԼԵԻ ԳԱԿԱՏԱՄԱՐՏԸ 925Թ. ....	174
ԾՈՒՄԲԻ ԳԱԿԱՏԱՄԱՐՏԸ 998Թ. ....	181
ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՓՈՒԼԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ .....	189
ԹՈՌՆԱԿԱՆՈՒՄ ԹՈՒՐՔՄԵՆԱԿԱՆ ՀՐՈՍԱԿԱՆՄԲԵՐԻ ՋԱԽՉԱԽՈՒՄԸ 1042Թ. ....	191
ԾԱՂԿՈՑԱԶՈՐԻ ԳԱԿԱՏԱՄԱՐՏԸ 1042Թ. ....	194
ԱՆԻԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ 1044Թ. ....	197
ՓՈԹՈՐԿԱԼԻՑ ՏԱՄՆԱՄՅԱԿԸ 1050-ԱԿԱՆ ԹԹ. ....	201
ՏՈՒՂՐԻԼԻ ՋՈՐՔԵՐԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԱԶԿԵՐՏԻ ՄՈՏ 1054Թ. ....	203
ԱՐԾՐՈՒՆԻ-ՋԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՂՅԱԸ .....	209
ՍԱՐԳԻՍ ՄԵԾԻ ՀԱԴԹԱՆԱԿՆԵՐԸ 1185-1186ԹԹ. ....	211
ՋԱՔԱՐԻԱ ՄԵԾ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆՅԱՆ ԱՐՇԱԿԱՆՔՆԵՐԸ 1208Թ. ԵՎ 1212Թ. ....	213

**ԳԼՈՒԽ VII**

<b>ԵՓՐԱՏԵՋԵՐՔԻ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b>	
<b>XI-XIII ԴԱՐԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ .....</b>	<b>223</b>
ՎԱՀՐԱՄ ՎԱՐԱԺՆՈՒՄՈՒ ՎԱՐԱԾ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ 1170-ԱԿԱՆ ԹԹ. ....	225
ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	230
ՊԱՏԵՐԱԶՄ ԿԻԼԻԿԻԱ ՆԵՐԽՈՒԺԱԾ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ	
ԵՎ ԼԱՏԻՆԱԿԱՆ ՋՈՐՔԵՐԻ ԴԵՄ 1130-1136 ԹԹ. ....	235
ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԻԿՈՆՍՏԱՅԻ	
ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՆԵՐԻ ՋԱԽՉԱԽՈՒՄԸ 1152-1154ԹԹ. ....	241
ԲՅՈՒՋԱՆԴԱՑԻՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎՏԱՐՈՒՄԸ ԿԻԼԻԿԻԱՅԻՑ 1172-1173ԹԹ. ....	244
ՀԱԴԹԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ԲՈԼՈՐ ԳԱԿԱՏՆԵՐՈՒՄ 1173Թ. ....	245
ԱԿՆԱՐԿՆԵՐ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ	
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	248
ՊԱՅՔԱՐ ՀԱԼԵՊԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐԱԾ	
ՌԱԶՄԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՋՈՐՔԵՐԻ ԴԵՄ 1203-1206ԹԹ. ....	249
ԴԱՐԲՍԱԿԻ ԳԱԿԱՏԱՄԱՐՏԸ 1205Թ. ....	255
1205-1206ԹԹ. ՀԱԴԹԱՐՇԱԿԸ ԱՍՈՐԻՔՈՒՄ .....	258
ՀԵԹՈՒՄ Ա. ՀԱԴԹԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԻԿՈՆՍՏԱՅԻ ԴԵՄ 1225-1249ԹԹ. ....	261
ՀԱՅ-ԻԿՈՆՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 1246-1249ԹԹ. ....	265
ՄԵՎ ԴՐՎԱԳ ՀԱՅՈՑ ԾՈՎԱՄԱՐՏԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	269

**ԳԼՈՒԽ VIII**

<b>ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՅՔԱՐԸ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ .....</b>	<b>272</b>
XVIII ԴԱՐԻ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ .....	274
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ .....	276
1724-1725ԹԹ. ՀԱԴԹԱՆԱԿՆԵՐԸ .....	279
ՄԵՂՐՈՒ ԳԱԿԱՏԱՄԱՐՏԸ (1725Թ.) .....	282

**ԳԼՈՒԽ IX**

**ՀԱՅԿԱԿԱՆ «ՈՒՋՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ» ՌՈՒՄ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՎ ՌՈՒՄ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ..... 292**

1826-1828թթ. ՌՈՒՄ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ..... 295

ՇԱՄՔՈՐԻ ԾԱԿԱՏԱՄԱՐՏԸ (1826թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3) ..... 300

1877-1878թթ. ՌՈՒՄ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ..... 304

ՂԱՐՈՒՅՆՔԻ (ԲԱՅԱԶԵՏ) ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ. 1877թ. ՀՈՒՆԻՍԻ 6-28 ..... 307

ԱԼԱԶԱՅԻ ԾԱԿԱՏԱՄԱՐՏԸ. 3 (15) ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1877թ. .... 311

ԱԿՆԱՐԿՆԵՐ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆԻՑ  
ԶԵՅԹՈՒՆԻ ԹՈՒՐԲԱԿԱՆ ԶՈՐԱՆՈՑԻ ԳՐԱՎՈՒՄԸ. 15-17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1895թ. .... 315

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԿԱՆՔԸ 1897թ. .... 319

ՍԱՍՈՒՆԻ 1904թ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ..... 321

ՀԱՅ ԿԱՄԱԿՈՐԱԿԱՆ ՎԱՇՏԸ ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ..... 324

ՀԱՅ ԿԱՄԱԿՈՐԱԿԱՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ  
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1914-1918թթ.) ..... 329

ԴԻԼՄԱՆԻ ԾԱԿԱՏԱՄԱՐՏԸ. 1915թ. ԱՊՐԻԼԻ 18 ..... 331

1915թ. ԱՐԵՎԱՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ  
ՄԱՐՏԵՐԻ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆԻՑ ..... 335

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ..... 338

ՍՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1915թ.) ..... 340

**ԳԼՈՒԽ X**

**ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՋՄԱԿԱՆ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆԻՑ ..... 350**

1918թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ ..... 352

ԲԱՇ-ԱՊԱՐԱՆԻ ԾԱԿԱՏԱՄԱՐՏԸ ..... 360

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆԻՑ ..... 364

ՆԺԴԵՀԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՂՈՍՆԱԿՆԵՐԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ  
(1919թ. ՆՈՅԵՄԲԵՐ-1920թ. ՀՈՒՆՎԱՐ) ..... 368

ԳՈՂԹԱՆԻ «ՊԱՏԱՆԱԿՐԱՑ ԱՐՇԱԿԱՆՔԸ» (1920թ. ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ) ..... 372

**ԳԼՈՒԽ XI**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԶՈՐԱՎԱՐՆԵՐԸ**

**ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ..... 376**

76-ՐԴ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌԱՀՐԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՀԱՐԶԱԿՈՒՄԸ  
(1942թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 19 -21) ..... 379

89-ՐԴ ԵՎ 409-ՐԴ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԻԶԻԱՆԵՐԻ ՀԱՐԶԱԿՈՒՄԸ  
(1943թ. ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ) ..... 384

**ԳԼՈՒԽ XII**

**ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ..... 392**

ԲՈՒԶԼՈՒԽ, ՄԱՆԱՇԻԴ ԵՎ ԷՐՔԵԶ ԳՅՈՒԴԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ  
(1991թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-18) ..... 401

ՇՈՒՇԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ (1992թ. ՄԱՅԻՍԻ 8-9) ..... 405

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ (1993թ. ՓԵՏՐՎԱՐ-ՀՈՒՆԻՍ) ..... 410

ՔԱՐՎԱՃԱՌԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ..... 415

ՄԱՐՏԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ (1993թ. ՀՈՒՆԻՍԻ 27) ..... 419

ԱՂՂԱՄԻ ԿՐԱԿԱԿԵՏԵՐԻ ԼՈՒՅՈՒՄԸ ..... 423

ԱՐՑԱԽԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ (1993թ.) ..... 425

**Պայմանական նշաններ ..... 429**

ԴԵՆՈՒՆԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԸ Բ.Ա. ՈՒ-ՈՒ  
ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ  
ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ**

# ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ. ՀԱՅԿԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԲԵԼԻ ԴԵՄ

Հայ ժողովուրդն իր ավանդական պատմությունը սկսում է Հայոց ձորի ճակատամարտում Բաբելոնի տիրակալ Տիտանյան Բելի զորքերի դեմ Հապետոսյան Հայկի (Հայկ Նահապետի) տարած հաղթանակով: Այն մեզ հայտնի է Պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» «Հայկ և Բել» վիպասքից: 2008թ. օգոստոսի 11-ին հայ ժողովուրդը տոնեց այս ճակատամարտի 4500-ամյակը: Այս պատկառելի տարեդարձը առիթ է վերինաստավորելու Հայոց պատմության բազմաթիվ հարցեր, այդ թվում ռազմական պատմությունը:

Պահպանելով հայ ժողովրդի պատմության ավանդական շարադրանքը և հետևելով «Մեր հաղթանակները» քառահատորի հիմքում դրված գաղափարներին՝ այս աշխատությունը ևս հարկ ենք համարում սկսել Հայոց ծորում Հայկ Նահապետի տոնած հաղթության նկարագրությամբ:

## Վիպասքը

Ըստ Պատմահոր՝ Հայկ Նահապետը, չկամենալով ենթարկվել բռնակալ Բելին, իր որդիների հետ հեռանում է հյուսիս՝ իր հայրենի երկիրը: Բելն իր որդու գլխավորությամբ պատվիրակություն է ուղարկում Հայկի մոտ, առաջարկում վերադառնալ ու հնազանդվել իրեն, սակայն, վճռական մերժում ստանալով, մեծ բանակով արշավում է Հայկի դեմ (տե՛ս քարտեզ 1.1):


Բելը հարձակունքը սկսում է հարավից և առաջին հարվածը հասցնում Հայկի թոռ Կադմոսի տիրույթներին (Կադմոսի տուն): Մովսես Խորենացին գրում է. «Տիտանյան Բելը... **հետևակ զորքի ամբոխով գալիս հասնում է հյուսիս, Արարատի երկիրը, Կադմոսի տան մոտ**»<sup>1</sup>:



Հայկ Նահապետի արձանը Երևանում

<sup>1</sup> Հատուկ շեշտվում է, թե Բելի բանակը բաղկացած էր միայն «հետևակից», ինչը վկայում է այն մասին, որ խոսքը հեծելազորի (մարտակառքերի) կիրառմանը նախորդած դարաշրջանի մասին է:

### ԲԵԼԻ ԱՐՇԱԿԱՆՔԸ ԴԵՊՈՒ ԴՅՈՒՄԻՍ ԵՎ ԶԱՅԿԻ ՁԵՌՆԱՐԿԱԾ ԶԱԿԱՔԱՅԼԵՐԸ



Կաղնոսը խուսափում է հակառակորդի հետ բախումից, *նահանջում* ու միանում հյուսիսից լիճը շրջանցելով՝ ընդառաջ շարժվող Չայկին: Բելը չի կարողանում խոչընդոտել Կաղնոսի ուժերի հետ Չայկի միավորվելուն:

Հակառակորդին երկրի կենտրոնական շրջաններ ներխուժել թույլ չտալու համար Չայկը որոշում է վճռական ճակատամարտում կանգնեցնել նրա առաջխաղացումը: Հակառակորդին ընդառաջ գնալով ու ճակատամարտի համար հարմար վայր հասնելով՝ Չայկը սպասում է, որ Բելի զորքն անցնի գետը:



Լայնալիճ աղեղ

## **ՀԱՅՈՑ ԶՈՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (Բ.Ա. 2492Թ. ՕՊՈՍՏՈՍԻ 11)**

Չայկն իր վրա է վերցնում կենտրոնի անմիջական հրամանատարությունը, աջ զորաթևը հանձնում է որդիներին՝ Արամանյակի գլխավորությամբ, ձախ թևը՝ թոռներին՝ Կաղնոսի գլխավորությամբ: Իսկ «մյուս բազմությունը» Չայկը կանգնեցնում է հետևում՝ կազմելով սեպածև մարտակարգ: Գիտակցելով զորաթևերի հրամկազմի զոհվելու մեծ հավանականությունը՝ Չայկը և՛ Արամանյակին, և՛ Կաղնոսին ոչ թե մեկական, այլ միանգամից երկուական տեղակալներ է նշանակում:


**Տեղեկանք.** Մարտից առաջ տեղակալի տեղակալ (մարտում հրամանատարի զոհվելու դեպքում տեղակալի և մարտի ընթացքում հրամանատարությունը ստանձնած տեղակալի զոհվելու դեպքում՝ երկրորդ տեղակալի) նշանակելու սկզբունքը եվրոպական երկրներում սկսեց կիրառվել միայն XVIIIդ. և պայմանավորված էր հրետանու արագածգության ու կրակի հզորության աճով: Հայոց բանակում հնագույն ժամանակներից կիրառվող այս սկզբունքի արդիականության մասին է վկայում և այն փաստը, որ նախօրոք երկրորդ (երրորդ) տեղակալի նշանակելու պահանջն այսօր պարտադիր է բոլոր երկրների բանակների մարտական կանոնագրքերում:

Ճակատամարտից առաջ դիմելով զորքին՝ Չայկն ասում է. *«Կամ մեռնենք և մեր ազգը Բելի ծառայության տակ ընկնի, կամ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի և մենք հաղթություն տոնենք»:* Հետևաբար, Չայկազուն սերունդներին ավանդվում է՝ ազգի նահապետից և թագավորից մինչև շինականը պատրաստ լինել հայրենիքի համար զոհվելու, և յուրաքանչյուրն իր տեղում հավասարապես պատասխանատու է հայրենիքի ազատագրման գործի համար:

### Հաղթանակը

Ճակատամարտի առաջին փուլում Բելն ամբողջ ճակատով վճռական գրոհով փորձում է խախտել Հայկի բանակի մարտակարգը: Սարտը, որքան հնարավոր է արագ՝ առաջին իսկ գրոհով ավարտելու հույսով, Բելը բլրից իջնում է ներքև (տե՛ս սխեմա 1):


Սխեմա 1



ՀԱՅՈՑ ԶՈՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ Բ.Ա. 2492Թ.

Երկրորդ փուլում Հայկի շարած մարտակարգը հակառակորդի զորաթևերին հարկադրում է առաջանալ, և գրոհի անդրադարձման պահին փաստորեն այն հայտնվում է Բելի բանակի կենտրոնում մխրճված դիրքում: «Այս անսպասելի տարակուսական դիպվածը տեսնելով Տիտանյան արքան զարհուրեց, և հետքաշվելով սկսեց բարձրանալ այն բլուրը, որտեղից իջել էր... որովհետև մտածում էր ամբոխի մեջ անրանալ, մինչև բոլոր զորքը հասնի, որպեսզի երկրորդ անգամ ճակատամարտ սարքի» (տե՛ս սխեմա 2): Հետևաբար, Հայկը ճիշտ էր ընտրել ոչ միայն ճակատամարտի վայրը, այլև ժամանակը:

Սխեմա 2



ՀԱՅՈՑ ԶՈՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ Բ.Ա. 2492Թ.

Վերջապահ ուժերը մարտադաշտին շատ մոտ պետք է լինեին, և Բելը նրանց տեղ հասնելու հետ մեծ հույսեր էր կապում: Հայկի փոքրաթիվ ուժերը, որոնք մինչ այդ մեծ դժվարությամբ կասեցրել էին առաջին գրոհը, չէին դիմանա էլ ավելի հուժկու երկրորդ գրոհին: *«Աղեղնավոր Հայկը այս բանը հասկանալով՝ իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային, պինդ քարշում է լայնալիճ աղեղը»* և, արձակելով երեքթևյան նետը, տապալում և սպանում է Բելին:

Բելը նետահարվում է այն ժամանակ, երբ նրա զինվորները շարունակվող մարտի պայմաններում անորոշության մեջ նրա վճռական քայլին էին սպասում: Հետևաբար, իրատեսորեն է նկարագրվում Բելի սպանվելուց հետո սկսված խուճապը. *«Իսկ ամբոխը, տեսնելով այսպիսի մեծ քաջության գործը, փախչում է, ամեն մեկը իր երեսը դարձած կողմը»:*

Պատմահայրը, ամփոփելով իր խոսքը ճակատամարտի հաղթական ավարտի մասին, գրել է. *«Մեր երկիրը մեր նախնի Հայկի անունով կոչվում է Հայք»:* Հայկը և Հայկազունները շարունակում են շենացնել Հայոց աշխարհը:

## **Արդյունքները**

Մովսես Խորենացին ակնածանքով է խոսում *զենքին տիրապետելու գործում վարպետացած* Հայկի մասին, կարևորում ճիշտ նշանառման տիրապետելը և պատմական իրադարձությունների նկարագրմանը զուգընթաց բանական *դիպուկահարների* դերի բարձրացում է քարոզում: Որոշակիորեն ցույց է տրվում, որ *կարևորը ոչ այնքան զենքն ու սպառազինությունն են, որքան զենքին հմտորեն տիրապետելը*, թեև զենքը կարևոր նշանակություն ունի: Հիշենք այն հիացմունքը, որով Խորենացին պատմում է *«լայնալիճ աղեղի»* կիրառման մասին:

«Հայկ և Բել» վիպասի օրինակով մենք տեսնում ենք, որ Vդ. հայոց իրականության մեջ ռազմարվեստի տեսական վերլուծությունը բավական բարձր մակարդակ ուներ: Հետևաբար, Հայոց ծորի ճակատամարտում տարած հաղթանակն ընդգրկում է ռազմարվեստի և ռազմատեսական մտքի զարգացման բավական լայն շրջանակ՝ հետագա սերունդների առջև նորանոր հաղթանակների հասնելու գաղտնիքներ բացելով:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ Ք.Ա. III-II ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ

Առաջին պետությունները և զորատեսակների բաժանված հնագույն բանակները ստեղծվել են Ք.ա. IV հազարամյակի վերջին և Ք.ա. III հազարամյակի սկզբին Եգիպտոսում ու Միջագետքի հարավում Շումեր երկրում:

Մինչ Ք.ա. V հազարամյակը շումերների նախնիները բնակվել են Հայկական լեռնաշխարհի հարավային և Միջագետքի հյուսիսային շրջաններում<sup>1</sup>: Հեռանալով այնտեղից՝ նրանք երկար ժամանակ պահպանել են կապն իրենց հայրենիքի հետ և այն հիշատակել գրավոր հուշարձաններում: Դրանց մեջ առանձնահատուկ տեղ է գրավում շումերական դյուցազնավեպը, որի ինը մասերից (վիպերգերից) հինգում հիշատակվում է Արատտա երկիրը: Այն Հայկական լեռնաշխարհի առաջին պետական կազմավորումն է (Ք.ա. XXVIII-XXVII դդ.), որն ուսումնասիրողների կողմից նույնացվում է Աստվածաշնչի Արարատ-Հայաստանի հետ:

Դյուցազնավեպի գլխավոր հերոսներն են այս ընթացքում Շումերում գերիշխանության կենտրոն դարձած Ուրուկ քաղաք-պետության երեք արքաները՝ Էնմերքարը, Լուգալբանդան և Գիլգամեշը: Առաջին՝ «Էնմերքարը և Արատտայի տիրակալը» բնագրում հաղորդվում է, որ Էնմերքարի և Արատտայի տիրակալի միջև ընթանում էր երկարատև պայքար դիվանագիտական բանակցությունների տեսքով, որն էլ բնագիրը վերծանող Ս.Ն. Քրամերի կողմից որակվել է որպես «առաջին հոգեբանական պատերազմ»: Շումերի արքան պահանջում է մետաղներ, թանկարժեք քարեր և վարպետներ՝ տաճարներ կառուցելու նպատակով: Ի պատասխան՝ Արատտայի արքան պահանջում է մեծ քանակությամբ երկրագործական ապրանքներ, որոնցով հարուստ չէր լեռնային Արատտան: Շումերի արքան անցնում է սպառնալիքների, որին Արատտայի տիրակալը պատասխանում է նույն ոգով՝ անընդհատ ընդգծելով *իր երկրի՝ սրբազան և ժողովրդի՝ աստվածընտրյալ լինելու* հանգամանքը: Ի վերջո, Շումերի արքան ստիպված է լինում տեղի տալ, և երկարատև բանակցություններն ավարտվում են հաշտությամբ: Այդպիսով՝ համաշխարհային պատմությանն այսօր հայտնի առաջին «հոգեբանական պատերազմն» ավարտվում է մեր հայրենիքի՝ Արատտայի հաղթանակով...

<sup>1</sup> Հնագիտական գրականության մեջ դրանք հայտնի են որպես իրար հաջորդած Հալաֆյան և Հասունյան մշակույթներ:

## **Մեր առաջին աշխարհակալությունը**

Բնագրերից մեկում պատմվում է, որ Շուների և Արատտայի հարաբերությունները վերածվում են նաև ընդհարումների: Շուներական զորքի գլուխ անցած՝ Էմներքարը արշավում է դեպի Արատտա: Շուներական բանակը պաշարում է Արատտայի նույնանուն մայրաքաղաքը, սակայն մեկ տարվա ընթացքում չի կարողանում գրավել այն: Արատտայի բանակը հակահարձակման անցնելով հասնում է Շուներ: Այլ կերպ անհնար կլինի բացատրել այնտեղ Դումուզի<sup>1</sup> («որի քաղաքն էր Չայան (Սուբուրը)») «հայտնվելն» ու հարյուր տարի թագավորելը:

**Տեղեկանք.** «Արատտա» երկրանունը գաղափարանշանային գրության պարագայում գրվում է Սուբուր երկրի գաղափարագրով: Այսինքն՝ որոշակիորեն փաստվում է Արատտա-Սուբուր (Սուբարտու) նույնությունը...

Շուներա-աքադական մի շարք երկլեզու բնագրերում շուներերենի «Չայա» (HA.A) տեղանվանն աքադերենում փոխարինում է Սուբուր երկրանունը, ինչը ցույց է տալիս դրանց՝ միևնույն երկրին վերաբերելը: «Չայ(ա)» հիմքով ցեղանուն և տեղանուններ են հիշատակվում նաև Էբլայի, Աշուրի, Խեթական տերության Ք.ա. III-II հազարամյակներով թվագրվող բազմաթիվ բնագրերում, որոնք ակնառու են դարձնում դրանց կապը Չայք-Չայաստանի հետ... Խեթական արձանագրություններում Ք.ա. XV-XIIIդդ. հիշատակվում է Չայասա երկրանունը, որի (ա)սա վերջավորությունը տեղանվանակերտ մասնիկ է:

Չամակարգի մեջ դիտելիս՝ ակնհայտ է Չայկական լեռնաշխարհի հետ կապվող Չայա աստծո անվան, շուներա-աքադական, էբլայական, հին աշուրական և խեթական աղբյուրների «հայ(ա)» ցեղանվան, նրանով կազմված տեղանունների և հայ ժողովրդի ինքնանվան ծագումնաբանական ընդհանրությունը):

**Մովսիսյան Ա., Չայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում..., էջ 49-54**

Վիպաշարքն ավարտվում է Շուների համար ծանր իրադրությամբ, և իշխանության է գալիս Դումուզին: Ակնհայտ է, որ խոսքը իրական հաղթանակի մասին է, որը Չայաստանի զինված ուժերի պատմության ընթացքում

<sup>1</sup> «Դումուզի» անունով հայտնի է Արատտայի հովանավոր աստվածը, որը որդին է իմաստության և տիեզերական ջրերի աստված Չայայի, որի պաշտամունքը արտացոլվել է Չայկի կերպարում, որը լինելով աստված՝ հետագայում վերածվում է հայոց անվանադիր նախնի-նահապետի: Չետագայում Չայկի անվան հետ է կապվում նաև հունական դիցաբանության Օրիոնի անունով հայտնի համաստեղությունը:

գրավոր հիշատակված առաջին հաղթանակն է: Սա ժամանակագրորեն համապատասխանում է Հայկական լեռնաշխարհի վաղբրոնզեդարյան մշակույթի աննախադեպ տարածմանը, որն առաջին հայաստանյան աշխարհակալությունն է:

Հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ Ք.ա. մոտ XXVIII-XXVI դարերում Հայկական լեռնաշխարհից տեղի է ունենում մշակութային մեծ տարածում, որը հյուսիսում հասնում է Հյուսիսային Կովկաս (ժամանակակից Կուբանի երկրամաս, Չեչնիա, Ինգուշեթիա), հարավում՝ ժամանակակից Սիրիա և Պաղեստին, հարավ-արևելքում՝ Իրանական սարահարթի կենտրոնական շրջաններ, հարավ-արևմուտքում՝ Կիլիկիա (տե՛ս քարտեզ 1.2):

Ք.ա. XXVIII-XXVI դարերի մշակութային ներթափանցման բնորոշ գծերից մեկը տարածքների մեծ մասի խաղաղ նվաճումն է. այդ իսկ պատճառով ժամանակին կարծում էին, թե դա եղել է մշակութային ազդեցություն կամ բնակչության որոշակի զանգվածների արտագաղթ: Վերջին տարիներին, սակայն, վերոնշյալ ժամանակաշրջանի մշակութային գոտու հուշարձաններում ևս գտնվել են պատերազմի հետքեր: Ակնհայտ է, որ նշված տարածքներում եղել է ինչպես ռազմական, այնպես էլ խաղաղ նվաճում: Սա մեզ հիշեցնում է Տիգրան Մեծի ժամանակաշրջանը, երբ նրա ռազմական նվաճումների կողքին տեղ գտան նաև խաղաղ նվաճման բացառիկ դեպքեր (Սելևկյան պետություն, Հրեաստան):

Նման աննախադեպ մեծ ընդգրկումը ենթադրում է նոր որակի փոխադրամիջոցների ցանցի առկայություն: Գրավոր աղբյուրներում սանձված ձիեր առաջին անգամ հիշատակվում են Արատտայում (Ք.ա. XXVIII-XXVI դդ.)՝ ծառայելով որպես փոխադրամիջոց: Մինչդեռ շրջակայքում որպես փոխադրամիջոց ծառայում էին էշերն ու եզները: Պատահական չէ, որ շումերներն իրենց հեծյալներին կոչում էին «էշերի կողերը խթանողներ» (կողերին հարվածելով քշողներ):

Ըստ սկզբնաղբյուրների՝ Հայկական լեռնաշխարհը Ք.ա. III հազարամյակից մետաղագործական արտադրությամբ մասնակցում էր միջազգային առևտրին: Բնագրերում հիշատակվում են բազմատեսակ մետաղներ (ոսկի, արծաթ, պղինձ, անագ), այդ թվում՝ երկաթ (ծուլման եղանակով հանքաքարից ստացվող երկաթի *առաջին* հիշատակությունն է համաշխարհային պատմության մեջ): Ուշագրավ է անգլիացի ականավոր հնագետ Գորդոն Չայլդի՝ Միջագետքի մետաղագործության մասին ուսումնասիրությունում կատարած եզրակացությունը, ըստ որի՝ հանքաքարից երկաթի ստացման գյուտը կատարել են Հայաստանի բնիկները, որոնք այն գաղտնի են պահել գրեթե մինչև Ք.ա. II հազարամյակի վերջը:

Հատկանշական է, որ Միջագետքից գտնված գրավոր աղբյուրներում մարտակառքին լծված ձիու համար հատուկ տերմինն *առաջին անգամ* օգտագործ-

վում է կուտիական տիրակալների թողած արձանագրություններում, որոնց հայրենիքը Մեծ Հայքի Կորդվաց աշխարհի տարածքն էր:

Այսպիսով՝ մետաղագործության զարգացմամբ և ձիերին լծված մարտակառքերի մուտքով հայ զինագործ վարպետները համաշխարհային ռազմարվեստում իրականացրել են *առաջին հեղաշրջումը*: Թերևս, նաև դրանցով էր պայմանավորված ռազմական գործի բնագավառում տեղի ունեցած այն «պայթյունը», որ սկզբնավորվեց Հայկական լեռնաշխարհից Ք.ա. XVIII դ. երկրորդ կեսին երեք ուղղություններով (տե՛ս քարտեզ 1.3):


Իսկ Ք.ա. XIV դ. Հայասա-Ազգիում և Խեթական թագավորությունում է սկսվում մարտակառքերը հեծելազորով փոխարինելու գործընթացը, որն ավարտվում է մոտ XI դ.՝ ասորեստանյան բանակում հեծելազորի՝ որպես ինքնուրույն զորատեսակի, վերջնական ձևավորումով: Դրանից հետո էլ մարտակառքերը պահպանում էին հակառակորդի մարտակարգը խախտելու իրենց նշանակությունը:

ԱՌԱՋԱԿՈՐ ԱՍԻԱՆ Ք.Ա. XXVIII-XXVII ԴԱՐԵՐՈՒՄ



Քարտեզ 1.3

Ք.Ա. XVIII դ. ԱՐՇԱԿԱՆՔՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



## ԱՔԱԴԱ-ԱՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (Ք.Ա. XXIII-XXII դարեր)

Ք.ա. III հազարամյակի առաջին կեսին Միջագետք էին ներթափանցել սեմական ցեղեր, որոնց ներկայացուցիչները, զանազան ժառանգությունների անցնելով շումերական քաղաքներում, ձգտում են տիրանալ տեղերի իշխանությանը: Նման ճանապարհով Քիշ քաղաքում իշխանությունը զավթում է սեմական ծագում ունեցող այգեպան-մատռվակը, որը գահ բարձրանալով՝ ցածր ծագումը քողարկելու միտումով իրեն հռչակում է Շարրում-քեն (Սարգոն), որ նշանակում է «հիրավի (ճշմարիտ) արքա»: Քիշից վտարված Սարգոնը (Ք.ա. 2316-2261թթ.) հաստատվում է մինչ այդ աննշան Աքադ քաղաքում (Շումերից հյուսիս), ստեղծում պատմությանը հայտնի առաջին մշտական բանակը (բաղկացած 5400 զինվորից), նվաճում Միջագետքը, Միջերկրական ծովի արևելքն ու հիմնում պատմությանը հայտնի առաջին բռնապետությունը:

Աքադը սկսում է սպառնալ նաև Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումներին: Բռնապետի դեմ պայքարը գլխավորում է Սուբուր կամ Արման երկիրը<sup>1</sup>, որը համախմբում է Աքադական տիրապետությունից դժգոհ նվաճված երկրներին: Սարգոնի տիրապետության վերջին տարիներին Արմանը որոշ հաջողությունների է հասնում, իսկ նրա թոռ, Աքադի չորրորդ տիրակալ Նարամ-Սուենը (Ք.ա. 2236-2200թթ.) Սուբուր-Արմանը ներկայացնում է իբրև մի երկիր, որը «երբևէ՝ մարդկության արարումից ի վեր, ոչ մի թագավոր չէր նվաճել»: Ի դեպ, Աքադի դեմ Արման երկրի և դաշնակիցների այս արշավանքները Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս իրականացված առաջին հաղթարշավն են, որի մասին մեզ հայտնի է գրավոր փաստաթղթերից:

### Առաջին պատերազմաշրջանը

Նարամ-Սուենը Եփրատի և Տիգրիսի հոսանքներն ի վեր ձեռնարկում է բազմաթիվ արշավանքներ և որոշ հաջողություններ ունենում: Նրա հյուսիսային արշավանքներից առաջինի ընթացքում ճակատամարտ է տեղի ունեցել Սուբուր-Արմանի հարավային սահմանին՝ Թալմուս բնակավայրի մոտ (ժամանակակից Մոսուլից 40 կմ հյուսիս, Խոշր գետի ափին): Արմանի Ռիշ-Թեշուբ արքա-

<sup>1</sup> Սուբուրի (Սուբարտուի) և Արմանի՝ միևնույն երկրի տարանվանումներն են: Աքադական աղբյուրներում երկրանունը վկայված է «Արմանում» տարբերակով: Բուն երկրանունն է «Արման», որը խեթական բնագրերում հիշատակվում է «Արմանի» տարբերակով. սրանք Հայաստանի «Արմենիա» անվան հնագույն հիշատակություններն են: Մովսես Խորենացին նշել է, որ մեր աշխարհը Հայք անվան հետ կոչվել է նաև Հայկյան Արամի անունով, ինչպես հետագայում հույները՝ *Արմեն*, իսկ պարսիկները և ասորիները՝ *Արմենիկք*: Ուրեմն, հնագույն Հայք-Արմենիայի տիրակալները սերում էին Հայկյան Արամից, ուստի Հայկազուն էին:

յի առաջնորդությամբ մարտնչում են Փոքր Ասիայի կենտրոնից մինչև Ուրմիո լճի ավազանի հարավն ընդգրկող տարածքի դաշնակից տասնյոթ երկրների<sup>1</sup> զորքերը (տե՛ս քարտեզ 1.4): Դատելով Սուբուր-Արմանի հարավային սահմանի մոտ ճակատամարտերի կրկնվելուց՝ պետք է ենթադրել, որ առաջին ճակատամարտերն ավարտվել են Նարամ-Սուենի պարտությամբ:

### **Երկրորդ պատերազմաշրջանը**

Եվս մի շարք արձանագրություններ վկայում են Սուբուր-Արման երկրի հարավային Ազուխինում բնակավայրի մոտ տեղի ունեցած ճակատամարտի կամ մի քանի ճակատամարտերի մասին, որում (որոնցում) Նարամ-Սուենը ժամանակավոր հաջողության է հասնում: Թեև Բրաք հնավայրի տարածքում (Յյուսիսային Միջագետքում) կառուցած ամրոցը հենակետ դարձնելով՝ նա մի քանի արշավանք է ձեռնարկում դեպի շրջակա տարածքները և հասնում է մինչև «*ակունքը Տիգրիսի (և) ակունքը Եփրատի*», ուր (Ամիդ/Դիարբեքիից մոտ 25 կմ հյուսիս-արևելք) իր պատկերաքանդակով և արձանագրությամբ կոթող է թողնում: Ընդ որում, նրա արձանագրությունում մատնանշվում է Սուբուր-Արման երկրի գտնվելու վայրը՝ «*Վերին ծովի ափերին*», այսինքն՝ Վանա լճի ավազանում: Եփրատի վերին հոսանքի երկրներն արշավելու մասին է պատմում Նարամ-Սուենի ամենածավալուն արձանագրություններից մեկը, որում Արմանը ներկայացնում է որպես աննվաճ երկիր: Նշվում է նվաճված տարածքում ամրոց կառուցելու և Նարամ-Սուենի պատկերով ու արձանագրությամբ կոթող կանգնեցնելու մասին:




Նարամ-Սուենի կոթողը Ամիդի շրջանից



Անուրանիմի կոթողն իր և հաղթանակի դիցուհու պատկերով

<sup>1</sup> Հնագույն բնագրերում «երկիր» են կոչվում ինչպես երկրները, այնպես էլ նահանգները, գավառները, քաղաք-պետությունները:

ՄՈՒՇԱՎՈՐ ԱՄԻՆ Ք.Ա. XXIV-XXIII դարերին



## **Ռազմական դաշինքը**

Նարամ-Սուենի դեմ դաշնակցած տասնյոթ երկրների մասին մեկ այլ բնագրում արդեն դաշինքի առաջնորդ է հիշատակվում Ուրմիո լճի հարավում գտնվող Լուլլուբում երկրի արքա Անուբանինին: Նշանակում է՝ դաշինքի ղեկավարումն անցել էր Արմանից Լուլլուբումին (որոշ ժամանակ անց էլ այն կփոխանցվի Կուտիական երկրին), ինչը պայմանավորված էր դաշինքի կառավարման համակարգով (տես քարտեզ 1.4):

Անուբանինիից մեզ է հասել ժայռափոր կոթող՝ պատերազմի Ինանա-Իշտար դիցուհու և իր պատկերով ու արքադերեն արձանագրությամբ, որում նա ներկայանում է «*հզոր արքա, արքա Լուլլուբումի*» տիտղոսներով: Չափազանց վնասված արձանագրության մեջ հիշատակվում են Վերին և Ներքին ծովերը (Վանա լիճը և Պարսից ծոցը):

**Պատմական տեղեկանք.** Խոսքն ասվում է Նարամ-Սուենի անունից: «Երբ եկավ առաջին տարին, ես ուղարկեցի 120 հազար զորք, բայց ոչ ոք կենդանի չվերադարձավ,

Երբ երկրորդ տարին եկավ, ես ուղարկեցի 90 հազար զորք, բայց ոչ ոք կենդանի չվերադարձավ,

Երբ երրորդ տարին եկավ, ես ուղարկեցի 60700 զորք, բայց ոչ ոք կենդանի չվերադարձավ,

Ես այլայլվեցի, շփոթվեցի, մթագնեցի, վշտաբեկ, ուժասպառվեցի»:

**Հատված Նարամ-Սուենի մասին «Քուբայի արքայի լեգենդը» արձանագրությունից (84-92-րդ տողեր)**

Փաստորեն, Նարամ-Սուենը դաշնակից զորքերի դեմ է ուղարկում երեք բանակ՝ 120 հազար, 90 հազար և 60.700 զինվորներով, որոնցից ոչ մեկը չի վերադառնում: Որքան էլ այս թվերը վիպականացված լինեն, Միջագետքում և Փոքր Ասիայում տարածված այս բնագիրը (և վերջինիս նախօրինակները) միանշանակորեն վկայում են Հայկական լեռնաշխարհի զորքերի տարած լիակատար ու բացառիկ հաղթանակների մասին:

## **Եզրակացություն**

Հատուկ ուշադրության է արժանի «ոչ ոք կենդանի չվերադարձավ» արտահայտությունը, որը Աքադի բռնապետի դեմ պայքարում կիրառված ռազմարվեստի մասին նոր լույս է սփռում հայոց ռազմարվեստի ակունքների հիմնահարցի վրա և հնարավորություն տալիս նորովի մեկնաբանելու հայոց հաղթանակների մարտավարությունը: Այն կազմել է Բ.հ. V դարից հայոց ռազմարվեստում տիրապետող դարձած ապստամբական մարտավարության կարևոր բաղկացուցիչներից մեկը:


## ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻՑ ԱՌԱՋ

XIX դարում սկսված և մինչ օրս շարունակվող հնագիտական պեղումների արդյունքում Հայկական լեռնաշխարհից շատ մեծ հեռավորության վրա հայտնաբերվում են զենքեր, որոնց ձուլման կաղապարները գտնվել են Հայաստանի հնավայրերում: Երկար ժամանակ անհասկանալի էր մնում, թե ինչու են Հայկական լեռնաշխարհում ձուլված զինատեսակները ք.ա. XXIII-XXII դարերում հայտնվել Առաջավոր Ասիայի հեռավոր երկրներում...

### Հակամարտող կողմերը


Ք.ա. մոտ 2200թ. Կուտիական երկիրն է ստանձնում ռազմական դաշինքի զինված ուժերի առաջնորդությունը (տես քարտեզ 1.5): Կուտիական երկիրը գտնվել է Վանա լճի ավազանից հարավ՝ համապատասխանելով հետագա Մեծ Հայքի Վասպուրական և Մոկք աշխարհների հարևանությամբ գտնվող Կորդվաց աշխարհին՝ Հայկական լեռնաշխարհի հարավային երկրամասին: Հետագայի մի շարք սեպագիր արձանագրություններում ևս Հայաստանը հանդես է գալիս որպես «Կուտիական երկիր», ինչը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ այն Հայաստանի տարանվանումներից մեկն է:

Նոր դաշինքի վտանգն այնքան շոշափելի էր, որ Աքադի տիրակալը դեպի Էլամ (Իրանի հարավ-արևմուտքում) կատարած արշավանքի ժամանակ ոչ թե սովորական դարձած ավերածություններ է գործում, այլ Էլամի արքայի հետ հաշտության ու փոխօգնության պայմանագիր է կնքում՝ փորձելով ձևավորել հակակուտիական միություն: Դա մինչ օրս պատմությանը հայտնի առաջին արձանագրված դաշնագիրն է: Էլամի արքայի մի արձանագրության մեջ կուտիական երկիրը՝ «Կուտու» ձևով, հիշվում է նրա թշնամի երկրների ցանկում, որոնց դեմ պատերազմել է ինքը:



Արծաթե գավաթ՝ ռազմի և դիցաբանական պատկերներով (Քարաշամբ, Նաիրիի ենթաշրջան, ք.ա. XXII-XXI դարեր)

Քարտիկ 1.5



ՄԱՍԻՆԻԱՆԻ ԿՐԻՍՏՈՍԻԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՆՈՒՄԸ

## Ռազմական օգնությունը

Իր իշխանության հենց սկզբից Նարամ-Սուենը մեծ հարված է հասցնում միջագետքյան բնիկ իշխանատոհմերին և քրոնությանն ու իրեն հռչակում է «աստված»՝ կործանելով աստվածների տաճարները և հաստատելով իր անձի պաշտամունքը: Այս սրբապղծությունն առաջ է բերում նոր ընդվզում, որի ճնշման նպատակով փառամոլ բռնակալը գրոհում է շումերների սրբազան Նիպպուր քաղաքի վրա: Ըստ «Աքադի նգովումը» պատմավիպական բնագրի՝ սրբապղծությունից զայրացած մեծ աստվածները նգովում են Աքադը, իսկ գերագույն աստված Էնլիլը (որի պաշտամունքի կենտրոնը Նիպպուրն էր) լեռներից Աքադի դեմ է ուղարկում կուտիական մեծաթիվ զորքերը:



Մարտական կացին (Քարաշամբ, Ք.ա. XXII-XXI դարեր)

Այս տողերում պետք է տեսնել *շումերական քրոնության խնդրանքով* կուտիական զորքերի օգնության գալու պատմության վիպականացումն ու դիցաբանական գունավորումը:

## Արշավանքները

Եվ օգնությունը չի ուշանում. Միջագետքի կենտրոն են արշավում կուտիական դաշինքի զորքերը, որոնց դեմ պատերազմում էլ ինքնակոչ «աստվածը» սպանվում է: Կուտիական առաջնորդն Աքադի հարևանությամբ գտնվող արևի պաշտամունքի կենտրոնում՝ Սիպպար քաղաքում կանգնեցրած արձանագրության մեջ ներկայանում է «աշխարհի չորս կողմերի թագավոր» տիտղոսով, որը նա խլել էր պարտված Նարամ-Սուենից: Նույն տիտղոսն է կրում կուտիական առաջնորդի որդին:

Նարամ-Սուենի որդու՝ միայն «Աքադի արքա» տիտղոսը կրող Շար-կալի-շարիի մահից հետո կուտիական զորքերին հաջողվում է տիրանալ Աքադին ու Շումերին և իրենց տերության սահմանը հասցնել Պարսից ծոցի ջրերին: Քիչ անց կուտիական գերիշխանությունը տարածվում է նաև Էլամի վրա, որը Նարամ-Սուենի դաշնակիցն էր և պատերազմել էր ընդդեմ կուտիական զորքերի:

*Այդ դեպքերից հետո շուրջ յոթ տասնամյակ շարունակվում է հնագույն Հայոց պատմության կարևորագույն փուլերից մեկը՝ գերիշխանությունն Առաջավոր Ասիայի զգալի մասի վրա:*

## **Հաղթանակները**

Փաստորեն, կուտիական տերության պատմությունը կարելի է բաժանել երեք փուլերի:

*Առաջին փուլում* կուտիական զորքերը հաստատվում են Միջագետքի հյուսիսում և այնտեղից արևելք ընկած շրջաններում (Սինուրրում, Լուլլուբում, Ուրբիլում և այլն): Այս փուլը ժամանակագրորեն համընկնում է Նարամ-Սուենի իշխանության վերջին տարիների հետ:

*Երկրորդ փուլը* կարելի է համարել Շար-կալի-շարիի գահակալման առաջին տարիները: Այդ փուլում կուտիական գերիշխանության հարավային գիծը հասավ գրեթե Աքադ, հակառակորդ կողմերի միջև տեղի ունեցան մի շարք բախումներ:

*Երրորդ փուլում՝* ևս որոշ ժամանակ անց կուտիական գահակալները տիրանում են Շուներին և Աքադին, ապա նվաճում Էլամը և մինչև տիրակալության ավարտը (շուրջ յոթ տասնամյակ) տիրում են Առաջավոր Ասիայի մեծ մասին:

## **«Վերածննդի» տերությունը**

Հայոց աշխարհից տարածվող՝ *կուտիական* անունով հայտնի տերության ընդհանուր տևողությունը շուրջ հարյուր տարի է կազմել: Տերության *տարածքային ընդգրկման* մասին պատկերացում են տալիս կուտիական դարաշրջանի Միջագետքի ամենահայտնի կառավարիչ Գուդեայի արձանագրությունները: Տերության արևելյան սահմանները ներառել են Էլամը, իսկ արևմտյան սահմանները՝ Ամանոսի (Մայրիների) լեռները: Տերության մեջ ընդգրկված է եղել ողջ Միջագետքը՝ Տիգրիսի արևելակողմյան ու Եփրատից արևմուտք ընկած հարակից տարածքներով: Հարավում սահմանը հասել է Պարսից ծոց: Հյուսիսում տերությունը ներառել է Հայկական լեռնաշխարհի բավական մեծ մի հատված (հնարավոր է՝ ողջ լեռնաշխարհը):

Գուդեայի բնագրերը հիշատակում են Մենուա լեռները, որոնք վաղուց համադրվել են սեպագիր աղբյուրների Մաննա երկրի (Ուրմիո լճի ավազանի հարավում) և Հին Կտակարանի Միննի թագավորության հետ (որն Աստվածաշնչի թարգմանություններում հանդես է գալիս «Արմենիա» անվամբ կամ որպես «Արարատյան թագավորություններից» մեկը): Ընդ որում՝ ուղիղ կապ է դիտարկվում լեռների և Վանի թագավորության արքա Մենուայի անունների միջև: Հայկական լեռնաշխարհին վերաբերող մյուս տարածքը Խախում լեռներն են Եփրատի վերին հովտում, որտեղից բերվել է ոսկի:

Տապալելով արքայական բռնապետությունը և իրենց գերիշխանությունը տարածելով Առաջավոր Ասիայի մեծ մասի վրա՝ Հայկական լեռնաշխարհի

Կադմեա տնից սերող տիրակալները վերականգնում են շուներական ավանդական հոգևոր ու աշխարհիկ կարգերը: Նորից սկսում են գործել ավագների խորհուրդն ու ժողովրդական ժողովները, որոնք ընտրում էին իշխանավորին:

### ***Եզրակացություն***

Չարկ է նշել, որ արդարությունը վերականգնած արքաների մասին հիշողությունը երկար է պահպանվել Միջագետքում. գերիշխանության ավարտից ավելի քան կես դար անց Լագաշ քաղաքի իշխանները շարունակում էին կրել նաև «կուտիական երկրի կառավարիչ» տիտղոսը: Լագաշը դեռևս Ք.ա. XXV-XXIV դարերում հայտնի էր արդարության ու ազատության համար մղվող պայքարի մասին ավանդույթներով, և հենց այդ քաղաքն էր դարձել կուտիական իշխանության պատվարը Միջագետքում:

Այն հարցը, թե ինչու էին XIX դարից սկսված հնագիտական պեղումների արդյունքում Չայկական լեռնաշխարհից շատ մեծ հեռավորության վրա հայտնաբերվում զենքեր, որոնց ձուլման կաղապարները գտնվում են Չայաստանի հնավայրերում, ստանում է իր պատասխանը կուտիական առեղծվածի լուծմամբ: Այդ զենքերը գտնվում էին Չայաստանից մեծ հեռավորության վրա, քանի որ մեր երկրից էին գնացել այդ զենքերը կրող զինվորները:

## Ք.Ա. XVIII դարի ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Ք.ա. XIXդ. վերջին և XVIIIդ. սկզբին Միջագետքի հյուսիսում հզորանում է Հին Ասորեստանի մայրաքաղաք Աշուրը՝ իր ազդեցությանը ենթարկելով շրջակա մի շարք տարածքներ (Զագրոսից մինչև Սիրիայի կենտրոնական շրջանները): Աշուրի արքա Շամշի-Ադադ Ա թագավորը հասնում է Հայկական լեռնաշխարհի Տուգրիշ երկիրը՝ Վանա և Ուրմիո լճերի միջնատարածքի հարավում, սակայն չի փորձում արշավել լեռնաշխարհի այնպիսի հայտնի իշխանությունների դեմ, ինչպիսիք են Սուբուր-Արմանն ու Կուտիումը (տե՛ս քարտեզ 1.5):

Շամշի-Ադադ Ա-ի մահվանից հետո Աշուրի տերությունն անկում է ապրում, իսկ Միջագետքում գերիշխանության է հասնում Հին Բաբելոնյան թագավորության ամենահայտնի արքա Համմուրապին (Ք.ա. 1792-1750թթ.), որը, ընդարձակելով տերության սահմանները, իր իշխանության ներքո միավորում է ողջ Միջագետքը: Ք.ա. XXIII դարից գործող դաշինքը վերանորոգվում է:

Հակամարտությունը լարված ու անզիջում բնույթ է ստանում՝ ընդգրկելով ամբողջ տարածաշրջանը: Համմուրապին նշում է, որ հաղթել է իր բոլոր թշնամիներին *մինչև* Սուբարտու երկիր<sup>1</sup>, այսինքն՝ Արմանին *մնացել է աննվաճ*: Հակամարտությունն ընթանում է Եփրատի միջին հոսանքում գտնվող Մարի երկրում և Իրանական բարձրավանդակի արևմուտքում: Հետևաբար, Ք.ա. XVIIIդ. առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի Հայկազունների գլխավորած պետական կազմավորումներն այնպիսի հզոր ուժ էին, որ ի վիճակի էին գերտերության դեմ պայքար վարել երրորդ երկրի տարածքում: Առաջին անգամ կիրառվում է *ռազմավարական նախադաշտի* գաղափարը, որը բացառիկ երևույթ է Հին աշխարհում:

Պատահական չէ, որ արդեն իսկ այդ դարի երկրորդ կեսին Հայկական լեռնաշխարհից երեք ուղղություններով տեղի են ունենում արշավանքներ (քասեցիները՝ Բաբելոն, հիքսոսները՝ Եգիպտոս, արիացիները՝ Հնդկաստան), որոնք բոլորն էլ պսակվում են ռազմական բացառիկ հաջողություններով, ինչում



Ձեռքեր Հայաստանի Ք.ա. II հազարամյակի հնավայրերից

<sup>1</sup> Սուբարեցիները հիշատակվում են այդ ժամանակաշրջանի բազմաթիվ այլ նամակներում և փաստաթղթերում:

կարևոր դեր են խաղում Հայկական լեռնաշխարհում մետաղագործության զարգացումն ու ձիերին լծված թեթև մարտակառքերի կիրառումը:

Համնուրապիի որդու՝ Սամսուհիլունայի (Ք.ա. 1749-1712թթ.) իշխանության ութերորդ տարում արշավանքներից առաջինն իրականացնում են *քասեցիները*<sup>1</sup>, որից հետո նրանք թագավորություն են ստեղծում Հյուսիսային Միջագետքում: Քասեցիների արքա-գորահրամանատար Գանդաշը, նվաճելով Բաբելոնը, յուրացնում է նրա արքաների «*աշխարհի չորս կողմերի արքա, արքա Շումների և Աքադի, արքա Բաբելոնի*» տիտղոսաշարը:

Քասեցիները պատմության մեջ առաջիններից մեկը լինելով՝ կատարեցին ձի լծած մարտակառքերով արշավանք: Այն նախորդեց հիքսոսների արշավանքին, որի մեկնակետը ևս Հայկական լեռնաշխարհն էր: Համաշխարհային ռազմարվեստում այնքան *նորարարական* էր ձի լծած մարտակառքերի կիրառումը, որ ոչ մի երկիր ի վիճակի չի լինում կասեցնել Հայկական լեռնաշխարհից հորդացող այդ հեղեղը:

**Տեղեկանք.** Հին միջագետքյան բնագրերը նշում են նրանց արշավանքի մեկնակետը՝ Քաշու (կամ Քասու) երկիրը: Այն գտնվել է Խաբուր գետի ակունքներում, ուր ասորեստանյան արձանագրությունները հիշատակում են Քաշիարի<sup>2</sup> լեռները: Քասեցիների հայրենիքը Հայաստանն էր, և նրանց զորքը հայոց ռազմարվեստի և զինագործության նախորդ դարաշրջաններից եկող բարձր ավանդույթների կրողն ու հաջորդ դարաշրջաններին փոխանցողն էր:


Ք.ա. XVIդ. սկզբներին Առաջավոր Ասիայում իշխող հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող ցեղերի ու ժողովուրդների միջև տեղի է ունենում տարածքների ուշագրավ բաժանում: Բաբելոնի գրավումից հետո Միջագետքի հյուսիսում իշխող քասեցիների *արքայատոհմը տեղափոխվում է Բաբելոն*: Ք.ա. XVI դարի վերջերին Հյուսիսային Միջագետքն ու Հայաստանի հարավարևմտյան շրջաններն անցնում են Միտաննիի իշխանության տակ (եգիպտական աղբյուրներում կոչվում է Նահարինա, որը նույնանուն է «Նաիրիի» հետ), որի գահը նույնպես գտնվում էր հնդեվրոպացիների ձեռքում: Ք.ա. XVդ. Հայկական լեռնաշխարհի՝ Հայկական Տավրոսից հյուսիս և Արևմտյան Եփրատից արևելք ընկած շրջաններում հիշատակվում է Հայասա (Ք.ա. XV-XIIIդդ.) թագավորությունը, որի հիմքում է հայերի ինքնանվանումը (տես քարտեզ 1.6):

Բաբելոնիայում իշխելու ժամանակամիջոցում *քասեցիները* փոխում են Բաբելոնյան տերության անվանումը՝ վերանվանելով Քարդու(նիաշ), որը հարավային Հայաստանի հնագույն անվանումներից է: Նվաճելով նոր երկրամասը՝ *քասեցիներն* այն կոչում են իրենց երկրանվամբ. այլ կերպ ասած՝ շուրջ կես հազարամյակ Բաբելոնյան տերությունը կոչվում է... «Հայաստան»:

<sup>1</sup> Քասեցիների անունը հայտնի է նաև քապիթներ կամ կասսիտներ տարբերակներով:

<sup>2</sup> Սեպագրերում -րի վերջավորությունը տարածված տեղանվանակերտ մասնիկ է:

### ԱՌԱՋԱԿՈՐ ԱՍԻԱՆ Ք.Ա. XIV ԴԱՐՈՒՄ



## ԱՆՆԻԱՍ. ՀԱՅԱՍՏԱ-ԽԵՌՁԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (Ք.Ա. 1340-1310-ԱԿԱՆ ԹԹ.)

### ԿԱՆԽՈՂ ՀԱՐԿԱԹՒ ՌԱԶՄԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանները Ք.ա. XIV դարում միավորված էին Հայասա-Ազգի պետության մեջ: Արևմուտքից և հարավից Հայասայի հարևանը հզորության գագաթնակետին հասած Խեթական թագավորությունն էր: Խեթական վտանգը չեզոքացնելու նպատակով Հայասայի Հունկանաս (Խունկանաս, Ք.ա. 1370-1345թթ.) արքան ռազմական դաշինք է կնքում Խեթերի Սուպիլուլիումաս Ա թագավորի (Ք.ա. 1370-1326թթ.) հետ: Պայմանագիրը կողմերից ոչ մեկին որևիցե առավելություն չէր տալիս, բայց ռազմական առումով ավելի հզոր Խեթական պետությունը սկսում է այն օգտագործել խաղաղ ճանապարհով Հայասա-Ազգիի վրա իր ազդեցությունը մեծացնելու համար: Նման քաղաքականությունը Հայասայում դժգոհություն է առաջացնում:

### Առաջին պատերազմաշրջանը

Միտաննիի դեմ արշավանքը Սուպիլուլիումաս Ա-ն սկսում է 1345թ.: Հյուսիսային Միջագետքի երբեմնի հզորագույն պետությունը կործանման եզրին էր: Հաջողություն ակնկալող Սուպիլուլիումասն արշավանքն արագ ավարտելու դեպքում չէր բացառում նաև հարավ-արևելքից Հայասայի վրա հարձակվելու հնարավորությունը:

Արշավանքի ընթացքում Հայասայում հակախեթական տրամադրությունները դառնում են տիրապետող: Անկախության պահպանման համար պայքարը գլխավորում է Հայասայի ամենաեռանդուն գահակալներից մեկը՝ Աննիասը (Ք.ա. 1345-1316թթ.): Գիտակցելով քաղաքական զարգացումների վտանգավոր հետևանքները՝ Աննիասն անցնում է Միտաննիի կողմը: Խեթական արշավանքը ձախողելու նպատակով Հայասայի բանակը մտնում է Խեթական պետության սահմաններն ու գրավում Դանկուվա քաղաքը (տե՛ս քարտեզ 1.7): Պետության կենտրոնական շրջաններից կտրված Խեթական բանակը հայտնվում է ծայրահեղ անբարենպաստ իրավիճակում: Հայասայի բանակի *հաղթարշավը* և Միտաննիի գործերի համառ դիմադրությունը փոխում են ուժերի հարաբերակցությունը: Դժվարին կացության մեջ հայտնված Խեթական բանակը ոչ միայն ստիպված է լինում դադարեցնել արշավանքը, այլև հետ է վերադառնում Ասորիքի տարածքով՝ շրջանցելով *հակամարտության գոտին*:



Հայաստանի ճակատում մարտական գործողությունները չեն վերսկսվում ո՛չ հաջորդ տարի և ո՛չ էլ Սուպիլուլիումասի գահակալման հետագա շուրջ *երկու տասնամյակների* ընթացքում: Հայասայի դեմ պատերազմի խնդրին չի հասցնում անդրադառնալ նաև Սուպիլուլիումասին հաջորդած Արնուվանդաս Բ-ն (Ք.ա. 1326-1325թթ.): Դա վկայում է Հայասայի տարածաշրջանային քաղաքական դիրքի ամրության և ռազմական հզորության մասին:

### **Երկրորդ պատերազմաշրջանը**

«Սառեցված» հիմնախնդրով որոշում է զբաղվել Սուպիլուլիումասի կրտսեր որդին՝ Մուրսիլիս Բ-ն (Ք.ա. 1325-1303թթ.): Նա իր թագադրմանը հաջորդած յոթ տարիներին մյուս հարևանների հետ հակամարտությունը հաղթականորեն ավարտելուց հետո դիմում է Աննիասին՝ պահանջելով վերադարձնել հոր գահակալության տարիների պատերազմներում վերցված խեթական *ռազմավարն ու ռազմագերիներին*:

Նկատենք, որ Հին աշխարհի «բարբարոսական» ռազմական իրավունքի պայմաններում կարող է անհավանական թվալ, սակայն խեթական թագավորի թողած սեպագրերից հայտնի է դառնում, որ ակտիվ ռազմական գործողությունների դադարեցումից ավելի քան քառորդ դար անց Հայասայում խեթական ռազմագերիներ էին մնացել:

**Տեղեկանք.** Ռազմական իրավունքի տեսանկյունից հարցն էական նշանակություն է ստանում, քանի որ այս և նախորդած ժամանակաշրջանում հակառակորդի մարտիկներին «ընդամենը» գերելն արդեն իսկ եզակի իրադարձություն էր համարվում: Մասնավորապես, լայն տարածում ուներ հակառակորդի դիմադրությունը դադարեցրած մարտիկների ձեռքից զենքը վերցնելն ու նրանց գլուխը մարտադաշտում ջարդելը:

Մերժում ստանալով՝ Մուրսիլիսը ռազմական գործողություններ է սկսում Հայասայի դեմ: Խեթական բանակը պաշարում է Հայասայի արևմտյան սահմանների վրա գտնվող Ուրա բերդաքաղաքը: Ուրայի բնակիչները համառ դիմադրություն են ցույց տալիս խեթերին: Տարածաշրջանի հզորագույն բանակը գրեթե մեկ տարի ապարդյուն փորձում էր գրավել բերդաքաղաքը, բայց, անհաջողության մատնվելով, հետ է վերադառնում (տե՛ս քարտեզ 1.7):

*Ուրայի պաշտպանությունը Հայոց պատմության հերոսական էջերից մեկն է:*



**Բրոնզեդարյան սուր**

## **Հաղթանակը**

Խեթերը հաջորդ տարի կրկին շարժվում են դեպի Հայասա-Ազգի, սակայն Հայասայի բանակն այնպիսի դիմադրություն է ցույց տալիս, որ խեթերն այս անգամ ևս հարկադրված նահանջում են: Այսպիսով՝ խեթական արշավանքն ավարտվում է նոր անհաջողությամբ:

Նահանջն ինչ-որ կերպ «բացատրելու» համար Մուրսիլիսը հայտարարում է, թե որոշել է իր իշխանության 9-րդ տարեդարձին մեկնել արևմուտք՝ Կուևաննի քաղաքում խեթաթ դիցուհու երկրպագության տոնը կատարելու: Ռազմական գործողությունների եռուն շրջանում Կուևաննի մեկնելու Մուրսիլիսի մտադրությունը ոչ մի քննադատության չի դիմանում: Տոնը, որը պետք է կատարած լիներ դեռևս Մուպիլուլիումասը, քանիցս հետաձգվել էր և կարող էր ևս մեկ անգամ հետաձգվել:

Խեթական բանակի՝ արևմուտքում գտնվելու պայմաններում, ստեղծված բարենպաստ իրադրությունից շտապում են օգտվել խեթերի գրեթե բոլոր հարևանները: Աննիասը զորքը մտցնում է խեթական թագավորություն, գրավում Իստիտինա (Իշտիտինա) քաղաքն ու պաշարում Կաննուվարան (տե՛ս քարտեզ 1.6): Ապստամբում և անկախություն են ձեռք բերում Ասորիքի՝ նախկինում խեթերից կախյալ երկրները: Հարավ-արևմուտքից հարձակում է սկսում Ասորեստանը:

Մուրսիլիսը ստիպված է լինում ուժերը երկու մասի բաժանել: Հայասա-Ազգիի դեմ է ուղարկվում զորաբանակ՝ Նուվանձայի (Նուվանզա) հրամանատարությամբ:

**Պատմական տեղեկանք.** «Իսկ երբ Աստատա քաղաքից Կարգամիշ<sup>1</sup> մեկնեցի, արքայազն Նանաժիտին, որին լուր տանելու նպատակով ուղարկել էի մառանապետ Նուվանձայի մոտ, ճանապարհին<sup>2</sup> շտապ ինձ հասավ և այսպես ասաց.- Քանի որ թշնամի Հայասան շրջապատել էր Կաննուվարա քաղաքը, մառանապետ Նուվանձան դեպի նա գնաց, նրան հանդիպեց Կաննուվարայի մոտ և նրան 10 հազար զինվորներով ու 7 հարյուր կառամարտիկներով ճակատամարտ տվեց: Նուվանձան նրան հաղթեց: Սպանվածները շատ են, գերիներն էլ շատ են»:

### **Հատված Մուրսիլիս Բ-ի տարեգրությունից**

Կաննուվարայի ճակատամարտից հետո խեթական բանակը նահանջում է: Հետևաբար, թեև արձանագրությունում նշվում է, որ Նուվանձան հաջողության է հասել, սակայն ակնհայտ է, որ նա կամ պարտվել է, կամ էլ ընդամենը կանխել հայասական բանակի առաջխաղացումը: Մուրսիլիսն այժմ արդեն ուղղա-

<sup>1</sup> Կարգամիշ (Կարքեմիշ) քաղաքը Միտաննի պետության գլխավոր կենտրոններից մեկն էր, որը գրավել էր դեռևս Մուպիլուլիումասը:

<sup>2</sup> Այդ ժամանակ Մուրսիլիսն զբաղված էր Հյուսիսային Սիրիայի նվաճումով:

կի ստիպված է լինում միջամտել հայասական ճակատում ծավալված գործողություններին: Նա իր անմիջական հրամանատարության տակ գործող ուժերը միավորում է Հայասայից նահանջող ուժերին, բայց խուսափում է մեծ արշավանք ձեռնարկել՝ պատճառաբանելով, թե ձմեռնամուտ է: Արձանագրության շարունակությունից հայտնի է դառնում, որ Հայասայի դեմ ռազմական գործողությունները հետաձգելով՝ խեթական բանակն անգործ չի մնում: Խեթական թագավորը շարժվում է դեպի Հալիս գետի վերին հոսանքի ավազանը և հնազանդեցնում այդ տարածքում խեթական պետության դեմ ընթուստացած և հնարավոր է՝ Հայասա-Ազգիի կողմնանցած առանձին շրջաններ:



**Բրոնզեդարյան դաշույն**

**Պատմական տեղեկանք.** «Մտա Թեգարամա երկիրը<sup>1</sup>: Երբ ես հասա Թեգարամա քաղաք, մառանապետ Նուվանժան և բոլոր հրամանատարները Թեգարամա քաղաքում ինձ դիմավորեցին, ինձ հետ հանդիպեցին: Ես, թերևս, անմիջապես գնայի Հայասա: Աշունը վերջանում էր: Իմ հրամանատարները ինձ ասացին.- Աշունը վերջանում է, մեր տեր, Հայասա չգնաս:- Հայասա չգնացի»:

**Հատված Մուրսիլիս Բ-ի տարեգրությունից**

### ***Երրորդ պատերազմաշրջանը***

Հայասա-Ազգիի դեմ մեծ հարձակումը սկսվում է Մուրսիլիսի թագավորության 10-րդ տարում: Մուրսիլիսն արևելքում ծավալվող պատերազմում ռազմավարական առավելության հասնելու համար այստեղ է կենտրոնացնում խեթական պետության բոլոր հնարավոր ուժերը (այդ թվում նաև տարածաշրջանում հզորագույնը համարվող մարտակառքերի զորամասը):

Անբարենպաստ իրադրությունում Աննիասը որոշում է խուսափել հակառակորդի հետ բաց դաշտում վճռական ճակատամարտից և խեթերին լեռնային երկրի խորքերը քաշելով՝ փորձում գիշերային գրոհներով նրանց նահանջ պարտադրել: Խեթական թագավորի արձանագրությունում Հայասայի բանակի գործողությունների նկարագրությունը համաշխարհային պատմության մեջ *գիշերային մարտավարության մասին* առաջին հիշատակումն է:

<sup>1</sup> Թեգարաման գտնվում է Մալաթիայից անմիջապես հյուսիս՝ Եփրատի աջ ափին: Թեգարամա երկիրը նույնացվում է Աստվածաշնչի Թորգոմայի հետ:

**Պատմական տեղեկանք.** «Իսկ երբ գարուն բացվեց, երկրորդ ճանապարհով գնացի Ազգի երկիր<sup>1</sup>.. Նրանք (Յայասայի բանակը-հեղ.) նախատեսան գիշերով ինձ վրա հարձակվել, ասելով՝ գիշերը նրան մեծ վնաս կհասցնենք: Իսկ երբ Արևայինս լուր լսեցի, թե ազգիցիները նախատեսում են գիշերը բանակի կենտրոնի վրա հարձակվել, Արևայինս բանակները միացրի: Ցերեկը բանակը թեթև էր շարժվում, իսկ գիշերը այն նույնպես դարանակալ էր լինում: Երբ ազգիցիները այդպիսի պահպանությունը տեսան, այլևս ինձ վրա հարձակվել չհամարձակվեցին»:

**Հատված Մուրսիլիս Բ-ի տարեգրությունից**



**Մարտակառքի արձանիկ Լճաշենից (Ք.ա. XIVդ.)**

Դեռևս արշավանքի սկզբում Մուրսիլիսը փոխում է զորքի երթակարգը և ուժեղացնում գիշերային պահպանությունը: Յայասայի բանակում ևս հետախուզությունը բարձր մակարդակի վրա էր, և այստեղ ևս ժամանակին տեղեկանում են խեթերի ձեռնարկած հակաքայլերի մասին ու արագ փոխում պատերազմի պլանը: Սակայն նոր ռազմավարական ծրագիրն իրականացնելու համար վերախմբավորումների և այլ կարգի նախապատրաստական միջոցառումների համար ժամանակը բավարար չէր: Յայասայի զորամասերը նահանջում և ամրանում են լեռնային ամրոցներում:

Խեթերը, նույնիսկ Մուրսիլիսի և Նուվանձայի ուժերը միավորելուց հետո, չեն համարձակվում գրոհել լեռնային ամրությունները: Չունենալով այլ տարբերակ՝ նրանք շրջանցում են սահմանամերձ ամրությունների մեծ մասն ու գրավում Անի-Կամախ տանող ուղիների վրա գտնվող Արիպսա քաղաքը, իսկ հետո՝ Դուկկամա մեծ քաղաքը, որը պարտավորվում է խեթական թագավորի տրամադրության տակ դնել 3 հազար զինվոր (տե՛ս քարտեզ 1.7):

Մուրսիլիսի արձանագրության մեջ նշվում է, որ այս ռազմական անհաջողություններից հետո Յայասայի բնակչությունն ընդունում է խեթերի գերիշխանությունն ու խոստանում վերադարձնել գերիներին: Իր ռազմական հաջողությունների մասին թմբկահարելով՝ Մուրսիլիսն աշնանը վերադառնում է Խաթու-

<sup>1</sup> Ազգին Յայասայի գլխավոր նահանգն էր: Այն տեղադրվում է ճորոխի ավազանում: Այս տեղանունը պահպանվել է Ազորո ձևով՝ որպես Յայոց Տայքի մի գավառի անվանում:

սաս, բայց խեթերի հեռանալուց հետո լեռնային ամրոցներում մնացած ուժերն արագ վերականգնում են հսկողությունը կորցրած տարածքների վրա:

### **Հաղթանակը**

Հաջորդ տարի Մուրսիլիսը ստիպված է լինում ևս մեկ անգամ Հայասա-Ազգի արշավել: Հայասայի ավագանին նրան ընդառաջ պատվիրակություն է ուղարկում: Պատվիրակները Մուրսիլիսին ռազմական աջակցություն են խոստանում և կրկին պարտավորվում վերադարձնել գերիներին: Թե որքանով էր նախորդ արշավանքից հետո իրական խեթերի գերիշխանությունը, կարելի է դատել թեկուզ այն փաստից, որ գերիների չվերադարձվելու պատճառով Մուրսիլիսը ստիպված էր եղել նոր արշավանք ձեռնարկել:

Միտաննիի շարունակվող թուլացումը և, ի վերջո, անկումը կանխել չի հաջողվում: Իսկ Հայասայի ռազմաքաղաքական ղեկավարությունը հասնում է նպատակին՝ պահպանվում է անկախությունը: Ավելին, գերտերության դեմ պատերազմն ավարտվում է տվյալ պայմաններում նվազագույն կորուստներով:



**Բրոնզեդարյան սակր**

### **Արդյունքները**


Հաջողությանը նպաստել են.

**1. ռազմավարական մակարդակում՝**

- պատերազմի մանրակրկիտ նախապատրաստումը,
- փոփոխվող իրադրությունում արագ կողմնորոշվելով՝ ռազմական գործողությունների նոր պլանի մշակումը,

**2. մարտավարական մակարդակում՝**

- լեռնային ամրոցների օգտագործումը՝ պաշտպանական գործողություններում,
- լեռնային մարտի մի շարք նորարարությունների մշակումը,
- գիշերային մարտի մարտավարության մշակումը:



**Բրոնզեդարյան կրկնակի սակր**

ԴՆՁՈՒՆ ԻԻ

**ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ  
ԴԱՅՔԱՐԸ ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԴԵՄ**

**Մ**իտաննիի թուլացումից ամենաշատն օգտվում է Ասորեստանը, որը շուտով գրավում է Հյուսիսային Միջագետքը: Հզորացած Ասորեստանը սկսում է սպառնալ իր հյուսիսային հարևաններին՝ Վանա լճից հարավ և հարավ-արևելք ընկած շրջաններին: Սակայն Միջագետք ներխուժած արամեացիների դեմ պատերազմներով զբաղված Ասորեստանի թագավորներն ավելի քան երկու դար, կարծես, աչքաթող են անում Հայկական լեռնաշխարհի հարավային տարածքները, որոնք ասսուրական արձանագրություններում կոչվում էին «Նաիրի» կամ «Ուրարտու» (Ուրուատրի), իսկ ավելի ուշ իրենց՝ Վանի (Արարատյան) արքաների արձանագրություններում՝ «Բիայնիլի»:



Վանի թագավորության զինանշանը

**Տեղեկանք.** «Ինչպիսին էլ որ լինեն ասորեստանյան քաղաքակրթության արժանիքները, չպետք է թաքցնել, որ Ասորեստանը զուրկ էր մարդու ունեցած արժեքի գիտակցությունից, որ այնքան էական է քաղաքակրթության համար... Սանձահարել Ասորեստանի մոլեգնությունը և արգելել նրան ներխուժելու նաիրյան երկրները, ահա մի էապես ազնիվ առաքելություն, որը բաժին էր ընկել Ուրարտուին: Նա շատ արժեքավոր ծառայություն մատուցեց՝ իր ավանդը ներմուծելով մարդասիրական գաղափարների մեջ»:

**Ն.Ադոնց, Հայաստանի պատմություն, Ե., 1972, էջ 365-366**

Ասորեստանի Աշուրնազիրապալ Բ թագավորի օրոք (Ք.ա. 883-859թթ.) հիշատակվող «Ուրարտուն» կամ Վանի (Արարատյան) թագավորությունը հանդես է գալիս որպես միասնական պետություն, որը պետք է անցած լիներ կազմավորման փուլը: Համեմայնդեպս, Սալմանասար Գ-ն (Ք.ա. 859-824թթ.) իր գահակալության առաջին իսկ տարուց ստիպված էր պատերազմել հյուսիսային հարևանի հետ: Նրան ցույց է տրվում կազմակերպված դիմադրություն և ցանկալի արդյունքի չհասնելով<sup>1</sup> նա երկու տարի անց նոր արշավանք է ձեռնարկում:

Երկրորդ արշավանքի ժամանակ Արամեն խուսափում է Ասորեստանի մեծաթիվ բանակի հետ առճակատումից և քաշվում լեռները: Արամեի պարտությունը չկրած բանակը թողնում է պետության գլխավոր քաղաքը՝ երկշար պարիսպներ ունեցող Արգաշկու (Արծաշքու, ներկայիս Արճեշի տեղում) հզոր ամրոցը և ապավինում լեռներին: Ասուրական արձանագրության համաձայն, լեռներում տեղի ունեցած ճակատամարտն ավարտվել է իրենց հաղթանակով, սակայն ասորեստանյան բանակը դադարեցրել է արշավանքն ու հեռացել: Վկայությունն էլ ավելի կասկածելի է, մանավանդ որ ճակատամարտից հետո Վանի թագավորությունը շարունակում է իր հզորացումը:



**Սալմանասար Գ-ի արձանագրությունը Վանի թագավորության դեմ կատարված արշավանքի մասին**

<sup>1</sup> Սալմանասար Գ-ի առաջին արշավանքի նկարագրությունը նրա տարեգրության մեջ շատ համառոտ է: Այնտեղ խոսվում է Արամե թագավորի Սուգունիա ամրոցի, ապա ևս 14 բնակավայրերի գրավման և ավերման մասին: Ասորեստանի բանակն ընդամենը կարողանում է հասնել մինչև Վանա լճի ափը:

**Տեղեկանք.** «Ուրարտացի Արամեն վախեցավ իմ հզոր զենքի դառնությունից և ուժեղ ճակատամարտից, լքեց իր քաղաքը: Նա բարձրացավ Ադդուրու լեռները. նրա հետևից բարձրացա և ես, լեռներում ես ուժեղ ճակատամարտ տվեցի, 3400 զինվորների ես իմ զենքով կործանեցի...<sup>1</sup> Արամեն, փրկելով իր կյանքը, փախավ անմատչելի լեռան վրա»:

**ՅԺՊ, ՅՍՄՅ ԳԱ հրատ., հատ. 1, էջ 285**

Կրկնվում է ռազմավարության այն ձևը, որը տեսնում ենք Հայասա-Ազգիի ու Խեթական թագավորության միջև տեղի ունեցած պատերազմում: Հաղթանակի հասնելու խնդրում նախապատվությունը չէր տրվում մեծաթիվ կայազորերով լավ պաշտպանված ամրոցների պաշտպանելուն, ինչը մինչև *Ք.հ. 18-րդ դարը* ռազմարվեստի հիմնարար դրույթներից մեկն էր *գրեթե ամբողջ աշխարհում*: Հիմնական շեշտը դրվում է բանակը մարտունակ վիճակում պահելուն՝ *նույնիսկ տարածքները կորցնելու գնով*: Իր տրամադրության տակ իրական ուժեր ունենալով՝ Արամեն նախ խուսափում է ջախջախումից, ապա, ասորեստանցիների հեռանալուց անմիջապես հետո, արագ ու հիմնավորապես վերականգնում գերիշխանությունը նախկինում իրեն ենթարկվող տարածքներում:

Սալմանասար Գ-ի Ք.ա. 845թ. և Ք.ա. 833թ. արշավանքների ժամանակ ուժերի հարաբերակցությունն էապես փոխված էր: Լեռնային կիրճերով դժվարին անցումը նկարագրելով՝ Սալմանասարը թագավորության կենտրոնական շրջաններ՝ Վանա լճի ավազան հասնելու մասին նույնիսկ չի ակնարկում: Պարզ է, որ Ասորեստանին արդեն դիմակայում էր ոչ թե նախկին լեռնային փոքրիկ երկիրը, այլ հզոր հարևանը: Ավելին, Սարդուրի Ա-ի (Ք.ա. 845-825թթ.) օրոք պետությունն այնքան է հզորանում, որ ասորեստանյան արձանագրությունում կարդում ենք, թե Սարդուրին, *«լսելով այդ արշավանքի մասին, հույսը դնում է իր բազմաքանակ զորքի վրա և դուրս գալիս դեմ հանդիման, որպեսզի ճակատամարտ տա»*:

**Տեղեկանք.** Ասորեստանի դեմ հաղթական պատերազմից հետո Սարդուրի Ա-ն արձանագրություններից մեկում իրեն կոչում է «մեծ թագավոր, հզոր թագավոր, տիեզերքի թագավոր, Նաիրիի թագավոր, թագավոր, որին հավասարը չկա, զարմանալի հովիվ, մարտից երկյուղ չունեցող, անհնազանդներին ծնկի բերող... արքաների արքան (են), որը բոլոր թագավորներից հարկ ընդունեց»: Այս ամբողջը միայն մեկ արձանագրության մեջ է գրված: Ընդամենը հզոր թագավորը նման արտահայտություններ իրեն թույլ տալ չէր կարող: Սրանք կարող են լինել միայն Ասորեստանի պես ախոյանին պարտության մատնած թագավորի խոսքերը:

<sup>1</sup> Կլոր փակագծերը՝ (...) ցույց են տալիս տեքստի կրճատված կամ անհասկանալի մասերը: Դրանց մեջ առնված բառերը կոչված են ոլորացնելու տեքստի ըմբռնումը: Առանց փակագծի բազմակետերը փոխարինում են այն հատվածներին, որոնք հարկ չենք համարել զետեղել հավելվածում: Շեղ տառերով նշված են այն հատվածները, որոնք կատարվել են ըստ КУКН-ի:

### «Նոր ուժի» ռազմավարությունը

Վանի թագավորության հզորացումը շարունակվում է Իշպուհնի (Ք.ա. 825-810թթ.) արքայի օրոք, մանավանդ նրա գահակալման երկրորդ կեսին, երբ պետության կառավարման գործում աստիճանաբար սկսում է կարևոր դեր խաղալ եռանդուն արքայազն Մենուան (թագավորել է Ք.ա. 810-786թթ.) (տե՛ս քարտեզ 2.1): Ներքին հակասություններից բզկտվող Ասորեստանը սկսում է զիջել դիրքերը: Ամայացնող արշավանքներից միառժամանակ տարածաշրջանի երկրները թեթևացած շունչ են քաշում և հնարավորություն ստանում լծվելու խաղաղ աշխատանքի:

Սկսվում է Յայկական լեռնաշխարհի, ապա նաև ամբողջ տարածաշրջանի միավորումը Վանի (Արարատյան) թագավորության շուրջը: Ի դեմս նորաստեղծ թագավորության՝ շատերն էին տեսնում Ասորեստանին դիմակայելու ունակ իրական ուժ: Շուրջ հազար տարի անց, կարծես, վերակենդանանում է հակաաքադական ու հակաբաբելոնյան դաշինքների գաղափարը: Եվ եթե գիտակցելով Ասորեստանի արշավանքների ամայացնող հետևանքները՝ բոլորը նրա դեմ անհաշտ պայքար էին վարում, ապա Յայկական լեռնաշխարհից հորդացող նոր ուժի դեմ դիմադրությունը չնչին է լինում, իսկ առանձին դեպքերում համախմբումն իրականացվում է «ամարյուն»:

Այս շրջանում թագավորության բանակը ևս իրեն դրսևորում է որպես տարածաշրջանը համախմբելու ունակ ուժ: Մասնավորապես, աճում է արշավանքների աշխարհագրությունը (առանձին դեպքերում բանակը մարտերով անցնում էր ավելի քան 600 կմ), որը հիմք է տալիս պնդելու պլանավորման և թիկունքային կամ նվազագույնը՝ մատակարարման ծառայությունների գոյության և դրանց հստակ աշխատանքի մասին: Արտաքին ակտիվ քաղաքականությանը զուգընթաց՝ լայնածավալ միջոցառումներ են իրականացվում երկրի հզորության ամրապնդման ուղղությամբ: Մասնավորապես, հսկայական թափ է ստանում նոր հզոր ամրոցների շինարարությունը: Դրանց պարիսպների հաստությունը 4 մ-ից ավելի էր:

Հստակ պլանավորման արդյունքում կտրուկ փոխվում է արշավանքներին ներգրավված ուժերի կազմը, որը վկայում է ռազմավարական պլանավորման սաղմերի մասին: Այսպես, Իշպուհնիի Պարսուա երկրի (Ուրմիա լճից հարավ) դեմ արշավանքի ժամանակ հիշատակվում է զորքի կազմը՝ հարյուր վեց մարտակառք, ինը հազար հարյուր յոթանասուներորս հեծյալ և երկու հազար յոթ հարյուր չորս հետևակային, իսկ հյուսիսային արշավանքներից մեկին մասնակցում էին վաթսուներկու մարտակառք, տասնհինգ հազար յոթ հարյուր վաթսուն հետևակային և միայն հազար (կամ երկու հազար<sup>1</sup>) չորս հարյուր վաթսուն հեծյալ:

Այսպիսով, ճիշտ ընտրված ռազմավարության շնորհիվ ընդամենը երեք-չորս տասնամյակում ոչ միայն չեզոքացվում է Ասորեստանի պես հզոր հարևանի մշտական սպառնալիքը, այլև պայմաններ են ստեղծվում բավականաչափ մարդկային ռեսուրսներ չունեցող թագավորությունը տարածաշրջանային տեղության վերածելու համար:

<sup>1</sup> Մեծաթիվ հետևակի պայմաններում նույնպիսի մեծաթիվ հեծելազորի գոյության հավանականությունը իրատեսական չէ, և փոքր-ինչ վնասված արծանագրությունն ուսումնասիրած գիտնականները հակված են այս երկու տարբերակներից մեկին:




**Տեղեկանք.** Սեպագրերը, ինչպես նաև հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերված նյութը հնարավորություն են տալիս մոտավոր պատկերացում կազմել հայոց բանակի վարած ճակատամարտերի ընթացքի մասին:

Մարտը սովորաբար սկսում էին մարտակառքերը, որոնց վրա էր դրվում հակառակորդի մարտակարգը խախտելու գործը: Թեթևագեն հետևակը շարունակում էր մարտակառքերի սկսածը (տես սխեմա 1): Աստիճանաբար դաշտը մնում էր ծանրագեն հետևակին, որը և անդրադարձնում էր հակառակորդի գլխավոր ուժերի հիմնական (առաջին) գրոհը: Որոշ ճակատամարտերում գրոհի անդրադարձմանը մասնակցում էր նաև հեծելազորը (տես սխեմա 2, 3):


Մարտավարության տեսանկյունից կարևոր էր զորքի մարտակարգը տողաններով դասավորելը, որը, մարտակարգին խորություն հաղորդելով, այն դարձնում էր հստակ կազմակերպված:

Սխեմա 1




ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԱՍՐՏԱԿԱՐԳԸ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ

Սխեմա 2



ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՍԱՐՏԱԿԱՐԳԸ ԵՆԿԱՏԱՄԱՐՏԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ

Սխեմա 3



ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՍԱՐՏԱԿԱՐԳԸ ԵՆԿԱՏԱՄԱՐՏԻ ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ

# ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏԱՐԱՄԱՆՐՁԱՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ

Մեկ միասնական տերության մեջ Հայկական լեռնաշխարհի համախմբման բուռն ընթացքը պայմանավորված էր նրա հիմնական բնակչության հայկական էթնիկ ընդհանրությամբ և ընդհանուր թշնամուն՝ Ասորեստանին համատեղ ուժերով դիմակայելու անհրաժեշտությամբ:

**Տեղեկանք.** Վանի տիրակալները մարզական մրցույթները (հնարավոր է՝ նաև զորավարժանքները) վերածել են համաժողովրդական տոնախմբությունների: Նրանք ոչ միայն կազմակերպել են նման միջոցառումներ, այլև կարգադրել են քարագիր արձանագրություններով «անմահացնել» դրանցում գրանցված բացառիկ նվաճումները:

«Խալդյան զորությամբ Մինուա Իշպուհնորդին ասուն է.- Հենց այս տեղից նժույզը՝ Արծիբի ամուն(ով), Մինուայի տակ ցատկեց քսաներկու կանգուն (...)»<sup>1</sup>:

**ՀԺՊՔ, էջ 52**

Սա իր տեսակի մեջ եզակի տեղեկությունն է: Նման ուշագրավ մի արձանագրություն էլ պահպանվել է Ք.ա. VIIIդ. վերջին և VIIդ. սկզբին իշխած Արգիշտի Բ-ից, որը պատմում է մարզական նետածգության ժամանակ ունեցած 492 մ («950 կանգուն») արդյունքի մասին.

«Արգիշտի Ռուսայորդին նետը վերագցեց հենց այս տեղից՝ Գիլուրա (գյուղի) անտառի առջև(ից), մինչև Իշպիլի Բատուորդու այգին՝ ինն հարյուր հիսուն կանգուն»:

**ՀԺՊՔ, էջ 87**

## Արշավանքները

Մենուայի միանձնյա կառավարման շրջանում (Ք.ա. մոտ 810-786թթ.) Վանի թագավորությունը հասնում է աննախադեպ հզորության: Նրա առաջին արշավանքները միտված էին անրապնդելու Վանի կենտրոնական իշխանությունը Հայկական լեռնաշխարհի երկրամասերում: Դրանցից էր Երիկուախիում անրապնդվելը, որը մտնում էր Եթիունյան համադաշնության մեջ<sup>2</sup> (տե՛ս քարտեզ 2.2):

<sup>1</sup> «Կանգուն» երկարության չափը հավասար է 51,8 սմ-ի, այսինքն՝ Մենուայի նժույզը ցատկել է 11 մ 39 սմ: Ի դեպ, արձանագրությունը հայտնաբերվել է Վանի քարաժայռերի և Վարագա լեռների միջև գտնվող հարթավայրում, որը *դարեր շարունակ ծիարշավարան է եղել* հայկական բանակի համար:

<sup>2</sup> Համադաշնությունների համակարգը բնորոշ էր Հայկական լեռնաշխարհի իշխանություններին: Վանի թագավորությունը ևս ստեղծվել է որպես հարավային իշխանությունների համադաշնություն:

Վերջինս միավորում էր Արարատյան դաշտը, Սևանա լճի ավազանը և դեպի արևմուտք, մինչև Տայք ընկած շրջանները: Համապետական խնդիրներից ելնելով՝ Մենուան էրիկուախիից հետո հարկատու է դարձնում էթիունին (հիմնվում է ռազմավարական խոշոր հենակետ՝ Մենուախինիլին) և պետության հյուսիս-արևմուտքում՝ Դիաուխի-Դայաենին (Տայք) Շաշիլու կենտրոնական քաղաքով: Առավել դյուրամատչելի հատվածներում, հատկապես Բասենի դաշտում, կառուցվում են ամրոցներ (տե՛ս քարտեզ 2.2):

Հյուսիսում թիկունքն ամրապնդելուց հետո Մենուան աշխուժացնում է արտաքին քաղաքականությունը *հարավային ուղղություններով*: Նրա բանակը, հատելով Հայկական Տավրոսը, հաղթարշավով հասնում է մինչև *Կունենու և Ասորեստան*: Մեկ այլ արշավանք էլ իրականացվում է դեպի Ալզիի (Աղձնիք նահանգի տարածքում) ուղղությամբ և այդ հայկական երկրամասով հսկողության տակ է վերցնում Հայկական Տավրոսի կենտրոնական հատվածի լեռնանցքները:

*Արևմտյան ուղղությամբ* Ծուփանին (համապատասխանում է Ծոփքին) և այլ տարածքներ կենտրոնական պետությանը ենթարկեցնելով՝ իր բանակը դուրս է բերում Արևմտյան Եփրատի բնագիծ: Դրանցից Մելիտեայի (Մալաթիա) արքան խուսափում է առճակատումից՝ պարտավորվելով Մենուային վճարել հարկեր: Նվաճված միավորներից Շեբեթերիան կցվում է կենտրոնական իշխանությանը՝ նշանակած կառավարչի ընդհանուր վերահսկողության ներքո:

Մերձուրմյան ավազանում Մենուայի առաջին ձեռքբերումը, մի կողմից, ռազմավարական կարևոր դիրք ունեցող Խուբուշկիա երկիրն էր, մյուս կողմից՝ Ուրմիայի հարավափնյա շրջանների նվաճումն էր Մանայի թագավորությունից Ք.ա. 803/2թ. հետո, որից հետո Մանան ևս ընդունում է Մենուայի գերիշխանությունը: Բանակը շարունակում է արշավանքը՝ նվաճելով նաև Մեյշթա (Մեսսի) քաղաքը և հասնելով մինչև Դիալա գետի ավազան (Շաթիրա և Բուշտու<sup>1</sup>):

Այս նոր արշավանքներով Մենուան վերահսկողության տակ է վերցնում զագրոսյան առևտրական ուղիների զգալի մասը՝ նպատակ ունենալով կտրել Ասորեստանին Իրանական բարձրավանդակի կամ նրա միջնորդությամբ ստացվող հումքի աղբյուրներից (տե՛ս քարտեզ 2.2):


**Ասորեստանի փորձերը՝ կասեցնելու Վանի թագավորության առաջխաղացումը Ք.ա. 791թ., ավարտվում են անհաջողությամբ:**

Մենուան իր նոր արշավանքով վերջնականապես հաստատում է Վանի թագավորության իշխանությունը Ալզի-Աղձնիքում՝ Կուտումե (Կոտում՝ Վանա լճի հարավարևմտյան ափամերձ շրջանում) քաղաքով և Շաշնու-Սասունում (տե՛ս քարտեզ 2.2):

---

<sup>1</sup> Բուշտուն (Պուշթու) նույնանուն է ասորեստանյան արձանագրությունների համանուն երկրին Դիալա երկրի ավազանում: Շաթիրան գտնվել է Ուրմիո լճից հարավ-արևելք՝ ձգվելով մինչև Բուշտու:


Քարտիկ 2.2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՆՈՒՄ

## Եզրակացություն

Մենուայի հաղթարշավների շնորհիվ Հայկական լեռնաշխարհի հիմնական մասը միավորվում է մեկ կենտրոնացված պետության մեջ, իսկ հյուսիսային շրջանների իշխանությունները թեպետ չեն մտնում Վանի տերության մեջ, բայց ընդունում են նրա գերիշխանությունը: Միաժամանակ, իր իշխանության երկրորդ շրջանում Վանի արքան ոչ միայն իր գերիշխանությունն է հաստատում Ուրմիո լճի ավազանից շատ հարավ և Եփրատից արևմուտք, այլև վերահսկողություն է սահմանում Ջագրոսյան լեռներով դեպի արևելք և դեպի Փոքր Ասիա տանող ռազմավարական ուղիների վրա: Մենուան առաջին մարտավարական հաղթանակներն է տանում տարածաշրջանի գերտերության՝ Ասորեստանի նկատմամբ և Բիայնիլի-Արարատ-Ուրարտուի հայկական պետությունը վերածում տարածաշրջանային գերտերության:



«Միերի դուռը»



Ռազմի աստված Թեյշեբայի բրոնզե արձանը

# ՎԱՆԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ ԱՐԳԻՇՏԻ Ա-Ի ՕՐՈՔ

## «ԱՐԳԻՇՏԻՆ, ՈՐԻ ԱՆՈՒՆՆ ԱՆԳԱՄ ԱՀԱՐԿՈՒ Է»

Վանի տերությունը Արգիշտի Ա-ի օրոք (Ք.ա. 786-764թթ.) նոր հաջողությունների է հասնում: Նրա արշավանքներն ամենահայտնին են Վանի արքաների ձեռնարկումներից, այդ պատճառով հպանցիկ կերպով կանդրադառնանք:

Արգիշտի Ա-ի հեռավոր արշավանքներից ամենանշանավորը, թերևս, Բաբելոնիայի (Բաբիլոն երկրի) նվաճումն էր՝ Ջագրոսյան լեռներով դեպի հարավ հաղթարշավով (տե՛ս քարտեզ 2.3): Արգիշտի Ա-ի օրոք Վանի թագավորության՝ Առաջավոր Ասիայի հզորագույն տերությունն դառնալը փաստագրված է նաև նրա գլխավոր մրցակից Ասորեստանի զորքերի գերագույն հրամանատարի խոստովանության մեջ, համաձայն որի՝ հայոց մեծ տիրակալի անունն «անգամ ահարկու է»: Ասորեստանյան էպոնիմների (անվանադիրների) ցանկը Ք.ա. 780թ. գլխավոր զորահրամանատար Շամշի-իլուի էպոնիմատի դիմաց նշում է այդ տարում Ուրարտուի դեմ պատերազմի մասին: Ահա այսպես է Արգիշտիին ներկայացնում ասորեստանցի զորավարը.

**Պատմական տեղեկանք.** «Այդ նույն ժամանակ ուրարտացի Արգիշտին, որի անունն անգամ ահարկու է որպես ծանր հողմ, նրա ուժերը մեծաքանակ են, որն իր ձեռքը չէր մեկնել նախորդ արքաներից և ոչ մեկին, (նա) ընդվզեց և ժողովեց մեկտեղ Գուտի երկրի<sup>1</sup> բոլոր մարդկանց: Նա կազմակերպեց իր (ուժերը) ճակատամարտի (համար), առաջացան նրա զորքերը՝ դեպի լեռները՝ պատերազմելու»:

**ABVIU, N 38**



Արգիշտիի անունը կրող արձանագրությանը սաղավարտ

<sup>1</sup> «Գուտի» կամ «Կուտի» երկրանունը Հայկական լեռնաշխարհին տրված ընդհանրական անվանումներից մեկն է, որը գալիս է Ք.ա. XXIII-XXII դարերից և կապվում է լեռնաշխարհի հարավային Կորդվաց աշխարհի հետ: Այդ անվամբ է Վանի թագավորությունը հիշատակվում նաև Ասորեստանի արքա Սարգոն Բ-ի արձանագրություններից մեկում ևս:

### ԱՐԳԻՇՏԻ Ա-Ի ՀԱՂԹԱՐՇԱՎՆԵՐԸ



Մեկ այլ նման խոստովանություն մենք ունենք Ռուսա Ա-ի գահակալության շրջանից: Այս դեպքում մենք գործ ունենք ի պաշտոնե պարտադիր անկեղծության հետ, քանի որ մեզ հասած բնագիրը հետախույզի զեկուցագիր է, որը պարտավոր էր իր արքային ներկայացնել ճշգրիտ իրավիճակը: Այն վերաբերում է Սարգոն Բ արքայի գահակալության շրջանին (Ք.ա. 721-705թթ.):

**Պատմական տեղեկանք.** «Գլխավոր մատուցակը»<sup>1</sup>, երբ հարձակման անցավ (իր) զինված ուժերով, Ուրսան (= Ռուսա Ա-ն) եկավ (և) հաղթեց նրան: Նրանցից (= ասորեստանյան զինվորներից) ոչ մեկը չփրկվեց: Նա (շարունակուն է) առաջանալ և (այժմ) ճամբար է դնում «գլխավոր մատուցակի» ամրոցների դիմաց: Նա պատրաստվում է ճակատամարտ տալ: Թող արքան իմանա (և) գործի (ըստ այդմ):»:

**H. W. F. Saggs, The Nimrud Letters, 1952,  
“Cuneiform Texts from Nimrud”, vol. V, London, 2001, ND 2463**

### **Եզրակացություն**

Արգիշտի Ա-ի գերիշխանությունը տարածվել է բուն թագավորության սահմաններից շատ հեռու՝ մինչև Փոքր Ասիա և Բաբելոնիան ներառյալ, իսկ քաղաքական ազդեցության և հետաքրքրությունների ոլորտները ձգվել են մինչև Յյուսիսային Կովկաս և Իրանի հյուսիսարևելյան շրջաններ (տե՛ս քարտեզ 2.3): Սա է իրական պատկերը հայոց մեծ տիրակալի ստեղծած տերության, որի գործը պետք է շարունակեր նրա տաղանդավոր հաջորդը՝ Սարգուրի Բ-ն:

---

<sup>1</sup> «Գլխավոր մատուցակ» պաշտոնյային ենթակա էր Ասորեստանի հյուսիս-արևմուտքում՝ Կաշիարի լեռների շրջանում գտնվող նահանգը:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՉՈՐՄ ԾՈՎԵՐԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ

Վանի թագավորության հզորացումը շարունակվում է նաև Արգիշտի Ա-ի հաջորդի՝ Սարգուրի Բ-ի օրոք (Ք.ա. 764-735թթ.)<sup>1</sup>: Իր գահակալության առաջին տարիներին Սարգուրին շարունակել է երկրում սկիզբ առած լայնածավալ քաղաքաշինությունը՝ հիմնադրելով այնպիսի խոշոր կենտրոն, ինչպիսին էր Տուշպայից ոչ հեռու գտնվող Սարգուրիխինիլին (Հայկաբերդ, Աստվածաշեն), ապա և Սարգուրիխինիլի անվանք երկու այլ քաղաքներ՝ Արճեշից հյուսիս և Աղձնիքում:

### Պատերազմները

Սարգուրին առաջին խոշոր արշավանքն ուղղում է Մելիտես (Մալաթիա) պետության դեմ, որի նվաճումն իրականացվում է ուշագրավ ռազմավարական ծրագրով: Նա անցնում է Եփրատը, շրջանցում երկրի մայրաքաղաքը, խոր անցում կատարում դեպի արևմուտք և հյուսիս, ապա հետ շրջվելով՝ նվաճում Մելիտեսայի արքայի նստավայրերից Սասինին: Դրանով փակվում են մայրաքաղաքի ճանապարհները, որից հետո այն պաշարվում է: Մելիտեսայի արքան ստիպված էր ներկայանալ Սարգուրիին և պարտավորվել վճարել հարկեր:

Սարգուրիի իշխանության առաջին շրջանում Ասորեստանն արտաքին (հատկապես Արգիշտի Ա-ից ստացած) հարվածների, ինչպես նաև ներքին ապստամբությունների հետևանքով ի վիճակի չէր տարածաշրջանային լուրջ դերակատարում ունենալ: Վիճակը ձգտում է փոխել Աշշուր-նիրարի Ե թագավորը (Ք.ա. 754-746/5թթ.), որը գահ բարձրանալուն պես փորձում է պառակտումներ մտցնել Վանի տերության, նրա գերիշխանության տակ գտնվող և դաշնակից երկրների մեջ: Մասնավորապես, Ք.ա. 754թ. նա հարկադրում է Արպադի արքային «դաշնակցելու» պայմանագիր կնքել, ապա բանակցություններ սկսում Մանայի, իսկ մյուս կողմից՝ Ուրմե երկրի որոշ ուժերի դրդում հակաուրարտական ելույթի՝ զորք մտցնելով այնտեղ:

Սարգուրին, որն այդ ընթացքում արշավել էր Սևանա լճի ավազան՝ Վելիքուխի և Տուլիխու երկրամասերը, պատասխան քայլեր է ձեռնարկում: Ջորաբանակներից մեկն արշավում է Արմե, որի մայրաքաղաք *Նիխիրիայի մոտ ջախջախում է ասորեստանցիներին*, ապա նաև ճնշում Ուրմե երկրում բարձրացած ելույթը (տե՛ս քարտեզ 2.4):

<sup>1</sup> Սարգուրի Բ-ի գործունեության մասնակի վերականգնմանն օգնում են ինչպես Վանի քարաժայռի հյուսիսային կողմի Գանձադուռ կոչվող ժայռախորշի մեջ կանգնեցված կոթողի չորս կողմերին փորագրված «Սարգուրյան տարեգրության» առանձին հատվածների տվյալները, այնպես էլ ասորեստանյան աղբյուրներից ստացվող տեղեկությունները:

ՎԱՆԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՐԴՈՒՐԻ Բ-Ի ՕՐՈՔ



«Սարդուրյան տարեգրության» պահպանված հատվածը սկսվում է Սարդուրի Բ-ի՝ դեպի զագրոսյան լեռնաշրջան կատարած արշավանքով, որի ընթացքում նա նախ ճնշում է Մանա երկրի ապստամբությունը, ապա հաղթարշավը շարունակում դեպի հարավ: Սարդուրին կրկնում է հոր՝ Արգիշտի Ա-ի բացառիկ արշավանքը Ասորեստանի արևելքով դեպի Բաբելոն (Բաբելոն երկիր): Արարատյան թագավորության հաղթանակած բանակը մտնում է Բաբելոն՝ գրավելով երեք ամրոց և մոտ երկու տասնյակ քաղաքներ՝ տանելով գրեթե քառասուն հազար ռազմագերի և հարուստ ավար:



**Սարդուրի Բ-ի անվամբ արձանագրություններով սաղավարտ և վահան**

**Պատմական տեղեկանք.** «Խալդին արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Մանա երկիրը, զգետնեց Սարդուրիի առջև Արգիշտորդու: Խալդին (իմ) զորեղ (է), Խալդյան զենքն(?) իմ զորեղ (է): Արշավեց Սարդուրի Արգիշտորդին: Սարդուրին ասում է.- Արշավեցի Բաբելոն(նի) երկրի վրա: Գրավեցի Բաբելոն(նի) երկիրը: Կտրում էի մինչև Բարուաթա (երկիրը): Խալդյան մեծությամբ Սարդուրին ասում է.- Գրավեցի երեք ամրոց, (որ) ամրացված էին, կռվում գրավեցի: Քսաներեք քաղաք մեկ օրում նվաճեցի...

**ՉԺՊԲ, էջ 73; KVKH, c. 228**

### **Չորս ծովերի տիրակալը**

Ամրապնդելով դիրքերը հարավում՝ Սարդուրին նույն տարում արշավում է հյուսիս-արևելք և իր տիրապետության ոլորտում ընդգրկում Սևանի ավազանը և զանգեզուրյան հատվածը կապող կարևոր ճանապարհների ու անցումների շրջանը (Արփա գետի վերին հոսանքի տարածքը, Սելիմի և Որոտանի լեռնանցքները) և այստեղ կատարում ամրաշինական աշխատանքներ:

Ք.ա. մոտ 749-746թթ. տեղի են ունենում Սարդուրի Բ-ի երկու արշավանքները դեպի հյուսիս՝ Իգանի երկրի դեմ (Յյուսիսային ծովակի ավազանում), և ապա ճորոխի ստորին հոսանքի շրջանում Կուլխա (թերևս, հունական աղբյուրների Կուլխիդա) երկիրը, որը ձգվում էր մինչև Սև ծովի ափ: Յյուսիսային արշավանքների ընթացքում Սարդուրին կրկին աշավում է Աբիլիանի և Երիախի՝ պարտադրելով վճարել ամենամյա հարկեր (տե՛ս քարտեզ 2.4):

Հաջորդ տարի Սարդուրին հասնում է նոր բացառիկ հաջողության՝ հաղթելով Ռուիշիանի երկրի<sup>1</sup> արքա Ռաշունիին և նրան պարտադրելով դաշնակցել իր հետ:

*Սարդուրին առաջինն էր Վանի թագավորներից, որ դուրս է գալիս Միջերկրական ծովի արևելյան ավազան:*

Սիրիայի (Ասորիք) ընդգրկումը հակաստորեստանյան դաշինքի մեջ ավելի էր մոտեցնում Ասորեստանի լիակատար ոչնչացման ծրագրին, որը մշակվել էր դեռևս Արգիշտի Ա-ի օրոք: Ջագրոսյան լեռներով դեպի հարավ՝ մինչև Բաբելոն արշավանքները երեք կողմից շրջափակում էին Ասորեստանը, իսկ Սիրիայով և Եփրատի ավազանով Բաբելոն հասնելով՝ կիրականաճար Ասորեստանի լիակատար շրջափակումը:

Հարավում մեծ ծրագրերն իրականացնելուց առաջ Սարդուրին հյուսիսում հուսալիորեն պետք է ամրապնդեր թիկունքը: Նա խաղաղության ու բարեկամության դաշնագիր է կնքում Եթիունիի արքա Դիուծիմիի հետ (նրա անունը հնագույն հայերենում նշանակել է «Աստծուց ծնված», հմմտ. հունական Դիոգենեսին): Նույն ամսին, Եթիունիին օգնելու նպատակով, որը պատերազմում էր Իգանի երկրի դեմ, Վանի բանակը մեկ անգամ ևս ներխուժում է Իգանի: Վերադարձին Սարդուրին իր իշխանությունն ամրապնդում է հյուսիսարևելյան Հայաստանի մի շարք երկրամասերում, որոնց մեծ մասը կախյալ էր իրենից:

Միակ քաղաքական ուժը, որ կարող էր խոչընդոտել Սարդուրի Բ-ի ծավալմանը հյուսիսում, Կուլխան էր, որի դեմ ձեռնարկվում է երկրորդ արշավանքը: Նվաճվում են Կուլխայի բազմաթիվ քաղաքներ, այդ թվում՝ մայրաքաղաք Իլդանուշան, որի կայազորն ու բնակչությունը ոչնչացվում են: Իր հաջողությունը հավերժացնելու նպատակով Սարդուրին հրամայում է նվաճված մայրաքաղաքում կանգնեցնել Խալդի աստծո և իր գործերը փառաբանող կոթող:

*Դրանով Սարդուրին վերջնականապես ամրապնդում է Վանի թագավորության տիրապետությունը նաև Սև ծովի ափին՝ ճորոխի ավազանում:*

**Պատմական տեղեկանք.** «Սարդուրին ասում է.- Արշավեցի Կուլխա (երկրի) վրա: Երկիրը գրավեցի, Իլդանուշա քաղաքն արքայական Միշա արքայի՝ Կուլխա (երկրի), (որ) ամրացված էր, կռվում գրավեցի... Երկաթյա կնիք պատրաստեցի, արձանագրություն Իլդանուշա (քաղաքում) գրեցի, ամրոցները, քաղաքները այրեցի, ավերեցի, երկիրը յուրացրեցի, մարդ, կին քչեցի»:

**ՀԺՊՔ, էջ 77; KYKH, c. 239**

<sup>1</sup> Ռուիշիանին Սիրիայի (Պամասկոսի թագավորության) հնագույն անվանումներից է (եգիպտական արքայություններում՝ Ռեչենու, իսկ Ռաշունի արքան Աստվածաշնչուն հիշվում է Ռեծուն, Ռասոն տարբերակներով):

Նույն տարում Սարգուրին վերացնում է Վիտերուխի ենթակա թագավորությունը (Ալաշկերտի շրջանում)՝ նշանակելով այնտեղ նահանգապետ: Վիտերուխիին հաջորդում է Էրիախի երկրի (Շիրակի շրջան) ամբողջական միացումը տերությանը, այստեղ կառուցվում է ամրությունների մի նոր շղթա: Մինչ այդ նման բախտի էր արժանացել Մելիտեայի թագավորության տարածքի մեծ մասը, իսկ քիչ հետո այդ ճակատագիրը կկիսի նաև Պուլուադի երկիրը:

*Սարգուրի Բ-ի կառավարման շրջանում նկատվում է շատ կարևոր անցում տերության կառավարման ոլորտում. նա սկսում է վերացնել կախյալ (գուցե «դաշնակից» համարվող) թագավորությունները՝ վերածելով պետության վարչական միավորների, դրանով իսկ համադաշնային կառավարման համակարգից անցում կատարելով գերկենտրոնացված պետության:*

Արևելքում տերության սահմաններն ընդարձակելու նպատակով Սարգուրին Բ.ա. 746-745թթ. ընթացքում արշավեց դեպի Պուլուադի երկիր, որը գտնվում էր ապագա Ատրպատականի հյուսիսում, Արաքսից հարավ, մինչև Կասպից ծովն ընկած տարածքում: Երկիրը կցվում է Վանի տերությանը: Այստեղ ևս կատարվեցին ամրաշինական աշխատանքներ:

**Պատմական տեղեկանք.** «Լսում էին ինձ աստվածները (և) տվեցին ինձ ճանապարհ: Դեպի այնտեղ արշավեցի՝ Պուլուադի (երկրի) վրա: Ելավ առջևս կռվով: Նորից վռնդեցի, փախցրի (= հալածեցի) մինչև Լիբլիունի (քաղաքը): Լիբլիունե քաղաքն արքայական, (որ) ամրացված էր, կռվում գրավեցի, արձանագրություն այնտեղ դրեցի: Քաղաքները այրեցի, երկիրը յուրացրեցի, մարդ, կին այնտեղից քշեցի: Ամրոցներ այնտեղ կառուցեցի՝ Բիաինիլի (երկրի) զորությունը լուլույան (=բարբարոսական) ցեղերի մեջ անրապնդելու (համար): Երկիրը երկրիս վրա ավելացրի»:

**ՉԺՊՔ, էջ 77-78; КУКН, с. 241**

Պուլուադի երկրի նվաճման մասին ժայռափոր արձանագրությունը հենց նվաճված երկրում (Վարզական բնակավայրում) պահպանվել և հասել է մինչև մեր օրերը:

Տերության հյուսիսարևելյան սահմանն անցնում էր Կուր գետով. դեռևս Արգիշտի Ա-ի օրոք այդ սահմանն ընդգրկում էր Աղստևի հովիտը (Ալիշտու), իսկ Սարգուրի Բ-ի մեկ այլ արձանագրություն՝ թողնված Սևանա լճի հարավում գտնվող Ծովակ գյուղում, վկայում է, որ նրա տերության մեջ է մտել նաև Արցախը (Ուրտեխի):

**Սարգուրին Պուլուադիի և Ուրտեխիի դեմ արշավանքներով Վանի տերության սահմանները հասցնում է մինչև Կասպից ծով և Կուր գետ:**

## Եզրակացություն

Արգիշտի Ա-ի և Սարգուրի Բ-ի օրոք Վանի տերությունն Առաջավոր Ասիայի հզորագույն ուժն էր, միանձնյա առաջատարը, ինչը տևում է ավելի քան կես հարյուրամյակ:

Ամփոփելով նշենք, որ Սարգուրի Բ-ի գահակալության շրջանում է Վանի հայկական տերությունն ունեցել տարածքային ամենամեծ աճը: Նրա տերությունը հյուսիսում հասնում է *Սև ծով*, հյուսիս-արևելքում՝ Կուր գետ, արևելքում՝ *Կասպից ծով*, արևմուտքում՝ Փոքր Ասիայի կենտրոնական շրջան, հարավում՝ Բաբելոնով *Պարսից ծոց* և Դամասկոսի թագավորությունով՝ *Միջերկրական ծով*:

Չորս ծովերի միջև ստեղծված հզոր տերության կառավարման մեջ նա համադաշնային համակարգից անցում է կատարում գերկենտրոնացված պետության՝ դարակազմիկ նշանակություն ունենալով Հայոց պատմության մեջ:



Դիցաբանական էակի արձանիկ էրեբունիից

## ՀԱՅԱՍՏԱՆԸ Ք.Ա. VII-IV ԴԴ.

Ք.ա. VIII դարի վերջերից սկսել էր ինքնուրույն քաղաքականություն վարել Վանա լճից արևմուտք և հարավ-արևմուտք տարածվող երկիրը, որն ասորեստանյան աղբյուրներում կոչվում է Շուբրիա, իսկ Վանի թագավորության սեպագրերում՝ Արմե (հիշենք, որ Ք.ա. III հազարամյակում այս երկիրը՝ Սուբուր (Ս/Շուբարի) և Արման անվանաձևերով, հիշատակվում էր Վանա լճի ափերին): Այդ ոչ մեծածավալ պետությունը հակադրվում էր Վանի տերությանն ու Ասորեստանին՝ ապաստան տալով այդ երկրներից հեռացած փախստական գործիչների (բարձրաստիճան զինվորականների, մարզպետների և աստիճանավորների, որոնք, թերևս, քաղաքական այլախոհներ էին) և հրաժարվելով նրանց վերադարձնել:

Օգտվելով Շուբրիայի քաղաքական նման դիրքորոշումից՝ Ասորեստանի արքա Ասարհադդոնը (Ասարխադդոն, Ք.ա. 680-669թթ.) Ք.ա. 673թ. նվաճում ու իր տերությանն է բռնակցում Շուբրիան: Որպեսզի արդարացնի իր քայլը, նա Ուրարտու է վերադարձնում այնտեղից փախած և Շուբրիայում ապաստանած փախստականներին: Վանի տերության գերիշխանության գոտում գտնվող Շուբրիայի հարցի նման լուծումից հետո Ասորեստանի հետ Ռուսա Բ-ի (Ք.ա. մոտ 680-650-ական թթ.) հարաբերությունները կտրուկ վատանում են և արշավանք է տեղի ունենում Ասորեստանի դեմ:

Կարելի է նաև փաստել, որ Ռուսա Բ-ին հաջողվում է բարեկամական և դաշնակցային հարաբերություններ հաստատել կիմերական ռազմաշունչ ցեղերի հետ<sup>1</sup>, նպաստել նրանց՝ Փոքր Ասիայի արևելք տեղափոխվելուն, ինչը սկսվել էր դեռևս Ք.ա. VIII դարի վերջերին (նրանք հաստատվում են Կապադոկիայի տարածքում, որը միջնադարյան հայկական աղբյուրներում նրանց անվամբ կոչվում է Գամիրք): Իսկ Փոքր Ասիայի տարածքից Ռուսա Բ-ն կարողանում է կիմերներին ուղղել Ասորեստանի դեմ: Փաստորեն, դրանով ոչ միայն կանխվում են կիմերների հնարավոր հարձակումները, այլև կեսդարյա թշնամին դառնում է դաշնակից, և ասպատակություններն ուղղվում են Ասորեստանի դեմ:

Ասորեստանը, որ դարեր շարունակ աղետ էր դարձել Առաջավոր Ասիայի մի շարք երկրների ու ժողովուրդների համար, անկում է ապրում Ք.ա VII դարավերջին: Դրան մասնակցություն են ունենում նաև հայկական զորքերը. Մովսես Խորենացու հաղորդման համաձայն՝ Ք.ա. 612թ. Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն նվաճվում է Մարաստանի, Բաբելոնի և Պարույր Սկայորդու զլխավոր

<sup>1</sup> Կիմերները դեռևս Ք.ա. 715-714 թվականներից արշավանքներ էին ձեռնարկել Վանի տերության դեմ՝ դրանով, փաստորեն, նաև նպաստելով Ասորեստանի հակաուրարտական քաղաքականությանը: Նրանք հաստատվել էին Չայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիսարևմտյան շրջաններում:

րած հայկական իշխանության զորքերի կողմից: Այդ մասնակցության համար Պարույրը թագադրվում է Մարաստանի արքայի կողմից:

Դրանից հետո քաղղեական Բաբելոնիայի թագավորությունն է բռնաճնուն հպատակ ժողովուրդների վրա՝ ոտնահարելով արդարության սկզբունքները: Անօրեն Բաբելոնի վրա հարձակվելու և այն կործանելու մարտահրավերով Ք. ա. 594-592թթ. հանդես է գալիս Երեմիա մարգարեն: Եվ ոչ պատահականորեն անօրենություններ գործող բռնապետության դեմ կրկին օգնության են կանչվում Չայաստանի զորքերը:

**Պատմական տեղեկանք.** «Դրոշ բարձրացրեք երկրի վրա, բոլոր ազգերի մեջ փող հնչեցրեք, զորագնդեր կանչեցեք նրա (Բաբելոնի) դեմ, նրա վրա կանչեցեք Այրարատյան թագավորություններին ու Ասքանազյան գնդին»:

**Աստվածաշունչ, Երեմիայի մարգարեություն, գլ. ԾԱ, 27**

Մյուս Չայկազուններին ներկայացնելով՝ Սովսես Խորենացին, ըստ մեծագործության, Ք.ա. VI դարի կեսերին ապրած և գործունեություն ծավալած Տիգրան Երվանդյանին համարում է մեր պատմության երրորդ խոշորագույն դեմքը: Պատմահայրը գրում է. «Ես սիրում եմ ըստ քաջության այսպես կոչել՝ Չայկ, Արամ, Տիգրան. որովհետև քաջերի սերունդները քաջերն են, իսկ նրանց միջև եղածներին ով ինչպես ուզում է, թող կոչի»: Իսկ հույն պատմիչ Քսենոֆոնի (Ք.ա. V-IVդդ.) համաձայն՝ Տիգրանն աշակերտել է մի իմաստասերի (փիլիսոփայի) և ինքն էլ հայտնի էր իր իմաստությամբ ու տաղանդով:

Տիգրանը սկզբում դաշնակցային հարաբերություններ ուներ Մարաստանի Աժդահակ (Աստիագես) թագավորի հետ, ապա մտերիմ հարաբերություններ է հաստատում Աքեմենյան աշխարհակալությունը ստեղծած պարսից արքա Կյուրոս Բ Մեծի հետ, որի որսընկերն էր եղել դեռ պատանի հասակում:

Տիգրան Երվանդյանի օգնությամբ հաղթահարվում է Կյուրոսի դեմ ստեղծված հզոր դաշինքի՝ Լյուդիայի (Փոքր Ասիա), Բաբելոնի և Եգիպտոսի դիմադրությունը: Ք.ա. 546թ. Կյուրոսին հաջողվում է հաղթել Լյուդիային, իսկ 538թ. նվաճել Բաբելոնը: Դժվար է ասել, թե այդ պատերազմներում հայկական բանակի մասնակցությունը որքան է եղել, սակայն հայտնի է, որ դաշնակիցները Լյուդիա են մտել Չայաստանի տարածքից, Բաբելոնը գրավելուց հետո էլ Տիգրան Երվանդյանն այնտեղ փոխարքա է հռչակվել, ապա տիրել է Փոքր Ասիայի հունական շրջաններին:

Ք.ա. 520-ական թվականները բուռն փոփոխությունների տասնամյակ են դառնում ամբողջ Հին Արևելքի համար: Նախ, սպանված Կյուրոսին հաջորդում է Կամբյուսեսը (Կամբիզը)<sup>1</sup>, որի օրոք ևս շարունակվում են Չայաստանի և Պարսկաստանի դաշնակցային հարաբերությունները: Ապա, Ք.ա. 524թ. Տիգ-

<sup>1</sup> Կարճատև գահակալության ընթացքում Կամբյուսեսը հասցնում է նվաճել Եգիպտոսը:

րան Երվանդյանի մահից հետո, ըստ Մովսես Խորենացու, նրան հաջորդում է Վահագն անունով որդին: Ք.ա. 522թ. Կամբոյուսեսի առեղծվածային մահվանից հետո սկսվում են գահակալական կռիվներ, որոնք, ի վերջո, ավարտվում են Դարեհ Ա-ի (Ք.ա. 522-486թթ.) հաղթանակով:

Դարեհի՝ գահին հաստատվելուց հետո տերության ժողովուրդներն ապստամբում են Աքեմենյանների տիրապետության դեմ: Դարեհը ստիպված իր իշխանության առաջին տարիներն անցկացնում է ապստամբություններ ճնշելով և հակառակորդներին ոչնչացնելով: Աքեմենյան Պարսկաստանի գլխավոր դաշնակից Յայաստանը չի ճանաչում Դարեհի իշխանության օրինականությունը: Արձանագրությունը հաղորդում է, որ Դարեհը Յայաստան է ուղարկել երկու զորավար, որոնք հինգ անգամ ստիպված են եղել իրենց ուժերը չափել հայ ռազմիկների հետ (տե՛ս քարտեզ 2.5):


Յայաստանի դեմ արշավանքը Դարեհը նախ հանձնարարում է իր մերձավորներից ծագումով հայ մի զորավարի՝ Դադարշիշին, որը Յայաստանում երեք ճակատամարտ է տալիս, բայց պարտություն է կրում: Յայկական կողմն անցնում է հակահարձակման և ռազմական գործողությունները տեղափոխում Յյուսիսային Միջագետքի տարածք: Դարեհն այստեղ է ուղարկում պարսիկ զորավար Վահունիսային: Անհաջողության մատնված պարսիկները ստիպված էին ևս մեկ արշավանք իրականացնել Յայաստանի դեմ:

Սակայն դա անբողջը չէ: Բաբելոնում երկրորդ անգամ է ապստամբություն բարձրանում, ընդ որում, ապստամբության գլուխ է կանգնում և արքա հռչակվում հայազգի Արախան՝ Խալդիտայի որդին: Այս տեղեկությունն ունի բազմակի կարևորություն. բուն ապստամբության փաստից զատ, այն վկայում է հայոց մեջ Խալդի աստծո պաշտամունքի, ինչպես նաև Բաբելոն-Յայաստան կապի մասին, ինչը գալիս էր առնվազն Տիգրան Երվանդյանի ժամանակվանից:

Ի վերջո, կնքվում է հաշտություն՝ փոխզիջումներով: Յայաստանը ճանաչում է Աքեմենյանների գերիշխանությունը, սակայն պարսիկները ևս իրենց հերթին ստիպված են լինում գնալ մեծ զիջումների: Յայաստանում շարունակում են իշխել Երվանդ Սակավակյացի և Տիգրան Երվանդյանի ժառանգները, որոնք հատում էին սեփական դրամ և վայելում լիակատար ներքին անկախություն:


Ք.ա. 401թ. Յայաստանում իշխում էր Երվանդ (Օրոնտես) Բ-ն, որին Աքեմենյան տիրակալ Արտաքսերքսես Բ-ն կնության էր տվել իր դստերը, իսկ Մակեդոնիայի Ալեքսանդր Ա թագավորի (Ք.ա. 336-323թթ.) Արևելյան կամ Պարսկական արշավանքի<sup>1</sup> ժամանակ՝ Երվանդ (Օրոնտես) Գ-ն, որը Ք.ա. 331թ. Գավգամելայի ճակատամարտից հետո վերադառնում է և հայտարարում Մեծ Յայքի լիակատար անկախությունը (տե՛ս քարտեզ 2.6):

<sup>1</sup> Արշավանքը տեղի է ունեցել Ք.ա 334-325թթ.: Այն Հին աշխարհի պատմության բացառիկ իրադարձություն է, քանի որ հունամակեդոնական բանակը տասը տարում մարտերով անցել է 20 հազար կմ՝ չմեքենայացված բանակների պատմության չգերազանցված ցուցանիշ արձանագրելով: Արշավանքի տարիներին մակեդոնական բանակի միակ իրական անհաջողությունը Յայաստանի դեմ Ք.ա. 328թ. ձեռնարկված արշավանքում կրած պարտությունն է:



ՀԱՅԱՍՏԱՆԸ Ք.Ա. 522-520 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

**ՄԱՆԱԿԱՆ ԱՄԵՂՈՒՄԻ ԱՐԽՈՒՄՆԵՐԻ ԴՈՄԻՆԱՆՏԱՆԿԱՆ ԴՆՏԱՑՈՒՄ Ի՞՞ ԵՄԿՐԴՐՈՒՄ ԴՈՄԻՆԱՆՏԱՆԿԱՆ ԴՆՏԱՑՈՒՄ**



ԴՆՁՈՒՆ III

**ՀԱՅԱՍՏԱՆԸ Ք.Ա. III ԴԱՐԻ  
ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ԵՎ Ք.Ա. II ԴԱՐԻ  
ՍԿՁԲԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ**

Աքեմենյանների անկման շրջանում Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան հատվածում կազմակերպվում է հայկական քաղաքական երկրորդ միավորը՝ Փոքր Հայքը: Արդեն Գավգամելայի ճակատամարտում (Ք.ա. 331թ.) հայերի մասնակցության մասին խոսելով՝ հույն պատմիչները Մեծ Հայքից բացի նաև Փոքր Հայքի զորքերի հիշատակումն են անում<sup>1</sup>: Ի տարբերություն Մեծ Հայքի, Փոքր Հայքն ընդունում է մակեդոնացիների գերիշխանությունը:

Ք.ա. III դ. երկրորդ կեսն Առաջավոր Ասիայում ուժերի նոր վերախմբավորումների ժամանակաշրջան է դառնում: Ալեքսանդրի տերության մեծ մասում հաստատված Սելևկյան պետությունը հետզհետե թուլանում է: Ք.ա. 255թ. անկախացած և հետագա մեկ և կես դարերի ընթացքում գրեթե անընդհատ հզորացող Պարթևստանն արևելքից և Առաջին ու երկրորդ Պունիկյան պատերազմներում (համապատասխանաբար՝ Ք.ա. 264-241թթ. և 218-201թթ.) Կարթագենից հաղթած ու Բալկաններում հիմնավորվող Հռոմն՝ արևմուտքից՝ հզոր ախոյաններ են դառնում Սելևկյանների համար:

Բուռն փոփոխություններ են տեղի ունենում նաև Հայաստանում: Ք.ա. III դարի կեսերին Մեծ Հայքից առանձնանում է Օռփքի և Կոմմագենեի թագավորությունը, որը դարավերջին, իր հերթին, բաժանվում է երկու մասի: Կարճ ժամանակ անց Օռփքի թագավորությունն ընդունում է Սելևկյանների իշխանությունը: Այստեղ կառավարիչ է նշանակվում Ջարեհը (Ջրախաղրիս):

Վրացական պետության հիմնադրումից (Ք.ա. 270-ական թթ.) որոշ ժամանակ անց Հայկական լեռնաշխարհի որոշ հյուսիսային և հյուսիսարևելյան շրջաններ անցնում են այդ պետությանն ու այդ վիճակում մնում մինչև Ք.ա. II դարի սկիզբը<sup>2</sup>:

Սելևկյան պետության կենտրոնական շրջաններից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող Հայկական լեռնաշխարհը Ք.ա. III դ. վերջին գտնվում էր նրա տիրակալների քաղաքական շահերի ոլորտում: Մանավանդ երբ Սելևկյան Անտիոքոս Գ-ն արշավանքով վերականգնում է իր իշխանությունն Ատրպատականում և արքանի մեջ առնում Մեծ Հայքի թագավորությունը: Ստեղծվում է փակուղային թվացող իրադրություն. Հայաստանում իշխող Երվանդունի տիրակալները չէին կարողանում դեռևս հզոր Սելևկյանների դեմ պայքարում ակնկալվող ռազմական լուծումները գտնել, որը ներքաղաքական ճգնաժամի պատճառ է դառնում...

<sup>1</sup> Գավգամելայի ճակատամարտին հայկական զինուժի մասնակցության մասին տես «Մեր հաղթանակները», հատ. Ա, էջ 148-160:

<sup>2</sup> Այս գավառների վերամիավորման մասին տես հաջորդ ակնարկը:

## **Չայ-սելևկյան հակամարտությունը**

Տարածաշրջանում հաստատված մակեդոնական իշխանությունների հանդեպ Չայաստանում տասնամյակներ շարունակ խիստ որոշակի (ընդհանուր առմամբ՝ բացասական) վերաբերմունք էր ձևավորվել: Արևելյան արշավանքի դժնդակ տարիներին Երվանդ Գ-ն չէր ընդունել Ալեքսանդր Մակեդոնացու գերիշխանությունն ու պահպանել էր անկախությունը: Չայաստանը հնարավորինս հեռու էր մնացել Ալեքսանդրի ժառանգորդը դառնալ ձգտող զորավարների՝ դիոդոթոսների գրեթե կես դար տևած զգվռտոցից<sup>1</sup>:

Սելևկյանների դեմ անվերջանալի թվացող պատերազմներում ևս Մեծ Չայքը պահպանել էր անկախությունը, բայց Սելևկյանների խամրող հզորությանը զուգընթաց՝ թուլանում էր նաև Չայաստանը: Այս ընթացքում հայ-սելևկյան հակամարտության թատերաբեմը Չայաստանն էր մնում. պատերազմները տեղի էին ունենում միայն այն ժամանակ, երբ Սելևկյան հերթական տիրակալը զորքը մտցնում էր Չայաստան:

**Ռազմական տեղեկանք.** Տեղի էր ունենում հետևյալը. Սելևկյանների բանակը ներխուժում էր երկրի սահմանային շրջաններ և, հայկական կողմին դիմադրությունը դադարեցնել հարկադրելու և իր գերիշխանությունն ընդունել տալու նպատակով, ամբողջ շրջաններ ամայացնելով, շարժվում էր դեպի կենտրոնական շրջաններ:

Երվանդունի արքաները հայտարարում էին զորահավաք և թագավորական բանակը շարժում հակառակորդին ընդառաջ: Գրեթե միշտ հաջողվում էր ոսոխին ջախջախել և դուրս մղել մեր երկրից, որը ռազմական առումով հաղթանակ է: Սակայն ավերվում էին հսկայական տարածքներ, այլ խոսքերով՝ հաղթանակը չափազանց թանկ գնով էր ձեռք բերվում: Աճում էր դժգոհությունը այդ ավերածություններից բնակչությանը պաշտպանելու արդյունավետ միջոցներ գտնել չկարողացող իշխանությունից:

Երվանդունի արքաներից վերջինը՝ Ք.ա. III դ. վերջերին գահակալած Երվանդ Դ-ն, Սելևկյանների ոտնձգություններից երկիրը զերծ պահելու նպատակով ձևականորեն ճանաչում է նրանց գերիշխանությունն ու այդ ճանապարհով երկրի հարավային շրջանների համար շունչ քաշելու հնարավորություն ստանում:

*Բնակչությունը ձգտում էր խաղաղության, սակայն անկախության կորուստի գնով խաղաղության ձեռքբերումն էլ ավելի է զցում թագավորի հեղինակությունը:*

<sup>1</sup> Մակեդոնական բանակի զորավարների միջև ծավալված այս պատերազմները տևել են Ք.ա. 321-276թթ.:

Իր վարկանիշի հետագա անկումը կանխելու նպատակով Երվանդ Դ-ն սկսում է շենացնել երկրի կենտրոնական շրջանները, մանավանդ Այրարատ նահանգը: Ձեռնարկվում են աննախադեպ ծավալի շինարարական աշխատանքներ, որոնց մեջ ամենանշանակալին Երասխ և Ախուրյան գետերի միախառնման վայրում Երվանդաշատ մայրաքաղաքի կառուցումն էր: Կառուցվում են նաև Երվանդակերտ ու Բագարան բնակավայրերը, տնկվում է «ծննդոց անտառը» և այլն:

Երկրի շենացման հեռակա նպատակ հետապնդող այս քաղաքականությունը, սակայն, չի տալիս սպասված արագ արդյունքը: Հաճախադեպ պատերազմներում զգալիորեն հյուժժված պետությունը շինարարական աշխատանքների վրա սպառում է իր վերջին ռեսուրսները: Բողոքի հետևանքով Երվանդ Դ-ն գահընկեց է արվում (Ք.ա. 201թ.): Դրանով Անտիոքոս Գ-ն հույս ուներ կանխել հարևան պետության շենացումը: Բայց նրա «հեռահար» նախագծերին վիճակված չէր իրականություն դառնալ:

Սելևկյան բանակը Ք.ա. 190թ. Մագնեսիայի ճակատամարտում հռոմեացիներից ծանր պարտություն է կրում: Դրանից շտապում է օգտվել Ք.ա. II դարի սկզբից Հայաստանի կենտրոնական և արևելյան շրջաններում իշխող զորավար Արտաշեսը և տասներկուամյա ընդհատումից հետո կրկին երկիրն անկախ հռչակում: Պարթև Արշակունիներից կրած նորանոր պարտությունների պատճառով Սելևկյաններն, ի վերջո, ստիպված հրաժարվում են տարածաշրջանային առաջատարի իրենց դերից:

# **ԱՐՏԱՇԵՍ Ա ԲԱՐԵՊԱՇՏ. ՄԻԱՎՈՐԻՉ ՀԱՂԹԱՐՇԱՎՆԵՐ**

Արտաշես Ա-ն (Ք.ա. 189-160թթ.) հիմնադիրն է Արտաշեսյան հարստության, որն իշխել է Հայաստանում Ք.ա. 189 - Ք.հ. 1թթ.: Նա հայտնի է որպես մեծագույն բարեփոխիչ, պետական և ռազմական արտասովոր հեռատեսություն և գթասրտություն ունեցող գործիչ, ինչի համար էլ արժանացել է «Բարեպաշտ» մականվանը:

## ***Ռազմական բարեփոխումները***

Երկրի ռազմաքաղաքական հզորացման գործընթացն Արտաշեսը շրջահայացորեն սկսում է բանակի համալրման համակարգի վերակառուցումից: Ջորահավաքի կազմակերպումը հեշտացնելու համար երկիրը բաժանվում է 120 վարչական միավորների՝ գավառների: Գավառապետին է հանձնվում իր շրջանի զինված ուժերի ղեկավարումը: Գավառների կողմից թագավորին ներկայացվող զորքի թիվը որոշվում էր ըստ բնակչության քանակի:

Արտաշես Ա-ն ուշադրություն է դարձնում երկրի սահմանների ամրացման խնդրին: Հակառակորդի առաջխաղացմանը խոչընդոտելու նպատակով սահմանամերձ շրջաններում (Գուգարք, Նոր Շիրական, Կորդուք և Աղձնիք) ստեղծվում են մշտական զորք պահելու իրավունք ունեցող չորս բղեշխություններ:

«Ձորքի իշխանությունն էլ չորս մասի է բաժանում (Արտաշեսը). արևելյան կողմի զորքը թողնում է Արտավազդին<sup>1</sup>, արևմտյանը տալիս է Տիրանին, հարավայինը վստահում է Սմբատին, իսկ հյուսիսայինը՝ Չարեհին»:

**Մովսես Խորենացի,  
Հայոց պատմություն, Գիրք Բ, Գլուխ ԾԳ**



**Սահմանաքարի նկար**

<sup>1</sup> Պատմիչները բղեշխներին անվանում էին «սահմանակալներ» կամ «սահմանապահներ»: Բղեշխներից երեքն Արտաշեսի որդիներն էին (Արտավազդն ավագ որդին է, որը հոր մահից հետո հռչակվեց Հայոց թագավոր (Ք.ա. 160-115թթ.), Տիրանը աղբյուրներից հայտնի է Տիգրան ձևով և Հայոց Տիգրան Ա (Ք.ա. 115-95թթ.) թագավորն է, և Չարեհը, իսկ չորրորդը տաղանդավոր զորավար, սպարապետ Սմբատ Բագրատունին էր:

Բդեշխներն իրենց գործնասերով պետք է կաշկանդեին հակառակորդի գործողությունները, խոչընդոտեին նրա առաջխաղացմանն ու ժամանակ շահեին, որպեսզի թագավորի կոչով միավորված բանակը հակառակորդին ընդառաջ շարժվեր: Առանձին դեպքերում, երբ պետություն ներխուժած հակառակորդը փոքրաթիվ էր, բդեշխն իր ուժերով էլ ջախջախում ու երկրից դուրս էր շարտում նրան:

### ***Արշավանքների նախապատրաստումը***

Նախկինում կորցրած ծայրագավառների միավորման նպատակով Արտաշեսը քայլեր է ձեռնարկում նախապատրաստական բոլոր միջոցառումների ավարտումից և ակտիվ ռազմական քաղաքականության նախադրյալների ստեղծումից հետո:

Ք.ա. III դ. Սելևկյաններին դաշնակցած Վիրքը Հայաստանից խլել էր հյուսիսի սահմանային շրջանները, իսկ երկրի արևելքում անջատվել էր Փայտակարանը՝ Կասպիանե կամ Կասբից երկիրը, որտեղ Ք.ա. II դ. սկզբին իշխում էր Ջարդամանոսը: Սելևկյանները հարավում գրավել էին Տմորիքը: Արևմուտքում Մեծ Հայքից առանձնացած էին Ծոփքի անկախ թագավորությունը և Բարձր Հայքի մի մասը: Այժմ Արտաշեսի խնդիրն էր վերականգնել նախկին սահմանները: Ուստի, նա կազմակերպում է ռազմական արշավանքներ այդ չորս ուղղություններով (տե՛ս քարտեզ 3.1):


### ***Արշավանքները***

*Արևելքում* Սմբատ Բագրատունու գլխավորած ուժերն ազատագրում են Փայտակարանը, Պարսպատունիքը և դրանց միջև ընկած տարածքները: Հայոց բանակի տարած հաղթանակն էլ ավելի մեծ արժեք է ստանում, քանի որ, Մովսես Խորենացու վկայությամբ, Կասբից երկրի թագավոր Ջարդամանոսը պատերազմում գերվում է: Ակնհայտորեն շարունակում է գործել պատերազմի իրավունքի (մարդասիրության) այն նույն համակարգը, որի ակնատեսն էինք Ք.ա. III հազարամյակի տարածաշրջանային զարգացումներին հետևելիս:

*Հյուսիսում* Սմբատ զորավարն ազատագրում է Պարխարի լեռնալանջերը, Կդարջքը և Գուգարք աշխարհի մի մասը: Ջարգացնելով հաջողությունները՝ հայոց զորքերը հյուսիսային արշավանքի արդյունքում հպատակեցնում են Վիրքը, ուր կուսակալ է կարգվում արքայազն Ջարեհը: Հետագայում վրացիները երկու անգամ ապստամբում են, սակայն երկու անգամ էլ հնազանդեցվում: Մեծ Հայքի ազդեցության ոլորտում հայտնված Վիրքը երկար ժամանակով դա-

Քարտիկ 3.1

ՄԵՐ ՀԱՅՅՔԻ Հողերի ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ԱՐՏԱՇԽԱՆ ԱԿՕՐԻՔ (Ք.Ա. 189-160թթ.)



դարում է խոչընդոտ լինել արևմուտքում և հարավում ակտիվ քաղաքականություն վարող Արտաշեսի, ինչպես նաև նրա հաջորդների համար: Ի վերջո, Վիրքը պարտավորվում է 10 հազարանոց օգնական զորք տրամադրել Մեծ Հայքին և Արտաշեսի պատկերով դրամ հատել:

*Արևմուտքում* իր գործունեությունը ծավալելիս՝ Արտաշեսը համագործակցում է Ծոփքի արքա Ջարեհի հետ: Համատեղ ուժերով նրանք Կատաոնիայից (Ծոփքից արևմուտք ընկած երկիր) հետ են գրավում Եկեղյաց գավառը, Անտիտավրոսի արևելյան ստորոտի հողերն ու բաժանում միմյանց միջև: Պոնտոսում բնակվող քալյուբներից ու մոսյունոյկներից հայկական զորքերն ազատագրում են Կարինի և Դերջանի շրջանները:

*Հարավում* դեռևս Սելևկյանների տիրապետության տակ էր մնում Տնորիքը: Օգտվելով Եգիպտոսի դեմ Սելևկյան տերության պատերազմից՝ հարավակողմի հայկական զորքերի հրամանատար նշանակված Սմբատ Բագրատունին Ք.ա. 168թ. ազատագրում է հայկական այդ երկրամասը: Երեք տարի հետո Սելևկյանները փորձում են հետ նվաճել այն, սակայն հայոց զորքերի համառ դիմադրության արդյունքում անհաջողության են մատնվում (տե՛ս քարտեզ 3.1):

Արտաշեսի ծրագրերի մեջ էր մտնում նաև Ծոփքի վերամիավորումը Մեծ Հայքին: Սակայն դա իրականացվեց շուրջ յոթ տասնամյակ անց միայն՝ Տիգրան Բ Մեծի օրոք (Ք.ա. 94թ.):

Սելևկյանների դեմ պայքարի վերջին դրվագն էր Արտաշեսի աջակցությունը Մարաստանի սատրապ Տինարքոսին, որը Սելևկյան տերության դեմ Ք.ա. 162-160թթ. ապստամբության արդյունքում ստեղծում է անկախ պետություն:

### ***Արշավանքների արդյունքների ամրագրումը***

Հայաստանի հզորացման ու բնական սահմանների վերականգնման քաղաքականությունը հենց սկզբից ավելի մեծ, բարեկարգ ու պաշտպանված մայրաքաղաք հիմնադրելու անհրաժեշտություն էր առաջ բերել: Մայրաքաղաքն Արտաշեսը կառուցում է Արաքս և Մեծամոր գետերի միախառնմամբ կազմված թերակղզում՝ մի բլրի վրա, և իր անվամբ կոչում Արտաշատ: Այն երեք կողմից շրջապատված էր գետով և հզոր պարիսպներով, իսկ չորրորդ կողմից՝ խրանով ու պատվարով: Արտաշեսը շենացնում է քաղաքը՝ այն բնակեցնելով տեղացիներով և նախկին մայրաքաղաք Երվանդաշատից բերված բնակչությամբ: Պատմիչների պնդմամբ՝ Արտաշատը կառուցելիս Արտաշես Ա-ին օգտակար խորհուրդներով օգնել է կարթագենցի տաղանդավոր զորավար Հաննիբալը (Հաննիբալ Բարկա, Ք.ա. 247-183թթ.), որն այդ ժամանակ հանգրվանել էր Մեծ Հայքում: Հաննիբալին են վերագրվում նաև քաղաքի հատակագծի կազմումը և շինարարական աշխատանքների ղեկավարումը:

**Պատմական տեղեկանք.** «Հայաստանի քաղաքներն են Արտաքսատան<sup>1</sup> (որը կոչում են Արտաքսիասատա, որը Հաննիբալը կառուցել է Արտաքսիաս<sup>2</sup> թագավորի համար) և Արքսատան, երկուսն էլ Արաքսի վրա... Արտաքսատան երկրի արքայանիստն է. գտնվում է գետա(թևի) կազմած թերակղզու վրա, նրա պարիսպը շուրջանակի պատում է գետը՝ բացի պարանոցից, իսկ պարանոցը շրջափակված է փոսով և պատնեշով»:

**Ստրաբոն, Աշխարհագրություն, XI, 14**

«Պատմում են, թե կարթագենցի Հաննիբալը... գնաց Արտաշես Արմենի արքունիքը, որին բազում պիտանի խորհուրդներ և հրահանգներ տվեց: Բացի այդ, նկատելով չօգտագործված ու լքված, սակայն բացառիկ հարմարագույն և ակնահաճո մի վայր՝ նա այդ տեղում ուրվագծելով քաղաքի հատակագիծը՝ կանչեց Արտաշեսին և ցույց տալով նրան այդ վայրը՝ համոզեց քաղաք կառուցել այստեղ: Թագավորն ուրախությամբ համաձայնվեց և խնդրեց Հաննիբալին, որ նա անձամբ իր վրա վերցնի շինարարական աշխատանքների վերակացությունը: Կառուցվեց մեծ և շատ գեղեցիկ մի քաղաք, որին թագավորը տվեց իր անունը և այն հռչակեց Հայաստանի մայրաքաղաք»:

**Պլուտարքոս, Ջուզահեռ կենսագրություններ, Լուկուլլոս, XXXI**

## **Եզրակացություն**

Արտաշես Ա-ի բուռն գործունեության արդյունքն էին Մեծ Հայքի հիմնական մասի միավորումն ու հզորացումը, որով պետությունն աստիճանաբար վերածվում էր տարածաշրջանի զորեղ պետության:

Իր գահակալման ամբողջ ընթացքում ակտիվ արտաքին քաղաքականություն վարող Արտաշես Ա-ն թեև երկրի միավորումն իրականացնում էր զինված ուժի կիրառմամբ, սակայն ինքնանպատակ բռնություններ թույլ չէր տալիս: Այդ է պատճառը, որ հայ ժողովրդի հիշողության մեջ նա մնաց նաև «Բարի» պատվանունով:

<sup>1</sup> Արտաշատ:

<sup>2</sup> Արտաշես Ա:

## ՏԻՂՐԱՆ Բ ՄԵԾԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Հայոց ռազմարվեստի պատմության կարևորագույն փուլերից է Մեծ Հայքի հզորության գագաթնակետի՝ Տիգրան Բ-ի գահակալման ժամանակաշրջանը (Ք.ա. 95-55թթ.), երբ հայոց բանակն անցավ հարձակողական ռազմավարության և թագավորությունն ընդարձակվեց՝ ընդգրկելով Եգիպտոսից մինչև Կովկաս ու Մարաստանից մինչև Պոնտոս ընկած հսկայական տարածքներ:

«Տիգրանի մեծությունը նրանում է, որ գահակալման առաջին իսկ օրից՝ ներքին զարգացման համար խաղաղ տարիներ գրեթե չունենալով, ճշգրիտ հաշվարկն ու համարձակությունը միավորեց մի անձի մեջ՝ այն հաղորդելով իր երկրի հպատակներին»:

**Յ.Պ. Հակոբյան, Տիգրան Մեծ, էջ 76**

Տիգրան Մեծի գահակալության տարիները Հայոց պատմության մեջ եզակի էին հետագա սերունդների ինքնագիտակցության խորացման գործում ունեցած բացառիկ ազդեցությամբ:



Մետաղադրամ  
Տիգրան Բ Մեծի պատկերով

## **ՀԱՅ-ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԸ (Զ.Ա. 87-86ԹԹ.)**

Տիգրան Բ-ի գահակալմանը նախորդած շրջանում երկիրը տնտեսապես և ռազմականապես հզորացել էր, ինչն անխուսափելիորեն հանգեցնելու էր տարածաշրջանի գերտերության՝ Պարթևստանի հետ առճակատմանը: Այդ բախմանը Տիգրանը նախապատրաստվում է գահակալման սկզբում ձեռնարկած ռազմական բարեփոխումներով, որոնց արդյունքում հայոց բանակի կառուցվածքն էական փոփոխություններ է կրում:

### ***Ռազմական բարեփոխումները***

Ստեղծվում է *ժանրազեն զրահավոր* հեծելազոր, որը դառնում է բանակի գլխավոր հարվածային ուժը: Հեծելազորը զինվում է երկար նիզակներով, աղեղներով, սրերով, իսկ ժանրազենը, բացի այդ, պաշտպանվում զրահով ու երկարացված սաղավարտով: Զրահապատվում են նաև ձիերը: Հետևակի թեթևազեն և ժանրազեն զնդերի մեջ առանձնացվում են միատեսակ զինված ու նույն պաշտպանական հանդերձանքով երեքից վեց հարյուրյակներից բաղկացած միջանկյալ ստորաբաժանումներ:


Հարձակողական ռազմավարություն որդեգրած հայոց բանակի ռազմարվեստի մասին տեղեկությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայոց բանակի մարտավարությունն ընդհանուր գծերով մնան էր արևելյան բանակների, մասնավորապես՝ պարթևականի մարտավարությանը: Սակայն կային նաև էական տարբերություններ. մեծ տեղ էր հատկացված հետևակին, որն անփոխարինելի էր լեռնային կտրտված տեղանքում:

### ***Մարտավարությունը***

Մարտը սկսում էր թեթևազեն հետևակը (նետաձիգներ, տեգաձիգներ, պարաստիկավորներ): Ապա մարտի էր մտցվում ժանրազեն հետևակը, որն անդրադարձնում էր հակառակորդի գլխավոր ուժերի գրոհը: Հեծելազորը մարտի էր մտցվում ժանրազեն հետևակի հետ միաժամանակ: Մարտի ընթացքում հեծելազորի արագաշարժությունն առավելագույնս օգտագործելու համար հեծյալներն ունենում էին երկու տիպի հարձակողական զենք՝ մերձամարտի համար՝ սուր կամ նիզակ և հեռամարտի համար՝ աղեղ:

Հակառակորդին մոտենալիս հեծյալները նետահարում էին նրան, ապա անցնում մերձամարտի: Անհրաժեշտության դեպքում հեծելազորը նետահարելով հետ էր քաշվում և վերախմբավորվելով՝ կրկին գրոհում հակառակորդի

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՏԻԳՐԱՆ Բ ՄԵԾԻ ՕՐՈՔ (Բ.Ա. 95-55ԹԹ.)



վրա: ճակատամարտի վճռական գրոհը սկսելու ժամանակ՝ հեծելազորի հերթական վերախմբավորումից հետո, հակառակորդի մարտակարգի ճեղքման խնդրի կատարմանը ներգրավվում էր ծանրագեն զրահավոր հեծելազորը:

### **Պատերազմի նախապատրաստումը**

Պարթևստանի դեմ պատերազմի նախապատրաստումը, ռազմական բարեփոխումներից բացի, ընդգրկում էր նաև Ծոփքը Մեծ Հայքին վերամիավորելու գործողությունը (Ք.ա. 94թ.), Պոնտոսի հետ կնքված դաշինքը (Ք.ա. 94թ.), դաշնակից զորքերի կողմից Կապադովկիայի համար ծավալված պայքարը (Ք.ա. 93, 92-91թթ.) և այնտեղից մարդկային հսկայական զանգվածների տեղափոխումը Հայաստան, այլ ուղղությունից հավանական սպառնալիքների չեզոքացումը (այդ թվում՝ Վիրքի և Աղվանքի միացումը) (տե՛ս քարտեզ 3.2):


Հետևողական և կշռադատված ռազմավարության վկայությունն է նաև, որ պատերազմը սկսվում է այն ժամանակ, երբ *Պարթևստանն անպատրաստ էր դիմակայել տարածաշրջանում իր առաջնությունը վիճարկելու փորձերին*: Պարթևստանը հյուժվել էր երկպառակտչական պատերազմներից և անհամեմատ ավելի մեծ մարդկային ու նյութական ռեսուրսներ ունենալով՝ իր տիրապետության տակ գտնվող Հյուսիսային Միջագետքի և Իրանական բարձրավանդակի հյուսիսարևմտյան շրջանների համար ծավալվելիք պայքարին պատրաստ չէր:

Ռազմական գործողությունների ընթացքը ցույց է տալիս, որ մեծ նշանակություն է տրվել նաև *հարձակման ուղղության* ընտրությանը: Հայկական բանակը պարթևների տիրույթներ է մտնում ամենակարճ ու անսպասելի ուղղությամբ՝ Վանա լճից արևելք ընկած այն «յոթանասուն հովիտներ» կոչվող տարածքով, որը Տիգրանը զիջել էր պարթևներին պատանդությունից ազատվելու համար: Բարձր լեռներով ու բազմաթիվ ամրաշինական կառույցներով պաշտպանված սահմանային այս գոտին առավել անհաղթահարելի էր համարվում: Հետևաբար, հանկարծակիության գործոնն օգտագործվում է ոչ միայն *հարձակման պահի*, այլև ուղղության ընտրության խնդրում: Դրանով հայկական բանակը նախաձեռնություն է ստանում պատերազմում և առաջին իսկ մարտերում վճռում պատերազմի ելքը:

### **Պատերազմը**

Սահմանային շրջաններում տեղակայված պարթևական զորամասերի դիմադրությունը հաղթահարելով՝ հայկական բանակը շարժվում է դեպի հարավ և Ասորեստանի երբեմնի մայրաքաղաք Նինվեի շրջակայքում ջախջախում պարթևական բանակի գլխավոր ուժերը (տե՛ս քարտեզ 3.2):

ՀԱՅ-ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ Բ.Ա. 87-86ԹԹ.



Հայոց բանակը զարգացնում է հաջողությունը, և հարձակումն ուղղվում է դեպի արևելք: Դրանով կտրվում են Պարթևական տերության ու նրանից կախյալ Ատրպատականի թագավորության հաղորդակցության ուղիները: Պարթևստանի ռազմական աջակցությունից զրկված Ատրպատականը միայնակ չէր կարողանա պայքարել կարճ ժամանակում պարթևների պես հզոր ախոյանին ջախջախած հայոց հսկայական ռազմական մեքենայի դեմ: Այդ գիտակցելով՝ Ատրպատականը հարկադրված ճանաչում է Տիգրանի գերիշխանությունը:

Ատրպատականի կողմից ևս թիկունքն ապահովելով՝ Տիգրան Բ-ն բանակը շարժում է դեպի Էկբատան արքայանիստ քաղաքը, որտեղ պաշարված պարթևական արքունիքը ստիպված է լինում ընդունել նրա առաջադրած պահանջները (տե՛ս քարտեզ 3.2):

Պարթևները ոչ միայն հրաժարվում են հայոց բանակի գրաված տարածքներից, այլև Մեծ Հայքի թագավորին զիջում «Արևելքի արքայից արքա» տիտղոսը: Պարթևստանն ընդունում է Տիգրան Մեծի գերիշխանությունը և մտնում Հայկական տերության մեջ:

### **Եզրակացություն**

Այսպիսով, հայ-պարթևական պատերազմի նախապատրաստումը, կազմակերպումը և վարումը անթերի էին և վկայում են Տիգրան Բ Մեծի զորավարական տաղանդի մասին:

Պարթևստանի և Ատրպատականի հաղորդակցային ուղիները կտրելու սպառնալիքի ստեղծմամբ վերջինիս Հայկական տերության գերիշխանությունը պարտադրելն **անուղղակի գործողությունների ռազմավարության** կիրառման դասական օրինակ է:



**Տիգրանակերտի աշտարակներից մեկը**

## ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ. ԱՍՈՐԻՔԻ, ՓՅՈՒՆԻԿԻԱՅԻ ԵՎ ՀՐԵԱՍՏԱՆԻ ՄԻԱՋՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆԸ (Ք.Ա. 83-70ԹԹ.)

Մեծ Հայքի թագավորության արտաքին քաղաքականության նոր փուլ է սկսվում Պարթևստանի դեմ պատերազմում տարած հաղթանակից հետո: Այն որակապես տարբերվում էր նախկինից և շարունակվում է մինչև Ք.ա. 70թ.: Այս փուլի մասին սկզբնաղբյուրների տեղեկություններն ավելի հարուստ են:

Հայկական պետության հզորացումը համընկնում է Հռոմի աշխարհակալության ստեղծման ժամանակաշրջանին, երբ աստիճանաբար պարզ է դառնում, որ ամբողջ Առաջավոր Ասիան է Հռոմի նվաճողական քաղաքականության թիրախը: Տարածաշրջանում սկսվում է մարտահրավերների (այդ թվում՝ նաև հռոմեական սպառնալիքի) դեմ ուժերը միավորելու գործընթաց:

Ակնհայտ է, որ ուժերի միավորումը պետք է ընթանար ամենահզորի՝ Մեծ Հայքի շուրջը: Այս քաղաքական ռազմավարությունը մեծապես նպաստում էր Ք.ա. 84-70թթ. Հայկական տերության հաղթանակներին:

### *Միավորման գործընթացը*

Միավորման շարժման նախաձեռնողն է դառնում ներքին երկարատև երկպառակությունների մեջ գտնվող Սելևկյան պետության (Ասորիք (Սիրիա) և Փյունիկիա) քաղաքական վերնախավը (տե՛ս քարտեզ 3.3): Ք.ա. 83թ. Տիգրան Մեծը հրավիրվում է իշխելու Անտիոքում:

**Պատմական տեղեկանք.** «(Սելևկյան պետության- հեղ.) ժողովուրդը դիմեց օտարի օգնությանը և սկսեց փնտրել օտարերկրացի թագավոր: Ոմանք կարծում էին, որ պետք է հրավիրել Միհրդատ Պոնտացուն<sup>1</sup>, մյուսները՝ Եգիպտոսի Պտղոմեոսին<sup>2</sup>... բոլորը համաձայնության եկան Հայաստանի թագավոր Տիգրանի շուրջ, որը սեփական ռազմական ուժ ունենալուց բացի՝ պարթևների թագավորության դաշնակիցն էր ու Միհրդատի խնամին: Եվ այսպես, հրավիրված լինելով Ասորիքի գահին բազմելու, նա 17 տարի շարունակ կառավարում էր ամենայն անդորրությանը, չէր խանգարում պատերազմներով ուրիշների հանգիստը, և ոչ ոք նրան չէր անհանգստացնում, այնպես որ՝ պատերազմելու անհրաժեշտություն չկար»:

**Հուստինոս<sup>3</sup>, Քաղվածքներ, XL, 1,1-4**

<sup>1</sup> Միհրդատ 2 Եվպատոր (Ք.ա. 111-63թթ.):

<sup>2</sup> Պտղոմեոս ԺԱ Լաթյուրոս (Ք.ա. 88-80թթ.):

<sup>3</sup> Իլ դարի լատին մատենագիր Հուստինոսի աղբյուրը Ք.ա. I - Ք.հ. Iդդ. պատմագիր Պոմպեոս Տրոգոսի «Փիլիպպոսյան պատմություններն» են եղել, որից նա քաղվածքներ (համառոտագրություններ) է արել:

Ասորիքուն երկար ժամանակ ձգտում էին գահի այնպիսի թեկնածու ունենալ, որն ի վիճակի լիներ վերջ դնել հյուծիչ եղբայրասպան պատերազմին: Այս առումով պատահական չէ, որ Տիգրան Մեծի իշխանությունը չի հանդիպում լուրջ դիմադրության: Տիգրան Մեծը Սելևկյանների գահին բազմելու հրավիրվեց, երբ Մեծ Չայքը հարևանին չէր սպառնում ներխուժումով: Չայոց արքայի թեկնածությանը հավանություն տրվեց, քանի որ ոչ ոք չէր կարող նրանից ավելի արագ վերականգնել Ասորիքի քայքայված տնտեսությունն ու ապահովել հետագա խաղաղ զարգացումը:

Սելևկյանների գահին Տիգրանի հաստատվելու ընթացքը խոսուն վկայում է հայոց պետականության և հսկայածավալ նվաճումներ իրականացրած հայոց բանակի միջազգային բարձր հեղինակության մասին: Բայց չէ՞ որ պետության միջազգային հեղինակությունը հարևանների համար երբեք բավարար չի եղել կամովին անկախությունն օտարի իշխանությանը փոխարինելու համար: Յետևաբար, կարող ենք արձանագրել, որ մի շարք երկրներում հայկական տիրապետությունն ընդունելու միջոցով Մեծ Չայքի շուրջը համախմբվելու քաղաքական յուրօրինակ շարժում էր ծավալվել: Հին աշխարհում միավորման այս կարգի պահպանման օրինակները հազվադեպ են հանդիպում, սակայն եզակի չեն: Հիշենք, թեկուզ, ասսուրական բանակի դեմ պայքարում Վանի թագավորության շուրջ միավորման շարժումը Բ.ա. IXդ. վերջին:

**Պատմական տեղեկանք.** «Ասորիքը ազատ շունչ քաշեց, և թեպետ ենթարկվեց նվաստացուցիչ օտար իշխանության, սակայն... ունեցավ խաղաղություն, ապահովություն ու բարեկեցություն»:

**Reinach Th., Mitridate Eupator roi de Pont, Paris, 1890, p. 312**

### ***Միավորման շարժման նոր փուլը***

Տարածաշրջանի երկրների քաղաքական վերնախավի կողմից Մեծ Չայքի շուրջը համախմբվելու շարժումը շարունակվում է նաև հետագա տարիներին և նոր թափ ստանում Բ.ա. 70-ական թթ. վերջերին, երբ բարդ ռազմաքաղաքական իրադրության մեջ հայտնված Հրեաստանը կրկնում է Սելևկյան պետության փորձը (տե՛ս քարտեզ 3.3):

ԱՐԵՎԵԼՔԻ ՄԻԱԿՈՐՈՒՄԸ ՏԻԳՐԱՆ Բ ՄԵԾԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈՒ



**Պատմական տեղեկանք.** «Այդ ժամանակ էլ լուր է հասնում, թե հայոց թագավոր Տիգրանը երեսուն բյուր զորքով ներխուժել է Սիրիա և գալիս է Զրեաստանի դեմ: Այս, բնականաբար, ահաբեկեց թագուհուն և ժողովրդին: Ուստի նրանք բազում և արժանավայել ընծաներ ուղարկեցին նրան և դեսպաններ, երբ նա դեռևս պաշարում էր Պտղոմայիս (քաղաքը)... դեսպանները, հանդիպելով նրան, խնդրում էին բարենպաստ պայմաններ շնորհել թագուհուն և ժողովրդին: Իսկ նա, գնահատելով այն, որ նրանք ժամանել են այդքան հեռու տարածությունից, լավագույնս հուսադրեց»:

**Յովսեփոս Փլավիոս, Զրեական հնախոսություն, XIII, 419-421**

Չյուսիսից մոտեցել և Զրեաստանի սահմանային շրջանների մոտ Պտղոմայիսն էր պաշարել հայոց հսկայական բանակը, իսկ հարավից սպառնում էին եգիպտացիները: Շեշտենք, որ Փյունիկիայի հարավում Տիգրան Մեծը զբաղված էր ծագած ապստամբությունը ճնշելով, և հայոց բանակը չէր սպառնում Զրեաստանին: Զետևաբար, թեև Զրեաստանի Ալեքսանդրա թագուհու մտավախություններն անհիմն չէին, սակայն Մեծ Հայքի տիրապետությունը ճանաչելու գնով տարածաշրջանային մարտահրավերներին դիմակայելու շարժմանը միանալու գիսավոր պատճառը հարավային հարևանի հարձակումներին դիմակայելու անհրաժեշտության գիտակցումն էր:

Զրեական արքունիքն իրադրությունը սթափ գնահատելով՝ հյուսիսային հզոր հարևանին հայտնում է իր հպատակությունը: Այս քայլը լիովին համապատասխանում էր Տիգրան Բ Մեծի քաղաքական ծրագրերին, և նա ընդառաջում է դեսպանների խնդրանքին ու Զրեաստանն առնում իր իշխանության տակ:

**Պատմական տեղեկանք.** «Իսկ Ալեքսանդրան (Արիստոբուլոսի գլխավորությամբ) զորք ուղարկեց Դամասկոս այն պատճառով, որ Պտղոմեոսը անդադար ճնշում էր քաղաքը, սակայն զորքը վերադարձավ իր մոտ, առանց որևէ նշանակալից բան անելու: Մյուս կողմից հայոց թագավոր Տիգրանին, որը բանակել էր Պտղոմայիս քաղաքի առջև և պաշարել էր այնտեղ (փակված) Կլեոպատրային, դաշինքով ու նվերներով հեռացրեց»:

**Յովսեփոս Փլավիոս, Զրեական պատերազմի մասին, I, 115-116**


*Տիգրան Բ Մեծի տերությունը Մեծ Հայքից բացի ընդգրկում էր Աղվանքը, Վիրքը, Միջագետքը, Իրանական բարձրավանդակի հյուսիսն ու արևմուտքը, Միջերկրական ծովի արևելքի երկրները և Նաբաթեան:*

*Նրա գերիշխանությունը ճանաչում էին Պարթևստանը և մի շարք այլ պետություններ:*

ՊԵՆՏՈՆ IV

**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՎԱՐԱԾ ԴԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ  
I-IV ԴԱՐԵՐՈՒՄ**

Քարտիկ 4.1



ԻՎ ՊԵՐՏԻ ՊԱՏԵՐԻՎԱԾՆԵՐԻ ՂԵԽԱՎՈՐ ԻՐԱՂԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ՏԱՍՆԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ 54-64ԹԹ.

Տիգրան Մեծի գահակալությանը հաջորդած շրջանում Մեծ Հայքը պայքարում էր հզորացած Հռոմի նվաճողական քաղաքականության դեմ: Մինչ Հայաստանում գահակալում էին հզոր Արտաշեսյանները՝ Հռոմի հաջողությունները համեստ էին, սակայն Ք.հ. I դարի առաջին կեսին Հռոմն առավել մեծ հաջողությունների է հասնում: Հայոց գահին մեկը մյուսին փոխարինում են Հռոմի՝ հաճախ ապաշնորհ դրածոները<sup>1</sup>: Դա Արևելքի ժողովուրդների աչքում վարկաբեկում է վերջինիս և պայմաններ ստեղծում նրա տիրապետության դեմ պայքար սկսելու համար, որի առաջին իրական փորձերից մեկն է անում Պարթևստանի եռանդուն թագավորներից մեկը՝ Վաղարշ (Վոլոգես) Ա-ն (51-75թթ.), եղբորը՝ Տրդատին Հայաստանի թագավոր դարձնելով:

Տրդատին թագավոր նշանակելու լուրը Հայաստանում ցնծությամբ է ընդունվում, և երբ նա պարթևական զորքով 52թ. մտնում է Հայաստան, Վիրքի՝ Հռոմի դրածո Փարսման թագավորի որդի Հռադամիզդն Արտաշատից փախչում է Վիրք: Տրդատ Ա-ի գահակալումով Հայաստանում հիմք է դրվում Արշակունյաց հարստությանը:

Իշխանատենչ որդուն իր արքունիքից ամեն կերպ հեռացնել ձգտող Փարսմանը Հռադամիզդին վրացական զորքեր է տալիս, որոնց օգնությամբ նա 53թ. վերահաստատվում է Հայոց գահին, սակայն չի կարողանում երկար վայելել հաղթանակի պտուղները: 54թ. ժողովուրդն ապստամբում ու երկրից դուրս է քշում Հռադամիզդին:



Տրդատ Ա-ի հունարեն արձանագրությունը Գառնիից

<sup>1</sup> Ճիշտ է, 114-117թթ. Մեծ Հայքը նույնիսկ ժամանակավոր կորցրեց անկախությունը և վերածվեց պրովինցիայի, սակայն դա ավելի շուտ Հռոմի տիրապետության ավարտի սկիզբն էր նշանավորում, քան նվաճողական քաղաքականության նոր փուլ:

## **Պատերազմի սկիզբը**

54թ. Տրդատի Հայաստան վերադառնալը փաստորեն նշանակում էր *պատերազմ Յռոմի դեմ*: Յռոմի արևելյան զորքերի հրամանատար նշանակված Գնե-  
նոս Դոմիտիոս Կորբուլոնը 57թ. զորքը մտցնում է Հայաստան: Երկարատև ու  
համառ դիմադրությունը հաղթահարելով՝ հռոմեական բանակը հասնում է Ար-  
տաշատ, որը հանձնվում է առանց դիմադրության: Չնայած դրան՝ հռոմեացի-  
ները 58-59թթ. ձմեռը քաղաքում անցկացնելուց հետո այրում են այն ու քան-  
դում ամրությունները: Ապա հռոմեական բանակը մարտերով հասնում է Տիգ-  
րանակերտ, որտեղի հելլենացած բնակչությունը քաղաքը նրանց է հանձնում:  
Գիտակցելով, որ երկրում հենարան չունենալը կարող է վտանգավոր լինել,  
հռոմեացիները չեն ավերում երկրորդ մայրաքաղաքը, իսկ Հայոց գահին  
նստեցվում է Տիգրան Զ-ն (60-61թթ.)՝ հռոմեական մեկ այլ դրածո Տիգրան Ե-ի  
(6թ.) եղբոր որդին:

Յռոմի թելադրանքով Տիգրանը 61թ. գարնանը ներխուժում է Պարթևստա-  
նին ենթակա Ադիաբենեի թագավորություն, որպեսզի պարթևներին ստիպի ըն-  
դունել իր գահակալման փաստը: Պարթևներից օգնական ուժեր ստացած  
Տրդատն անցնում է հակահարձակման ու երկրի մեծագույն մասն ազատում  
հռոմեացիներից: Վաղարշ Ա-ի գլխավորությամբ պարթևական զորքերը կենտ-  
րոնանում են Հայոց Միջագետքում և սպառնում ներխուժել Ասորիք, որի կուսա-  
կալը Կորբուլոնն էր: Վերջինս չի համարձակվում միջամտել Հայաստանի ան-  
ցուդարձին: Արևելքում Յռոմի բանակի հրամանատար Կեսենիոս Պետոսը  
հայ-պարթևական զորքերի դեմ միայնակ է մնում:

## **ՀՌԱՆԴԵԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (62Թ.)**

### ***Ներխուժումը***

Պետոսը 61թ. աշնանը բանակը (մոտ 46 հազար հետևակ և 20 հազար հեծելազոր) Հայաստան է մտցնում: Տավրոսի լեռներն անցնելու անհաջող փորձից հետո նա ձմեռելու համար բանակն իջեցնում է Արածանիի հովիտը և տեղաբաշխում Խարբերդի դաշտում՝ Հռանդեա վայրում: Հայ-պարթևական զորքերի համար բարենպաստ իրադրությունում կրկին ակտիվանում է Հայոց այրուձին, որի համարձակ հարձակումներն ապակողմնորոշում էին հակառակորդի մասին տեղեկություններ չունեցող Պետոսին: 62թ. գարնանը Վաղարշը բանակը շարժում է դեպի Հայաստան: Հաղթահարելով Հայկական Տավրոսի լեռնանցքները պահպանող հռոմեական զորամասերի դիմադրությունը՝ Վաղարշը միանում է Տրդատին:

Խարբերդի դաշտին մոտենալուն պես դաշնակիցներն էլ ավելի մեծ ճնշում են գործադրում հռոմեացիների հիմնական ուժերի վրա՝ հարձակումներ գործելով հռոմեական զորքերի ամրացված ճամբարի վրա: Բանակի հիմնական ուժերի անվտանգությունն ապահովելու համար 3 հազարանոց հեծելազոր է ուղարկվում Տավրոսի լեռների հարևան շրջանները, որտեղից հաճախակիանում էին հայ-պարթևական զորամասերի գրոհները: Մեկ զորամաս էլ ուղարկվում է Արշամաշատ, որտեղ տեղափոխվել էին Պետոսի ընտանիքը և շարքից դուրս եկած զինվորները:

*Ուժերը ցրելով՝ հռոմեացիները զրկվում են իրենց առավելությունից՝ քանակական գերազանցությունից:*

### ***Հաղթանակը***

Հռոմեական զորամասերը չէին համարձակվում դուրս գալ իրենց ամրացված դիրքերից: Անգործության մատնված զինվորների կարգապահությունը թուլացել էր, դասալքությունը մեծ չափերի էր հասել: Այս պայմաններում քանակական գերազանցություն չունենալով՝ դաշնակիցների զորամասերը հեշտությամբ շրջափակում են հռոմեական ճամբարը (տե՛ս սխեմա 1):

Ահաբեկված Պետոսը, չսպասելով Կորբուլոնի գլխավորությամբ օգնության ուղարկված ուժերին, հաշտություն է խնդրում Վաղարշից ու Տրդատից: Հատկանշական է, որ բանակցությունները վարելու է ուղարկվում հայ ազնվականության ներկայացուցիչ, «հեծելազորի պետ Վասակ» իշխանը:

Պետոսը ստիպված ընդունում է հաշտության ամոթալի պայմանները: Հռոմեական ամբողջ բանակը կանոփին հանձնվում է հաղթողների ողորմածությանը: Պետոսը պարտավորվում է հաղթողներին հանձնել իր գրաված բոլոր ամրությունները, ամբողջ զենքը, պարենը և զորքով հեռանալ Հայաստանից:


Պայմանագրի կետերից մեկի համաձայն, հռոմեացի զինվորներն անցնում են *նիզակների լժի* տակով, որը մեծագույն ստորացում և պարտվողների ստրկացման ապացույց էր համարվում (տե՛ս սխեմա 1):

*Նիզակների լուծը* պատրաստվում էր երեք կամ հինգ նիզակներից: Գետնի մեջ խրված երկու կամ իրար հետ խաչված երկուական նիզակների վրա դրվում էր երրորդը (հինգերորդը)՝ մոտ մեկ մետր բարձրությամբ: Դրանով ձևավորվում էր դարպասաձև տարածք: Պարտվածները, հանելով սպառազինությունն ու վերնազգեստը, պետք է անցնեին նրա տակով: Հորիզոնական դրված նիզակի բարձրությունն այնքան պետք է լիներ, որ հակառակորդի նույնիսկ ամենակարճահասակ մարտիկները ստիպված լինեին խոնարհվելով անցնել:

**Պատմական տեղեկանք.** «Պատմում էին և այլ դժբախտ պատահարների մասին, նաև այն, որ նման արարքներ հայերն էին գործել: Որովհետև սրանք, նախքան հռոմեական զորքի հեռանալը, փակել էին ճանապարհները, մտել էին ամրացած ճամբարը և, նկատելով երբևիցե իրենցից խլված ծառաներին ու զրաստներին, վերցնում ու տանում էին: Նրանք զոռով վերցնում էին հագուստեղենն ու պահած զենքերը, իսկ վախեցած զինվորները զիջում էին, որպեսզի կռվի ոչ մի առիթ չծագի»:

**Կ.Տակիտուս, Տարեգրություններ, Գիրք XV, Գլ.15**

Սխեմա 1



ՎԱՐՁԱԶԻՍԻ ԲԱՏԱՆԱԿԱՆ ՍԽԵՄԱ 62Թ.

Հռոմեական բանակի զինվորներին Հայաստանից հեռանալ թույլատրելով՝ Վաղարշը և Տրդատն ընտրել էին ամենաիրատեսական տարբերակը: Այս ձևով, ճիշտ է, հակառակորդը չէր ոչնչացվում, բայց *հաղթանակն իրոք որ կատարյալ էր դառնում*: Հայաստանից հեռացող հռոմեական զորամասերն այնպիսի հոգեբանական հարված էին ստացել, որ այլևս ի վիճակի չէին Հայաստան վերադառնալ և նոր մարտական գործողություններ վարել: Ասվածը հիմնավորվում է նահանջող հռոմեական բանակի ներսում տեղի ունեցող խմորումներից հետևելիս (հռոմեացիները նահանջի ճանապարհին թողնում էին իրենց վիրավոր և հիվանդ զինակիցներին):

**Պատմական տեղեկանք.** «Պետոսը մի օրում կտրել-անցել է քառասուն հազար քայլ (40 մղոն)<sup>1</sup> տարածություն, տեղ-տեղ ձգելով վիրավորներին, և նրա այդ շտապ փախուստը ոչ պակաս խայտառակ է, քան եթե նա մարտում թիկունք ցույց տված լիներ»:

**Կ.Տակիտոս, Տարեգրություններ, Գիրք XV, Գլ. 16**

Հռանդեայից նահանջող հռոմեական բանակի և Կորբուլոնի գլխավորությամբ օգնության շտապող ուժերի հանդիպումն ուշագրավ է ներկայացնում Տակիտոսը: Փախուստի դիմած Պետոսը փորձ է անում խախտել Հռանդեայում կնքած համաձայնագիրը և, օգտվելով նրանից, որ պարթևական բանակը թողել էր Հայաստանը, Կորբուլոնին խորհուրդ է տալիս, որ իրենց զորամասերով միասին հետ վերադառնան: Սակայն հռոմեական բանակին հասցված հարվածն այնքան ծանր հետևանքներ էր ունեցել, որ համալրում ստանալուց հետո էլ Հայաստան վերադառնալն անմտություն կլիներ, և Կորբուլոնը մերժում է առաջարկը:

## **Եզրակացություն**

Պատերազմն այլևս չի վերսկսվում: Հռանդեայում ձեռք բերված համաձայնությունը վերահաստատվում է 64թ. Տրդատ Ա-ի և Կորբուլոնի միջև սկսված բանակցությունների արդյունքում: Հակառակորդի նկատմամբ տարած փայլուն հաղթանակի նշանակությունն էլ ավելի մեծացնելու նպատակով Տրդատ Ա-ն Կորբուլոնից պահանջում է, որ բանակցությունները վարվեն Հռանդեայում, որտեղ և կնքվում է հաշտությունը:

Այսպիսով, պատերազմն ավարտվում է հայ-պարթևական ուժերի հաղթանակով և Տրդատի գահակալմամբ, որը մեկնում է Հռոմ և արքայական թագը ստանում հռոմեական կայսրից:

<sup>1</sup> 40 մղոնը հավասար է 62.2 կմ-ի: Սովորական պայմաններում զորքի ռազմերթի հնարավորությունը 25-30 կմ էր:

## ՎԱՊԱՐԸ Բ. ՀԱՂԹԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ԿՈՎԿԱՍԻ ԼԵՌՆԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՄ

Տասնամյա պատերազմին հաջորդած ավելի քան մեկ դարը մեր տարածաշրջանում ուժերի հարաբերական, բայց անկայուն հավասարության ժամանակաշրջան է դառնում: Իրադրությունը զավեշտալի զարգացում է ստանում, քանի որ Հռոմն ու Պարթևստանը գրեթե նույն ժամանակ և գրեթե հավասարապես սկսում են թուլանալ, թեև դեռևս հզոր Հռոմին այս ընթացքում հաջողվում էր ավելի ակտիվ լինել: Այս իրադրությունում Հայոց գահին է հաստատվում Արշակունյաց հարստության ամենամշանավոր տիրակալներից մեկը՝ Վաղարշ Բ արքան (186-198թթ.), որը Հայաստանում Արշակունիների իշխանությունը դարձնում է ժառանգական:

Վաղարշի դիվանագիտական ունակությունները դրսևորվում են հատկապես 190-ական թթ. առաջին կեսին, երբ չնայած արտաքին մեծ ճնշմանը՝ նա չի միջամտում Հռոմում Սեպտիմոս Սևերոսի և Նիգերի միջև ծայր առած գահակալական կռիվներին: Հռոմի բոլոր արևելյան հարևանները, այդ թվում նաև պարթև Արշակունիներն աջակցում էին Նիգերին, սակայն վերջինս պարտություն է կրում և 194թ. սպանվում: Դրան հաջորդում է Սեպտիմոս Սևերոսի 196թ. արևելյան «պատժիչ» արշավանքը, որի ընթացքում ավերվում է Միջագետքը (մասամբ՝ նահանջելով հռոմեացիներին պաշարներ թողնել չցանկացող պարթևների, մասամբ՝ հռոմեացիների կողմից), իսկ հռոմեա-պարթևական սահմանը Եփրատից տեղափոխվում է դեպի արևելք և անցնում Տիգրիսով:

Հռոմը խնդրում է, որպեսզի տարածաշրջանում միակ մարտունակ ուժը մնացող հայոց բանակը Հյուսիսային Կովկասից հարավ ներխուժող լեռնականների առջև փակի Կովկասյան լեռնաշղթայի լեռնանցքները: Վաղարշը հռոմեացիներից պահանջում է ընդհանուր թշնամու դեմ պայքարը վարելու համար դրամական նպաստ տրամադրել հայոց բանակին: Հռոմեացիները համաձայնում են առաջարկին, քանի որ տեղյակ էին, որ արագաշարժ լեռնականներից հայոց այրուձիուց ավելի լավ ոչ մի զորք չէր կարող դիմակայել:

**Պատմական տեղեկանք.** «Ուրիշները լոկ ապրել են, բայց ես ասում եմ, որ սա (Վաղարշ Բ արքան- հեղ.) մահից հետո էլ ապրում է իր բարի անունով, քան շատերը թույլ թագավորներից»:

**Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Գիրք Բ, Գլ. ԿԵ**

### Պատերազմը

Վաղարշ Բ-ի համար փորձություն է դառնում Կովկասի լեռնականների 197թ. արշավանքը: Նա նախ փակում է հակառակորդի առաջխաղացման ուղիները և թույլ չի տալիս լեռնականներին ներթափանցել երկրի կենտրոնական շրջաններ,


ապա կարճ ժամանակում կենտրոնացնում է բոլոր ուժերը և Կուրի հովտում դուրս գալիս հակառակորդի դեմ վճռական ճակատամարտի: Հայոց բանակը ջախջախում է հակառակորդին և դուրս շարտում երկրի սահմաններից: Դրանով ավարտվում է պատերազմի *առաջին փուլը*, որում հայոց բանակը մարտավարական կարևոր հաղթանակ է տանում (տե՛ս քարտեզ 4.1):

**Պատմական տեղեկանք.** «Սրա (Վաղարշ Բ-ի- հեղ.) ժամանակ հյուսիսային ազգերի բազմությունը, խազիրներից և բասիլներից բաղկացած, ճորա դռնից դուրս են գալիս, իրենց առաջնորդ ու թագավոր ունենալով ոմն Վնասեպ Սուրհապի, և գալիս անցնում են Կուր գետի այս կողմը: Նրանց դեմ է դուրս գալիս Վաղարշը մեծ բազմությամբ և քաջամարտիկ մարդկանցով, նրանց բազմությունը կոտորելով՝ դիակները սփռեց դաշտի երեսին»:

**Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Գիրք Բ, Գլ. ԿԵ**

Պարտություն կրած լեռնականներն ապաստանում են Կովկասի հյուսիսային կողմերում, իսկ Աղվանքն ազատագրելով և ճորա պահակի վրա վերահսկողություն սահմանելով՝ հայոց բանակը պատվով ավարտում է իր առջև դրված առաջիկա խնդիրը: Այս ամրություններին տիրանալով ավարտվում է պատերազմի *երկրորդ փուլը*:

Երկրից վճռված հակառակորդը վերջնական պարտություն չէր կրել և կարող էր նորից վերադառնալ ու նոր ավերածություններ սփռել: Ուստի, որոշվում է ռազմական գործողությունները տեղափոխել նրա տարածքը: Եռանդուն հետապնդումով Վաղարշը ձգտում է լեռնականներին նոր ճակատամարտ պարտադրել, և ոչ մի կերպ հետապնդումից ազատվել չկարողանալով՝ նրանք հարկադրված են լինում նոր ճակատամարտի դուրս գալ (տե՛ս քարտեզ 4.1): Մարտում հայկական կողմը նոր հաղթանակ է տանում, բայց թշնամական նետից զոհվում է տաղանդավոր դիվանագետ և զորավար արքան:



Նետվող զինատեսակների սայրեր

**Պատմական տեղեկանք.** «Երկար տեղ նրանց հալածելով անցնում է ճորա կապանով: Այստեղ թշնամիները նորից ճակատամարտ կազմեցին, թեպետ Չայոց քաջերը նրանց փախուստի դարձրին, բայց Վաղարշը մեռավ կորովի աղեղնավորների ձեռքից»:

**Սովսեն Խորենացի, Չայոց պատմություն, Գիրք Բ, Գլ. ԿԵ**

Իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ երկարատև համառաշխատանքի արդյունքում ևս մեկ կարևոր խնդիր էր լուծվել. ստեղծվել էր բարոյահոգեբանական առումով կայուն բանակ: Չարցն այն է, որ արքայի զոհվելուց հետո զորքը ոչ միայն խուճապի չի մատնվում, այլև նոր հզոր գրոհ է սկսում և մարտն ավարտում է լիակատար հաղթանակով: Մարտադաշտից ճողոպրող հակառակորդի բանակին այնպիսի հարված էր հասցված, որ այն այլևս անկարող էր նոր ասպատակություններով խախտել Չայոց աշխարհի, ինչպես նաև ամբողջ տարածաշրջանի անդորրը: Այս հաղթանակով էլ ավարտվում է պատերազմի *երրորդ փուլը*:

**Պատմական տեղեկանք.** «Թագավորությունն առնում է նրա (Վաղարշ Բ-ի- հեղ.) Խոսրով որդին... Նա իսկույն Չայոց զորքերը միացնելով անցնում է մեծ լեռը<sup>1</sup>, իր հոր մահվան վրեժն առնելու. նա սրով և գեղարդով<sup>2</sup> վանում է այդ հզոր ազգերին, բոլոր պիտանի մարդկանցից հարյուրից մեկը պատանդ է վերցնում և իբրև իր տերության նշան մի արծան է կանգնեցնում հունարեն գրով»:

**Սովսեն Խորենացի, Չայոց պատմություն, Գիրք Բ, Գլ. ԿԵ**

Թեև հայկական կողմը հասել էր իր առջև դրված ռազմական խնդիրների լուծմանը, սակայն Վաղարշից հետո հայոց գահին բազմած նրա որդին՝ Խոսրով Ա-ն (198-215թթ.) նոր՝ էլ ավելի հզոր արշավանք է ձեռնարկում դեպի Չյուսիսային Կովկաս: Նախորդ պատերազմաշրջաններում ջախջախված լեռնականները չեն կարողանում դիմակայել այս արշավանքին:

## **Եզրակացություն**

Ռազմական առումով հաղթանակն անվիճելի էր, բայց Վաղարշի մահով կիսատ էր մնացել երկարատև խաղաղության համար իրական հիմքեր ստեղծելու ծրագիրը: Խոսրով Ա-ի նոր արշավանքն այդ նպատակն էր հետապնդում: Պարտություն կրած լեռնականները հարկադրված պատանդներ են տալիս Չայոց արքային, որով էլ ավելի է ամրապնդվում խաղաղությունն ամբողջ տարածաշրջանում, իսկ հաղթանակի արդյունքները դառնում են նյութական: Թերևս, այս վերջին հաղթանակն էր Վաղարշ Բ-ի սկսած հաղթարշավի գլխավոր արդյունքը:

<sup>1</sup> Կովկասը:

<sup>2</sup> Նիզակի տեսակ:

## ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ III դարից եւ IV դարի սկզբին

220-ական թթ. կեսերին Իրանում տեղի է ունենում հեղաշրջում. պարթև Արշակունիները տապալվում են, իսկ իշխանության եկած Պարսքի թագավոր Արտաշիր Ա Սասանյանը (226-241թթ.) հիմք է դնում նոր հարստության: Հայաստանի հանդեպ Սասանյանների վերաբերմունքը թշնամական էր: Պարթև Արշակունիների ճյուղը վերացնելուց հետո նրանք ձգտում էին վերացնել նաև Արշակունիների հայկական ճյուղի իշխանությունը: Այս իրողությունով են պայմանավորված Հայաստանի մերձեցումը Հռոմի հետ և Հայոց արքաների ակտիվ մասնակցությունը Սասանյանների դեմ ծավալված պայքարին: Այդ դիմակայության համար որոշիչ են դառնում III դարի վերջին ծավալված իրադարձությունները, երբ հակամարտությունը վերաճում է պատերազմի: Հյուսիսային Միջագետքում ծավալված ռազմական գործողությունների ընթացքում հռոմեական բանակն է պարտություն կրում, իսկ Հայաստանում՝ պարսից արքա Ներսեհը: Վերջինս ստիպված խաղաղություն է խնդրում, և 298թ. Մծբինում կնքվում է հռոմեապարսկական 40-ամյա խաղաղության պայմանագիրը:

Պայմանագիրը ձեռնտու չէր Սասանյան Պարսկաստանին, որտեղ դրա կնքումից քիչ անց գահ է բարձրանում տերությունն իր հզորության գագաթնակետին հասցրած Շապուհ Բ թագավորը (309-379թթ.): Հայ-հռոմեական դաշինքին հաղթելու համար նա ուժեր և հնարավորություններ չունեի, բայց ագրեսիվ քաղաքականությունը հայ ժողովրդին նետված մարտահրավեր էր:

Այս կարգի մարտահրավերներին դիմակայելուն կոչված կարևորագույն ձեռնարկում է դառնում 301թ. Հայաստանում՝ *առաջինն աշխարհում* քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը:



Տրդատ Գ Մեծ թագավորը զորահանդեսի ժամանակ

## **ՊԱՏԵՐԱՉՍ ՀԱՅԱՍՏԱՆ ՆԵՐԽՈՒԺԱԾ ՄԱՉՔՈՒԹՆԵՐԻ ԴԵՄ 336-337ԹԹ.**

330թ. Մեծ Հայքի գահին է բարձրանում Խոսրով Գ Կոտակը (330-338թթ.): Պարսից արքունիքում որոշում են «հետախուզել» Հայաստանի ռազմական ներուժն ու արտաքին հարվածներին դիմակայելու նրա կարողությունը: Զցանկանալով տարածաշրջանի բոլոր մարտունակ ուժերին իր դեմ միավորվելու առիթ տալ՝ Շապուհը Հայաստանի նկատմամբ ոտնձգություններն իրականացնում էր ուրիշների միջոցով:

### *Առաջին պատերազմաշրջանը*

Շապուհ Բ-ի սադրանքով 336թ. հարևան մագրոսների արքա Սանեսանը՝ Արշակունիների տոհմից, լեռնային ցեղերից կազմված զորքով հյուսիսից ներխուժում է Հայաստան:



Դարոյնքի ամրոցը Կոգովիտ գավառում

**Պատմական տեղեկանք.** «Այն ժամանակ Մազքութների Սանեսան թագավորը... ժողովեց, գունարեց բոլոր զորքերը- հոներ, փոխեր, թավասպարներ, հեծնատակներ, իժմախներ, գաթեր, գղվարներ, ճղբեր, բաղասիճներ, եգերսվաններ և այլ խառնիճաղանջ թափառական վաչկատուն ցեղերի անթիվ բազմություն, որոնց առհասարակ ինքն էր իշխում: Եկավ անցավ իր սահմանը, մեծ Կուր գետը, ու սփռվեց ու լցրեց Յայոց աշխարհը»:

**Փավստոս Բուզանդ, Յայոց պատմություն, Գ, գլ. Է**

Մեծ Յայքի թագավորության պաշտպանական համակարգի համաձայն՝ հյուսիսից սպառնացող վտանգը կասեցնելու համար Սանեսանի զորքերի դեմ է արշավում Գուգարաց Միհրան բղեշխը, որի հրամանատարության տակ գործող զորամասերը փորձում են կանգնեցնել երկիր ներխուժած հրոսակների առաջխաղացումը: Չնայած բղեշխը պատվով է կատարում իր առջև դրված խնդիրն ու հերոսի մահով զոհվում մարտում, սակայն միայն հյուսիսային կողմի զորքերով հակառակորդի առաջխաղացումը կասեցնել չի հաջողվում: Սանեսանի զորքերը բաժանվում են ու թալանչիական ռազմերթեր իրականացնում Մեծ Յայքի հյուսիսային և արևելյան շրջաններում:

Յայոց սպարապետ Վաչե Մամիկոնյանն այդ ժամանակ գտնվում էր Յոռնում, ուստի Խոսրով արքան որոշում է դուրս չգալ հակառակորդի դեմ վճռական ճակատամարտի և անրանում է Կոգովիտ գավառի Դարոյնք անառիկ ամրոցում: Երկրի համար այս ճակատագրական պահին հերոսության ու անձնվիրության օրինակ են ցույց տալիս մայրաքաղաք Վաղարշապատի բնակիչները, որոնք համառ դիմադրությամբ իրենց վրա են գանում մազքութների հրոսակախմբերի հիմնական ուժերը: Թեև մազքութները գրավում են Վաղարշապատը, սակայն Սանեսանը չի համարձակվում հյուժված բանակով հարձակումը շարունակել և իր գլխավոր ուժերը տեղակայում է Վաղարշապատում ու որոշում այստեղ ձմեռել: Նա ուժերը բաժանում է երեք մասի. բացի Վաղարշապատում գտնվող գլխավոր ուժերից, գրամասեր է դիրքավորում Ցլու գլուխ լեռան ստորոտում ու Օշականի բերդում:

***Երկրորդ պատերազմաշրջանը***

337թ. սկզբին վերադառնում է սպարապետ Վաչե Մամիկոնյանը: Հակառակորդից ավելի բարձր և ռազմավարական առումով ավելի նպաստավոր դիրքում (Արագածոտն գավառ) ուժերը կենտրոնացնելով՝ նա որոշում է հարձակումը սկսել Ցլու գլուխ լեռան ստորոտում տեղաբաշխված ուժերի վրա սրընթաց հարձակումով:

Յետախուզական գործողություններով հաջողվել է պարզել մազքութների լուսադեմի կրոնական արարողությունը կատարելու ժամանակը, որի ընթացքում էլ որոշվում է սկսել գրոհը: Այսպիսով, հայկական բանակը հարձակում է

սկսում՝ օգտագործելով ոչ միայն *պահը* (լուսադեմին), այլև *հակառակորդի մասին հետախուզական* բավական ուշագրավ *տեղեկությունները*: Ինչպես և պետք էր սպասել, հակառակորդը չի կարողանում լուրջ դիմադրություն ցույց տալ հայկական զորագնդերին և գլխովին ջախջախվում է:

Ջարգացնելով հաջողությունը՝ Վաչե Մամիկոնյանը հակառակորդի գլխավոր ուժերը ջախջախելու նպատակով զորքերն առաջնորդում է Արարատյան դաշտ և ազատագրում մայրաքաղաքը: Չդիմանալով հայերի հարձակմանը՝ հակառակորդը խուճապահար փախչում է Օշականի ուղղությամբ:

### **Հաղթանակը**

Օշականում ևս հայկական այրուձին ուշագրավ մարտավարական հնարք է կիրառում. մագքութների նետածիգներին ազատ գործելու և հեռամարտ վարելու հնարավորություն չտալու նպատակով գրոհը տարվում է այն հաշվարկով, որ հակառակորդը մղվի դեպի քարքարոտ դժվար տեղանքը: Փաստորեն, Սանեսանի զորքերը ջախջախվում են միայն այն բանից հետո, երբ զրկվելով գործողությունների ազատությունից, նահանջի հնարավորություն չունենալով՝ հարկադրված մարտն ընդունում են անբարենպաստ տեղանքում (տե՛ս սխեմա 2):

**Պատմական տեղեկանք.** «Նրանց (լեռնականների) վրա հանկարծակի հարձակվեցին մեր արևելյան և արևմտյան զորքերը և հետ վանեցին դեպի Օշականի առապարը<sup>1</sup> և թույլ չտվեցին, որ նրանք ցրիվ գալով նետածություն կատարեին ըստ իրենց սովորության, այլ քաջածի հեծյալները նրանց շտապ շտապ ու արագատես հետամուտ լինելով՝ մղեցին քարքարոտ դժվար տեղերը, այնպես որ թշնամիներն ակամայից ստիպվեցին ճակատամարտ կազմելու»:

**Սովսես Խրենցազի, Հայոց պատմություն, Գ, գլ. Թ**

Այստեղ ևս Վաչե Մամիկոնյանն աչքի է ընկնում ուշագրավ մտահղացումներով: Գիտակցելով, որ ցրված կարգով նետածության վարումը Սանեսանի բանակի մարտավարության առավելություններից է, նա հակառակորդին այնպիսի պայմաններում է ճակատամարտ պարտադրում, որ նրա հեծելազորը չկարողանա շահարկել իրենց «գլխավոր խաղաքարտը»: Բացի այդ, ճիշտ էր ընտրված նաև գլխավոր հարվածի ուղղությունը. հակառակորդի նահանջի հիմնական ուղիները փակվել էին շրջանցող և թևանցող զորամասերով, ու կտրտված տեղանքը (խոր ձորը, որի միջով հոսում է Քասաղ գետը) նրանց զրկում էր կազմակերպված նահանջելու հնարավորությունից:

<sup>1</sup> Առապար - քարքարոտ տեղանք:

**Պատմական տեղեկանք.** «Եվ Հայոց զորավարի նիզակակիցները, որ էին Բագրատ Բագրատունին, Մեհունդակ և Գարեգին Ռշտունիները և Ամատունյաց տոհմի նախարար Վահանը և Վարազ Կամսարականը, հասնում, զարնում, ջարդում էին ալանների, մազքութների, հոների և մյուս ազգերի զորքերը և ամբողջ առապարի դաշտը լցնում էին մեռածների դիակներով, այնպես որ արյունը գետի նման առատ հոսում էր, և թիվ չկար սպանված զորքերին: Հրաման տվին՝ աշխարհից զուգազ<sup>1</sup> հանել, դիակները թաղել, վրան քարերով ծածկելով...»:

**Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Գ, գլ. Է**


Սանեսանը սպանվում է մարտում, որում աչքի ընկնելու համար, որպես պարզև, Վահան Ամատունին թագավորից ստանում է Օշականն իր շրջակայքով:

### Եզրակացություն

Ինքնուրույն հզոր ռազմական ձեռնարկում է դառնում փախչող հակառակորդի հետապնդումը: Հակառակորդի զորքի միայն չնչին մասն է կարողանում հեռանալ Հայաստանից: Հայկական զորքը փախչողներին հալածում է մինչև Յուսիսային Կովկաս:

Մազքութների արշավանքը Սասանյան Պարսկաստանի սահրանքով IV դարում կատարած առաջին ոտնձգությունն էր Հայաստանի դեմ, որը թշնամու պարտությամբ է ավարտվում:

Այսեմա 2



ՕՇԱԿԱՆԻ ԵՎ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՃԱԿԱՏԱՍՏՐԵՐԸ 337Թ.

<sup>1</sup> Սովորաբար զուգազ էր կոչվում անկանոն և անկազմակերպ զորքը կամ աշխարհագորը: Այստեղ խոսքն աշխատանքային պարիակ կատարող այն շինականների մասին է, որոնք պետք է կատարեին նետոդ դիակների թաղումը:

## **ՀԱՅ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 363-371թթ.**

360-ական թվականները Մեծ Հայքի թագավորության համար նոր, դժվարին փորձությունների ժամանակաշրջան են դառնում: Դա պայմանավորված էր Պարսկա-հռոմեական հերթական պատերազմում հռոմեացիների պարտությանը: Հուլիանոս կայսրը (361-363թթ.) թեև իր զորքերով մոտենում է Տիգրանին, սակայն Պարսկաստանի մայրաքաղաքից քիչ հեռու տեղի ունեցած Ճակատամարտում պարտվում է և ինքն էլ ստացած վերքերից մահանում: Պարսից Շապուհ Բ արքայի և հռոմեական նոր կայսեր՝ Յուլիանոսի (363-364թթ.) միջև կնքված պայմանագրի համաձայն՝ Մեծ Հայքի հարավային հինգ գավառները՝ 15 բերդերով և քաղաքներով, անցնում են Պարսկաստանին, իսկ կայսրը պարտավորվում է Պարսկաստանի դեմ պայքարում Հայոց արքային օգնություն ցույց չտալ:

Վերջին կետի պատճառով IV դարի հռոմեացի պատմիչ Ամիանոս Մարկելի-նոսը պայմանագիրն անվանել է *«ամոթալի»*: Այս պայմանագրի կնքումից հետո Պարսիկների դեմ հայ ժողովրդի մղած պայքարը հինք է հանդիսացել *«Պարսից պատերազմ»* կոչվող մեծ վիպերգության համար, որի կենտրոնական անձը սպարապետ Վասակ Մամիկոնյանն է:

Պետության համար ծանր պահին իրեն լավագույնս է դրսևորում Արշակ Բ արքան (345-368թթ.), որի շուրջն են համախմբվում հայ նախարարները՝ սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորությամբ:

### ***Գանձակի ճակատամարտը 363թ.***

Շապուհ Բ արքան, օգտվելով «Ամոթալի պայմանագրով» ընձեռված հնարավորություններից, պարսկական բանակը կենտրոնացնում է Մեծ Հայքի թագավորության սահմանագլխին: Ատրպատականի Գանձակ քաղաքում գտնվող հայ սահմանապահներն այդ մասին վաղորոք տեղեկացնում են Արշակ արքային, որը սպարապետին հրամայում է պարսիկներին օգնության եկող զորամասերի և գլխավոր ուժերի միավորումը կանխելու նպատակով կանխող հարված հասցնել հակառակորդին:

Պատերազմի նախապատրաստման միջոցառումները նկարագրող պատմիչը նշում է նաև, որ զորքի մարտունակությունը ստուգելու համար սպարապետը *զորահանդես* է անցկացրել: Դա վկայում է այն մասին, որ հայկական կողմը, որքան էլ որ շտապելիս լիներ, պատերազմին պատրաստվում էր ամենայն լրջությամբ:

**Պատմական տեղեկանք.** «Հայոց թագավորի սահմանապահները, որ նստած էին Ատրպատականի Գանձակում, վաղօրոք այս բանը իմաց էին տալիս Արշակ թագավորին, դեռ (Շապուհը) Ատրպատական չհասած: Հայոց Արշակ թագավորն այս իմանալուն պես հրաման էր տալիս իր Վասակ սպարապետին՝ իր բոլոր զորքերը կազմակերպել և հասնել, Պարսից Շապուհ թագավորին դիմադրել... Վասակ սպարապետը առաջ շարժվեց, հասավ ու ընդհարվեց պարսից թագավորի հետ»:

**Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Դ, գլ. ԻԱ**

Հայոց բանակը հասնում է հարավային սահմաններին, որոնց մեջ այդ ժամանակ գտնվում էր Ատրպատականի Գանձակը (տե՛ս քարտեզ 4.2): Սահմանազլխին էլ՝ Գանձակի մոտ, Վասակ սպարապետը որոշում է գրոհել հակառակորդի վրա: Թեև պարսկական բանակի ոչ բոլոր զորամասերն էին հասցրել կենտրոնանալ, սակայն հակառակորդն ավելի մեծաթիվ էր: Այդուհանդերձ, չդիմանալով հզոր գրոհին՝ պարսկական բանակը ծանր պարտություն է կրում և նահանջում:

Գանձակի ճակատամարտում (363թ.) տարած հաղթանակով Վասակ Մամիկոնյանը թերահավատներին ցույց է տալիս, որ տվյալ փուլում հզոր հակառակորդի դեմ պայքարում կարելի է հաջողության հասնել՝ միայն սեփական ուժերին ապավինելով: Այդպիսի հակառակորդի հետ նորանոր առճակատումների պատրաստվող մեր բանակի մարտիկների համար այս գիտակցումն անչափ կարևոր էր:

### **Պատերազմի վերսկսումը 364թ.**

Շապուհը չէր հաշտվելու Գանձակում կրած պարտության հետ, ու սպարապետը սկսում է նախապատրաստվել նոր՝ էլ ավելի մեծ ու վճռորոշ ընդհարման: Եվ իրոք, 364թ. մարտական փղեր ունեցող պարսկական բանակը կենտրոնացվում է հարավ-արևելքում ու Հայաստանի դեմ լայնածավալ հարձակում սկսում: Շապուհը որոշում է իր հսկայական բանակը բաժանել երեք մասերի, որոնք միաժամանակյա հարձակում էին զործելու: Ջորաբանակներից մեկն ինքն անձամբ էր գլխավորում, մյուս երկուսը՝ Հազարավուխտ և Անդիկան զորավարները:

**Պատմական տեղեկանք.** «Այս բաներն էլ վաղօրոք հայտնվում էին Հայոց Արշակ թագավորին և նրա Վասակ զորավարին: Սրանք էլ աշխարհից զորք հավաքեցին, որոնց բազմությանը թիվ ու համար չկար, և թեպետ շատ աճապարեցին, բայց և այնպես Պարսից զորքերը Հայաստան մտան և երեք ուղղությամբ ասպատակեցին»:

**Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Դ, գլ. ԻԲ**

Մեծ Հայքում նախօրոք հայտնի է դառնում հակառակորդի գործողությունների մասին: Ավելին, հայ հետախույզներին ոչ միայն հաջողվում է պարզել զորքը երեք մասի բաժանելու Շապուհի մտադրությունը, այլև տեղեկություններ ստանալ պարսկական զորասյուների հավանական երթուղիների մասին: Հենվելով այս տվյալների վրա՝ Արշակ Բ արքան ուժերը բաժանում է երեք մասի (զորագնդերի) և շարժվում հակառակորդին ընդառաջ:

### **Առաջին հաղթանակը**

*Առաջին զորագունդը* գլխավորում էր սպարապետ Վասակ Մամիկոնյանը, *երկրորդը*՝ նրա եղբայր Բագուրը (Բագաս), իսկ *երրորդը* վերցնում է ինքը՝ Արշակ արքան: Պահպանված ավանդույթի համաձայն՝ երեք զորագնդերն էլ նույն օրն են հասել հակառակորդին և գրոհել պարսկական զորասյուների վրա:

Հազարավուխտի հրամանատարությամբ Վանանդ գավառ ուղարկված ուժերի դեմ գործող Վասակ Մամիկոնյանի գունդը նրանց վրա գրոհում է *երկյալ* կոչվող վայրում (տե՛ս քարտեզ 4.2): Կենտրոնում հակառակորդի մարտակարգը ճեղքելով՝ սպարապետի գլխավորած զորամասերը նրան հարկադրում են նահանջել մի քանի ուղղություններով: Պարսիկներից խլված ռազմավարի մեջ Փավստոս Բուզանդն առանձնացնում է հատկապես *մարտական փղերին*: Սա վկայում է, որ անսպասելի հարձակումով պարսկական զորքը կաթվածահար է արվել և չի հասցրել մարտի մտցնել փղերի զորամասը:

Նույնպիսի եռանդով էլ սպարապետը հակառակորդի հետապնդումն է կազմակերպում, որը շարունակվում է մինչև նրան երկրի սահմաններից վտարելը:



Արշակունիների դամբարանը Աղցք (Աղց) գյուղում, IVդ.

## **Երկրորդ հաղթանակը**

Առբերանի գավառ հասնելով՝ պարսից երկրորդ զորաբանակը Անդիկանի գլխավորությամբ ճամբար է կազմում Վանա լճի ափին գտնվող *Առեստ* ավանի ձկնորսարանի մոտ (տե՛ս քարտեզ 4.2): Տեղեկանալով հայկական զորամասերի մոտենալու մասին՝ պարսիկներն այստեղ հասցնում են մարտակարգ կազմել և սկսել մարտը: Մարտի սկզբում հակառակորդի զորքերի հրամանատարական դիտակետի ուղղությամբ գրոհող զորամասերը հասնում են Անդիկանին և մարտի թոհուրոհում սպանում ճեղքված մարտակարգը վերականգնել ձգտող պարսիկ զորավարին: Սակայն հակառակորդի քանակական գերազանցությունն իրեն զգալ է տալիս. պահեստազորի ուժերով պարսիկները ոչ միայն կարողանում են փակել ճեղքվածքը, այլև մարտական փղերի զորամասով հաջող հակազորի են անցնում:

Բագոս Մամիկոնյանն անձամբ է գլխավորում հակազորի անդրադարձումը: Հայերին հաջողվում է հետ մղել գրոհը և փախուստի մատնել հակառակորդին, սակայն հաղթանակը ձեռք է բերվում մեծաթիվ զոհերի գնով: Հայրենիքի հանդեպ իր պարտքը կատարելով՝ հերոսի մահով ընկնում է նաև Բագոս իշխանը, որն ըստ Փավստոս Բուզանդի՝ «քաջության և արիության մեջ իրեն նմանը չուներ»: Շարքային զինվորի պես ամբողջ ճակատամարտի ընթացքում մարտնչած և մարտադաշտում զոհված իշխանի կյանքն անձնագոհության օրինակ է եղել հետագա սերունդների համար:

**Պատմական տեղեկանք.** «Ապա Բագոսը հանդիպում է փղերի գնդին. տեսնում էր, որ փղերից մեկը շատ զարդարված էր և կրում էր արքունական նշաններ: Բագոսը կարծեց, թե այդ փղի վրա (Շապուհ) թագավորն է, ձիուց իջավ, սուրը քաշեց, փղի վրա հարձակվեց. գեները բարձրացրեց, փղի տակը մտավ, փղին փորից զարկեց, փիղն ընկավ նրա վրա և երկուսը միասին մեռան, որովհետև (Բագոսը) ժամանակ չունեցավ փղի տակից դուրս գալու համար»:


**Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Գ, գլ. ԻԲ**

## **Երրորդ հաղթանակը**

Շապուհ արքայի գլխավորած զորքն արդեն Այրարատի Բասեն գավառն էր հասել, երբ հայտնվում է Արշակ արքան իր գնդով: Շապուհը, մարտավարական սխալ թույլ տալով, զորամասերը զիջերակացի համար տեղաբաշխում է *Ոսխա* կոչվող վայրում (տե՛ս քարտեզ 4.2): Հակառակորդի անհոգության պատճառը, թերևս, նրա մեծաթիվ լինելն էր:

*Ճիշտ գնահատելով իրավիճակը՝* Արշակ արքան անմիջապես չի գրոհում հակառակորդի վրա, այլ հարձակումը հետաձգում է մի քանի ժամով:

Քարտեզ 4.2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 363-371ԹԹ.

Գիշերը հանգիստ քնած պարսկական բանակին հանկարծ արթնացնում են ահավոր աղմուկը և դղրդյունը: Պարսկական զորամասերը չեն հասցնում միասնական մարտակարգ ձևավորել: Չկարողանալով համարժեք քայլեր ձեռնարկել՝ մարտադաշտից մի կերպ փախչում է Արևելքի հզոր տիրակալը:

**Պատմական տեղեկանք.** «Գալիս հասնում էր Արշակ թագավորը իր զորքերի հետ և գտնում էր իրեն՝ Շապուհ թագավորին, որ եկել կուտակվել, բանակ էր դրել Բասյան գավառում, Ոսխա կոչված տեղերում: Այս Արշակ թագավորը գիշերով հարձակվում էր Պարսից բանակի վրա, բուլորին սրի էր անց կացնում. հազիվ Շապուհ թագավորը միայն մեկ ձիով ճողոպրում էր, փախչում Պարսից աշխարհն ընկնում:

*Այն ժամանակ (Յայոց) երեք գնդերից հաղթության ավետաբերները հանդիպում էին միմյանց»:*

**Փավստոս Բուզանդ, Յայոց պատմություն, Դ, գլ. ԻԲ**

## **Եզրակացություն**

Գանձակի, Երկյալի, Առեստի և Ոսխայի ճակատամարտերում տարած հաղթանակները հայ ժողովրդի պատասխանն էին «ամոթալի» գործարքով Յայաստանի հաշվին համաձայնության գալու Պարսկաստանի և Հռոմի փորձերին:

## ԱՐՏԱԳԵՐՍԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԱՐՏԱԳՐՈՂԸ

Նորանոր պարտություններ կրելուց հետո գառամյալ Շապուհ Բ-ն հաշտություն կնքելու պատրվակով 368թ. իր մոտ է հրավիրում Արշակ Բ արքային և սպարապետ Վասակ Մամիկոնյանին, ուխտադրժորեն ձերբակալում ու աշնան սկզբներին Հայաստանը զավթելու նպատակով ևս մեկ փորձ ձեռնարկում: Այս անգամ զորագլուխներն էին Հայաստանից փախած և Պարսկաստանում ապաստանած Հայր մարդպետ Գլակն ու զորավար Արտավանը:

**Պատմական տեղեկանք.** «Պարսից Շապուհ թագավորը այդ անագնիվ չարությունը կատարելուց<sup>1</sup> հետո, ներքինի Գլակին և Արտավանին հանձնեց Հայաստանը՝ հանձնարարելով նրանց բոլոր ջանքերը գործ դնել ոչնչացնելու համար Արտագերսը: Նրանցից մեկը՝ Գլակը, ներքինի էր, իսկ մյուսը՝ Արտավանը, բանակի հրամանատար»:

Ամիանոս Մարկելիանոս, Գիրք XII, 5

Երկրի համար դժվարին իրադրությունում պետության կառավարումն իր ձեռքն է վերցնում Հայոց թագուհին՝ Փառանձենը: Նա թագաժառանգ Պապի և 11 հազարանոց թիկնազորի հետ միասին ամրանում է Արշարունիք գավառի Արտագերս ամրոցում: Այստեղ են թաքցվում նաև պետական գանձերը:



Արտագերսի ամրոցը

<sup>1</sup> Խոսքն Արշակ Բ-ի և Վասակ Մամիկոնյանի դեմ գործված ուխտադրժության մասին է:

## Արտագերսի պաշտպանությունը

Հայոց արքայի գանձերին տիրանալու, ինչպես նաև թագուհուն և արքայազն Պապին գերելու նպատակով Շապուհն իր զորքերի առջև խնդիր է դնում առաջին հերթին գրավել Արտագերսը: Շուտով պարսկական 90 հազարանոց բանակը կենտրոնանում է Արտագերսի մոտ և 368թ. հոկտեմբերին պաշարում այն (տե՛ս քարտեզ 4.1):

Գլակը և Արտավանը որոշում են բանակցել Փառանծեն թագուհու հետ ու նրան հորդորում են դադարեցնել դիմադրությունը, սակայն թագուհին հայտարարում է դիմադրությունը շարունակելու հաստատակամության մասին: Դա այնպիսի տպավորություն է գործում, որ նրանք անցնում են թագուհու կողմը:

Մշակվում է հակառակորդի ջախջախման հանդուգն ծրագիր, որը պետք է իրականացվեր «բանազնացների» վերադառնալուց հետո: Որոշվում է պարսիկների վրա հարձակվել գիշերը: Պարսկական բանակի տեղաբաշխմանը ծանոթ և, հետևաբար, նրա թույլ տեղերն իմացող Արտավանը հուշում է նաև այն տեղամասերը, որոնց հասցվող հարվածը հակառակորդի շրջանում խուճապ կառաջացնի և հակառակորդին կզրկի միասնական պաշտպանություն ձևավորելու հնարավորությունից:

## Արտագրոհը

Պարսկական զորքերի ճամբար վերադարձած բանազնացները հայտարարում են, թե ամրոցի պաշտպանները ժամանակ են խնդրում պատասխանի համար: Թագուհու պատասխանին սպասող պարսիկներին նրանք վստահեցնում են, որ անելանելի դրության մեջ հայտնված ամրոցի կայազորը դադարեցնելու է դիմադրությունը, և թուլացնում են նրանց զգոնությունը:

Հայկական կողմն օգտվում է հակառակորդի անհոգությունից և նույն գիշեր հանկարծակի դուրս գալով ամրոցից՝ գրոհում հակառակորդի մեծաթիվ, բայց հանգստանալու համար ցրված զորքի վրա:

**Պատմական տեղեկանք.** «Գլակը և Արտավանը... գաղտնի խորհրդակցելով հանոզեցին (պաշտպաններին), որ ուժեղ մի գունդ, բաց անելով բերդի դուռը, գիշերվա պայմանավորված ժամին, անսպասելի հարձակում գործի թշնամու ճամբարի վրա...

Եվ ահա գիշերը, երբ բոլորը քնած էին խորը քնով, բացվեց բերդաքաղաքի դուռը. այնտեղից արագ դուրս եկավ մարտիկների մի զորամաս՝ սրերը հանած, գաղտագողի կամացուկ հարձակվեց թշնամու ճամբարի վրա, ուր վտանգ չէր ակնկալվում, և առանց դիմադրության հանդիպելու, սկսեց կոտորել բազմաթիվ քնած մարդկանց»:

Ամիանոս Մարկելինոս, Գիրք XII, 6

Գործի են դրվում մեր ռազմարվեստում առնվազն Հայասա-Ազգիի ժամանակներից հայտնի գիշերային մարտի հնարքները: Անսպասելի հարձակումից կաթվածահար եղած պարսկական զորամասերը, մթության մեջ չկողմնորոշվելով ու մեծաթիվ զոհեր տալով, փախչում են մի քանի ուղղություներով:

### ***Եզրակացություն***

Ջիկ և Կարեն զորավարների գլխավորությամբ Շապուհը նոր բանակ է ուղարկում Հայաստան, բայց մինչ այդ թագուհին հասցնում է օգնության համար արքայազն Պապին ուղարկել Հռոմ՝ Վաղես կայսեր (364-378թթ.) մոտ: Հռոմում գիտակցում էին, որ Հայաստանում պայքարը չեն դադարեցնի՝ նույնիսկ եթե միայնակ մնան: Հայերի պայքարելու հաստատականությունը հռոմեացիներին դրդում է հանդես գալ Սասանյանների դեմ, և Վաղեսը Պապին մեծ պատվով ուղարկում է Հայաստան, ու նա հաստատվում է գահին:

## ՊԱՐՍԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ 370Թ.

Պարսկական երկրորդ բանակի դեմ ծանր դրության մեջ հայտնված Փառանձեմ թագուհին կրկին ապավինում է Արտագերս ամրոցին, սակայն ամիսներ տևած պաշարումից հետո ամրոցում սկսված համաճարակի պատճառով ստիպված է լինում դադարեցնել դիմադրությունը:

*Արտագերսի տասնչորսամյա հերոսական պաշտպանությունը (368թ. հոկտեմբեր-369թ. դեկտեմբեր) հայոց պատմության հերոսական էջերից է:*


Թեև պետության համար անչափ դժվարին պահին իշխանությունը ստանձնելու կամք դրսևորած թագուհուն *վիճակված չէր* որդուն տեսնել Մեծ Հայքի գահին բազմած, սակայն նրա ջանքերն ապարդյուն չէին: Մասնավորապես, Արտագերսի պաշարման վրա հսկայական ուժեր ու ժամանակ վատնած պարսկական բանակը պաշարում, բայց չի կարողանում գրավել Կոզովիտ գավառի Դարոյնք բերդը, որտեղ կուտակված էր թագավորական գանձերի մյուս մասը: Հայրենիք վերադարձած Պապ արքան (369-373թթ.) տեր է կանգնում այս գանձերին և Վասակ Մամիկոնյանի որդի Մուշեղ սպարապետի հետ միասին ձեռնանուխ լինում պետության հզորացմանը:

Ընդամենը մի քանի ամսում (բանակաշինության համար *աննախադես* կարճ ժամանակում) ստեղծվում է 90 հազարանոց բանակ, որն ուներ իր ժամանակի լավագույն սպառազինությունը:

**Պատմական տեղեկանք.** Հյուսիսում Մուշեղը վերականգնում է. «...հին սահմանը, որ առաջ գոյություն ուներ Հայոց երկրի և Վրաց երկրի միջև, որպիսին էր մեծ գետ Կուրը»:

**Փավստոս Բուզանդ, Ե, գլ. Բ**

Բացի այդ, վերջապես Վաղես կայսրը հայոց բանակին աջակցելու համար հռոմեական լեգեոններ էր ուղարկել: Պարսից արքայի դեմ հայ-հռոմեական դաշինք է ձևավորվում, ինչը մոտալուտ հաղթանակի կարևոր նախապայման էր:



Նետվող զինատեսակների սայրեր

## **Հաղթանակը**

Մուշեղ Մամիկոնյանը հասցնում է ավարտել զինվորական պատրաստությունները և շտապում դեպի պետության հարավարևելյան սահմանները, ուր Ատրպատականից 370թ. ներխուժել էր պարսկական բանակը:

**Պատմական տեղեկանք.** «Հայոց զորավար ու սպարապետ Մուշեղը իր քառասուն հազարով գալիս հարձակվում էր (Շապուհի) բանակի վրա և կոտորում էր բոլորին: Պարսից Շապուհ թագավորը մի ձիով փախչելով ճողոպրում էր, իսկ բանակի ամբողջ բազմությունը սրի էր անցկացնում Մուշեղը Հայոց զորքի հետ: Շատերին կոտորում էին, Պարսից ավագներից շատերին ձերբակալում էին, ավար էին առնում Պարսից թագավորի գանձերը, բռնում էին նաև տիկնանց՝ մյուս կանանց հետ միասին»:

**Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե, գլ. Բ**

Հայկական բանակը ծանր պարտության է մատնում երկիրն ավերող պարսիկներին (տես քարտեզ 4.1): Մարտադաշտից ճողոպրած Շապուհը մի կերպ կարողանում է ազատվել հետապնդումից ու փրկել իր կյանքը, սակայն գերվում է Արևելքի հզոր տիրակալի կանանոցը:

**Պատմական տեղեկանք.** «Բայց Պարսից Շապուհ թագավորի կանանց որևէ անարգանք հասցնել թույլ չէր տալիս Հայոց Մուշեղ զորավարը, այլ հրամայում էր բոլորի համար ժանվարներ<sup>1</sup> պատրաստել և նրանց բոլորին ազատ արձակեց իրենց ամուսնու՝ Շապուհ թագավորի ետևից... Պարսից թագավորը զարմացավ Մուշեղի բարերարության, քաջության և ազնվության վրա, որ ոչ մի անարգանք չհասցրեց կանանց վերաբերմամբ»:

**Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե, գլ. Բ**

## **Եզրակացություն**

Այս առաջին հաղթանակով Մուշեղ Մամիկոնյանն ապացուցում է, որ հաղթանակի իրական պատճառը հայրենիքի ազատության համար պայքարող հայոց բանակի մարտական պատրաստվածության և բարոյահոգեբանական գերազանցությունն էր: Իսկ Շապուհի գերված կանանոցի նկատմամբ սպարապետի ցուցաբերած մարդասիրությունը Արևելքի արքայից արքային նետված մարտահրավեր էր, ապտակ, որին նա չէր կարողանալու պատասխանել: Սա ծանր հարված էր Շապուհ Բ-ի հեղինակությանը:

<sup>1</sup> Ժանվար - թագուհիների և ազնվազարմ կանանց համար իբրև փոխադրամիջոց օգտագործվող բազմոց կամ գահավորակ: Այն կրում էին զույգ գրաստները, իսկ որոշ երկրներում՝ նաև ստրուկները:

## ՁԻՐԱՎԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 371Թ.

Բարդ իրավիճակում հայտնվելով՝ Շապուհը որոշում է, որ իրենից էլ ավելի ակտիվ քայլեր են ակնկալվում: 371թ. նա սկսում է Սասանյանների տերության զինված ուժերի երբևիցե իրականացրած ամենամեծ արշավանքներից մեկը: Արշավանքին մասնակցելու համար կանչվում են Աղվանքի Ուռնայր<sup>1</sup> և ղեկերի (լեզգիների) Շերգիր թագավորների ուժերը: Նրանց կողքին էր դավաճան իշխան Մեիրուժան Արծրունին: Ուշագրավ է, որ այս անգամ Շապուհը չի համարձակվում գլխավորել բանակը և փոքրաթիվ ուժերով մնում է Թավրիզում: Այստեղից պարսկական բանակի հիմնական ուժերը (ավելի քան 100 հազար մարդ) շարունակում են արշավանքն ու ներխուժում Հայաստան:

**Պատմական տեղեկանք.** «Հայոց Պապ թագավորն էլ հրամայում էր զորաժողով անել Բագավանում: Հունաց զորքն էլ, որ գտնվում էր Եռանդում ու Բախիշում, եկավ, միասին ժողովվեցին Պապ թագավորի մոտ, իրենց բանակի շուրջը փոս կտրեցին Նպատ լեռան մոտ, Եփրատ գետից ոչ հեռու կազմակերպվեցին, պատրաստվեցին ճակատամարտի»:

**Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե, գլ. Է**

### *Մարտի նախապատրաստումը*

Պարսկական բանակը շարժվում է դեպի երկրի Միջնաշխարհը՝ Այրարատ: Սպարապետը որոշում է վճռական ճակատամարտ տալ Բագրևանդ գավառում Բագավան քաղաքից քիչ հեռու՝ Նպատ լեռան ստորոտում գտնվող Ջիրավի դաշտում (տե՛ս քարտեզ 4.1):

Ջորքերի ընդհանուր հրամանատարությունն իրականացնում է Մուշեղ Սամիկոնյանը: Կենտրոնի հրամանատարությունը ստանձնում է Սպանդարատ Կամսարականը, իսկ ձախ թևը կազմում էին օգնության եկած հռոմեացիները՝ զորավար Տերենտիոսի գլխավորությամբ: Հատկանշական է, որ դիրքերն ամրացնելու նպատակով մարտից առաջ խրամ է փորվել:

Գիտակցելով, որ տեղանքը միանշանակորեն նպաստելու է հայ-հռոմեական բանակին, պարսկական բանակի զորապետերը փորձում են օգտագործել օրվա ժամանակը: Նրանք վաղ առավոտյան արևելքից մոտենում են հայ-հռոմեական բանակին և հարկադրում գրոհել իրենց վրա: Այսպիսով, երկու հսկայական բանակների վճռական ճակատամարտը սկսվում է վաղ առավոտյան և շարունակվում մինչև ուշ երեկո:

<sup>1</sup> Բանակի հրամանատար էր նշանակվել Ուռնայրը:

**Պատմական տեղեկանք.** «Իսկ երբ արևը ծագեց, մեր գորքերի դեմուղեն, պղնձապատ վահանների ցուլքը լեռների վրա էր փայլատակում ինչպես մեծ ամպից, և (այդ ճակատից) դուրս էին թռչում մեր նախարարներից լավ գրահավորվածները, ինչպես փայլատակող ճառագայթներ, որոնց տեսքից միայն պարսկական գունդը երկյուղի մեջ ընկավ, բայց մի քիչ նաև մեր գունդը, որովհետև (դիմացից) ծագած արևի պատճառով չէր կարող դեմուղեն նայել: Բայց երբ միմյանց ընդհարվեցին, ամպը հովանի եղավ և մեր կողմից սաստիկ քամի փչեց պարսկական գնդի դեմ»:

**Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Գ, գլ. ԼԷ**

### **Ճակատամարտը**

Ըստ Մովսես Խորենացու, պարսիկների մտահղացմանը վիճակված չէր իրականանալ: Նախ, հայոց բանակի զինվորների պղնձապատ վահանները նույնպես փայլում էին՝ կուրացնելով հակառակորդին, ապա՝ ճակատամարտի սկզբում ամպը փակում է արևի ճառագայթները, իսկ հետո արևմուտքից քամի է բարձրանում:



**Նպատ լեռը և Ձիրավի դաշտը**

**Պատմական տեղեկանք.** «Պատերազմը գունարվեց Ձիրավ կոչված դաշտում, և ճակատներն իրար մոտեցան: Հայոց քաջ նախարարների պատանիներն իրենց կամքով խիզախելով՝ մտան երկու ճակատների մեջ, առաջնորդությամբ իրենց սպարապետ Սմբատ ասպետի՝ Բագարատի որդու, որ Բագրատունյաց ցեղից էր: Պարսից զորքերի միջից էլ դուրս եկան նրանց հասակակիցները, երկու ճակատների մեջ այս ու այն կողմը շարժվեցին և ցրիվ եկան: Երբ պարսից պատանիները ետ էին դառնում, մերոնք անմիջապես հասնում էին նրանց հետևից և ինչպես փոթորիկ, որ անտառը տերևաթափ է անում, այնպես էլ նրանք արագորեն միգակներով նրանց վայր էին գցում ձիերից և սառը դիակները գետնի երեսին փռում, քանի որ նրանք չէին կարողանում իրենց ճակատի մեջ մտնել: Իսկ երբ պարսիկներն էին մերոնց ետ դարձնում, սրանք մտնում էին հունաց՝ վահաններով պատսպարված ճակատը, իբրև մի ամուր քաղաք, և ամենևին չէին վնասվում»:

**Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Գ, գլ. ԼԷ**


Ճակատամարտը սկսում է հայոց սեպուհական այրուծին՝ Սմբատ Բագրատունու ղեկավարությամբ: Սպարապետն առաջինը մարտի է ուղարկում առաջապահ հեծելազորը՝ հակառակորդի ուժերը հետախուզելու նպատակով: Պարսկական կողմից նրանց դեմ է դուրս գալիս նույնպես հեծելազորը:

Համեմատաբար հավասար ուժերով վարվող ընդհարումն ավարտվում է հայկական կողմի հաղթանակով: Պարսկական բանակի զորամասերը, որոնք առանց այդ էլ մարտի էին մտցվել լեռան ստորոտից և դեպի լեռնալանջն էին գրոհում, չեն կարողանում ընթացքից անցնել խրամն ու հայտնվում են անբարենպաստ իրավիճակում: Առաջին հաջողությունը ոգևորում է դաշնակիցների զլխավոր ուժերին, որոնք այս նպաստավոր բնագծում էլ շարունակում են մարտը և խափանում պարսկական բանակի հակազորոհը (տե՛ս սխեմա 3):

**Պատմական տեղեկանք.** «Կռվի խառնուրդի ժամանակ Սպանդարատ Կամսարականը հանդիպեց մի մեծ խմբի, որի մեջ էր քաջ ղեկաց (լեզգիների) թագավոր Շերգիրը, որ ճակատի մեջտեղում պինդ կանգնած էր՝ միջին գնդի զլուխն անցած: Սպանդարատը հարձակվեց, խումբը ճեղքեց և քաջին գետին տապալեց շանթահար եղածի նման, և խումբը շուռ տալով փախուստի մատնեց: Եվ այսպես հունաց և հայոց զորքերն առհասարակ, երկնային օգնությամբ զորացած, թշնամիների դիակներով ամբողջ դաշտը լցրին և մնացածներին փախցնելով հալածեցին: Սրանց հետ էր և Ուռնայրը, Աղվանից թագավորը, որ խոցված էր Վասակ Մամիկոնյանի որդի Մուշեղից, պատերազմից դուրս հանեցին»:

**Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Գ, գլ. ԼԷ**

Սխեմա 3



Ճակատամարտը հայ-հռոմեական ուժերի համար հաջող ընթացք է ստանում: Կանսարականի զորաթևը հարձակվում է հակառակորդի կենտրոնի զորաթևի վրա և ջախջախելով փախուստի մատնում: Դեկերի թագավոր Շերգիրը, որ գլխավորում էր պարսից բանակի կենտրոնը, սպանվում է: Ուռնայրը Մուշեղ Մամիկոնյանի հետ մենամարտում վիրավորվում է: Նրա մարտիկներին մի կերպ է հաջողվում մարտադաշտից դուրս բերել վիրավոր թագավորին:

Կենտրոնի զորաթևի հաջողությունը փաստորեն վճռում է ճակատամարտի ելքը, քանի որ առանց միասնական ղեկավարման մնացած պարսկական զորամասերի միջև *փոխգործողություններ* կազմակերպել չի հաջողվում: Պարսկական բանակի մարտակարգում առաջացած ճեղքվածքները փակել չի հաջողվում, և նրանց շարքերում խուճապ է սկսվում: Ծանր կորուստներ կրելով՝ պարսկական բանակի մնացորդները սկսում են նահանջել:

### Յետապնդումը

Հակառակորդի ջախջախման գործն ավարտին հասցնելու համար Մուշեղ Մամիկոնյանը սկսում է հակառակորդի հետապնդումը, որի ընթացքում ևս արձանագրվում են մի շարք հաջողություններ: Օրինակ, փախուստի ժամանակ գերվում է վիրավոր Ուռնայրը, սակայն պարսկական բանակի դեմ պայքարում աղվանների հետ դաշինք կազմելու ծրագիր ունեցող սպարապետն ազատ է արձակվում նրան:

Իսկ Մեհրուժան Արծրունու գլխավորած զորամասին հետապնդման ուղարկված Սմբատ Բագրատունին գերում է դավաճան նախարարին և մահապատժի ենթարկում:

**Պատմական տեղեկանք.** «Բայց չարագործ Մեհրուժանը ձիու վիրավորված լինելու պատճառով չկարողացավ փախչողների հետ արագ հեռանալ, Հայոց Սմբատ սպարապետը աճապարելով հասավ նրա մոտ, նրա հետ եկող զորքերին կոտորեց և այն թշվառականին ձերբակալեց Կոզահովտի եղեգնուտի ափին: Նույն տեղերում չարագործին փչացնելու համար պատրաստ է գտնում վրանաբնակներ, որոնք կրակ էին վառել, որպեսզի միս խորովեն երկաթե շամփուրով: Նա շամփուրը տաքացնելով երկու փաթ բոլորեց պսակի ձևով և շիկացնելով ասաց. «Քեզ պսակում են, Մեհրուժան, որովհետև դու ձգտում էիր Հայոց վրա թագավորելու և իմ` ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրերի իշխանության կարգով»: Եվ կրակի նման շիկացած (շամփուրը) դրեց Մեհրուժանի գլխին, և այսպես այն չարը սատկեց: Այսուհետև երկիրը խաղաղվեց՝ Պապի ձեռքի տակ նվաճվելով»:

**Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Գ, գլ. ԼԷ**

### ***Եզրակացություն***

Ձիրավի հաղթական ճակատամարտով վերջացավ Պարսկաստանի դեմ շուրջ մեկ տասնամյակ շարունակվող պատերազմը: Այդ հաղթանակի արդյունքում անրապնդվեցին Մեծ Հայքի թագավորությունն ու Պապի թագավորական իշխանությունը:

ՊԵՆՏՈՆ V

**ՊԱՅՔԱՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՎ  
ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ  
ԴԵՄ (Վ-IX ԴԴ.)**

Վ-VII դարերի ՊԱՏԵՐՎԱԾՆԵՐԻ ԳԼԽԱԿՈՐ ԻՐԱԿԱՐԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



**Վ** դարը մեր ժողովրդի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի բախտորոշ ժամանակահատվածներից մեկն է, երբ մեծ զարգացում ապրեցին գիտական միտքը, հասարակական և մշակութային կյանքը: Այդ հորձանքից դուրս չմնաց մինչ այդ էլ բարձր մակարդակի հասած ռազմարվեստը: Հարյուրամյակը սկսվեց 405թ. Մաշտոցյան գրերի ստեղծումով, 428թ. հայ Արշակունիների թագավորության անկումով, որին հաջորդեցին մեր ժողովրդի ազատագրական պայքարի երկու գագաթները՝ 450-51թթ. Վարդանանց և 481-84թթ. Վահանանց պատերազմները:

Թեև Բյուզանդիային էր անցել Մեծ Հայքի միայն 1/5 մասը, այդ տարածքի հայ նախարարների ուժերի մեկուսացումն էապես ազդում էր բանակի հնարավորությունների վրա: Ուժերի հարաբերակցության փոփոխությունը հարկադրում էր փոխել ռազմական գործողությունների կազմակերպման և վարման ձևերը:

Հայաստանի մի զգալի մասը հայտնվել էր Սասանյան Պարսկաստանի տիրապետության տակ, սակայն պահպանվել էին պետության բոլոր տարրերը: Դրանք վերացնելու նպատակով պարսից արքունիքը վարում էր հայ նախարարների իրավունքների սահմանափակման, հայերի կրոնափոխության և ձուլման քաղաքականություն: Այս քաղաքականությանը հայ ժողովուրդը պատասխանում է հզոր դիմադրողական շարժումով՝ 450-51թթ. Վարդանանց պատերազմով:

## ՎԱՐՂԱՆԱՆՅ՝ ՊԱՏԵՐԱԶՄԸ 450-451ԹԹ.

### ՄԱՀ ՈՉ ԻՄԱՃՅԱԼ՝ ՄԱՀ Է, ՄԱՀ ԻՄԱՃՅԱԼ՝ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

450թ. ամռանը պարսից զորապետ Միհրներսեհը, Աղվանքի մարզպան Սեբուխտ Նիխորականի զորաբանակին միանալու և միացյալ ուժերով ապստամբությունը ճնշելու համար, խոշոր բանակով մտնում է Փայտակարան: Պետք էր օգնության գնալ աղվաններին, որոնք նույնպես ապստամբել էին և աջակցություն խնդրել հայերից: Սեբուխտի ու Միհրներսեհի ուժերի միավորումը կանխելու, ինչպես նաև ճորապահակը (Դերբենդ քաղաքի մոտ) գրավելու և հոների հետ կապ հաստատելու համար՝ Հայաստանի ռազմավարական հենակետերում տեղակայված պարսկական զորամասերի ոչնչացումից հետո Աղվանք է շտապում սպարապետ Վարդան Մամիկոնյանը:

**Ռազմական տեղեկանք.** Ապստամբության առաջնորդների հաշվեկատության մասին է վկայում առկա զինված ուժերի տեղաբաշխման տրամաբանությունը: Ներշապուհ Արծրունու հրամանատարությամբ գործող առաջին զորամասը հայ-պարսկական սահմանի անվտանգության ապահովման նպատակով տեղաբաշխվում է Հեր և Ջարևանդ գավառներում: Մարզպան Վասակ Սյունու գլխավորությամբ երկրորդ զորամասը մնում է Այրարատում: Միայն ուժերի մեկ երրորդ մասն է ուղարկվում Աղվանք (տե՛ս քարտեզ 5.1): Այս զորասյան հրամանատարն էր Վարդան Մամիկոնյանը:

Պարսիկներին հայտնի է դառնում Աղվանքին օգնության շտապող հայկական զորքի ռազմերթի մասին, Սեբուխտը հասցնում է պարտության մատնել այստեղի ապստամբների գլխավոր ուժերին և շարժվել հայերի դեմ:

# ԽԱՂԽԱԴԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 450Թ.

## ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊԱԿԱՆ ՄԱՐՏԸ

Հայոց զորքը 450թ. սեպտեմբերին ռազմերթով Խաղխաղի<sup>1</sup> դաշտ է հասնում, որտեղ մարտակարգով նրանց էր սպասում պարսկական բանակը: Սեբուխտը մարտակարգի կենտրոնում և աջ թևում շարել էր պարսկական զորամասերը, իսկ ձախ թևում՝ Բաղասական և Լփնաց<sup>2</sup> զորամասերը: Բայց քանի որ պարսկական զորամասերի մի մասը դեռևս չէր ավարտել Կուրի գետանցումը, նրանց գրոհը հապաղում է, որն էլ Վարդան Մամիկոնյանին հնարավորություն է տալիս ընդունել մարտը սկսելու որոշումը, զորքը բաժանել երեք զորաթևերի, որոնք էլ ինքնուրույնաբար բացազատվելով՝ հասցնում են ձևավորել զորքի ընդհանուր մարտակարգը:

Ընդհանուր ղեկավարումից բացի, Վարդան Մամիկոնյանը ստանձնում է կենտրոնի հրամանատարությունը: Ձախ թևի հեծելազորի հրամանատար է նշանակվում Արշավիր Կամսարականը (Արշարունի), աջ թևինը՝ Խորեն Խորխոռունին: Որոշ ուշացումով մարտադաշտ հասած վերջապահ զորամասը՝ մարդաբեռական այրուծին, փաստորեն, կազմում է մարտակարգի պահեստազորը (ռեզերվ):

Պարսիկները գրոհում են դեռևս նախամարտական կարգով շարված հայկական զորքի կենտրոնի զորամասերի վրա:

### **Ճակատամարտը**


#### **Առաջին փուլ**

Ճակատամարտի սկզբում առանցքային նշանակություն են ունենում նետածիգների գործողությունները: Այրուծիու զորագնդերի բացազատումն ապահովելու նպատակով սպարապետը նետածիգներին (նաև մյուս թեթևազեն զորամասերը) առաջ է բերում և հրամայում պաշտպանական՝ հակառակորդին կաշկանդող գործողություններով ապահովել գլխավոր ուժերի բացազատումը: *Մարտի ընթացքում մարտակարգ ձևավորելով՝* հայկական զորամասերը համարձակ հակազորիի են անցնում (տե՛ս սխեմա 1).

<sup>1</sup> Հնուն Մեծ Հայքի Ուտիք աշխարհում Հայոց արքաների ծնեռոցը:

<sup>2</sup> Կուրի ձախ ափից հյուսիս-արևելք բնակվող կովկասյան ցեղեր:

Սխեմա 1



Խաղիխաղի ճակատամարտը 450թ.  
(Հայոց բանակի ռազմերթը և նախամարտական կարգի բացազատվելը)

**Պատմական տեղեկանք.** «Իսկ քաջ Վարդանը և նրա հետ գտնվող ամբողջ զորքը, երբ տեսան հեթանոսների (պարսիկների- հեղ.) գնդի մեծ պատրաստությունը, նայեցին նաև իրենց սակավությանը. թեև թվով նրանցից շատ ավելի քիչ էին, բայց ամենևին չվախեցան նրանց մեծ բազմությունից...»:


**Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Գ, էջ 153**

Հատկապես հաջող էր Արշավիր Կամսարականի զորաթևի գրոհը, որի հզոր հարվածների տակ պարսիկների ձախ թևը սկսում է նահանջել: Նրանց հետապնդելով՝ հեծելագունդը դիմում է թևանցման, բայց հայտնվում է մերձկուրյան ճահճուտներում և ստիպված դադարեցնում հաջող սկսված զորաշարժը: Անհաջողության պատճառը մարտը սկսելու հարկադրված հապճեպությունն էր: Շարունակվող մարտի պայմաններում վերախմբավորումների իրականացումը զգալի ժամանակ և ջանքեր էր պահանջում: Դրանից օգտվելով՝ պարսիկները նոր գրոհով կարողանում են նեղել հայերին:

### Երկրորդ փուլ

Բարդ իրավիճակում արագ կողմնորոշվելով՝ Արշավիր Կամսարականը պարսիկների համար անսպասելի արագությանը վերադասավորում է ճահճուտներում խրված և մարտակարգը խախտած իր զորամասերը: Վերադասավորումն ավարտելով՝ աջ թևի հեծելագործ խոր թևանցման զորաշարժով դուրս է գալիս Կուրի ափը (տե՛ս սխեմա 2).

Սխեմա 2



Խաղիխաղի ճակատամարտը 450թ. (ճակատամարտի ընթացքը)

Հին աշխարհում իր զորաշարժային հատկություններով փայլող այրուձիու պատրաստվածության բարձր մակարդակի շնորհիվ դժվարին իրավիճակում հաջողվում է ավարտել ձախ թևի վերադասավորումը:

**Պատմական տեղեկանք.** «Խումբ կազմեցին ու հարձակվեցին, և (պարսկական զորքի) աջ թևը ճեղքելով՝ ձախ կողմը գցեցին, բոլորին սրի ճարակ արին ամբողջ դաշտի վրա և փախցրին մինչև անտառի անուր տեղերը՝ Լուփնաս գետի խոր ձորերի մոտ... Այստեղ աչքը վեր բարձրացրեց Արշավիր Արշարունին, մռնչաց առյուծի պես և հարձակվեց վարազի նման, խփեց սատկեցրեց Լփնաց թագավորի եղբայր քաջ Վուրկին և նրա բազմաթիվ համհարզներին էլ նրա հետ սպանեց»:

**Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Գ, էջ 153-155**

Այստեղ պետք է շեշտել *Արշավիր Կամսարականի* զորավարական տաղանդը: Արտակարգ բարդ իրավիճակում վճռական որոշումներ կայացնելու նրա ընդունակությունը հնարավորություն է ընձեռում *անբարենպաստ պայմաններում սկսած մարտը* փրկել անխուսափելի թվացող պարտությունից: Ավելին, ճահճուտներին սեղմված նրա զորաթևը, օգնական ուժեր ստանալով, էլ ավելի հանդուգն քայլի՝ խոր թևանցող (փաստորեն՝ շրջանցող) զորաշարժի է դիմում: Արդյունքում, պարսիկների ձախ թևին հարվածելով՝ Արշավիր Կամսարականի զորագունդը հայտնվում է նրանց մարտակարգի թիկունքում: Առաջացած խուճապն էլ վճռում է ճակատամարտի ելքը:

Պարսից զորքի մարտական դասավորությունը նախատեսված չէր թևերում և թիկունքում մարտ վարելու համար, և այրուձիու դեմ ամբողջական մարտաշար ձևավորել չկարողանալով՝ սկսում է նահանջել նաև կենտրոնը: Հակառակորդի ջախջախումը կատարյալ է դառնում, երբ նահանջող պարսկական զորամասերը սեղմվում են Կուրի աջ ափին ու գետը լողալով անցնող պարսկական զորքի մի մասը խեղդվում է ջրում:

**Պատմական տեղեկանք.** «Գետը թափածների թիվն ավելի շատ էր, քան թե ցամաքի վրա սրի անցրածներինը: Եվ ընկած դիակների բազմությունից գետի հստակ ջրերն արյուն դարձան, և նրանցից ոչ ոք չկարողացավ փրկվել և թաք կենալ դաշտերի խիտ անտառներում: Բայց թշնամիների զորականներից մեկը իր զենքերով միասին բարձրանալով ձիու մեջքին՝ անցավ մեծ գետը (Կուրը- հեղ.), մազապուրծ պրծավ պատերազմից՝ գույժ տարավ մնացած բուն բանակին, որոնք փախան գնացին»:

**Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Գ, էջ 155**

Հատկանշական է, որ մարտի վերջին փուլում Վարդան Մամիկոնյանն առաջ է բերում նետաձիգներին, որոնք նետահարում էին գետը լողալով անցնել փորձող հակառակորդի զինվորներին: Գնկատամարտի վերջում նետաձիգներին առաջ բերելը<sup>1</sup> Վարդան Մամիկոնյանի *ուշագրավ* մարտավարական հնարքներից մեկն է, թեև ռազմարվեստում նորություն չէ:

## **Հաղթանակը**

Ինչպես հայոց, այնպես էլ համաշխարհային ռազմարվեստում խաղիսաղի ճակատամարտի դերը չի սահմանափակվում մարտի հմուտ կազմակերպումով, իրավիճակի արագ գնահատումով ու փայլուն իրականացված թևանցումով: Դրանք ռազմարվեստում վաղուց արդեն նորություն չէին, թեև կարող էին բավարար լինել *ցանկացած* զորավարի փառաբանման համար:

Համաշխարհային ռազմարվեստում *առաջին անգամ* մեր զորքը խաղիսաղում *հանդիպական մարտ* է կիրառել: Բացի այդ, մերժելով միջնադարի ռազմարվեստում իշխող տեսակետը՝ Վարդան Մամիկոնյանը *վերացնում է ռազմերթի և մարտի միջև պարտադիր դադարը*<sup>2</sup>: Որպեսզի պարզ դառնա կատարվածի կարևորությունը, նշենք միայն, որ հետագա ավելի քան 13 դարերի ընթացքում զորավարները չեն համարձակվել ընթացքից մտնել մարտի մեջ:

<sup>1</sup> Նետաձիգների զորամասերը մարտի ընթացքում սովորաբար ծանրագեն հետևակի և հեծելազորի թիկունքում են գտնվում:

<sup>2</sup> Ընթացքից մարտի մեջ մտնելն այսօր հանդիպական մարտի պարտադիր նախապայմանն է համարվում:

**Տեղեկանք.** Խաղխաղուն կիրառված նորարարություններին անտեղյակ լինելն է պատճառը, որ մինչև վերջերս պատմական գրականությունում հանդիպական մարտի առաջին օրինակ էր համարվում 1799թ. հունիսին Տրեբիա գետի մոտ Ալեքսանդր Սուվորովի գլխավորած ռուսավստրիական բանակի ճակատամարտը ֆրանսիացիների դեմ: Ավելին, ռազմական պատմաբանները ևս մեկ սխալ էին թույլ տալիս՝ եզրակացնելով, որ հանդիպական մարտի կազմակերպումը հնարավոր դարձավ արագաձիգ հրազենի ի հայտ գալու և շարասյուների մարտավարության կիրառման շնորհիվ: Մինչդեռ, Խաղխաղի ճակատամարտի օրինակը վկայում է, որ հանդիպական մարտի պատմությունը հրազենի ստեղծման հետ կապ չունի:

Սպարապետի ռազմական տաղանդի և համարձակության լրացուցիչ վկայությունը մարտակարգը դեռևս չձևավորված՝ գրոհը սկսելու որոշումն է: Ջորջը գրոհը սկսել է *ճախամարտական* կարգով, ինչը ճախադեպը չունեցող մտահոլացում էր:

Այսպիսով, Խաղխաղի փայլուն հաղթանակով ոչ միայն մեր, այլև համաշխարհային ռազմարվեստը հարստացավ ընթացքից մարտի մեջ մտնելու և հանդիպական մարտի հաջող փորձով: Դրանով Խաղխաղի ճակատամարտը կիրառված մարտավարությամբ հավասարազոր է այնպիսի ճակատամարտերի, ինչպիսին են Ք.ա 371թ. *Լևկտրայի*<sup>1</sup>, Ք.ա. 331թ. *Գավգամելայի*<sup>2</sup>, Ք.ա. 216թ. *Կաննեի*<sup>3</sup>, Ք.ա. 48թ. *Փարսալուսի*<sup>4</sup> մարտերը: Վարդան Մամիկոնյանն արժանի տեղ է գրավում ռազմարվեստի այնպիսի բարեփոխիչների կողքին, ինչպիսիք են *Էպամինոնդասը*, *Ալեքսանդր Մակեդոնացին*, *Յաննիբալը*, *Յուլիոս Կեսարը* և ուրիշներ:

Խաղխաղի ճակատամարտի համակողմանի վերլուծությունն էապես հարստացնում է հայոց ռազմարվեստի զարգացման աստիճանի մասին պատկերացումները:

<sup>1</sup> Առաջին անգամ զորքը շարվել է ճակատով անհավասար, և հակառակորդի մարտակարգը ճեղքելու նպատակով ուժեր են կենտրոնացվել:

<sup>2</sup> Կիրառվել է ճախահրազենային դարաշրջանում բարդ համարվող զորաշարժ՝ շրջանցում:

<sup>3</sup> Առաջին անգամ փոքր բանակը շրջապատել և ջախջախել է ավելի մեծաթիվ բանակին՝ վերջնականապես ապացուցելով, որ զորքի քանակը չի կարող հաղթանակի հասնելու բացառիկ ճախապայման լինել:

<sup>4</sup> Առաջին անգամ պահեստազորը մարտադաշտում վճռական դեր է կատարել: Ճակատամարտի սկզբում պահեստազորի ուժերով կասեցվել է հակառակորդի ճեղքող (հատող) հարվածը, ապա իրականացվել է մարտի ելքը վճռող զորաշարժը՝ թևանցում:

## ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (451Թ. ՄԱՅԻՍԻ 26)

451թ. գարնանը պարսկական մեծաքանակ բանակը հասնում է Մեծ Հայքի Փայտակարան նահանգի Փայտակարան քաղաքը: Այնուհետև, Մուշկան Նյուսալավուրտի հրամանատարությամբ, Հեր և Ջարևանդ գավառներով պարսիկները շարժվում են դեպի երկրի կենտրոնական շրջանները: Պարսիկներն առաջ են շարժվում անշտապ, իսկ գիշերելու համար հարմար տեղանքի հասնելով՝ դադարեցնում հետագա առաջխաղացումը և ամրացված ճամբար դնում:

**Պատմական տեղեկանք.** «Մի քանի օրից հետո Պարսից զորագլուխը առաջ խաղաց ամբողջ հեթանոս բազմության հետ. եկավ-հասավ Հայոց Հեր և Ջարևանդ գավառը: Այնտեղ՝ գավառում կանգ առնելով, բանակ դրեց, փոս փորեց, պատնեշ շինեց, ցցապատնեշով փակեց և ամեն պատրաստությամբ ամրացրեց ինչպես քաղաք»:

**Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, գլ. Ե**

### Հետախուզումը

Ապարապետը պարսկական բանակի հետախուզման համար ուղարկում է Առանձար Ամատունու երկու հազարանոց հեծյալ զորամասը: Այս հնարքը հիշեցնում է բղեշխների կողմից հակառակորդի գործողությունները կաշկանդելու գործողությունը: Ռազմարվեստի մեծ բարեփոխիչը հարազատ է մնում *նախնյաց մարտավարության դարավոր ավանդույթներին*՝ ցույց տալով, որ իր կիրառած նորարարությունները ռազմարվեստի բնականոն զարգացման արդյունք են:

Հետախուզության ուղարկված զորամասը *պարզում է*, որ բնակչությանն ահաբեկելու նպատակով պարսկական զորամասերն ասպատակում են շրջակա գավառները: Առանձար Ամատունին որոշում է օգտագործել պարսիկների այդ անգոհչությունը և իր զորամասով գրոհում ասպատակության ուղարկված զորամասերից մեկի վրա (տե՛ս քարտեզ 5.1):

**Պատմական տեղեկանք.** «(Պարսից) զորքերից մեծաթիվ գունդ բաժանվեց, ասպատակելով արշավեց և կամենում էր բազմաթիվ գավառներ կողոպտել: Երբ այդ բանը լսեց Հայոց զորքը, բոլոր զորականների միջից ընտրեցին Ամատունյաց ցեղի մի սեպուհի Առանձար անունով, որ իմաստությամբ ու քաջությամբ լցված մի մարդ էր: Սա երկու հազարով դուրս եկավ նրա դեմ, ջարդեց-սատկեցրեց նրա զնդից շատերին, իսկ մնացածներին փախցրեց-հասցրեց նրանց բանակը: Իսկ ինքը ողջ և առողջ վերադարձավ, և այն օրը մեծ ուրախության տոն եղավ Հայոց զորքի համար»:

**Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, գլ. Ե**

Մեծաթիվ լինելով հանդերձ, պարսկական զորամասը հանկարծակի գրոհից խուճապի է մատնվում և անկանոն նահանջում դեպի բանակի ամրացված ճամբարը: Ուստի Առանձար Ամատունին որոշում է դադարեցնել հետապնդումը և վերադառնալ հայոց զորքի բանակատեղի: Առանձար Ամատունու զորամասի հաջողությունը ոգևորում է ազատագրական շարժման մասնակիցներին:

### ***Ճակատամարտի նախապատրաստումը***

Պարսկական բանակը հասնում է Արտազ գավառը, ճամբար է դնում Տղմուտ գետի աջ ափին՝ Ավարայրի դաշտում (տե՛ս քարտեզ 5.1): Մայիսի 25-ին հայկական ուժերը ևս բանակ են դնում Տղմուտի ձախ ափին: Վարդանանց բանակը պատրաստվում է հաջորդ օրվա դժվարին ճակատամարտին: Պարսկական արքունիքի ձուլման քաղաքականության դեմ ընթուստացած հայության համար այս ազատագրական պատերազմը սրբազան պայքար էր, և խորհրդանշական էր, որ վճռական ճակատամարտից առաջ մարտիկները սուրբ հաղորդություն էին ընդունում:



Գրիգոր Խանջյան. «Վարդանանց»

**Պատմական տեղեկանք.** Սպարապետ Վարդան Մամիկոնյանի կոչը Ավարայրի ճակատամարտից առաջ. «Իմ քաջ նիզակակիրներ, չերկնչենք ու չվախենանք և ոչ էլ մահկանացու մարդու ահռելի սրի դեմ թիկունքներս դարձնենք, որպեսզի, եթե Տերը հաղթությունը մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրանց զորությունը, որպեսզի բարձրանա ճշմարտության կողմը, իսկ եթե հասել է ժամանակը՝ մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք»:

**Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, գլ. Ե**

Սպարապետը զորքերը բաժանում է չորս մասի, որոնց հրամանատարությունը ստանձնում են զորավարական տաղանդ ու փորձառություն ունեցող այրեր: Շարունակելով հրամանատարական կազմի նշանակման դարավոր ավանդույթը, որը մեզ հայտնի է դեռևս Հայոց ծորի ճակատամարտից, սպարապետն այս ճակատամարտից առաջ ևս, զորաթևերի հրամանատարներից բացի, նշանակում է նրանց տեղակալներ՝ նիզակակիցներ:

**Պատմական տեղեկանք.** «Իսկ քաջ Վարդանը առաջ գալով՝ հարցուփորձ արեց մեծամեծներին և բոլորի տված խորհրդի համաձայն զորագլուխներ նշանակեց:

*Առաջին զորամասը* հանձնեց Արծրունյաց իշխանին և նրան *նիզակակից կարգեց* Մոկաց մեծ իշխանին. և ուրիշ բազմաթիվ նախարարների այս երկուսին նիզակակից նշանակեց, և զորամասի ամբողջ բազմությունը այս ու այն կողմից օգնական տվեց նրանց:

*Երկրորդ զորամասը* հանձնեց Խորեն Խորխոռունուն, և նրան *նիզակակից կարգեց* Ընծայինին<sup>1</sup> և Ներսեհ Քաջբերունուն:

*Երրորդ զորամասը* հանձնեց Թաթուլ Վանանդեցուն և նրան *նիզակակից կարգեց* Տաճատ Գնթունուն, և շատ քաջ մարդիկ էլ այս ու այն կողմից օգնական տվեց նրանց:

*Ինքը վերջրեց չորրորդ զորամասը և իրեն նիզակակից՝ քաջ Արշավիրին և իր հարազատ եղբայր Համազասպանին»:*

**Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, գլ. Ե**

## **Ճակատամարտը**


Ճակատամարտը սկսվում է մայիսի 26-ի վաղ առավոտյան՝ փոխադարձ նետածգությանը, որին հաջորդում է մերձամարտը (տե՛ս սխեման): Պարսիկները հասնում են գետին և կանգ առնում՝ վախենալով գետանցի դժվարությունից: Իսկ հայկական զորքը, անցնելով Տղմուտը, ամբողջ ճակատով մար-

---

<sup>1</sup> Արսեն Ընծայացին:

տի է բռնվում պարսիկների հետ: Չդիմանալով հայերի ճնշմանը՝ հակառակորդի ձախ ու կենտրոնի զորաթևերն սկսում են հետ քաշվել, սակայն փոքրաթիվ ուժերով գրոհող հայկական զորամասերն ավելին անել չեն կարողանում: Այս տեղամասերի իրենց զորամասերին օգնական ուժեր ուղարկելով՝ պարսկական բանակի հրամանատարությունը կարողանում է խափանել երերացող մարտակարգի խախտման հայկական կողմի փորձերը: Պահեստագործի մի մասն Արշավիր Կամսարականի գլխավորությամբ առաջ է խաղում՝ կենտրոնում պարսկական զորամասերի ճեղքում թույլ չտալու առաջադրանքով:

Հակառակորդի ուշադրությունը կենտրոնում և այ թևում ծավալված գործողությունների վրա կենտրոնացնելով՝ Վարդանը Մամիկոնյանների զորամասով թևանցում է պարսից բանակի մարտակարգի կենտրոնը և մարտի բռնվում հակառակորդի պահեստագործ կազմող Մատյան գնդի հետ (տե՛ս սխեման): Իր մարտիկներին ոգևորելու համար սպարապետն անձամբ է նրանց գրոհի առաջնորդում: Գրոհն այնպիսի իրարանցում է առաջ բերում, որ նույնիսկ անպարտելի համարվող Մատյան գնդի մարտական դասավորությունը ևս կազմալուծվում է: Պարսիկներին միայն փղերի գնդի օգնությամբ է հաջողվում վերադասավորել ուժերը և շարունակել ճակատամարտը: Վարդան Մամիկոնյանը չի կարողանում ավարտել ճեղքումը և գրոհի կասեցման պահին իր փոքրաթիվ զորախմբով հայտնվում է աքցանի մեջ: Չգտելով ավարտել ճեղքումը՝ սպարապետը մարտի է նետվում և հերոսաբար զոհվում:



Ավարայրի ճակատամարտը 451թ. մայիսի 26

**Պատմական տեղեկանք.** «Ո՛չ թե մի կողմը հաղթեց, և մյուսը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով՝ երկու կողմն էլ պարտություն կրեցին»:

**Եղիշե, Վարդանի և Յայոց պատերազմի մասին, գլ. Ե**

Երեկոյան երկու բանակներն էլ քաշվում են այն բնագծերը, որտեղից սկսել էին ճակատամարտը: Ընդհարման ելքը վճռվելու էր հաջորդ օրը, սակայն գիշերը հայկական կողմի հրամանատարական կազմի խորհրդակցության ժամանակ որոշվում է խուսափել նոր ճակատամարտից: Յայկական կողմն իր առջև դրված խնդիրը կատարված էր համարում, և նախարարները, յուրաքանչյուրն իր զորամասով, քաշվում են իրենց գավառները:

### Ամփոփում

Յայուքյան ազգային հիշողությունում Ավարայրի ճակատամարտն ամրագրվել է որպես մեր անենակարևոր և առանցքային հաղթանակներից մեկը: Նման գնահատականը միանգամայն օրինաչափ է, քանի որ այն շարքային ճակատամարտ չէր և ոչ էլ զուտ «բարոյական հաղթանակ», ինչպես դա երբեմն պարզունակորեն փորձում են ներկայացնել: Յանուն հայրենիքի և հա-



«Ավարայրի ճակատամարտը». մանրանկար 1482թ.  
Ականց անապատում Կարապետ Բերկրացու ծաղկած Շարակնոցից

վատքի պաշտպանության մղած Ավարայրի ճակատամարտը մեր ազգային-քրիստոնեական ինքնության պահպանման համար մղվող երկարատև պայքարում տարած ռազմավարական հաղթանակն է: Եթե փորձենք Վարդանանց պատերազմը մեկնել արդի հասկացողությունների միջոցով, ապա անհրաժեշտ է վերհիշել, որ ազգային անվտանգության հիմնական նպատակը սեփական արժեքային համակարգի կամ, այլ խոսքերով՝ «քաղաքակրթական-մշակութային կողի» պահպանումն է: Այդ համատեքստում պարսկական ագրեսիայի գլխավոր թիրախը մեր հոգևոր-արժեքային համակարգն էր: Անձնագրությանը պաշտպանելով այդ համակարգը՝ Վարդանանք փայլուն լուծեցին մեր ազգային-հոգևոր անվտանգության գերխնդիրը. Հազկերտ Բ-ն հրաժարվում է իր ծրագրերից և դուրս է բերում զորքերը Հայաստանից: Ավարայրի հաղթանակի համահեղինակներն էին հայոց ռազմաքաղաքական և հոգևոր ընտրանին, ողջ հանրությունը: Դա վկայում է այն մասին, որ ցանկացած ժամանակահատվածում ազգային անվտանգության արդյունավետ ապահովումը պահանջում է Հայության իշխանական և հոգևոր ներկայացուցիչների ու համաժողովրդական ուժերի միասնական ջանքեր և համաձայնեցված գործողություններ:

## **ՎԱՀԱՆԱՆՅՑ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 481-484ԹԹ.**

Մդ. 60-ական թթ. սկսած՝ պարսից արքունիքն աստիճանաբար վերադառնում է Հազկերտ Բ-ի նախորդ տասնամյակներում վարած հակահայկական քաղաքականությանը: Ի պատասխան հայերը նորից ելնում են պայքարի. սկսվում է Վահանանց ազատագրական պատերազմը 481-484թթ.: Այդ պատերազմը գլխավորում է Վահան Մամիկոնյանը՝ Վարդան Մամիկոնյանի եղբորորդին: Նա որոշում է ձերբակալել պարսիկ մարզպան Ատրվշնասապին և զորահրամանատար Վեհվեհնամին, սակայն նրանց հաջողվում է փախչել Պարսկաստան:

Նա ձևավորում է Արշակունյաց թագավորության անկումից հետո ստեղծված իրադրությունում առավել արդյունավետ գործող հայեցակարգ, որն ընդունված է պայմանականորեն անվանել *անկանոն կամ ապստամբական ռազմարվեստ*: Քանի որ նոր հայեցակարգում մեծ էր մարտավարության «տեսակարար կշիռը», առանձին դեպքերում այն կոչվում է նաև *անկանոն (ապստամբական) մարտավարություն*: Դրա էությունը վճռական ճակատամարտերի (այսպես կոչված՝ կանոնավոր մարտերի) փոխարեն հակառակորդին հյուժիչ (անկանոն) գործողություններով կաշկանդելն ու անբարենպաստ իրավիճակի մեջ դնելով՝ ջախջախելն էր:

Անկանոն մարտավարությանը բնորոշ տարրեր մեր ռազմարվեստում միշտ էլ կիրառվել էին: Լեռներին բնորոշ *կտրտված տեղանքը, կլիմայի ուղղաձիգ գոտիականությունը*, զինագործության զարգացման համար վճռական նշանակություն ունեցող *օգտակար հանածոների բազմազանությունն* ու, վերջապես, հզոր հեծելազոր ունենալու համար կարևոր՝ *զարգացած ձիաբուծությունը* վճռական ազդեցություն էին ունեցել ռազմարվեստի վրա: Այս, ինչպես նաև մի շարք այլ գործոններն էին պատճառը, որ անկանոն մարտավարության տարրերը խորթ չէին մեր ռազմարվեստին, ու դրանց կիրառման բազմաթիվ օրինակներ կարելի է բերել: Սակայն մինչ Վահան Մամիկոնյանը՝ այս մարտավարությունը գերիշխող չէր եղել:

### **Ակոռիի (481թ.) և Ներսեհապատի (842թ.) ճակատամարտերը**

Ատրվշնասապը 7 հազարանոց զորքով վերադառնում է Հայաստան՝ նպատակ ունենալով «բնում խեղդել» ազատագրական շարժումը: Նախիջևանի մոտ պարսիկները հասնում են Երասխ (Արաքս) գետին: Գետանցում թույլ չտալու նպատակով որոշվում է 400 հոգանոց հայկական զորամաս ուղարկել, սակայն պարսիկները հասցնում են անցնել գետը: Ուստի, ապստամբները որոշում են պարսիկներին քաշել Մասիսի լեռնոտ լանջերը:

Չետապնդելով՝ պարսիկները հասնում են Ակոռի գյուղին, որի մոտ էլ տեղի է ունենում ճակատամարտը: Օգտագործելով տեղանքի ընձեռած հնարավորությունները՝ հայկական զորամասը շեշտակի գրոհում է, խուճապ առաջացնում պարսիկների շարքերում և մատնում փախուստի: Մարտից հետո ակտիվ հետապնդում է իրականացվում: Ճակատամարտում սպանվում է նաև Ատրվշ-նասպ մարզպանը:

Բաց ճակատային բախումներից խուսափելով՝ մարտը սկսվում է մեծաթիվ ուժերին բացազատման հնարավորություն չտվող նեղ կամ կտրտված տեղանքում հակառակորդից բարձր դիրք զբաղեցնելուց և նահանջի համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելուց հետո: Այս տեսակետից Ակոռիում նպաստավոր էր ոչ միայն տեղանքի թեթուքությունը, այլև շրջակա ձորակները: Պատահական չէ, որ պարսիկների կողմն անցած ու Կատշաց զորամասով շրջանցում իրականացնող Գարջոյլ մաղխազը չի հասցնում ժամանակին ավարտել զորաշարժը: Ձորակներում «դեգերող» շրջանցող ուժերը մարտադաշտ են հասնում պարսիկների գլխավոր ուժերի պարտությունից հետո:


Այսպիսով, Ակոռիում հայերը ոչ միայն փայլուն հաղթանակ են տանում պարսիկ նվաճողների դեմ, այլև սկսում են փոխել ռազմարվեստի հիմնական տարրերը: Սկսվում է *անկանոն մարտավարության* տարրերի կիրառումով բնութագրվող նոր դարաշրջան:

482թ. գարնանը պարսկական մոտ 60 հազարանոց զորաբանակը՝ թիկնազորի պետ Ատրներսեհի հրամանատարությամբ, ներխուժում է Չեր և Ջարևանդ գավառները (տե՛ս քարտեզ 5.1): 482թ. ապրիլին շուրջ 35 հազարանոց հայկական բանակը դուրս է գալիս Դվինից և մի քանի օր անց հասնում Արտազ գավառը: Մոտենալով պարսկական զորքերին՝ բանակ է դրվում Ներսեհապատ գյուղի մոտ: Ձորքին ոգեշնչելու համար այնտեղ էր գտնվում նաև կաթողիկոս Յովհան Մանդակունին:

**Պատմական տեղեկանք.** «Այնուհետև հայոց զորավար Վահան Մամիկոնյանը սկսեց ըստ պատշաճի կազմակերպել ճակատի յուրաքանչյուր թևը: Կենտրոնական կողմը բազմաքանակ այրուձիով տվեց մարզպան ու քաջ ասպետ Սահակի ձեռքը: Աջ թևում կարգեց Բարշղ Վահևունուն, Բաբգեն Սյունիին, Ատոն Գնունիին և Փապակ Պալունիին՝ յուրաքանչյուրի այրուձիով ու այլ հավելվածով: Իսկ ձախակողմը հանձնեց ուխտասեր Կամսարականներին՝ Վահանին, Ներսեհին, Յրահատին, և իր սիրելի եղբայրներին: Աջ կողմում, գնդերի յուրաքանչյուրից մեկական այրուձիով ինքն էր լինելու: Ուրիշ ավագ տղամարդկանցից էլ կազմեց մի ջոկ՝ ընտիր այրուձիով, Վրեն Վանանդեցու գլխավորությամբ, որի մոտ ուղարկեց ոստանիկ Արտակունյաց Պապին՝ Բաբոցի որդուն»:


**Ղազար Փարպեցի, Պատմություն հայոց, Գ, Գլուխ 3Ա**

Սխեմա 1



Ներսեհապատի ճակատամարտի առաջին փուլը

Սխեմա 2



Ներսեհապատի ճակատամարտի երկրորդ փուլը

Պարսիկներն իրենք են նախահարձակ լինում (տե՛ս սխեմա 1): Ամբողջ ճակատով միաժամանակ գրոհելով՝ պարսիկներին նույնիսկ հաջողվում է կենտրոնում խախտել հայկական զորաբանակի մարտակարգը: Բայց այդ վճռական պահին հայոց սպարապետն անօրինակ խիզախությամբ բեկում է մտցնում ճակատամարտի ընթացքի մեջ:

Սպարապետի ու Կամսարական եղբայրների զորամասերը շեշտակի գրոհով ջախջախում են հակառակորդի թևերը (տե՛ս սխեմա 2): Վահան Մամիկոնյանն իր հեծյալ գնդով պարսիկների վրա է հարձակվում աջից, իսկ Կամսարական եղբայրները՝ ձախից: Կոտրելով պարսկական զորքերի աջ և ձախ թևերի դիմադրությունը և փախուստի մատնելով նրանց՝ հայկական գնդերն այնուհետև հուժկու խարվածներով ջախջախում են հակառակորդի կենտրոնը:

Հայկական զորքի թևերը փակում են պարսկական զորամասերի նահանջի ուղիները և նրանց հարկադրում նահանջել դեպի ոչ մեծ զառիվայրը, որտեղ էլ ջախջախում են:

Այսպիսով, Վահան Մամիկոնյանի զորավարական տաղանդի կարևոր վկայություններից մեկը հանդիսացող այս ճակատամարտում սպարապետը *նոր հնարքներ չի կիրառել*: Նա ուղղակի ամբողջացրել ու վերջնական տեսքի է բե-

րել մեծաթիվ հակառակորդի հետ հակամարտության նոր մարտավարությունից բխող դրույթները և կիրառելով՝ ցույց տվել, որ ստեղծված ռազմական և քաղաքական իրադրությունում դրանք *այլընտրանք չունեն*:

Ռազմարվեստի տեսանկյունից ուշագրավ է, որ հակառակորդի գլխովին ջախջախման մտահղացման համաձայն՝ նույնիսկ նահանջելիս վերջինիս զորամասերը չէին կարող շեղվել հայ զորավարի նախանշած ուղուց: Պարսիկները հարկադրված նահանջում են դեպի այնպիսի տեղանք, որտեղ նրանց համար դժվար էր լինելու ոչ միայն մարտնչելը, այլև փախչելը:



Մարտական դաշույններ

**Վահան Մամիկոնյանի գործունեությունը  
Տայքում 482-484թթ.**

Երկու կարևոր հաղթանակ տանելուց հետո հայկական բանակը օգնության է շտապում պարսիկների դեմ ապստամբած վրացիներին: Ճարմանայի ճակատամարտից (482թ.) հետո Վիրքից վերադառնալով՝ Վահան Մամիկոնյանը հրաժարվում է մեծաթիվ պարսկական զորամասերի հետ ճակատային բախումներից և ռազմական հիմնական բազան պարտադիր կերպով երկրի կենտրոնում տեղակայելու կարգից (*հենադաշտի* է վերածվում Մեծ Հայքի Տայք աշխարհը): Լինելով Մամիկոնյանների տիրույթը՝ այն առավել հեռու էր պարսկական սահմանից, պատված էր լեռնային սաղարթախիտ անտառներով ու դժվարամատչելի էր (տես քարտեզ 5.1):

Ազատագրական պատերազմը տևում է մինչև 484թ. ամառը, երբ պարսիկները ծանր պարտություն են կրում հեփթաղներից Միջին Ասիայում: Հայաստանում ևս հաջողության չհասնելով՝ պարսկական արքունիքը ստիպված է լինում դադարեցնել ռազմական գործողությունները և դուրս բերել իր պարտված բանակը: Պարսից արքունիքը *ճանաչում է* Վահան Մամիկոնյանին որպես սպարապետ և մարզպան: Վահան Մամիկոնյանը դառնում է Արևելյան Հայաստանի, որպես Տանուտերական իշխանության երկրի, կառավարողը:

Այսպիսով, Վահան Մամիկոնյանն ամբողջացնում ու վերջնական տեսքի է բերում մեծաթիվ հակառակորդի հետ հակամարտության նոր ռազմարվեստից բխող դրույթները: Նրա իրականացրած բարեփոխումը հայկական ռազմարվեստի և մարտավարության *հետևողական զարգացման* արդյունք էր:

## **ՁԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՂԵՄ 571-572ԹԹ.**

Վահանանց պատերազմից հետո որոշակի չափով զսպվել էին պարսկական արքունիքի հարկային, վարչական և կրոնական ճնշումները, որոնք, սակայն, նոր թափ են ստանում 560-ական թթ.: Դրանք բորբոքում են հայ հասարակության բոլոր խավերի դժգոհությունը, նպաստում Հայաստանում նոր ազատագրական շարժման ծավալմանը: Այն կազմակերպում և գլխավորում են Հովհաննես Բ Գաբեղենացի կաթողիկոսը (557-574թթ.) և սպարապետ Վարդան Մամիկոնյանը: Նախքան զենքի դիմելը՝ նախարարները մարզպանին հայտնում են, որ հայ ժողովուրդը քրիստոնեական կրոնի հարցերում ազատ է և հավատափոխություն չի հանդուրժի: Նրանք մարզպանին ցույց են տալիս Նվարսակի 484թ. պայմանագիրը, որով հայերին կրոնական ազատություն էր երաշխավորվում: Իր հերթին, մարզպանը հնազանդության կոչ է անում հայ ժողովրդին և սպառնում պարսից արքայի դաժանություններով:

**Պատմական տեղեկանք.** «Վարդան (Մամիկոնյանը- հեղ.) համաձայնության գալով բոլոր հայերի հետ, դուրս եկավ Պարսից թագավորի ծառայությունից: Նրանք հանկարծակի հարձակվելով Սուրենի վրա Դվին քաղաքում՝ սպանում են նրան, վերցնում մեծ ավար»:

**Սերբոս, Պատմություն, Գլուխ 2**

Կաթողիկոսի կոչով երկրի բոլոր կողմերից հավաքվում է 20 հազարանոց զորաբանակ: Քրիստոնեական ժողովուրդների միասնական ճակատ կազմելու առաջարկով պատվիրակություն է մեկնում Բյուզանդիա, որը կնքում է հայ-բյուզանդական դաշինքը:

Խոսրով Անուշիրվան արքան, լսելով հայերի ազատագրական տրամադրությունների մասին, զորաբանակ է տրամադրում Սուրեն մարզպանին և ուղարկում Հայաստան: Վճռական ճակատամարտը տեղի է ունենում Դվինի մոտ 572թ. փետրվարի 2-ին և ավարտվում պարսկական կողմի խայտառակ պարտությամբ: Մարտում սպանվում է Սուրեն մարզպանը:

**Պատմական տեղեկանք.** «Երբ բնակիչներն իմացան այդ (պարսկական բանակի Հայաստան գալու) մասին, 20.000 մարդ հավաքեցին մեկ մարդու նման, մարտի պատրաստ, նույնիսկ մինչև մահ... պաշտպանելու համար իրենց քրիստոնեությունը»:

**Հովհան Եփեսացի, Եկեղեցական պատմություն, Գիրք II, Գլուխ 20**

# ԽԱՂԱՄԱԽԻ ԾԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԵՎ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱԿԱՆ ԱՎԱՐՏԸ

Խոսքով արքան մարտական փղերով համալրված 20 հազարանոց նոր բանակ է ուղարկում Հայաստան՝ Միհրան Միհրևանդակի հրամանատարությամբ: Պարսիկները բանակ են դնում Խոսրովակերտ անտառի և Ջրվեժի լեռների միջև ընկած Խաղամախիի դաշտում:


**Պատմական տեղեկանք.** «Դրանից հետո քսան հազար հոգուց բաղկացած զորքով և բազմաթիվ փղերով Վարդանի վրա հարձակվեց Միհրան Միհրևանդակը: Տեղի ունեցավ մեծ ճակատամարտ Խաղամախյան դաշտում. պարսիկների զորքը սոսկալի պարտության մատնվեց. բոլորին էլ սրահար արեցին և խլեցին նրանց ունեցած բոլոր փղերը: Ինքը՝ Միհրանը, փոքրաթիվ մարդկանցով փրկվեց և գնաց իր երկիրը»:

Սեբեոս, Պատմություն, Գլուխ 2

Վարդան Մամիկոնյանը զորքը բաժանում է երեք գնդի: Դրանցից մեկին կարգադրում է դարան մտնել և ճակատամարտի վճռական պահին հարվածել հակառակորդին: Երկրորդ գնդին հրամայում է պարսիկների վրա հարձակվել ձախից: Երրորդ գունդն իր իսկ հրամանատարությամբ պետք է գրոհեր աջից:

Արևածագին, երբ դեռ հակառակորդը չէր ավարտել ճակատամարտի նախապատրաստական աշխատանքները, Վարդանը հանկարծակի հարձակում է սկսում: Միաժամանակ ձախից պարսկական զորքերի վրա է գրոհում հայկական երկրորդ գունդը: Թևերից անսպասելի հարվածի ենթարկված պարսկական զորամասերում իրարանցում է սկսվում (տե՛ս սխեմա 1): Բայց նկատելով,

Սխեմա 1




Խաղամախիի ճակատամարտը 572թ.

որ սպարապետն աջ զորաթևուն է գործուն, պարսիկները կարողանում են ուժերի վերախմբավորում իրականացնել և կենտրոնի զորաթևի ուժերով հակազորուհուն են հայոց աջ զորաթևի վրա:

### Երկրորդ փուլը

Հակազորիի տեղամասում կատաղի կռիվ է ծավալվում (տե՛ս սխեմա 2): Ի վերջո, Վարդան Մամիկոնյանը կարողանում է կասեցնել պարսիկների հակազորիը: Հակազորիի կասեցման պահին պարսկական բանակը հայտնվում է անբարենպաստ իրավիճակում. կենտրոնի զորամասերն աջ զորաթևի դեմ նետելով՝ Միհրանը, փաստորեն, մասնատել էր իր բանակի մարտակարգը: Այսպիսով, նույնիսկ նախքան դարանի գունդը մարտի մտցնելը՝ մասնատված պարսկական բանակի քանակական գերազանցությունն էական դեր չէր խաղում:

Սխեմա 2




Խաղամասի ճակատամարտը 572թ.

### Հաղթանակը

Պարսկական բանակն այժմ արդեն նոր խնդիր ուներ, քանի որ ամենաանպասելի ուղղությունում (վերախմբավորման հետևանքով դատարկված կենտրոնում) էր ճակատ բացվել (տե՛ս սխեմա 3): Մարտի առաջին փուլում «անկանոն» ճակատամարտ էր պարտադրվել այս կարգի գործողությունների համար չնախապատրաստված հակառակորդին, որն այժմ անլուծելի խնդրի առջև է կանգնեցվում: Բարդ ու խճճված իրավիճակից ելք գտնել չկարողացող պարսիկները ջախջախվում են և դիմում փախուստի:

Սխեմա 3



Խաղամախիի ճակատամարտը 572թ.

Ապակողմնորոշված հակառակորդի նկատմամբ տարած հաղթանակի կարևոր ցուցանիշ է, որ հայերի ձեռքն են անցնում հակառակորդի փղերը: Պարսից զորքի հրամանատար Միհրանին էլ մի կերպ է հաջողվում փախչել:

**Պատմական տեղեկանք.** «Հայոց կաթողիկոսն ու իրեն ընկերացած եպիսկոպոսները... պատմեցին այնտեղ եղած պատերազմական ճակատամարտերի, մեծ ավերածությունների մասին: Թե ինչպես հետո նորից բանակներն իրար ընդհարվեցին, և թե ինչպես պարսիկները շատ անգամ պարտվեցին, և թե ինչպես նրանցից փղեր գրավեցին»:

**Հովհան Եփեսացի, Եկեղեցական պատմություն, գիրք II, Գլուխ 21**

Այսպիսով, Խաղամախիի ճակատամարտում դարանի գնդի կիրառումը մեր ռազմարվեստը զարգացնելու գործում արձանագրված *նոր քայլ* է: Այս հաղթանակից հետո Արևելյան Հայաստանը դուրս է բերվում պարսկական տիրապետության տակից, որը քաղաքական հարթությունում *նոր իմաստ և բովանդակություն* է հաղորդում ռազմական հաջողությանը:

## **ՊԱՐՍԿԱԿԱՆ ՉՈՐՔԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՕՉ ԲԵՐՂԱՔԱՂԱՔՈՒՄ 602Թ.**

### **(ԲԱՋԱՌԻԿ ԲԱՉՄԱՔԱՅԼ ՌԱՉՄԱԿԱՆ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ)**

590-ական թթ. սկզբին տարածաշրջանում ձևավորված ուժերի հարաբերակցությունը նպաստավոր էր Բյուզանդիայի համար: Պարսկաստանում սկսված գահակալական կռիվների հետևանքով Մավրիկիոս (Մորիկ) կայսրը (582-602թթ.) հնարավորություն էր ստացել միջամտելու Պարսկաստանի ներքին գործերին: Բյուզանդական զորքի կազմում ռազմական գործողություններին մասնակցում է նաև Մուշեղ Մամիկոնյանի գլխավորած հայկական 15 հազարանոց զորաբանակը: Բյուզանդական բանակի օգնությամբ գահ բարձրացած Խոսրով Բ Փերվեզն (590-628թթ.), ի նշան «շնորհակալության», 591թ. պայմանագրով հրաժարվում է մի շարք տարածքներից, այդ թվում՝ Հայաստանի մեծ մասից:

Մորիկ կայսերը հաջորդած Փոկասի (602-610թթ.) օրոք Խոսրով Փերվեզը, նախկինում կորցրած տարածքները վերականգնելու նպատակով, պատերազմ է սկսում Բյուզանդիայի դեմ: Պատերազմի սկզբում Խոսրով Բ արքան ձգտում է իր կողմը գրավել Տարոնի իշխան Մուշեղ Մամիկոնյանին, սակայն վերջինս մերժում է առաջարկը:

### ***Առաջին փուլը***

602թ. պարսից արքան Տարոնի դեմ 30 հազարանոց բանակ է ուղարկում՝ Միհրանի գլխավորությամբ: Պարսիկները դաժան բռնություններ են սկսում, որոնց զոհ են գնում Սբ Կարապետ (Գլակա, Իննակնյան) վանքի հոգևորականները: Ծավալված ռազմական գործողությունները գլխավորում է Մուշեղ Մամիկոնյանը, սակայն զառամյալ իշխանը զորքի ղեկավարումը հանձնում է որդուն՝ Տարոնի իշխան կարգված Վահան Մամիկոնյանին:

*Նվազագույն կորուստներով հակառակորդին ջախջախելու համար Վահանը բազմաքալ գործողություն է իրականացնում, որը հարստացնում է մեր և համաշխարհային ռազմարվեստի պատմության հանրագիտարանը:*

Վահանը դեսպանների միջոցով իր հավատարմությունն է հայտնում Միհրանին և տեղեկացնում, որ ցանկանում է ապստամբել հոր դեմ: Պարսկական զորքերը չէին կարողացել գրավել Տարոնի բերդերը և ամրոցները: Ուստի, Միհրանն իր մոտ է հրավիրում Վահանին՝ հույս ունենալով նրա միջոցով հասնել հաջողության:

Տարոնի առանձին ամրոցներում նախապես դարաններ պատրաստելով՝ Վահանը գնում է հակառակորդի որջը և Միհրանին համոզում շրջակա ամրությունները գրավելու համար իրեն 4 հազարանոց պարսկական մի զորամաս վստահել: Նա զորագունդն առաջնորդում է դեպի Օձ բերդաքաղաքը, որտեղ պարսիկների համար ծուղակ էր պատրաստել:

**Պատմական տեղեկանք.** «Վաղ առավոտյան (Վահանը) քաղաքում գտնվողներին պատվեր ուղարկեց՝ դարպասը բաց անել և պարսից զորքին ներս առնել: Որովհետև քաղաքադուռը շատ նեղ էր, մեկական էին ներս մտնում: Դռներից ներս անցնողներին իսկույն առնում էին, տանում տուն, զգեստները հանում և գլուխը կտրելով՝ պարսպից դուրս, մի աներևույթ խոր տեղ նետում: Չորս հազարից միայն հիսուն հոգի թողել էր Խարձք (կամ Հարձք) կոչվող գյուղում»:

**Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Պատճեն առաջին**

Վահանը նախօրոք էր մշակել հակառակորդի մաս-մաս ոչնչացման ծրագիրը: Պարսկական զորամասի հետ դեպի բերդաքաղաք շարժվելուց առաջ նա մեկ հիսնյակ թողնում է Խարձք գյուղում և հրամայում սպասել իր կարգադրություններին: Մարտական գործողությունները սկսվում են վաղ առավոտյան, ինչը հայ զորավարին պետք է հնարավորություն տար մի քանի գործողություն իրականացնել նախքան մութն ընկնելը:


### **Երկրորդ փուլը**

Օձում ծուղակը զցված պարսկական զորամասը կարճ ժամանակում ամբողջությամբ ոչնչացվում է, սակայն դա սկիզբն էր միայն: Դեռևս չէր ավարտվել ծուղակն ընկած զորամասի «հետքերի վերացումը», երբ Խարձքում գտնվող ստորաբաժանումը ստանում է այն կարգադրությունը, որի համար առանձնացվել էր զորամասից (տե՛ս սխեմա 1): Հիսնյակին Վահանը հրամայում է սուրալ Միհրանի մոտ և նրանից ևս երկու հազարանոց օգնական զորամաս խնդրել:

**Պատմական տեղեկանք.** «Երբ բավականին մոտեցել էին քաղաքի դռանը, Վահանը պարսիկներից խլած ձիերը ու հանդերձանքը տալով քաղաքացիներին՝ ներսից դուրս կանչեց նրանց: Այա խրատ տվեց, թե երբ պարսիկները տեսնեն ձեզ, դուք միահամուռ դեպի քաղաքը արշավեք և ներս մտնելով հաղթանակի փողեր հնչեցրեք. դուռն էլ բաց թողեք, որպեսզի նրանք կարծեն, թե քաղաքն արդեն գրավեցին: Եվ այդպես էլ արեցին: Պարսիկները, երբ տեսան, որ նրանք միահամուռ դեպի քաղաքն են դիմում, չափազանց ուրախացած՝ իրենք էլ դեպի քաղաքը արշավեցին և անհամբերությամբ քաղաքի դռնից ներս էին լցվում»:


**Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Պատճեն առաջին**

Սխեմա 1



Օձի ճակատամարտի 602թ.

Սխեմա 2



Օձի ճակատամարտի 602թ.

Վահանը հասցնում է պարսիկ զինվորների ձիերն ու ռազմական հանդերձանքը բաժանել Օձի բնակիչներին, որոնց օգնությամբ նոր ծուղակ է պատրաստում մոտեցող պարսկական զորամասի համար: Մինչ «զինավառված» տեղացիները ներս են մտնում և հաղթական փողեր հնչեցնում՝ նա ընդառաջ է շարժվում պարսկական զորամասին և հաղթանակի լուրը հայտնում (տե՛ս սխեմա 2): Հարուստ ավարի տիրանալու մոլուցքով տարված պարսիկները կորցնում են զգոնությունը և քառատրոփ արշավում դեպի բերդաքաղաք: Օձին մոտեցող պարսկական զորամասի ջախջախունը ձեռնարկելուց առաջ Վահանը համարձակորեն սկսում է բազմաքայլ մարտի երրորդ փուլը:

Դեռ բերդաքաղաքին չհասած՝ պարսկական զորամասից երկու տասնյակ զինվորների նա հրամայում է վերադառնալ և Միհրանին հայտնել Օձի գրավման մասին: Դժգոհելով, որ վերցված ռազմավարից իրենց անմասն են թողնելու, սակայն չհամարձակվելով չենթարկվել հրամանին՝ ստորաբաժանումը վերադառնում է Միհրանի մոտ և հայտնում բերդաքաղաքի գրավման լուրը (տե՛ս սխեմա 2):

Վահանն իր ստորաբաժանումով հետևում է պարսիկներին: Պարզվում է՝ այդ քայլը ևս նախօրոք մտածված էր: Պարսկական զորամասի մեծ մասն արդեն բերդաքաղաք էր մտել, երբ զինվորները սկսում են կասկածել, որ ծուղակն են ընկել: Սակայն այդ պահին բերդաքաղաքի դարպասները փակվում են, և պարսիկների վրա են գրոհում դարան մտած հայկական զորամասերն ու սկսում նրանց կոտորածը:

Հակառակորդի փախուստը թույլ չտալու համար էլ նախատեսված էր Վահան Մամիկոնյանի հետ զործող ստորաբաժանումը, որը թիկունքից հարվածում է Օձ չմտած հակառակորդին: Պարսիկները միայն դեպի ճահճուտ են կարողանում նահանջել, որտեղ էլ Վահանի ուժերը շրջապատում են նրանց և ոչնչացնում:


## **Երրորդ փուլը**

*Մտահղացման երրորդ փուլն իրականացնելու համար մեծ համարձակություն էր պահանջվում:*

Հաջորդ օրն առավոտյան Վահանը մեկ անգամ ևս ուղևորվում է Միհրանի մոտ և նրան հայտնում, որ բերդաքաղաքը գրաված զորամասերը խռովություն են բարձրացրել և չեն ցանկանում հրամանատարի հետ կիսել հարուստ ռազմավարը (տե՛ս սխեմա 3):

Միհրանը որոշում է, որ խռովարարների ելույթը ճնշելու համար հազար հոգանոց հեծյալ զորամասը բավարար կլինի, բայց Վահանի չափազանցած լուրերին հավատալով՝ պատժիչ զորամասի մարտիկների թիվը կրկնապատկում է: Վահանն այդ տեղամասում բավարար ուժեր չունեի հեծյալ զորագնդի ջախ-

Սխեմա 3



Օծի ճակատամարտը 602թ.

ջախման համար: Այդ նպատակով նա «առաջարկում» է զորագունդը կիսել երկու մասի և գիշերը հանկարծակի հարձակումներով այս զորամասերը ևս ոչնչացնում:

Կարճ ժամանակում իրականացված մարտերում տարած հաղթանակները վկայում են, որ Վահան Սամիկոնյանը կարող է համարվել շուրջկալների և գիշերային մարտերի բոլոր ժամանակների ամենահաջողակ հայ վարպետներից մեկը:

### Գիշերային մարտի արվեստը

Գիշերային մարտին ռազմական խորամանկություն ավելացնելով՝ Վահան Սամիկոնյանը նոր մակարդակի է բարձրացնում մեր ռազմարվեստը: Այդ պատճառով հայ զորավարը հետագա սերունդների հիշողության մեջ մնացել է որպես «Գայլ Վահան»: Ուշագրավ է, որ Վահանին առաջինը «Գայլ» է անվանում նրա դեմ մարտական գործողություններ վարող սարսափահար եղած պարսիկ զորավարներից մեկը: Հայաստանում ջախջախված պարսիկ զորավարը հավանաբար չէր կարծում, որ իր տված *մականունը* շատ արագ *պատվանվան* է վերածվելու:

Այսպիսով, երկու օրից էլ քիչ ժամանակ տևած հակամարտության ընթացքում պարսկական բանակը կորցնում է իր անձնակազմի գրեթե մեկ երրորդը: Մինչդեռ հակառակորդից անհամեմատ քիչ ուժեր ունեցող հայկական կողմի զոհերը տասնապատիկ քիչ էին: Մինչև կյանքի վերջը (606թ.) Գայլ Վահանը գլխավորում է Տարոնի հայության պայքարն օտար նվաճողների դեմ՝ դառնալով մեր ռազմարվեստի անվանի բարեփոխիչներից մեկը:

Օձի երկօրյա ճակատամարտը համաշխարհային ռազմական գիտության մեջ օպերատիվ արվեստի առանձնանալուն նախորդած դարաշրջանի ամենաբազմաքայլ մարտական գործողություններից է:

## ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ VII-IX ԴԴ.

630-40-ական թթ. Առաջավոր Ասիայում տեղի են ունենում քաղաքական փոփոխություններ: Ռազմաքաղաքական ասպարեզ է իջնում նորաստեղծ մահմեդական պետությունը՝ Արաբական խալիֆայությունը: Արաբական նվաճումների արդյունքում ընդամենը երկու տասնամյակի ընթացքում կործանվում է Սասանյան տերությունը, Բյուզանդիայից գրավվում են Ասորիքը, Պաղեստինը, Եգիպտոսը:

Արաբների արշավանքների նախօրյակին (639թ.) Հայաստանի բյուզանդական մասի նախարարների առաջնորդությունն է ստանձնում Թեոդորոս Ռշտունին: Տաղանդավոր քաղաքական և ռազմական գործիչը միավորում է Հայաստանի արևմտյան և արևելյան մասերը և երկրում ինքնուրույն իշխանապետություն հաստատելով՝ իր վրա է վերցնում ոչ միայն Հայոց իշխանի, այլև սպարապետի պարտականությունները, իսկ Բյուզանդիայի Կոստանդին Գ կայսրից ստանում պատրիկի բարձր տիտղոս: Հայոց իշխանի նստավայրը Աղթամար կղզին էր:

640թ. սկզբին արաբները ներխուժում են Հայաստան, իսկ 641թ. Ամիդն ու Տիգրանակերտը (Նփրկերտ) գրավելով՝ շարժվում են դեպի երկրի կենտրոնական շրջանները, որտեղ կարողանում են գրավել նաև Դվինը: Մի քանի օրում Դվինում սպանվում է 12 հազար ու գերեվարվում 35 հազար մարդ: Այնուհետև արաբներն արագ հեռանում են Հայաստանից:


Հայաստանում արաբական նվաճումներին դիմակայելու համար Բյուզանդիայի կայսրը Պրոկոպիոս (Պռոկոպ) զորավարի հրամանատարությամբ 60 հազարանոց բանակ է ուղարկում:

### ***Բատնա-Սեռուզի արշավանքը 642-643թթ.***

Բյուզանդական զորքի տեղ հասնելուն պես Թեոդորոս Ռշտունին հույն զորավարին ներկայացնում է գործողությունների համարձակ մի ծրագիր, որի նպատակն էր հարձակողական գործողություններով արաբներին անակնկալի բերել: Տարածաշրջանի բոլոր ուժերի պարտությունների պայմաններում այս ծրագիրը բավական համարձակ էր:

Պրոկոպիոսի և Թեոդորոս Ռշտունու գլխավորած բանակը 643թ. սկզբին Աղձնիքի վրայով մտնում է Վերին Միջագետք և կտրելով արաբների դիմադրությունը՝ սրընթաց առաջ շարժվում դեպի Եդեսիա (տե՛ս քարտեզ 5.2):

Քարտիկ 5.2



VII-VIII դարերի ՊԱՏԵՐԱԶՄԵՆԻ ՊԵՆՏԱԿՆԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՋՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պատմական տեղեկանք.** «955 թվին (643-644) պատրիկ Վաղենտինը՝ Չռոմեացոց գորավարը, եկավ կռվելու արաբների դեմ: Ահաբեկված նրանց ներկայությունից՝ նա փախավ և թողեց իր հետ եղած բոլոր հարստությունները, որ ընկան արաբների ձեռքը:

Նույն թվին Պռոկոպը և Թեոդորոսը մի խիստ ուժեղ հարձակում գործեցին և հասան մինչև Բատնա-Սառուզ»:

**Դիոնիսիոս Տելմահարցի**

Չայ-բյուզանդական զորքերի հաղթարշավն այդ պահին անելանելի իրադրության մեջ դրեց արաբներին, որոնք զբաղված էին Իրանի վերջնական հպատակեցումով: Չայ-բյուզանդական զորքերը ևս մի շարք հաջողությունների են հասնում: Նրանք նույնիսկ կարողանում են գրավել Բատնա-Սեռուզը (Բատնա-Սառուզ) (տե՛ս քարտեզ 5.2), որը գտնվում է Եդեսիայից հարավ-արևմուտք: Բատնա-Սեռուզից մեծաթիվ ավարով վերադարձող հայ-բյուզանդական բանակը հաղթականորեն էր ավարտել ոչ մեծ, սակայն կարևոր արշավանքը:

**Պատմական տեղեկանք.** «Նրանք (Պրոկոպիոսը և Թեոդորոս Ռշտունին) ավերեցին և կողոպտեցին քաղաքը (Բատնա-Սեռուզը), վերցրին ինչ որ ցանկանում էին և վերադարձան իրենց երկիրը»:

**Դիոնիսիոս Տելմահարցի**

## ԵՂԲԱՐՔ ՍԱՐԱԿԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 643Թ.

Հույն գորավար Պրոկոպիոսն իր անհեռատես քաղաքականությամբ ոչ միայն չի նպաստում ընդհանուր գործին, այլև իր դանդաղկոտությամբ վերջնականապես հակառակորդին է զիջում մեծ զոհողությունների գնով ձեռք բերված ռազմավարական նախաձեռնությունը:

Քանի որ մեծաթիվ արաբական հրոսակախմբերի դեմ չէր կարելի բաց ճակատային գործողություններ իրականացնել, Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին, իրեն բնորոշ եռանդով, սկսում է Հայաստանի ամրոցների և բերդերի ամրացումը: Որոշվում է հակառակորդի գործողությունները կաշկանդել անառիկ ամրոցների երկարատև պաշտպանություններով և անսպասելի հարվածներ հասցնել: Հաշվի է առնվում նաև այն հանգամանքը, որ ամեն տարի ձմեռնա-նուտին արաբները հարկադրված են լինելու հեռանալ Հայաստանից:

**Պատմական տեղեկանք.** «Իսմայելցիներն (արաբները) այնուհետև իրենց բանակից առանձնացնելով խոշոր մի զորամաս, հարձակվեցին Հայոց աշխարհի վրա Պարսկաստանի կողմից: Նրանք ասպատակեցին Մարաց ավանները, Գողթան գավառը և Նախիջևան դաստակերտը... Ապա զորքը երկուսի բաժանեցին, մի մասը գերիներին տարավ իրենց երկիրը, իսկ բաժանված մի զունդը ասպատակեց Արտազ գավառը և (հարձակվեց) հունական զորքի վրա, որի զորավարի անունն էր Պրոկոպիոս»:

Ղևոնդ, Հայոց պատմություն, գլ. Բ

643թ. արաբները մտնում են Արաքսի հովիտը, ասպատակում Գողթանը և Նախիջևանը: Այստեղ նրանք բաժանվում են երկու մասի: Մի մասը ռազմավարի ու գերեվարվածների հետ վերադառնում է Ատրպատական, իսկ մյուսը՝ մտնում Արտազ գավառ: Թեոդորոս Ռշտունին ցանկանում է Կոզովիտ գավառում հակահարված տալ արաբներին, սակայն Պրոկոպիոսը չի համարձակվում:


**Պատմական տեղեկանք.** «Իսկ դա (Պրոկոպիոսը) զորքի բազմության ապավինելով և ոչ՝ Աստծուն, որը հաջողություն է տալիս պատերազմներում, հայոց իշխանի խոսքերին կարևորություն չտվեց, և սա դառնացած Հայոց աշխարհի կորստյան և զորավարի անտարբերության համար չկարողացավ համբերել, այլ մտնելով՝ երկրորդում և երրորդում էր իր խոսքը: Զորավարը, բարկանալով իշխանի վրա, իր ձեռքում եղած գավազանը նետեց նրա ետևից»:

Ղևոնդ, Հայոց պատմություն, գլ. Բ

## Մարտը

Բյուզանդական զորակայանից հեռանալուց հետո Թեոդորոս Ռշտունին անմիջապես դիմում է վճռական գործողությունների: Նա իր զորագնդերով դարան է կազմակերպում Մարդուցայքից (Մարդաստան) Կոզովիտ տանող ճանապարհին Եղբարք Սարակ<sup>1</sup> կոչվող փոքրիկ լեռան մոտ, որտեղով, ըստ հետախուզության տվյալների, պետք է անցնեին արաբական զորամասերը (տե՛ս սխեմա 1).

Սխեմա 1



Եղբարք Սարակի ճակատամարտը (643թ.)


Քողարկումն այնպիսի վարպետությամբ էր իրականացվել, որ ընդհուպ մինչև գրոհի սկիզբը հակառակորդի հետախուզության համար անհայտ էին զորագնդի դիրքերը: Այսինքն՝ կիրառվում է ցերեկային հանկարծակի հարձակման մարտավարություն, որը նոր խոսք էր անկանոն ռազմարվեստում:

Արաբական զորամասերը նոր էին մտել կիրճը, երբ անսպասելի նրանց վրա է գրոհում հայկական զորագունդը: Նույնիսկ սրընթաց զորաշարժերով հպարտացող արաբական ընտիր հեծելազորը պատրաստ չէր դիմակայելու այրուծի ու փոթորկալից հարվածին: Կաթվածահար եղած արաբական զորամասերն այս ու այն կողմ էին նետվում՝ չկարողանալով դիմակայել ոչ մեծ տեղամասում հասցվող հզոր հարվածներին:

Հայկական զորախումբը, կտրելով կիրճի մուտքն ու ելքը, հակառակորդին հնարավորություն չի տալիս արագ զորաշարժերի դիմել (տե՛ս սխեմա 2).

<sup>1</sup> Եղբարք Սարակի ճշգրիտ տեղադրությունն անորոշ է:

Սխեմա 2



Եղբարք Սարակի ճակատամարտ (643թ.)

Վերախմբավորվելով՝ հակառակորդը միասնական մարտակարգ է ձևավորում, համառորեն դիմադրում այրուծիու գրոհներին, բայց հարկադրված սկսում հետ քաշվել: Նկատելով, որ մարտն աստիճանաբար հավասարազոր կողմերի բախման է վերածվում, Թեոդորոս Ռշտունին *իր առջև դրված խնդիրը կատարված է համարում* և հրաժարվում է հետապնդել կանոնավոր մարտակարգով նահանջող հակառակորդին: Հարցն այն էր, որ դեպի բաց տարածք նահանջող արաբներն այնտեղ կարող էին հակադրոհել հետապնդման ուղարկված զորամասերի վրա:

Արշավանքի ընթացքում արաբները հարուստ ռազմավար էին ձեռք գցել, և հաղթանակած հայկական զորագունդը, արաբներից ռազմավարի զգալի մասը խլելով, հեռանում է դեպի Գառնի:

Այսպիսով, Եղբարք Սարակի ճակատամարտում Թեոդորոս Ռշտունին իրականացրեց հազվադեպ կիրառվող՝ մեծաթիվ ուժերով դարանակալումը, որն, անշուշտ, վկայում է նրա զորավարական տաղանդի մասին: Դժվար է ասել, թե ինչ ընթացք կստանար պատերազմը, եթե բյուզանդական զորավար Պրոկոպիոսը Եղբարք Սարակի ճակատամարտում հայկական զորագնդին միայնակ չթողներ: Այդուհանդերձ, ստեղծված իրավիճակում այս հաղթանակն այն առավելագույնն էր, որին ի վիճակի էր հասնել առանց դաշնակցի մնացած հայկական կողմը:

## ՎԱՐԴԱՆԱԿԵՐՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ. 703Թ. ՓԵՏՐՎԱՐ

### ՀԱՅՈՉՆՆԻ ՍԱՌՉԱՋԱՐԴԸ

Հայաստանը VII դարի 60-ական թթ. փաստացի անկախություն է ձեռք բերում, որը պահպանում է մինչև դարավերջը: Արաբական խալիֆայությունը Հայաստանը կարողանում է նվաճել 701թ. իրականացված մեծ արշավանքով: Հարավից Հայաստան ներխուժած արաբական բանակը հանդիպում է Մուքբ նահանգի լեռնային ամրոցներում ապաստանած հայկական զորախմբերի համառ դիմադրությանը: Չկարողանալով նվաճել ամրությունները՝ արաբները բարեկամական խոստումներով խաբում են պաշարվածներին, ցած իջեցնում նրանց, որից հետո մի մասին կոտորում, իսկ մեծ մասին գերում են: Ուխտադրությամբ և նվաճումներին հաջորդող վայրագություններով արաբները շուտով նվաճում են Հայաստանը, Վիրքը, Աղվանքը և Մերձկասպյան շրջաններն ու վերածում մեկ՝ Արմինիա անվանվող նահանգի:

Նորաստեղծ վարչական միավորի առաջին կառավարիչ (ոստիկան) Աբդուլահը հարկային ճնշումներ և կրոնական հալածանքներ է սկսում, ինչպես նաև մեր նախարարական տոհմերը ոչնչացնելու դաժան ծրագիր մշակում: Արաբ ոստիկանի խարդախ դիտավորությունները հայտնի են դառնում հայերին: Այդ ժամանակ սպարապետ Սմբատ Բագրատունու ղեկավարությամբ նախարարները գաղտնի խորհրդակցությունում քննում են արաբների դավերից խուսափելու միջոցները և որոշում են հեռանալ երկրից ու ապաստանել Բյուզանդիայի կողմերում: Խորհրդակցությունից հետո Վասպուրականի նախարարներից մի քանիսը մեկնում են իրենց տեղերը, իսկ Սմբատ սպարապետն իր 2 հազար հեծյալներով ուղևորվում է դեպի Ակոռի ավանը: Հայկական զորախմբի տեղաշարժն աննկատ չի մնում արաբներից: Աբդուլահը Նախիջևանում գտնվող ավելի քան 5 հազարանոց (որոշ տվյալներով՝ մոտ 8 հազարանոց) կայազորի գլուխն անցած՝ հետապնդում է սկսում (տե՛ս սխեման):

### Սառցաշարդը

Տեղեկանալով արաբների կազմակերպած հետապնդման մասին՝ Սմբատ Բագրատունին արագացնում է ռազմերթն ու, գետանցելով Արաքսը, ճամբար դնում Վարդանակերտ ավանում: Դիրքերն ամրացնելու հետ մեկտեղ սպարապետը պատգամավոր է ուղարկում Աբդուլահի մոտ՝ հանդգելու, որ չհետապնդեն հայկական զորախմբին: Նույնիսկ Բյուզանդիա անցնելու պայմանով

արաբները չէին հանդուրժում հայկական կազմակերպված ուժի տեղաշարժի հնարավորությունը:

702/703թթ. ցրտաշունչ ձմեռվա պայմաններում արաբները հարկադրված էին ճակատամարտի նախորդ գիշերը դրսում մնալ, մինչդեռ հայկական կողմը հիմնականում (Վարդանակերտի մատույցներում դրված պահակակետերի զինվորներից բացի) տեղաբաշխվում է գյուղում:


Լուսադեմին, *Նախապատրաստական աշխատանքներ կատարելով*, Սմբատ Բագրատունին վաղ առավոտյան հարձակում է սկսում արաբների վրա (տե՛ս սխեման):

Փոքրաթիվ հակառակորդից այսպիսի հանդուգն քայլի չսպասող արաբները նույնիսկ մարտակարգ շարել չեն հասցնում և, սրընթաց գրոհը կասեցնել չկարողանալով, կարճատև անկանոն դիմադրությունից հետո նահանջում են դեպի Երասխը (Արաքսը): Սկսված խուճապը և հայերի հետապնդումն արաբներին հնարավորություն չեն տալիս Արաքսի սառույցների վրայով կազմակերպված անցնել գետի մյուս ափը: Հախուռն գետանցում սկսած արաբական զորամասերի ծանրության տակ սառույցը ջարդվում է, և նրանց զինվորների մեծ մասը ջրախեղդ է լինում:

**Պատմական տեղեկանք.**

«Հայոց զորքերը, անրացնելով ավանի փողոցները, պահապաններ կարգեցին մինչև առավոտը լուսանալը և իրենք ամբողջ գիշերը աղոթքի հսկումի մեջ էին... Արևածագին թեթև կերակրելով՝ իրենց մարմինները զորացրին և անմիջապես վեր կենալով՝ հարդարեցին գունդ առ գունդ և ճակատ առ ճակատ ու պատերազմն սկսվեց... Ովքեր սրից ազատվեցին՝ ընկան Երասխ գետը, որն օդի խստությունից սառել էր, և երբ զորքի բազմությունը ելավ սառույցի վրա, սառույցը անմիջապես ջարդվեց, խորասույգ խեղդվեցին բոլոր սրից փախածները և հեղձամահ եղան»:

**Ղևոնդ, Պատմություն, գլ. Ը**



Վարդանակերտի ճակատամարտը 703թ.

Գետը հասցնում է անցնել ընդամենը 300 հոգի, որոնց հետապնդման ուղարկված Աշոտի որդի Սմբատն իր զորքով փակում է նրանց ճանապարհը: Արաքներն ապաստան են խնդրում հայ իշխանուհի Շուշան Կամսարականից, որն աղերսանքով դիմում է հայ զորավարին ու խնդրում չկոտորել նրանց: Իշխանուհին վեհանձնորեն կապել է տալիս թշնամի վիրավորների վերքերը, նույնիսկ գրաստ տրամադրում վիրավորների համար և ուղարկում խալիֆա Աբդալ-Մալիքի մոտ:

### ***Եզրակացություն***

Վարդանակերտի ճակատամարտն արաքների նկատմամբ տարած տպավորիչ *հաղթանակներից* մեկն է: Այն ռազմական խորամանկության ուսանելի օրինակ է, ունի մարտի ուշագրավ մտահղացում, որը սպարապետն անբողջությամբ կարողացել է իրականացնել:

Վարդանակերտում ձեռք բերված փայլուն հաղթանակից հետո Սմբատ Բագրատունին անցնում է Տայք, այնուհետև Վանանդ, միանում Կամսարականների ուժերին և շարունակում պայքարն արաք նվաճողների դեմ:

## **ՉԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐ ԱՐԱՐԱԿԱՆ ԽԱՆԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ (774Թ.)**

750թ. խալիֆայությունում տեղի ունեցած հեղաշրջումով Օմայանների հարստությունը դադարում է գոյություն ունենալ, և նրա փոխարեն պատմության ասպարեզ է իջնում Աբասյանների (750-1258թթ.) խալիֆայությունը, որը համամահմեդական պետություն էր: Այն Օմայան խալիֆայությունից ավելի բարձր մակարդակի վրա գտնվող պետական կազմակերպություն էր, իսկ նահանգների շահագործումն ու քաղաքական ճնշումն ավելի կազմակերպված, նեղ միջոցներով էին իրականացվում: Աբու Ջաֆար ալ-Մանսուր խալիֆան (754-775թթ.) մայրաքաղաքը Դամասկոսից տեղափոխում է Բաղդադ, որի բարեկարգման համար ծախսվող գումարները նոր բեռ են դառնում հսկայածավալ տերության հպատակ ժողովուրդների համար:

760-ական թթ. հարկերն այնքան էին ծանրացել, որ Չայոց իշխան Սահակ Բագրատունին (752-770թթ.) և Տրդատ կաթողիկոսը քանիցս բողոքում են Մանսուր խալիֆային, սակայն իրադրությունը չի փոխվում: Թերևս, այդ էր պատճառը, որ հայ նախարարների մեծ մասը միանում է 773թ. սկսվող շարժմանը:

Ձինված ելույթը սկսում է Չմայակ Մամիկոնյանի որդի Արտավազդը: Նա դիմում է վտանգավոր քայլի. իր մարտիկների հետ ներկայանում է Դվինում հաստատված Չասան իբն-Քահթաբա ոստիկանին և խալիֆայության թշնամիների դեմ պայքարելու պատճառաբանությամբ սպառազինություն խնդրում նրանից:

Ձինելով իր մարտիկներին՝ Արտավազդը շարժվում է դեպի Կումայրի, որտեղ հանդիպում է արաբ հարկահաններին և նրանց պաշտպանող զինված ստորաբաժանմանը (տե՛ս քարտեզ 5.2): Սրընթաց գրոհով Արտավազդի մարտիկներն արաբներից խլում են նրանց վերցրած հարկերն ու հեռանում հյուսիս-արևմուտք: Դվինից իրենց հետապնդելու ուղարկված արաբական կայազորից խույս տալով՝ նա հեռանում է Բյուզանդիա: Որոշ ժամանակ անց այնտեղ Արտավազդ Մամիկոնյանը նշանակվում է Փոքր Ասիայում «Անատոլիկոն» բանակաթեմի ստրատեգ, այսինքն՝ զորավար:

## ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ (774Թ.)

Արտավազդ Մամիկոնյանի գործնասին հետապնդելու ուղարկված հեծելազորի անհաջողությանն ի պատասխան՝ Հասան իբն-Քահթաբայի հրամանով հարկերն ավելացվում են: Ընդ որում, բնակչությանը սարսափեցնելու նպատակով հարկահավաքությունն ուղեկցվում էր բռնություններով, որը նորանոր հուզումների պատճառ է դառնում: Շարժումն առաջնորդում է եռանդուն ռազմական գործիչ Մուշեղ Մամիկոնյանը:

Առաջին քայլն արվում է Տարոնում: Արաբ պաշտոնյաներն արյան հատուցում էին պահանջում Արտավազդի ձեռքով սպանված արաբների համար: Մուշեղն իր տրամադրության տակ ունեցած փոքրաթիվ ջոկատով հարձակվում է նրանց վրա, «խողխողում ու սրի մատնում», ապա ընտանիքի հետ միասին հաստատվում Արտազերս անառիկ ամրոցում: Այստեղից Մուշեղ Մամիկոնյանի ջոկատը համարձակ և հանդուգն գրոհներով կաթվածահար է անում Հայաստանում արաբների հարկահանության ամբողջ ծառայությունը: Նրա գրոհներից մեկի զոհն է դառնում Բագրևանդ գավառ ուղարկված հարկահանը՝ Աբու Մջուրը (Ապու Մճուր):

**Պատմական տեղեկանք.** «Այսպիսով (Մուշեղ Մամիկոնյանը) միառժամանակ դադարեցրեց հարկի պահանջումը մեր երկրից: Երբ (գործն) այսպիսի ընթացք ունեցավ, նրա մոտ հավաքվեցին բոլոր վշտացյալները ու հոգով տառապածները»:

Ղևոնդ, Հայոց պատմություն, գլ. ԼԴ

Ապստամբներին ճնշելու համար Կարինից դեպի Բագրևանդ է շարժվում արաբական հարկահանների մի զորամաս: Միևնույն ժամանակ, հայկական զորամասերը տեղեկանում են իրենց դեմ հանդես գալու համար Դվինում նախապատրաստվող հեծելազորի մասին:


Կարինից դուրս եկած արաբները գիշերակացի համար տեղաբաշխվում են Խարս գյուղի այգիներում, որը մարտավարական կոպիտ սխալ էր: Հարցն այն է, որ եթե արաբներին անգամ հաջողվեր զինվել և հեծնել իրենցից բավական հեռու գտնվող ձիերին, ապա, միևնույն է, բերքատու (հիմնականում ոչ բարձր) ծառերի ճյուղերը նրանց թույլ չէին տալու ազատ գործել, ու հեծելազորը չէր ունենա մարտավարական այն առավելությունները, որն ունենում է բաց դաշտում ճակատամարտելիս:

### Ճակատամարտը

Այգիների ցանկապատերի վրա Մուշեղ Մամիկոնյանի ուշադրությունն առանձնակի է սևեռվում: Հարցն այն է, որ քարերը շարված էին առանց շաղախի: Հնարամիտ զորավարը կռահում է, որ դրանք հնարավոր կլինի հեշտությամբ քանդել, իսկ քանի որ արաբները դրանց մոտ՝ որոշակի տեղերում էին կենտրոնացրել ձիերին, ապա որոշվում է, որ նպատակահարմար կլինի այդ տեղերից սկսել գրոհը (տե՛ս սխեման):

Հարձակումը սկսվում է՝ նախօրոք առանձնացված մարտիկների ուժերով այգիների քարե ցանկապատերը քանդելով: Քարերը դղրոյունով թափվում են և դիպչելով արաբների ձիերին՝ խրտնեցնում նրանց: Ձիերը ոտնատակ են անում աղմուկից արթնացած, սակայն մթության մեջ կողմնորոշվել չկարողացող արաբ զինվորներին: Նրանց մի մասը զոհվում է ձիերի սմբակների տակ՝ դռնա նախքան մարտի սկսվելը: Բացված անցումներով մի քանի կողմերից ներս խուժող ապստամբներին ընդամենը մնում էր հաղթական ավարտին հասցնել արաբական զորագնդի ջախջախումը:

Այսպիսով, Խարս գյուղի այգիներում արաբական զորամասի ջախջախումը Մուշեղ Մամիկոնյանի մարտավարական տաղանդի վկայությունն է: Այն ռազմական խորամանկության եզակի օրինակ է և հատուկ պայմաններում մարտի վարման ուշագրավ հնարքներ է պարունակում: Հարուստ ռազմավարով իր շուրջը հավաքված ապստամբներին զինելով՝ Մուշեղ զորավարը հաղթական վերադառնում է Արտագերս:



Խարսի ճակատամարտը 774թ.

## ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ 849-855ԹԹ. ԱՂԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

IX դարում Աբասյանների խալիֆայությունը սկսել էր քայքայվել: Միայն Յարուն ալ-Ռաշիդ խալիֆայի օրոք (786-809թթ.) Արմինիայում մեկ ու կես տասնյակից ավելի կառավարիչ է փոխվել: Արաբ պատմիչ Բալաձարիի խոսքերով. «*Դրանցից հետո Արմինիան սկսեցին կառավարել այնպիսի անձինք, որոնք գիջողաբար էին վերաբերվում նրա բնակիչներին և բավարարվում էին ամենաաննշան (չափի) հարկերով*»: Այսպես շարունակվում է մինչև 840-ական թթ. վերջերը: Ջաֆար ալ-Մութավաքիլ խալիֆան (847-861թթ.) իր գահակալության առաջին տարիներին, լարելով բոլոր ուժերը, փորձում է հպատակ երկրներում վերականգնել թուլացած իշխանության երբեմնի հզորությունը:

Ավելացված հարկերը հավաքելու հանձնարարականով 849թ. մեծաթիվ զորքով Յայաստան է ուղարկվում Աբուսեթ զորապետը: Յայաստանի իշխանաց իշխան Բագարատ Բագրատունին պատգամավորություն է ուղարկում արաբ զորավարին ընդառաջ: Բանակցությունները տեղի են ունենում սահմանագլխին: Յայկական կողմը խոստանում է վճարել պահանջվող հարկերը՝ պայմանով, որ արաբներն անմիջապես հեռանան Յայաստանի սահմանից: Յայ նախարարների համախմբվածությունից վախենալով՝ Աբուսեթը վերցնում է հարկերը և վերադառնում Բաղդադ, սակայն նախքան վերադառնալը՝ խորամանկորեն Յայաստանում է թողնում զորքի հիմնական մասը, որը նա հանձնել էր հարկերի վերակացու Ալա-Սավաֆիին (Ալա-Օովափի): Վերջինիս հանձնարարվում է ասպատակել Վասպուրականը, իսկ Աղձնիքը զավթած Մուսա իբն-Ջուրարիին (որը գլխավորելու էր հարկերի վերակացությունը)՝ հարկեր հավաքելու համար ուղևորվել Տարոն:

Ալա-Սավաֆիի զորախմբերի հարկահանությունն ավելի շուտ նման էր զանգվածային կողոպուտի և բնակչության ահաբեկման գործողության: Վասպուրականի գահերեց իշխան Աշոտ Արծրունին նամակով դիմում է արաբ զորավարին, որպեսզի նա սպասի, մինչև ինքը հավաքի պահանջված հարկերն ու հանձնի նրան: Սակայն արաբ զորավարը չի բարեհաճում պատասխանել նամակին, և շարունակում է ասպատակել երկրամասը: Այգաբացին Արճունճի մոտ հասցված սրընթաց թևային հարվածներով Աշոտ Արծրունին պարտության է մատնում գոռոզամիտ հարկահանին: Այնքան մեծ էր հակառակորդին ջախջախելու գործում աչքի ընկնելու ձգտումը, որ պատմիչը ճակատամարտում աչքի ընկածների մեջ նշում է նույնիսկ ոչ թե Աշոտ Արծրունուն, այլ նրա եղբորը՝ Գուրգենին և Վահան Յավնունուն:

# **ՄՈՒՇԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 851Թ.**

## **ԱՌԱՆՁԻՆ ՄՈՏԵՆԱԼ, ԲԱՅՅ՝ ՄԻԱՍԻՆ` ԿՈՎԵԼ**

Նախքան Տարոնում ռազմական գործողությունները սկսելը` Բագարատ Բագրատունին օգնության է կանչում քեռորդուն` Աշոտ Արծրունուն: Վերջինս անմիջապես համաձայնում է:

**Պատմական տեղեկանք.** «Երբ Հայոց իշխանը տեսավ, որ արաբների զորքը գալիս է պատրաստությամբ, իսկ իրենք սակավաթիվ են, փութապես աղերսագիր ուղարկեց քաջարի Աշոտ իշխանին, որպեսզի, եթե հնար լինի, անձամբ զորքով ու զենքով արագ օգնության հասնի իրեն...»: **Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Բ, գլ. 2**


Նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո որոշվում է վճռական ճակատամարտ տալ, սակայն այս ընթացքում արաբական բանակը հասցնում է մոտենալ և բանակ դնել Բագարատ իշխանի ձմեռանոցի` Մուշի մոտակայքում: Իշխանաց իշխանի ենթակայության տակ գտնվող ուժերի և օգնության շտապող Արծրունյաց զորամասերի հաղորդակցության ուղիները վտանգվում են: Այդ ժամանակ Բագարատ Բագրատունին ընդունում է համարձակ, բայց իրատեսական որոշում. հակառակորդի վրա գրոհել այն ժամանակ, երբ Վասպուրականից օգնության եկող ուժերը մարտադաշտին բավական մոտ կլինեն, սակայն դեռևս տեղ հասած չեն լինի:

### **Ճակատամարտը**

Բագարատ Բագրատունին մարտը սկսում է այրուծիու զորամասերի սրընթաց գրոհով (տե՛ս սխեմա 1): Մուսան մարտական գործողությունների համար պատրաստ պահվող զորամասերը հասցնում է շարել մարտակարգով: Օգտագործելով իրենց քանակական գերազանցությունը` արաբները կարողանում են կասեցնել հայկական զորամասերի գրոհը:

Առաջին հաջողությունից ոգևորված Մուսան իր ամբողջ պահեստազորը նետում է հակագրոհի և աջ (համապատասխանաբար, արաբների` ձախ) թևում որոշ հաջողության հասնում (տե՛ս սխեմա 1): Արաբ զորավարը, թերևս, իրեն արդեն հաղթող էր համարում, երբ նրա մարտակարգի աջ թևի հեծելազորի թիկունքում հայտնվում են Աշոտ Արծրունու առաջապահ զորամասերը, իսկ ընդամենը մի քանի րոպե անց` Վասպուրականի ամբողջ զորքը:

Սխեմա 1



Մուշի ճակատամարտ 851թ.

**Պատմական տեղեկանք.** «Հանդուզն հարձակմամբ դիմեցին այլազգիների վրա, մինյանց ընդհարվեցին և յուրաքանչյուր այր գետին գլորեց իր ախոյանին... Բոլորին սրի ճարակ դարձրին: Խիզախեցին, որպես կտրիճներ, ծայնեցին ինչպես արծիվներ ու առյուծի կորյուններ և վրա հասան ու պատահուտեցին որսը»:


**Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Բ, գլ. 2**

Աշոտ Արծրունու զորամասերի վճռական գրոհով նախ ջախջախվում է արաբական բանակի աջ թևը, որը շարունակվող մարտի ընթացքում այդպես էլ չի կարողանում թևային հարվածին դիմակայելու համար վերախմբավորվել (տե՛ս սխեմա 2):

Քանի որ կենտրոնում՝ Բագարատ Բագրատունու անմիջական հրամանատարությամբ գործող զորաթևի պաշտպանությունը համեմատաբար կայուն էր, Աշոտ իշխանն իր երկրորդ հարվածն ուղղում է ոչ թե արաբների մարտակարգի կենտրոնին, այլ օգնության է շտապում ծանր դրության մեջ ընկած հայոց աջ թևին (տե՛ս սխեմա 3):


Կարճատև դիմադրությունից հետո արաբական բանակի ձախ թևը ևս երերում է: Խուճապը տարածվում է նրանց կենտրոնի զորամասերում, որոնք սկսում են անկանոն նահանջել դեպի մարտադաշտի եզրի անտառը: Բնականաբար, անտառում մարտակարգը վերականգնել չի հաջողվում, և արաբների նահանջը շարունակվում է մինչև Բաղեշ: Նրանք պատսպարվում են ամրոցի հաստ պատերի հետևում:

Սխեմա 2



Մուշի ճակատամարտ 851թ.

Սխեմա 3



Մուշի ճակատամարտ 851թ.

## Եզրակացություն

Մուշի ճակատամարտում հայկական զորքը տարավ արաբական տիրապետության դեմ երկդարյա պայքարի ամենամեծ հաղթանակներից մեկը: Միևնույն ժամանակ, այս մարտը ռազմարվեստի *կատարելագործման* հաջողությամբ պսակված փորձ է: Իսկ համաշխարհային ռազմարվեստում առաջին անգամ «ԱՌԱՆՁԻՆ ՄՈՏԵՆԱԼ, ՄԻԱՍԻՆ՝ ԿՌՎԵԼ» սկզբունքի կիրառումն այնպիսի խնդրի առջև է կանգնեցնում հակառակորդի բանակի հրամանատարին, որի լուծումը նա չէր կարողանալու գտնել:

## Արյան լիճ ճակատամարտը 852թ.

Հայաստան ուղարկվելու համար նախատեսված զորաբանակի հրամանատար է նշանակվում թուրք վարձկանների հրամանատար Բուղա ալ-Շարաբին, որի ընտրությունը պատահական չէր: Բուղան աչքի էր ընկնում *դաժանությամբ*, որի համար էլ ստացել էր իր մականունը (Բուղա՝ թարգմանաբար նշանակում է ցուլ): Նրան տվել էին հսկայական զորք և հանձնարարել ապստամբությունը ճնշել հնարավորինս անողորմ ձևերով:

852թ. ամռանը Բուղայի բանակը ներխուժում է Հայաստան: Գործի դնելով իր խորամանկությունների ամբողջ զինանոցը՝ Բուղան Աղբակում ձերբակալում է Բագարատ Բագրատունուց հետո ազատագրական շարժման փաստացի ղեկավար դարձած Աշոտ Արծրունուն, որի փոխարեն պայքարը գլխավորում է կրտսեր եղբայրը՝ Արճունճի ճակատամարտի հերոս Գուրգենը: Նա կարողանում է իր շուրջը համախմբել Գնունի, Գագրիկյան, Ամատունի, Վարաժունի, Ընտրունի, Ակեացի, Վահևունի և Անձևացի նախարարությունների 900 մարտիկներից բաղկացած ուժերը: Այս ուժերով Գուրգեն Արծրունին ամրանում է Կորճայք աշխարհի Որսիրանք գավառի Թվա (Թով) գյուղի մոտակա լեռներում, որից ներքև տարածվում էր Արյան լիճ դաշտավայրը (տե՛ս քարտեզ 5.2):

**Պատմական տեղեկանք.** «Բանակեցին Թով գյուղի հետևում, լեռան վրա, նրա հետևում, որ կոչվում է Արյան լիճ, քանզի այնտեղ կա մի մեծ լիճ, մոտիկ այն տեղին, որը Վասպուրականի մեր քաջ իշխանների զորքի արիությունների ու ճակատամարտերի ասպարեզն էր: Այստեղ էր հավաքվել գաղթականների մեծաթիվ բազմություն՝ Աղբակ, Ջարեհավան և Ակե գավառներից, Աղզո լեռնակողմերից, Առնո ոտնից, Ջողա լեռան և ավելի այն կողմերից: Անհուն բազմությունը պատել էր լեռան շուրջը, ինչպես մարախը և ծովի ավազն անթիվ: Ապավինել էին քաջ զորավար Գուրգենին և նրա հետ եղած հայոց զորքին, իբրև մեծ ու ապահով ամրոցի»:

**Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Գ, գլ. Ա**

852թ. ամռան տապի պայմաններում բարդ իրավիճակում հայտնված Գուրգենը որոշում է օգտագործել տեղանքը: Նա ուժերը տեղաբաշխում է այնպիսի վայրում, որի ամեն մի քարն ու թուփը ծանոթ էր ինչպես իրեն, այնպես էլ իր մարտիկների մեծ մասին: Հավանաբար, Մուշեղ Արծրունու գլխավորությամբ գործող ձախ թևում միայն հետևակային ստորաբաժանումներ էին: Աջ թևում կենտրոնացվել էր հեծելազորը՝ Ապունկղեմ Արծրունու գլխավորությամբ: Նկատի ունենալով, որ ձախ թևը թույլ է և հավանական համարելով, որ հակառակորդը հակագրոհներն այս թևում կձեռնարկի, հետևակայիններին ոգևորելու համար Գուրգենը դիրք է զբաղեցնում իր շարած մարտակարգի ձախ թևում:

**Պատմական տեղեկանք.** «Ապա յուրաքանչյուր զորական համարձակորեն դիմեց գենքի և հեծնելով ընտիր երիվարներ, մոտեցան իրար, շարվեցին միևնույն տեղում, իրար կպան, ձուլվեցին, ինչպես մեկ մարդ, քարացան ու կարծրացան, ինչպես բլրածն վեճը և դարձան երկաթի զորությանն անմատչելի: Եվ ինչպես ադամանդե պարիսպ, իրենց անձերը տվեցին գաղթականների մեծաթիվ բազմության համար, իբրև քաջ հովիվ, հանձն առան մեռնել հոտի համար»:

**Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Գ, գլ. Դ**

Բարձունքից հակառակորդի վրա գրոհելով՝ հայ զինվորները մինչև ուշ երեկո խիզախորեն ջարդ են տալիս արաբներին, որոնց բոլոր հակագրոհներն ապարդյուն էին: Ճակատամարտի հաջող ընտրված վայրը, ճիշտ սկզբունքով շարված մարտակարգը և հայրենիքն օտար տիրապետությունից ազատելու համար պայքարի ելած մարտիկների հաստատակամությունը տալիս են սպասված արդյունքը:

### **Եզրակացություն**

Արյան լճի մոտ տեղի ունեցած ճակատամարտը հայ ժողովրդի 849-855թթ. ազատագրական պայքարի ընթացքում տարած փառավոր դրվագներից է: Այն ևս մեկ անգամ վկայեց, որ նույնիսկ փոքրաթիվ ուժերը հնարամտորեն օգտագործելով՝ կարելի է հասնել բարձր արդյունքների:

## ՔՐԻՇ ԱՄՐՈՑԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 854Թ.

Արյան լճի ճակատամարտում կրած պարտությունից հետո էլ Հայաստանում գտնվող արաբական զորքերը, քանակապես գերազանցելով ապստամբների ուժերին, շարունակում էին ասպատակությունները: Արաբները շարժվում են հյուսիս, իսկ 853թ. կեսերին անցնում Վրաստան ու գրավում Տփղիսը (տե՛ս քարտեզ 5.2):

853թ. ամռան վերջերին Բուղան զորքը շարժում է դեպի հյուսիս՝ Կովկասյան նախալեռների շրջանում բնակվող ցեղերի՝ ծանարների դեմ: Կովկասի լեռնականները միավորվում և համառ դիմակայության ընթացքում ծանր պարտության են մատնում Բուղայի հրոսակախմբերին: Այս արշավանքից ևս գլխիկոր վերադարձող զորապետը որոշում է ասպատակել Արցախը, որտեղ պայքարը գլխավորում էր զորավար Եսայի Ապունուսեն: Հիմնական իրադարձությունները ծավալվում են Քթիշ (Գտիշ) ամրոցում:

Նախքան Քթիշի գրավմանն անցնելն արաբները կարգի են բերում իրենց զորամասերը՝ համալրման միջոցով յուրաքանչյուր զորամասի քանակը հասցնելով հինգ հարյուրի: Սակայն դա էլ չի օգնում: Հայ զորականները ոչ միայն կասեցնում են նրանց գրոհը, այլև դուրս գալով ամրոցից՝ գրոհում արաբների վրա և հետապնդում մինչև լեռան ստորոտը:


**Պատմական տեղեկանք.** «Ելան մարտի և պատերազմեցին. ըստ որում՝ սաստկացավ կռիվը, հախուռն հարձակմամբ դիմեցին միմյանց վրա: Արքունի զորքը ջարդվեց մեծամեծ հարվածներից, փախան իրենց բանակը և մտան այն տները, որ շինել էին: Իսկ Ապունուսեի լեռնային զորքը հետամտեց փախստականներին, իջեցրեց լեռան վրայից և վերադարձավ սպանվածների իրերը վերցնելու: Ապա գնացին իրենց բանակատեղը մեծ հաղթության, ուրախանալով անտրտում խնդությամբ»:

**Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Գ, գլ. Ժ**

### «Վճռական» գրոհը

Հերթական անհաջողությունից հետո արաբները որոշում են նոր գրոհը ձեռնարկել միայն բոլոր ուժերը միավորելուց հետո: Հատկանշական է, որ հավանական համարելով հայկական ուժերի համարձակ հակազորոհները՝ արաբները նախօրոք հազար հոգանոց հեծյալ զորամաս են սպառազինում և տեղաբաշխում մարտակարգի պահեստազորում: Հեծյալ զորամասին խնդիր էր դրվում պատրաստ լինել հակահարվածելու արցախցիների՝ հակազորոհի անցած ուժերի թևին:

Ուժերն ի մի բերելուց հետո Բուղան սկսում է վճռական գրոհը (տե՛ս սխեման).



Քթիչի արտագրոհի 853-854թթ.

Առավոտյան արաբները սկսում են հարձակվումը: Բարձունքին ամրացած հայ զինյալները համառորեն դիմադրում են ու հասնում իրենց նպատակին. արաբների գրոհը սկսում է խեղդվել: Նկատելով, որ հակառակորդը մտադիր է նահանջել, Եսային վերախմբավորում է ուժերը և, հակառակորդին ուշքի գալ չթողնելով՝ հարմար պահը ձեռքից բաց չթողնելու համար, որոշում հակազրոհի անցնել:

**Պատմական տեղեկանք.** «Մնացին անշարժ, առաջ չընկան մեկ մեկուց: Եվ մինչ (արաբները) կարծում էին, թե մատնվեցին իրենց ձեռքը, սակայն նրանք աղոթում էին և Աստծուն կանչում իրենց օգնության: Ապա դիմեցին նրանց (արաբների) վրա՝ չորս մասով՝ Քրիստոսի խաչի նմանությամբ: Հարվածեցին ճակատից, ճեղքեցին մարտաշարքերը և նրանց դարձրին դեպի գառիվայր, իջեցրին լեռան վրայից: (Թշնամին) կրեց մեծամեծ հարվածներ, ինչպես քամուց հարդն է քշվում, կամ ծուխը՝ մրրիկից, և այդպես կորան գնացին...»:

**Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Գ, գլ. Ժ**

Ուշագրավ է, որ փոքր ուժերով իրականացվող հակազրոհին մեծ թափ հաղորդելու համար Եսային զորամասերը շարում է սեպածն: Ավելին, հակառակորդի հակազրոհներ ակնկալելով՝ ընտրվում է մեծաթիվ պահեստազոր, որը տեղաբաշխվում է շարասյունաձև (նախամարտական կարգով) կենտրոնի զորաթևի թիկունքում (տե՛ս սխեման):

Գրոհի ենթարկված արաբական զորամասերը սկսում են նահանջել դեպի զառիթափը: Օգնություն ստանալու հնարավորությունից զրկված լինելով՝ նրանք խուճապի են մատնվում և փախչում:

Այս հաղթանակը հսկայական նշանակություն է ունենում Քթիչի պաշտպաններին ոգևորելու գործում, իսկ արաբական զորքի բարոյահոգեբանական վիճակն այնքան է վատանում, որ ձեռնարկվող նորանոր հարձակումներն ավարտվում են խայտառակ պարտություններով: Սակայն չնայած անհաջողություններին՝ կատաղած Բուղան, հաշվի չնստելով մեծաթիվ կորուստների հետ, չի դադարեցնում ամրոցի գրոհները: Ամրոցը գրավել ձգտող անհաջողակ զորապետի արտասովոր համառությունը և նրա ապարդյուն ջանքերին դիմակայող հայորդիների էլ ավելի համառ պաշտպանությունը եզակի են միջնադարի համաշխարհային ռազմարվեստի պատմության մեջ: Բավական է նշել, որ *մեկ ամբողջ տարի* շարունակվող պաշարման ընթացքում արաբները Քթիչի դեմ ձեռնարկում են *քսանութ գրոհ*, բայց ամեն անգամ ջախջախվում ու մեծ կորուստներ կրելով հետ են շարտվում:

**Պատմական տեղեկանք.** «Սրանց պատերազմը երկարեց մոտ մեկ տարի, և ոչ մի ճակատամարտում Ապունուսեն երեսը չդարձրեց Բուղայից: Եվ ինչպես պատմվում է, նրանց պատերազմների թիվը հասավ 28-ի, և արքունի զորքը ջարդվեց այսքան կռիվներ մղելուց»:

**Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Ղպր. Գ, գլ. Ժ**


Ստեղծվում է փակուղային իրավիճակ. Բուղան ևս համոզվում է իր մտադրությունների անիրականանալիության մեջ: Իր անունը վերջնականապես չվարկաբեկելու համար նա Եսայի Ապունուսեին առաջարկում է դիմադրությունը դադարեցնել և բանակցել: Հայ իշխանը հայտարարում է, որ դիմադրությունը կդադարեցնի միայն խալիֆայության արքունիքից գրավոր հավաստիացումների դեպքում: Այլ ելք չունենալով՝ Բուղան ընդունում է հայ իշխանի պայմաններն ու միջնորդության խնդրանքով դիմում արքունիք:

Այսպիսով, հայ ժողովրդի համար դժվարին իրադրությունում Արցախ աշխարհի քաջերն առանց վարանելու վերցնում են Տարոնում սկսված և Վասպուրականում շարունակված ապստամբության դրոշը: Նրանց հերոսական մաքառումների հետևանքով՝ արքունիքի հրամանը չկատարած վարձկան թուրք զորավարը 855թ. Հայաստանից հետ է կանչվում:

ՊԵՆՏՈՆ VI

**ԱԿՆԱՐԿՆԵՐ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱԾ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՉ**

IX-XI դարերի ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ


## Իրադրությունը տարածաշրջանում Բագրատունիների հզորացման փուլում

850-ական թթ. կեսերին քաղաքական ասպարեզ ելած Աշոտ Բագրատունու օրոք Հայաստանը դանդաղ, բայց *հաստատուն քայլերով* ընթանում էր անկախության վերականգնման ճանապարհով: Նախ, 859թ. Հայաստանի ոստիկան նշանակված Ալի իբն-Յահյա ալ-Արմանիի միջնորդությամբ Աշոտ իշխանը, որը երկրի սպարապետն էր, խալիֆայի կողմից Հայաստանի, Վիրքի և Աղվանքի իշխանաց իշխան է ճանաչվում, ապա ստանում ամբողջ նահանգի հարկահանությունը (862թ.): Այդ ընթացքում (874թ.) հայ իշխաններին հաջողվում է Հայաստանից վտարել վերջին արաբ ոստիկանին: Դրան հաջորդած տասնամյակը՝ ձեռք բերված անկախության, այսինքն՝ արդեն իսկ գոյություն ունեցող Հայոց պետության համընդհանուր ճանաչման շրջանն էր: Պետականության միջնադարյան «խորհրդանիշներից» պակասում էր միայն թագը, որն էլ 885թ. օգոստոսի 26-ին Հայոց կաթողիկոս Գևորգ Բ Գառնեցու հոգևոր օրհնությամբ դրվում է Աշոտ Բագրատունու գլխին: Թագադրումը տեղի է ունենում Արշարունիք գավառի Բագարան բերդաքաղաքում, որը դառնում է վերականգնված պետության առաջին թագավորանիստը:

Իշխանաց իշխանն ընդամենը մի քանի տարում 40 հազարանոց կանոնավոր բանակ է ստեղծում: Ավելի քան մեկ և կես դար արաբական տիրապետության տակ գտնվող երկրի համար բանակաշինության նման ցուցանիշներն ինքնին խոսում են: Հայոց բանակի առաջին սպարապետ է նշանակվում Աշոտ Բագրատունու եղբայր Աբասը:

**Պատմական տեղեկանք.** «(Աշոտ Բագրատունին) բոլորի հետ հաստատել էր սերտ սեր: Թշնամիների դեմ հակառակություն կամ կռիվ չէր մղում, այլ բարի խոսքերի օգնությամբ նրանց բերում էր ճիշտ ուղղության ու իր կողմը... Այդպիսով նա եղավ առաջինն ու ավելի պատվականը, քան Հայոց բոլոր նախարարությունները, և բոլորը դաշինք էին կնքում նրա՝ որպես բուն թագավորական ժառանգի հետ»:

**Հովհաննես կաթողիկոս**  
**Դրասխանակերտցի, Հայոց պատմություն,**  
**էջ 135-137**



Սիզակի ժայր՝ հեծյալին ձիուց գցելու համար նախատեսված կեռերով

Նպաստավոր էր նաև միջազգային իրադրությունը: Հարցն այն է, որ խալիֆայության թուլացումից օգուտներ քաղելու ձգտումով Արևելքում իրենց քաղաքականությունն ակտիվացրած բյուզանդական կայսրերը Փոքր Հայքում պավլիկյանների, իսկ Միջագետքում և Ասորիքում՝ արաբական զորքերի դեմ ռազմական գործողություններով էին զբաղված: Նրանց հաջողությունները դեռևս մեծ չէին, և մինչև 870-ական թթ. կեսերը Բյուզանդիան չէր կարողանում միջամտել Մեծ Հայքում ծավալված գործընթացներին:

**Պատմական տեղեկանք.** «(Աբասը) քաջագուն, թիկնավետ, զորեղ, վայելչակազմ, պատերազմի մեջ կորովի ու ճարպիկ տղամարդ էր: Աջակցելով իր եղբայր Աշոտին՝ բոլորին հնազանդեցնում է ու գցում նրա լծի տակ: Շատ տեղերում բազմիցս արհիություն ցուցաբերելով՝ նա շատերի աչքում հռչակավոր ու հոյակապ էր երևում»:

**Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,  
Հայոց պատմություն, էջ 139**

# ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 863Թ.


Ընդամենը *մեկ տարի* էր անցել Աշոտ Բագրատունու իշխանաց իշխան դառնալուց, երբ Հայաստանը ենթարկվում է լուրջ փորձության: Հայաստան է ներխուժում արաբ իշխանավոր Սևադայի որդի Ջահապի (Շահապի) հսկայական բանակը, հասնում Արշարունիք գավառն ու ամրանում Երասխ (Արաքս) գետի աջ ափից քիչ հեռու՝ Քառասունք կոչվող վայրում (տե՛ս քարտեզ 6.1):

**Պատմական տեղեկանք.** «Այս նույն տարում (863թ.) Սևադայի որդի Շահապը ամբոխասաստ զորքով գալիս է մեր Հայոց երկրի վրա՝ ցանկանալով ավերել ու գերեվարել... Գալիս են Արշարունիք գավառը, հարավային կողմից իջնում Երասխի ափը, այնտեղ, որն այժմ Քառասունք են անվանում»:

**Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ Բ**

Աբասը ճիշտ է գնահատում իրավիճակն ու զորամասերին խնդիր է դնում միասնական հզոր գրոհով հանկարծակիի բերել հակառակորդին: Հարձակման թափն առավելագույնի հասցնելու համար որոշվում է պահեստում զորամասեր չթողնել և առաջին գրոհն իրականացնել ամբողջ զորքի համատեղ ուժերով (տե՛ս սխեմա 1, 2)։

Սխեմա 1



ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՐԳԸ ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ԵՄԿԱՏԱՄԱՐՏԻ ՍԿԶԲԻՆ (863Թ.)


## Ճակատամարտը

Համարձակ գրոհը տալիս է սպասված արդյունքը՝ ճակատամարտի սկզբից ևեթ հայոց բանակը կարողանում է իր կամքը թելադրել հակառակորդին, որով հակառակորդի գործողությունները կաշկանդվում են: Ջահապի գործը սեղմվում է գետին և զրկվում հեծելագործ հակագրոհելու հնարավորությունից:

**Պատմական տեղեկանք.** «Աբասը, Աստծուն ապավինած, քառասուն հազար մարդկանցով, Հայոց ամբողջ զորությամբ, քաջարի և մենամարտող այրերով գալիս հարձակվում է նրանց (արաբների- հեղ.) վրա, նրանց բանակն ամբողջությամբ ցիր ու ցան անում, այս ու այն կողմ սփռում, անենքին (առհասարակ) գետավեժ ու սրախողխող անում»:

**Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես 9, Գլուխ Բ**

Սխեմա 2



Քառասունքի ճակատամարտը 863թ.

Բարենպաստ իրավիճակում Աբասը հնարավորություն է ստանում սկսել մարտի նտահղացման երկրորդ փուլը: Շարունակելով հարձակումը՝ հայոց բանակը հակառակորդի մարտակարգի մի քանի «երեբացող» տեղամասերում *ճեղքող հարվածներ է հասցնում*: Քառասունքի ճակատամարտի այս դրվագը հիշեցնում է Չիրավի ճակատամարտում Մուշեղ Սամիկոնյանի իրականացրած հարվածը:

Գետին սեղմված, ճեղքող հարվածների հետևանքով մասնատված և միասնական հրամանատարություն չունեցող հակառակորդը սկսում է նահանջել:


### Հաղթանակը

Երասխն անցնող արաբական զորամասերին ծանր փորձություն էր սպասվում. մերձամարտի բռնված զորամասերից բացի, ակտիվ գործողություններին ներգրավվում է նաև գետափին դիրքավորված թեթևազեն հետևակը: Այս փուլում Քառասունքի ճակատամարտը, ընդհանուր առմամբ, հիշեցնում է 450թ. Խաղխաղի իրադարձությունները և վկայում մեր ռազմարվեստի տարրերի ժառանգման մասին (տե՛ս սխեմա 3):

Մարտին մասնակցում էին երկու տեսակ աղեղներով (միջին և լայնալիճ) զինված զորամասեր, որոնց սպարապետը շարել էր երկու գծով: Դա հնարավորություն է տալիս վերականգնել բանակի եռագիծ մարտակարգը, որը միջնադարյան մեր ռազմարվեստում նորարարական էր:

Մարտակարգի առաջին գիծը կազմում էին ծանրազեն հետևակն ու այրուծին: Մերձամարտ վարող զորամասերի թիկունքում գործում էր մարտակարգի երկրորդ գիծը՝ միջին աղեղնավորները, տեգածիգները և պարսատիկավորները: Երկրորդ գծից հավանաբար մի քանի քայլ հետ շարված էին լայնալիճ աղեղնավորները:

Սխեմա 3



Քառասունքի ճակատամարտը 863թ.

Հակառակորդի զորամասերի վրա այսպիսի մեծ խոցող ազդեցության հետևանքով Երասխի գետանցման ընթացքում նա մեծաթիվ զոհեր է տալիս, որի պատճառով գետի մյուս ափին ևս չի կարողանում միասնական մարտաշար ձևավորել: Խուճապի մատնված գետանցող արաբ զինվորների փախուստը շարունակվում է ընդհուպ մինչև սահմանին հասնելը:

**Պատմական տեղեկանք.** «Իսկ Շահապը քսանվեց մարդկանցով մազապուրծ և անոթահար փախչում գնում է»:

**Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն,  
Հանդես Գ, Գլուխ Բ**

Ճակատամարտում իրեն փայլուն է դրսևորում Աբաս սպարապետը: Նա կրկնում է Վահան Մամիկոնյանի բարեփոխումներին նախորդած շրջանի (370-450-ական թթ.) զորավարների (Մուշեղ և Վարդան Մամիկոնյանների) մարտավարական հնարքները: Հետապնդման ընթացքում եռագիծ խոցման կիրառումով սպարապետը հանդես է գալիս նաև որպես ռազմարվեստի բարեփոխիչ:

# ԱՆՈՏ Բ-Ի ՓԱՅԼՈՒՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ 924-925ԹԹ.

910-ական թթ. անկախության պահպանման համար պայքարը գլխավորում է Աշոտ Ա-ի թոռը՝ Աշոտ Բ Երկաթը (914-929թթ.), որի հաղթանակները հսկայական արձագանք են ունենում ամբողջ տարածաշրջանում: Հզորացող հարևանի հետ հարաբերություններն աշխուժացնելու քայլեր է ձեռնարկում Բյուզանդիան, որը, Արաբական խալիֆայության թուլացման քաղաքականությունը վարելով, նպաստում էր ռազմական հաջողություններ ունեցող թագավորության հզորացմանը:



Աշոտ Երկաթ արքայի խաչը

**Պատմական տեղեկանք.** «Կայսրը նրան (Աշոտ Բ-ին) գրեթե իրեն հավասար էր ցույց տալիս և մեծարում թագավորական հանդիսություններով»:

**Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, էջ 287**

Իրադրությունը բարենպաստ էր նաև արևելքում, որտեղ սրվում են Հայաստանի ոստիկան նշանակված Յուսուֆ ամիրայի և Բաղդադի խալիֆայի հակասությունները: Յուսուֆը 919թ. բանտ է նետվում, որտեղ անցկացնում է չորս տարի: Հակամարտությունում հաջողության հասած խալիֆան Աշոտ Բ-ի հետ հարաբերությունները լավացնելու նպատակով ոչ միայն թագ է ուղարկում նրան և ճանաչում նրա գերագույն իրավունքը մյուս թագավորների նկատմամբ, այլև շնորհում է «շահնշահ», այսինքն՝ արքայից արքա տիտղոսը:

*Արքայից արքա* տիտղոսը կրելու իրավունքը վաստակելն ակնառու հաջողություն էր, որն Աշոտ Բ Երկաթն իր և իր հաջորդների համար վաստակել էր *երկարատև ու համառ պայքարում հաղթելով*:

**Պատմական տեղեկանք.** «Ամիրապետի (խալիֆայի) կողմից Յուսուֆի փոխարեն (նոր) ոստիկան է հաստատվում: Նա էլ Յուսուֆից առավել նույն կարգով խաղաղության ու միաբանության դաշինք է կնքում Աշոտի հետ՝ նրան անվանում Շահնշահ»:

**Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, էջ 317**

**Մազազ գավառում Բշիրի զորագնդի ջախջախումը 924թ.**

Յուսուֆն ազատվում է կալանքից և երկարատև պատերազմների հետևանքով Ատրպատականի դատարկված գանձարանի համար միջոցներ հայթայթելու նպատակով Հայաստան ուղարկում Նասր ալ-Սուբուքի (Նսրը ալ-Սուբուքի) ոստիկանին, որն իր փոխարեն Դվինում Բշիր (Բշըր) զորավարին թողնելով վերադառնում է Ատրպատական: Վերջինս իրեն պարտավորված էր զգալու և ձգտելու էր «արդարացնել» բարձր վստահությունը:

Դվինի անցուղարձին մոտիկից հետևելու նպատակով Աշոտ Բ-ն ամրանում է Այրարատ նահանգի արևելյան՝ Մազազ գավառում, իսկ ամրաշինական աշխատանքների վերակացու կարգում Գևորգ Մարզպետունուն:

Բշիրը որոշում է առաջին հերթին Աշոտ Երկաթին չեզոքացնել: Իմանալով, որ արքան լեռներում պատսպարվելու փոխարեն դիրքավորվել է Սևանա լճի ափամերձ շրջաններում, Բշիրը որոշում է, որ նա սխալ է թույլ տվել ու շտապում է օգտագործել «բացառիկ» հնարավորությունը: Նա իր հրամանատարության տակ Դվինում թողնված հեծելազորը հանում է «արշավանքի» ու զորքերը Հրազդան գետի հովտով շարժում է դեպի Մազազ գավառը (տե՛ս քարտեզ 6.1):

Աշոտ Բ-ն փակվում է Սևանա կղզու ամրոցում: Ոստիկանը նախ որոշում է ավերել Սևանի առափնյա բնակավայրերը և զորամասեր է ուղարկում ամբողջ գավառն ասպատակելու համար:

**Պատմական տեղեկանք.** «Շահան կոչված շահի (Աշոտ Բ-ի) պատվավոր մարդկանցից Գևորգ անունով մեկը ելել ու շրջում էր այն գավառներում՝ թշնամի ավազակներից ամրացնելու երկրի սակավամասն բարեկարգությունը: Իսկ Բշըրը, երբ անսպասելիորեն դուրս է գալիս նրա դեմ, Գևորգը իսկույն սարսափահար է լինում, որովհետև նրա հետ քսանից ավելի մարդ չկար, իսկ Բշըրինը մոտավորապես հազար մարդ էր»:

**Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, էջ 355**

Փոքրաթիվ ստորաբաժանումով ամրոցներում ստուգայցեր իրականացնող Գևորգ իշխանը հանկարծ հանդիպում է Բշիրի գլխավորությամբ շրջակայքն ասպատակող հեծյալ հազարյակին: Հեռվից հակառակորդին հետևելով՝ հաջողվում է պարզել, որ արաբների ռազմերթն անփութորեն է կազմակերպվել, իսկ տևական երթից հետո զինվորներն ակնհայտորեն հոգնած են:

*Անբարենպաստ տեղանքում հասցված հարվածը արդյունավետ կլիներ:*

## **Ճակատամարտը**

Մոտ տարածությունից անսպասելի գրոհելով՝ հայկական կողմը նախածեռ-  
նություն է ստանում, որը հաջողվում է պահպանել մարտի ընթացքում: Բշիրի  
ապշահար զինվորներին «թավալգլոր» անելով՝ հայ քաջերը մի քանի կողմից  
մխրճվում են նրանց անկանոն դասավորության մեջ:

**Պատմական տեղեկանք.** «Տիրոջ վրա հույս դնելով՝ (Գևորգը) սպա-  
սում էր նրանց հաղթելու հույսով: Եվ ապա քաջապնդված ու սրտապնդ-  
ված՝ (նա) ձի է հեծնում և արիաբար գրոհելով նրանց դեմ՝ շատերին թա-  
վալգլոր անում: Թեպետև իրենց մարդկանցից քչերը նույնպես սրահար-  
վելով թշնամիների կողմից սպանվում էին, սակայն մոլոր ու խաբված  
խոնարհացիները նրանց առաջ փախուստի էին մատնվում»:

**Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,  
Հայոց պատմություն, էջ 355**

Շուտով արաբների յուրօրինակ թմբիրն անցնում է, և կատարվում է զարմա-  
նալին: Անորոշությունը հաղթահարելով՝ Բշիրի զինվորները ոչ թե խտացնում  
են իրենց շարքերը և հակագրոհի անցնում, այլ սկսում են նահանջել: Գևորգ իշ-  
խանը *խելամտորեն* հրաժարվում է արաբներին հետապնդելու մտքից, քանի  
որ նրանց փախուստի մատնելուց հետո հաղթանակած իշխանի կողքին ընդա-  
մենը *մի քանի* մարտիկ էր մնացել:

Մարտադաշտից ճողոպրող Բշիրը մոլեգնել էր: Մարտադաշտում ապաշնոր-  
հությունն ի ցույց դրած «գորապետը» պարտությունն ընդունելու *համարձա-  
կություն չի ունենում* և մեկ անգամ ևս ցույց է տալիս իր *թուլությունը*: Բշիրը  
հրամայում է ճանապարհին հանդիպողներին սպանել և, նրանց գլուխները  
կտրելով, իր հետ տանում է Դվին:

**Պատմական տեղեկանք.** «Իսկ նրանք (մարտադաշտից փախչող  
Բշիրի զինվորները) անարգել մոլեգնությամբ, իրենց պատելով խավար  
ստվերների մառախուղով, ում որ գտնում էին ճանապարհի վրա, սրի  
էին քաշում՝ հեզ ու անպարտելի քահանաներին, երկրագործներին,  
խաշնարածներին, ճանապարհորդներին և անգամ՝ անմեղներին: Եվ  
այդպես անմեղներին մեղապարտ դարձնելով ու կտրելով նրանց գլուխ-  
ները՝ նա առնում տանում էր իր հետ Դվին քաղաքը սնապարծ փախուս-  
տով (ասելով), թե իբր այդ հաղթանակը ինքն է տարել քաջագործու-  
թյամբ ու մեծ կռվով. նա իր հետ տարել էր ավելի քան քսան անտեղի  
կտրած գլուխներ»:

**Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,  
Հայոց պատմություն, էջ 355-357**

# ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 925Թ.

## ՀԱՅՈՇ ԼԵՌԱՅԻՆ «ՅՈՎԱՄԱՐՏԸ»

Պարտությունից հետո Բշիր ոստիկանը բոլոր ուժերը կենտրոնացնում է Դվինում, որտեղ կուտակում է պարենի ու սպառազինության մեծ պաշար: Ավարտելով նախապատրաստական միջոցառումները՝ նա զորքը շարժում է հյուսիս:

**Պատմական տեղեկանք.** «Եվ շատ օրեր դար ու դադար ամենելով ու դարձյալ հանելով առաջինից ավելի մեծ զորք և նրանց զինելով ասպազեն ու առնազեն զենքերով՝ նա շարժվում գնում է ծովակի ափը, Սևան կղզու ամրոցի դիմաց, որպեսզի թերևս հանկարծակի Շահան շահ կոչվող (Աշոտ Երկաթի) վրա հարձակվելով՝ կարողանա զցել մահվան թակարդը կամ շղթայակապ անել»:

**Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,  
Հայոց պատմություն, էջ 357**


### *Արտագրոհի նախապատրաստումը*

Ամրոցում հետևազորի ընդամենը մի քանի հարյուրյակ ունեցող Աշոտ Երկաթը հայտնվում է դժվարին իրավիճակում: Խնդիրը ոչ միայն հակառակորդի մեծաթվությունն էր, այլև կղզում գտնվող հայկական զորամասի կազմը: Ուժերի մեծ մասը կազմում էին նետածիգները, որոնք մերձամարտի սպառազինություն չուներին: Գիշտ է, նրանց մեջ էին նաև մեր փառապանծ լայնալիճ աղեղնավորները, սակայն նրանք ևս թեթևազեն էին: Հետևաբար, եթե ամրոցի պատերի վրայից հակառակորդին խոցելու համար բավարար ուժեր կային, ապա արտագրոհներ իրականացնելու հնարավորությունը մեծ չէր և պաշտպանությանն ակտիվություն հաղորդելու հնարավորությունը չնչին էր:

Այդ *թվացյալ* իրողությունը գիտակցելով էլ Բշիրը շտապում էր: Մասնավորապես, ոչ մեծ ստորաբաժանումներ է ուղարկում այն ուղղությունները փակելու համար, որոնցով Հայոց արքան կարող էր սուրհանդակներ ուղարկել և օգնական ուժեր կանչել:

Աշոտ Երկաթը որոշում է, զինվորներին նավակների վրա նստեցնելով, շարժվել դեպի հակառակորդի բանակատեղին և ափին չհասած հանկարծակի նետահարում սկսելով՝ ծանրազեններին ափ իջեցնել և ավարտել հակառակորդի ջախջախումը: Առաջխաղացման սկզբում հակառակորդի կասկածները չառաջացնելու նպատակով շահնշահը մարտիկներին հրամայում է թիկնոցներով ծածկել զենքերն ու զրահները (տե՛ս սխեմա 1)։

Սխեմա 1



Սևանի ճակատամարտը 925թ. (շարված մարտակարգը և մարտի մտահղացումը)

«Առանց մերձամարտի արտագրոհի իրականացնելու» բանաձևն անսովոր մեկնաբանություն է ստանում. Աշոտը *ցամաքային* զորամասով հակառակորդի *ցամաքային* զորքերի վրա գրոհելու համար ընտրում է ծովամարտի տարբերակը, սակայն ծովամարտ վարելու համար էլ բավարար միջոցներ չկային: Մասնավորապես, անձնակազմը կղզուց ափ հասցնելու համար պիտանի ընդամենը տասնմեկ ձկնորսանավակ կար: Այդ նավակների բեռնատարողությունն էլ հիմք է վերցվում հարձակմանը ներգրավվող ուժերն ընտրելիս:

**Պատմական տեղեկանք.** «Իսկ նա (Աշոտ Երկաթը), երբ տեսավ, որ այն մեծ ուժը եկել հասել է դռներին, շուտափույթ պատրաստում է տասնմեկ նավ, նրանց վրա բարձրացնում յոթանասուն ազնվական մարդու և լայնալիճ աղեղներով զինված իր ծառաներին, որոնք քաջակորով ու նետածգության մեջ հմուտ մարդիկ էին և գրեթե մազից էլ չէին վրիպում: Ապա ինքն էլ նրանց հետ նավ է բարձրանում, և նրանք զնուն են թշնամիների դեմ ծովամարտ տալու»:

**Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, էջ 357**

Անսովոր մարտն իրականացնելու համար մարտիկների ընտրությունը սկսվում է երկրորդ փուլում մերձամարտ վարելու համար նախատեսված «յոթա-

նասուն ազնվականներից»: Նրանց նավերը նստեցնելուց հետո տեղաբաշխվում են լայնալիճ ու միջին աղեղնավորները:


Օրվա ժամանակն օգտագործելու համար որոշվում է նավակները դեպի ափ շարժել արևելքից, որպեսզի ծագող արևը կուրացնի հակառակորդի զորքին և հնարավորություն չտա նշանառու նետաձգությամբ պատասխանել հայ աղեղնավորներին: Մինչև վերջին պահն իր մտահղացումը չբացահայտելու նպատակով Աշոտ Երկաթն էլ է տեղ գրավում նավակներից մեկի վրա՝ իր հետ վերցնելով արքայական դրոշը: Դրանով Բշիրի մոտ պատրանք էր ստեղծվելու, թե շահնշահը շքախմբի ուղեկցությամբ գալիս է գերի հանձնվելու:

### Ճակատամարտը

#### Առաջին փուլը (տե՛ս սխեմա 2)

Ափին մոտեցող նավակների վրա կասկածելի ոչինչ չտեսնելով՝ Բշիրի զինվորները կարծում են, թե անելանելի իրավիճակում հայտնված Աշոտ Բ-ն ներկայանում է ոստիկանին: Նրանք թողնում են ճամբարի ամրացումն ու հիմնականում անգեմ դուրս գալիս լճափ՝ Աշոտ Երկաթին գերելուն ականատես լինելու համար: Նավերին մոտ լինելու նպատակով նրանք աստիճանաբար խմբվում են ոչ մեծ տեղամասում:

Սխեմա 2



Սևանի ճակատամարտը 925թ.

Անսպասելի, ավից ոչ մեծ հեռավորության վրա, նավակները դադարեցնում են առաջխաղացումը, և հայ նետաձիգները, թիկնոցների տակից աղեղները հանելով, սկսում են մոտ տարածությունից նետահարել լճափին խմբված բազմությանը:


**Պատմական տեղեկանք.** «Եվ հաջողությամբ նետեր արձակելով՝ նրանք թշնամիներից ոմանց միաչքանի են դարձնում, իսկ շատերին էլ խիստ խոցելով ու վիրավորելով սպանում են: Եվ այդպես նրանք կտրում ու հեռացնում են թշնամիների բազմության ռազմաճակատը և թշնամին նրանց առաջ փախուստի է դիմում»:

**Յովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցի,  
Յայոց պատմություն**

**Երկրորդ փուլը** (տե՛ս սխեմա 3)

Մինչ ծանրագեն հետևակը տեղափոխող նավակները կհասնեին ափին՝ աղեղնավորները երկու կողմից հարվածի տակ են առնում հակառակորդի մարտիկների ամենախիտ հատվածը՝ կենտրոնը: Դրանով միանգամից երկու խնդիր էր լուծվում. առաջին հարվածը հասցվում էր այն տեղամասում, որտեղ հակառակորդի զոհերի հավանականությունն ամենամեծն էր: Յետևաբար, այդտեղ էր նրանց շրջանում խուճապ առաջացնելու «բանալին», ոչ մեծ հատվածում կենտրոնացած հակառակորդի բազմությունը երկու մասի բաժանելով տարածք էր ազատվում ծանրագենների ավի իջնելու համար:

Սխեմա 3




Սևանի ճակատամարտը 925թ.

**Երրորդ փուլը** (տես սխեմա 4)

Սխեմա 4

Մինչ Բշիրի զինվորները աջ ու ձախ էին վազում, ափ իջած հայ ծանրազեն հետևակայինները սկսում են ոչնչացնել նետածգությունից ազատվել փորձողներին: Այդ ընթացքում, ափ իջածներին չխոչընդոտելու նպատակով, հայ նետածիզները նետածգության թիրախ են դարձնում հակառակորդի նուրացած կենտրոնից փախած և թևերում խմբվածներին: Այս փուլում մարտը վերածվում է դասական իմաստով ճակատամարտի: Կենտրոնում գրոհը շարունակելու գործը ստանձնում է ծանրազեն հետևակը:

Բշիրն արշավանքի էր հանել հիմնականում հեծյալ զորամասեր, որոնց զինվորների համար մարտավարական անբարե-



Սևանի ճակատամարտը 925թ.



Հնագույն խաչվառեր

նպաստ իրավիճակ էր ստեղծվել: Անսպասելի հարվածի ենթարկվելով՝ նրանց մի մասը վազում էր դեպի կիսակառույց ճամբարի ներսում թողնված զենքերը, իսկ մյուս մասը՝ դեպի ճամբարից դուրս՝ արոտավայրում արածող ձիերը: Ստեղծված խառնաշփոթությունը ձեռնառու էր հայ ծանրազեններին, որոնք հակառակորդից բազում անգամ փոքրաթիվ լինելով՝ կարողանում են ավարտել կենտրոնի ճեղքումը:

### **Հաղթանակը**

Փոփոխվող իրավիճակում արագ կողմնորոշվելով՝ Աշոտ Երկաթն ափ է հանում նետաձիգներին: Միջին նետաձիգներին հրամայվում է աջակցել ծանրազեններին, իսկ լայնալիճ աղեղնավորներին՝ ոչնչացնել հեռու փախածներին, որպեսզի ափից հեռու էլ Բշիրը չկարողանար ի մի բերել իր զինվորներին ու մարտակարգ ձևավորել:

Հաջողություններից ոգևորված հայ մարտիկները, ափ իջնելով, մարտը նոր թափով են շարունակում ու հասցնում հաղթական ավարտի: Մարտադաշտում հարուստ ավար թողնելով՝ ոստիկանի գործը սկսում է փախչել այն ճանապարհով, որով եկել էր (տե՛ս քարտեզ 6.1):

Այսպիսով, Սևանա լճի ճակատամարտը մեր ռազմարվեստի գագաթներից մեկը հանդիսացող հաղթանակներից է, որը *մտահղացման առումով* արժանի է համաշխարհային ռազմարվեստի ամենաուշագրավ մարտերից մեկը կոչվելու:

### **Բշիրի գործերի ջախջախումը Քեղա ամրոցի մոտ 925թ.**

Դեպի Սևան կատարված երկրորդ արշավանքից ևս գլխիկոր վերադարձող արաբա-ատրպատականյան զորքը հասնում է Քեղա (Գեղա, Գեղայո) ամրոցին: Տեղեկանալով, որ շահնշահի կողմնակիցներն այստեղ են ամրացել, Բշիրը որոշում է, որ առանձնապես բարձր ու հաստ պատեր չունեցող ամրոցի գրավումը բարդ գործ չի լինելու և հրամայում է անմիջապես գրոհել ամրոցը, որի պաշտպանությունը ղեկավարում էր Գևորգ Մարգապետունին:

**Պատմական տեղեկանք.** «Եվ երբ նա (Գևորգ Մարգապետունին) տեսավ, որ ամբոխը հասել է ամրոցի դռների մոտ, զինվում է զենքերով, զարդերով, տիզավոր նիզակներով և իր հետ վերցնելով նաև մի քանի այլ մարդկանց, ամրոցից դուրս է գալիս թշնամիների դեմ»:

**Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,  
Հայոց պատմություն, էջ 357**

Գրոհի համար նպաստավոր բնագծեր զբաղեցնելու ժամանակ չունենալով՝ զորամասերը ճանապարհի ուղղությունից էլ գրոհում են ամրոցը: Դարպասի երկու կողմերի աշտարակներից ամրոցի պաշտպանները սկսում են նետահարել գրոհող հակառակորդի զինվորներին:

### **Արտագրոհը**

Համոզվելով, որ հակառակորդը մյուս ուղղություններում պահեստագոր չունի և իր ուշադրությունը կենտրոնացրել է դարպասի գրավման վրա՝ հայ իշխանը Բշիրի հրամանատարական դիտակետի վրա արտագրոհի է անցնում:

**Պատմական տեղեկանք.** «Իսկ թշնամիները խմբովին այդպիսի անարգանքով գնացին մտան Դվին քաղաքը և սպառնալիքներով ջանում էին վրեժ լուծել ամրոցի բնակիչներից»:

**Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,  
Հայոց պատմություն, էջ 357**

Համարձակ գրոհը լիակատար հաջողությամբ է պսակվում: Բշիրը մեծ դժվարությամբ է կարողանում փախչել ու ազատվել հետապնդումից: Ինչպես և սպասվում էր, հրամանատարական կետի մոտ սկսված մարտը խուճապ է առաջացնում ամրոցի գրոհը շարունակող զինվորների շրջանում, որոնք ևս միանում են իրենց փախչող զորավարին: Այլ ելք չունենալով՝ Բշիրն ապաստանում է Դվինում:

Քեղա ամրոցում Գևորգ Մարզպետունու տարած հաղթանակն օտար նվաճողների դեմ միասնական ճակատի ձևավորման վերջին խթանը հանդիսացավ:

# ԾՈՒՄՔԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 998Թ.

## ՄԵՅ ԶՈՐԱԿԱՐԻ ԱՄԵՆԱՄԵՅ ՀԱՂԹԱՆԱԿԸ

990թ. Անիի գահին է բազմում Գագիկ Ա Մեծը (990-1020թթ.): Նրա օրոք Հայոց պետությունը տնտեսական վերելք է ապրում, իսկ բանակը՝ հզորանում:

**Պատմական տեղեկանք.** «Տիրեց նա (Գագիկ Ա) բազմաթիվ ամրոցների և գավառների... իր եղբորից<sup>1</sup> առավել շատ. և չեղավ մեկը, որը սարսափ ազդեր ամբողջ Հայաստան աշխարհում, մինչև իմ այս հիշատակի խոսքերը շարադրելու ժամանակները: Որովհետև էր այր իմաստուն, պատերազմելու մեջ վարժ և հմուտ, բաշխելու մեջ առատաձեռն»:

**Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ Լ**

Հայաստանի հարևան մահմեդական պետություններից պաշտպանվելու համար Գագիկ արքան հզոր դաշինք է ստեղծում: Դաշինքն առաջին «փորձությունն» անցնում է 990թ., երբ Տայքի Դավիթ իշխանը (Դավիթ կյուրապաղատ, 966-1000թթ.) գրավում է Մանազկերտ քաղաքը: Ատրպատականի Մամլան ամիրան, հարևան ամիրայություններից աջակցություն ստանալով, շարժվում է դեպի Ծաղկոտն գավառը: Ի զարմանս Մամլանի, նրա զորքերի դեմ են դուրս գալիս Գագիկ Ա Մեծի, Կարսի Աբաս թագավորի (984-1029թթ.), Դավիթ իշխանի և Վրաց Բագարատ Բագրատունու միացյալ զորքերը: Մամլանը դժվարին իրավիճակում է հայտնվում և հեռանում է Հայաստանից:



Գագիկ Ա թագավորը Գագկաշեն Սբ Գրիգոր Լուսավորիչ տաճարի մանրակերտով

### Արշավանքը

997թ. Մամլանը նոր զորահավաք է կազմակերպում, իսկ ռազմավարական նպատակ է դրվում ոչ թե առանձին շրջանների, այլ ամբողջ Հայոց և Վրաց թագավորությունների նվաճումը: Դավիթ իշ-

<sup>1</sup> Սմբատ Բ Տիեզերակալից (977-990թթ.):


խանն օգնություն է խնդրում Գագիկ Ա-ից և Վրաց Գուրգեն Բագրատունուց, որոնք առանց հապաղելու միանում են համատեղ պայքարին: Հատկանշական է, որ շահնշահի հրամանով դաշնակիցներին է միանում ոչ միայն մարզպան Աշոտի գլխավորած մարզպանական գունդը, այլև Կարսի Աբաս թագավորի ամբողջ բանակը:

Ատրպատականյան զորքերը շարժվում են դեպի Ապահունիք, որտեղ Ծումբ (Ծմբո) գյուղի մոտի բարձունքին անրացած՝ նրանց էր սպասում դաշնակիցների միավորված բանակը:

**Պատմական տեղեկանք.** «Գագիկը Հայոց զորքից առանձնացնում է վեց հազար ամենաընտիր և զինավառ մի գունդ, հանձնում է... իշխանաց իշխան Վահրամի և նրա որդի Սմբատ մագիստրոսի ձեռքը, ապա նաև Աշոտ մարզպանի և Վանանդի թագավոր Աբասի զորքն էլ գումարում: Վրաց թագավոր Գուրգենը նույնպես իր այրուծիից վեց հազար ընտրյալներ է տալիս... և միասին շարժվում են դեպի Ապահունյաց գավառը. բանակ են դնում մի ամրակուռ և բարձրավանդակ տեղ. Ծմբո գյուղի մոտակայքում, Մանլանի բանակին դեմ հանդիման»:

**Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ ԽԱ**

Սխեմա 1



Մարտական զորժողովուրդները Ծումբի ճակատամարտի նախօրյակին

### **«Գիշերապահ» գորամասերի մարտը**

Հաջորդ օրն առավոտյան ամիրան պատրաստվում է վճռական ճակատամարտի. նա զորագնդերն առաջ է բերում ու շարում *Նախամարտական կարգով* (տե՛ս սխեմա 1): Մամլանը կարծում էր, թե «սադրիչ» գործողությունները բավարար են մարտը հրահրելու համար: Սակայն շուտով պարզ է դառնում, որ ոչ մեծ բարձունքին ամրացածները չեն էլ պատրաստվում թողնել իրենց նպաստավոր դիրքերն ու մտադիր են օգտագործել տեղանքը:

Մի քանի ժամ ապարդյուն սպասելով՝ Մամլանը զորքերը վերադարձնում է ճամբար: Նույնը կրկնվում է նաև երկրորդ ու հաջորդած մի քանի օրերին: Ապարդյուն է անցնում նաև ոչ մեծ ուժերով իրականացվող գրոհներով մարտ «հրահրելու» հնարքը: Բլրամերձ դաշտավայրն իջնելուց ամեն կերպ խուսափող հայկական կողմը, գլխավոր ուժերի անվտանգությունն ապահովելու համար առանձնացված ոչ մեծ «գիշերապահ» ստորաբաժանումների ուժերով պաշտպանվելով, չէր ենթարկվում սադրանքների: Ավելին, առաջապահ զորագնդի դեր կատարող յոթ հարյուր հոգանոց զորագունդը՝ իրենց ֆիզիկական ուժով աչքի ընկնող Մեսխունի Կարմրակելան եղբայրների գլխավորությամբ, ուշագրավ գիշերային մարտ է տալիս հակառակորդի հազար հոգանոց զորամասին: Այս ընդհարումը խուճապային տրամադրություններ է առաջ բերում հակառակորդի շարքերում: Հարուստ ռազմավարի խոստումներով Հայաստան ներխուժած, սակայն անգործության մատնված բանակն աստիճանաբար անկառավարելի զանգվածի է վերածվում:


### **Ճակատամարտը**

Համոզվելով, որ գիտակցված մարտավարություն է բանեցվում և որ ժամանակի կորուստն իր դեմ է գործում, Մամլանը հերթական անգամ վաղ առավոտյան զորքը ճամբարից դուրս բերելով՝ շարում է մարտակարգով: Նա այս անգամ զորքերը շարժում է առաջ և մոտեցնում բլրալանջին (տե՛ս սխեմա 2):

**Պատմական տեղեկանք.** «Պարսկական զորքը, երբ հասկացավ, որ նրանք (հայ-վրացական զորքերը) չեն ցանկանում առաջինը իջնել իրենց մոտ և սկսել պատերազմը... այդ ժամանակ Արեգի ամսի հենց ամսամուտին, Երեքշաբթի օրը, վաղ լուսաբացին ճակատամարտի են պատրաստվում բազմաշերտ հորինվածքով, դելմաստանյան վահանափակոցներով կարգավորում-հարմարեցնում են ամբողջ դաշտի երեսով մեկ՝ լայնածավալ հարձակման անցնելու համար. գալիս մոտենում են Հայոց և Վրաց բանակատեղի բլրալանջին...»:

**Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ ԽԱ**

Սխեմա 2



Ծուկի ճակատամարտի 998թ.

Թագակիր հրամանատարի բացակայության պայմաններում հայ-վրացական զորագնդերի հրամանատարների շրջանում ճակատամարտը սկսելու հարցում հակասություններ են ծագում: Խնդիրը հետևյալն էր. միացյալ բանակում իր կարգավիճակով ամենաբարձրը Հայոց արքայի զորագունդն էր, սակայն այն մեծաթիվ չէր, իսկ սպարապետ Վահրամ Պահլավունին առաջին անգամ էր դաշնակից ուժերի հրամանատարի դերում հանդես գալիս: Մեծաթիվ հակառակորդի դեմ պայքարում տեղանքն առավելագույնս օգտագործելու նրա ձգտումը զինակիցների մի մասն անփորձության վկայություն է համարում: Մասնավորապես, *նախօրյակի հաջողությունից ոգևորված* վրաց զորագնդի հրամկազմն առաջարկում էր անմիջապես գրոհել ստորոտին հասած հակառակորդի վրա:

Բարձունքին մարտակարգով շարված դաշնակիցների ու դանդաղ բլուրն ի վեր բարձրացող թշնամու միջև մերձամարտի հետաձգումը բացասական ազդեցություն էր ունենում վերջիններիս վրա: Բլուրն ի վեր մազլցող զորամասերի մարտակարգն աստիճանաբար խախտվում էր, և դժվար էր ասել, թե ինչ տեսքով կկարողանային հասնել ճամբարին, բայց այդ վճռական պահին վրացական զորագնդի զինվորների համբերությունը սպառվում է, և Վահրամ Պահլավունուց հրամանի չսպասելով՝ նրանք նետվում են մերձամարտի (տե՛ս սխեմա 2):

**Պատմական տեղեկանք.** «Ապա ձայն են տալիս (Հայոց բանակին) ճակատամարտի պատրաստվել, առաջ անցնել և մոտենալ կռվի ասպարեզին ու հանդիսարանին: Բայց... (նրանք) մնացին իրենց տեղը բանակած. միայն սակավաթիվ մարտիկներ իջնում էին այնտեղ նրանց հետ մենամարտելու»:

**Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ ԽԱ**

Փոքրաթիվ զորագունդը չի կարողանում ճեղքել հակառակորդի մարտակարգը, թեև «վերևից» հարվածելով՝ հաջողվում է իրարանցում առաջացնել հակառակորդի շարքերում: Հակառակորդը հաղթահարում է անսպասելի գրոհի հետևանքները և հակահարձակման անցնում:

Վրացական զորագունդը նահանջում է, սակայն «հետապնդումը» նոր՝ անսպասելի փորձության է վերածվում Մամլանի համար: Մարտակարգի կենտրոնի զորամասերի զինվորների մի մասը դուրս է գալիս շարքից և սկսում մարտում ընկած վրացի զինվորների *դիակապտությունը*: Կենտրոնի խարխված զորաշարը վերջնականապես խախտվում է:

**Պատմական տեղեկանք.** «Այնժամ պարսկաստանցիները (իմա՝ Ատրպատականի ամիրայի զորախումբը) թողնում են ճակատամարտի պատրաստվածությունը, պատերազմի կարգավորությունն ու ռազմական կառուցվածքը լքում և յուրաքանչյուր ոք ձիու գլուխը բաց թողած՝ դիմում են թալանի ու հափշտակության, որպես մեռելոց դիակների կամ փախուստի մատնվածների կողոպտիչներ»:

**Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ ԽԱ**

### **Հատող գրոհները**


Վահրամ Պահլավունին շտապում է օգտվել բարենպաստ իրավիճակից ու հատող հարվածներ հասցնելու նպատակով բոլոր ուժերը նետում է վճռական հարձակման: Հարձակման թափն ուժեղացնելու նպատակով սպարապետը հրամայում է հարվածները հասցնել գրոհող զորասյուների ամենախոցելի տեղամասերում՝ *կցատեղերում* կամ *միջտարածություններում* և առանձնապես ուշադրություն չդարձնել միասնական ճակատի ձևավորման վրա: Այսպիսով, հարվածները հասցվում են իրարից որոշակի հեռավորության վրա, և ճակատամարտը ստանում է մի քանի տեղամասերում ընթացող միաժամանակյա մարտերի տեսք:

**Պատմական տեղեկանք.** «Իսկ Հայոց և վրաց զորքերը... առյուծաբար մռնչալով հարձակվում էին պարսկական (Ատրպատականի ամիրայի) բանակի անտառախիտ բազմության վրա: Այնտեղ Հայոց զորքերը կայծակնային արագությամբ շահատակում էին աջ ու ձախ, խուճախում մեծ խմբով հասնում էին՝ բուռն ու խորը խոցոտում, դաժանորեն սուլերահար անում և խուժադուժ դարձնելով, ծանրորեն հարվածում... Տայոց քաջ մարտիկներն անենուրեք, ուր պատահում էին այդ փախստականներին, բոլորին դիաթավալ ոտնակոխ էին անում»:

**Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ ԽԱ**

Հայկական զորագնդերը մի քանի տեղամասերում մխրճվում են հակառակորդի մարտակարգի մեջ (տե՛ս սխեմա 3): Հարձակման կենտրոնում Կարսի թագավորության բանակն էր, նրանից աջ՝ սպարապետի գլխավորած հեծյալ զորագունդը, իսկ Դավիթ իշխանի զորամասերը բաժանված էին երկու մասի. հետևազորն ու հեծելազորի մի մասը կենտրոնացած էին ձախ թևում, իսկ հեծելազորի մյուս մասը աջից աջակցում էր սպարապետի հեծելազորին: Այսպիսով, հասցվում էր երեք (եթե Տայքի հեծելազորը աջ թևում ինքնուրույն էր գործում՝ չորս) հարված:

Սխեմա 3



Ծումբի ճակատամարտի 998թ.



**Անիի պարսպի ավագ դուռը**

Հարվածող գորագնդերից ամենամեծաթիվը կենտրոնին էր, որտեղ գործում էր Կարսի թագավորության ամբողջ բանակը, սակայն առավել հաջող ընթացք է ստանում սպարապետ Վահրամ Պահլավունու գլխավորած զորամասերի հարվածը: Հետևաբար, մարտի սկզբում վրացական զորագնդի գրոհի անդրադարձմանը չմասնակցած ամիրայի զորքերի ձախ թևն ինչ-որ պատճառով առավել խոցելի էր դարձել, թեև մարտակարգը չէր խախտվել: Բացառված չէ, որ Մամլանը կենտրոնն ուժեղացնելու համար օգտագործել էր ոչ միայն պահեստազորը, այլև ձախ թևի որոշ զորամասեր:

### **Հաղթանակը**

Հակառակորդի ուժեղացված կենտրոնը կարողանում է կասեցնել Վանանդի զորքերի հարվածը: Այդ պատճառով սպարապետը որոշում է նահանջից հետո պահեստազորի դիրքում հայտնված վրացական զորագունդն ուղարկել ոչ թե աջ թևում հաջողությունը զարգացնելու, այլ կենտրոնում դանդաղող գրոհին աջակցելու:

Մեծաթիվ հակառակորդը կատաղի դիմադրություն է ցույց տալիս, սակայն համալրում ստացած կենտրոնի զորաթևը ևս կարողանում է սասանել ամիրայի զորաշարը: Այս տեղամասերում իր հիմնական ուժերը գամած հակառակորդը չի կարողանում կասեցնել նաև ձախ թևում ակտիվ գործողությունների անցած Տայքի զորագնդի առաջխաղացումը և սկսում է նահանջել: Մամլանն ի վիճակի չի լինում վերականգնել իր փախչող զորամասերի մարտակարգը, իսկ Վահրամ Պահլավունին եռանդուն հետապնդում է իրականացնում մինչև Արճեշ:

**Պատմական տեղեկանք.** «Այս ամենը ձևով հար և նման էր ինչպես հրդեհը անտառում բորբոքվելուն, կամ որպես ահեղասլաց արծիվը թռչունների երանը խուճապահար անելուն: Այլև պետք էր այնտեղ լինել տեսնելու համար արյան վտակները առվակներ ու հորդահոս գետեր դարձած, դիակները թավալված, մեռածներն ու կիսամեռները միմյանց վրա թափված կուտակված: Այնժամ պապանձված և սարսափահար Մամլանն ու մնացած պարսիկները շտապում են փախչել, հեռանալ: Բայց նրանց հետապնդող Հայոց ու Վրաց մարտիկները, հասնելով սաստիկ կերպով հարվածում էին, սրի և սուսերի բերանն առած կոտորում էին մինչև արևամուտ ու հալածում մինչև Արճեշ քաղաքի դռները»:

**Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն,  
Հանդես Գ, Գլուխ ԽԱ**

Այսպիսով, հայ-վրացական զորքերը Ծունքի ճակատամարտում ծանր պարտության են մատնում Ատրպատականի Մամլան ամիրայի բանակը: Հայոց և Վրաց թագավորությունները վերացնելու նպատակով արշավանքը սկսած ամիրան ոչ միայն պարտություն է կրում ու հրաժարվում հայկական հողերն ասպատակելու մտքից, այլև շուտով հարկադրված է լինում ճանաչել Գագիկ Ա Մեծի գերիշխանությունը:


Հայոց ռազմարվեստի երկնականարում հայտնվում է բոլոր ժամանակների ամենավառ հետքը թողած գործիչներից մեկը՝ Վահրամ Պահլավունին, որը հետագայում վարելու էր սպարապետի պաշտոնը:



**Պահլավունիների զինանշանը Կեչառիսից**

**ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ  
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԶԻՆ ՓՈՒԼԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ**

1040-1050-ԱԿԱՆ ԹԹ. ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԳԼԽԱԿՈՐ ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



# ԹՈՒՆԱՎԱՆՈՒՄ ԹՈՒՐՔՄԵՆԱՎԱՆ ՀՐՈՍԱՎԱԽՄԲԵՐԻ ԶԱԽԶԱԽՈՒՄԸ 1042Թ.

Օղուգ-թուրքմենական արշավանքների երկարատև շղթայում առանձնացնում են 1042թ. նրանց 15 հազարանոց զորքի հարձակումը Վասպուրական աշխարհի թռռնավան (թռռնևան) գավառի վրա և տեղի Արծրունի իշխանների կազմակերպած դիմադրության դրվագը:

## Խուլ Խաչիկի թիկնազորի հերոսությունը

Հարձակումը տեղի է ունենում 1042թ. Ուրմիո լճի ավազանից՝ Յեր և Զարևանդ գավառների կողմից: Թափառական թյուրքական ցեղերի հրոսակախմբերը ներխուժում էին հայկական հողերն ու ամայացնող արշավանքներով ահաբեկում Վասպուրականի հայությանը:

Հայրենի հողի պաշտպանությունը գլխավորում է Խուլ Խաչիկ մականունով Արծրունի իշխանը: Նրա որդիներ Հասանն ու ճնճղուկը գավառի զորագնդով գտնվում էին բյուզանդական բանակում ծառայության մեջ, և Խաչիկը մնացել էր առանց շատ թե քիչ կազմակերպված զինական ուժի: Հայրենի հողին կառչած իշխանի տրամադրության տակ մնացել էր ընդամենը յոթ տասնյակից կազմված իշխանական թիկնապահ ստորաբաժանումը:

**Պատմական տեղեկանք.** «(1042թ.) Վասպուրական գավառում սպանվեցին հայոց մեծ իշխան Խաչիկը և նրա մանկահասակ որդին՝ Իշխանը: Յերի և Սալմաստի (թափառական թյուրքերը) հավաքվելով, ավարի էին առել թռռնևան գավառը: Այդ բանի լուրը հասել էր Խաչիկին, թե այլազգիների զորքը մտավ քո գավառը: Նա քաջ մարդ էր, պատերազմներում՝ հաղթող, առյուծի ծնունդ, սակայն ծերացել էր և թողել պատերազմական գործը: Նա հառաչում էր, ափսոսում, որ իր որդիներ քաջ Հասանն ու ճնճղուկը զորքերով հանդերձ Միքայել կայսեր հետ Արևմուտք էին գնացել»:

### Մատթոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Մասն առաջին

Խաչիկ Արծրունին ի մի է բերում բոլոր մարտունակ ուժերը և քաջաբար դուրս գալիս թյուրքական հրոսակախմբերի դեմ: Գիտակցելով, որ մեծաթիվ հակառակորդի դեմ հաղթանակի հասնելու հույսերն անիրական են, իսկ պարտության դեպքում պայքարը պետք էր լինելու շարունակել, նա անչափահաս (տասնհինգամյա) որդուն՝ Իշխանին, թողնում է տանը:

**Պատմական տեղեկանք.** «Հայոց իշխան Խաչիկը... հասավ այլազգիների, տեսավ, որ (նրանք) մեծաթիվ են, բայց կոչ անելով իր մարտիկների, կռվի բռնվեց, ուժգին հարվածեց նրանց և գետին տապալեց»:

**Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Մասն առաջին**

Նկատելով, որ իր մեծաքանակության պատճառով հակառակորդն անհոգ է ու տեղաբաշխվել է անբարենպաստ տեղանքում, Արծրունյաց քաջերը որոշում են սկսել հարձակումը: Սկսվում է թեժ մարտ:

Հանկարծ Խաչիկ Արծրունին տեսնում է, որ երիտասարդական անհամբերություն դրսևորելով՝ Իշխանը չի կատարել իր հրամանը և եկել է մարտադաշտ ու միացել գրոհող ստորաբաժանումներին: Մարտի թոհուբոհում ծեր իշխանը չէր կարողանալու իշխանագունին բացատրել պահեստազորի հրամանատարի պարտականությունները կատարելու համար տանը թողնվելու կարևորությունը: Այդ պատճառով, ուղղակի պահանջում է կատարել իր հրամանն ու տուն վերադառնալ, իսկ ինքը միանում է իր մարտնչող զինվորներին:

Պատանին հարկադրված ենթարկվում է հոր պահանջին և հեռանում մարտադաշտից, սակայն կրկին զգացմունքներին զոհ գնալով՝ վերադառնում ու միանում է գրոհը շարունակող քաջերին: Իշխանական հանդերձները տեսնելով՝ հակառակորդի զինվորները շրջապատում են պատանուն ու մարտում սպանում: Որդու մահվան տեսարանն ու լարված մարտում ուժասպառ լինելը Խաչիկին վերջնական հուսահատության են հասցնում, և ուժասպառ եղած ծերունի իշխանը ևս զոհվում է: Իրենց իշխանի օրինակով ոգևորված՝ նույն հերոսությամբ մահվան ընդառաջ են գնում հայկական փոքրաթիվ զորամասի գրեթե բոլոր զինվորները:

## **Թակարդը**

Արտասովոր հերոսական դիմադրության օրինակի ականատես դարձած թյուրքական հրոսակախմբերը *Նորանոր անակնկալներից* խուսափելու նպատակով որոշում են բավարարվել արդեն կողոպտածով ու հեռանալ Ուրմիո (Կապուտան) լճի առափնյա տարածքներ: Ճակատամարտից ընդամենը մի քանի օր անց իրենց զորագնդով թոռնավան են վերադառնում հսուկ Խաչիկի որդիները:

Հնարավոր է լինում հինգ հազարանոց զորագունդ կազմավորել: Թեև դրանից հետո էլ հակառակորդը եռակի գերազանցություն ուներ, սակայն նրա քանակական գերազանցությունն արդեն այնքան չէր, որ հաղթելն անհնար լիներ, ու Հասանը նախաձեռնում է ռազմական գործողությունը: Այն ռազմական խորամանկության դասական օրինակ է:

Մի կաշառված քրդի միջոցով հաջողվում է թյուրքական զորքերին «հայտնել», թե նրանց զգուշավորությունն ավելորդ է եղել, և Արծրունիները թոռնա-

վանում մարտունակ զորամասեր չունեն: Խայծը զցելուց հետո մնում էր սպասել: Ինչպես և սպասվում էր, կողոպուտի «հոտն առած» թյուրքական հրոսակախմբերը, զանց առնելով անվտանգության միջոցառումները, անմիջապես ներխուժում են Թոռնավան:

### **Հաղթանակը**

Հասան իշխանի ուժերի հարձակումը հասնում է նպատակին: Թյուրքական զորամասերը հարկադրված են լինում մարտավարական առումով անբարենպաստ բնագծում հապճեպ մարտակարգ ձևավորել, որի պատճառով նրանց դիմադրությունն անարդյունավետ էր:

Ընդունված կարգի համաձայն, ճակատամարտի սկզբում երկու կողմերի լավագույն մարտիկները դուրս են գալիս մենամարտի: Հոր վրեժը լուծելու հարցում հաստատական Հասան իշխանը մենամարտի է հրավիրում նրան սպանողին: Վերջինս մենամարտի է դուրս գալիս՝ իր հետ բերելով Խուլ Խաչիկի երկվարը, Արծրունյաց իշխանական դրոշը, զենքն ու զրահը: Հայ իշխանը, *«հարվածելով նրան, երկու կտոր է անում»:*

Հաջողությունից ոգևորված հայկական զորագունդը գրոհում է հակառակորդի վրա: Պատմիչը նշում է, որ պատանի եղբոր՝ Իշխանի վրեժն էլ լուծել է ճնճուկը, որը մարտի թոհուբոհում խոցում է նրան սպանողին:

Չորս հազար զոհ տալով և նախկինում խլած ամբողջ ռազմավարը թողնելով՝ հակառակորդը խուճապահար փախչում է:

**Պատմական տեղեկանք.** «Հասանը սաստիկ կատաղությամբ, խոցված գազանի պես հարձակվեց անհավատների ճամբարի վրա... և, արիաբար մարտ տալով, այլազգիներին փախուստի մատնեց: Նրանցից չորս հազար հոգու կտորեցին, որից հետո խաղաղությամբ ու մեծ ուրախությամբ վերադարձան և փոխեցին իրենց սգավորի զգեստները»:  
**Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Մասն առաջին**

Հայրենի հողի համար մղվող պայքարի այս դրվագում նշանակությամբ գրեթե հավասարազոր երկու իրադարձության ենք ականատես լինում. Խուլ Խաչիկի յոթանասուն քաջերի արտասովոր անձնագոհ հերոսության և ոչ պակաս արտասովոր համարձակ գործողությունների արդյունքում ձեռք բերված հաղթանակի:

## ՇԱՂԿՈՅԱԶՈՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 1042Թ.

Հովհաննես-Սմբատ Բագրատունու մահվանից հետո հայտարարելով, թե Հայոց արքան Բյուզանդիային է կտակել իր տիրույթները, կայսերական բանակը ձեռնամուխ է լինում «Ժառանգությանը» տիրանալու գործին:

Ցավոք, այդ վճռական պահին հայկական ազնվականության շարքերում պառակտում է սկսվում: Հայ իշխանների մի մասը, վստահելով բյուզանդացիների խոստումներին, սկսում է համագործակցել նրանց հետ:

Հայկական ուժերը կարողանում է համախմբել և գլխավորել 998թ. Ծումբի ճակատամարտի հերոս, տաղանդավոր զորավար, իշխանաց իշխան Վահրամ Պահլավունին (967-1047թթ.):

**Պատմական տեղեկանք.** «Այս օրերում Հռոմոնց (բյուզանդացիների) զորքերը չորս անգամ իրար ետևից մտան Հայոց աշխարհը, սրով, հրով ու գերությամբ անմարդաբնակ դարձրին ամբողջ երկիրը: Երբ մտորում եմ այդ աղետները, խելքս թռչում է, միտքս՝ ցնորվում և ահավոր զարհուրանքից ձեռներս դողալուց՝ չեմ կարողանում շարունակել շարադրանքս, որովհետև դառն է այս պատմությունը և անհատնում ողբերի արժանի»:

**Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Գլուխ Ժ**

1042թ. վաղ գարնանը բյուզանդական շուրջ հարյուր հազարանոց բանակը Իբերիա բանակաթեմի դուքս Միքայել Իասիտեսի գլխավորությամբ ներխուժում է Հայաստան և շարժվում դեպի Անի: Ամայացնող արշավանքի պատճառով երկրում հակաբյուզանդական տրամադրություններն աճում են, և իշխանաց իշխան Վահրամ Պահլավունու շուրջը համախմբված ուժերը ստվարանում են:

### **Ճակատամարտի վերածված արտագրոհը**

Վահրամ Պահլավունուն կարճ ժամանակում հաջողվում է մայրաքաղաքում կենտրոնացնել և հակառակորդի բանակի դեմ մարտական գործողությունների նախապատրաս-



Բյուզանդական բանակի զինվոր



**Անիի բերդապարիսպը**

տել շուրջ 30 հազարանոց կայազոր: Այդ հանգամանքը, ինչպես նաև Անիի ամուր պարիսպները սպարապետին ակտիվ պաշտպանություն վարելու հնարավորություն են տալիս:

**Պատմական տեղեկանք.** «Հռոմեների հարյուր հազարանոց զորքը համախմբվեց ընդդեմ թագավորաբնակ Անի քաղաքի և բանակեց նրա դարպասի առջև: Հայոց մնացած զորքը համախմբվեց մեծ սպարապետ Վահրամ Պահլավունու շուրջը, խնդրելով նրան պատերազմի դուրս գալ հռոմեոց զորքերի դեմ, որովհետև նրանք մեծապես անարգելով ու նախատելով էին դիմում պատերազմի»:

**Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Մասն առաջին**

Նվաճված տարածքներն ամայացնելով Միքայել Իասիտեսը ցանկանում էր հայկական կողմին վճռական ճակատամարտի դրդել, որպեսզի պաշարողական մեքենաներ չուներցող իր բանակը նախքան անառիկ Անիին հասնելը մեկ ճակատամարտով վճռի պատերազմի ելքը: Արշավանքի ընթացքում ակտիվ դիմադրության չհանդիպելով՝ նա վստահ էր, որ Վահրամ Պահլավունին խուլ պաշտպանության է անցել և «տրամադրվում» է երկարատև պաշարման, երբ պաշարումը սկսելուց ընդամենը մի քանի օր անց բացվում են Անիի Ծաղկաց դարպասները և քաղաքից դուրս է գալիս հայոց բանակը:

**Պատմական տեղեկանք.** «Հայոց գորքը, մեծ գայրույթով ու բարկությամբ լցված, գազազած գազանների նման, բոլորը միասին՝ երեսուն հազար հետևակ ու ձիավոր, դուրս գալով Ծաղկաց կոչվող դարպասով, դիմեցին մարտի և որպես կայծակ թափվեցին հոռոմոց զորքի գլխին, անխնա սրի քաշեցին և կոտորելով՝ այնքան գազազած ու ամբարտավանացած զորքերին փախուստի մատնեցին: Ախուրյան գետը արյուն դարձավ»:

**Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Մասն առաջին**

Ճակատամարտի սկզբից ևեթ իրավիճակի թելադրողը Վահրամ Պահլավունին էր: Նա մեծ արագությամբ գորքը դուրս է բերում ընդամենը մեկ դարպասից և շարունակ արտակարգով: Թեև բյուզանդական բանակի իրամանատարը հնարավորություն ուներ հետևելու հայկական զորամասերի վերախմբավորումներին, սակայն մարտի սկզբում չի հասցնում ավարտել մարտակարգի ձևավորումը:

**Հաղթանակը**

Հակառակորդի իրամանատարությունն այդպես էլ չի կարողանում միասնական մարտակարգ ձևավորել և փակել ճեղքվածքները: Ծանր պարտություն կրելով՝ բյուզանդական բանակը շուտով սկսում է նահանջել: Անկազմակերպ նահանջող հակառակորդին հետապնդող զորամասերի ցասումը զսպելու համար Վահրամ Պահլավունին ստիպված է լինում անձամբ միջամտել ու դադարեցնել մարտադաշտից ճողոպրող բյուզանդացիների ջարդը, որը բխում էր հայ զինվորականության պատվո վարքականոնի պահանջներից:

Այսպիսով, Անիի պարիսպների տակ հայկական բանակի հաղթանակը Վահրամ Պահլավունու անթերի մարտավարության և նրա գլխավորած բանակի զինվորների անձնուրացության արդյունք էր: Մինևույն ժամանակ, հաղթանակին մեծապես նպաստեց բյուզանդական բանակի իրամանատարության ապաշնորհ վարքագիծը:

Որքան էլ Ծաղկոցաձորի (Անիի մոտ) ճակատամարտը մարտավարության և ռազմական իրավունքի տեսանկյունից ուսանելի լիներ, Հայոց պատմության մեջ նրա նշանակությունն առաջին հերթին քաղաքական էր: Բյուզանդական զորքերը երկրից վճռեցին հետո՝ նույն 1042թ. Վահրամ Պահլավունին և նրա շուրջը համախմբված 30 հայ իշխանները Բագրատունյաց գահին են նստեցնում Հովհաննես-Սմբատի եղբայր Աշոտի տասնութամյա որդի Գագիկին:

## ԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ 1044Թ.

Գագիկ Բ-ն (1042-1045թթ.) հանդես է բերում ոչ միան պետական, այլև ռազմական գործչի մեծ ընդունակություններ և, ի դեպ, շարունակում է կրել «շահն-շահ» տիտղոսը: Նա կարճ ժամանակում հիմնականում լուծում է բյուզանդական կողմնորոշում ունեցող ուժերի զսպման խնդիրը և շատ թե քիչ միասնական ճակատ ձևավորում: Այդուհանդերձ, տարածաշրջանային իրադրությունը շարունակում էր մնալ բարդ:

**Պատմական տեղեկանք.** «Այն ժամանակ բարերար Աստծո կամքով հոռոմոց գորքը խաղաղվեց, հոռոմներն այլևս չպահանջեցին Անի քաղաքը և հայոց դեմ նոր պատերազմի չդիմեցին: Սուրբ Յոզու շնորհիվ, հաջողությամբ անցան Գագիկի թագավորության երկու տարիները: Այդ օրերին Գագիկ թագավորը, զորահավաք անելով, շարժվեց գնաց իր հայրենի շրջանները և բոլոր անհնազանդներին հնազանդեցրեց, թշնամիներին սաստիկ զայրույթով (երկրից) դուրս շարտեց և բազում զորքերով բանակեց Այրարատյան գավառում՝ հարավային ազգից վրեժ լուծելու նպատակով»:

Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն,  
Մասն առաջին

### Ռազմական քաղաքականությունը

Գագիկ Բ-ի հետ գրեթե միաժամանակ բյուզանդական գահին է հաստատվում Կոստանդին Թ Մոնոմախոսը (Մոնամախ, 1042-1055թթ.): Զանց առնելով կայսրությանն իրական վտանգ ներկայացնող թյուրքական ցեղերի ներխուժման վտանգը՝ գահակալման առաջին տարիներին նա ևս գլխավոր խնդիր է դարձնում իր նախորդների «բաղձանքի» իրականացումը՝ Անիին տիրանալը:

**Պատմական տեղեկանք.** «(1045թ.) սկիզբ առավ Անիի դեմ պատերազմը: Բայց նախ պատմենք, թե ինչպես եղավ, որ Անիի տոպարքեսը (ինա՛ թագավորը) հանգիստ տեղը նստած և ոչ մի արտառոց բան չարած ժամանակ, Կոստանդին կայսրը դիմեց պատերազմի<sup>1</sup>... (Հովհաննես-Սմբատի) մահից հետո իշխանությունը ժառանգում է նրա (նրա եղբոր՝ Աշոտի) որդին՝ Կակիկիոսը (Գագիկ Բ), որը խաղաղություն և զի-

<sup>1</sup> Այնուհետև պատմիչը նկարագրում է Հովհաննես-Սմբատի տխրահռչակ «կտակը», որն իբրև թե բյուզանդական կայսրերին իրավունք էր տալիս օրինական ժառանգորդից պահանջել իր թագավորությունից և այն բռնակցել կայսրությանը:

նակցություն էր պահպանում հռոմայեցիների (բյուզանդացիների) հետ, սակայն նա տիրում էր հայրենական իշխանության և չէր ուզում այն զիջել հռոմայեցիներին»:

**Սկիլիցես-Կեդրինոս<sup>1</sup>, Համառոտագրություն պատմությանց, Երկրորդ մաս**

Գագիկ թագավորը դժվարին իրադրության մեջ էր հայտնվել և հասուն պետական գործչին վայել քայլի է դիմում: Նա հոխորտացող բյուզանդացիներին ևս մեկ անգամ ամեն ինչ ծանրութեթև անելու առաջարկ է անում: Ավելին, տեսնելով, որ հարևանը պատրաստ չէ կառուցողական երկխոսության, Գագիկը հայտարարում է, որ եթե Բյուզանդիան հանդես գա տարածաշրջանային ուժերը միավորելու առաջարկով, նա պատրաստ է *նույնիսկ* ընդունել հզոր հարևանի գերիշխանությունը: Միևնույն ժամանակ, նա չի մոռանում շեշտել, որ ինքը հաղթանակած կողմի թագավորն է և իր իշխանությունը կայսրին չի զիջի:

### ***Առաջին հաղթանակը***

Քանի որ հայ ընտրանին և բնակչությունը վաղուց արդեն գիտակցում էին բյուզանդական արշավանքների ամբողջ վտանգը, ուստի երիտասարդ արքան իր ձեռնարկումներում ամենուր աջակցություն էր գտնում: Հնարավոր չի լինում կարծ ժամանակում (մեկ տարուց քիչ ավելի) իրականացնել ամբողջ ծրագրվածը, սակայն 1044թ. վաղ գարնանը, երբ բյուզանդական բանակը հերթական արշավանքն է սկսում, երկիրն ավելի պատրաստված էր հակառակորդին դիմակայելու, քան երկու տարի առաջ:

**Պատմական տեղեկանք.** «Կայսրը զորահավաք արեց, զորքը հանձնեց վեստ Միքայել Իասիտեսին, որը... գնաց կատարելու հրամանը: Կակիկոսը, իմանալով այդ մասին և տեսնելով, որ ինքը բարեկամի և դաշնակցի փոխարեն թշնամի է համարվել, ինքը ևս հավաքեց իր զորքերը և ուժերի ներածի չափով դիմադրում էր հարձակվողներին»:

**Սկիլիցես-Կեդրինոս, Համառոտագրություն պատմությանց, Երկրորդ մաս**

Բյուզանդական արքունիքն այս արշավանքը գլխավորելը ևս վստահում է ընդամենը երկու տարի առաջ նույն Անիի պատերի տակ խայտառակ պարտություն կրած Միքայել Իասիտեսին: Հավանական է՝ Կոստանդնուպոլսում հույս

<sup>1</sup> Աշխատության հեղինակը բյուզանդացի ժամանակագիր *Գեորգիոս Կեդրինոսն* է (XII դ. վերջ-XIII դ. սկիզբ): Այնպիսով նկարագրվող ժամանակաշրջանի դեպքերը (Երկրորդ մասը) *Հովհաննես Սկիլիցեսի* նույնանուն աշխատության արտագրությունն է: Հետագայում ժամանակագրությանն ավելացվել է 1057-1079թթ. ընդգրկող Երրորդ մասը, որի հեղինակի անձի մասին գիտական բանավեճերը շարունակվում են:

ուներին, որ Իբերիայի դուքսն այս անգամ կփորձի «վարձահատույց» լինել նախկին ստորացման համար: Սակայն հայոց բանակը հարձակվում է հակառակորդի վրա և նոր պարտության մատնում բյուզանդացիներին:

### **Երկրորդ հաղթանակը**


Կոստանդին կայսրը բյուզանդական զորքերի կրած երկրորդ պարտությունից հետո վերջապես հակվում է արևելյան ուղղությամբ գործող զորքերի հրամանատարին փոխելու մտքին: Նույն 1044թ. Գագիկ Բ-ի դեմ ուղարկված զորքերի հրամանատար է նշանակվում կայսեր սենեկապետը՝ ներքինի Նիկոլայոսը:

Բյուզանդական զորքերը հասնում են Անի և պաշարում այն:

Վահրամ Պահլավունու խորհրդով որոշվում է կրկնել 1042թ. հաջողություն բերած հնարքը (տե՛ս սխեմա 1): Արտագրոհին այս անգամ ևս աչքի էր ընկնում կազմակերպվածությամբ և սրընթացությամբ: Հարձակումն ավելի արդյունավետ դարձնելու համար քաղաքից դուրս գալը և պարսպից դուրս մարտակարգ ձևավորելն այնքան արագ են կատարվում, որ հակառակորդը ոչ միայն մարտակարգ շարել չի հասցնում, այլև զինվորների մեծ մասը չի հասցնում հազնել զրահները, իսկ հեծելազորի մարտիկները՝ հանդերձավորել երիվարները:


Արտագրոհի նկարագրությունից կարելի է եզրակացնել, որ հայոց սպարապետը հատող հարվածով է մասնատել հակառակորդի զորքերը (տե՛ս սխեմա 2):

Սխեմա 1



ԱՆԻԻ պաշտպանների արտագրոհը 1044թ.

Սխեմա 2



ԱՄԻՔԱՆ պաշտպանների արտագրուիչ 1044թ.

**Պատմական տեղեկանք.** «ԱՄԻ քաղաքում գտնվող հայ ժողովուրդը... մի մարդու պես ԱՄԻի դարպասից դուրս եկավ պատերազմի և հռոմոնց զորքերին փախուստի մատնեց, ջարդ տվեց և հալածական արեց, թալանեց նրանց ամբողջ ճամբարը: Հայոց զորքը մեծ հաղթանակով վերադարձավ ԱՄԻ քաղաք»:

**Մատթեոս Ուռուխյեցի, Ժամանակագրություն, Մասն առաջին**

Բյուզանդացիները ոչինչ չէին կարող հակադրել տաղանդավոր զորավարի՝ մանրուքներն անգամ հաշվի առնող մարտավարությանն ու կատաղի, սակայն կարճատև դիմադրությունից հետո սկսում են նահանջել, որը շուտով վերածվում է խուճապահար փախուստի: Մարտադաշտից ճողոպրող բյուզանդացիներին նույնիսկ չի հաջողվում իրենց հետ տանել կուտակված այն ավարը, որը հասցրել էին խլել արշավանքի սկզբում ասպատակության ենթարկված շրջաններից:

Բյուզանդական մեծաթիվ բանակների հետ պայքարի ելած հայոց տաղանդավոր զորավար Վահրամ Պահլավունին ցույց է տալիս, որ հաղթելու համար ոչ թե մեծաթիվ բանակ է պետք, այլ հաղթելու կամք և ռազմարվեստի իմացություն: Այս կարողությունը Հայոց բանակին հնարավորություն էր տալիս հաղթանակներ տանել հզոր հարևանի մեծաթիվ բանակների դեմ:

# ՓՈԹՈՐԿԱԼԻՅ՝ ՏԱՍՆԱՄՅԱԿԸ 1050-ԱԿԱՆ ԹԹ.

Կոստանդին Թ կայսրը 1045թ. կեղծ խոստումներով իր մոտ է հրավիրում Գագիկ Բ-ին և ուխտադրժորեն հրաժարվում բաց թողնել իր երկիրը: Սելջուկ թյուրքերի առաջնորդ Տուղրիլ բեգը զբաղված էր Տիգրիսի արևելյան կողմերի նվաճումով, սակայն չի ցանկանում ձեռքից բաց թողնել սկսված իրարանցումը: 1047թ. սկսած՝ Հայաստան են ուղարկվում սելջուկ-թյուրքական հրոսակախմբեր:


## 1053թ. արշավանքը

1050-52թթ. Հայաստանում հարաբերական խաղաղություն էր տիրում, որը, սակայն, անդորր էր 1053թ. փոթորկից առաջ: Հարցն այն է, որ խռովություններ էին սկսվել սելջուկյան տիրույթներում: Ապստամբած Իբրահիմ Յաննալը փախչելով ապաստանում է Գթնուշի մոտ, որը նույնպես ապստամբել էր: Տուղրիլը պարտության է մատնում Իբրահիմին և գերում նրան, սակայն Գթնուշը 60 հազարանոց զորքով փախչում է Վիրքի սահմանները, իսկ այնտեղից ներխուժում է Վանանդի (Կարսի) Բագրատունյաց թագավորության տարածքը, ավերում Կարսի շրջակայքը (տե՛ս քարտեզ 6.2):

**Պատմական տեղեկանք.** «Փրկվեցին միայն նրանք, ովքեր հասցրեցին քաղաքի վերևում գտնվող ամրոցը մտնել: (Գթնուշի) Ջորքերն ամբողջ օրը մնալով այնտեղ՝ կողոպտեցին ու քարուքանդ արին տները, հետո կրակ տալով այրեցին քաղաքը, իսկ իրենք առնելով ավարն ու գերին՝ գնացին իրենց երկիրը»:

### Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Գլուխ ԺԵ

Կարսի անառիկ միջնաբերդը գրավել չկարողանալով՝ թյուրքերը Վանանդից հեռանում են Դվինի ուղղությամբ:



Յաթաղան

Հետագայում կոտորածների «խորհրդանիշ» դարձած այս զենքը թյուրքական հրոսակների ամենատարածված զինատեսակներից էր:

## Սուրբ Մարիի «գիշերամարտը»

Մեծաթիվ հակառակորդի հետ բաց դաշտում ճակատամարտելու համար բավարար ուժեր չունեցող հայոց զորագնդերը, ամեն պահ հանկարծակի հարվածներ հասցնելու պատրաստ լինելով հանդերձ, հակառակորդից որոշ հեռավորության վրա էին գործում: Այնպես որ, երբ վերադարձի ճանապարհին Գթնուշը որոշում է գիշերել Սուրմարիում (Սուրբ Մարի), նրա բնակչները որոշում են վրեժխնդիր լինել թյուրքերից (տե՛ս քարտեզ 6.2): Ձևացնելով, թե իրենք անհանգստացած են միայն իրենց ճակատագրով, նրանք առատ հյուրասիրություն են պատրաստում Գթնուշի հրոսակների համար:

Սուրմարիի տներում գիշերելու համար «տեղավորված» թյուրքական զորախումբը, առատ հյուրասիրությունը տեսնելով, տարվում է անզուսպ կերուխումով: Սպասելով մինչև բոլոր «հյուրերը» քնեն՝ սուրմարեցիներն ու շրջակա գավառներից օգնության եկած զորագնդերը քաղաքապետ իշխանի<sup>1</sup> ազդանշանով սկսում են նրանց ջարդը:

**Պատմական տեղեկանք.** «Ճանապարհին մի մեծ փորձանք պատահեց: Գթնուշը, Անիի մոտ Մարին (Սուրբ Մարի կամ Սուրմարի- հեղ.)... ճանապարհորդի նման մտավ և բանակը տեղավորեց այնտեղ... Այս քաղաքի քաֆիր («անհավատ», այսինքն՝ քրիստոնյա) ռայիսը խաբելով Գթնուշի զինվորներին, յուրաքանչյուրին հյուրասիրեց մի բնակարանում: Ռայիսի գաղտնի հրամանով՝ յուրաքանչյուր տանը հյուրասիրվող մահմեդական զինվորին առատ ուտելիք և զինի տալուց հետո՝ զինվացուցին: Ուշ գիշերը բոլորը քնելու ժամանակ, հատուկ նշանի վրա տանտերերը 60 հազար հյուր զինվորներին առանձին-առանձին սպանեցին: Առավոտյան Գթնուշը սարսափած և վշտահարված տեղի ունեցածից, իր շուրջը գտնվող հրամանատարների ուղեկցությամբ, հետապնդվելով հայերի կողմից, քառասմբակ փախուստի է դիմում»:

**Աբու Նասր Բուրհան աղ-Պին, Անիս ալ-Կուլուբ**

Կոտորածն ավարտվում է լուսադեմին, երբ Գթնուշի շուրջը համախմբված ոչ մեծաթիվ մարտիկների խումբն արդեն փախել էր Սուրմարիից: Սուրմարեցիները հետապնդում են սկսում, սակայն Գթնուշին հաջողվում է ճողոպրել Հայաստանից:

Սուրմարեցիները թյուրքական զորքը ոչնչացրել էին մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ տարածաշրջանի պետությունների բանակները չէին կարողանում նույնիսկ հաջող պաշտպանություն կազմակերպել, իսկ շատ թե քիչ նշանակալի հաղթանակ տանելու դեպքերը եզակի էին:

<sup>1</sup> Ցավոք, պատմիչները չեն նշում հերոս հայորդու անունը:

# ՏՈՒՂՐԻԼԻ ԶՈՐՔԵՐԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԱԶԿԵՐՏԻ ՄՈՏ 1054Թ.

Տուղրիլը 1054թ. Ատրպատականից ներխուժում է Հայաստան և իր հսկայական բանակը կենտրոնացնում Մանազկերտի մոտ (տե՛ս քարտեզ 6.2): Քաղաքի դիրքը (Հայաստանի գրեթե կենտրոնում) երկիրն ասպատակելու համար մեկնակետի վերածելու հնարավորություն էր տալիս: Սակայն թյուրք զորավարը Մանազկերտի տակ մնում է ընդամենը երեք օր և այն գրավել չկարողանալով՝ արշավում է դեպի Ավնիկ և Կարին: Մինչդեռ քաղաքի բնակիչները պատրաստ չէին հարձակմանը, և եթե պաշարումը երկարեր, զուցեն սելջուկները հաջողության հասնեին:

**Պատմական տեղեկանք.** «Եթե նա (Տուղրիլը) տասն օր շարունակեր պաշարումը, ապա քաղաքն առած կլիներ. բայց Աստված... նրա մտքերը մոլորեցրեց. երեք օրից հետո ամբողջ բանակով շարժվելով՝ գնաց իջավ... Ավնիկ կոչված անառիկ ամրոցի մոտ. այնտեղ տեսնելով մարդկանց ու անասունների բազմություն և միայն նայելուց զգալով, որ անառիկ է, ոչ մի բան չձեռնարկեց և նրա մոտով անցնելով՝ եկավ... այն բարձունքի վրա, որ նայում է դեպի Կարին, տեսավ, որ քաղաքը զինված է ամեն պատրաստությամբ. երկար ժամանակ նայելուց հետո կրկին ետ դարձավ: Իսկ Մանազկերտի բնակիչները, քանի որ հենց հնձի ժամանակ էլ էր, առանց վախենալու դուրս գալով քաղաքից՝ մարդկանց ու անասունների համար առատ պաշար պատրաստեցին: Եվ մինչ Սուլթանն<sup>1</sup> (Տուղրիլն) այս ու այն գործն անելուց հետո նորից կվերադառնար այնտեղ, նրանք արդեն անհոգ ապահովված էին»:

**Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Գլուխ ԺԶ**

Ամենուր թյուրքերը համառ դիմադրության են հանդիպում (տե՛ս քարտեզ 6.2): Առանձնապես հաջող էր Վանանդի Գագիկ Բագրատունի արքայի (1029-1065թթ.) կազմակերպած դիմադրությունը:

Մանազկերտի, Ավնիկի, Կարինի ու Կարսի մոտ կրած անհաջողությունները ցրում են մեր երկիրը «մեկ շնչով» նվաճելու նրա պատրանքը, սակայն թյուրք զորապետը համառություն է ցուցաբերում և վերադարձի ճանապարհին որոշում է երկրորդ անգամ պաշարել Մանազկերտը:

<sup>1</sup> 1054թ. Տուղրիլը դեռևս սուլթան չէր, նա այդ տիտղոսը խալիֆայից ստացավ միայն 1058թ.՝ Բաղդադ գրավելուց հետո:

## Արշավանքի վերջնական ձախողումը

Քաղաքի պաշտպանության ղեկավարը բյուզանդական հայազգի անվանի ռազմական գործիչ Բարսեղն էր՝ Ուռհայի (Եղեւսիա) կառավարիչ Ապուքայի որդին<sup>1</sup>: Բարսեղն աննկուն զորավարի անուն է վաստակել, և պատահական չէ, որ նրա զորավարական տաղանդով հիացող պատմիչները միաբերան դրական խոսքեր են շռայլում նրա հասցեին:

Մանազկերտի մոտ կենտրոնացնելով իր մեծաքանակ զորքը՝ Տուղրիլն անընդհատ գրոհներով ձգտում էր ուժասպառ անել քաղաքի պաշտպաններին: Առաջին անհաջող գրոհներից հետո հակառակորդը սկսում է կիրառել պաշարողական միջոցներ, որոնք նրանք խլել էին նվաճված երկրների բանակներից կամ բյուզանդացիներից: Բացի այդ, լայնորեն կիրառվում էր ամրոցի պատերի տակ անցքեր փորելը:

Այս իրավիճակում պաշարվածներն անգնահատելի օգնություն են ստանում Տուղրիլի «մտերիմ» մարդկանցից մեկից, որը թշնամու ճամբարից շարունակաբար խիստ կարևոր տեղեկություններ էր հաղորդում մանազկերտցիներին:

**Պատմական տեղեկանք.** «Մի ամիս (Տուղրիլը) քաղաքը պաշարած պահեց. օրը երկու անգամ՝ մեկ լուսանալիս և մեկ էլ երեկոյան, կռվի բռնվելով քաղաքի հետ: Բայց այստեղ դու տես Աստծո իմաստությունը, թե ինչպես գիտի հակառակներով էլ հակառակի համար օգուտ առաջ բերել. մինչդեռ քաղաքն այս ժամը դրության ու վտանգի մեջ էր, մի բարի միտք է ծնեցնում մի իշխանի մեջ, որը Սուլթանի ամենամտերիմներից էր. սա Սուլթանի մտադրությունները կամ բանավոր, կամ գրավոր հայտնում էր քաղաքին: Շատ անգամ թղթի վրա գրելով և այն նետի սլաքին կապելով՝ պատերազմի կարգով մոտենում էր պարսպին ու նետը քաղաք ձգում և դրանով կռվի բոլոր հանգամանքները հայտնում էր նրանց»:

**Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Գլուխ ԺԶ**

«Բարի միտք» ունեցող «իշխանի» օգնությամբ մանազկերտցիները ժամանակին տեղեկանում են նաև պարսպի տակ հակառակորդի ական փորելու մասին, և իրենք էլ քաղաքի կողմից փորելով՝ գտնում են փոսն ու ոչնչացնում քաղաք ներթափանցել ցանկացող թյուրքերին: Բարսեղ Ապուքայը նրանց հրամանատարին կախաղան է բարձրացնում, իսկ դիակը պարսպից ի ցույց դնում Տուղրիլին: Դա հակառակորդի մարտիկների վրա հոգեբանական ճնշող ազդեցություն է ունենում:

<sup>1</sup> Բարսեղ (Վասիլ) զորավարի մասին տե՛ս հաջորդ ակնարկներում:

## Միջնադարյան «հակամարտկոցային» պայքարը և հաղթանակը

Պարսպակործան և ամրոցների պաշտպանական մի ամբողջ խումբ մեքենաների նկարագրություն կա Մանազկերտի պաշտպանության վկայություններում: Մասնավորապես, ուշագրավ է երկու կողմերի քարանետ մեքենաների «մեքենարտը», որը մի քանի օր տևելով՝ Մանազկերտի մեկամսյա պաշտպանության կարևոր փուլերից է դառնում:

**Պատմական տեղեկանք.** «Դրանից (անհաջող գրոհից) հետո մեքենաներ պատրաստելով՝ նրանցով էին պատերազմում: Բայց մերոնցից մի ծեր քահանա, որ քաջատեղյակ էր այդ արհեստին, ինքն էլ իր փիլիկվանը շինեց. երբ նրանք քարը մեքենայի պարսատիկի մեջ դնելով դեպի քաղաք էին ձգում, քահանան իր քարը ուղիղ դեպի նրանց քարն էր արձակում, որը դիպչելով նրանց քարին՝ իրենց վրա էր գցում»:

**Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Գլուխ ԺԶ**

Թյուրքական բանակում քրթմնջոցներ են սկսվում: Ցեղապետերը Հայաստանի գյուղական շրջաններում նշանակալի ավար էին ձեռք բերել: Նրանց առանձնապես չէր հուզում արշավանքի ռազմական, առավել ևս, քաղաքական հաջողության խնդիրը, և ցանկանում էին օր առաջ ավարտել արշավանքը: Տուրքիլն էլ գուցե դեմ չէր վերադառնալ Ատրպատական, սակայն Մանազկեր-



Ավնիկի բերդն այսօր

տի պատերի տակ պարտությունը կարող էր հեղինակագրկել նրան և, ի տարբերություն իր «գորապետերի», նա ցանկանում էր արշավանքն ավարտել Մանազկերտի գրավումով:

Տուղրիլը հրամայում է Բաղեշից բաբան բերել: Մանազկերտցիները մինչ այդ էլ ուժերի գերագույն լարումով էին հետ մղում թշնամուն, իսկ բաբանի տեղ հասնելուց հետո հայտնվում են ծանր իրավիճակում: Ակնհայտ էր, որ հակառակորդը վճռական գրոհի է պատրաստվում:

**Պատմական տեղեկանք.** «Ապա այլ պատերազմական գործիք պատրաստելով, որը իրենք բաբան էին կոչում, որը շատ զարհուրելի էր այնպես, որ, ասում էին, չորս հարյուր սպասավորներ ուներ, որոնք պարաններն էին քաշում և վաթսուն լիտր<sup>1</sup> դնելով պարսատիկի մեջ՝ դեպի քաղաքն էին ձգում... Եվ երբ այս այսպես կարգավորեցին, արձակեցին մի քար, որն ուժգնորեն դիպչելով պարսպին փլցրեց և անցք բացեց... Հաջորդ օրը առավոտյան դելմիկների<sup>2</sup> զորավարը... հարձակվելով բացվածքի ուղղությամբ ցանկանում էր ուժով ներս մտնել... Պարսպի վրա եղողները երկաթի ճանկը ձգելով՝ նրան բռնեցին ու քաշելով գեցեցին պարսպից ներս: Նրա զորքերն այդ տեսնելով՝ տրտմությամբ վերադարձան իրենց բանակը, իսկ քաղաքի համար դա եղավ մեծ ուրախություն»:

**Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Գլուխ ԺԶ**

Բաբանի արձակած արկն անցք է բացում ամրոցի պատին, որով շտապում են ներս խուժել դեյլամիների զորագնդերը: Սակայն նրանց գրոհը հաջողվում է հետ մղել, իսկ իր մարտիկներին նոր գրոհի տանելու համար ոգևորելու նպատակով պայքարի ամենաթեժ տեղամասը մտած ցեղապետը չի նկատում ճանկիչը, որով քաղաքի պաշտպաններին հաջողվում է նրան գերել: Մարտի ամենաթեժ պահին այսպիսի սխրանքի ականատես եղած Տուղրիլի զորամասերը խուճապի են մատնվում և հերթական անգամ փախչում:

Հաղթանակը նոր ոգևորություն է առաջ բերում մանազկերտցիների շրջանում, որոնք սկսում են իրավիճակից ելքեր փնտրել: Եթե կարճ ժամանակում բաբանը չօչնչացվեր, նրա արձակած արկերի ավերածությունները ողբերգական կարող էին լինել: Բարսեղ իշխանը որոշում է բաբանը օչնչացնելու համար կանավոր մարտիկներից մեկին ուղարկել հակառակորդի ճամբարը: Այդպիսով մշակվում է բավական հանդուգն դիվերսիոն գործողություն:

Կանավորության սկզբունքով ընտրությունը կանգ է առնում բյուզանդական

<sup>1</sup> Ըստ Անանիա Շիրակացու, մեկ լիտրը հաշվվում է 326,4 գրամ: Հետևաբար, վաթսուն լիտրը կլինի մոտ 20 կգ: Սակայն XI դարում փիլիկվաններով (փիլիկոններով) կարողանում էին անհամեմատ ավելի ծանր արկեր արձակել:

<sup>2</sup> *Դեյլամիները* կան *դելմիտները*, որոնց մեր պատմիչները դելմիկներ են կոչում, իրանական ցեղ էին, որոնք բնակվում էին Կասպից ծովից դեպի հարավ-արևմուտք:

մի զինվորի թեկնածության վրա: Վերջինս բանակցությունների գնալու պատրվակով դուրս է գալիս քաղաքից ու բաբանի մոտով անցնելիս կարողանում նավթով ու ծծմբով պատրաստված դյուրավառ խառնուրդով այրել բաբանը: Ուշագրավ է, որ վարժ հեծյալ լինելով՝ զինվորը հասցնում է գործած սխրանքից հետո Մանազկերտ վերադառնալ:


Դժվար է գերագնահատել այս դիվերսիոն գործողության ազդեցությունը Մանազկերտի տակ ծավալված մարտական գործողությունների հետագա ընթացքի վրա: Թյուրքական բանակում քարանետ մեքենաների վարպետներ չկային, այնպես որ այս անհաջողությունից հետո նրանք չէին կարողանալու կարճ ժամանակում նոր բաբան պատրաստել:

**Պատմական տեղեկանք.** «Սուլթանը, սաստիկ զայրացած, նորից ձեռնարկեց գետնափոր անելուն, մտադիր լինելով պարիսպը տապալել, բայց սրտապնդված քաղաքացիները նրա բոլոր մեքենայությունները բանի տեղ չէին դնում: Երկաթե կեռ սարքերով նրանք թշնամու բոլոր փորողներին դուրս էին քաշում և սպանում: Սուլթանը, տեսնելով դա, խայտառակ եղած վերջ տվեց գործին»:

**Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Մասն երկրորդ**

**Պատմական տեղեկանք.** «Սուլթան Թուրքիլբեկը (1054թ.) արշավանքի ընթացքում մեծ գործեր կատարեց և շատ կողոպտեց, սպանեց, գերեվարեց... ապա, երբ ձմեռը վրա հասավ, վերադարձավ Ատրպատական, առանց Մանազկերտը գրավելու»:

**Իբն ալ-Ասիր**



**Քարանետ մեքենաները միջին դարերում պաշարողական ամենագորեղ միջոցն էին: Սակայն, եթե դրանց կիրառումը չէր էլ հանգեցնում ամրոցի գրավման, ապա հոգեբանական ճնշող ազդեցություն անպայման ունենում էր:**

Մանազկերտի հերոսական պաշտպանությունը թյուրքական հրոսակախմբերի դեմ հայ ռազմարվեստի փայլուն վկայություններից է: Ռազմական տաղանդավոր գործիչ Բարսեղ Ապուքապի գլխավորությամբ փոքրաթիվ կայազորը և քաղաքի ամբողջ բնակչությունը մեկ ամիս շարունակ դիմադրում էին բազմաթիվ բանակների պարտության մատնած և մի քանի տարում Միջին Ասիան ու Իրանական բարձրավանդակը նվաճած մեծաթիվ բանակին:

Մանազկերտի տակ տարած հաղթանակը Հայաստանի համար կարևոր նշանակություն ունեցավ, քանի որ Տուղրիլ բեգը ստիպված էր հանգիստ թողնել մեր երկիրը և պատերազմել Միջագետքում ու Պարսկաստանի հարավային կողմերում:

## ԱՐԾՐՈՒՆԻ-ՉԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՂՄԸ

Չաքարյանների հռչակավոր իշխանական տան մասին տեղեկություններին հանդիպում ենք XIդ. կեսերի պատմության շարադրանքներում, երբ Մեծ Հայքի հարավային՝ Կորճայք նահանգի Կարթունիք գավառից հյուսիսային՝ Գուգարք նահանգի Տաշիր-Չորագետի թագավորությունն է տեղափոխվում Խոսրով Արծրունին իր տոհմով:

**Պատմական տեղեկանք.** «(Արծրունիները) տեղափոխվել և եկել էին Չորագետի թագավորների մոտ... արժանացել էին պատիվների. իբրև բնակության տեղ նրանց տրվել էր Խոշորնին և, որովհետև խիստ քաջ էին՝ առաջացան օրըստօրե դիրքով ու պատվով»:

**Վարդան Վարդապետ, Հավաքումն պատմության, գլ. ԶԲ**

Խոսրով իշխանը հաստատվում է Չորագետում և ճանաչում Տաշիր-Չորագետի թագավոր Կյուրիկե (Գուրգեն) Բ Բագրատունու (1048-1089թթ.) գերիշխանությունը: Նա որպես կալվածք ստանում է Խոշորնի (Խոժոռնի) գավառակը՝ համանուն ամրոցով:


Արծրունիների տոհմի այս ճյուղի բարձրացումը շարունակվում է 1120-ական թթ. սելջուկների դեմ վրաց Բագրատունիների մղած պայքարի ծավալման պայմաններում: Շարունակելով ապրել իրենց հայրենիքում՝ Արծրունիները վերջիններիս հետ համատեղ պայքար են մղում ընդդեմ սելջուկների<sup>1</sup>: Խիզախությամբ աչքի է ընկնում Խոսրով իշխանի որդին՝ բարձրահասակ Չաքարիան (Չաքարե), որի անունով էլ տոհմը սկսում է կոչվել Չաքարյան:

Գեորգի Գ-ի օրոք (1156-1184թթ.) աչքի ընկնող հայ իշխաններից մեկն է դառնում Չաքարիայի որդի Սարգիսը՝ «Մեծ» պատվանունով<sup>2</sup>: Նա նշանակալի մասնակցություն է ունենում հայ-վրացական զորքերի Շիրակի արշավանքներին (1161թ. և 1174թ.) և դառնում հայկական զորքերի սպարապետ (տե՛ս քարտեզ 6.3): Սարգիսը ներգրավվում է Ատրպատականի ամիրայության Ելտկուզ աթաբեկի (1148-1172թթ.) զորքերի դեմ մի քանի տարի շարունակվող պատերազմին:

<sup>1</sup> Դավիթ Ռ Շինարար թագավորի գահակալության (1089-1125թթ.) վերջին տարիներին:

<sup>2</sup> Նույն պատվանվանն է արժանացել նաև Սարգիս Չաքարյանի որդին՝ Չաքարիան:

ԱՄԻ ԱՋԱՏԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ 1161 Թ. ԵՎ 1174 Թ.



## ՍԱՐԳԻՍ ՄԵԾԻ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ 1185-1186ԹԹ.

Պարթևահասակ և լայնաթիկունք լինելու և անսովոր ֆիզիկական ուժի պատճառով Բագրատունյաց արքունիքում Սարգիս Ջաքարյանը ստանում է «Երկայնաբազուկ» (վրացերեն՝ Մխարգրծելի) պատվանունը: Ի դեպ, վրաց ժամանակագիրների մի մասը, որոնք անհրաժեշտ չափով ծանոթ չէին Ջաքարյան տոհմի պատմությանը, Սարգսի որդիներին ևս Երկայնաբազուկ են անվանում՝ դրանով փոխարինելով նրանց տոհմանունը:

1177թ. Իվանե Օրբելու խռովության ճնշմանը հաջորդած տարիներին Ջաքարյանները դառնում են վրացական թագավորության հայկական ամենաազդեցիկ իշխանական տոհմը: Նրանց դերը հատկապես բարձրանում է Գեորգի Գ-ի դստեր՝ Թամար թագուհու գահակալության տարիներին (1184-1213թթ.): Սարգիսը 1185թ. նշանակվում է նաև վրաց զորքի սպարապետ (ամիրսպասալար): Նա ճանաչվում է ոչ վաղ անցյալում Տաշիր-Ձորագետի Բագրատունի թագավորներին պատկանող և նրանց մայրաքաղաքի շրջակա գավառն ընդգրկող տարածքների տերը և դառնում ամենահեղինակավոր իշխաններից մեկը<sup>1</sup>:

### Հաղթանակների ռազմավարությունը

1185-1186թթ. շրջակա թյուրքական զորքերի դեմ իրականացրած մի քանի հաջող արշավանքներից հետո սպարապետը ձեռնամուխ է լինում հարձակողական ռազմավարության մշակմանը: Նոր հայեցակարգի մշակմանը, ամենայն հավանականությամբ, մասնակցել են նաև Ջաքարեն ու Իվանեն: Ըստ այդմ, նախատեսվում էր հարձակում ծավալել հարավարևելյան, հարավային, հարավարևմտյան և արևմտյան ուղղություններով և ազատագրել Հայաստանի մեծ մասը: Ռազմավարության առանցքը կազմում էր մեկ խնդիր. ազատագրումն իրականացնել այնպես, որպեսզի բացառվեն տարածքները վերադարձնելն ու տեղական բնակչությունից թյուրք ամիրաների վրեժխնդրությունները:

Որոշվում է հարձակումն իրականացնել մեկ գլխավոր և մեկ կամ մի քանի աջակցող հարվածների տեսք ստացող *ալիքածև առաջխաղացումներով*: Ակնկալվում էր, որ նույն պատերազմաշրջանի ընթացքում տարբեր ուղղություններով հասցվող մի քանի հարվածների շնորհիվ աջակցող հարվածները հնարավորություն էին տալու գլխավոր հարվածներին զուգընթաց տարածքներ ազատագրել: Ապա նաև, հակառակորդի ուշադրությունը գլխավոր հարվածների

<sup>1</sup> Հայկական հողերի ազատագրմանը զուգընթաց՝ աճում էին վրացական բանակի կազմում գործող հայկական զորագնդերը, որոնք անվերապահորեն ենթարկվում էին Ջաքարյաններին: Արդեն 1170-ական թթ. վերջերին հայոց զորագնդերն առաջնորդող Սարգիս Մեծի իշխանության ներքո ավելի քան 20 հազարանոց ուժեր կային:

ուղղություններից շեղելով, նրան զրկելու էին իրադրությանը համարժեք քայլեր ձեռնարկելու հնարավորությունից:

1187թ., երբ ավարտվել էր ռազմավարության մշակումն ու սկսվել էին արշավանքների նախապատրաստական աշխատանքները, սպարապետը մահանում է: Նրան փոխարինած Գամրեկել Թորեցին իր ծրագրերն ունենալով՝ հետաձգում է այս նախագծի իրականացումը: Աննախադեպ հզորացման շրջան թևակոխած Վրաց թագավորությունը, կարծես, խուսափում էր ստանձնել տարածաշրջանային առաջատարի դերը:



**Չայ ծանրագեն հեծյալ**

## ԶԱՔԱՐԻԱ ՄԵԾ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ 1208Թ. ԵՎ 1212Թ.

Կիլիկիայում Լևոն Բ-ի գահակալության տարին (1187թ.) նշանավորվում է ևս մեկ կարևոր իրադարձությամբ. Զաքարյան տոհմի առաջնորդությունը ստանձնում է Սարգսի որդի Զաքարիան: Զաքարյան եղբայրներն էլ ավելի են ամրապնդում իրենց դիրքերը Բագրատունիների արքունիքում:

**Պատմական տեղեկանք.** «Լևոն Հայոց արքայի թագավորության ժամանակ Արևելքում ապրում էին երկու եղբայրներ, բարեպաշտ Սարգիս իշխանի որդիները... առաջինի անունն էր Զաքարե և երկրորդինը՝ Իվանե. սրանք քաջ սղամարդիկ էին ու հզոր էին իշխանությամբ և արժանացել էին պատիվների»: **Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 122**

1191թ. Իվանեն նշանակվում է արքունի վեզիր (մսախուրթ-ուխուցես)<sup>1</sup>, իսկ մեկ տարի անց Զաքարիան հայ-վրացական զորքերի սպարապետ է դառնում: Եվ այժմ Զաքարիան ձեռնամուխ է լինում հոր հեղինակած ռազմավարական ծրագրերի իրականացմանը:

**Պատմական տեղեկանք.** «Եվ այդ ժամանակ մահացավ ամիրսպասալար Գանրեկելը (Գամրեկել Թորեցին)... Այնժամ շնորհեցին ամիրսպասալարությունը Զաքարիա Երկայնաբազուկին՝ Սարգիս ամիրսպասալարի որդուն, որը նստում էր հայոց թագավորի տեղում և տերն էր Լոռու: Կտրիճին, որ արժանի էր սպարապետության, ավելացրեցին նաև Ռուսթավ քաղաքը<sup>2</sup>»: **«Թագակիրների պատմությունն ու գովարանությունը», էջ 394**


### Հյուսիսային և արևելյան Հայաստանի ազատագրումը

Ատրպատականի ու Գանձակի ամիրայության աթաբեկ (խնամակալ) Աբու-Բաքրի (1191-1210թթ.) 1195թ. իրականացրած արշավանքն ավարտվում է Շամքոր ու Գանձակ քաղաքների միջև տեղի ունեցած վճռական ճակատամարտում հայ-վրացական բանակի հաղթանակով: Եռանդուն հետապնդումը հնարավորություն է տալիս ամրանալ Լեռնային Արցախում, ինչպես նաև ռազմավարական բազա ստեղծել Արագածոտնում:

<sup>1</sup> 1212թ. Զաքարեի մահից հետո Իվանեն ստանձնում է արքունի խնամակալի՝ աթաբեկի պաշտոնը, իսկ արքունի վեզիր է նշանակվում հորեղբոր՝ Վահրամի որդի Զաքարեն:

<sup>2</sup> Մինչ այդ քաղաքը և Արագվի գետի հովիտը եղել էին Մահկանաբերդի տեր Ամիր-Քուրդ Արծրունու կալվածքը:

Ուղեվայան գործողութիւնները 1195-1196 թթ.



**Պատմական տեղեկանք.** «Բերեցին նվեր, ընծա ու գանձ անթիվ, մարդիկ (տիրակալ-ազնաուրից մինչև ծառա) 12.000, հովազ՝ 40, ձի՝ 20.000, ջորի՝ 7.000, ուղտ՝ 15.000: Ո՞վ կարող էր հաշվել այդ դրոշմերը, բազում ամանեղենը, ոսկին ու կտորեղենը»:

**«Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը», էջ 411-412**

Ռազմավարական նշանակության հաջողությունը հնարավորություն է տալիս մի քանի ուղղություններով ճառագայթածն հարձակման անցնել Դաշտային Արցախում, Սևանա լճի ավազանում, Արագածոտնում, Շիրակում, Արարատյան դաշտում, իսկ այնուհետև, 1204/05թթ. Բասենի ճակատամարտում կասեցնել Չորրորդ խաչակրաց արշավանքի ձախողումից ոգևորված Իկոնիայի սուլթանության զորքերի առաջխաղացումն ու ազատագրել Վանանդը, Արցախն ու հարևան շրջանները (տե՛ս քարտեզ 6.4):

### **Ներխուժումը**

1207թ. արշավանքի երկրորդ փուլը ևս հաջող էր հայկական կողմի համար: Ազատագրված տարածքներում ամրանալու նպատակով Ջաքարիան տարեվերջին դադարեցնում է զորքի առաջխաղացումը: Այդ պահին տեղեկություն է ստացվում նաև Թամար թագուհու ամուսին Դավիթ Սոսլանի մահվան մասին: Կենտրոնական Հայաստանն ազատագրելու նպատակով մեծ արշավանքի նախապատրաստումով զբաղված Ջաքարիան և Իվանեն միայն 1208թ. գարնանն են կարողանում ժամանակ գտնել ու մեկնել Գեգութ՝ ամուսնու մահը սզացող Թամարին ցավակցելու:


Ջաքարիայի բացակայության մասին տեղեկանալով՝ Հայաստան է ներխուժում Արտավեսի (Արդաբիլ) ամիրան (տե՛ս քարտեզ 6.5): Գիտակցելով, որ Ջաքարիան հայկական հողերի ասպատակություններն անհետևանք չի թողնի, ամիրան որոշում է հարվածը հասցնել հայոց վերականգնված պետության մայրաքաղաք Անիի ուղղությամբ և արագ հեռանալ՝ իր հետ տանելով այնքան ռազմավար, որքան կկարողանա:

**Պատմական տեղեկանք.** «Թագավորը (Թամար թագուհին) Գեգութում էր, որովհետև սուրբ պատ էր: Երկու Երկայնաբազուկներն էլ թագավորի մոտ էին: Եվ երբ իմացավ այս մասին Արդաբիլի (Արտավես) սուլթանը<sup>1</sup>, քրիստոնյաների նկատմամբ թշնամությունից մղված, կոչեց իր զորականներին, եկավ ու ավերեց Անին, որովհետև գիտեր, որ Երկայնաբազուկները տանը չեն»:

**«Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը», էջ 438**

<sup>1</sup> Հայտնի է, որ այս ժամանակ Արդաբիլում սուլթան չկար: Հեղինակն ամիրային է սուլթան կոչում:

ՈՒՋԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1208Թ.



Ընդունված ռազմավարության պահանջների համաձայն՝ առանց միասնական հրամանատարության մնացած հայկական զորամասերը խուսափում են ընդհարման մեջ ներքաշվելուց և միանում են մոտակա ամրոցների կայազորներին ու պատրաստվում դիմադրության: Գիտակցելով, որ հայկական զորագնդերի միավորումը բարդագույն խնդիրների առջև կարող է կանգնեցնել իրեն, ամիրան առաջխաղացումն արագացնելու նպատակով հրամայում է շրջանցել ճանապարհի ամրությունները: 1208թ. ապրիլին հակառակորդը հանկարծակի հայտնվում է մայրաքաղաքի պատերի տակ ու գրավում այն:

Յոյակերտ եկեղեցիներով հռչակված Անիի ավերումն իրականացվում է առանձնակի դաժանությամբ: Վայրագությանը զոհ է գնում ավելի քան 12 հազար մարդ:

### ***Առաջին պատասխանը***

Խուսափելով հայկական զորագնդերի կենտրոնացումից և պատասխան միջոցառումներից՝ ամիրան հեռանում է իր երկիրը: Ըստ նրա, ավերված մայրաքաղաքը բավարար ահազանգ էր դառնալու Ջաքարյանների համար, որոնք Անիի վերանորոգումով զբաղվելով՝ դադարեցնելու էին առաջխաղացումը:

**Պատմական տեղեկանք.** «Եվ Երկայնաբազուկները գնացին Անի ու սկսեցին պատրաստվել... Քարթլեցիներին չտարան (արշավանքի), որ Արդավիլում եղողները գլխի չընկնեն: Հավաքվեցին Անիում ու շարժվեցին դեպի Արդավիլ: Անցան Գելաքունը (Գեղարքունիքը) և իջան Սիսիան, անցան Խուլափրիդ կամուրջը<sup>1</sup> և ուղղվեցին Արդավիլ: Այնպիսի ժամ ընտրեցին, որ երբ լուսանար, կլինե՞ր «աիդ», որ է նրանց գատիկը, այդ գիշերը պաշարեցին Արդավիլը»:

**«Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը», էջ 438-439**

Հանկարծակիության հասնելու տեսանկյունից պահը ճիշտ էր ընտրված: Համարելով, որ Անիի արշավանքի հետևանքները վերացնելը հայկական կողմից որոշակի ժամանակ է պահանջելու, իրեն «ապահովագրած» ամիրան պատրաստվում էր վայելել ձեռք գցած ռազմավարը, երբ Հայոց բանակը սկսում է պատասխան արշավանքը: Հայկական կողմն այնքան մեծ արագությամբ է առաջ շարժվում, որ հակառակորդի հետախույզները չեն հասցնում նույնիսկ տեղեկացնել ամիրային սկսված արշավանքի մասին: Պարզվում է, որ հայկական վերականգնված պետության ուժերն այնքան կենսունակ էին, որ ստացված վերքերն անոքելուն զուգընթաց ի վիճակի էին մեծամասշտաբ հարձակողական գործողություն իրականացնել:

<sup>1</sup> Արաքսի վրայով գցված նշանավոր կամուրջներից մեկը:

**Պատմական տեղեկանք.** «Երբ ձայն տվեց նրանց պիղծ հավատի ձայնարկուն և հաճախեց մուեզինների կոչը, Երկայնաբազուկները խթանեցին ձիերը, ամեն կողմից ներխուժեցին և առանց կռվի ձեռք զցեցին քաղաքը (Արդաբիլը), և իրեն՝ սուլթանին, նրա կանանց ու զավակներին, և սուլթանի ու քաղաքի ողջ հարստությունը»:

**«Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը», էջ 439**

Առավոտյան Արդաբիլի դարպասները բացելուց քիչ անց, հանդուգն գրոհով հայոց հեծյալ զորամասերը ներխուժում են քաղաք, որի ապշահար եղած կայազորը չի կարողանում պատշաճ դիմադրություն ցույց տալ մեծաթիվ հայկական բանակին: Հայոց բանակը գրավում է Արդաբիլը և գերում ամիրային, նրա կանանց ու զավակներին: Հայկական կողմն Անիում հակառակորդի կազմակերպած կոտորածին նույն կերպ է պատասխանում. Արդաբիլի մզկիթներում սպանվում է 12 հազար մարդ:

Ջաքարեն պարտված հակառակորդից պահանջում է վերադարձնել Անիից թալանածը, որից բացի, որպես ռազմատուգանք խլում է նաև ամիրայի ու նրա պալատականների ամբողջ հարստությունը: Ռազմավարն այնքան շատ էր, որ արդեն իսկ ժամանակակիցները լեգենդներ էին հյուսել այս մասին:

**Պատմական տեղեկանք.** «Այնպես լցվեցին անթիվ հարստությամբ, ակով ու մարգարիտով, ոսկով ու արծաթով, ոսկյա ու արծաթյա անոթներով, հագուստով, գորգով ու ամեն տեսակ հարստությամբ այդքան հարստացած քաղաքի, որ պատմելը, իսկապես դժվար է: Լիացան ձիերով, ջորիներով, ուղտերով: Նրանց ունեցվածքը նրանց իսկ գրաստների վրա հազիվ բարձելով, բռնեցին ետդարձի ճամփան»:

**«Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը», էջ 439**



Խուրափերին (Քարավազ) կամուրջը

### **Երկրորդ պատասխանը**

1208թ. հունիսին (Արդաբիլից վերադառնալուց գրեթե անմիջապես հետո) Ջաքարիան իրականացնում է այն հարձակումը, որը նախապատրաստվում էր զարնանը: Այս անգամ հարձակման թիրախը Խլաթը զավթած (1207թ.) Յյուսիսային Միջագետքի Այուբյան ամիրայությունն էր: Հայկական զորագնդերն ազատագրում են Բագրևանդին իր շրջակայքով, հարձակումն ուղղում դեպի Տուրուբերանի հյուսիսային գավառները: Այստեղ ևս դիմադրությունը հաղթահարվում է, և զգալի տարածքներ են ազատագրվում: Հաջորդ տարի նոր հարձակման ուղղություն են ընտրվում Մանազկերտն ու Արճեշը: Խլաթի պաշարման ընթացքում Իվանե Ջաքարյանն անզուլուրյան պատճառով գերվում է, որը Ջաքարիային հարկադրում է դադարեցնել արշավանքը և եղբորն ազատելու նպատակով Աուհադ ամիրայի հետ խաղաղություն կնքել (տե՛ս քարտեզ 6.6):

### **Երրորդ պատասխանը**

1211թ. Ջաքարիան ևս մեկ արշավանք է իրականացնում դեպի Ատրպատական: Այն հայոց ռազմարվեստի փայլուն օրինակներից մեկն է և պսակում է Ջաքարե շահնշահի քսանամյա զորավարական գործունեությունը: Նախճավանի ու Ջուղայի վրայով հայոց բանակը շարժվում է դեպի Արդաբիլ:


**Պատմական տեղեկանք.** «Վեց հարյուր վաթսուն թվականին (1211/1212թթ.) վերցրին (Ջաքարիան և Իվանեն) նաև Սյունիքը, Որոտնը, Բորոտանը, Բղենը, Բարկուշատը<sup>1</sup>: Թեպետև դա տեղի ունեցավ տարբեր թվականների, սակայն բոլորն էլ նրանք ու իրենց որդիները գրավեցին և մեր երկիրն ազատագրեցին սելջուկ-թուրքերի լծից»:

**Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, գլ. 42**


Մարանդը գրավելով՝ Ջաքարիան բանակը բաժանում է մի քանի մասի և կարճ ժամանակում գրավում Մարանդի ամբողջ շրջակայքը: Մարանդից հետո հարձակումն ուղղվում է դեպի Թավրիզ, ապա՝ Ղազվին: Այս անգամ ևս հաջողությունը Հայոց բանակի կողմն էր, որը մեծ ռազմավարով և, գլխավորը, հակառակորդի հարձակողական «պոռթկումը» վերջնականապես վերացնելուց հետո վերադառնում է (տե՛ս քարտեզ 6.7):

<sup>1</sup> Սյունիք նահանգի բերդերը:

Ուձսապահ գործողութիւնները 1208թ. վերջին եւ 1209թ.



Ուլստսկսկ գործողութիւնները 1211-1212 թթ.



Քարտեզ 6.7

**Պատմական տեղեկանք.** «Եվ այսպես ի վերուստ հաջողվեց նրանց (Ջաքարյան եղբայրներին) իրենց հաղթությունը. նրանց քաջության համբավը տարածվեց շատ երկրներ, և շատ ազգեր, որը սիրուց, որն էլ երկյուղից, հարկատու դարձան նրանց: Վերաշինվեցին բազմաթիվ վանքեր, որ վաղուց ի վեր ավերվել էին արաբական ավազակների կողմից»:

**Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, էջ 123**

Այսպիսով, Ջաքարիա Ջաքարյանի գլխավորությամբ Հայոց բանակը 1208թ. գարնանը հակահարձակման է անցնում, ռազմական գործողությունները տեղափոխում է Արդաբիլի ամիրայության տարածք, պարտության մատնում հակառակորդի բանակը և գրավում Արդաբիլը, որտեղ գերվում է թշնամի ամիրան: Ատրպատականում տարած հաղթանակը նախապայմաններ է ստեղծում հարավարևմտյան ուղղությամբ արշավանքի իրականացման համար, որն իր հերթին հնարավորություն է տալիս նոր հզոր հարձակում իրականացնել դեպի Ատրպատական: Այս փուլում մեծացվում է հովհարածև հարձակումների ծավալները՝ դրանք վերածելով ռազմավարական միջոցառման: Հովհարածև հարձակումների կիրառումը նորություն էր հայոց ռազմարվեստում:

**Պատմական տեղեկանք.** «Նրանք (Ջաքարեն և Իվանեն) մեծ ջանքերով Հայոց աշխարհն ազատեցին պարսիկներից<sup>1</sup>, գրավեցին Առանից մինչև Ներքին Բասեն, Բարկուշատից մինչև Մժնկերտ<sup>2</sup>: Վերցրին Կարսը, Վաղարշակերտը<sup>3</sup>, Կազվանքը<sup>4</sup>, Սուրբ Մարին, Անին, Անբերդը, Բջնին, Գառնին, Դվին նայրաքաղաքը, Գարդմանը<sup>5</sup>, Գանձակը, Չարեքը<sup>6</sup>, Հերթը<sup>7</sup>, Շանքորը, Շաքին<sup>8</sup>, Պարտավը, Չարբերդը<sup>9</sup>»:

**Ստեփանոս Օրբելյան, Այունիքի պատմություն, գլ. ԿԶ**

<sup>1</sup> Խոսքը ոչ թե պարսիկների, այլ Իրանում գերիշխանություն հաստատած սելջուկների մասին է:

<sup>2</sup> Մժնկերտ (Մաժանակերտ) գյուղ և բերդ: Մտնում էր Աբեղյանք գավառի մեջ:

<sup>3</sup> Վաղարշակերտ՝ քաղաք Այրարատ նահանգի Բագրևանդ գավառում: Քաղաքի անունը հետագայում աղավաղվելով դարձել է Ալաշկերտ:

<sup>4</sup> Նշանավոր հին ավան էր Այրարատ նահանգի Արշարունիք գավառում՝ Արաքսի հովտում:

<sup>5</sup> Մեծ Հայքի Ուտիք աշխարհի Գարդմանածոր գավառում է Գարդման ամրոցը:

<sup>6</sup> Չարեք բերդը գտնվում էր Փառիսոս գավառում:

<sup>7</sup> Հերթ (Հերեթ) բերդ և համանուն գավառ Աղվանքում՝ Կուր գետի ձախ ափին:

<sup>8</sup> Շաքի՝ քաղաք բուն Աղվանքում:

<sup>9</sup> Չարբերդ ամրոց Արցախում՝ Տրտու գետի և նրա Թղրի վտակի միջև եղած մի բարձր ժայռի վրա:

ՊԵՏՎՈՒԹՅԱՆ VII

**ԵՓՐԱՏԵՉՏԵՐՔԻ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՅԻ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
XI-XIII ԴԱՐԵՐԻ  
ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ**



# ՎԱՅՐԱՄ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՎԱՐԱԾ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ 1170-ԱՎԱՆ ԹԹ.

## ԵՓՐԱՏԵՉԵՐՔԻ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Մանագկերտի ճակատամարտում 1071թ.<sup>1</sup> Բյուզանդիայի հզորությունը խորտակած սուլթան Ալփասլանին փոխարինած Մելիքշահի օրոք (1072-1092թթ.) նոր ավարառությունների թիրախ են դառնում ամայացունից գերծ մնացած երկրամասերը: Թյուրքական նվաճումների դառնությունը ճաշակելու հերթը հասնում է Փոքր Ասիայի բնակչությանը: Փոքր Հայքում, Եփրատ գետի ավազանում և Կիլիկիայում ձևավորվում են հայկական նոր իշխանություններ, որոնց գլխուժը զարգացրեց հայոց ռազմարվեստը:

**Պատմական տեղեկանք.** «Երբ թուրքերը դուրս եկան Խորասանից և հեղեղեցին այս շրջանները, հույները շատ թուլացան, և նրանց կայսրությունը դադարեց տիրել Ասորիքին, Կապադովկիային և Հայաստանին: Այդ ժամանակ որոշ հայեր մտան զառիթափ լեռներում գտնվող բերդերը և անրացան այնտեղ»:

**Սիքայել Ասորի, ժամանակագրություն, հատ. III**

### **Վահրամ Վարաժնունու վերելքը**

Հայոց պետականության պաշտպանության պայքարում 1060-ական թթ. վերջերից աչքի է ընկնում Վահրամը, որը նշանավոր Վարաժնունի տոհմից էր<sup>2</sup>: Նա կարճ ժամանակով կարողանում է իր գերիշխանությանը ենթարկել Կիլիկիան, Միջագետքի և Ասորիքի զգալի մասն ու ստեղծել ընդարձակ իշխանապետություն՝ Մարաշ կենտրոնով<sup>3</sup>:

Վահրամը պատանի հասակում կրթություն էր ստացել հորեղբոր՝ ժամանակի նշանավոր գիտնական վարդապետ Հովհաննես Կոզեմի մոտ, Հարսան-Մուր գավառի Ջորվրի Կոզեմ վանքում: Շուտով երիտասարդը գինվորական ծառայության է մտնում և իր ապագա տերության ստեղծումը սկսում սելջուկներից Մարաշի շրջակայքը պաշտպանող հայ երիտասարդների հիսնյակի հրամանատարությունից:

<sup>1</sup> Պատահական չէ, որ ճակատամարտն ավելի շատ հայտնի է որպես «Մանագկերտի աղետ»:

<sup>2</sup> Հունադական լինելու պատճառով հայ իշխանը հիշատակված է Փիլարտոս Վարաժնունի, իսկ բյուզանդական աղբյուրներում՝ Ֆիլարտոս կամ Ֆիլարետոս Վրախամիոս (Վահրամ) անունով:

<sup>3</sup> Վահրամ Վարաժնունու ստեղծած իշխանապետությունը պատմիչները հաճախ թագավորություն էլ են կոչում:

**Պատմական տեղեկանք.** «(Վահրամի հաղթանակների մասին) տեղեկանալով՝ հռոմեացիների (բյուզանդական) կայսրը նրան ընծաներ ուղարկեց, իսկ հետո Փիլարտոսն անձամբ Կոստանդնուպոլիս գնաց, և հույներն ուրախացան նրա համար. նրանք նրան ոսկյա զրահներ տվեցին և «Օգոստոս» հռչակեցին»:


**Միքայել Ասորի, Ժամանակագրություն, հատ. III**

Սելջուկյան նվաճումների դեմ պայքարում նա զինակցում է գործունյա Ռոմանոս Դ կայսրին, որը հայ իշխանին սեբաստոսի բարձր տիտղոս է շնորհում: Վարաժնունին ճանաչում է Բյուզանդիայի գերիշխանությունը և, նույնիսկ, քաղկեդոնականություն ընդունում: Փոխադարձ վստահությունն այն աստիճանի է հասնում, որ հայ իշխանի զորավարական փայլուն ընդունակություններով հիացած կայսրը 1070թ. Ռոմանոպոլիսի և Խլաթի ուղղությամբ իրականացված արշավանքի ընթացքում իր զորքի կեսը դնում է նրա ենթակայության տակ ու նրան զորավար է նշանակում:

Սանազկերտի աղետից հետո Վահրամ Վարաժնունուն այլ բան չէր մնում, քան վտարել Հայաստանի, Ասորիքի և շրջակա տարածքների բնակչությանը լքած և անկանոն կերպով նահանջող բյուզանդական պաշտոնյաներին ու ձեռնամուխ լինել թյուրքական ասպատակություններից Տավրոսի լեռների բնակչության պաշտպանությանը:

**Տեղեկանք.** «Հայ քաջասիրտ իշխանների շարքում, որոնք օգտվելով բյուզանդական կայսրության խորտակումից՝ գրավեցին Փոքր Հայքից մինչև Կիլիկիա ընկած տարածքների<sup>1</sup> այս վերջին միջնաբերդերը, քանի որ թուրքերի դեմ իրենց պայքարում ստիպված էին ապավինել դրանց, առաջին կարգի տեղ է զբաղեցնում Փիլարտոս Վրախամիոսը (Վահրամը)»:

**Ռդնե Գուսե, Պատմություն խաչակրաց..., հատ. I**



**Սանդուղքներ**  
Միջնադարյան բանակներում տարատեսակ սանդուղքներով մագլցելն այնքան կարևոր մարտավարական ունակություն էր համարվում, որ այդ ձևով ամրոցները գրավելու նպատակով ամբողջ զարամասեր էին վարժեցվում:

<sup>1</sup> Բնագրում գրված է «հարավարևելյան Անատոլիա» անորոշ ձևով նկատի ունենալով Հայկական լեռնաշխարհից արևմուտք ընկած Փոքր Ասիայի հարավարևելյան մասը: Ներկայացվող նյութն ընթերցողների համար ավելի հասկանալի դարձնելու նպատակով այս և հետագա տեղեկանքներում կնշվեն առավել ծանոթ տեղանուններ:

## **Իշխանապետության տարածքի ընդլայնումը 1070-ական թթ. առաջին կեսին**

Որպես առաջին քայլ Վահրամն ընտրում է գործողությունների ամենահանդուգն տարբերակը՝ երբեմնի ծաղկուն, սակայն 1069թ. թյուրք հրոսակների կողմից նվաճված և անխնա ավերված Մելիտենեի ազատագրումը, որով կապահովվեր ռազմավարական ձախ թևը (տե՛ս քարտեզ 7.1):

Մելիտենեի հայ բնակչության աջակցությամբ կարճ ժամանակում Վահրամը վերահսկողության տակ է առնում քաղաքը, ապա նոր հարձակում ծավալում, հսկողության տակ առնում մերձեփրատյան ընդարձակ տարածությունները, իշխանապետության սահմանները հասցնում դժվարամատչելի լեռնային զանգվածներին, և ամենավտանգավոր՝ արևելյան ուղղությունը դառնում է համեմատաբար ապահով: Մելիտենեի կառավարիչ է նշանակվում Վարաժնունու բանինաց զորավարներից մեկը՝ Յեթունի որդի Թորոս իշխանը:

Վահրամին զինակցում է Թոռնավանի իշխան Հասան Արծրունու որդի Աբլղարիպը՝ Կիլիկիայի զգալի մասի բյուզանդական կառավարիչը: Նա Վարաժնունու իշխանապետությանն է միացնում ամբողջ Կիլիկիան՝ Տարսոն, Անավարզա ու Մամեստիա կենտրոններով (տե՛ս քարտեզ 7.1): Արծրունի իշխանի հորդորներով նույնն է անում նաև Արցախի և Ուտիքի կողմերում հայրենի կալվածքը՝ Մայրեացքուրը (Գանձակի մոտ) թողնելով 1073թ. Կիլիկիա տեղափոխված և նրանից անառիկ Լամբրոն ամրոցը ստացած Օշին Գանձակեցին՝ Յեթունյան իշխանական տան հիմնադիրը: Այսպիսով, Կիլիկիան միավորվում է հայոց իշխանության ներքո (տե՛ս քարտեզ 7.1):

**Տեղեկանք.** «Փիլարտոսն առաջինը փորձեց համախմբել Կիլիկիայի մատույցներուն ցրված հայերին: Այդ հարցում նա նախակարապետն է գալիք հայոց պետության, և լիովին օրինաչափ է, որ նա մնալու է որպես առասպելական մի անձնավորություն»:

**Կլոդ Մութաֆյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Գլ. 7**

Վահրամ Վարաժնունուն իրենց հպատակությունն են հայտնում նաև մի շարք հույն և ֆրանկ իշխաններ, և նրա իշխանապետությունը վերածվում է լայնածավալ տերության, իսկ նրա առաջնությունը հակասելջուկյան ուժերի համար դառնում է անվիճելի: Փաստորեն, 1070-ական թթ. Կիլիկիայի, Ասորիքի, Փոքր Հայքի ու մերձեփրատյան տարածքների բնակչության համար Վահրամ Վարաժնունին է զբաղեցնում բյուզանդական կայսրերի կողմից լքված տեղը:

### **Ուռնայի միացումը Վարաժնունու տերությանը (1076թ.)**

Ուռնան գրավելու առաջադրանքով արշավանքի է ելնում Վահրամ Վարաժնունու ամենաօժտված ու եռանդուն զորավարներից մեկը՝ Մանազկերտի 1054թ. լեզենդար պաշտպանության ղեկավար Բարսեղը (Վասիլը): Ուռնայի ամրությունների նորոգման վերջին մեծամասշտաբ աշխատանքները ղեկավարել էր Բարսեղի հայրը՝ Ապուքսայ իշխանը, քաղաքի կառավարիչ եղած տարիներին: Հետևաբար, Բարսեղը քաջածանոթ էր ամրությունների համակարգին:

Ուռնայի հայ բնակչությունը չէր թաքցնում ազգակիցների հանդեպ ունեցած համակրանքն ու բյուզանդական կայսրոջից պահանջում էր դադարեցնել դիմադրությունը և միանալ սելջուկների դեմ պայքարող Վահրամ Վարաժնունու ուժերին:

Պաշարումն, ի վերջո, ավարտվում է հաղթանակով (1077թ.) (տե՛ս քարտեզ 7.1): Բարսեղ իշխանին հաջողվում է գրավել անառիկ Ուռնան՝ միաժամանակ կատարելով անդրեփրատյան ընդարձակ տարածքները Վարաժնունու իշխանության ներքո միավորելու առաջադրանքը:

Բարսեղը մնացել է որպես Ուռնայի պատմության մեջ ամենաբարի համբավ ունեցած կառավարիչներից մեկը՝ իր գործունեությամբ գերազանցելով նույնիսկ հորը՝ Ապուքսային: 1083թ. Բարսեղի մահից հետո Վահրամ Վարաժնունին իր անմիջական իշխանության տակ է առնում Ուռնան:

### **Անտիոքի միացումը Վարաժնունու տերությանը 1077թ.**

**Պատմական տեղեկանք.** «Հայոց 525 թվականին (2 մարտ 1076 - 1 մարտ 1077թթ.)... սպանվեց հայոց Վասակ իշխանը՝ Գրիգոր Մագիստրոսի որդին... Նա Անտիոք քաղաքի դուկն էր և նենգ հռոմեացի ձեռքով սպանվեց Անտիոքի շուկայի փողոցում: Երբ նա անցնում էր փողոցով, երկու հաստատներ<sup>1</sup> եկան Վասակին երկրպագեցին և ինչ-որ կեղծ մամակ մեկնեցին նրան. երբ նա խոնարհվեց այն վերցնելու, տապարով հարված իջեցրին նրա աջ կողմին»:

**Մատթեոս Ուռնայեցի, Ժամանակագրություն, Մասն երկրորդ**

Սպանությունից վրդովված քաղաքի բնակչությունը և Վասակ Պահլավունու զինվորներն օգնություն են հայցում Վահրամ Վարաժնունուց և նրան հանձնում Անտիոքը: Հատկանշական է, որ ճանապարհին Վարաժնունու զորքերին ոգևորությամբ էին դիմավորում նաև ոչ հայկական բնակավայրերում: Հայկական զինուժը սելջուկյան հրոսակախմբերի դեմ պայքարի համախմբող ուժի էր վերածվել՝ փոխարինելով իրեն վարկաբեկած բյուզանդական բանակին (տե՛ս քարտեզ 7.1):

<sup>1</sup> Հաստատ (լատ. *hastatus*) - միզակակիր: Հունական տարբերակը (կոնդորատ) ևս հայ պատմիչները բավական հաճախ օգտագործում են:

Հասնելով Անտիոք՝ Վահրամ Վարաժնունին խստագույնս պատժում է Վասակին սպանողներին:

**Պատմական տեղեկանք.** «(Վարաժնունին) գնաց և թագավորեց Տարսունի և Մոպսուեստեի վրա. նա գրավեց Մարաշը, Քեսունը, Ռաբանը, Եդեսիան, Անարզաբան և մտավ Անտիոք. նա հզորացավ և մտավ Ջիհանի երկիր և Մելիտինե: Հաղթանակելով՝ նա կռվեց թյուրքերի դեմ հռոմեական բանակի հետ»:

**Միքայել Ասորի, Ժամանակագրություն, հատ. III**

Այսպիսով, շուրջ մեկ տասնամյակ տևած համառ պայքարում Վահրամ Վարաժնունին իր իշխանության տակ միավորում է բյուզանդական բանակների նահանգից հետո սելջուկյան հորդաներին թողնված Կիլիկիայի, Ասորիքի հյուսիսի և Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջաններն ու գլխավորում այդ տարածքների բնակչության պայքարն օտար նվաճողների դեմ:

**Տեղեկանք.** «Թյուրքական ներխուժման մակընթացության հորձանուտում հայտնված բյուզանդական բնակավայրերի քրիստոնյա բնակչությունը շրջվեց դեպի այդ եռանդուն հայորդին (Վահրամ Վարաժնունին)՝ որպես փրկչի... Արդարև նոր Հայաստանի հիմքերն էր, որ Մանգլերտին (աղետին) հետևած այս վճռորոշ տարիներին դնում էր Փիլարտոս-Վահրամը: Եվ ապագա XIII դարի Ռուբինյան և Հեթումյան թագավորության ծրագիրն էր, որ գծում էր նա»:

**Ուրնե Գռուսե, Պատմություն խաչակրաց..., հատ. I**



Գլխավորապես լեռնային կամ կտրտված տեղանքում մարտեր վարելիս Եփրատեզերքի հայկական իշխանությունների հետևակային զինվորի կաշվե զրահը թեև երկարացված էր մինչև ծնկները, սակայն չէր կաշկանդում մարտիկների գործողությունները

## ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

**Տեղեկանք.** «Կիլիկիայի պատմության մեջ իսկապես անկախ միակ պետությունը ծնունդ է առել միայն ժԱ դ. վերջին, իսկ ժԲ դ. վերջին դարձել է Կիլիկիայի հայկական թագավորություն: Շրջապատված Բյուզանդիայով, Ասորիքի լատինական պետություններով, մոնղոլներով և մահմեդական աշխարհով՝ այն կարևոր քաղաքական դեր էր խաղալու արևելքում»:

**Կ.Մուբաֆյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկներում, էջ 21**

### *Սելջուկյան տերության քայքայման սկիզբը և խաչակրաց առաջին արշավանքը*

1092թ. սելջուկյան սուլթան Մելիքշահի մահվանը հաջորդած գահակալական կռիվներով սկսվում է նրա հսկայածավալ տերության կազմալուծման ժամանակաշրջանը<sup>1</sup>: Դրանից օգտվելով՝ Եգիպտոսի Ֆաթիմյանները գրավում են Պաղեստինը, իսկ Հռոմի Ուրբանոս Բ պապը Կլերմոնում (1095թ.) խաչակրաց արշավանքը սկսելու հռչակավոր կոչն է անում:

Խաչակրաց արշավանքը սկսվում է 1096թ. ապրիլին: 1097թ. հունիսին խաչակիրները գրավում են Փոքր Ասիան զավթած սելջուկների առաջին մայրաքաղաք Նիկիան, հուլիսին Դորիլայնի ճակատամարտում ջախջախում են սելջուկյան միացյալ բանակը, իսկ աշնանը դեպի Ասորիք են շարժվում: Նրանք կապ են հաստատում Կիլիկիայում և շրջակայքում ամրացած հայ իշխանների հետ, որոնք խաչակիրներին սելջուկ-թյուրքերի դեմ պայքարի բնական դաշնակիցներ էին համարում: Մասնավորապես, մեծ իշխան Բարսեղ Կանսարականի (Գող Վասիլի) եղբոր՝ Բագրատի խորհրդով նրանց առաջնորդներից Բալդուին Բուլղոնցին և Տանկրեդը՝ իրենց ոչ մեծ զորամասերով, 1097թ. սեպտեմբերին մտնում են Կիլիկիա և հայերի օգնությամբ կարճ ժամանակում սելջուկյան կայսրոսներից մաքրում Կիլիկիայի ամրությունները:

**Պատմական տեղեկանք.** «(Բագրատը) փախել էր հունական կայսեր բանտից: Բալդուինը նրան պահեց Նիկիայում, որովհետև նրան ասել էին, որ նա հմուտ զինվոր է և չափազանց խելոք, և որ կատարելապես ծանոթ էր Հայաստանին, Ասորիքին և հույների երկրին»:

**Ֆուշե Շարտրոցի, խաչակիրների պատմություն, VI**

<sup>1</sup> Տրոհումը սկսվել էր դեռևս 1086թ., երբ Գթմուշի որդի Սուլայմանը Փոքր Ասիայում հիմնել էր Ռումի կամ Իկոնիայի սուլթանությունը, որն անկախ էր, թեև ճանաչում է մեծ սուլթանի գերիշխանությունը:

Բալդուին Բուլոնցին Կիլիկիայից անցնում է Մարաշ, ապա գրավում Թլպաշարը: Այստեղ նա ստանում է Ուռհայի (Եդեսիա) տեր, հայազգի իշխան Թորոսի՝ Սամոսատի դեմ համատեղ արշավանք ձեռնարկելու հրավերը: Խաչակիրների հանդեպ վստահություն դրսևորելով՝ անզավակ հայ իշխանը Բալդուինին նույնիսկ որդեգրում և ժառանգորդ է հռչակում: Սակայն վերջինս, չնայած որդեգրման ժամանակ տված բարձրագույն խոստումներին, առաջին իսկ հնարավորության դեպքում դավադրաբար զավթում է իշխանությունը և 1098թ. մարտին հիմնում խաչակրաց (լատինական) առաջին պետությունը՝ Եդեսիայի (Ուռհայի) կոմսությունը (տե՛ս քարտեզ 7.2): Տանկրեդն էլ հրաժարվում է կատարել բյուզանդացիներին խաչակիրների տված մյուս խոստումն ու իր ձեռքն է վերցնում Կիլիկիայի զգալի մասի փաստացի իշխանությունը:

Առանց դժվարությունների Անտիոք հասած խաչակիրները միայն երկարատև պաշարումից հետո են գրավում քաղաքը: Անտիոքում իշխելու իրավունքի համար զինված ընդհարումներ են սկսվում խաչակրության մյուս առաջնորդների միջև: Բոհեմունդ Տարենտացին հաղթում է և Անտիոքում իշխանապետություն հիմնում:

Կիլիկիան և Ասորիքը նվաճած խաչակիրները ծովափով շարժվում են դեպի Երուսաղեմ և 1099թ. հուլիսի 15-ին գրավում այն: Քաղաք մտնելով՝ նրանք դաժան կոտորած են կազմակերպում: Ականատես Ռայմոնդ Աժիլցին այս առթիվ գրում է. «Քաղաքի փողոցներում և հրապարակներում կարելի էր տեսնել գլուխների, ձեռքերի և ոտքերի կույտեր... Սողոմոնի տաճարում արյունը հասնում էր մինչև ձիավորների ծնկները և ձիու սանձերը»: Ըստ Սմբատ Սպարապետի, Երուսաղեմի ջարդին զոհ է գնացել 66 հազար մարդ: Խաչակրաց արշավանքը հասնում է նպատակին:

Գողթրուա Բուլոնցին հռչակվում է «Սուրբ Գերեզմանի հավատարմատար»: Նրա մահից հետո՝ 1100թ. հոկտեմբերին, Բալդուինը Եդեսիայի կոմս է հռչակում իր զարմիկ Բալդուին II Բուրգացուն (1100-1118թթ.) և մեկնում Երուսաղեմ՝ դառնալու Սուրբ Երկրի առաջին օձյալ խաչակիր թագավորը:

### **Կիլիկիայի հայկական իշխանությունը**

Կիլիկիայում խաչակիրներին մեծ օգնություն է ցուցաբերում Կոպիտառի շրջանի տիրակալ Կոստանդին իշխանը: Խաչակրաց արշավանքի նախօրյակին Կոստանդինը թյուրքերին դուրս է շարտում լեռնանցքներից և այդպիսով զգալիորեն աջակցում խաչակիրների առաջխաղացմանը:



**Տեղեկանք.** Ռուբեն իշխանը Գագիկ Բ արքայի զորավարներից էր: Վերջինիս մահից հետո՝ մոտ 1080թ., Ռուբենը հաստատվել էր Կիլիկյան Տավրոսի անառիկ՝ Կոպիտառի շրջանի Բարձրբերդ և Կորոմոզու (Կոլիմոզու) ամրոցներում ու այստեղից քշել բյուզանդացիներին: Ռուբենի հաջորդ Կոստանդին Ա-ն (1095-1100թթ.) ձեռնամուխ է լինում նորաստեղծ իշխանության ամրապնդման և տնտեսական հզորացման գործին:

Անտիոքի պաշարման ընթացքում սովահարության եզրին հայտնված խաչակիրներին պարեն մատակարարելով՝ Կոստանդինն էլ ավելի է ամրապնդում իր դիրքերը: Ի նշան շնորհակալության՝ խաչակիրները հայ իշխանին բարոնի տիտղոս են շնորհում, իսկ 1098թ. «աչք փակում» Կոստանդինի կողմից Վահկա անառիկ ամրոցի գրավման վրա: Ավելին, Թլպաշարի տեր Ժուլին Կուրտենցին<sup>1</sup> կնության է առնում է Կոստանդինի դստերը:

Կոստանդին Ա իշխանին փոխարինած նրա որդու՝ Թորոս Ա-ի (1100-1129թթ.) օրոք իշխանությունը հզորացման ժամանակաշրջան է թևակոխում: 1104թ. իշխանությանն են միացվում Սիս<sup>2</sup> և Անավարզա քաղաքները, իսկ 1111թ.՝ Կիզիստրան (տե՛ս քարտեզ 7.2): Թորոսը միանում է տարածաշրջանի հզորագույն հայկական իշխանության՝ Քեսունի իշխանապետ Բարսեղ Կամսարականին և 1107թ. Բերդուսի ճակատամարտում համատեղ ուժերով ջախջախում Կիլիկիան ու հարևան շրջաններն ասպատակող սելջուկյան հորդաները (տե՛ս քարտեզ 7.2):

### ***Բարսեղ իշխանն ու Քեսունի հայկական իշխանապետությունը***

Վարաժնունու տերության ավերակների վրա վեր հառնած և սելջուկների դեմ պայքարը շարունակող հայկական իշխանությունների մեջ ամենահզորը Բարսեղ (Վասիլ) Կամսարականի (1082-1112թթ.) հիմնած Քեսունի և Ռապանի իշխանապետությունն էր: *Հայոց անկանոն ռազմարվեստի* ավանդույթները յուրացրած իշխանի անսպասելի, սրընթաց և հանդուզն հարձակումներն այնքան տպավորիչ էին, որ նա ստացել էր «Հաջողած» և «Գող» պատվանունները<sup>3</sup>:

<sup>1</sup> Խաչակիրների շրջանում մեծ հեղինակություն վայելող Ժուլին Կուրտենցին հետագայում դարձավ Եդեսիայի կոմս՝ Ժուլին Ա:

<sup>2</sup> Սիսը հետագայում դարձել է Կիլիկիայի հայկական թագավորության մայրաքաղաքը, իսկ ժամանակակիցներն այն կոչում էին Մաև Սսի թագավորություն:

<sup>3</sup> XII-XIIIդդ. գողանալ բայը հաճախ գործածվում էր գրավել կամ նվաճել իմաստով: Այդ իմաստն ունի Բարսեղի «Գող» պատվանունը:

**Տեղեկանք.** Քեսունի հայկական իշխանապետությունը տարածվում էր Մելիտենեի սահմաններից մինչև Պիր և Եփրատից մինչև Մարաշ՝ ընդգրկելով մայրաքաղաք Քեսունը, ինչպես նաև Ռապանը, Հարսան-Մուրը, Պեհեսին, Հռոմկլան և այլ նշանավոր բերդեր: Կարճ ժամանակով նրա մասն են կազմել նույնիսկ Սամոսատը և Մարաշը: Բարսեղը կրում էր մեծ իշխան, ապա իշխանաց իշխան տիտղոսը: Նրա ամենամեծ ռազմական հաջողությունը հաղթանակն է 1108թ. Հարսան-Մուրի ճակատամարտում (տե՛ս քարտեզ 7.2):

XII. Բյուզանդիայի հետ համագործակցող հայ իշխանների մեջ, թերևս, միայն Բարսեղն է արժանացել պատմիչների բարյացակամ վերաբերմունքին, որը բացատրվում է Հայ եկեղեցու հանդեպ նրա ունեցած նախանձախնդիր վերաբերմունքով: Ընդ որում, նա այդ չէր անում կայսրության հետ հարաբերությունները վատացնելու գնով և Ալեքսիոս Ա-ից ստանում է *սեքաստոսի* տիտղոս: Իշխանաց իշխանն այնքան մեծ հեղինակություն էր վայելում, որ Քեսունի շրջանի Կարմիր վանքում ապաստան է տալիս Հայ եկեղեցու հայրապետական աթոռին: Այստեղ իր հովվապետության վերջին տարիներն է անցկացնում 1099թ. խաչակիրների հետ երուսաղեմ հասած Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսը (1066-1105թթ.), ապա նրան փոխարինած Բարսեղ Ա Անեցին (1105-1113թթ.):

Բարսեղ իշխանը մասնակցում է Տրիպոլիի (Տրիպոլիս) համար խաչակիրների ծավալած երկարատև պայքարին և կարևոր դերակատարում ունենում 1109թ. քաղաքի գրավմանը: Քեսունի իշխանապետությունը գոյությունը պահպանում է նաև Բարսեղի որդեգիր Բարսեղ Տղա (Վասիլ Տղա) Կամսարականի օրոք՝ մինչև 1117թ.:



Հայ ծանրազեն հետևակային

# ՊԱՏԵՐԱԶՄ ԿԻԼԻԿԻԱ ՆԵՐԽՈՒԺԱԾ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԵՎ ԼԱՏԻՆԱԿԱՆ ՉՈՐՔԵՐԻ ԴԵՄ 1130-1136 ԹԹ.

1120-ական թթ. կեսերը Կիլիկիայի հայկական իշխանության հարևանների՝ Բյուզանդական կայսրության և Իկոնիայի սուլթանության իշխող շրջանակներում գահակալական երկպառակությունների ժամանակաշրջան էին: Նրանց թուլացման պայմաններում Թորոս Ա-ի և եղբոր՝ Լևոն Ա-ի (1129-1137թթ.) համաձայնեցված գործողությունների հետևանքով հայկական իշխանությունը կայունության կղզյակի է վերածվում: Լևոն Ա-ի հետ հարաբերությունները բարելավելու նպատակով Յովհաննես Բ կայսրը (1118-1143թթ.) նրան շնորհում է սեբաստոսի տիտղոս<sup>1</sup>:

Դանիշմանյան Մելիք Ղազին իր կողմն էր գրավել Մոսուլի և Յալեպի ամիրա Իմադեդդին Ջենգիին: Նրանք որոշում են հարվածել Կիլիկիայի հայկական իշխանությանը: Այս մասին հայտնի է դառնում Կիլիկիայում, որի զորքերը կենտրոնացվում են հյուսիսի լեռնանցքների շրջանում: Սակայն պատերազմաշրջանը սկսվում է 1130թ. փետրվարին, երբ հարավից Կիլիկիա է ներխուժում Բոհեմունդ Բ-ի (1126-1130թթ.) գլխավորած անտիոքյան զորքը: Դանիշմանյանների գլխավորած դաշինքի դեմ հավանական գործողությունների համար պատրաստ պահվող զորամասերը Լևոն իշխանն անմիջապես սկսում է տեղափոխել հարավ (տե՛ս քարտեզ 7.3):


Մինչ Լևոն իշխանը կհասցներ նախապատրաստել ուժերն ու դուրս կգար հարավային ռազմավարական ուղղությամբ, տեղեկություն է ստացվում հյուսիս-արևելքից սկսված Դանիշմանյանների զորքերի հարձակման մասին:

Առաջինը գործի է դրվում հայոց հետախուզական ծառայությունը, որը պետք է պարզեր՝ երկիր ներխուժած հրոսակներն արդյոք դաշնակցում են միմյանց հետ, թե ոչ: Հայտնի էր, որ Բոհեմունդ Բ-ն Դանիշմանյան ամիրայի դաշնակիցը չէր, սակայն գրեթե միաժամանակյա ներխուժման փաստից կարող էր տպավորություն ստեղծվել, թե Կիլիկիայի տարածքում նրանց գործողությունները համաձայնեցվում են: Հետախույզները հայտնում են, որ հակառակորդ բանակներից յուրաքանչյուրն իր նպատակները հետապնդելով է ներխուժել Կիլիկիա: Ավելին, նրանք չգիտեն միմյանց մասին:

Լևոն Ա-ն ձեռնամուխ է լինում *համարձակ* և խոր ռազմավարական ծրագրի մշակմանը: Ապակողմնորոշող գործողությունների արդյունքում հայկական զորագնդերը պետք է փակեին երկու հակառակորդների առաջխաղաց-

<sup>1</sup> Թորոս Ա-ի իշխանության տարիներին Լևոնն արդեն ստացել էր *պրոտոնոբելիսինոս* տիտղոսը: Հետևաբար, նոր, ավելի բարձր տիտղոս շնորհելով կայսրը ճանաչում էր Լևոն Ա-ի իշխանությունը Կիլիկիայում:

Ուղևորական գործողությունները 1130 թ. (I ՊԱՏԵՐԱԶՄԱՇԻՋԱՆ)



ման ուղիները և կեղծ պատկերացում ստեղծեին, թե երկուսն էլ արշավում են հայկական գլխավոր ուժերի դեմ: Վճռական պահին այս զորամասերն անկատ հետ էին քաշվելու, և երկու զորքերը հայտնվելու էին իրար առջև: Ըստ Լևոնի հեռահար հաշվարկի, դա անխուսափելիորեն հանգեցնելու էր իր թշնամիների ընդհարմանը:

### **Ներխուժողները թակարդում**

Ռազմավարությունն այնքան վարպետորեն էր մշակված, որ Բոհեմունդ Բ-ն ոգևորվում է առաջին հաջողություններից և, տեղեկություն չունենալով թյուրքական զորքի մասին, ասպատակությունների նպատակով զորամասեր է ուղարկում այս ու այն կողմ (տե՛ս քարտեզ 7.4): Այս ամենի հետևանքով Անավարզայի դաշտ հասնելու նախօրյակին նրա գլխավորությամբ գործող ուժերը զգալիորեն թուլանում են: Ջրիուն գետի հովիտ հասած լատին ասպետները հանկարծակի հանդիպում են Կապադովկիայից ներխուժած թյուրքական զորքին ու չեն հասցնում ի մի բերել ասպատակությունների համար ուղարկված իրենց ուժերը:

Ե՛վ լատին, և՛ թյուրք զորավարները հակված էին կարծելու, թե իրենց առջև Լևոն Ա-ին օգնության շտապող ինչ-որ զորամասեր են, սակայն քանի որ թյուրքերն ավելի մեծաթիվ էին, որոշում են գրոհել լատինների վրա: Վերջիններս ծանր պարտություն են կրում մարտում:

**Պատմական տեղեկանք.** «Երբ Անտիոքի իշխան Բոհեմունդն իր զորքերով մտավ Կիլիկիո երկիրը, մյուս կողմից մտավ նաև Ղազին: Ֆրանկ և թուրք զորքերը, որ եկել էին կործանելու երկիրը, հանկարծ հանդիպեցին իրար: Թուրքական զորքերը շրջապատեցին Բոհեմունդին ու կոտորեցին նրա զինվորներին, որոնցից ոչ մեկը չփրկվեց: Սպանվեց ու գլխատվեց նաև Բոհեմունդը՝ այդ հրաշալի երիտասարդը... Այսպիսով, այդ թագավորները կոտորեցին իրար, իսկ հայերը փրկվեցին»:

**Անանուն Եղեսիացի, Ժամանակագրություն, Գլ. 300**

### **Հաղթանակը**

Համաշխարհային ռազմարվեստում բացառիկ ռազմական խորամանկությունը պսակվել էր լիակատար հաջողությամբ, սակայն ջանքերն ապարդյուն կլինեին, եթե հայկական կողմը չկարողանար օգուտ քաղել ռազմավարական իրադրությունից: Շարունակելով իր ծրագրի իրականացումը՝ Լևոն Ա-ն առաջին հարվածը հասցնում է Անավարզայի ճակատամարտի նախօրյակին ասպատակության ուղարկված ու մարտին չմասնակցելու պատճառով փրկված անտիոքյան զորամասին, որոնք ևս ոչնչացվում են:

ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1130 Թ. (II ՊԱՏԵՐԱԶՄԱՇՐՋԱՆ)



Փոխելով մարտական գործողությունների ուղղությունը՝ հարձակունքը շարունակվում է թյուրքական զորքերի դեմ (տե՛ս քարտեզ 7.5): Կարճ ժամանակում նրանց առաջխաղացումը ևս կասեցվում է: Ջարգացնելով հաջողությունը սրընթաց հարձակումով՝ հայկական զորամասերը հսկողության տակ են առնում Մամեստիա (Մսիս) և Ադանա քաղաքներն իրենց շրջակայքով:

Այսպիսով, կարճատև ռազմական գործողությունների ընթացքում Լևոն Ա-ին, փայլուն մշակված ապատեղեկատվական և ապակողմնորոշող գործողությունների շնորհիվ, հաջողվում է երկիր ներխուժած թյուրքական և լատինական զորքերին ճակատամարտել տալ միմյանց դեմ: Երկրորդ փուլում ջախջախվում է լատինների նահանջող զորամասը, և ժամանակավորապես անվտանգ է դառնում հարավային ուղղությունը: Դրանից հետո ուժերը կենտրոնացվում են հյուսիսային ճակատում:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1130 Թ. (ՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԱՇՐՋԱՆ)



# ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԻԿՈՆԻԱՅԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՆԵՐԻ ԶԱՆՉԱՆՈՒՄԸ 1152-1154ԹԹ.

Չովհաննես Բ Կոմնենոսը 1136թ. սեպտեմբերին սկսած արշավանքով՝ մինչև 1138թ. գարունը կարողանում է ժամանակավորապես նվաճել Կիլիկիան (տե՛ս քարտեզ 7.2) ու հպատակեցնել Անտիոքի իշխանապետությունը: Լևոն Ա-ն իր կնոջ և երկու որդիների՝ Ռուբենի ու Թորոսի հետ գերվում է<sup>1</sup>: Նրա մյուս որդիներին՝ Կոստանդինին, Ստեփանեին ու Մլեհին, ապաստան է տալիս Եդեսիայի կոմս Ժուլիմը:

1136-1138թթ. արշավանքին հաջորդում են Մուսուլը զավթած Զենգի աթաբեկի կողմից 1144թ. Եդեսիայի կոմսության գրավումը և դրա հետևանքով երկրորդ խաչակրաց արշավանքի ձեռնարկումը (1147-1149թթ.): Խաչակրաց նոր արշավանքը նպաստելու էր Ասորիքի լատինական ու Կիլիկիայի հայկական պետությունների հզորացմանը, և բյուզանդական Մանուել Ա Կոմնենոս կայսրը (1143-1180թթ.) ամեն ինչ անում է արշավանքը ձախողելու համար: Նա նույնիսկ պայմանագիր է կնքում (1147թ.) Իկոնիայի սուլթան Մասուդի հետ, որը փաստորեն ուղղված էր խաչակիրների դեմ: Սակայն թյուրքերի հետ առաջին իսկ մարտում գերմանական բանակը ծանր պարտություն է կրում, և բյուզանդացիներին «պատժելու» հարցը երկրորդ պլան է մղվում: Գերմանական բանակի մնացորդները միանում են ֆրանսիական բանակին և ռազմարշավը ծովով շարունակելով՝ 1148թ. մարտին ասի իջնում Անտիոքի մոտակայքում, բայց ի վերջո՝ Ասորիքում ևս ձախողվում են:

## Թորոս Բ-ի վերադարձը Կիլիկիա

Գերված և Կոստանդնուպոլսի բանտ տարված Ռուբինյաններից ազատվում է միայն Թորոսը (1145-1169թթ.): Վերադառնալով՝ նա համախմբում է Կիլիկիայի բնակչությանն ու վերատիրում հայրական իշխանությանը (տե՛ս քարտեզ 7.2):

**Պատմական տեղեկանք.** «Քանի որ նա (Թորոսը- հեղ.) ոչինչ չուներ, նա ծպտված, ոտքով հասավ Մար Աթանասի մոտ, որն այդ վայրի ասորի արքեպիսկոպոսն էր... Սուրբ եպիսկոպոսը նրան նվերներ ու մեկ ձիու փող է տալիս: Երբ նա երիվար է ունենում, տասներկու հոգի միանում են նրան... Շուտով Թորոսն իշխեց բազմաթիվ վայրերի և բազմաթիվ հայեր ու ֆրանկներ հավաքվեցին նրա շուրջը»:

**Միքայել Ասորի, Ժամանակագրություն, հատ. III**

<sup>1</sup> Լևոն Ա-ն բանտում մահանում է մոտ 1142թ.: Գրեթե նույն ժամանակ բանտապահները սպանում են Ռուբենին:

## Կիլիկիայի միավորումը

Խաչակրաց երկրորդ արշավանքի ձախողումը խուճապի է մատնում Ասորիքի լատիններին, որոնք անթաքույց հույսեր էին կապում այդ արշավանքի հետ: Նրանց անհանգստացնում էր նաև, որ Ջենգիից հետո «հակախաչակրության» առաջնորդի դերը ստանձնում է նրա որդի Նուր ադ-Դինը (1146-1174թթ.), Եդեսիայի կոմսության չնվաճված հատվածը գրավելով 1151թ.՝ պայքարը տեղափոխում է Անտիոքի իշխանապետության տարածք:

Նույն՝ 1151թ. Կիլիկիայում Թորոս Բ-ն գրավում է Տարսոն և Մամեստիա (Մսիս) քաղաքներն ու Մամեստիայում գերում Կիլիկիայի բյուզանդական դուքս Թումասին (Թումա): Մանուել Կոմնենոսը, որը 1140-ական թթ. վերջերին պատերազմում էր Սիցիլիայի նորմանների, ինչպես նաև հունգարների դեմ, այնուամենայնիվ, կարողանում է 12 հազարանոց բանակ գումարել և հորեղբորորդու՝ Անդրոնիկոս Կոմնենոսի գլխավորությամբ, արշավանք սկսել Կիլիկիայի հզորացող հայկական իշխանության դեմ: Բյուզանդացիները 1152թ. անսպասելիորեն ներխուժում են Կիլիկիա և Թորոս Բ-ին պաշարում Մամեստիայում (տե՛ս քարտեզ 7.2):

## Արտագրոհը

Մամեստիայի պաշտպանները նկատում են, որ հակառակորդն ամրոցի շրջանաձև դիտարկում չի կազմակերպել, և դիտորդները կարգված են միայն ճանապարհների հեռավոր մատույցների վրա: Եղանակը սկսում է վատանալ, և բյուզանդական դիտորդները սկսում են խուսափել անձրևի տակ ծառայողական պարտականությունների կատարումից:

Արտագրոհը սկսվում է լուսադեմին՝ բյուզանդական բանակի ճամբարի ուղղությամբ իրականացված հուժկու հարվածով: Սրընթաց գրոհով հայկական զորամասերը հայտնվում են հակառակորդի ճամբարի կենտրոնում՝ Անդրոնիկոսի վրանի մոտ: Սկսվում է խուճապ, որի պատճառով կարճատև դիմադրությունից հետո հակառակորդը նահանջում է մի քանի ուղղություններով:

**Պատմական տեղեկանք.** «Երբ Թորոսն իմացավ Անդրոնիկոսի թուլության մասին և տեսավ նրա անառակ կենցաղը... նա անլուսին և անձրևոտ մի գիշերով բազմաթիվ խոռատներ փորեց Մամիստրայի պարսպի մեջ և հավաքելով իր բոլոր զնդերը՝ անակնկալ հարձակվեց հույների վրա և նրանց փախուստի մատնեց»:

**Նիկետաս Խոնիատես, Ժամանակագրություն, հատ. III, 15**

Չետապնդումն այնքան ակտիվ էր, որ նույնիսկ Անդրոնիկոս Կոմնենոսի գլխավորած ամենամարտունակ զորամասը չի կարողանում կանոնավոր մար-

տակարգով նահանջել: Ավելին, յուրօրինակ փակուղուն հայտնվելով՝ վերջինս հարկադրված նահանջում է ոչ թե բուլորի հետ՝ դեպի հյուսիս կամ արևմուտք, այլ դեպի հարավ-արևելք: Դքսի ողիսականն ավարտվում է միայն Անտիոքում, որտեղից նա մեծ դժվարությամբ ծովով հասնում է Կոստանդնուպոլիս:

Այսպիսով, 1152թ. Մամեստիայի ճակատամարտում բյուզանդական մեծաթիվ բանակը պարտություն է կրում Թորոս Բ-ի գլխավորած ուժերից: Հաղթանակած Թորոս Բ-ի գերիշխանությունն են ընդունում Կիլիկիայի բուլոր իշխանները, և իշխանությունը վերածվում է իշխանապետության:



**Մարտական կացին: Կացիներով սպառազինվում էին ինչպես հարուստ ռազմարվեստ ունեցող պետությունների, այնպես էլ քոչվոր ցեղերի զորամասերը:**

## **ԲՅՈՒԶԱՆՊԱՅԻՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎՏԱՐՈՒՄԸ ԿԻԼԻԿԻԱՅԻՑ 1172-1173ԹԹ.**

Բյուզանդիան, որը ոչ վաղ անցյալում Կիլիկիայի հայկական իշխանապետության անկախության գլխավոր հակառակորդն էր համարվում, թուլացել էր: Մինչև 1160-ական թթ. կեսերը լատիններն ընդհանուր վտանգի առջև ժամանակ առ ժամանակ միավորվում էին հայկական իշխանապետության հետ, բայց Կիլիկիայի վրա գերիշխանություն հաստատելու մոլուցքով տարված Անտիոքի արքայազն Բոհեմունդ Գ-ն (1163-1201թթ.) սկսում է հրաժարվել «հավասարը հավասարի» սկզբունքով դաշնակցելուց: Վտանգ կար, որ Նուր ադ-Դինի դեմ պայքարի վճռական պահին լատիններն իրենց տիրույթները պաշտպանելու համար կարող էին «զոհել» դաշնակից հայերին:

Այս դժվարին պայմաններում Մլեհը հռչակվում է իշխանապետ (1169-1175թթ.): Անկանխատեսելի և, նույնիսկ, անհավասարակշիռ քաղաքական գործչի համարում «ձեռք բերած» հայոց իշխանապետից զգուշանում էին ոչ միայն բյուզանդացիները և լատինները, այլև թյուրքերը: Եվ մինչ հարևաններն անորոշության մեջ էին, Մլեհը հասցնում է կայունացնել իշխանապետության ներքաղաքական իրադրությունը, հզորացնել տնտեսությունը և բյուզանդացիներին դուրս քշել Դաշտային Կիլիկիայից (տե՛ս քարտեզ 7.2):

**Պատմական տեղեկանք.** «Ադանա, Մամեստիա և Տարսոն քաղաքները Կ.Պոլսի տիրոջ՝ Ռումի թագավորի ձեռքում էին, իսկ Մլեհը վերցրեց նրանից, որովհետև դրանք իր երկրին հարևան էին»:

**Իբն ալ-Ասիր, Լիակատար պատմություն, հատ. IX**

Ռազմական գործողությունների նախապատրաստման ժամանակ Մլեհն իրականացնում է մեր միջնադարյան ռազմարվեստի համար բացառիկ՝ անուղղակի գործողությունների ռազմավարություն:

# ՀԱՂԹԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ԲՈԼՈՐ ՃԱԿԱՏՆԵՐՈՒՄ 1173Թ.


Մլեհի իշխանապետության ամենադժվարին, սակայն ամենափառավոր տարին սկսվում է Կիլիկիայից քշված բյուզանդացիների դեմ առճակատումով (1173թ. հունվար): Վերջիններս ծանր պարտություն են կրում և վերջնականապես վտարվում Կիլիկիայից, որը Մլեհի իշխանապետության տարիների քաղաքական ամենամեծ ձեռքբերումն է:

Նույն թվականին իշխանապետության մայրաքաղաք է դարձվում Սիսը:

**Պատմական տեղեկանք.** «Բյուզանդացիների նկատմամբ տարած իր հաղթանակից հետո Մլեհը շատ շուտ սրտապնդվեց, և նա պաշտպանական կառույցներով հագեցրեց Հայաստան-Կիլիկիան»:

**Ալ-Ջահաբի, Գիրք մահմեդական պետությունների մասին**

Մլեհը շարունակում է Կիլիկիայի՝ Ռուբինյան իշխանապետությանը հարևան շրջաններում հայկական գերիշխանությունը վերականգնելու քաղաքական գիծը: Հարվածն ուղղվում է դեռևս 1156թ. Տաճարական միաբանության կողմից խլված Պաղրաս (Գաստոն) և Դարբասակ (Տրապեզակ) ամրոցների ուղղությամբ: Գարնանն իրականացված այս գործողության գլխավոր դժվարությունը հոգեբանական էր. Մլեհը նախկինում Տաճարական միաբանության ասպետ էր եղել և այժմ համար-



Սիս բերդի ընդհանուր տեսքը

ծակվում է մարտահրավեր նետել Կիլիկիայի սահմանային ամրություններին տիրող միաբանությանը:

Անտիոքի դուքս Բոհեմունդ Գ-ի (1163-1201թթ.) աջակցությունը վայելող տաճարականներն ի վիճակի չեն լինում կասեցնել հայկական զորագնդերի առաջխաղացումը: Ճակատային հարձակման, ինչպես նաև մի շարք անուղղակի գործողությունների հետևանքով հակառակորդը դուրս է մղվում ամրություններից և նահանջում մինչև Ամանոսյան լեռների հակառակ կողմը:

### **Հաղթանակը**

Մլեհի արտաքին քաղաքականության շրջադարձից ելնելով՝ Երուսաղեմի Ամորի Ա (Ամալրիկ, 1162-1174թթ.) թագավորը քանիցս բանակցությունների է հրավիրում Մլեհին: Վերջինս իրավացիորեն կասկածելով, թե հրավերը կարող է ծուղակ լինել, հրաժարվում է ընդունել առաջարկը: Ի պատասխան Երուսաղեմի թագավորը զորահավաք է հայտարարում և արշավանք սկսում դեպի Կիլիկիա:

Մլեհի կոչով Նուր ադ-Դինը 1173թ. գարնան վերջին արշավանք է սկսում Պաղեստինում՝ Քարաք քաղաքից հյուսիս (տե՛ս քարտեզ 7.6): Ամորի Ա-ն հարկադրված է լինում դադարեցնել դեռևս չսկսված արշավանքը և հետ դառնալ: Միայնակ մնացած Բոհեմունդ Գ-ն չի համարձակվում ներխուժել Ռուբինյան իշխանապետության տարածք:

1173թ., օգտվելով հուլիսի կեսերին Նուր ադ-Դինի դեպի հյուսիս սկսած արշավանքից, Մլեհը զգալի տարածքներ է միացնում իշխանապետությանը:

Այսպիսով, 1173-ը Ռուբինյան իշխանապետության բանակի հաղթանակների տարին է դառնում: Եռանդուն իշխանապետի գլխավորությամբ բանակը մեկ տարուց էլ քիչ ժամանակահատվածում.

- ջախջախում է բյուզանդացիներին ու նրանց վերջնականապես դուրս մղում Կիլիկիայից,
- ազատագրում է Ամանոսյան լեռների ամրությունները, որոնք Թորոս Բ-ի օրոք Տաճարական միաբանությանն էին անցել,
- սահմանային ամրոցների երկարատև պաշտպանության նախապատրաստումով և արտաքին ակտիվ քաղաքականությամբ կանխում է Երուսաղեմի թագավորության բանակի արշավանքը դեպի Կիլիկիա,
- ամրացնում է իշխանապետության սահմանները հյուսիսից:

Նպատակասլաց էր նաև Մլեհի ներքին քաղաքականությունը: Նույն 1173թ. իշխանապետը միջամտում է նոր կաթողիկոսի ընտրությանը և օժանդակություն է ցուցաբերում Ներսես Շնորհալու եղբոր՝ Վասիլ Պահլավունու որդուն՝ Գրիգորին (Գրիգոր Տղա), որը կաթողիկոս է օծվում Գրիգոր Դ անունով (1173-1193թթ.):

ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1173 Թ.



## ԱԿՆԱՐԿՆԵՐ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈԱՉՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Մլեհի մահվանը հաջորդած 1-2 տարիները տարածաշրջանում սահմանների վերանայման համար բեկումնային են դառնում: Կիլիկիայի իշխանապետ Ռուբեն Գ-ն (1175-1187թթ.) վերջնականապես հսկողության տակ է առնում Կիլիկիայի ամբողջ ծովափը, Եգիպտոսում Այուբյան սուլթան Սալահ ադ-Դինը (1169-1193թթ.) իր գերիշխանությունն է պարտադրում Նուր ադ-Դինի որդուն՝ Ջալեպի ամիրա Իսմայիլ ալ-Սալիհին (1174-1182թթ.), իսկ բյուզանդական բանակը Միրիոկեֆալոնի ճակատամարտում (1176թ.) խոշոր պարտություն է կրում Իկոնիայի սուլթանությունից:

Բեկումնային էր նաև 1187 թվականը: Զյուսիսում Լևոն Բ-ի (1187-1219թթ.) ջանքերի շնորհիվ Կիլիկիայի հայկական իշխանապետությունը հավակնում է ստանձնել թուլացած լատինական պետությունների առաջնորդությունը, իսկ հարավում Սալահ ադ-Դինը 1187թ. հոկտեմբերին գրավում է Երուսաղեմը: Խաչակիրների ստեղծած պետությունների ոչնչացման ծրագիրն իրականացնելու նպատակով Սալահ ադ-Դինը դաշնակցում է Բյուզանդիայի Իսահակ Բ Անգելոս (1185-1195թթ.) կայսեր հետ:

*Նման բարդ ռազմաքաղաքական իրադրություն էր տիրում, երբ 1198թ. Կիլիկիայի իշխանապետ Լևոն Բ-ն թագադրվում և ընդունում է Հայոց թագավորի տիտղոսը:*



Անանուր

# ՊԱՅՔԱՐ ՀԱՆՊԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ՂԱՇԻՆՔԻ ԶՈՐՔԵՐԻ ԴԵՄ 1203-1206ԹԹ.

## ԱՄԿ ԼՃԻ ՃԱԿԱՏԱՍԱՐՏԸ 1205Թ.

1200-ական թթ. սկզբին Կիլիկիայի հայկական թագավորությունն աննախադեպ հզորացման շրջան է ապրում: Այս պայմաններում Հայոց արքային մտահոգում էր թուլացած, սակայն Կիլիկիայում գերիշխանություն հաստատելու մտքից չհրաժարվող Ասորիքի լատինների «համառությունը»: Հարևան իշխանապետությանը սաստելու համար Հայոց բանակը 1203թ. արշավում է դեպի Անտիոք: Ուժերն ընդհանուր թշնամու դեմ համախմբելու փոխարեն Անտիոքում կրկին դիմում են մահմեդականների օգնությանը: Այս անգամ «անշահախնդիր» աջակցի դերում հանդես է գալիս Սալահ ադ-Դինի որդին՝ Հալեպի սուլթան ալ-Մալիք ալ-Զահիրը: Զորորդ խաչակրաց արշավանքի նախօրյակին քրիստոնեական պետությունների վեճին Այուբյանների միջամտությունը վտանգավոր հետևանքներ կարող էր ունենալ, սակայն Կիլիկիայի բանակը կարողանում է վերականգնել հայոց գերիշխանությունն Անտիոքում և բարեհաջող վերադառնալ:

### **Հալեպի սուլթանի «արշավանքը»**

Հայկական բանակի վերադարձից անմիջապես հետո Հալեպի սուլթանի բանակը սկսում է պատրաստվել Կիլիկիայի դեմ արշավանքին, սակայն նոր խաչակրաց արշավանքի (1204թ.) մասին տեղեկությունները հարկադրում են ձեռնպահ մնալ վճռական գործողություններից:

Իրադրությունը փոխվում է 1205թ., երբ խաչակրաց արշավանքի ձախողումը Ասորիքի մահմեդական տիրակալների շրջանում նորից Հայոց թագավորությունը զավթելու հույսեր է առաջացնում: Գարնանը մահմեդական տիրակալների միացյալ բանակը կենտրոնանում է Հալեպի մոտ՝ Դարբասկի ուղղության վրա: Հայկական թագավորության դեմ վարվելիք գործողություններից առանձնապես ակնկալիքներ չունենալով՝ Հալեպի սուլթանը որոշում է ժամանակավորապես բավարարվել «ուժի ցուցադրումով» և իր գերիշխանությունն ընդունելու վերջնագիր է ներկայացնում: Որոշվում է մահմեդական տիրակալների բոլոր ուժերի համախմբումն իրականացնել Հալեպի մոտ՝ Հայոց թագավորության սահմանից երեք օրվա երթի հեռավորության վրա:

**Պատմական տեղեկանք.** «Հալեպի կողմերի տիրող սուլթանը գատկի օրերին զորաժողով արեց և այսպիսի պատգամ ուղարկեց Լևոն արքային. «Եթե հարկատու չլինես ինձ, իմ բազմաթիվ զորքերով քո երկրի բոլոր բնակիչներին՝ մորը մանկան մոտ, սրածելով կոչնչացնեմ և ձեր այդ տոնը... ձեզ համար սգի կվերածեմ»: Եվ երբ առաքեց այս, ինքը իր բազմաթիվ զորքերը առավ ու բանակեց նրա սահմանների մոտ, սպասում էր պատգամի պատասխանի գալստյանը»:

**Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն**

## Ռազմավարությունը

Ինչպես և պետք էր սպասել, ալ-Ջահիրի ահաբեկման քաղաքականությունը ցանկալի ազդեցություն չի ունենում Հայոց արքունիքի վրա:

Տեղեկություն է ստացվում, որ հակառակորդը սկսել է Դարբասկի ուղղությունից հարձակում ձեռնարկելու համար անհրաժեշտ պաշարներ կուտակել: Ալ-Ջահիրը բանակը բաժանել էր երկու մասի, որոնցից մեկը սկսել էր արդեն մոտենալ սահմանին: Ընդ որում, հավանաբար, հայկական կողմից ինչ-որ ակտիվություն կանխատեսելով՝ երկրորդ բանակի հրամանատար նշանակված ամիրա Մայմուն ալ-Կասրին իր հերթին որոշել է ուժերը երկու մասի բաժանել և Դարբասկ տեղափոխվող բեռներն ուղեկցելու համար տրամադրել իր զորամասերի մեծ մասը: Հակառակորդի ուժերը փաստացի երեք մասի էին բաժանված, որոնցից ամենաթույլը կենտրոնում գտնվողն էր:

**Պատմական տեղեկանք.** «Ջահիրն իր զորքի մի մասը առաջապահ նշանակեց մի մեծ ամիրի գլխավորությամբ, որը կոչվում էր Մայմուն ալ-Կասրի<sup>1</sup>: Ջահիրը սննդամթերք և զենք ուղարկեց իր մի բերդը, որը դրացի էր Լևոնի որդուն (Լևոն Բ-ին) և կոչվում էր Դարբ Սաք (Դարբասկ): Նա լուր ուղարկեց Մայմունին, որ իր զորքի մի մասը ուղարկի այս ռազմամթերքին ընկերակցելու համար մինչև Դարբ Սաք: Այդպես էլ արեց նա և իր զորքի մեծ մասն ուղարկեց, իսկ ինքը մնաց փոքր զորամասով: Լուրը հասավ (Լևոնին), որը շտապ հասավ ու, գտնելով նրան փոքրաթիվ զորքով, կռվի բռնվեց նրա հետ»:

**Իբն ալ-Ասիր, Լիակատար պատմություն, հատ. IX**

Որոշվում է հակառակորդին «դիմավորել» նրա տարածքում՝ հանկարծակի հարվածով անակնկալի բերել ու մաս-մաս ջախջախել (տե՛ս քարտեզ 7.7): Պակաս կարևոր չէր նաև, որ մարտական գործողությունները հակառակորդի տարածք տեղափոխելով՝ Կիլիկիայի զգալի մասն ազատվում էր ասպատակվելու հեռանկարից:

<sup>1</sup> Ալ-Կասրի - թարգմանաբար՝ պալատային:



Միայն հայկական կողմի խոշոր անհաջողության դեպքում հակառակորդը կկարողանար հակահարձակման անցնել: Այդ դեպքում էլ նրա հաջողությունները նվազագույն կլինեին, քանի որ հարվածի ենթակա կլինեին Կիլիկիայի միայն արևելյան լեռնային շրջանները: Այս ամրությունները նախօրոք պատշաճ ամրացվել և երկարատև պաշարման էին նախապատրաստվել: Յետևաբար, նույնիսկ այդ դեպքում դրանց հաղթահարումը հակառակորդի համար դժվարին փորձության կվերածվեր:

Հայկական բանակն ավարտում է զորահավաքը և պահպանելով գաղտնի տեղաշարժի համար անհրաժեշտ բոլոր պայմանները՝ շրջանցում է հակառակորդի սահմանային ամրություններն ու մտնում Հալեպի սուլթանության տարածք: Ալ-Ջահիրի հետախույզները չէին բացահայտել հայկական կողմի գործողությունները, իսկ սուլթանը չէր կարծում, թե Լևոն Բ-ն կհամարձակվի բանակը դուրս բերել Կիլիկիայից և այսչափ հանդուգն քայլ կձեռնարկի:

Հայկական բանակը գիշերը շրջանցելու էր Ամկ լիճը և մոտենալու էր Մայմունի զորագնդերի տեղաբաշխման շրջանին: Երկու կողմից (արևելքից և արևմուտքից) հարվածի տակ հայտնվելու վտանգն աչքի առաջ ունենալով հանդերձ՝ հայկական զորագնդերը մտադիր էին հարձակվել հակառակորդի վրա: Հատկանշական է, որ հայկական բանակի մարտակարգը պետք է լիներ փաղանգաձև՝ ուժերը ճակատով և հնարավորինս հավասարապես բաշխված:

Հայոց արքայի գլխավոր խաղաթուղթն անսպասելի գրոհի ենթարկված հակառակորդի հավանական գործողությունների կանխատեսելիությունն էր: Դժվար չէր կռահել, որ պարտության դեպքում Մայմունը սուլթանին ստիպված էր լինելու բացատրություններ տալ իր ուժերի մեծ մասը դեպի Դարբսակ ուղարկելով՝ բանակի հաղորդակցման ուղիները վտանգի ենթարկելու և, գլխավորը, պատշաճ մարտական ապահովում (հետախույզություն) չկազմակերպելու համար: Տիաճ հեռանկարից խուսափելու համար Մայմունն «արդարանալու» մեկ հավանական պատասխան էր ունենալու. պնդել, թե սկզբից ևեթ նկատի է ունեցել հայկական բանակի գործողությունների բոլոր տարբերակներն ու գիտակցված ծուղակ է կազմակերպել:


Համարձակ մտահղացումն իրականացնելու համար հայկական բանակը պետք է շտապեր, քանի որ առաջին հաղթանակից շատ բան էր կախված լինելու: Մեկ հաջող հարվածը կարող էր էապես բարելավել կողմերից մեկի ռազմավարական դիրքերը և, նույնիսկ, կանխորոշել պատերազմի ելքը:

### **Ճակատամարտը**

Իրադրությունը լարված էր, բայց, հայկական կողմի համար՝ ընդհանուր առմամբ նպաստավոր: Համարձակ առաջխաղացումով Հայոց բանակը, որը մինչ այդ արդեն հասցրել էր շրջանցել հակառակորդի սահմանային ամրությունները:

րը, հայտնվում է Դարբասակ ուղևորված զորամասերի թիկունքում և հակառակորդի գլխավոր ուժերի հաղորդակցման ուղիների վրա հաջող գործողություններ ծավալելու իրական հնարավորություն է ստանում (տե՛ս սխեմա 1):

Սխեմա 1



Անկ լճի ճակատամարտը 1205թ.

Հայկական բանակը հասնում է Մայնուն ամիրայի գլխավորությամբ գործող զորքի տեղաբաշխման վայրը: Լևոնը, համաձայն իր մտահղացման, որոշում է այնպիսի հարված հասցնել, որ մեկ մարտով վճռվի նախաձեռնության հարցը: Շեշտակի հարվածով հակառակորդի ճամբարը երկու կողմերից թևանցվում է՝ նպատակ ունենալով թույլ չտալ, որպեսզի Մայնունի ուժերը կարողանան դուրս գալով հարվածի տակից՝ նահանջել ու միանալ ոչ հեռու տեղաբաշխված ալ-Չահիրի բանակին:

**Պատմական տեղեկանք.** «Երբ կռիվը սաստկացավ, Մայնունը լուր ուղարկեց Չահիրին իմաց տալով այդ մասին, սակայն սա հեռու էր նրանից: Պատերազմը երկարեց, իսկ Մայնունը պաշտպանում էր իր անձն ու բեռները փոքրաթիվ մահմեդականներով մեծաթիվ հայերի դեմ»:

**Իբն ալ-Ասիր, Լիակատար պատմություն, հատ. IX**

Նկատելով, որ հայկական բանակը ճեղքման տեղամասեր չունի, Մայնունը չի կարողանում ճիշտ գնահատել իրավիճակը: Նա վճռում է, որ մեկ-երկու տեղամասում մարտակարգի ճեղքման տեսանելի վտանգ չունենալով՝ մարտի ըն-

թացքում կհասցնի իր ուժերը մարտակարգով շարել և շրջանաձև պաշտպանությանը ժամանակ չափել: Ամիրան անմիջապես սուրհանդակի միջոցով օգնության հասնելու խնդրանքով դիմում է գլխավոր ուժերին: Ըստ նրա, տեղ հասնելով՝ գլխավոր ուժերը կհարվածեին Հայոց բանակի մարտակարգի թևերին և անհաջող սկսված մարտը հնարավոր կլիներ փրկել և ավելին՝ հաղթանակ չափել:


### Հաղթանակը

Կիսաշրջանաձև պաշտպանություն կազմակերպելու վրա զգալի ժամանակ և ջանքեր ծախսելուց հետո Մայնունը համոզվում է, որ իր հույսերն ապարդյուն են: Ակնհայտ է դառնում, որ գլխավոր ուժերի նույնիսկ հեծյալ զորամասերը չեն հասցնի նախքան մարտի ավարտը Հալեպից օգնության հասնել: Այժմ արդեն նոր հարց է հուզում Մայնունին. ինչպե՞ս իրականացնել նահանջը (տե՛ս սխեմա 2):

Թևանցումներով հայկական զորամասերի մի մասը հայտնվել էր հակառակորդի թևերում ու թիկունքում: Նահանջն իսկական աղետի է վերածվում Մայնունի զորամասերի համար, որոնց ջախջախման ավարտումն արդեն էական դժվարություն չէր ներկայացնում:

Ամեն կերպ շրջապատումից խուսափելու նպատակով հակառակորդի զորքի մնացորդները թողնում են գումակի պաշտպանությունը և արագ նահանջելով՝ մի կերպ խուսափում լիակատար ոչնչացումից:

Սխեմա 2



Ամկ լճի ճակատամարտը 1205թ.

## **ԴԱՐՔԱԿԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 1205Թ.**

Մայնունի գորամասերի ջախջախումով կտրվել էր գլխավոր ուժերի կապը Դարբասակ ուղարկված զորքի հետ, ընդ որում, հայկական բանակը հայտնվում է նրանց միջև: Հայոց արքայի մտահոլացումը հաջողությամբ էր պսակվել, և նախածեռնությանը սկսում է լիովին տիրապետել հայկական կողմը: Միևնույն ժամանակ, առաջին հաղթանակի կարևորությունը մեծ էր լինի, եթե չլինեին հաջողությունը զարգացնելու հստակ ուղենիշները: Ձգտելով հասնել առավելագույն արդյունքի՝ Լևոնը բանակն ուղղում է դեպի Դարբասակ (փաստորեն՝ նահանջում է) սննդամթերքի և զինամթերքի պաշարներով այդ քաղաքի ուղղությամբ շարժվող հակառակորդի զորքի դեմ:


Հայկական բանակի համար նպաստավոր գործոն էր մեծաթիվ սայլերով ծանրաբեռնված հակառակորդի դանդաղաշարժությունը: Կատարվածից անտեղյակ՝ ռազմերթ կատարող ուժերը վստահ էին, որ Հալեպի մոտ ահռելի բանակի տեղակայումն իրենց ազատել է թիկունքում խնդիրներ ունենալուց և մտահոգված էին միայն ճակատային հարվածի չենթարկվելու խնդրով: Այդ նպատակով նրանք ուժեղացրել էին առաջապահը և իրենց երթուղու առջևում մանրակրկիտ հետախուզություն էին կազմակերպել:

Այս ընթացքում Մայնունի ջախջախված գորամասերը հասնում են Հալեպի մոտ ճամբարած բանակին և հայտնում իրենց պարտության մասին: Ստեղծվում է ուշագորավ իրավիճակ: Ալ-Ջահիրը կռահում էր, որ Հայոց բանակը, վճռական խնդիրներ չունենալով, չէր համարձակվի դուրս գալ Կիլիկիայից, բայց չգիտեր, թե որն է լինելու Լևոնի հաջորդ քայլը: Սուլթանը չէր կարող բացառել ոչ մի տարբերակ, այդ թվում նաև իր ճամբարի վրա Հայոց բանակի հարվածի հավանականությունը, և պատրաստվում է վճռական ճակատամարտի: Անհրաժեշտ տեղեկատվության սպասող հակառակորդն ակամայից անգործության է մատնվում: Դա Լևոն Բ-ին հնարավորություն է տալիս դեպի արևմուտք շարժվող բանակի մարտակարգը շարել առաջիկա գործողությունների պահանջին համապատասխան: Մասնավորապես, մինչ վերջապահ գորամասերը կավարտեին մարտադաշտում թողնված ռազմավարի տեղափոխումը, գլխավոր ուժերը սրընթաց արշավում են դեպի Դարբասակ: Նախատեսվում էր, որ արշավող զորքի հետևից շարժվող գունակը մարտադաշտ կհասնի ճակատամարտի ավարտից անմիջապես հետո և գլխավոր ուժերին միանալով՝ կնահանջի դեպի Կիլիկիա (տես սխեմա 1):

Հետախույզների միջոցով պարզելով, որ հայկական բանակը դեպի արևմուտք է շարժվում, ալ-Ջահիրը որոշում է հետապնդում սկսել, սակայն արդեն ուշ էր. հայկական բանակի գլխավոր ուժերը գտնվում էին շուրջ 40 կմ հեռավորության վրա, որը հաղթահարելու համար անհրաժեշտ էր ավելի քան մեկ օր<sup>1</sup>:

<sup>1</sup> Դեպի Դարբասակ արշավող հայկական բանակը հեռանում էր Հալեպի մոտակայքում կենտրոնացած հակառակորդի գլխավոր ուժերից, ու նրանց միջև հեռավորությունը չէր կրճատվում:

Սխեմա 1



Կողմերի երթակարգերը՝ Դարբասկի ճակատամարտի նախօրյակին (1205թ.)

**Ճակատամարտը**

Հայկական կողմը ևս չէր կարող լիովին ազատ գործել, քանի որ հակառակորդն ավելի մեծաթիվ էր, իսկ նախորդ մարտից հետո խլված հսկայական ռազմավարի տեղափոխումը ևս որոշակի դժվարությունների հետ էր կապված: Լևոնը, ճշգրիտ գնահատելով իրավիճակը, որոշում է, որ թիկունքից հարվածի ենթարկվելու հավանականությունը փոքր է, և Դարբասկին մոտեցող հակառակորդի ուժերի գրոհը հետաձգում է մինչև հաջորդ առավոտ:

Երթակարգի առջևում մեծաթիվ ուժեր կենտրոնացրած հակառակորդի ամենախոցելի տեղը թիկունքն էր, որի դեմ էլ ուղղված էր Հայոց բանակի գլխավոր ուժերի հարվածը: Դա հնարավորություն է տալիս երկատված հակառակորդին աստիճանաբար ջախջախել: Մանավանդ որ հարձակման կասեցումից բացի, հակառակորդի զորամասերը պետք է հոգ տանեին պարենի հսկայական պաշարները պահպանելու համար:


Սկսվում է համառ, բայց կանխորոշված ելքով մարտ (տե՛ս սխեմա 2): Ի դեպ, հակագրոհներն ուշագրավ իրավիճակ էին ստեղծել մարտադաշտում, քանի որ պաշտպանվող կողմն անհաջող սկսված ճակատամարտի երկրորդ փուլում փաստացի վերածվել էր հարձակվողի: Հայկական կողմը հնարավորություն է

ստանում հակագրոհող զորամասերին դիմավորել հեծելագորից ավելի ուշ մարտադաշտ հասած նետաձիգների զորամասերի արծակած նետերի տարափով: Այլ խոսքերով, հակագրոհների կասեցմանը մասնակցում է ամբողջ հայկական բանակը: Մասամբ դրանով է բացատրվում մարտում հակառակորդի զոհերի մեծ թիվը:

Հակագրոհների անդրադարձումով էլ ավարտվում է հակառակորդի վերջնական ջախջախումը: Ցանկալի արդյունքի չհասնելով՝ նրանք սկսում են նահանջել: Այդ նկատելով՝ հայկական զորամասերը նետվում են հետապնդման, որը շարունակվում է գրեթե մինչև Դարբասկի մատույցները: Հետապնդման ընթացքում գերվում են հակառակորդի մեծ թվով զինվորներ:

Սակայն արդեն ծագում է նոր խնդիր՝ Դարբասկի կայազորի և ալ-Չահիրի գլխավոր ուժերի միջև հայտնվելու վտանգը: Այդ պատճառով 1205թ. պատերազմաշրջանում իր առջև դրված խնդիրները լուծված համարելով՝ Լևոն Բ-ն բանակին Կիլիկիա վերադառնալու հրաման է արձակում:

Սխեմա 2



Դարբասկի ճակատամարտը 1205թ.

# 1205-1206ԹԹ. ՀԱՂԹԱՐՇԱՎԸ ԱՍՈՐԻՔՈՒՄ

## I հարվածը

Նոր էր ալ-Չահիրն արձակել բանակը, երբ հերթական «անակնկալն» է ցնցում Հալեպի սուլթանությունը. կարճատև դադարից և ուժերի անհրաժեշտ վերախմբավորումից հետո հայկական բանակն աշնանը ներխուժում է հակառակորդի տարածք: Սակայն դա էապես տարբերվում էր գարնանը ծավալված գործողություններից, քանի որ դրանք ոչ թե ակտիվ պաշտպանողական էին, այլ հարձակողական:

**Պատմական տեղեկանք.** «Այդ տարում (18 օգոստոս 1205 - 7 օգոստոս 1206) կիրճերի տեր հայազգի (Լևոնը) մի քանի անգամ արշավեց Հալեբի մահանգի վրա, կողոպտեց, հրկիզեց, գերեց և գերեվարեց»:

**Իբն ալ-Ասիր, Լիակատար պատմություն, հատ. IX**

Հայկական զորագնդերը սրընթաց անցնում են մահմեդականների զավթած Ասորիքի հյուսիսով: Մեծաթիվ, սակայն Լևոն Բ-ի հմուտ ռազմավարության շնորհիվ նախաձեռնությունից իսպառ զրկված հակառակորդն ի վիճակի չէր կասեցնել այդ առաջխաղացումը: Մինչ հակառակորդը կհասցներ համախմբել ուժերն ու դուրս գալ հայկական բանակի դեմ առճակատման՝ Լևոնը հասցնում է վերադառնալ ու ամրանալ Ամանոսի լեռներում:

Ոչ վաղ անցյալում տարածաշրջանի քրիստոնյաների ահ ու սարսափի համբավ ձեռք բերած սուլթան Սալահ ադ-Դինի որդու համար դյուրին գործ չէր Լևոն Մեծագործ արքայի ցասումից խուսափելը: Այժմ արդեն ալ-Չահիրն էր հարկադրված մտահոգվել արդյունավետ պաշտպանություն իրականացնելու խնդրով:

## II հարվածը

1205թ. տարեվերջին մեկ այլ ուղղությունից երկրորդ արշավանքն է ձեռնարկվում (տե՛ս քարտեզ 7.7): Հայոց արքան ուշագրավ ձևով է օգտագործում կլիմայական պայմանները: Հարձակումը սկսվում է մի այնպիսի ժամանակ, որ Հալեպի սուլթանության հյուսիսային շրջաններում եղանակն առանձնապես չխոչընդոտեր հայկական զորամասերի ռազմերթերին, իսկ վերադարձից հետո Կիլիկիայի լեռներն արդեն ձյունապատ, իսկ ճանապարհները՝ անձրևներից

անանցանելի դարձած լինեին: Կրկին, մինչ հակառակորդը կհասցներ համախմբել ուժերն ու ընդառաջ շարժվել, հայկական բանակը հարուստ ռազմավարով վերադառնում է Կիլիկիա:

Ալ-Ջահիրը ևս գիտակցում է ձմռանը Կիլիկիայի լեռներում ռազմական գործողությունների ծավալման անկանխատեսելի հետևանքները: Նա հարկադրված է լինում 1205թ. ընթացքում երկրորդ անգամ բանակն ազատ արձակել (ուղարկել ձմեռանոցները):

Հակառակորդի բանակի բարոյահոգեբանական իրավիճակն էլ ավելի է ծանրանում, երբ գարնանամուտին հայկական բանակը հերթական հանդուգն հարվածն է իրականացնում: Այս անգամ, օգտագործելով հանկարծակիության գործոնը, խնդիր էր դրվել ռազմական գործողությունները վարել ավելի վճռական և հասնել մինչև Հալեպի մատույցները: Հայկական բանակն այս արշավանքն էլ է հաջողությամբ ավարտում: Կիլիկիայի սահմանային ամրություններին մոտեցած հակառակորդի բանակը հայտնվում է նախորդ տարեվերջին չլուծված խնդրի առջև և մեկ տարում երրորդ անգամ է հարկադրված լինում նահանջել:

### **III հարվածը**

1206թ. գարնան-ամռան ընթացքում հայկական բանակը ևս մի քանի նույնատիպ արշավանք է ձեռնարկում (տե՛ս քարտեզ 7.7): Այս պատերազմաշրջանում ևս պատկերը նույնն էր, և հակառակորդը ոչ մի կերպ չէր հասցնում կանխել Հայոց բանակի համարձակ հաղթարշավը:

Ամեն անգամ Հալեպի սուլթանը նոր անակնկալների էր հանդիպում: Ռազմերթերի նախապատրաստվելիս մանրամասն հաշվի էին առնվում նախորդ արշավանքների արդյունքները, որը մեր ռազմավարությունը կատարելագործելու ուշագրավ օրինակներից է:

Ջարգացնելով հաջողությունը՝ հնարավորություն է ստեղծվում էապես բարձրացնել իրականում ոչ մեծ, բայց հսկայական նշանակություն ստացած արշավանքների արդյունավետությունը, որոնց հետևանքով Ասորիքի հյուսիսում գտնվող Այուբյանների ռազմական հենակետերին ծանր հարվածներ են հասցվում: Այդ տարածքները վերածվում են Հայոց բանակի ռազմավարական նախադաշտի:

Այսպիսով, 1205-1206թթ. Կիլիկիայի հայկական թագավորության բանակը ծանր հարված է հասցնում Հալեպի սուլթանության գլխավորած ռազմական դաշինքի ուժերին և ոչնչացնում է Հյուսիսային Ասորիքի այն բոլոր հենակետերը, որոնք հակառակորդը կարող էր օգտագործել Կիլիկիայի դեմ հավանական հարձակումների ժամանակ:

Այս պատերազմը, որի ընթացքում տարածքային մեծ նվաճումներ տեղի չունեցան, Լևոն Բ-ի զորավարական գործողությունների զագաթնակետն է:

Հալեպի սուլթանությունը ոչ միայն դադարեց Կիլիկիայի արևելյան շրջանների ասպատակումը, այլև սկսեց ձեռնպահ մնալ Անտիոքի իշխանապետության հետ Կիլիկիայի հայկական թագավորության հարաբերությանը միջամտելուց:

**Տեղեկանք.** Լևոն Բ-ի օրոք Կիլիկյան Հայաստանի հզորության մասին է վկայում գերմանացի քահանա Վիլբրանդ Օլդենբուրգցին, որն իր ճանապարհորդության հուշագրությունում (1211թ.) Կիլիկիայի նորաստեղծ թագավորության մասին գրում է. «(Կիլիկիայի թագավորությունը) շատ հզոր երկիր է, քանի որ մի կողմից երիզված է ծովով, իսկ մյուս կողմից ունի բարձր և դժվարամատչելի լեռներ, որոնք քիչ անցումներ ունեն և որոնք հեշտ է պաշտպանել, այնքան հեշտ, որ նույնիսկ եթե թշնամին թափանցում է երկիր՝ առանց արքայի թույլտվության այնտեղից դուրս գալ չի կարող»:

# ՀԵԹՈՒՄ Ա. ՀԱՂԹԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԻԿՈՆՏԱՅԻ ԴԵՄ 1225-1249ԹԹ.

## ԱՆՏԻՈՔ-ԻԿՈՆՏԱԿԱՆ ԴԱՇԽՆՔԻ ՉՈՐՔԵՐԻ ՉԱԽՉԱԽՈՒՄԸ 1225-1226ԹԹ.

Լևոն Բ-ն հզորության գագաթնակետին է հասցնում Կիլիկիայի հայկական թագավորությունը և իրենից հետո թողնում է բարգավաճող տնտեսություն ու ամուր պաշտպանված սահմաններ ունեցող մի պետություն: Նրան հաջորդում է դուստրը՝ Ջաբելը, որին խնամակալ (պայլ) է նշանակվում Լամբրոնի իշխանական տոհմի ներկայացուցիչ Կոստանդինը: Ձգտելով ի դեմս Ասորիքի լատինների դաշնակից ձեռք բերել՝ ժողովականները 1222թ. որոշում են Ջաբելին ամուսնացնել Անտիոք-Տրիպոլիի («պրինց») Բոհեմունդ Դ Միակնանու<sup>1</sup> որդու՝ Ֆիլիպի (Փիլիպոս) հետ: Որպես նախապայման Փիլիպոս Անտիոքացուց պահանջվում է, որ նա հետևի հայկական կենցաղին ու կատարի Հայ եկեղեցու ծեսերը:

Հայոց գահին հաստատվելով՝ Ֆիլիպոսը սկսում է խախտել տված խոստումը, արքունիքից հեռացնում է հայ իշխաններին և իրեն շրջապատում է ֆրանկներով: Նրա այսպիսի վարքագիծը չէր կարող հայ իշխանների դժգոհությունների պատճառ չդառնալ, և նրանք Կոստանդին Լամբրոնացու գլխավորությամբ ձերբակալում են Ֆիլիպոսին ու արգելափակում Թիլ Համտունում, որտեղ էլ նա մահանում է 1225թ.:

### Առաջին պատերազմաշրջանը

Կիլիկիայի հայկական թագավորության վրա գերիշխել ձգտող Բոհեմունդ Դ-ն չէր կարող հաշտվել որդու ձերբակալության հետ և սպառնալից վերջնագիր է հղում Կիլիկիա ու պահանջում իրեն հանձնել Ֆիլիպոսին: Իշխանապետի ուժի դիքերից խոսելը բնական հակազդեցություն է առաջ բերում հայ իշխանների շրջանում, որոնք մերժումով են պատասխանում վերջնագրին: Նրանք նաև տեղեկություն են ստանում, որ անտիոքյան զորքերն արդեն սկսել են կենտրոնանալ Կիլիկիայի սահմանին:

Փորձելով նախքան ռազմական նոր գործողություններ ծավալելը «հովանավոր» գտնել՝ Բոհեմունդը Կիլիկիայի վրա հարձակվելու թույլտվություն է խնդրում Հռոմի պապ Հոնորիոս Գ-ից: Վերջինս դժգոհ էր Բոհեմունդի գործե-

<sup>1</sup> Բոհեմունդ Գ-ի որդի Բոհեմունդ Դ-ն 1187-1233թթ. Տրիպոլիի կոմսն էր: Հոր մահից հետո՝ 1201թ., նա տիրում է Անտիոքին: Անտիոքի գահից նա վտարվել է 1216-1219թթ., երբ իշխանապետ է հռչակվել Լևոն Բ-ի զարմիկ Ռուբեն-Ռայմոնդը:

լակերպից և ոչ միայն մերժում է խնդրանքը, այլև բանադրանքի է ենթարկում քրիստոնեական պետությունների դաշինքի նշանակությունը չգիտակցող անխոհեմ իշխանապետին:

Մերժելով պապի հորդորները՝ Բոհեմունդը 1225թ. կեսերին զորքը մտցնում է Կիլիկիա (տե՛ս քարտեզ 7.7):

**Պատմական տեղեկանք.** «(Բոհեմունդը) լուր ուղարկեց մեծ Յոննուն ֆրանկների թագավորին (Յոննի պապին), թույլտվություն խնդրելով հարձակվել հայերի երկրի վրա: Սակայն սա արգելեց նրան հարձակվել, ասելով՝ նրանք մեր համայնքին պատկանող ժողովուրդ (քրիստոնյա) են և չի կարելի նրանց երկրի վրա հարձակվել: Բրինսը չուզեց հնազանդվել... Ալ-Դաուիյա և ալ-Ասբիտար ասպետները<sup>1</sup>, որոնք ֆրանկների եռանդուն ռազմիկներն են, ասացին, որ Յոննի թագավորը մեզ այդ բանն արգելեց, սակայն եղան որիշներ, որոնք հնազանդվեցին բրինսին և մտան Յայոց երկրի (Կիլիկիայի) սահմանները»:

**Իբն ալ-Ասիր, Լիակատար պատմություն, հատ. IX**

Առանց ժամանակ կորցնելու Կոստանդին Լամբրոնացին համախմբում է պետության ապագայով մտահոգ բոլոր իշխանների ուժերը և շարժվում հակառակորդին ընդառաջ: Անտիոք-տրիպոլյան զորքերը մեծ դժվարությամբ ընդամենը կարողանում են հասնել մինչև Թիլ Յամտուն: Այստեղ նրանք տեղեկանում են, որ Ֆիլիպոսը բանտում մահացել է<sup>2</sup>:

Թիլ Յամտունի մերձակայքում հայկական զորքերը հարվածներ են հասցնում հակառակորդին, և ավելին անել չկարողանալով՝ լատինների բանակը հեռանում է Կիլիկիայից:

## ***Երկրորդ պատերազմաշրջանը***

Լատինների համար ռազմաքաղաքական իրադրությունը վերջնականապես անբարենպաստ է դառնում, երբ Յոննի պապի պահանջով հրաժարվում են պատերազմին մասնակցել ասպետական միաբանությունները: Ակնհայտ էր, որ Բոհեմունդի ձեռնարկումն իրատեսական չէր, սակայն պատերազմի մտքից համառորեն չհրաժարվող իշխանապետը դիմում է Իկոնիայի Ալաեդդին Քեյ-Կուբադ Ա (1219-1237թթ.) սուլթանի օգնությանը: Իսավրիայում Լևոն Բ-ից իր նախորդների կրած պարտությունները հիշող սուլթանը որոշում է, որ եկել է փոխհատուցման պահը և առանց հապաղելու համաձայնում է միանալ Բոհեմունդ Դ-ի արկածախնդրությանը:

<sup>1</sup> Ալ-Դաուիյա ասորերեն «աղքատ» նշանակող բառի աղավաղումն է և նշանակում է «տաճարական ասպետ»: Սկզբում սրանք կոչվում էին Քրիստոսի աղքատ ասպետներ: Իսկ ալ-Ասբիտարիյա հյուրընկալ (հոսպիտալիեր) բառի արաբական աղավաղված ձևն է:

<sup>2</sup> Ըստ որոշ տեղեկությունների՝ Ֆիլիպոսը բանտում թունավորվել է:

Կիլիկիան ասպատակելու նպատակ ունեցող ուժերի համախմբում տեղի չի ունենում, քանի որ հենց Բոհեմունդն էր ուժերի միավորմանն անպատրաստ: Նրան չի հաջողվում զսպել քրիստոնեական պետությունների դաշինքը պահպանել ձգտող Յոնոբրիուս պապի ջանքերով Անտիոքում ձևավորված ընդդիմությունը: Բացի այդ, ամռանը (կամ աշնան սկզբին) կրած առաջին պարտությունից հետո նրա բանակը չէր հասցրել պատրաստվել տարեվերջին իրականացվելիք նոր արշավանքին:

Ստեղծված իրադրությունում որոշվում է ներխուժումն իրականացնել ինքնուրույն գործող բանակների ուժերով, և առաջինը 1225թ. դեկտեմբերին Կիլիկիա են ներխուժում Քեյ-Կուբադ Ա-ի զորքերը (տե՛ս քարտեզ 7.7): Տաղանդավոր պետական և ռազմական գործիչ Կոստանդին Լամբրոնացու գլխավորությամբ հայկական բանակը կազմ ու պատրաստ է դիմավորում հակառակորդին: Իկոնիայի բանակը համառ ու հստակ կազմակերպված դիմադրության է հանդիպում:

Հսկայական բանակի առաջխաղացումը կասեցվում է Տավրոսի լեռնային ամրոցների բնագծում: Միայն թվային գերազանցությունն է սուլթանին հնարավորություն տալիս գրավել չորս ամրոց: Բայց գլխավոր անհաջողությունը ժամանակի կորուստն էր, որը հնարավորություն չէր տալիս նախքան «ձմռան վրա հասնելը» անցնել սահմանային լեռնային ամրությունների գոտին ու իջնել Դաշտային Կիլիկիա, որտեղ հնարավոր կլիներ շարունակել պատերազմը:

Փաստացի անհաջողության մատնված թյուրքական բանակը հաղորդակցության ուղիների փակվելու սպառնալիքի պայմաններում, նախքան Բոհեմունդի բանակի հարձակումը սկսելը, հարկադրված է լինում նահանջել և հեռանալ Կիլիկիայից: Իկոնիայի բանակի նահանջը Կոստանդին իշխանին ազատում է երկու ճակատով պատերազմելու հեռանկարից և հնարավորություն է տալիս ուշադրությունը սևեռել հարավային ուղղությամբ ծավալվելիք գործողությունների վրա:



**ԼԼԱՆԿԼԱՅԻ ԱՄՐՈՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՆՏԱՔԸ**

## Հաղթանակը

1226թ. տարեսկզբին ռազմաքաղաքական իրադրությունն անբարենպաստ էր Բոհեմունդի համար, որը ժողովրդականություն չէր վայելում նույնիսկ սեփական երկրում:

**Պատմական տեղեկանք.** «Երբ Հռոմում ... (պապը) լսեց, լուր ուղարկեց Անտիոքի ֆրանկներին, հայտարարելով, թե ինքը բրինսին (պրինցին) բանադրել է: Ալ-Դաուիյա և ալ-Ասբիտարիա և շատ ուրիշ ասպետներ նրա մոտ չէին ներկայանում ու նրա խոսքը չէին լսում, իսկ երբ իրեն հպատակ Անտիոքի ու Տրիպոլիսի ժողովուրդը որևէ տոն էր տոնում, նա (Բոհեմունդը) դուրս էր գալիս քաղաքից և միայն տոնակատարությունը վերջանալուց հետո նորից մտնում էր քաղաք»:

**Իբն ալ-Ասիր, Լիակատար պատմություն, հատ. IX**

Օգտվելով բարենպաստ իրավիճակից՝ Կոստանդին իշխանը համարձակ ռազմավարություն է մշակում: Դեռևս Լևոն Բ-ի օրոք հստակ կազմակերպական կառուցվածք ստացած հետախուզական ծառայության միջոցով տեղեկանալով, որ Բոհեմունդը հարձակման եռանդագին պատրաստություն է տեսնում, հայկական կողմը նախապատրաստվում է ոչ միայն ներխուժումը կասեցնելու, այլև հակահարձակումով հակառակորդին վերջնականապես ջախջախելու: Կոստանդին իշխանը թույլ չի տալիս հակառակորդին նույնիսկ անցնել Ամանոսյան լեռների կիրճերը: Կիրճերում (լեռնային ամրոցներից դուրս՝ ամրոցների մատույցներում) այնպիսի դիմադրություն է ցույց տրվում, որ անտիոք-տրիպոլիսյան բանակը զրկվում է առաջխաղացման բոլոր հնարավորություններից: Կիրճերում դիմադրության կազմակերպումը, որը մինչ այդ էլ հայոց անկանոն մարտավարության բաղկացուցիչներից էր, վերջնականապես դառնում է Կիլիկիայի բանակի յուրօրինակ «ձեռագիրը»:

Սահմանի մոտ էլ հակառակորդը ծանր պարտություն է կրում և հարկադրված հրաժարվում պատերազմը շարունակելու մտքից:

Այսպիսով, 1225-1226թթ. պատերազմի ընթացքում անդրադարձվեց Իկոնիայի սուլթանության բանակի արշավանքն ու ձախողվեց Կիլիկիան ասպատակելու փորձը, ինչպես նաև վերջնականապես կանխվեցին գահի ժառանգման հարցի շուրջ սկսված վեճերը: Պատերազմը նշանավորեց մեր ռազմարվեստի հարուստ պատմության աստղերից մեկի՝ Կոստանդին Լամբրոնացու ռազմական գործունեության գագաթնակետը: Լևոն Բ-ի արժանի հետնորդը լինելով՝ նա կարողացավ շարունակել նախորդ դարավերջին ընդունված ռազմաքաղաքական գիծն ու հասնել նոր հաջողությունների:

## **ՀԱՅ-ԻԿՈՆՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 1246-1249ԹԹ.**

Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ Բարձր Հայքում 1242թ. մոնղոլական զորքերը Բաջուի հրամանատարությամբ երկամսյա պաշարումից հետո գրավում են Կարինը, իսկ հաջորդ տարի Չմանկատուկի ճակատամարտում մոնղոլական բանակը ծանր պարտության է մատնում Իկոնիայի սուլթան Քեյ Խոսրով Բ-ի զորքերին և նվաճում Փոքր Հայքի մեծ մասը:

Կիլիկիայի հայկական թագավորությունը հայտնվում է մոնղոլների ներխուժման վտանգի առջև: Դժվարին աշխարհաքաղաքական իրադրությունում ճիշտ կողմնորոշվելով՝ Հեթում Ա թագավորը (1226-1269թթ.) 1243թ. բանակցություններ է սկսում Բաջուի հետ:

Պահը նպաստավոր էր, քանի որ թեև մոնղոլների հաջողություններն ակնհայտ էին, սակայն Իկոնիայի բանակին պարտության մատնելուց հետո նրանք բավական հյուժովել էին, և հետագա առաջխաղացումը դյուրին չէր լինելու: Հզոր սուլթանության դեմ պայքարում Բաջուն ևս դաշնակից էր որոնում, և Հեթումի առաջարկը տեղին էր: Մոնղոլ զորավարի համար պակաս կարևոր չէր նաև, որ Կիլիկիայի հետ դաշնակցելով՝ նա հնարավորություն էր ստանում Փոքր Ասիան կտրել իր նվաճումների գլխավոր թիրախ դարձրած Միջագետքի և Ասորիքի մահնեդական ամիրաների տիրույթներից ու թշնամիներին ջախջախել առանձին-առանձին:

Մոնղոլները պահանջում են իրենց հանձնել Իկոնիայի սուլթանի կնոջն ու դստերը, որոնք Երզնկայի (Երիզա) շրջանում ծավալված մարտական զործողությունների ընթացքում ապաստանել էին Կիլիկիայում: Սսի արքունիքը ստիպված է լինում կատարել այս պահանջը, և նույն՝ 1243թ. կնքվում է հայմոնղոլական դաշինքը: Այն ազատում է Բաջուի ձեռքերն արևմուտքում և հնարավորություն տալիս 1245թ. արշավել դեպի Հյուսիսային Միջագետք: Ջարգացնելով հաջողությունը՝ մոնղոլական բանակը հասնում է մինչև Դամասկոս:

### ***Իկոնիայի բանակի արշավանքը***

Քեյ Խոսրով Բ-ի պատասխանը սպասել չի տալիս: Հայ-մոնղոլական պայմանագրի կնքումից անմիջապես հետո Կիլիկիայի հյուսիսարևմտյան սահմանային շրջաններում ընդհարումներ են սկսվում, որոնք թեև ընթանում էին սելջուկյան զորքերի առավելությամբ, սակայն էական արդյունքների չեն հանգեցնում:

Կարճատև դադարից հետո՝ 1246թ. սուլթանը որոշում է մեծ հարձակում սկսել դեպի Կիլիկիա: Իկոնիական 30 հազարանոց բանակը, հաղթահարելով Կուկլակ կապանի հայկական ամրություններից մեկ գոտին, ներխուժում է Հայկական թագավորության տարածք: Արշավանքի ընթացքին մոտիկից հետևելու

նպատակով սուլթանը նախքան Կիլիկիա ներխուժելը բանակի հետ հասնում է Կիլիկիայի սահմանի մոտ գտնվող Կոլոնոռոս ամրոցը, որտեղ էլ որոշում է մնալ:

Երկրորդական խնդիրների կատարման վրա ժամանակ ու ջանքեր չծախսելով՝ սելջուկյան բանակը կենտրոնանում է Տարսոնի մոտ: Անհրաժեշտ վերախմբավորումներից հետո հակառակորդը պաշարում է քաղաքը, որով հայտնվում է հայկական տիրույթներում մխրճված դիրքում:

Կատարելով իրենց դաշնակցային պարտականությունները՝ մոնղոլները Քեյ Խոսրովից պահանջում են զորքը դուրս բերել Կիլիկիայից: Տեղեկանալով, որ մոնղոլների օգնությունը հայկական կողմին միայն որոշ ժամանակ հետո կկարողանա հասնել, սուլթանը հրաժարվում է դադարեցնել արշավանքը: Թեև սելջուկյան բանակի դեմ հակամարտությունում հայկական կողմը զրկվել էր դաշնակցի աջակցությունից, սակայն չի դադարեցնում պայքարը:

### **Տարսոնի պաշտպանությունը**

Տարսոնի պաշարումով կաշկանդված հակառակորդին առավելագույնս ծանր իրադրության մեջ դնելու նպատակով Յեթուն Ա-ն որոշում է նախքան հակահարձակման անցնելն օգնել քաղաքում պաշարվածներին: Տարսոնի պաշտպանությունը ղեկավարելու համար այնտեղ են ուղարկվում Կոստանդին թագավորահայրն ու Սմբատ սպարապետը՝ օգնական զորամասով:

Բազմափորձ զորավարի համարում ունեցող սպարապետը բժախնդրորեն է ընտրում իր հետ ամրոց մտնելու նախապատրաստվող զորամասի կազմը: Կանխատեսելով թյուրքական ծանրազեն հետևակի գրոհներն անդրադարձելու խնդիրը՝ նա իր հետ Տարսոն գնացող զորամասի մեջ լատին արբալետածիգների ստորաբաժանում է մտցնում: Նրանք ծանրազեն հետևակի դեմ պայքարի հարուստ փորձ ունեին և, թեև արագածությամբ զիջում էին նետածիգներին, բայց անփոխարինելի էին զրահավորված հետևակին խոցելիս:



Մոնղոլ հեծյալ

Թագավորահայրը և սպարապետը Տարսոն են հասնում ճիշտ ժամանակին: Թյուրքական բանակը պարսպակործան մեքենաներով զգալի վնաս էր հասցրել քաղաքի պարսպի բավական մեծ հատվածի, որի փլուզման վտանգ էր առաջացել: Բացի այդ, գիտակցելով Տարսոնում ավելորդ ժամանակ կորցնելու հնարավոր բացասական հետևանքները, հակառակորդը կատաղի գրոհներով փորձում էր զրավել քաղաքն ու շարունակել առաջխաղացումը:

Տարսոնի կայազորը, որը նախքան համալրում ստանալն էլ համառորեն էր պաշտպանում քաղաքը, հասնում է նոր հաջողությունների: Քաղաքի պաշտպանները ևս մի քանի գրոհ են անդրադարձնում: Այս ընթացքում Յեթում արքան ի մի է բերում թագավորության բոլոր ուժերն ու հակահարձակման ռազմավարություն մշակում: Սակայն մինչ այդ աշխատանքներն ավարտելը, հայտնի է դառնում Քեյ Խոսրով Բ-ի մահվան մասին:

### **Հաղթանակը**

Իրադրությունը հակառակորդի համար վերջնականապես վատանում է, երբ տեղեկություն է ստացվում հայկական բանակի առաջխաղացման մասին: Ամբողջում գտնվող մեծաթիվ կայազորի և հայկական բանակի գլխավոր ուժերի միջև հայտնվելու հեռանկարից խուսափելու համար թյուրքական բանակի հրամանատարությունը հարկադրված որոշում է նահանջել Կիլիկիայից: Հակահարձակման անցած հայկական կողմը կարողանում է նաև ջախջախել սահմանային ամրությունների շրջանում տեղակայված թյուրքական կայազորները:

Ասորիքում վարվող մարտական գործողություններն ավարտած մոնղոլական բանակի հրամանատարությունն իր օգնությունն է առաջարկում Կիլիկիայի հայկական թագավորությանը: Հաջողությամբ հարձակումը զարգացնող հայկական բանակը չէր կարող դադարեցնել առաջխաղացումը և սպասել դաշնակիցներին: Մանավանդ որ ծավալված մարտական գործողություններին նրանց միջամտության խիստ անհրաժեշտություն չկար: Սսի արքունիքում որոշում է կայացվում հրաժարվել առաջարկված օգնությունից և պատերազմն ավարտել սեփական ուժերով:

**Պատմական տեղեկանք.** «Եվ ապա եկան թաթարներից (մոնղոլներից) առաջարկելով իրենց օգնությունը, սակայն մենք հրաժարվեցինք, քանզի քաղաքը մեր ձեռքում էինք պահում»:

**Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 227**

1246թ. պատերազմաշրջանի ավարտին հակառակորդի ձեռքում է մնում միայն Պրական ամրոցը, որը երկու տարի անց հայկական բանակն ազատագրում է: Ավելին, կոտրելով իկոնիական առավել մարտունակ զորամասերի դի-

մադրությունը՝ հայկական բանակը 1248թ. հնարավորություն է ստանում մարտական գործողությունները տեղափոխել հակառակորդի տարածք (տե՛ս քարտեզ 7.7): 1249թ. Հայոց բանակը մի շարք նոր հաղթանակներ է տանում:

Այսպիսով, 1246-1249թթ. Իկոնիայի դեմ պատերազմի ընթացքում հայկական բանակը նախ կարողանում է կասեցնել Կիլիկիա ներխուժած հակառակորդի առաջխաղացումը, ապա թշնամուն դուրս է քշում երկրից, քանիցս ջախջախում և հակահարձակման անցնելով՝ մարտական գործողությունները տեղափոխում հակառակորդի տարածքը:



Արբալետ  
Արբալետի ստեղծումով բազմաթիվ  
երկրների բանակներ հայկական լայնալիճ  
աղեղին համարժեք հեռահար  
խոցման միջոց ստացան:

# ՄԵԿ ԴՐՎԱԳ ՀԱՅՈՑ ԾՈՎԱՄԱՐՏԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

## ԿԻՊՐՈՍԻ ԾՈՎԱՄԱՐՏԸ ՄՈՏ 1211Թ.

Կիլիկիայի հայկական պետության նավատորմի կայացման գործում մեծ էր Լևոն Բ-ի դերը: Եթե արքայի հորեղբոր՝ Թորոս Բ-ի օրոք 1156թ. Կիպրոսի դեմ արշավանքի հանդուզն մտահղացումը կյանքի կոչելու համար Չայոց իշխանապետին անհրաժեշտ էր եղել անտիոքյան նավատորմի աջակցությունը, ապա ընդամենը կես դար անց հայոց նավատորմն այնքան էր հզորացել, որ Միջերկրական ծովում ինքնուրույն գործողություններ էր վարում:

### *Չայ-կիպրական հարաբերությունները*

Ֆրիդրիխ Ա-ից հետո Երրորդ խաչակրաց արշավանքի առաջնորդությունը ստանձնած Ռիչարդ Առյուծասիրտը 1191թ. գրավել էր Կիպրոսն ու հերթական լատինական պետությունը ստեղծել, որը 1197թ. թագավորություն էր դարձել: Նոր պետության հիմնադրման սկզբից եթե հայ-կիպրական հարաբերությունները ջերմ էին, որին նպաստում է նաև Լևոն Բ-ի ամուսնությունը Կիպրոսի թագավոր Յուզո Ա Լուսինյանի (1205-1218թթ.) քրոջ՝ Սիբիլի հետ<sup>1</sup>:


1211թ. Լևոն Բ-ն ամերորդու՝ Յուզո Ա-ի հրավերով ուղևորվում է Կիպրոս: Տեղեկանալով ուղևորության մասին՝ Այուբյանների նավատորմը բաց ծովում դարան է կազմակերպում Լևոն Բ-ի դեմ: Թշնամիների կարծիքով, ցամաքում բազմաթիվ հաղթանակներ տարած Չայոց արքան ծովում խոցելի էր, առավել ևս, որ նա ծով էր դուրս եկել զբոսանավով, ընդամենը մի քանի ռազմանավերի ուղեկցությամբ: Նշենք նաև, որ Կիլիկյան նավատորմի ծովալուսինները հուսալիորեն հսկվում էին, և դարանի կազմակերպումը եգիպտացիներից<sup>2</sup> զգալի ժամանակ է պահանջում: Նախապատրաստական աշխատանքն ավարտվում է միայն Լևոն Բ-ի վերադարձի նախօրյակին:

Վերադարձի ճանապարհին Չայոց արքային ուղեկցող նավախմբի առաջապահի դիտորդները նկատում են հակառակորդին, որը, կարծես, սպասողական դիրք էր գրավել (տե՛ս սխեմա 1): Չաջողվում է նավերն արագ հետ շրջել և հասնել Կիպրոսի ափերին:

<sup>1</sup> Յուզոյի մյուս քույրը՝ Յելվիսը, ամուսնացել էր Անտիոքի գահի հավակնորդ և Լևոն Բ-ի զարմիկ Ռուբեն-Ռայմոնդի հետ:

<sup>2</sup> Հավանական է, որ եգիպտական նավերից բացի՝ հակառակորդի նավատորմի կազմում եղած լիներ նաև Ասորիքի Այուբյանների ուժերը:

Սխեմա 1



Կիպրոսի ծովամարտը (մոտ 1211թ.)

### Հաղթանակը

Մեծ հեռավորությունից նկատելով արքայական ուղեկցող նավախմբի առաջապահին՝ հակառակորդը նետվում է հետապնդման: Իր հերթին, արքան անմիջապես տագնապով բաց ծով է դուրս բերում Կիպրոսի ափերի մոտ պարեկում իրականացնող հայկական նավատորմի գլխավոր ուժերը<sup>1</sup>:

**Պատմական տեղեկանք.** «Լևոնը այս լսելով՝ կրկին ետ դարձավ Կիպրոս, որովհետև ծովի վրա ճանապարհին էր: Վերցրեց իր ռազմական նավերը և եկավ այն դարանը, որ բազմաթիվ նավեր պատրաստել էին նրա համար»:

**Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, էջ 121**

Գլխավոր ուժերի տեղ հասնելուց հետո մարտական իրավիճակը փոխվում է, քանի որ հետապնդում սկսած հակառակորդի նավերն են հայտնվում յուրօրինակ ծուղակում: Հայկական ռազմանավերի անակնկալ հայտնվելն իրարան-

<sup>1</sup> Հավանական է, որ հայկական նավատորմի հետ ծովամարտին մասնակցած լինեն նաև կիպրոսյան նավեր, թեև այս մասին տեղեկությունները միայն կողմնակի են:

ցում է առաջացնում մեծ արագությամբ արշավող հակառակորդի նավավարների շրջանում: Նրանց նավատորմն այնքան մեծ արագությամբ էր իրականացնում հետապնդումը, որ հնարավոր չի լինում շրջել նավերի ընթացքը, և նրանք ստիպված ընդունում են մարտը:


Գլխավոր ուժերի հարվածն ուղղվում է հակառակորդի հրամանատարական նավի վրա (տես սխեմա 2): Հակառակորդի առաջնորդող (հրամանատարական) նավը ենթարկվում է ցռուկով խոյահարման, ճանկվում ու ջրասույզ է արվում: Հրամանատարական նավի խորտակումը խուճապի պատճառ է դառնում, և հակառակորդը դիմում է փախուստի:

Այսպիսով, Կիպրոսի ծովամարտում Կիլիկիայի հայկական թագավորության նավատորմը տանում է իր կարևոր հաղթանակներից մեկը, որը մի շարք առումներիով նաև ամենանշանակալին էր:

Ռազմավարական առումով մեծ նշանակություն ունեւր, որ նավատորմը փայլուն կատարում է անհանգիստ Միջերկրական ծովում պետության ղեկավարի անվտանգության ապահովման բարդ, բայց պատվավոր խնդիրն ու հանդես գալիս որպես ինքնուրույն ռազմավարական առաջադրանքներ կատարելու ունակ, կայացած ուժ:

Մարտավարական առումով կարևոր էին նորաստեղծ նավատորմի իրականացրած համարձակ գրոհը, հակառակորդի հրամանատարական նավի խոյահարումն ու ճանկումը:

Սխեմա 2



Կիպրոսի ծովամարտը (մոտ 1211թ.)

ՊԵՆՏԱՆՈՒՆ VIII

**ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՅՔԱՐԸ  
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**



## XVIII ԴԱՐԻ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Սյունիքի և Արցախի հայության ազատագրական պայքարի նշանակությունը դժվար է գերազնահատել: Հոգեվարք ապրող Սեֆյանների պետության դեմ սկսված զինված պայքարը, որը թուրքական վտանգից բնակչությանը պաշտպանելու անհրաժեշտության պատճառով կարճ ժամանակում վերաճել էր հուժկու շարժման, շուրջ երկու դար անց անկախություն կերտող սերնդի յուրօրինակ ներշնչանքի աղբյուր դարձավ:

Իրանում լարվածությունը զագաթնակետին է հասնում 1722թ., երբ ապստամբած աֆղանները գրավում են Սեֆյանների մայրաքաղաք Սպահանն ու գլխատում Հուսեյն շահին: Օսմանյան կայսրությունը, պատեհ առիթն օգտագործելով, ասպատակությունների է հրահրում Դաղստանի լեռնական լեզգիներին, որոնց տեղական խաներն անկարող էին լուրջ դիմադրություն ցույց տալ: Սկիզբ առնող անիշխանության հետևանքները մեղմելու նպատակով Արևելյան Հայաստանի մի շարք բերդերի շուրջն ու բնական ամրության դեր կատարող լեռնային շրջաններում տարերայնորեն ձևավորվում են ամրացված շրջաններ, որոնք ժամանակակիցները կոչում էին *սղնախներ*: Դրանք ռուսերեն գրագրությունների մեջ հաճախ իմաստավորվում էին «հայկական հավաքույթ» (*армянское собрание*) հասկացությամբ:

Դաղստանցիների առավել ծանր հարվածներին դիմակայող Արցախում սղնախների ինքնակազմակերպումն արագ է ավարտվում: Դրան կարևոր մասնակցություն են ունենում Շամախու խանական զորքերում ծառայող հայ երիտասարդների ջոկատները, որոնք նախորդ տարիներին միացել էին արցախահայության պայքարին: Տեղացիները նրանց սկսում են կոչել «շիրվանցի տղերք»:

Ի տարբերություն տեղացիների, որոնց մեծ մասը զենքը ձեռքն էր առել հայրենի տունը պաշտպանելու անհրաժեշտությունից դրդված, շիրվանցիների մեծ մասը ծառայել էր կանոնավոր զորքերում և հասցրել էր լինել լեռնականների դեմ պատերազմում: Այդ պայմաններում նրանց փորձն ու հմտություններն օգտագործելու պահանջ է զգացվում, մանավանդ որ կարճ ժամանակում շիրվանցիների մի մասը հասցրել էր աչքի ընկնել, իսկ Ավան հարյուրապետը ստանձնել էր սղնախների ընդհանուր ղեկավարումը: Նրան բոլոր ձեռնարկումներում սատարում էր եղբայրը՝ Թարխանը, որը դարձել էր սղնախների զորագնդերի անվանի հրամանատարներից մեկը:

**Տեղեկանք.** 1720-ական թթ. Արցախում կար մելիքների գլխավորած հինգ իշխանություն. Գյուլիստանի (կենտրոնը՝ Գյուլիստանի բերդը), Ջրաբերդի (Երիցմանկանց վանքը), Խաչենի (Գանձասարի վանքը), Վարանդայի մի մասի (Ծովատեղ-Ավետարանոց), Վարանդայի մյուս մասի (Շոշ կամ Քարագլուխ սղնախ) և Դիզակի (Տող և Քիրս սղնախ): Սղնախներ կային Սյունիքում (Կապանում) և Գուգարքում (Լոռիում), ինչպես նաև Գեղարքունիքում և Քոլանիում: Սղնախների ռազմական ուժը կազմում էին հայ մելիքների զինված ջոկատները:

Ստեղծված իրադրությունում առավել անբարենպաստ վիճակում էր հայտնվել Սյունիքը, և Կապանի հայ մելիքները որոշում են դիմել վիրահայերի օգնությանը: Նրանց խնդրագրով Ստեփանոս Շահումյանը մեկնում է Վրաստան և վրացական բանակում ծառայող հայ զինվորականներից Կապանի ուժերին օգնելու համար զորամաս հավաքագրում: Գումարված 2 հազար հոգանոց զորամասի հրամանատար է նշանակվում Դավիթ Բեկը, որին վիճակված էր փաստացի անկախ պետություն ստեղծել:

**Պատմական տեղեկանք.** «Դավիթ Բեկն ազնվական էր, բարեպաշտ, արդարության պաշտպան, գրագետ, արիասիրտ, լայնախոհ, խոսքով ու գործով ուժեղ և վրեժխնդիր՝ մեր ազգի թշնամիների հանդեպ: Իր նման էին և նրա բոլոր հետևորդները: Երբ նա ելավ Վրաց երկրից, լսելով նրա մասին, շուրջը հավաքվեցին գավառի բոլոր կողմերից զինակիր տղամարդիկ»:

**Ղուկաս Սեբաստացի, Դավիթ Բեկի պատմությունը, էջ 95**

Շիրվանցիների Արցախ գալը և սյունեցիներին վիրահայերի ցուցաբերած օգնությունն անկախության վերականգնման համար՝ հայության *համախմբման աննախադեպ* օրինակ է:

## ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

1721թ. ամռանը, 30 հազարանոց խանական զորքերի դիմադրությունը հաղթահարելով, լեզգիները գրավում են Շամախին<sup>1</sup>, ջարդեր կազմակերպում, ապա հաջողություններից ոգևորված՝ 1722թ. մարտի սկզբին Հաջի Դավուդ բեկի գլխավորությամբ անցնում Կուրն ու ներխուժում Սուղանի դաշտավայր: Լեռնականները հեշտությամբ ջախջախում են Արցախի արևելյան ուղղությունը պաշտպանելու խնդիր կատարող Բարգուշատի և Ղափանի կուսակալ Ֆաթի-Ալի խանի ուժերին: Արցախում անիշխանության շրջան է սկսվում: Ինքնաբերաբար ամբողջ իշխանությունը փոխանցվում է սղնախներին, որոնք ղեկավարող մելիքները, ռազմականից բացի, սկսում են կատարել նաև քաղաքական և վարչական գործառույթներ: Սղնախները սկսում են վերածվել արցախահայության վերականգնվող պետականության զինված ուժերի:

Ֆաթի-Ալի խանի զորքերի ջախջախումով անպաշտպան մնացած Սյունիքի հայության աչքում ևս իրանական իշխանությունները վերջնականապես վարկաբեկվել էին, և օրակարգ է մտնում ինքնապաշտպանության ուժերի ստեղծման ու հայկական իշխանության վերականգնման խնդիրը, որում առավել հրատապը ռազմական կառույցի կայացումն էր:

Շիրվանցիների օգնությամբ Արցախի մելիքների ուժերի համախմբման փորձն ուսանելի էր սյունեցիների համար, որոնք ժամանակի ռազմարվեստի պահանջների գիտակ առաջնորդի կարիք ունեին: Վերը նշվեց, որ Ստեփանոս Շահունյանի պատվիրակության հորդորներով գումարված զորագնդի հրամանատարությունը ստանձնել էր Դավիթ Բեկը, որի գլխավորությամբ այն 1722թ. աշնան սկզբին հասնում է Սիսիանի շրջան:



**XVII դարի պարսկական պատրույգավոր հրացան:**  
1720-ական թթ.այս տիպի հրացանները դեռևս լայն տարածում ունեին Իրանի խանական զորքերի հետևակային (հրածոգային) զորամասերում:

<sup>1</sup> Շամախիում կողոպտված ռուս առևտրականների իրավունքների պաշտպանությունը հարմար պատրվակ էր Պետրոս Ա ցարի 1722թ. Կասպիական արշավանքի համար:

## ԵՌԱԲԼՐԻ ՀԱՂԹԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ

Առանց ժամանակ կորցնելու Դավիթ Բեկը սկսում է թուրքական և քրդական ցեղերի կողմից փակված ներքին հաղորդակցության ուղիների բացումը: Առաջինը հարվածի է ենթարկվում Որոտանի ձորը տանող ճանապարհի մոտակա Եռաբլուր սարավանդ ներթափանցած *ղարաչոռլու* թրքախոս ցեղը, որը փակել էր Սիսիանից Կապան տանող ճանապարհը:

Դավիթ Բեկը հարձակվում է *ղարաչոռլուների* վրանային ավանի վրա և փախուստի մատնում խաշնարածներին: Հայկական զորախմբերը շարունակում են առաջխաղացումը և հաստատվում Գորիսի Շինուհայր գյուղում, որը դարձվում է իշխանանիստ:

Ղարաչոռլուների ջախջախումն իրարանցում է առաջացնում շրջակայքի քոչվոր ցեղերի շրջանում, որոնք շտապում են միավորվել: Ջախջախված հրոսակների մնացորդներին են միանում *օթուզիքի* և մեծաքանակ՝ *ջիվանշիր* ցեղերը: Հայկական կողմին նախապատրաստվելու ժամանակ չտալու համար թուրքական ցեղախմբերը հարձակում են սկսում, սակայն ոչ թե դեպի Շինուհայր, այլ Եռաբլուր, որի գրավումը նրանց ոչինչ չէր տալիս:

Դավիթ Բեկը չի հապաղում օգտվել հակառակորդի վրիպումից, շարժվում է նրա դեմ ու սրընթաց հարձակման անցում: *Առաջին գրոհով* հնարավոր չի լինում ջախջախել մեծաթիվ հակառակորդին, թեև մարտն ընթանում է հայկական կողմի առավելությամբ և ավարտվում է ուշ երեկոյան: Մարտի շարունակումն աննպատակահարմար համարելով՝ Դավիթ Բեկը նահանջի հրաման է արձակում՝ նոր հարձակման համար վերախմբավորվելու նպատակով:

Մյուս օրը առավոտյան սկսվում է *երկրորդ հարձակումը*, որը կրկին իրականացվում է արագ և տեղանքն առավելագույնս օգտագործելով: Հակառակորդն այս անգամ էլ է մեծ դժվարությամբ կարողանում կասեցնել հանկարծակի հայտնված հայկական զորագնդի առաջխաղացումը: Կորուստներից խուսափելու նպատակով Դավիթ Բեկը երկրորդ անգամ է նահանջի հրաման արձակում, և հայկական զորագունդը նույն արագությամբ հետ է քաշվում դեպի շրջակա բարձունքները:

Հայկական կողմի «հապճեպ» նահանջը թյուրիմացության է մատնում հակառակորդին, որն այդ զորաշարժն ընկալում է որպես պարտության դրսևորում: Մոլորության մեջ հայտնված և իրավիճակը ճիշտ չգնահատող հակառակորդին ջախջախելու բացառիկ հնարավորություն է ստեղծվում, և Դավիթ Բեկը *երրորդ օրն* առավոտյան հերթական անգամ գրոհում է նրա ճամբարը: Համառ և անզիջում հակամարտությունն ավարտվում է հակառակորդի լիակատար ջախջախումով:

Դավիթ Բեկի հաղթանակների համբավը տարածվեց ամբողջ Հայաստանում: Այսպես, Մխիթար անունով մի աբեղայի կողմից 16-րդ դարի ձեռագրում արված գրառումից տեղեկանում ենք Ներսես վարդապետի գլխավորու-



Դավիթ Բեկի արձանը Կապանում

թյանը Վասպուրականի և շրջակայքի իշխանական տների ներկայացուցիչների՝ Վանա լճի Լիմ կղզու անապատում 1722թ. դեկտեմբերին (առաջին հաղթանակներից երկու ամիս անց) գումարված ժողովի մասին:

**Տեղեկանք.** «Սյունյաց երկրից մի այր՝ Դավիթ-բեկ անվանված, զորաշարժություն էր արել՝ մեր նեղիչներին ու կշտամբիչներին հալածելու համար, մտադրված լինելով ազատագրելու արյունածուփ աշխարհն Յայաստան: Արդ, ո՛վ բարեմիտ ու հայրենապաշտ ժողովականներ, շրջեցեք ձեր երկրի գավառները, խրախուսեցեք ժողովրդին, որ մրափում է խոր խավարի ու տանջանքների մեջ, որպեսզի թոթափեն անիրավների բռնությանց լուծը, և երբ մենք մարտի հրավեր ուղարկենք՝ ապստամբության ձայն բարձրացնեն ընդդեմ մեր մարդակեր ու խաչահալած թշնամիների»:

**Մ.Ներսիսյան, Դավիթ-Բեկի շարժման արձագանքները Վասպուրականում..., էջ 73-74:**



Չրետասայլակով թնդանոթները եվրոպական բանակներում լայն տարածում գտան XVIIդ. կեսերին, իսկ դարավերջից հաստատուն տեղ գրավեցին նաև մեր տարածաշրջանի բանակների սպառազինության մեջ:

## 1724-1725ԹԹ. ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

Ռուս-վրացական հարաբերությունների ջերմացումից դժգոհ շահ Թահմազ Բ-ն (1722-1732թթ.) 1722թ. վերջին գահընկեց է անում վրաց Վախթանգ Ձ թագավորին<sup>1</sup> և նրա փոխարեն գահին նստեցնում Կախեթի թագավոր Կոստանդինին (Մուհամեդկուլի խան): Վերջինս, լեզգիների հետ դաշնակցելով, պարտության է մատնում վիրահայերի աջակցությունը վայելող Վախթանգին և 1723թ. մայիսին գրավում է Թիֆլիսը: Քաղաք մտած լեզգիներն այնպիսի սոսկալի ավեր ու թալան են սփռում, որ հունիսին թուրքական բանակն առանց դիմադրության հանդիպելու գրավում է արյունաքամ եղած քաղաքը: Իրենց հերթին, թուրքերը վրաց գահին են նստեցնում Վախթանգ Ձ-ի մահմեդականացած որդուն՝ Շահնավազին:

### *Առաջին մեծ հաղթանակը*

Վրաստանում դյուրին հաջողություններից ոգևորված թուրքերը որոշում են Արցախի և Սյունիքի վրայով շարունակել արշավանքը դեպի Ատրպատական: Ավանա հակաթուրքական ճամբարում են հայտնվում Մուհամեդկուլի խանը, շահին հավատարիմ մնացած խաներն ու թուրքերի դեմ նրանց պայքարին միացած հայկական սղնախների ուժերը:

Հարձակումը սկսվում է հուլիսին՝ Հաջի Դավուդի գլխավորությամբ լեզգիների Կուրն անցնելու փորձերով: Սղնախներն ակտիվ մասնակցություն են ունենում հրոսակների առջև Գանձակ տանող ճանապարհը փակելու պայքարին: Լեզգիներին ջախջախելուց ընդամենը մեկ ամիս անց Թիֆլիսից դեպի Գանձակ է արշավում Իբրահիմ փաշայի թուրքական 50 հազարանոց բանակը: Թուրքերը հույս ունեին, թե գործերի բարենպաստ ընթացքի դեպքում նախքան ցրտերն ընկնելը կհասցնեն Երևանն էլ գրավել: Գրոհները շարունակվում են 20 օր, սակայն թուրքերը, մեծաթիվ զոհեր տալով, նահանջում են:

Գանձակից թուրքերի նահանջից հետո սղնախներ վերադարձած զորամասերն Ավան հարյուրապետի գլխավորությամբ օգնության են շտապում կապանցիներին<sup>2</sup>:

<sup>1</sup> Վախթանգը Կուրի ավազանի իրանական բոլոր զորքերի հրամանատարի (բեկլարբեկի) պաշտոնն էլ էր կրում: Այդ պաշտոնում նրան էին ենթարկվում շրջակա խանությունների ուժերը:

<sup>2</sup> Ավելի նշանավոր է 1724թ. գարնանը արցախցիների օգնության ռազմերթը Կապան: Երկու ռազմերթերն էլ վկայում են Արցախի սղնախների և Կապանի հայկական իշխանության սերտ համագործակցության մասին:

## 1724թ. գարնան հաղթանակները

Գանձակի պատերի տակ կրած պարտությունից հետո հակառակորդը գրեթե վեց ամիս ձեռնպահ է մնում ակտիվ գործողություններից, ապա երկու տարով հետաձգում է Գանձակը գրավելու գործն ու, ի վերջո, ընտրում է նոր թիրախ՝ Լոռու բերդը: Չմշան ամիսներին պարապուրդի մատնված ասկյարների բանակը պաշարում է Լոռին, սակայն այստեղ էլ նրանց նոր հիասթափություն էր սպասվում: Բերդի կայազորը և սղնախի ամբողջ բնակչությունը համառ դիմադրություն են ցույց տալիս նվաճողներին:

Հակառակորդը հարկադրված նահանջում է Լոռիից: Սակայն թուրքական բանակի անախորժությունները դրանով չեն ավարտվում, քանի որ քիչ անց դեպի Երևան արշավող մեկ այլ թուրքական բանակի առաջխաղացման ճանապարհը փակում են Կարբի ավանի բնակիչները, որոնց հաջողվում է 40 օր (!) շարունակ կասեցնել թուրքական կանոնավոր բանակի առաջխաղացումը:

Թուրքական բանակի հրամանատարությունն, ի վերջո, գիտակցում է, որ մի քանի ամսում երկրորդ ուղղությունում կրած պարտության պատճառով 1724թ. ռազմավարական պլանին ձախողում է սպառնում և հարկադրված բանակցություններ են սկսում կարբեցիների հետ: Իրենց կատարածի իրական արժեքը գիտակցող կարբեցիները բանակցությունների ընթացքում հայտարարում են, թե զենքը վայր կդնեն պայմանով, որ թուրքական բանակի հրամանատարությունն իրենց ավան չմտնելու երաշխիքներ տա: Հակառակորդը հարկադրված է լինում անվերապահորեն ընդունել կարբեցիների պայմանները:

## Նոր մեծ հաղթանակ

Հայաշատ բնակավայրերի դիմադրությունը չէր թուլանում: Արցախի լեռնային շրջաններ և Ջանգեզուր հասած զավթիչներին ցույց է տրվում համառ և կազմակերպված դիմադրություն: Պայքարի կազմակերպվածության առումով ուշագրավ է Վարանդայի ծուղակը 1725թ. մարտի 1-ին:

1725թ. փետրվարի վերջին թուրքական 6 հազարանոց զորագունդը ներխուժում է Վարանդա (տե՛ս քարտեզ 8.1): Նման հակառակորդի դեմ բացահայտ գործողությունները կարող էին զոհերի հանգեցնել: Այդ պատճառով որոշվում է թշնամուն ոչնչացնել ռազմական խորամանկությամբ<sup>1</sup>:

Վարանդայի հայությունը դիմադրության որևէ նշան ցույց չի տալիս: Արցախում ամեն քայլի դիմադրության հանդիպելու սովոր թուրքերի համար դա անակնկալ էր: Թվացյալ հաջողությունն ինքնավստահ է դարձնում նրանց: Ձգտելով օգտվել «անդորրից»՝ թուրքական զորամասերը բաժանվում են ինք-

<sup>1</sup> Տե՛ս 1053թ. Սուրմարիի ծուղակի ներկայացված օրինակը:


նուրույն գործող ստորաբաժանումների, որոնցից յուրաքանչյուրն առանձին առաջադրանք է ստանում: Անտեսելով անվտանգության միջոցառումների անհրաժեշտությունը՝ զորագնդի հրամանատարները փետրվարի 28-ի երեկոյան գիշերելու համար չեն միավորում իրենց ուժերը և տեղաբաշխվում են ցրված՝ գավառակի 33 գյուղերում:

Հարձակումը բոլոր գյուղերում պետք է իրականացվեր միաժամանակ: Միջնադարի հաղորդակցության միջոցների պայմաններում դա իրականացնելը դժվարին գործ էր, սակայն ձեռքի տակ եղածով զինված գյուղացիները խիզախում են ու բաց չեն թողնում եզակի հնարավորությունը: Նրանք գիշերը հարձակվում են իրենց տներում տեղավորված թուրք զինվորների վրա և ոչնչացնում նրանց մեծ մասին: Թուրքական զորամասի երեք հրամանատարներից երկուսը սպանվում են, իսկ երրորդը գերվում է:

Այսպիսով, որքան էլ տարբեր լինեի իրադրությունը 1724թ. գարնանը Լոռիում և Կարբիում ու 1725թ. Վարանդայում՝ ականատես ենք լինում հայոց մարտավարությունում դարեր շարունակ լայն տարածում ստացած հնարքների:



**XVII-XVIIIդդ. թուրքական հրացան՝ հարվածային գործողության կայծքարե կողպեքով:** Փայտե մասերի նախազարդումը միայն առաջին հայացքից կարող է ավելորդ թվալ: Այն արվում էր հրաձիգների կարևորությունը ընդգծելու համար, քանի որ թուրք ասկյարներն առաջվա պես նախընտրում էին յաթաղանը:



**Հրացանների լիցքավորումն արագացնելու համար XVIIդ. հրաձիգները վառողը սկսեցին պահել ահա այսպիսի վառողամաններում:** Լիցքավորման ընթացքում վառողի կորուստ չունենալու համար փողրակը հրացանի տրամաչափից փոքր էր արվում:



**XVIIդ. վերջի հեծյալի հրացան:** Լիցքավորումը հեծյալի համար ոչուրին դարձնելու համար փողի առջևի մասը լայնացված է:

## ՄԵՂՐՈՒ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (1725թ.)

Կապանի հայկական իշխանությունը թուրքական գլխավոր ուժերի ներխուժման նախօրյակին հայտնվել էր հակասական իրավիճակում: 1724թ. մարտի 29-ին Որոտանի բերդի ազատագրումով իշխանության տարածքը բավական ամբողջական էր դարձել և լիովին վերահսկվում էր հայկական զինական ուժի կողմից:

**Տեղեկանք.** «Ոչնչացված էին Որոտնա և Ձևու բերդերի թշնամական կայազորները. Ղափանի սահմաններից դուրս էր արտաքսված, մասամբ էլ՝ բնաջինջ արված «ձմեռանոցների բնույթ կրող» մուսուլմանաբնակ ավանների՝ Քուրդլարի, Քիսի, Լևազի ձորի գյուղերի (Դամալի, Շրդի, Պիրենա, Թաղամեր) կիսանստակյաց բնակչությունը: Քոչվորներին ուժգին հարվածներ էին հասցված Ուչթափալարի սարահարթում, Չավնդուրում և այլուր: Իր անառիկ աշխարհագրական դիրքով, զուտ հայ ազգաբնակչությամբ և ռազմունակ ու փորձառու զինվորականությամբ Ղափանը, կարծես, վերածնունդ էր սյունյաց թագավորների ու Օրբելյանների երբեմնի հզոր ազգային իշխանությունը»:

**Ա.Այվազյան, Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թվականին, ՊԲՀ, 1991, թիվ 2, էջ 102**

Ղա ուղղակի մարտահրավեր էր պարսիկ թահմազ Բ-ին: Գանձակին սպառնացող թուրքական վտանգին դիմակայելու անկարողությունը վերջինիս հարկադրել էր Արցախի *սղնախների* հրամանատարությանը սիրաշահելու քաղաքականություն վարել, սակայն Սյունիքի զինական ուժի հանդեպ նրա վերաբերմունքը բացասական էր: Շահը Ղավիթ Բեկի ստեղծած իշխանության գոյությունն ընկալում էր որպես Երևանի խանի զորքի թիկունքի միասնականությունը խախտող գործոն, մինչդեռ պարսկական բանակի գլխավոր հաղորդակցային ուղուց (Թավրիզ-Նախիջևան-Երևան) հեռու գտնվող իշխանությունը չէր կարող անմիջական վտանգ հանդիսանալ Արարատյան դաշտավայրի պաշտպանության համակարգի համար: Կենտրոնական իշխանությունների կողմից խրախուսվող Բարզուշատի, Որդվատի (Օրդուբադ), Նախիջևանի և մյուս խաները չէին դադարեցնում իրենց ոտնձգությունները: Դրանով նրանց ուժերը հյուժվում են, և վճռական պահին պարզվում է, որը նրանք ի վիճակի չեն էապես խոչընդոտել թուրքերի առաջխաղացմանը: 1724թ. օգոստոսին թուրքերը գրավում են նրանց տիրույթների մեծ մասը, այդ թվում Նախիջևանն ու Որդվատը (տե՛ս քարտեզ 8.2):

Կապանի և Արցախի հայությունը թուրքական բանակի դեմ պայքարում միայնակ է մնում:

1724թ. աշնանը թուրքական բանակը մտնում է Գողթնի տարածք: Նրանց առաջխաղացմանը նպաստում էր խաների հակահայկական դիրքորոշումը: Այս

առունով աչքի էր ընկնում Լևազի խան Սեֆիկուլին: Չավնդուրցիների հրամանատար Թորոսից<sup>1</sup> 1724թ. ամռանը մի քանի ամոթալի պարտություններ կրած խանը նահանջել էր Որդվատ: 1725թ. Սեֆիկուլին հաջողվում է ուժերը միավորել Որդվատի դազու և շեյխ-ուլ-Իսլամի որդիների զորամասերի հետ ու 8 հազարանոց զորքով արշավել դեպի Մեղրի: Ճանապարհին 4 հազարանոց զորագնդով նրանց վրա է գրոհում Դավիթ Բեկը (տե՛ս քարտեզ 8.2):

**Պատմական տեղեկանք.** «Այս ամենի մասին լուրը հասավ Դավթին: Եվ նա անմիջապես իր հետ վերցնելով մոտ չորս հազար հոգի, գալիս բանակում է Կալերում: Առավոտյան ավազակ թուրքերի վրա է հարձակվում և նրանց գտնում է Մեղրի գետի մյուս կողմում բանակած: Իսկ նրանք երբ տեսան Դավթի զորքերը, բոլորը վրա հասան բռնեցին գետափը և թույլ չէին տալիս Դավթին գետն անցնել: Ապա սրանք այստեղից և նրանք այնտեղից կռվեցին առավոտից երեկո»:

**Ղուկաս Սեբաստացի, Դավիթ Բեկի պատմությունը, Գլ. Բ. 39**


Ամբողջ օրը տևած ճակատամարտում հակառակորդը մեծաթիվ զոհեր է տալիս ու հետ քաշվում: Կարծելով, թե նրա առաջխաղացումն այլևս անհնար է, Դավիթ Բեկը զորքը տանում է Հալիծոր:



**Հատված Հալիծորի ամրություններից**

<sup>1</sup> Թորոսը Դավիթ Բեկի անենաօժտված զինակիցներից էր, որը հանկարծակի և սրընթաց գրոհների մեծ վարպետի անուն էր վաստակել: Նրա գործունեությունը երկար չի տևել (զոհվել է նկարագրվող իրադարձություններից քիչ անց), սակայն վառ հետք է թողել ազատագրական շարժման հրամանատարների շարքում:

# 1725Թ. ՊԱՏԵՐԱԶՄԱՇՐՋԱՆԸ



Նահանգից հետո հակառակորդն անորոշության էր մատնված և, թերևս, կդարեցներ արշավանքը, եթե հայկական զլխավոր ուժերի հեռանալուց ընդամենը մեկ օր անց նրա երկար սպասված օգնությունը տեղ չհասներ: Թավրիզից և Ղարաղաղից ժամանած 12 հազարանոց համալրման և տեղ հասնող այլ ուժերի հետ միասին հակառակորդի զորքի քանակը հասնում է 18 հազարի, որը թույլ է տալիս նոր հարձակման անցնել: Ուժերի պատկառելի գերազանցության հասած Սեֆիկուլին հարկ չի համարում դիմել Արաքսի աջ ափին մարտական գործողություններ վարող թուրքական զորամասերի օգնությանը: Ճանապարհի հայկական գյուղերն ավերելով՝ հակառակորդը շարժվում է դեպի Մեղրի (տե՛ս քարտեզ 8.2):

Մեղրին Սյունիքի իշխանության կարևոր սահմանամերձ ամրություններից էր և ուներ 400 հոգանոց կայազոր: Մեղրեցիների հրամանատարներից հայտնի են Կոստանդինի, Հովհաննեսի, Սարիի և Առաքելի անունները: Գիտակցելով, որ ամբողջը գրավելով հակառակորդը ոչ մեկին չի խնայելու, կայազորի հրամանատարությունը որոշում է զինել բոլոր մեղրեցիներին և ավանում ապաստանած փոքրաթիվ գյուղացիներին: Տարօրինակ ոչինչ չկար, որ այդ օրհասական պահին իրենց եղբայրների, ամուսինների ու որդիների կողքին են կանգնում նաև կանայք:

**Գրոհը**

Գյուղաքաղաքի պաշտպանները բաժանվում են երեք մասի, դիրք գրավում երեք թաղամասերում և հաջողությամբ անդրադարձնում առաջին գրոհները: Մեղրեցիները պատրաստ էին կենաց-մահու դիմակայությանը, բայց միայնակ երկար չէին կարող դիմադրել և օգնության համար դիմում են Կալերի ու Չավնդուրի հայերին:

Պաշարման հինգերորդ օրվա երկրորդ կեսին հակառակորդը գրավում է Մեղրու Փոքր թաղը: Գետը կամրջով և ծանծաղուտներով անցնել փորձող նրա զորամասերը համառ դիմադրության են հանդիպում: Նոր թափով բորբոքված մարտը շարունակվում է մինչև ուշ երեկո: Նորանոր զորամասեր մարտի նետող հակառակորդի գրոհները հետևում էին մեկը մյուսին, սակայն Փոքր թաղի գրավումն առավելագույնն էր, որ նա կարողանում է անել:

**Պատմական տեղեկանք.** «Մեղրեցիները սուրհանդակ ուղարկեցին Գուրհամի գավառը՝ Կալեր, ասելով՝ ահա թուրքերի զորքերը հասան, գրավեցին մեր փոքրիկ թաղը: Եվ եթե հիմա մեզ օգնության չհասնեք երկու օրում, մենք նրանց բազմությանը դիմադրել չենք կարող: Եվ երբ սուրհանդակը հասավ նրանց, անմիջապես գիշերով ելավ Ստեփաննոս Վարդանյանը, որ Շահումյան տնից էր և Եկդաստյան ավանից (որ և փոխանորդն ու տեղակալն էր Պապ զորապետի), զնաց Չավնդուր գավառը, Պայինտուր (Բայինդուր) զորապետի մոտ, նրան տեղեկացրեց, որ մեղրեցիները անհամբեր են և վտանգի մեջ են»:


**Ղուկաս Սեբաստացի, Պավիթ Բեկի պատմությունը, Գլ. Բ. 43**

Մեղրին պաշարածներն ուշացումով դիմում են Երասխի (Արաքս) հակառակ ափին տեղակայված թուրքական զորամասերին, կոչ անում անցնել գետն ու միավորվել իրենց հետ: Վերջիններս համաձայնում են և հայտնում, որ գետանցումն իրականացնելու և բանակատեղի հասնելու համար իրենց անհրաժեշտ է ընդամենը մեկ օր: Այս տեղեկությունը փոխում է հակառակորդի ծրագրերը, որի նոր գրոհը պետք է սկսվեր հաջորդ օրը կեսօրին: Օգնության շտապող զորամասերին սպասելու համար որոշվում է ևս մեկ օրով հարձակումը հետաձգել:

### Գիշերային արտագրոհը

Մեղրեցիներին հայտնի չէր իրենց ուղարկած սուրհանդակի ճակատագիրը: Այդ հանգամանքը նրանց հարկադրում է ստեղծված իրավիճակից դուրս գալու համար ինքնուրույն ելք փնտրել: Ծանրագույն մարտից հետո երկու կողմերն էլ հոգնած էին, սակայն վճռական գրոհի կասեցումից գրեթե անմիջապես հետո մեղրեցիները գիշերային արտագրոհ են իրականացնում: Գրոհը հասնում է նպատակին: Գետի հակառակ ափն անցած ստորաբաժանումները զգալի կորուստներ են պատճառում և փախուստի մատնում հակառակորդին, սակայն չեն համարձակվում երկար հետապնդել նրան (տես սխեմա 1)։

Սխեմա 1



ՄԵՂՐԻԻ ՃԱԿԱՏԱՍՄԱՐՔԸ 1725 Թ.

**Պատմական տեղեկանք.** «Քաջ ու արի մեղրեցիների զորքերը այն գիշեր սխրանքներ գործեցին: Անցնելով գետի մյուս ափը՝ անսպասելիորեն թշնամու բանակի մեջ մտան և նրանցից շատերին սուր-սուսերով խորտակեցին, իսկ Շահիսլամի որդին երկու հազարով փախավ Օրդուվար քաղաքը: Բայց որովհետև մեղրեցիները քիչ էին, չկարողացան իսպառ ջնջել և վերացնել նրանց այնտեղից, վերստին դարձան Մեղրի»:

**Ղուկաս Սեբաստացի, Դավիթ Բեկի պատմությունը, Գլ. Բ. 46**

Առաջադրանքը հաջողությամբ ավարտելով՝ մեղրեցիները լուսադեմին վերադառնում են ելման դիրքերը: Գիշերվա ընթացքում ստորաբաժանումների անկանոն նահանջի ու տված մեծաթիվ զոհերի պատճառով հակառակորդը չի կարողանում վերականգնել խախտված մարտակարգը, և կրկնվող անհաջողություններից դժգոհելով՝ միավորված զորքի ճամբարը լքում է շեյխ-ուլ-իսլամի որդին՝ իր 2 հազարանոց զորամասով հեռանալով դեպի Որդվատ:

### ***Օգնությունը***

Մինչ Մեղրիում թեժ մարտեր էին ծավալվել՝ սուրհանդակի Կալեր հասնելուց անմիջապես հետո օգնելու նպատակով նախապատրաստական բուռն միջոցառումներ են սկսվում: Քանի որ Կալերում ուժերն անբավարար էին, որոշվում է ներգրավել նաև Չավնդուրի ստորաբաժանումներին:

Ի վերջո, ի մի է բերվում 2 հազար հոգանոց զորամաս, որը Բայինդուր զորապետի գլխավորությամբ շարժվում է դեպի Մեղրի: Բայինդուրը զորամասը երթի է հանում զորահավաքից անմիջապես հետո, ինչը հնարավորություն է տալիս երեկոյան անցնել ճանապարհի մեծ մասը, հասնել Մազրան ավանն ու այնտեղ գիշերել: Բայինդուրի մտահոգությունը հիմնավոր էր, քանի որ նրան ևս հայտնի էր դարձել Արաքսի հակառակ ափին գործող թուրքական զորամասերի մասին: Կարճատև դադարից հետո՝ կեսգիշերն անց, Բայինդուրը ոտքի է հանում զորամասը, շարունակում ռազմերթն ու առավոտյան, երբ գիշերային իրարանցումից հետո հակառակորդի զինվորները խոր քուն էին մտել, հասնում է Մեղրու Մեծ թաղ:

### ***Չաղթանակը***

Բայինդուրը մեղրեցիներին հայտնում է Արաքսի մյուս ափին տեղաբաշխված զորամասերի մասին իրեն հայտնի դարձած հետախուզական տեղեկությունը: Հակառակորդի ուժերի միավորումը կանխելու համար որոշվում է նոր արտագրոհ իրականացնել: Ուշագրավ է, որ գիշերային հաղթանակից հետո Մեղրիում տիրող ոգևորությունը տեսնելով՝ զորապետը ներգրավում է նաև նա-

խորդ ամբողջ օրը մարտերի մեջ եղած և գիշերային արտագրոհին մասնակցած մեղրեցիների բոլոր ուժերը:


Ի պատիվ հայ զորապետի նշենք, որ զորամասի Մեղրի հասնելն իրականացվել էր լիակատար գաղտնիության պայմաններում՝ շրջանցելով հակառակորդի բոլոր դիտակետերը: Այդ պատճառով, թեև հակառակորդն ամրոցի պատերին սկսված իրարանցումը նկատել էր, սակայն կանխարգելիչ միջոցառումներ չի ձեռնարկում: Ավելին, նոր արտագրոհների հնարավորությունը բացառելով՝ առավոտյան թուրքերը զինվորներին թուլյատրում են քնել:

**Պատմական տեղեկանք.** «Մեղրեցիները շտապ նրանց (օգնության եկածների) համար կերակուր պատրաստեցին: Այնժամ Պայինտուրը, որ իշխան էր և իր հետ եկած զորքի հրամանատարը, չթողեց նրանց, ասելով. «Մենք ոչինչ չենք ուտի, մինչև Աստծու ողորմածությամբ մեր թշնամիներին չվճնդենք»... Որովհետև մեկ օր առաջ այլազգիները գրել էին թուրքերի զորականներին, որոնք Երասխ գետի մյուս կողմում էին, որ գան օգնության հասնեն իրենց, իսկ դրանք պատրաստ էին բազում զնդերով գալու, իրենց օգնության հասնելու»:

**Ղուկաս Սեբաստացի, Ղավիթ Բեկի պատմությունը, Գլ. Բ. 47-48**

Բայինդուրը որոշում է ուժերը բաժանել երեք հավասար մասի՝ «յուրաքանչյուր գունդը ութ հարյուր վաթսուն սպառազեն մարդով»: Ջորապետը զորամա-

Սխեմա 2



ՄԵՂՐԻԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 1725 Թ.

սերը գրոհի է ուղարկում սանդղածն մարտակարգով, իսկ պահեստագոր չի առանձնացնում: Ռազմարվեստի տեսանկյունից բացառիկ է, որ գրոհը պետք է սկսեին ոչ թե *առաջ ընկած* թևերը, այլ *հետ մնացող* կենտրոնը (տե՛ս սխեմա 2):

**Պատմական տեղեկանք.** «Ապա (Բայանդուրը) մի գունդն ընդառաջ ուղարկեց թուրքերի դեմ ճակատելու և մյուս երկու գնդերը ձայն տալով խրախույս կարդացին և վրա հասան թուրքական զորքերին աջից ու ձախից և օրվա տասնվեցերորդ ժամից մինչև քսաներորդ ժամը շրջապատեցին, իրենց մեջ առան անօրենների զորքերի բազմությունը և այն օրը նրանցից կոտորեցին ավելի քան տասնմեկ հազար մարդ, մյուսներին հալածեցին Օրդուվար, իսկ հաջի Շափիին, որ ամենից աչքի ընկնողն էր, ձերբակալեցին»:

**Ղուկաս Սեբաստացի, Դավիթ Բեկի պատմությունը, Գլ. Բ. 49**


Հարձակումը սկսվում է կեսօրին, սակայն ասկյարների մեծ մասը դեռևս քնած էր: Առավոտյան քնից նոր արթնացողների մյուս մասն էլ դեռևս չէր զինվել ու պատշաճ կերպով հանդերձավորվել: Կարծելով, թե քաղաքի կայազորը հերթական արտագրոհն է իրականացնում, տագնապով ոտքի հանված զորքը, առանց մարտակարգ ձևավորելու, փորձում է հախուռն հակագրոհով ջախջախել կենտրոնի ստորաբաժանումներին: Այդ ժամանակ էլ մարտադաշտ են հասնում զորաթևերի ստորաբաժանումները և կենտրոնի զորաթևի դեմ խոնված հակառակորդի վրա գրոհում թևերից: Հարվածն անսպասելի էր դեռևս մարտակարգ չձևավորած հակառակորդի համար, որի ստորաբաժանումներն այս անգամ ևս շտապում են շրջվել դեպի աջ ու ձախ: Փաստորեն, մարտի առաջին փուլում հակառակորդի գրեթե ամբողջ զորքն, իր անելիքը չիմանալով, այս ու այն կողմ էր վազում:

Ուժեղ խաչածն (թևային) կրակի տակ ընկած հակառակորդը փորձում է նահանջել՝ թևային հարվածների տակից դուրս գալու համար: Թևերում սկսված ջախջախումից անտեղյակ և նահանջի իմաստը չըմբռնող ասկյարները երկու կողմից խաչածն կրակի տակով փորձում են դուրս գալ մնացած միջանցքով, որը կրակային պարկի է վերածվում նրանց համար (տե՛ս սխեմա 3):

Այսպիսով, հակառակորդի կենտրոնը սկսում է նահանջել դեպի հետ, իսկ թևերը՝ իրենց առջև մարտակարգով շարված հայկական զորամասերի հակառակ ուղղությամբ (փաստորեն՝ դեպի կենտրոն): Թևերի զորամասերը փակում են կենտրոնի ուժերի նահանջի ճանապարհը: Նոր իրարանցում է սկսվում: Ընդ որում, թևերից նահանջողներն այնքան են հակառակ ուղղությամբ շարժվում, մինչև որ կասեցվում են հակառակ կողմից կրակող հայկական զորամասի կողմից և նույն ձևով հետ շտապում:

Օգտագործելով թևերում սկսված խուճապը և զորամասերի նահանջելու պատճառով առաջացած քաշքշոցը՝ հայկական զորամասերը կենտրոնում

Սխեմա 3



ՄԵՂՐԻԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 1725 թ.

սկսում են առաջ շարժվել և ձեռնամարտի են բռնվում հակառակորդի հետ: Դա փախչող զորամասերին հարկադրում է շրջվել և ընդունել մերձամարտը: Քանակապես գերազանցող հակառակորդին մի պահ հաջողվում է դանդաղեցնել հայկական կենտրոնի առաջխաղացումը, բայց թևերի նահանջից հետո ազատված հայոց թևերն առաջ են անցնում և սկսում են շրջանցել մարտադաշտում մնացածներին: Վերջիններս նահանջի մի քանի անհաջող փորձերից հետո դադարեցնում են դիմադրության փորձերը և գերի հանձնվում: Գերվում է նաև զորաթևի հրամանատարը:

Մարտադաշտից ոչ մեծ հեռավորության վրա՝ Երասխի մյուս ափին կենտրոնացած թուրքական զորամասերը չեն համարձակվում անցնել գետն ու հետ են քաշվում: Դա հայկական զորամասերին ազատում է թևային հարվածի սպառնալիքից, և նրանք եռանդուն հետապնդում են սկսում, որը շարունակվում է գրեթե մինչև Որդվատ: Հետապնդման ընթացքում ևս հակառակորդը մեծաթիվ զոհեր է տալիս:

Մեղրու ճակատամարտը 1720-ական թթ. հայոց ազատագրական շարժման կարևոր հաղթանակներից է: Մեղրի արշավող ավելի քան 18 հազարանոց զորքը մի քանի օրում գրեթե ամբողջությամբ ոչնչացվում է. բավական է նշել, որ վերջին մարտում հակառակորդը տալիս է 11 հազար զոհ, որը մարտին մասնակցող հայկական զորամասերից գրեթե քառակի ավելի էր:

## **Ամփոփում**

Սյունիքում և Արցախում կազմակերպված ազատագրական շարժումը հանգեցրեց հայկական ինքնավար իշխանապետությունների ստեղծմանը: Դավիթ Բեկի և նրան հաջորդած Մխիթար Բեկի (Մխիթար Սպարապետի) իշխանությունը ճանաչվում է պարսկական արքունիքի կողմից: Թահմազ Բ շահն առաջարկում է Դավիթ Բեկին դաշնակցել թուրքական հորդանների դեմ պայքարում: Ձևավորվող հայ-իրանական ռազմաքաղաքական միության ամրապնդման հաջորդ քայլն է դառնում շահի կողմից Դավիթ Բեկին սեփական դրամ հատելու իրավունք շնորհելը, որը նշանակում էր Սյունիքի հայկական իշխանապետության անկախության փաստացի ճանաչում:

ՊԵՆՏՈՆ IX

**ՀԱՅԿԱԿԱՆ «ՌԱԶՄԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՆԸ» ՌՈՒՄ-ՊԱՐՍԿԱԿԱՆ  
ԵՎ ՌՈՒՄ-ԹՈՒՐԲԱԿԱՆ  
ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ  
ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ**

**1799** ք. Ա.Սուվորովի գլխավորած ռուսական բանակի հաղթարշավը Եվրոպայում, 1812թ. նապոլեոնյան բանակի ջախջախումը և դրան հաջորդած իրադարձությունները մեր տարածաշրջանում ևս ուժերի հարաբերությունը փոխում են հոգուտ Ռուսական կայսրության, որն անցնում է Կովկասի լեռներից հարավ ընկած տարածքների նվաճմանը, որն սկսվել էր 1801թ. Վրաստանի միացումով: 1813թ. Գյուլիստանի պայմանագրով մի շարք տարածքների թվում Ռուսաստանի տիրապետության տակ են անցնում նաև Հայաստանի հյուսիսարևելյան հողերը՝ Շիրակը, Արցախը, Լոռին, Ղազախը, Ջանգեզուրը: Արդեն այս պատերազմում սկսում է կարևոր դեր խաղալ հայ ժողովուրդը, որը տարածաշրջանում ռուսների հուսալի հենարանը դառնալով՝ վերջիններիս ազատում է մարտական և մարտական ապահովման մի շարք խնդիրներից ու նրանց հնարավորություն տալիս կենտրոնանալ ընդհանուր առմամբ փոքրաթիվ ուժերը բուն գործողություններին նպատակամղելու հիմնահարցին:

Պարսից արքունիքը չի հաշտվում տարածքային այս կորուստների հետ, որի պատճառով Ռուսաստանի դեմ 1826թ. նոր պատերազմ է սկսում, սակայն ոչ միայն հաջողությունների չի հասնում, այլև կորցնում է Արաքսի ձախ ափի իր բոլոր տիրույթները՝ ռազմավարական նշանակություն ունեցող Երևանի բերդով (1827թ.):

Երկու պատերազմների ընթացքում (1804-1828թթ.) Հայաստանի արևելյան շրջաններում բավականաչափ ամրացած Ռուսաստանը վճռական ընդհարման է դուրս գալիս Օսմանյան կայսրության դեմ: Ռուս-թուրքական հակամարտության այս փուլը տևում է շուրջ կես դար, որի ընթացքում տեղի են ունենում 1828-1829թթ., 1853-56թթ. և 1877-1878թթ. պատերազմները: Ռուսաստանին են անցնում Բաթումից մինչև Ախուրյանի գետաբերանն ընկած տարածքները: Ռուսական բանակի հաղթանակների կերտման գործին կարևոր մասնակցություն են ունենում ինչպես հայազգի զեներալներն ու սպաները, այնպես էլ հայ կամավորականները:

**Տեղեկանք.** 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմին մասնակցել էին հայ աշխարհագրային 100 հոգանոց հեծյալ ջոկատը, արցախյան մելիքների հեծյալ ջոկատները, Գրիգոր Մանուչարյանի 500 հոգանոց հեծյալ ջոկատը և Սյունիքի աշխարհագրայինները:

1826-1828թթ. պատերազմում աչքի են ընկնում պաշարված Շուշիի ավելի քան 1500 հայ պաշտպանները (1826թ.), հակառակորդի հարձակումը մի քանի անգամ հետ մղած Շիրակի Փոքր Ղարաքիլիսա գյուղի մարտիկները, կրկին՝ Մանուչարյանի ջոկատը, Մարտիրոս Վեքիլյանի հեծյալ ջոկատը և այլք: Հայության մեջ մեծ արձագանք է գտնում ռուսների Երևանյան արշավանքը (1827թ.): Մայիս-օգոստոսին Թիֆլիսում կազմավորվում և արշավանքին մասնակցելու է մեկնում հայկական 3 գումարտակ: Դրանց մարտիկների ընդհանուր թիվը շուտով գերազանցում է 1000-ը: Նրանք Օշականի ճակատամարտում, Սարդարապատի և Երևանի ազատագրման ժամանակ և դեպի Ատրպատական կատարված արշավանքներում մշտապես առաջին շարքերում էին:

Կամավորական այս գումարտակները մասնակցություն են ունեցել նաև 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմին: Ընդհանուր առմամբ այս պատերազմին մասնակցել են արևելահայ 2 հազ. հետևակային (այդ թվում 800 հոգանոց Հայկական հետևակային գումարտակը) և 800 հեծյալ կամավորներ (ներառյալ 400 հոգանոց Հայկական հեծյալ գունդը): Կամավորական ջոկատներ են ստեղծել նաև արևմտահայերը: Հատկապես նշանավոր էր կարսեցիների 800 հոգանոց հեծյալ ջոկատը:

Հոգեվարք ապրող Օսմանյան կայսրությունում հայերի և մյուս քրիստոնյա ազգերի նկատմամբ բռնությունների քաղաքականություն էր վարվում: Դրանք աննախադեպ չափերի են հասնում արյունարբու սուլթան Աբդուլ-Համիդ Բ-ի (1876-1909թթ.) գահակալման առաջին տարիներից: Ինչպես կայսրության մյուս ծայրամասերում, այնպես էլ Հայաստանում ծավալվում է ֆիդայական (հայդուկային) շարժումը: Ֆիդայական փոքրաթիվ ջոկատներին էր վիճակված պաշտպանել մեծ տերությունների դավերին զոհ գնացող անմեղ ժողովրդին ինչպես 1894-1896թթ. ջարդերի ժամանակ, այնպես էլ հետագայում: Այդ պայքարի ընթացքում տարած հաղթանակներին են նվիրված այս գլխի երկրորդ մասի ակնարկները:

# 1826-1828ԹԹ. ՌՈՒՄ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՆԵ

## ՇՈՒՇԻՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1826Թ. ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ)

Կովկասում և Միջին Արևելքում Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը թույլ չտալու համար Անգլիան և Ֆրանսիան նոր զինված առճակատում են հրահրում Ռուսաստանի և Պարսկաստանի միջև: 1826թ. հուլիսի վերջին գահաժառանգ Աբաս Միրզան, որ նշանակվել էր պարսկական 60 հազարանոց բանակի գլխավոր հրամանատար, խախտելով Գյուլիստանի պայմանագիրը, անցնում է սահմանը: Դրանով սկսվում է 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմը:


Աբաս Միրզան իր բանակը բաժանում է երկու մասի, որոնցից մեկը՝ Յասսան խանի առաջնորդությամբ, շարժվում է Շիրակի ուղղությամբ, իսկ մյուսը՝ գահաժառանգի գլխավորությամբ, ներխուժում է Արցախ (տես քարտեզ 9.1): 1826թ. վաղ գարնանը հայ հետախույզներն Արցախում ռուսական զորքերի հրամանատար, գնդապետ Իոսիֆ Ռեուտին պարբերաբար տեղեկացնում էին Պարսկաստանում իրականացվող զորահավաքի, սահմանամերձ գոտում պարսկական մեծաքանակ զորքերի կուտակման և Արցախի տարածք ներխուժման անթաքույց նախապատրաստությունների մասին: Այդ տեղեկատվությունը Ռեուտն անմիջապես փոխանցում է Կովկասյան կորպուսի գլխավոր հրամանատար, գեներալ Ն.Սուրաբյովին, վերջինս էլ՝ ռուսական բանակի գլխավոր շտաբ: Մինչդեռ այնտեղ այդ տազնապահարույց լուրերը պատշաճ արձագանք չեն ստանում, որի հետևանքով պատերազմի սկզբում Անդրկովկասում տեղակայված ռուսական ոչ մեծաքանակ զորքերն անպատրաստ էին պարսից բազմահազարանոց բանակին արժանի հակահարված տալ:

1826թ. հուլիսի 25-ին Աբաս Միրզան ավելի քան 50 հազարանոց բանակով շրջափակում է կարևոր նշանակություն ունեցող Շուշիի բերդը: Սկսվում է Շուշիի գրեթե հիսնօրյա պաշարումը: Արցախում ռուսական զորքերն անկարող էին պատշաճ դիմադրություն ցույց տալ ահեղ հակառակորդին:

**Տեղեկանք.** «Ղարաբաղում այն ժամանակ տեղակայված էր միայն 42-րդ եգերական գունդը, որի մեկ գումարտակը գրեթե ամբողջությամբ գտնվում էր Շիրվանում և Նուխիում: Ընդհանուր առմամբ այն կազմում էր 2700 սվին՝ 6 հրանոթով, հավելյալ՝ 420 կազակները. զորախումբ, որ աննշան էր՝ պարսկական հսկայական բանակի համեմատությամբ»:

**В.Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, том 3, с. 68**

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1826 Թ. ԱՄՈՒՆԸ



Վիճակն ավելի է ծանրանում այն բանից հետո, երբ սահմանից դեպի Շուշի նահանջող ռուսական զուսարտակներից մեկը՝ շուրջ 1000 զինվոր, ընկնում է շրջապատման մեջ և, հավատալով պարսիկների խոստումներին, անձնատուր լինում ու գլխովին ոչնչացվում (տե՛ս քարտեզ 9.1): Ըստ այդմ, բերդի ռուսական կայազորը բաղկացած էր ընդամենը 1700 զինվորներից՝ սպառազինված չորս դաշտային, մեկ բերդային և երկու փոքր հրանոթներով: Ոչ պակաս կարևոր էր նաև այն հանգամանքը, որ բերդը, որպես պաշտպանական կառույց, անմխիթար վիճակում էր:

### **Հայ ազգաբնակչության մասնակցությունը բերդի պաշտպանությանը**

Աբաս Միրզան պահանջում է անհապաղ հանձնել քաղաքը, այլապես սպառնում գրավել ու հիմնահատակ ավերել այն, իսկ բնակչությանը՝ սրի քաշել: Շուշիի հայ բնակիչները և փոքրաթիվ ռուսական կայազորը՝ գնդապետ Ռեուտի գլխավորությամբ, վճռում են պաշտպանել այն, մինչև ռուսական բանակի հիմնական ուժերն օգնության կհասնեին: Հայ բնակիչներից շատերը՝ շրջակա 22 գյուղերի ավելի քան 1500 հայ գյուղացիներ, համալրում են կայազորի շարքերը և անձնվիրաբար մարտնչում ամրոցի պարիսպների վրա:

**Տեղեկանք.** Գնդապետ Ռեուտի զեկուցագրից գեներալ Երմոլովին. «Բերդը պաշտպանող հայերի վերաբերյալ իմ պարտքն են համարում բացատրել, որ նրանց ծառայությունն արժանի է ուշադրության, որովհետև նրանք բոլորն էլ գործում էին գերազանց քաջությամբ, դիմացան հակառակորդի բազմաթիվ գրոհներին և հետ չպրտեցին նրանց՝ խոշոր կորուստներով, արհամարհում էին պարենի պակասը և երբեք չեն խորհել բերդը հանձնելու մասին, նույնիսկ, երբ վրա հասավ կատարյալ սովը»:

**Վ.Պոտտո, Ղարաբաղի առաջին կամավորները, էջ 48-49**


Ռեուտը բերդապարսպի առանձին հատվածների պաշտպանության ղեկավարումը վստահում էր հայերին: Ելիզավետպոլի դարպասների հարակից տեղամասի պաշտպանությունը ղեկավարում էր քաղաքի անվանի հայերից մեկը՝ Աղաբեկ Քալանթարովը՝ 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի հերոս, ռուսական բանակի հայազգի փառապանօ գեներալ Հովհաննես Լազարևի պապը:

Հարություն Ալթունյանը (Արուֆին Ալթունովը), գնդապետ Ռեուտի հանձնարարությամբ, անցնելով պարսից զորաբանակի շարքերի միջով՝ Կովկասյան կորպուսի հրամանատար, գեներալ Երմոլովին է հասցնում Ռեուտի գրությունները՝ արտաքին աշխարհից կտրված բերդում տիրող իրավիճակի վերաբերյալ տեղեկատվությամբ և անհապաղ օգնության խնդրանքով: Ապա նույն ճանապարհով Ալթունյանը վերադառնում է քաղաք՝ բերելով Երմոլովի հուսադրող


պատասխանը: Այս սխրանքի համար Ալթունյանը պարգևատրվում է Սուրբ Գեորգիի շքանշանով:

Կատաղի գրոհներով չկարողանալով ճնշել փոքրաքանակ կայազորի և հայ աշխարհագորայինների դիմադրությունը՝ Աբաս Միրզան վճռում է երկարատև պաշարումով սովամահ անել պաշարվածներին և այդպես հարկադրել անձնատուր լինել: Ծանր իրավիճակը մեղմելու համար հայ ազգաբնակչությունը՝ մեկ մարդու նման, ունեցած ամբողջ պարենի պաշարը տրամադրում է բերդի պաշտպանության գործին: Բարեբախտաբար, պաշարման ողջ ընթացքում բերդի և Շուշի գյուղի հաղորդակցությունը չի ընդհատվում. ջրաղացները գործում են անխափան և հաց մատակարարում բերդի պաշտպաններին: Բացի պարենամթերքից, հայ ազգաբնակչությունը կայազորին է տրամադրում իր ունեցած զինամթերքի պաշարը: Ավելին, Շուշիի հայ արհեստավորները զենք, զինամթերք, անգամ վառոդ են պատրաստում պաշտպանների համար:


**XVIII-XIX դարերի պատերազմներում կիրառվող կայծքարե կողպեքով հրացանների կողպեքների (փակաղակների) հիմնական տեսակները**



Անվավոր կողպեքն առավել պարզունակն էր, սակայն առավել հուսալի էր, և հրաձգության ընթացքում խափանումները հազվադեպ էին:



Հարվածային գործողության կողպեքներն անհամեմատ ավելի արագաձիգ էին, սակայն, ինչպես երևում է նկարում, կողպեքը «բաց» էր:



Հարվածային գործողության կողպեքներն անհամեմատ ավելի արագաձիգ էին, սակայն, ինչպես երևում է նկարում, կողպեքը «բաց» էր:

**Տեղեկանք.** «Աբաս Միրզան բազմիցս փորձեց գրավել գյուղը, սակայն նրա բոլոր ջանքերը փշրվեցին՝ բախվելով հայերի անսասանությանը և լեռների անմատչելիությանը: Բնակիչները Սաֆար և Ռոստոմ Թարխանյանների գլխավորությամբ ոչ միայն դիմադրում էին հակառակորդին, այլև ժամանակ առ ժամանակ իրենք էին իջնում լեռներից և անհանգստացնում պարսկական բանակին՝ իրենց հարձակումներով»:

**В.Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, том 3, с. 81**

Ի դեպ, նույն Թարխանյան եղբայրները, որ պարսկական բանակում հավատարիմ մարդիկ ունեին, Ռեուտին նախապես տեղեկացնում էին պարսիկների հերթական գրոհի ստույգ ժամանակի և ուղղության մասին:

### ***Պաշտպանության հաղթական ավարտը***

Շուշի բերդի պաշարումը շարունակվում է մինչև սեպտեմբերի սկիզբը, երբ լուր է ստացվում հայազգի գեներալ Մադաթովի կողմից Շամքորում պարսկական զորաջոկատի ջախջախման և ռուսական զորքերի՝ Ելիզավետպոլ ներխուժման մասին:

Այսպիսով, ռազմավարական տեսակետից Շուշիի պաշտպանությունը կարևոր էր նաև նրանով, որ իր վրա է բեռնում հակառակորդի գլխավոր ուժերը, ինչը ռուսական հրամանատարությանը հնարավորություն է տալիս ժամանակ շահել և լրացուցիչ ուժեր կենտրոնացնել պարսկական բանակի դեմ հարձակում ծավալելու համար:


# ՇԱՄՔՈՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (1826թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3)

Թեև ռուսական կայսրության և հայ ազգաբնակչության հերոսական պաշտպանությունը պարսկական բանակի հիմնական մասին գամել էր Շուշիի պարիսպներին, սակայն պարսկական 12.000-անոց զորախումբը Աբաս Միրզայի որդու՝ Մեհմեդ Միրզայի գլխավորությամբ, առանց խոչընդոտի հանդիպելու շարժվում է առաջ և գրավում Ելիզավետպոլը (Գանձակը): Պարսից բանակի դեպի Թիֆլիս առաջխաղացումը կասեցնելու համար գեներալ Վ.Մադաթովի հրամանատարությամբ 2000-անոց առաջապահ զորաջոկատ է կազմավորվում (տես քարտեզ 9.1):

Գեներալ Մադաթովն ուղղվում է դեպի Բորչալու: Նրա զորաջոկատին միանում են հայ աշխարհագորային ջոկատները՝ Գալուստ Մանուչարյանի, Ասրի Բահաթրյանի և այլոց գլխավորությամբ: Ջորախումբը պետք է պաշտպանական դիրքեր գրավեր Խրամ գետի երկայնքով և կասեցներ պարսկական զորքերի առաջխաղացումը դեպի Թիֆլիս ու սպասեր հիմնական ուժերի տեղ հասնելուն: Այնինչ, հայազգի գեներալը, որին կոմս Դիբիչը «ռուսական Մյուրատ» է անվանել, մարտավարության հարցում միանգամայն այլ մտահղացումներ ուներ:

Առաջանալով Ղազախի ուղղությամբ՝ Մադաթովը տեղի հայերից իմանում է, որ հակառակորդի մի խոշոր ջոկատ, որ դարանակալել էր Շամքորի լեռներում, պատրաստվում է անակնկալ հարձակում գործել իր ուժերի վրա: Առանց հա-

Սխեմա 1



ՇԱՄՔՈՐԻ ԾԱԿԱՏԱՄԱՐՏ 1826Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3

պաղելու նա նախահարձակ է լինում՝ ցրիվ տալով հակառակորդի ջոկատը: Սա առաջին ընդհարումն էր պարսկական զորքերի հետ, ինչը վկայում էր, որ հայազգի գեներալը մտադրություն չունի սահմանափակվելու պաշտպանական գործողություններով: Արդարև, ամրացնելով իր թիկունքը, սեպտեմբերի սկզբին նա իր ջոկատով առաջանում է դեպի Շամքոր:

### **Ճակատամարտի առաջին փուլը**

Շամքորի մերձակայքում՝ գետի աջ ափին, թշնամու հնգապատիկ ավելի զորքը՝ Մեհմեդ Միրզայի և Ամիրխան Սարդարի գլխավորությամբ, ամուր պաշտպանություն էր ստեղծել և իրեն լիովին ապահով էր զգում՝ սպասելով Շուշիի անկմանը և Աբաս Միրզայի բանակի հիմնական ուժերի առաջխաղացմանը, որպեսզի միասնաբար արշավեն դեպի Թիֆլիս:

**Տեղեկանք.** «Կազմելով երկու վերստ ձգվող ամուր պաշտպանական գիծ՝ ճակատով դեպի գետը, պարսիկները շարվել էին աղեղնածև՝ կիսալուսնի նման, այնպես, որ կարող էին խաչածև գնդակոծության ենթարկել այն միակ ճանապարհը, որով պետք է մոտենար ռուսական հետևակը»:

**В. Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, том 3, стр. 142:**



Գեներալ-լեյտենանտ Վալերիան (Ռոստոմ) Գրիգորի Մադաթովը (Մադաթյան, 1782-1829թթ.) ծնվել է նշանավոր Վարանդայի սղմախի կենտրոն Ավետարանոց (այժմ՝ ԼՂՀ Ասկերանի շրջանի Չանախչի) գյուղում:

Այսուհանդերձ, Մադաթովը որոշում է, նախահարձակ լինելով, շեշտակի հարված հասցնել հակառակորդին և վճռել ճակատամարտի ելքը: Սեպտեմբերի 3-ի լուսաբացին, իր հետևազորը դասավորելով երեք ոչ մեծ զորասյուղներով, նա գրոհի հրաման է արձակում: Ի պատասխան ռուսական զորքի առաջխաղացման՝ հակառակորդը դիմահար կրակ է բացում: Մադաթովը հեծնում է իր դարաբաղյան ոսկեգույն նժույգը և անձամբ զորաջոկատն առաջնորդում գրոհի (տե՛ս սխեմա 1):

**Տեղեկանք.** Նրան փորձում են ետ պահել՝ ասելով. «Ձեզ նկատել են, Ձերդ բարեժնություն, Ձեզ վրա են նշան բռնում», սակայն նա անվրդով պատասխանում է. «Ավելի լավ, որ ինձ տեսնում են. ավելի շուտ կփախչեն»:


**Жизнь генерал-лейтенанта князя Мадатова, с. 114**

Ռուսական հետևազորը գառիթափով իջնում է գետափ, ծանծաղուտով գետանցում և սկսում շարժվել դեպի բարձունքի վրա դիրքավորված հակառակորդը: Ճեղքվում է հակառակորդի պաշտպանական գիծը: Մինչև ճակատամարտի ավարտը Մադաթովը մնում է առաջին գծում և անձնական օրինակով, ազդու խոսքով և անգամ կատակներով ոգևորում ու առաջ մղում իր զինվորներին:

### Երկրորդ փուլը

Մարտը հետզհետե բորբոքվում է: Իր թվական գերակշռության շնորհիվ հակառակորդին հաջողվում է դիմակայել, և Մադաթովը որոշում է կիրառել ռազմական խորամանկության հնարքներից մեկը, որը և վերջնականապես վճռում է ճակատամարտի ելքը (տե՛ս սխեմա 2):

Սխեմա 2



ՇԱՄԲՈՐԻ ԵՎԿԱՏԱՄԱՐՏ 1826Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3

**Տեղեկանք.** «Իր զորքերի նվազ քանակը թաքցնելու և պարսիկներին ներշնչելու համար, որ մարտադաշտում ռուսական գլխավոր ուժերի սոսկ առաջապահ ջոկատն է, Մադաթովը դիմեց հետևյալ խորամանկության. մարտի ժամանակ գրոհող զորասյուների հետևում սկսեց տեղաշարժվել գունակը, որի բարձրացրած փոշին իրոք պարսիկների կողմից ընկալվեց իբրև հզոր պահեստային ուժերի առաջխաղացում»:

**Военная энциклопедия, т. 15, с. 103**

Մադաթովի մտահղացումը պսակվում է լիակատար հաջողությամբ. խուճապի մատնված պարսիկները սկսում են անկանոն նահանջել, ինչը շուտով վերածվում է փախուստի: Առաջինը մարտադաշտից ճողոպրում է Մեհմեդ Միրզան՝ լքելով շահի ընտրյալ ջոկատը՝ գվարդիան, որը գլխովին ջախջախվում է: Ընդհանուր առմամբ հակառակորդի կորուստները հասնում են շուրջ 2000-ի, այդ թվում նաև հրամանատարը՝ Ամիրխան Սարդարը: Մարտադաշտում են թողնվում մի քանի հրանոթ, շուրջ 2000 հրացան, մեծ քանակությամբ զինամթերք և պարեն:

Այսպիսով, Շամքորի ճակատամարտում Մադաթովի գլխավորած զորաջոկատը, սրընթաց ճակատային գրոհի շնորհիվ, որն ուղեկցվեց մարտավարական խորամանկ հնարքով, ջախջախեց թվաքանակով իրեն գերազանցող թշնամուն: Այս փայլուն հաղթանակի համար հայազգի զորավարը պարգևատրվեց ադամանդակուռ սրով՝ «Քաջության համար» մակագրությամբ: Շքանշանների և պարգևների արժանացան նաև ճակատամարտում աչքի ընկած բազմաթիվ այլ հայեր:

Շամքորի ճակատամարտի շարունակությունն է դառնում Գանձակի (Ելիզավետպոլի) ճակատամարտը, որում ջախջախվելով՝ պարսկական բանակը սկսում է նահանջ, որը կարճատև ընդմիջումներով շարունակվում է մինչև պատերազմի ավարտը:

## 1877-1878ԹԹ. ՌՈՒՄ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՉՄԸ

Արևելյան Հայաստանի՝ պարսից լծից ազատագրումից շուրջ հինգ տասնամյակ անց ռազմաքաղաքական բարենպաստ իրավիճակ էր ստեղծվել մեր հայրենիքի նաև արևմտյան հատվածը թուրքական բռնակալությունից ազատագրելու և Արևելյան ու Արևմտյան Հայաստանը վերամիավորելու համար: Նվիրական նպատակը համախմբել էր բոլորին. հայ ազգաբնակչությունն ամեն կերպ աջակցում էր ռուսական բանակի հաղթական առաջխաղացմանը:

Ռուս-թուրքական պատերազմը սկսվում է 1877թ. ապրիլի 12-ին:


Նախքան պատերազմը, նաև պատերազմի ընթացքում կազմավորվում են հայկական կամավորական ջոկատներ կամ, ինչպես այն ժամանակ կոչում էին՝ «ժողով ժամանակավոր զորաց» (միլիցիա): Հազարավոր հայ ռազմիկներ այդ ջոկատների կազմում մասնակցել են մարտերին՝ ամենուրեք աչքի ընկնելով քաջությամբ և անձնվիրությամբ: Իսկ բուն ռուսական բանակում ավելի քան 500 բարձրաստիճան հայ սպաներ կային, որոնց թվում էին գեներալներ Մ.Լոռիս-Մելիքովը, Ա.Տեր-Ղուկասովը, Լազարևը, Ալխազովը, Շելկով-ճիկովը և ուրիշներ:

### **Պատերազմական գործողությունների սկիզբը**

Ռազմական գործողությունները սկսվում են ռուսական զորքերի վստահ հաղթարշավով (տե՛ս քարտեզ 9.2): Անցնելով սահմանը և առաջանալով՝ նրանք գրավում են Արդահանը և ապա պաշարում Կարսի բերդը: Գեներալ Տեր-Ղուկասովի Երևանյան 13 հազարանոց զորախումբը 1877թ. ապրիլի 15-ին արշավում է Բայազետի վրա ու գրավում այն: Բայազետում շուրջ 1500 զինվորներից կազմված կայազոր<sup>1</sup> թողնելով՝ գեներալն իր հիմնական ուժերով շարունակում է առաջխաղացումը և գրավում Դիադինը, ապա Վաղարշակետը (Ալաշկերտ): Հունիսի սկզբին Տեր-Ղուկասովը Դրամդաղի, ապա Դահարի ճակատամարտերում ջախջախում է հակառակորդի՝ թվաքանակով մի քանի անգամ գերազանցող զորքերը: Հաղթական առաջխաղացմանը նպաստում է գրավյալ տարածքների հայ ազգաբնակչությունը, որն ամենուրեք ցնծությամբ է ընդունում հայազգի զորավարի զորքերին:

<sup>1</sup> Գեներալ Ա.Տեր-Ղուկասովի և կայազորի միջև կապը շուտով ընդհատվում է:

Քարտեզ 9.2



ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1877-1878ԹԹ.

**Տեղեկանք.** «Արևմտահայերն այն-քան և այնպիսի օգնություն ցույց տվեցին մեզ՝ կորցնելով իրենց գույքը, մինչև իսկ իրենց կյանքը, որ մենք կատարելապես համոզվեցինք, որ Առաջավոր Ասիայում մեր միակ դաշնակիցները հայերն են»:

**С.Кишмишев,  
Война в Турецкой Армении 1877-1878гг., стр. 127-128**

Սակայն Ջևհրի մոտ ռուսական զորքերի անհաջող գործողությունների հետևանքով հունիսի 15-ին Տեր-Ղուկասովը շրջապատման օղակում չհայտնվելու համար հարկադրված նահանջում է:



**Հետևազորի գեներալ  
Հակոբ Քայխուսրովի Ալխազովը  
(Ալխազյան, 1826-1896թթ.)  
անվանի հայազգի  
գեներալներից է:**



**Գեներալ-լեյտենանտ  
Արշակ Հարությունի  
Տեր-Ղուկասովը (Տեր-Ղուկասյան,  
1819-1881թթ.) ամենաբարձր  
կոչումների և պաշտոնի հասած  
հայազգի գեներալներից չէ,  
սակայն, անկասկած,  
ամենասիրելիներից է:**

# ՊԱՐՈՒՅՆՔԻ (ԲԱՅԱԶԵՏ) ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1877Թ. ՀՈՒՆԻՍԻ 6-28

Բայազետի վրա Վանի գորամասի հրամանատար Ֆաիկ փաշայի արշավելու լուրերը ճշտելու համար հունիսի սկզբին ռուս զինվորներից և հայ կամավորներից կազմված մի ոչ մեծ հետախուզական ջոկատ է ուղարկվում Վանի ուղղությամբ: Շուտով ջոկատը հանդիպում է դեպի Բայազետ արշավող Ֆաիկ փաշայի զորախմբին և հապշտապ նահանջում (տե՛ս քարտեզ 9.2): Քաղաքում ջոկատը ենթարկվում է քաղաքաբնակ մահմեդականների սկսած գնդակոծությանը և ծանր կորուստների գնով միայն հասնում միջնաբերդ: Հունիսի 6-ին քաղաք են հասնում նաև Ֆաիկ փաշայի զորքերը և քուրդ բաշիբոզուկների հրոսակախմբերը, ինչը հարկադրում է փակել միջնաբերդի դռները: Ռուս զինվորների և հայ կամավորների մի մասը մնում է դրսում և զոհ գնում քաղաքում մոլեգնող վայրագություններից:

**Տեղեկանք.** «Հունիսի 3-ին լուր ստացվեց, որ շեյխ Իբրահիմլևահի և Ջելալեդդինի հրոսակային խումբը և կանոնավոր զորքերը Վեֆկի փաշայի հրամանի տակ արշավում են դեպի Բայազետ: Հունիսի 4-ին Երևանից եկած թվով 1000 ձիավոր՝ բաղկացած Ղարաբաղի հայ կտրիճներից, գնդապետ Գրիգոր աղա Մելիք-Շահնազարյանցի և Համբարձում աղա Հախումյանցի գլխավորությամբ հասան Բայազետ»:

**Գ.Շերենց, Բայազետի հերոս պաշտպանները, «Հովիտ», 1914, թիվ 46**

**Տեղեկանք.** «Բերդը մռնչում էր որպես մի վիթխարի գազան, որին ասեն կողմից հարվածում էին: Նա դեռևս համառությամբ մաքառում էր օրհասի և մահվան դեմ: Նա վճռել էր մեռնել, բայց փառքով մեռնել: Սոս 1000 ռուս զինվորներ... հայ կամավորների հետ կռվում էին Սմայիլ փաշայի քսան հազարի դեմ»:

**Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 4, «Խենթը», էջ 150**


Պաշարումն այնքան անսպասելի է սկսվում, որ կայազորը չի հասցնում պարենի և ջրի բավարար պաշար կուտակել: Էլ ավելի լուրջ խնդիր է դառնում միջնաբերդի ներսում ջրի բացակայությունը: Փոքրաթիվ կայազորը և հայ կամավորները հայտնվել էին օրհասական վիճակում: Չնայած այս բոլոր զրկանքներին՝ բերդի պաշտպանները մնում էին անընկճելի և հերոսաբար դիմադրում էին բազմահազարանոց թշնամու բոլոր գրոհներին: Չկարողանալով կոտրել մի բուռ քաջերի համառ դիմադրությունը՝ Ֆաիկ փաշան զայրույթը թափում է

Ալաշկերտի հովտի հայության վրա. նրա հրահանգով քրդական հրոսակախմբերը հիմնահատակ ավերում են 24 հայկական գյուղ:

**Տեղեկանք.** «Պաշարման բոլոր օրերը նման էին մեկը մյուսին: Ամբողջ օրը բերդը երեք կողմից շրջապատող բարձունքներից գնդակների տարափ էր տեղում, իսկ հունիսի 8-ից ավելացան նաև օրական 40-80 հրանոթային արկեր, որոնք առաջին չորս օրն արձակվում էին լեռնային հրանոթներից, իսկ հետագայում նաև վեցֆունտանոց հրանոթներից»:

**Բայազետ քաղաքի պարետի 1877թ. հուլիսի 4-ի զեկույցից՝ ուղղված Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարին**

Չամոզվելով, որ գրոհների միջոցով բերդը գրավելու բոլոր փորձերն անհաջողության են մատնված, հակառակորդը փոխում է մարտավարությունը՝ փորձելով խաբեության միջոցով տիրանալ բերդին: Սկիզբ առած բանակցությունների ընթացքում բերդի կայազորին անձնատուր լինելու մի շարք առաջարկներ են արվում:



1839թ. օրինակի ամրոցային այս հրանոթներն արագածիզ կամ հեռահար չէին, սակայն Բայազետի պաշտպանության ընթացքում լիովին արդարացրին իրենց:



Բերդանի 1870թ. օրինակի հրացանը: «Բերդանկանների» հետ մոտավորապես նույն մարտավարատեխնիկական բնութագիրն ունեցող<sup>1</sup> թուրքական հրացանների վրա նշանառու հեռավորությունը գրեթե կրկնակի ավելի էր:

<sup>1</sup> Որոշ ցուցանիշներով՝ զիջող:

## ***Բայազետի ազատագրումը***

Բայազետի պաշտպաններն օգնության կարիք ունեին: Իրավիճակի մասին գեներալ Տեր-Ղուկասովին լուր հասցնելու մի քանի անհաջող փորձերից հետո այդ խնդիրը հանձն են առնում իրականացնել խոպերյան գնդի կազակ Կիրիլչուկը և պարետի թարգմանիչը՝ հայ կամավոր Սամսոն Տեր-Պողոսյանը՝ Րաֆֆու «Խենթը» վեպի նշանավոր հերոս Վարդանի նախատիպը<sup>1</sup>: Քրդական զգեստներով ծալված՝ նրանք անցնում են հակառակորդի զորքերի միջով: Գնապարհին Կիրիլչուկն անհետ կորչում է, իսկ խիզախ ու հնարամիտ հայ կամավորը, հաջողությամբ հաղթահարելով բոլոր դժվարությունները, հունիսի 14-ին Ալաշկերտի հովտում հանդիպում է Տեր-Ղուկասովին, երբ վերջինս արդեն պատրաստվում էր նահանջի:

Տեր-Ղուկասովը շտապում է օգնության հասնել պաշարվածներին: Հաջողությամբ ավարտելով իր պատմական նահանջը, ավելի քան քսան հազար զաղթականներին և իր հիվանդ ու վիրավոր զինվորներին անցկացնելով ռուսական սահմանը՝ նա, Իգդիրից ռազմամթերք ու պարեն վերցնելով, հունիսի 26-ին շարժվում է դեպի Բայազետ:

Արագ արշավով հասնելով Բայազետի մերձակա Ջանգեզուր հայկական գյուղ՝ Տեր-Ղուկասովը թնդանոթները տեղաբաշխում է քաղաքի վրա իշխող բարձունքների վրա: Հունիսի 28-ի լուսաբացին սկսվում է քաղաքը պաշարած թուրքական բազմահազարանոց զորքի դիրքերի հրետակոծությունը, որի պաշտպանության ներքո Տեր-Ղուկասովի զինվորները գրոհում են հակառակորդի դիրքերի վրա: Հակառակորդը կատաղի դիմադրում էր, բայց ի վերջո, չդիմանալով ճնշմանը և թողնելով իր 4 թնդանոթները, անկանոն նահանջում է:

Հետապնդելով ճողոպրող հակառակորդին՝ Երևանյան ջոկատը մտնում է քաղաք: Բերդում պաշարվածները, ոգի առած, սկսում են օգնել Տեր-Ղուկասովի զորքերի առաջխաղացմանը՝ իրենց ունեցած վերջին արկերով ռմբահարելով խուճապահար նահանջող հակառակորդին: Թուրքական կորպուսը գլխովին ջախջախվում է: Հուլիսի 29-ին Տեր-Ղուկասովն իր ջոկատով մտնում է Բայազետ և քսաներեք օրվա պաշարումից ազատում հերոս պաշտպաններին: Պաշարվածներին արագ օգնության հասնելու համար գեներալ Տեր-Ղուկասովը պարգևատրվում է Սուրբ Գեորգիի 3-րդ աստիճանի շքանշանով:

<sup>1</sup> «Սամսոն Տեր-Պողոսյանի գործունեությունը դրանով չի սահմանափակվում: 1877-1878թթ. պատերազմի հետագա ամբողջ ընթացքում նա ակտիվ և գործուն մասնակցություն է ունենում բազմաթիվ ռազմական գործողությունների՝ աշխատելով որպես լրաբեր, թարգմանիչ, հետախույզ՝ դրանով իսկ մեծ օգնություն ցույց տալով ռուսական բանակին» (Ա.Ներսիսյան, Հայերի մասնակցությունը 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմին, էջ 80):

## **Ամփոփում**

Հայերն անմիջական մասնակցություն են ունեցել ինչպես 1877-1878թթ., այնպես էլ նախորդ ռուս-թուրքական պատերազմներին՝ Կովկասյան ճակատի բոլոր ռազմական գործողություններին, թուրքական տիրապետությունից բնիկ հայկական տարածքների ազատագրությամբ: Ռուսական բանակի հայազգի սպաներն ու զինվորները գիտակցում էին իրենց պարտքն ու պատասխանատվությունը հայրենիքի և հարազատ ժողովրդի հանդեպ և կրկնապատկված եռանդով էին մարտնչում ռազմական գործողությունների ընթացքում:

Այս առումով բացառություն չէ 1877թ. հունիսին Բայազետի պաշտպանությունը, որը պատերազմի առավել դրամատիկ և հերոսական դրվագներից է: Չնայած տառապանքներին՝ պաշարվածները հերոսաբար հետ մղեցին հակառակորդի բոլոր գրոհները և պաշտպանեցին միջնաբերդը: Սամսոն Տեր-Պողոսյանի շնորհիվ գեներալ Տեր-Ղուկասովը տեղեկացավ Բայազետի պաշարման մասին, ժամանակին օգնության հասավ և ազատագրեց քաղաքը:

## ԱԼԱԶԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ. 3 (15) ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1877Թ.

1877թ. սեպտեմբերի 20-22-ին ժանր մարտեր են ընթանում Կարսի մարզում՝ Ալաջա (Ալաճա) գյուղի<sup>1</sup> շրջակայքում, որոնցում ռուսական կողմից հիմնական դերակատարները հայազգի երկու գեներալներն էին՝ Յովհաննես Լազարևը և Բեհբուտ Շելկովնիկովը:

Գեներալ Լազարևն իր զորամասով մի քանի հանդուգն գրոհներ է ձեռնարկում հակառակորդի աջ թևի վրա՝ Մեծ և Փոքր Յաղնի լեռների ուղղությամբ՝ խոշոր կորուստներ պատճառելով նրան: Իսկ գեներալ Շելկովնիկովը, գիշերային գետանցում կատարելով, աննկատ թափանցում է հակառակորդի թիկունք և անսպասելի հարձակում գործում Ալաջայի լանջերին բանակած նրա ճամբարի վրա՝ խուճապ առաջացնելով քնած զորքի մեջ (տե՛ս քարտեզ 9.2): Սակայն կորպուսի հիմնական ուժերի ճակատային հարձակումն անարդյունավետ է ստացվում, Շելկովնիկովի զորքերը մնում են հակառակորդի թիկունքում և հարկադրված միայնակ ճեղքում ու դուրս գալիս շրջապատումից:

Աջակցություն ստանալով և կարգավորելով իր զորաշարքերը՝ Շելկովնիկովը պատրաստվում է ընդունել մարտը, սակայն թուրքական զորքերն այդպես էլ չեն համարձակվում բաց դաշտ դուրս գալ և մարտի բռնվել ռուսական զորքերի հետ: Նրանց հրամանատար Մուխթար փաշան որոշում է նահանջել: Գեներալ Լուիս-Մելիքովն իսկույն արձագանքում է իրավիճակի այս փոփոխությանը. կորպուսի հրամանատարական կետում գեներալ Օբրուչևի մասնակցությամբ մշակվում է թուրքական բանակը շրջապատելու և ոչնչացնելու ծրագիր: Այս անգամ ևս նախատեսվում էր երկկողմանի՝ ճակատից և



Գեներալ-լեյտենանտ Բեհբուտ Մարտիրոսի Շելկովնիկովն (1837-1878թթ.) այս պատերազմին մասնակցած հայազգի գեներալներից ամենաերիտասարդն էր:



Գեներալ-լեյտենանտ Յովհաննես Դավթի Լազարևը (1820-1879թթ.) ծնվել է Շուշիում: Կովկասի լեռնականների դեմ պայքարում 1859թ. Գումիդում նա գերել է Շամիլին:

<sup>1</sup> Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Շիրակ գավառի Արջռառիճ գյուղը՝ Հայոց Բագրատունյաց դարաշրջանի Անի մայրաքաղաքից 2 կմ հարավ-արևմուտք:

թիկունքից միաժամանակյա հարված հասցնել հակառակորդին: Այս անգամ վճռորոշ դերը հատկացվել էր հայազգի մյուս գեներալի՝ Լազարևի գլխավորած զորախմբին: Վերջինս պետք է աննկատ թևանցեր հակառակորդին և անպաշտպան թիկունքից հարված հասցներ նրան (տե՛ս քարտեզ 9.2):

### **Գեներալ Լազարևի զորախմբի թևանցումը**

Սեպտեմբերի 30-ին 20 հազարանոց զորախմբով սկսելով թևանցումը և հասնելով Տեկոր՝ գեներալ Լազարևը, հակառակորդին ապակողմնորոշելու նպատակով, տեղի մոլլային առաջարկում է վարձատրության դիմաց աջակցել ռուսական զորքերին և մատնացույց անել Ալաջա տանող ամենակարճ ճանապարհը: Լազարևը գիտեր, որ մոլլան իր առաջարկության մասին անմիջապես կհայտներ Մուխթար փաշային: Եվ իրոք, հաջորդ առավոտյան Լազարևն ականատես է լինում, թե ինչպես են թուրքերն ամրացնում Տեկորի կողմում գտնվող դիրքերը:

Լազարևը վերստին կանչում է մոլլային և պահանջում մեկ այլ ճանապարհ մատնանշել: Մոլլան, սակայն, զովեստի խոսքեր շռայլելով ռուսական զորքերի հասցեին, խորհուրդ է տալիս անմիջապես Տեկորից գրոհելով գրավել Ալաջան: Լազարևը ձևացնում է, թե հավանություն է տալիս այդ խորհրդին: Մինչդեռ իրականում գիշերով զորաշարժ կատարելով՝ Լազարևի զորախումբն աննկատ շրջանցում է հակառակորդի բանակը և անսպասելիորեն հայտնվում նրա անպաշտպան թիկունքում՝ փակելով դեպի Կարս նրա նահանջի գլխավոր ճանապարհը: Թուրքական բանակը հայտնվում է ռուսական զորքերի օղակում: Այս հանդուգն ու անսպասելի զորաշարժից անակնկալի եկած Մուխթար փաշան խոշոր ուժեր է կենտրոնացնում գեներալ Լազարևի զորախմբի դեմ՝ իսպառ թուլացնելով իր ճակատային գիծը:

### **Թուրքական բանակի ջախջախումը**

Իր զորքերի հաջող զորաշարժի մասին գեներալ Լազարևը հեռագրով տեղեկացնում է կորպուսի իրամանատար Լոռիս-Մելիքովին<sup>1</sup>: Հայազգի գեներալները լավագույնս օգտվում են ստեղծված բարենպաստ իրավիճակից՝ հմտորեն իրականացնելով շրջապատված հակառակորդի բանակի մասնատումը և ջախջախումը:

Երկժամյա հուժկու հրետակոծությունից հետո կորպուսի հիմնական ուժերն առաջին իսկ գրոհով գրավում են Ավլիար լեռան ամրությունները, ինչը թուրքա-

---

<sup>1</sup> Սա Կովկասյան ճակատում մարտական գործողությունների ժամանակ հեռագրի կիրառման առաջին դեպքն էր:

կան հրամանատարությանը ստիպում է բանակը բաժանել երկու մասի: Թուրքական զորքերը սկզբում համառորեն դիմադրում են, ապա փորձում կանոնավոր նահանջել, ինչը, սակայն, նրանց չի հաջողվում:

Չեռագրական կապի հնուտ օգտագործումը հնարավորություն է տալիս համաձայնեցված և միաժամանակյա գրոհի ձեռնարկել Վեզին-քյոյի վրա, որտեղ կենտրոնացել էին հակառակորդի հիմնական ուժերը: Այդ ուժերի մի մասը փորձում է դուրս պրծնել ռուսական զորքերի օղակից և հասնել Կարս, սակայն Լազարևի զորախումբը մասնատում և ցրիվ է տալիս նրանց: Ռուսական զորքերի հաջորդ նպատակակետը Ալաջան էր, որը ևս գրավվում է, քանզի բարոյալքված թուրքական զորքերն այլևս անկարող էին պատշաճ դիմադրություն ցույց տալ հակառակորդի երկկողմանի ճնշմանը:

**Տեղեկանք.** «Սոսկալի իրարանցում է ընկնում թուրք զորքի մեջ, մա-  
նավանդ երբ տեսնում են, որ ամենից առաջ իր թիկնապահներով կռվի  
դաշտը թողեց զորքերի գլխավոր հրամանատար Մուխթար փաշան իր  
զորքով: Այս նկատելուն պես թուրք թնդանոթաձիգները թողնում են  
թնդանոթները, փամփուշտի և ռումբերի արկղերը, զինվորական մեծ  
պաշարը և շտապում են ժամ առաջ թողնել Ալաջայի ամրությունները՝  
ուղղվելով դեպի Վիզինքե՝ այդտեղից Ղարս մտնելու նպատակով»:

**Սալ-Ման, Գեներալ Ի.Լազարև, էջ 40**

Ռուսական զորքերը կրնկակոխ հետապնդում էին թուրքերի խուճապահար փախչող զորքերին: Այս ճակատամարտում հակառակորդի կորուստներն ահ-  
ռելի էին՝ գրեթե 10 հազար սպանված ու շուրջ 9 հազար զինվոր գերի (որոնց  
մեջ՝ երկու գեներալ, 250 սպա): Ռուսական զորքերի կորուստներն էին՝ 202  
սպանված և 1240 վիրավոր, այսինքն՝ ճակատամարտին մասնակցած զորքե-  
րի սոսկ 2,7 տոկոսը, այն դեպքում, երբ թուրքերը կորցրել էին իրենց անձնա-  
կազմի երեք քառորդը:




**1873թ. օրինակի Վինչեստերի հրացաններն ամենաարագաձիգն էին այս պատերազմում:  
Չետևաբար, պարտությունների պատճառը թուրքական բանակի  
սպառազինության ցածր որակը չէր:**

Այս հաղթանակի համար հայազգի գեներալներ Լոռիս-Մելիքովը և Լազարևը պարգևատրվեցին Սուրբ Գեորգիի շքանշաններով: Ալաջայի ճակատամարտում աչքի ընկան և պարգևների արժանացան հայազգի նաև այլ սպաներ՝ Նովրուզովը, Քիչմիշևը, Աթաբեկյանը, Կարապետյանը, Մանսուրյանը և ուրիշներ: Այս ճակատամարտին մասնակցեցին նաև հայկական զինյալ ջոկատները՝ Ալեքսանդրապոլի հեծյալ գունդը, Ելիզավետպոլի, Բորչալուի և Ախալցխայի հայկական զինյալ հարյուրյակները:

**Ամփոփում**

Ռուսական զորքերի լիակատար հաղթանակը ձեռք բերվեց առաջին հերթին գեներալ Լազարևի զորախմբի հնարամիտ և սրընթաց զորաշարժի շնորհիվ: Ռազմական խորամանկության կիրառման՝ կեղծ լուրեր տարածելու միջոցով հակառակորդին ապակողմնորոշելով՝ Լազարևն իր զորախմբով աննկատ թևանցում կատարելով անսպասելիորեն հայտնվեց նրա թիկունքում, ինչը և վճռորոշ եղավ ճակատամարտի ելքի համար: Թուրքերի Անատոլիական (փոքրասիական) բանակը գլխովին ջախջախվեց և մեկընդմիջտ անհետացավ պատերազմի թատերաբեմից:

Ալաջայի ճակատամարտից հետո ռուսական բանակը բաժանվեց երկու մասի. մեկը՝ գեներալ Գեյմանի գլխավորությամբ, սկսեց հետապնդել դեպի Կարին նահանջող Մուխթար փաշայի զորքերին, իսկ մյուսը՝ գեներալ Լազարևի գլխավորությամբ, շարժվեց դեպի Կարս: Առջևում Կարսի գրավումն էր...



**Գեներալ-համհարզ Միքայել Տարիելի Լոռիս-Մելիքովը 1880թ. փետրվարին դարձավ Ռուսական կայսրության Գերագույն կառավարիչ հանձնաժողովի նախագահ՝ դիկտատորական լիազորություններով:**

## ԱԿՆԱՐԿՆԵՐ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ՂԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՉ

### ՉԵՅԹՈՒՆԻ ԹՈՒՐԲԱԿԱՆ ԶՈՐԱՆՈՉԻ ԳՐԱՎՈՒՄԸ. 15-17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1895Թ.

#### ՉԵՅԹՈՒՆՆՈՒՆԵՐԻ «ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ- ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ»

1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո սուլթանական կառավարությունը ոչ միայն չկատարեց հայկական գավառներում բարենորոգումներ մտցնելու վերաբերյալ եվրոպական պետություններին տված իր խոստումները, այլև սկսեց վարել հայերի զանգվածային կոտորածների քաղաքականություն, որում կարևոր տեղ էր զբաղեցնում *համիդիե* գնդերի ստեղծումը:

1891թ. թուրքական կառավարությունը, զինված զորագնդեր կազմակերպելու նպատակով, Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կ.Պոլիս հրավիրեց 70 քուրդ ցեղապետերի, որոնց մեծ շուքով ընդունեց Աբդուլ-Յամիդ II սուլթանը: Նախատեսվում էր ռուսական սահմանի երկայնքով տեղաբաշխել նոր կազմավորվող հեծյալ գնդեր, որոնց նպատակն էր Ռուսաստանի հետ ապագա պատերազմի դեպքում թուրքական բանակի հետ դիմադրել ռուսներին, իսկ *հայկական ջարդերի իրականացման ժամանակ օգնել թուրք ջարդարարներին*:

Քրդական այդ զորախմբերի կազմակերպման գործը հանձնարարվում է 4-րդ բանակի հրամանատար Ջեքի փաշային: Նա ստեղծում է 30 գունդ, յուրաքանչյուրում՝ 550 հեծյալ: Կարճ ժամանակում գնդերի թիվը կրկնապատկվում է:

Կեղեքումներն ու բռնությունները ծայրահեղորեն սրում են իրավիճակը: 1895թ. հուլիսին Մարաշի կառավարչի և հարկահավաքի լիազորություններով, ինչպես նաև հայ հեղափոխականներին «որսալու» համար Ջեյթունի Արեգին գյուղ է մտնում Ասլան բեյն իր ջոկատով: Հանդիպելով զինված գյուղացիների դիմադրությանը՝ Ասլան բեյը նահանջում է: Այս «հարկահավաքությունն» ահազանգ էր գեյթունցիների համար և վկայում էր, որ շուտով ջարդերը կարող են տեղափոխվել նաև այս երկրամաս:

Ժողովրդին պայքարի պատրաստելու համար 1895թ. ամռանը Ջեյթուն են անցնում հնչակյան գործիչները, որոնք Աղասիի (Կարապետ Թուր-Սարգիսյան) գլխավորությամբ սկսում են ապստամբության նախապատրաստումը: Ապստամբության ղեկավարման գործում մեծ էր Նազարեթ Զաուչի դերը: Ջեյթուն-

նում էին գտնվում նաև Ապահը (Պետրոս Գմգմյան), Ջելլաթը (Կարապետ Ղրփանոսյան) և ուրիշներ:

1895թ. հոկտեմբերի 12-ին Արեգին գյուղի մոտ Մուս ձոր կոչվող վայրում հրավիրված ժողովը որոշում է պայքար մղել թուրքական բռնակալության դեմ և Ջեյթունի թուրքական զորանոցը գրոհելու համար ուժեր նախապատրաստել: Տեղեկանալով ժողովի մասին՝ իշխանությունները համալրում են զորանոցը, իսկ նոր զորամասեր դեպի Ջեյթուն շարժելու համար ժամանակ շահելու նպատակով՝ առաջարկում բանակցություններ սկսել:

Ապստամբների հետ թուրքական զորամասերի առաջին ընդհարումները սկսվում են հոկտեմբերի 15-ին: Մարաշի կառավարչությունն իր ձեռքի տակ եղած զորքերը շարժում է դեպի Ջեյթուն: Պատժիչ զորամասերը կանգ են առնում Ջահան գետի ափին: Ապստամբների առաջապահ ուժերը Ջահան և Բերդուս (Բերդիս) գետերի միացման շրջանում գրոհում են թուրքերի վրա: Չորս ժամ տևած մարտում ապստամբները կարողանում են անցնել Բերդուսի հակառակ ափը, սակայն շուտով նահանջում են: Հետագայում այս մարտը հայտնի է դառնում որպես *Բերդուս գետի ճակատամարտ*: Մարտից հետո նահանջող ապստամբները Ջերմուկի դաշտում կտրում են հեռագրալարը՝ խափանելով զորանոցի և Մարաշի կապը:

Բերդուսի ճակատամարտի ընթացքում բախում է տեղի ունենում նաև Ջեյթունից հարավ-արևմուտք ընկած Ֆռնուզ գյուղի ապստամբների և թուրքական ոստիկանության զորամասերի միջև: Մարտից հետո ֆռնուզցիները, Բարդուղիմեոս վարդապետի գլխավորությամբ, շարժվում են դեպի Ջեյթունի զորանոցը և ճանապարհին իրենց միացած մի քանի ջոկատների հետ հոկտեմբերի 15-ի լույս 16-ի գիշերը պաշարում այն: Պաշարված կայազորի վրա հոգեբանական ազդեցություն գործելու նպատակով ապստամբների յուրաքանչյուր ջոկատ մեկական մարտական դրոշ է պարզում: Թուրքական կայազորի ահաբեկված հրամանատար Իֆֆետ բեյը չի համարձակվում հակագրոհով զորանոցն ապաշրջափակել, թեև այդ պահին իր տրամադրության տակ ուներ ավելի քան յոթ հարյուր հոգանոց կանոնավոր զորամաս, որն ապստամբներին քանակով չէր զիջում:

Հոկտեմբերի 16-ին զորանոցը պաշարած ապստամբների թիվը հասնում է երկու հազարի, և նրանք սկսում են պատրաստվել վճռական գրոհի: Ապստամբները կտրում են զորանոցի ջրի մատակարարումը, որով վերջնականապես հու-



**1871թ. օրինակի Հենրի-Մարտինիի հրացանի կենտրոնական մասը: Այն գեյթունցիների հրացաններին գերազանցում էր կրակային հզորությամբ, արագաձիգ էր և հեշտությամբ էր վերալիցքավորվում:**

սահատության են մատնում կայագորին: Դա տեսնելով՝ ապստամբության դեկավարները որոշում են, մարտական և տեղեկատվական-հոգեբանական հարվածները համատեղելով, իրականացնել խիստ հանդուգն ու բազմաթայլ մի գործողություն:

Առաջին հարվածը հասցվում է զորանոցի շրջակայքի թուրքական շինություններին: Հոկտեմբերի 16-ին և 17-ին ծավալված մարտերի ընթացքում ապստամբները կարողանում են գրավել զորանոցը շրջապատող բոլոր շինությունները, այդ թվում նաև մզկիթը:

Ջորանոցի շրջակա շինություններում տեղակայված թուրքական կրակակետերի լռեցմանը զուգընթաց՝ հասցվում է երկրորդ՝ գլխավոր հարվածը, որը տեղեկատվական-հոգեբանական էր: Պաշարվածներին խուճապի մատնելու նպատակով ապստամբները լուրեր են տարածում, թե մեծ տերությունները պատերազմ են հայտարարել Օսմանյան կայսրությանը, ապա «սկսում են լուրեր պտտվել» մեծ տերությունների բանակների իբրև թե արդեն սկսած հարձակման մասին: Հոգեբանական գրոհի առաջին փուլի գագաթնակետն է դառնում Կ.Պոլսի գրավման մասին տեղեկատվության տարածումը: Կարճ ժամանակ անց «պարզվում» է, որ անգլիական նավատորմը Մերսինում էքսպեդիցիոն բանակ է ափ հանել. նրանք օգնության էին շտապում զեյթունցիներին, ընդ որում՝ թուրքերին լուրեր են հրամցվում, որ անգլիացիները դեպի Ջեյթուն են շարժվում Ադանայով:

Թուրքական կայագորի սպայակազմը չէր կարողանում կողմնորոշվել լուրերի արժանահավատությունը ճշտելիս: Հակառակորդի կասկածները հիմնավորելու համար զորանոցի մոտ բարձրացվում է «ֆրանսիական» դրոշը: Նկատենք, որ ապստամբները *ֆրանսիական դրոշ չէին գտել* և բարձրացրել էին Կիլիկիայի ազգային դրոշը, որը շատ նման էր ֆրանսիական եռագույնին: Թուրքերն արտագրոհում են՝ ապստամբներից դրոշը խլելու նպատակով, սակայն զեյթունցիները կրակի տակ են առնում այդ տեղանքը: Գրոհի անդրադարձումը վերջնական հուսալքության է հասցնում թուրքերին: Բացի այդ, պատրաստվում և ապստամբների դիրքեր է հասցվում Չոլոզյան եղբայրների գլխավորած դարբինների խմբի պատրաստած երկաթյա կիսաբոլոր անվավոր մեքենան, որի հետևից կարող էր զորանոցի պատերին մոտենալ հրդեհելու պարագաներ ունեցող մի քանի մարդ:

Ջորանոցը գրոհելու համար ստեղծվում են նշանառու հայդուկ-որսորդների խմբեր, որոնք կրակի տակ են պահում զորանոցի մուտքերն ու հրակնատները: Ապստամբների պահանջով՝ գերված կայնականը և քաղաքապահ ստորաբաժանման հրամանատարը նամակ են գրում զորանոցի պարետին՝ անձնատուր լինելու պահանջով ու հայտնում են, որ առաջարկը մերժելու դեպքում ապստամբները պայթեցնելու են զորանոցը:

Ջորանոցում գտնվող կայագորի հրամանատար Իֆֆետ բեյը հոկտեմբերի 17-ի երեկոյան՝ 60-ժամյա պաշարումից հետո հրամայում է դադարեցնել դի-

մադրությունը, և գորանոցն ամբողջությամբ հանձնվում է ապստամբներին: Մոտ 700 ռազմագերիները Ձեյթունի բնակչության ներկայությամբ գլխիկոր անցնում են ապստամբների սրի տակով: Ապստամբների ձեռքն են անցնում 2 թնդանոթ, 170 արկ, 600 Յենրի-Մարտինիի տիպի հրացան, 120 հազար փամփուշտ, 2 տակառ վառոդ և մեծաքանակ պարեն: Ռազմավարից բացի՝ առգրավվում են զեյթունցիներից խաբեությամբ հավաքված շուրջ 2 հազար կայծքարե փակադակով հրացանները: Չնայած ապստամբներին հայտնի էր հակառակորդի վայրագությունը՝ նրանք մարդասիրություն են ցուցաբերում. թույլատրում են Ձեյթունից հեռանալ ոչ միայն մոտ 100 կանանց ու երեխաներին, այլև գերված սպաների մեծ մասին:

Թուրքական կայազորի վնասազերծումը վկայում է ապստամբների ղեկավարության մարտավարական հմտությունների մասին: Նրանց կողմից կազմակերպվում և վարպետորեն իրականացվում է տեղեկատվական-հոգեբանական հարձակում, որը պատիվ կբերեր այդ ժամանակի ցանկացած կանոնավոր բանակի հրամանատարությանը:

# ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ 1897Թ.

Ֆիդայական շարժման ընթացքում հայկական ջոկատների ձեռնարկած ամենամեծ գործողություններից մեկը Խանասորի արշավանքն է: Արշավանքն իրականացվել է 1897թ. հուլիսի 25-ին: Նրա նպատակն էր հարված հասցնել քրդական մագրիկ ցեղին, որն ակտիվորեն մասնակցել էր թուրք-պարսկական սահմանի շրջանում հայ ֆիդայիների սպանությանը (Սբ Բարդուղիմեոսի վանքի և Գարահիսար լեռան մոտ): Խանասորի արշավանքի հաջող իրականացումը հնարավորություն էր տալու համեմատաբար անվտանգ դարձնել Վանա լճի շրջակա լեռներում մարտնչող ֆիդայական ջոկատներին զենքի մատակարարումը, որը հիմնականում կատարվում էր Ռուսահայաստանից՝ Պարսկաստանի տարածքով: Արշավանքի գաղափարը տվել է անվանի ֆիդայի Նիկոլ Դումանը:

Յ.Յ. Դաշնակցության անդամ լինելով՝ Դումանն առաջարկությունն առաջին հերթին ներկայացնում է կուսակցության ղեկավարությանը: Արշավանքի գաղափարը կյանքի կոչելու գործում վճռական նշանակություն են ունենում Յ.Յ.Դ. հիմնադիրներից մեկի՝ Ք.Միքայելյանի համաձայնությունը և աջակցությունը:



Նիկոլ Դուման  
(Նիկողայոս  
Տեր-Օվանիսյան,  
1876-1914թթ.)



Վարդան  
(Սարգիս Մեհրաբյան,  
?-1943թ.)



Սեբաստացի Մուրադ  
(Խրիմյան Մուրադ,  
1874-1918թթ.)

Հատուկ այդ նպատակով Սալմաստուն (Իրան) Վարդանի<sup>1</sup> (Սարգիս Մեհրաբյան) հրամանատարությամբ 270 հոգանոց մարտական ջոկատ է ստեղծվում: Հրամանատարի օգնականն էր Իշխանը (Հովսեփ Արղության), հարյուրյակների հրամանատարները՝ Մոկացի Մանուկն ու Էրզրունցի Արամայիսը, իսկ հեծյալ խմբինը՝ Սևքարեցի Սաքոն (Սարգիս Ծովանյան): Ջոկատուն Դունանին է վստահվում հիսնյակի հրամանատարությունը:

Ջոկատը կարճատև ու սրընթաց ռազմերթով անցնում է սահմանն ու գաղտնի դիրքեր գրավում Արաուլ լեռան վրա՝ ստորոտում տեղաբաշխված քրդերից մոտ 150 քայլ հեռավորությամբ: Օգտվելով այն հանգամանքից, որ քրդերի և թուրքերի մտքով անգամ չէր կարող անցնել նման հանդուզն քայլի հնարավորությունը, ջոկատը գրեթե ամբողջ գիշեր հանգիստ նախապատրաստվում է գրոհին: Մարտիկներին առաջիկա բախումից առաջ հանգստանալու հնարավորություն է տրվում:

Մի քանի խմբերի բաժանվելով՝ ջոկատը լուսադեմին սկսում է մոտենալ դաշտավայրում տեղաբաշխված քրդական շուրջ 250 վրանների: Քրդերը ջոկատի առաջխաղացումը նկատում են միայն այն ժամանակ, երբ ֆիդայիների և իրենց միջև մնացել էր ընդամենը 40-50 քայլ: Իր ժամանակի լավագույն հրացանը համարվող «մոսիններով»<sup>2</sup> զինված ֆիդայիների գրոհը շեշտակի էր, և քրդերին միայն մեծ կորուստների գնով է հաջողվում նահանջել:

Մարտում ոչնչացվում է քուրդ զինյալների զգալի մասը, իսկ նրանց վրանային «ավանը» մոխրակույտի է վերածվում: Հայկական կողմը տալիս է ընդամենը 19 զոհ: Հաղթողների ձեռքն է ընկնում ավազակապետ Շարաֆ-բեյի սուրը, սակայն ինքը՝ բեյը, հասցնում է փախչել:



**Մոսինի 1891թ. օրինակի հետևակային հրացանը:**

<sup>1</sup> Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Վարդանը հայոց կամավորական շարժման առաջնորդներից էր: Առանձին մարտական գործողությունների ժամանակ նրա հրամանատարության տակ գործող 3-րդ կամավորական գնդին էին ենթարկեցվում այլ հայկական կամավորական գնդեր:

<sup>2</sup> Ռուսական բանակի զեներալ-մայոր Ս.Մոսինի ստեղծած «1891թ. մոուշի» հրացանը հեղինակի անունով ընդունված է կոչել նաև «մոսին»:

# **ՍԱՍՈՒՆԻ 1904Թ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

20-րդ դարասկզբին Արևմտյան Հայաստանում ստեղծվել էր ծանրագույն իրավիճակ: Ավելի քան երկու տասնամյակ Եվրոպայի տերությունների խոստացած բարենորոգումների ծրագրերը ոչ մի արդյունք չէին տվել: Այդ ընթացքում թուրքերը Սասունի մերձակայքում հավելյալ զորք էին կուտակում՝ պատճառաբանելով, որ ծրագրված է զորանոցներ կառուցել Սասնո մի քանի գյուղերում: Իրականում օրեցօր սաստկանում էին հայերի հալածանքն ու հարստահարությունը: Այդ պայմաններում խույս տալ կռվից՝ կնշանակեր ինքնական զոհաբերվել:



**«Հրայր Դժոխք» և «Ուրվական»**  
(Արմենակ Ղազարյան, 1864-1904թթ.)



**Սեպուհ**  
(Արշակ Ներսիսյան, 1872-1940թթ.)

1904թ. հայդուկապետերի հավաքում որոշվում են գավառի պաշտպանական գծի հիմնական կետերը. հարավում՝ Տալվորիկը և Իշխընձորը, հյուսիսում՝ Տափըրը և Շենիքը, իսկ կենտրոնում Գելիեգուզանն էր: Անդրամիկը պետք է պաշտպաներ գավառի արևելյան հատվածը, Հրայրը՝ հյուսիսային, իսկ Գևորգն իր ջոկատով ամրացավ Տալվորիկին հարող շրջանում:

1904թ. սկզբներից թուրքական կանոնավոր զորքերը և քրդական հրոսակախմբերը սկսում են կենտրոնանալ Մշո դաշտում՝ Սասունի շուրջը: Մարտի վերջին Սասունն արդեն պաշարված էր թուրքական 10 հազարանոց զորաբանակով, որի հրամանատարը չերքեզ Քեոսե բինբաշին էր: Նրան էին միացել շրջակա աշիրեթների շուրջ 7000 քուրդ զինյալներ: Այս ահռելի ուժի դեմ Սասունն ուներ ընդամենը 200 ֆիդայի և 21 գյուղերի շուրջ 800 զինված գյուղացի:

Ինչպես մեկ տասնամյակ առաջ՝ 1894թ. ինքնապաշտպանական կռիվների ժամանակ, այս անգամ ևս նախահարձակի պարտականությունները ստանձնել էին քրդական աշիրեթները: Սա հեռահար նպատակ էր հետապնդում. թուրքական իշխանությունները եվրոպական տերությունների առջև ցանկանում էին պարտակել իրենց իրական մտադրությունը՝ Սասունի իսպառ հայաթափումը՝ եվրոպային ի ցույց դնելով իրենց «խաղաղասիրական» նկատառումները. իբր կանոնավոր զորախմբերը հարկադրված միջամտում են՝ հայ-քրդական բախումները դադարեցնելու համար:

### **Շենիքի մարտը**

Քրդական հրոսակները հարձակում են սկսում Շենիք-Սեմալ ուղղությամբ: Սեբաստացի Մուրադի գլխավորած ուժերը, վճռական հակահարված տալով, փախուստի են մատնում նրանց՝ հալածելով մինչև Շեն գյուղը: Ապրիլի 2-ին քրդերը հարձակում են գործում Իշխընձորի և Տավլորիկի վրա, սակայն Գևորգ Չաուշի հայդուկները, համառ դիմադրություն ցույց տալով, կասեցնում են հակառակորդի գրոհը: Ապրիլի 6-ին Սեմալ-Շենիք ուղղությամբ նոր հարձակում է սկսվում: Թեև հակառակորդն էական հաջողությունների չի հասնում, սակայն այս ուղղությունը դառնում է ճակատի գլխավոր հատվածը:


Ապրիլի 11-ի վաղ առավոտյան թուրք-քրդական ուժերը մոտենում են Շենիքին, սակայն գյուղ մտնել չեն կարողանում: Սեմալից Շենիք են գալիս Սեպուհի և Ավետիսի խմբերը, որոնք դիրքավորվում են գյուղից վեր գտնվող բարձունքների վրա: Կեսօրին, վստահանալով, որ գյուղն ամայի է, թշնամու շուրջ 700 հոգանոց հեծելազորը «հաղթական» երթով մտնում է կիսավեր գյուղ և ընկնում հայդուկների դարանը. հայ զինյալները դիրքավորվել էին գյուղի երկու կողմերում և անսպասելիորեն խաչաձև կրակ են բացում թուրքերի վրա (տե՛ս սխեմա 1):

**Տեղեկանք.** «Սեմալցի քեաթիպ Մանուկը՝ իր համագյուղացի զինվորներուն հետ, շենիքցի Ղազարն ու Մանուկը՝ իրենց տասնյակներով, Սեպուհը իր ֆեդայիներու և ալիանցիներու հետ, շենիքցի Չուլն իր համագյուղացիներու և կելեկանընցիներու հետ, լաճկանցի Արթինը, Ավետիսն ու ուրիշ մարտիկներ զանազան կողմերե միահամուռ գրոհ կու տան Շենիքի վրա՝ առնելով զայն խաչաձև կրակին տակ և ջանալով կտրել զայն թշնամու բանակեն»:

**Միք. Վարանդյան, ԴՅ դաշնակցության պատմություն, էջ 229**

Չորս ժամանոց մարտի վերջում հակառակորդն անկանոն նահանջում է դեպի Գալոյի գյուղը: Հակառակորդի կորուստները մի քանի տասնյակի էին հասնում, մինչդեռ հայդուկներից զոհվել էր միայն մեկը:

Սխեմա 1



1904թ. Սասնո գոյամարտը հայդուկային պայքարի լավագույն դրսևորումներից է: Ողջ ինքնապաշտպանությունը յուրօրինակ հաղթանակ էր, որը Սասունի ժողովրդին փրկեց, թերևս, լիակատար ոչնչացումից: Այդ համառ և ինքնամոռաց պայքարում ուրույն տեղ ունի Շենիքի մոտ կազմակերպված դարանը՝ ֆիդայական պայքարի մարտավարության գագաթներից մեկը:

## **ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՎԱՇՏԸ ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ**

1912թ. հոկտեմբերին սկսվում է Բալկանյան պատերազմը. Բուլղարիան, Սերբիան, Յունաստանը և Չեռնոգորիան իրենց ազգային իրավունքների վերականգնման համար պայքարի են ելնում Թուրքիայի դեմ: Հայ հասարակայնության մեջ գերիշխող մտայնությունն էր՝ ամեն կերպ օժանդակել Բալկանյան երկրներում թուրքական լծի տապալմանը՝ դրանով իսկ հող նախապատրաստելով նաև Արևմտյան Հայաստանի ազատագրման համար: Սկսվում է կամավորական խմբերի կազմավորման շարժումը: Բուլղարահպատակ հայերը հոժարությամբ համալրում էին բուլղարական բանակի շարքերը: Սկսվում է նաև կամավորական խմբերի կազմավորման շարժումը, որին մասնակցում են այլ երկրներից, այդ թվում՝ Հայաստանից ժամանած բազմաթիվ հայեր: Բուլղարիայի իշխանությունները հայ կամավորականներին թուլատրում են կազմավորել իրենց առանձին ստորաբաժանումը՝ կամավորական վաշտը, հայազգի սպաներով ու հայկական դրոշով:

Հայ կամավորական վաշտը պաշտոնապես համալրում է 12-րդ Լոզենգրադյան դրուժինայի կազմը՝ որպես նրա երկրորդ վաշտ: Հրամանատար է նշանակվում երիտասարդ Գարեգին Նժդեհը, իսկ խմբապետ (վոյեվոդ)՝ այդ տարիներին Բուլղարիայում բնակվող գորավար Անդրանիկը: Սահմանված կարգի համաձայն՝ կամավորական վաշտերը կարող էին ունենալ 150-160 մարդ, սակայն, որպես բացառություն, հայերին թուլատրվում է հավաքագրել 230 հոգի: Բացի հայկական վաշտից, բազմաթիվ հայեր ընդգրկվում են նաև կամավորական բրիգադի այլ գորամասերում: 1912թ. հոկտեմբերի 8-ին վաշտը ողջ կազմով հայկական Սուրբ Աստվածածին եկեղեցուն հանդիսավոր պայմաններում երդում է տալիս, իսկ հոկտեմբերի 23-ին Սոֆիայի հայերը կամավորներին ճանապարհում են դեպի ռազմի դաշտ:

### ***Առաջին մարտերը***

Կամավորական վաշտը ռազմական գործողությունների գոտի է հասնում նոյեմբերի սկզբին և ներգրավվում ծանր մարտերի մեջ: Ընդամենը չորս օրվա ընթացքում՝ նոյեմբերի 4-7-ը, վաշտը մասնակցում է երեք մարտի՝ Մեսքանլիի, Ուզուն Համիդլարի և Բալկան-Թորեսի շրջաններում (տե՛ս քարտեզ 9.3):

Կամավորական 12-րդ դրուժինան, որի կազմում էր հայկական վաշտը, կարգադրություն է ստանում Մարմարայի ծովափը մաքրել թուրքական զորքերից: Անցնելով Կիրջալի քաղաքը՝ Մակազ-Թեփեի շրջանում դրուժինան անսպասելիորեն ընկնում է բարձունքի վրա դիրքավորված հակառակորդի

ուժգին հրետակոծության տակ: Սկսվում է փոխհրաձգություն, որին հաջորդում է թուրքերի գրոհը: Օգտվելով գերիշխող դիրքից և թվական գերակշռությունից՝ հակառակորդը փորձում էր մասնատել և հետ շարտել կամավորականներին: Նրան հաջողվում է մոտենալ կամավորականների դիրքերին և սվինամարտի բռնվել: Հայկական վաշտն իր վրա է կրում թուրքական զորքերի գլխավոր հարվածը, բայց աչքի է ընկնում տոկունությամբ և խիզախությամբ: Ուշ երեկոյան վաշտն Անդրանիկի և Նժդեհի գլխավորությամբ հակառակորդից գաղտնի առաջանում է դեպի նրա դիրքերը՝ կտրվելով կամավորական մյուս զորամասերից:

Թուրքերը հայ կամավորներին նկատում են միայն այն ժամանակ, երբ վերջիններս իրենց դիրքերից սոսկ մի քանի տասնյակ քայլ հեռավորության վրա էին: Հակառակորդը դիմահար կրակ է բացում, սակայն արդեն ուշ էր: Հայ կամավորները նետվում են սվինամարտի և կարճատև գոտեմարտից հետո գրավում հակառակորդի դիրքերը: Կամավորական դրուժինայի հրամանատար Գանևն ուղղակի ապշել էր հայ ռազմիկների խիզախ գործողություններից և, չթաքցնելով հիացմունքը, անընդհատ կրկնում էր՝ առյուծներ են, կատարյալ առյուծներ:

Հակառակորդի հետապնդումը շարունակվում է ութ օր: Այդ ընթացքում հայկական վաշտը մասնակցում է մի քանի բնակավայրերի ազատագրման մարտերին:

**Վճռորոշ ճակատամարտը**

Հակառակորդի բանակի հետապնդման վերջին փուլը տեղի է ունենում նոյեմբերի 15-ին Մերհամլի գյուղի մերձակայքում մղված մարտում: Թուրքական զորքերի հրամանատար Մեհմեդ Յավեր փաշայի ուժերը դիրքավորվել էին գյուղի մերձակայքում՝ Մարիցա գետի ափին, և հրետանային հզոր կրակի պաշտպանության ներքո իրենց լիովին ապահով էին զգում (տե՛ս քարտեզ 9.3): Թվում էր, թե հակառակորդի դիրքերին առանց խոշոր կորուստների մոտենալ հնարավոր չէր, սակայն Անդրանիկը հայկական վաշտն առաջնորդում է ճակատային գրոհի: Այս քայլը, որ վճռորոշ էր լինելու ամբողջ ճակատամարտի համար, անակնկալ էր ոչ միայն հակառակորդի, այլ նաև կամավորական բրիգադի հրամանատար, փոխգնդապետ Ալ.Պրոտոզերովի համար: Վերջինս փորձում է կանգնեցնել հայ կամավորականների գրոհը, սակայն ապարդյուն:

Ինչպես և սպասվում էր, հակառակորդը հայկական վաշտին դիմավորում է հրետանային կրակով: Սակայն մինչ թուրք հրետանավորները կրակը կուղղորդեին առաջ սուրացող հայկական վաշտի վրա, վերջինս շրջանց կատարելով մտնում է գյուղի մերձակա ձորակը և հայտնվում կրակի համար մեռյալ գո-

ՀԱՅ ԿԱՍԱԿՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ  
ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1912Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ-1913Թ. ՄԱՅԻՍ)



տում: Առանց կանգ առնելու՝ վաշտն անցնում է ձորակը, զառիվերով բարձրանում դեպի հակառակորդի դիրքերը և անհապաղ գրոհի նետվում հակառակորդի առաջին գծի վրա:

Այս ամենն այնքան արագ և անսպասելի էր թուրքական զորքերի համար, որ նրանք, առանց պատշաճ դիմադրություն ցույց տալու, նահանջում են Մերհամլի, որտեղ և հայտնվում են շրջապատման օղակում: Հակառակորդի բանակն անելանելի վիճակում էր. առջևում կամավորների հոծ և հետզհետե ավելի ու ավելի սեղմվող շղթան էր, իսկ հետևում՝ Մարիցա գետը: Խուճապի մատնված թուրքական զորամասերը սկսում են զանգվածաբար անձնատուր լինել: Գերի է հանձնվում նաև հրամանատարը՝ Մեհմեդ Յավեր փաշան:



**Անդրանիկ Օզանյան (1865-1927թթ.)**

**Տեղեկանք.** «Երկու և կես ժամ կտևե, մինչև որ Եավեր փաշան իր 3 գնդապետներով, 242 սպաներով և 10 հազար զորքով կանցնի հայ-պուլկարական զորքերուն առջևեն... Երբ շատերը զարմացած կհարցնեն իրեն, թե ինչո՞ւ այդքան զորքով ու թնդանոթներով անձնատուր եղած էր Անդրանիկին և իր վաշտ մը կամավորներուն, ան կպատասխանե. «Հետևիցս՝ ծովը, առաջիցս՝ կամավորները, ի՞նչ ընեն»:

**Ա.Չելեայան, Ջորավար Անդրանիկ, էջ 267**



**Գարեգին Տեր-Հարությունյան (Գարեգին Նժդեհ, 1886-1955թթ.)**

**Հաղթական ավարտը**

Հաղթանակից հետո հայ կամավորական վաշտը մասնակցում է մի շարք բնակավայրերի ազատագրման մարտերին, իսկ 1912թ. վերջերից հուսալիորեն պաշտպանում էր Մարմարայի ծովափնյա շրջանը: Բալկանյան պատերազմում թուրքիան ծանր պարտություն է կրում և զրկ-

վում իր եվրոպական տարածքներից: Բալկանյան ժողովուրդներն ազատագրվում են թուրքական դարավոր լծից: Մայիսի 17-ին Լոնդոնում կնքված հաշտության պայմանագրից հետո հայկական վաշտը կազմալուծվում է:

### ***Ամփոփում***

Թուրքական լծից բալկանյան ժողովուրդների ազատագրությունը նոր հեռանկարներ էր բացում նաև Հայկական հարցի դրական լուծման համար: Այս առումով կարևորվում էր հայ ժողովրդի զորակցությունն իրենց ազատագրության համար պայքարող ժողովուրդներին: Բալկանյան պատերազմի մարտերում հայկական վաշտը կամավորական միավորման առաջապահ ջոկատն էր, որն իր վրա էր կրում հակառակորդի հարվածը, ապա և ինքն էր առաջինը հարվածում հակառակորդին: Վաշտի բոլոր ռազմիկները դրսևորեցին անձնական արիություն, տոկունություն և մարտավարական հմտություն, մարտերի համար վճռորոշ պահերին իրենց անձնագոհ քայլերով մարտի հաղթական ելքն ապահովելու վճռականություն:

Հայդուկային բազուն մարտերում թրծված Անդրանիկի գլխավորությամբ վաշտը, որը կամավորական միավորման հարվածային ջոկատն էր, աչքի էր ընկնում իր անսպասելի և վճռական գործողություններով, որոնց շնորհիվ անակնկալի էր բերում հակառակորդին ու հասնում էր հաղթանակի:

# **ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1914-1918ԹԹ.)**

1914թ. օգոստոսի 1-ին սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Մարտական գործողություններն ընթանում էին երկու խոշոր ռազմաքաղաքական խմբավորումների Անտանտի (Մեծ Բրիտանիա, Ռուսաստան և Ֆրանսիա) և Գերմանիայի և Ավստրո-Յունգարիայի միջև: Նույն թվականի աշնանը հակամտանոյան խմբավորմանը միացավ օսմանյան Թուրքիան, իսկ մեկ տարի անց՝ Բուլղարիան:

Առաջին համաշխարհային պատերազմի մեջ Օսմանյան կայսրության մտնելուց հետո երիտթուրքական կառավարությունը սկսում է իր տիրապետության ներքո գտնվող հայ բնակչության զանգվածային տեղահանությունները և կոտորածները: Հայոց ցեղասպանության ընթացքում թուրքական կառավարության հանցավոր հրահանգներով ոչնչացվում են նվազագույնը 1,5 միլիոն հայեր: Դա 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն էր:



**Ջախից՝ Զորորդ ջոկատի հրամանատար Քեռի (Արշակ Գաֆաֆյան), Երրորդի հրամանատար՝ Համազասպ Սրվանձտյան, կամավորական շարժման ղեկավար Խանասորի Վարդան (Սարգիս Մեհրաբյան)**

Պատերազմող երկու խմբավորումներն էլ զգում էին մարդկային ներուժի կարիք, ուստի ձեռնամուխ եղան հպատակ ժողովուրդներից կամավորական ստորաբաժանումների ձևավորմանը: Ռուսական իշխանությունները Կովկասում և Անդրկովկասում տեղաբնիկ հայերից կազմում են աշխարհագրային ջոկատներ: Մասնակցելով կամավորական շարժմանը՝ հայերը հույս ունեին, որ ի վերջո կլուծվի Հայկական հարցը և Արևմտյան Հայաստանը կազատագրվի օսմանյան բռնապետությունից: Ցանկացողների թիվն այնքան մեծ էր, որ Հայ կամավոր խմբերի կարգադրիչ մարմինը սկզբնապես որոշված 4 կամավորական ջոկատների թիվը հասցնում է 8-ի, որոնցից մեկը՝ պահեստային: Ջոկատները կոչվում էին մաև դրուժինա, խումբ կամ գունդ:

1914թ. հոկտեմբերի 23-ին առաջինը ռազմաճակատ է մեկնում 1200 հոգանոց առաջին ջոկատը, որի հրամանատարն Անդրանիկ Օզանյանն էր: Հայ կամավորները հատկապես աչքի են ընկնում Սարիղամիշի նշանավոր ճակատամարտում և Օլթիի ու Արդահանի շրջաններում մղված մարտերի ընթացքում:

## **ԴԻԼՄԱՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 1915Թ. ԱՊՐԻԼԻ 18**


Օսմանյան բանակի դիվիզիայի հրամանատար Խալիլ բեյը ցանկանում էր օգտագործելով ուժերի գերակշռությունը՝ ջախջախել ռուսներին, ապա շարժվել Ջուղա (Ջուլֆա), որտեղ Խալիլի դիվիզիան կհամալրվեր ի հաշիվ թաթար և քուրդ բնակչության: Այս ուղղությամբ առավել ծանր մարտեր են մղվում Դիլման քաղաքի շրջանում: Հարցն այն է, որ թուրքական բանակային հետախուզությանը հաջողվել էր պարզել, որ Դիլմանում և շրջակայքում ռուսները սակավաթիվ ուժեր ունեն: Այդտեղ տեղակայված էր միայն գեներալ Թովմաս (Ֆոմա) Նազարբեկյանի Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիան՝ 8 գումարտակ, 12 հարյուրյակ և 12 թնդանոթ: Նրանց դեմ կանգնած էին Խալիլ բեյի հրամանատարության ներքո գտնվող դիվիզիան և 5-6 հազար քրդական անկանոն ստորաբաժանումները: 1915թ. ապրիլի 15-ի լույս 16-ի գիշերը հակառակորդն անցնում է հարձակման: Ռուսական զորամասերը հայտնվում են բարդ վիճակում և դժվարությամբ էին դիմակայում թուրք-քրդական ուժերի ճնշմանը (տե՛ս քարտեզ 9.4):

**Պատմական տեղեկանք.** «Այդ ծանր թուպեին ես նկատեցի առաջացող ոչ մեծ զորամաս: Պարզվեց, որ դա հայկական Առաջին դրուժինայի վաշտն էր Սոմբատի (Սմբատ Բորոյան, Մախլուտո) գլխավորությամբ...»: **Գեներալ Թ.Նազարբեկովի անտիպ հուշերից: Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 45**

Գեներալի հրամանով հայ կամավորները դիրքեր են գրավում Մուխանջիկ գյուղից հարավ-արևելք: Թ.Նազարբեկովը, գիտակցելով, որ ճակատամարտի ողջ հաջողությունը կախված է հայ ռազմիկների տոկոսությունից, հրամայում է Սմբատին «մեռնել, բայց չնահանջել»: Առավել ծանր մարտեր մղում էին հայ կամավորները, քանի որ նրանց զբաղեցրած դիրքերը Դիլմանի բանալին էին: Նրանք մի քանի անգամ ձեռնամարտի են բռնվում հակառակորդի հետ: Սմբատի անվեհերության շնորհիվ հակառակորդի բոլոր սրընթաց հարձակումներն ապարդյուն են անցնում, և դրանից հետո հակառակորդը դադարեցնում է հարձակումն ու նահանջում:

1915թ. ապրիլի 17-ին Մարանդ են ժամանում նոր զորամասեր, որոնց թվում՝ Հայկական 1-ին դրուժինայի մնացած վաշտերն Անդրանիկի հրամանատարությամբ: Ապրիլի 18-ի վաղ առավոտյան Խալիլ բեյն իր ուժերը նետում է վճռական հարձակման: Թուրքական գլխավոր հարվածն ուղղված էր Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի պաշտպանության կենտրոնին՝ Մուխանջիկին և աջ թևին: Կենտրոնի պաշտպանության ողջ ծանրությունն ընկած էր հայ կամավորների վրա: Գեներալ Թ.Նազարբեկյանը շտապ այնտեղ է ուղարկում մեկ գումարտակ, չորս թնդանոթ և երեք գնդացի:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ (1914-1917ԹԹ.)



Հրետանին տեղակայվում է Անդրանիկի մատնանշած վայրում: Հակառակորդի հերթական հարձակումը հետ մղելուց հետո դիվիզիան անցնում է հակահարձակման: Անդրանիկն իր դրուժինայով թուրքերին դուրս է մղում Բարչիշլի գյուղից: Այս բնակավայրի գրավումը վերջնականապես ամրապնդում է հաղթանակը:

Դիլմանի ճակատամարտում թուրքական կողմի կորուստը կազմել է մոտ 2 հազար սպանված, իսկ ռուսականինը՝ 600 սպանված և 800 վիրավոր: Հայ կամավորներից զոհվում է 21 և վիրավորվում 55 հոգի: Դիլմանի հաղթանակով ոչ միայն ձախողվում են Կովկասը նվաճելու օսմանյան հրամանատարության ծրագրերը, այլև ամրապնդվում է հերոսական պայքար մղող Վանի հայության ինքնապաշտպանության ոգին:

1916թ. մարտից սկսած՝ հայ կամավորական ջոկատները լուծարվում են: Նրանց հենքի վրա կազմավորվում են վեց հրաձգային գումարտակներ: Հայ կամավորներն աչքի ընկան Կովկասյան ռազմաճակատի այլ տեղամասերում: Նրանց սխրանքները բազմիցս նշել են ռուս զորահրամանատարները, որոնք մեծագույն գովեստով էին խոսում հայ կամավորների մասին, աշխատում էին, որպեսզի հայերն անպայման ընդգրկվեն իրենց զորամասերում: Այս կարգի վկայությունները բազմաթիվ են:



**Թովմաս Նազարբեկյան (1854-1929թթ.)**



**Սմբատ Բորոյան (Մախլուտ, 1881-1956թթ.)**

**Պատմական տեղեկանք.** «Դրուժինիկները գերազանց հանդերձավորված էին: Ձինված էին ռուսական հրացաններով, շատերի մոտ կային «Մաուզեր» սիստեմի ատրճանակներ... Հայ դրուժինիկներին շատ ռազմատենչ տեսք էին տալիս կրծքի և գոտու վրայի փամփշտակալները... Դրուժիճաներին կից կային հեծյալ հետախույզների հարյուրյակներ՝ ուժեղ և ժիր դարաբաղյան նժույզների վրա...»:

**Елисеев Ф.И., Казаки на Кавказском фронте. 1914-1917, стр. 86**




**Արշակ Գաֆաֆյան**  
(Քեռի, 1858-1916թթ.)

Իրենց հրամանատարական ծիրքով աչքի էին ընկնում ջոկատների հրամանատարներ Անդրանիկը, Դրոն, Համազասպը, Խանասորի Վարդանը (Սարգիս Մեիրաբյան), Հովսեփ Արղությանը, Հայկ Բժշկյանը<sup>1</sup>: Գրիգոր Ավչարյանը և Քեռին ընկան հերոսի մահով: Մարտական գործողությունների ընթացքում մոտ 800 կամավոր զոհվեց մարտադաշտում: Կամավորները պարգևատրվեցին Սբ Գեորգիի մոտ 500 խաչերով և մեդալներով:



**Հայկ Բժշկյան**  
(Գայ, 1887-1937թթ.)



**Ամերիկացի զինագործ Մաքսիմի գնդացիրը: Այդ և նմանատիպ գնդացիրներն էին կազմում պատերազմող բանակների հրաձգային վաշտերի կրակային հզորության հիմքը:**

<sup>1</sup> Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի տարիներին գլխավորեց լեգենդար «Երկաթե դիվիզիան»:

# 1915Թ. ԱՐԵՎՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

## ՎԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վանի նահանգապետ Ջևդեթ բեյի<sup>1</sup> հրամանով օսմանյան բանակն օղակում է քաղաքի հայկական երկու թաղամասերը, որոնցից՝ Այգեստանն ուներ 20 հազար, իսկ Քաղաքամեջը՝ 2500 բնակիչ: Սպառնացող վտանգը հարկադրում է վանեցիներին կազմակերպել թաղամասերի ինքնապաշտպանությունը:

1915թ. ապրիլի 5-ին Այգեստանում կազմվում է «Վանի հայ ինքնապաշտպանության զինվորական մարմին», կարճ՝ Ջինվորական մարմին: Նրա կազմում էին Արմենակ Եկարյանը (նախկին արմենական, սահմանադիր-ռամկավար), Կայծակ Առաքելը, Բուլղարացի Գրիգորը, Արամ Մանուկյանը (երեքն էլ՝ ԴՅԴ անդամներ), Փանոս Թերլեմեզյանը (անկուսակցական) և ուրիշներ:

Երեք օր շարունակ հայկական թաղամասերը նախապատրաստվում էին ինքնապաշտպանության: Այգեստանը բաժանվեց յոթ պաշտպանական շրջանի՝ 79 դիրքով, իսկ Քաղաքամեջը՝ չորս շրջանի, 25 դիրքով:

Յուրօրինակ մոբիլիզացիայի արդյունքում ռազմական գործին են ծառայեցվում ամենատարբեր մասնագիտությունների տեր մարդիկ: Այսպես, զենքերը վերանորոգելու և փամփուշտները լիցքավորելու նպատակով կազմակերպվում է զինագործական արհեստանոց: Այստեղ ընդգրկված էին 50-ից ավելի ոսկերիչներ, արծաթագործներ և փորագրիչներ: Պրոֆեսոր Միքայել Մինասյանին հաջողվում է պատրաստել անծուխ (պիրոքսիլինային) վառոդ: Կազմվում է «Ամրաշեն խումբ», ուր ընդգրկվում են մոտ 1800 տղամարդիկ: Նրանց կողմից փորվում են խրամատներ, հակառակորդի հետ անմիջական շփման տեղամասերում գտնվող տներն ամրացվում են և միմյանց հետ կապվում ստորգետնյա հաղորդակցության ուղիներով:

Թաղամասի կարգ ու կանոնը պահպանելու, ինչպես նաև սանիտարական վիճակի հսկողություն սահմանելու նպատակով կազմակերպվում է քաղաքապետարան:

Վանի պաշարունն իրականացնող թուրք-քրդական ուժերի թվաքանակը հասնում էր 12 հազար հոգու: Նրանք զինված էին մի քանի տասնյակ թնդանոթներով և զնդացիրներով: Մեծաքանակ և սպառնալիցությամբ գերազանցող հակառակորդին քաղաքի հայությունն ի վիճակի էր հակադրել մոտ տասն անգամ քիչ ուժ: Այգեստանում կար 1053, իսկ Քաղաքամեջում՝ 100-120 մարտիկ:

<sup>1</sup> Ջևդեթ բեյի մոտ էր ուղարկվել գերմանական բանակի կապիտան (հետագայում՝ գեներալ, ծագումով վենեսուելացի) Ռաֆայել դե Նոգալեսը:

Մարտական գործողությունները սկսվում են 1915թ. ապրիլի 7-ի վաղ առավոտյան, թուրքական ստորաբաժանումների գրոհով (տե՛ս քարտեզ 9.4): Վանի զանազան մասերում տեղակայված հրետանին սկսում է ռմբակոծել հայկական թաղամասերը: Այգեստանի և Քաղաքամեջի պաշտպանության համար լուրջ արգելք էին հանդիսանում թուրքական մի շարք ամրություններ: Ուստի, երկու քաղաքամասերի Ձինվորական մարմինները վճռում են պայթեցնել դրանք: Ամրությունների թվում էր Այգեստանի հյուսիսարևելյան մասում գտնվող Զամուտ աղա կոչվող զորանոցը: Այստեղ ամրացել էր հակառակորդի 650 զինվոր: Ձորանոցը գերիշխող դիրք ուներ ողջ թաղամասի վրա և կրակի տակ էր պահում նրա զգալի մասը: Վանեցիները, գաղտնապահության խստագույն պայմաններում, գիշերները գետնուղի են փորում մինչև զորանոցի հիմքը և այնտեղ տեղադրում պայթուցիկ նյութը: Պայթյունի հետևանքով առաջացած հրդեհը հրո ճարակ է դարձնում զորանոցը:

Զաջորդ վտանգավոր ամրությունը բրիտանական նախկին հյուպատոսարանի շենքն էր: Այստեղ դիրքավորվել էր 30 ժանդարն: Զյուպատոսարանի շենքի հրկիզումը կատարվում է վանեցիների պատրաստած ինքնաշեն սարքի միջոցով, որը պարզունակ հրանետ էր հիշեցնում:

Պաշտպանությունը ճեղքելու նպատակով թուրքերն էրզրումից ժամանած մի գերմանական սպայի հրամանատարությամբ գիշերային հարձակում են նախաձեռնում: Գրոհը հետ է մղվում, իսկ թուրքերը կորցնում են 60-70 հոգի:

Քաղաքային պայմաններում, երբ փողոցները պատված էին խրամատներով և բարիկադներով, չեքքեզական հեծելազորը ևս ի վիճակի չի լինում արդյունավետ գործել, իսկ գրոհի ձախողումից հետո հակառակորդը հրաժարվում է հեծելազորի օգտագործումից: Թուրքերի անհաջողությունների պատճառներից էր թուրք զինվորների կրթական անբավարար մակարդակը, որը թույլ չէր տալիս հրետանային հաշվարկներին ճիշտ հաշվարկել արկի լիցքը: Նրանք հաճախ լիցքը թույլատրելի չափից ավելի շատ էին դնում, որի հետևանքով մի քանի թնդանոթների փողեր պայթում են:



**Արմենակ Եկարյան  
(1870-1925թթ.)**

Ականատեսներն առանձնացնում են հայերի նշանառու հրաձգությունը: Հիշատակվում է նաև հատուկ շաղափների մասին, որոնցով հայ մարտիկները կարողանում էին տների պատերի մեջ անցքեր բացել և անսպասելիորեն գնդակոծել հակառակորդին:

Ռուսական Բայազետի ջոկատի և հայ կամավորական Արարատյան դրոժինայի առաջխաղացումը հարկադրում է թուրքական հրամանատարությանը դադարեցնել Վանի պաշարումը: 1915թ. հունիսի 3-ի վաղ առավոտյան սկսվում է թաղամասերի ուժգին ռմբակոծությունը, որը երեկոյան թուլանում է, ապա՝ դադարում: Մայիսի 4-ի առավոտյան տեղի է ունենում Այգեստանի և Քաղաքամեջի հայ բնակչության հանդիպումը: Ապա քաղաք է մտնում Արարատյան դրոժինայի հեծելազորը: Ի պատիվ իրենց ազատարարների՝ վանեցիները թուրքերից խլած թնդանոթներից 50 համազարկ են տալիս: Մոտ մեկ ամիս տևած կռիվների ընթացքում թուրքական կանոնավոր ուժերի կորուստը կազմում է մոտ 1000, իսկ հայերինը՝ 300 սպանված: Հակառակորդի կորուստներում հաշվի չեն առնված քրդական անկանոն ստորաբաժանումները: Հայկական թաղամասերի վրա արձակվել էր 16 հազարից ավելի արկ: Ավերվել էր քաղաքի երկու երրորդը:



**Հրանետ:** Հրանետներն այնքան անկատար էին, որ կանոնավոր զորամասերում էլ զինվորները հրաժարվում էին հրանետորդ դառնալ: **Հետևաբար, Վանի պաշտպանների կողմից հրանետի ստեղծումն արդեն համարձակ քայլ էր, իսկ դրա կիրառումը՝ հերոսություն:**

## ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ԿԻԼԿԻԱՅՈՒՄ

1914թ. աշնանը ձերբակալելով և հաշվեհարդար տեսնելով Ձեյթունի հասարակական, քաղաքական և կրոնական գործիչների հետ՝ երիտթուրքական իշխանությունները նախապատրաստում են Հայկական Կիլիկիայի հայ բնակչության բռնազաղթը: Թուրքական կառավարությունը հայտարարում է, որ զեյթունցիների դիմադրության դեպքում կտուժի դաշտավայրի հայ բնակչությունը: Բռնություններ են սկսվում: Դա դրդում է Ձեյթունի երիտասարդությանը՝ եղիա Նորաշխարհյանի (Ենիտունյան), Փանոս Չագրյանի, Մեսրոպ Չուլագյանի և Խաչիկ Յաղուլայանի գլխավորությամբ, նախապատրաստվել ինքնապաշտպանության: 1915թ. փետրվարի 17-ին նրանք զենք և զինամթերք հայթայթելու նպատակով հարձակվում են ժանդարմական ստորաբաժանման վրա: Նրանցից զենքը խլելուց հետո զեյթունցիները որոշում են ամրանալ մոտակա վանքում:

Թուրքական իշխանությունները շտապ կարգով լրացուցիչ զորամիավորումներ են տեղափոխում Ձեյթուն: Հալեպից Ձեյթուն են գալիս Ֆահրի փաշան՝ մոտ 3 հազար զորքով և Մուստաֆա Ահմեդ Մյուքմազը՝ 3 հազար զորքով:

Ե.Նորաշխարհյանի խումբը, մի քանի հաջող մարտեր մղելով ոստիկանական ուժերի դեմ, որոշում է ամրանալ Պերզնկա լեռան ստորոտում գտնվող վանքում: Այս բացահայտ մարտահրավերով նրանք ցանկանում էին ի զեն կոչել երիտասարդությանը և կազմակերպել Ձեյթունի պաշտպանությունը: 1915թ. մարտի 14-ին օսմանյան ստորաբաժանումները հրետանու աջակցությամբ սկսում են գրոհել վանքը: Հայերը կարողացել էին ընտրել հաջող դիրքեր, որը հնարավորություն չէր տալիս թուրք զինվորներին առաջանալ: Ձեյթունցիները, մի շարք դեպքերում բանեցնելով ռազմական խորամանկություն, զգալի կորուստներ են հասցնում հակառակորդին:

**Պատմական տեղեկանք.** «Ամեն կողմե տեղատարափ ռումբ կտեղար և գնդակ կտեղար վանքին վրա: Ոչ մեկ պատասխան մերիմներուն կողմե: Կես ժամ վերջ, թշնամի հրամանատարությունը զարմացած վանքին անտարբերությունեն, կամ խորհելով, թե բոլորը փախուստ տված են և ներսը մարդ չկա, հրամայեց հարձակողականով մը գրավել վանքը: Թշնամին բավական մոտեցած էր վանքին, երբ մերիմները պատասխանեցին և բազմաթիվ դիակներ գետին փռեցին»:

**Նորաշխարհյան Լ., Ձեյթունը 1914-1921թթ., Հուլիս, 39**

Թուրքական հրամանատարությունը, վերախմբավորելով ուժերը, անցնում է նոր հարձակման: Թուրքերին հաջողվում է գրավել վանքի մատույցներում գտնվող այգիները և ընդհուպ մոտենալ վանքի պարիսպներին ու զեյթունցիների գրաված դիրքերին: Անզիջում մարտերից հետո հակառակորդը հետ է շարտվում: Սպանվում է թշնամու հրամանատարը՝ հազարապետ Սու-

լեյմանը: Թուրքական հրամանատարությունը բերում է ավելի մեծ տրամա-  
չափի թնդանոթ և շարունակում վանքի հրետակոծությունը: Հաշվի առնելով  
ստեղծված իրավիճակը՝ զեյթունցիները որոշում են օգտվել մթությունից և  
հեռանալ լեռները: 12 ժամ տևած մարտերի ընթացքում հայերը տվել էին 2  
վիրավոր, իսկ հակառակորդը՝ 101 սպանված և 110 վիրավոր: Անգլիական  
«Թայմս» թերթը, անդրադառնալով այս մարտին, գրել է. «Ձեյթունում գտն-  
վող թուրքական զորքերը, որոնց կազմում 5000 զինվոր կար, հարձակման  
անցան, կորուստներ տալով հետ մղվեցին, իսկ գիշերն ապստամբները թո-  
ղեցին ճամբարը»:

Ձեյթունցիների մի մասը, մնալով լեռներում, պայքար է մղում թուրքա-  
կան կանոնավոր բանակի ստորաբաժանումների դեմ, տանում մի շարք  
հաղթանակներ և փրկում բազմաթիվ տարագիր հայերի: Ձեյթունի լեռնե-  
րում ապաստանած հայերը դիմագրավում են օսմանյան ուժերին մինչև  
1918թ. զինադադարը:

## ՄՈՒՍԱ ԼԵՈՒՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1915թ.)

1915թ. հուլիսի վերջերին Կիլիկիայի հարավում գտնվող Սուետիայի հայությունը ստանում է բռնազաղթի հրամանը: Սուետիան գտնվում է Միջերկրական ծովի առափնյա շրջանում և բաղկացած էր մի քանի հայկական գյուղերից (տե՛ս սխեմա 1): Իշխանությունների հրամանը լուրջ տարածայնություններ է առաջացնում բնակչության շրջանում: Մի մասը գտնում է, որ պետք է ենթարկվել հրամանին, իսկ մյուսները՝ հակառակը, բարձրանալ մոտակա Մուսա կամ Մովսեսի լեռը և դիմագրավել ջարդարարներին: Բնակչության այն հատվածը, որը հավատ ընծայեց խոստումներին, տարագրվեց և կոտորվեց:

1915թ. օգոստոսի 2-ին Սուետիայի 6311 հայ բնակչության մեծ մասը՝ 4231 հոգի, բարձրանում է Մուսա լեռը: Հայերի ունեցած զենքն ու զինամթերքը սակավ էին, որի պատճառով 600-800 տղամարդկանցից մարտերին մասնակցում էր 400-500 հոգի: Կային մոտ 600 որսորդական, 95 «Կրա», 11 «Մաուզեր» և այլ հրացաններ:

Օգոստոսի 7-ին լուր է ստացվում, որ 200 թուրք զինվորներ շարժվում են դեպի հայկական ճամբարները: Հակառակորդն առաջանում էր անհոգ և առանց պատշաճ հետախուզության: Նրանց հրամանատարը պարծեցել էր, թե մեկ օրն էլ բավական է հայերի հետ հաշվեհարդար տեսնելու համար: Թուրքերը փորձում են ճակատային գրոհով ճեղքել հայերի պաշտպանությունը, բայց թևային և ճակատային կրակով հետ են մղվում:

Առաջին բախումը լուրջ խորհրդածությունների տեղիք է տալիս, քանի որ ի հայտ են գալիս հայկական պաշտպանության խոցելի տեղերը: Որոշվում է կտրատել դիրքերի առջև գտնվող ծառերը 20-25 մետր խորությամբ՝ մարտիկների տեսադաշտը մեծացնելու և հակառակորդին անակնկալ գրոհելու հնարավորությունից զրկելու համար: Երկու օր հայերը զբաղվում են այդ աշխատանքներով:

Օգոստոսի 10-ի վաղ առավոտյան 1500 հոգանոց թուրքական զորամասը, օգտվելով մառախուղից, աննկատ մոտենում է հայկական դիրքերին, ուր այդ ժամանակ կար ընդամենը 12-15 մարտիկ: Նրանք ստիպված են լինում մարտի մեջ մտնել թվով գերազանց հակառակորդի դեմ: Դա հնարավորություն է տալիս ինքնապաշտպանական մյուս տեղամասերից օգնություն ստանալ: Հակա-



1874թ. արտադրության Գրայի (այստեղից էլ արևմտահայերեն «Կրա» ձևը) հրացանները վաղուց արդեն հնացել էին, բայց մուսալեռցիների ձեռքին հզոր կրակային միջոց դարձան:

Սխեմա 1



ռակորդը հարկադրված է լինում դադարեցնել առաջխաղացումը: Միայն թուրքական հրետանին է շարունակում հրետակոծել հայկական դիրքերն ու ճամբարները:

Հակառակորդի հետագա հարձակումը ձախողելու գործում բացառիկ էր Պետրոս Գալստյանի քաջությունը: Նրան հաջողվում է աննկատ դիրքավորվել թուրքական թնդանոթի դիմաց գտնվող ժայռի տակ և հինգ կրակոցով սպանել հակառակորդի չորս թնդանոթաձիգների:

Օգոստոսի 11-ին հրավիրվում է ինքնապաշտպանական ուժերի ղեկավարների խորհրդակցություն: Մասնակիցները, վերլուծելով մարտերի ընթացքում տեղ գտած թերությունները, որոշում են ստեղծել ռազմական մեկ միասնական

կենտրոն և բոլոր ուժերն ու բնակչությունը կենտրոնացնել Տամըլճըզ կոչվող վայրում: Կազմվում է վարչական խորհուրդ, որի անդամներն էին Տիգրան Անդրեասյանը, Չաբեթ Իսկենտերյանը, Չեթուն Ֆիլյանը և ուրիշներ՝ 16 հոգի: Ռազմական ղեկավար է դառնում Եսայի Յաղուբյանը:

Չնայած մասնակի հաջողություններին, բոլորին անհանգստացնում էր պարենի պակասը: Այդ խնդիրը լուծելու նպատակով հայերը հակառակորդից աննկատ իջնում էին շրջակա գյուղերը և այնտեղից հայթայթում ուտելիք: Սակայն այն բանից հետո, երբ հակառակորդը երեք կողմից օղակում է լեռը, սուետիահայերը զրկվում են այդ հնարավորությունից ևս:


Ստեղծված իրավիճակում զեթունցիները փորձում են կապ հաստատել Միջերկրական ծովում նավարկող բրիտանական և ֆրանսիական ռազմանավերի հետ: Օգոստոսի 13-ի գիշերը երեք հնուտ լողորդներ պետք է լողալով հասնեին Ալեքսանդրեթ, կապ հաստատեին Անտանոտի կամ չեզոք տերության նավապետի հետ, նրան հանձնեին օգնության խնդրանքով նամակը: Սակայն լողորդները վերադառնում են ձեռնունայն: Սուետիահայերը հույսները չեն կորցնում, լեռան բարձունքներին հերթապահներ են նշանակում՝ հանձնարարելով հետևել ծովին և որևէ նավի հայտնվելու դեպքում խարույկներ վառել՝ նրա անձնակազմի ուշադրությունը գրավելու համար: Կամայք երկու մեծ դրոշակներ են գործում, որոնցից մեկի վրա անգլերեն ասեղնագործվում է «Քրիստոնյաները աղետի մեջ են», իսկ մյուսի վրա պատկերված էր կարմիր խաչ: Երկու դրոշակներն ամրացվում են ամենաբարձր ծառերի գագաթներին, այնպես, որ դրանք տեսանելի լինեն ծովից: Միաժամանակ մի խումբ արիեստավորների հանձնարարվում է լաստեր պատրաստել՝ սպառնալից իրավիճակի դեպքում դրանցով բնակչությանը Կիպրոս տեղափոխելու համար:

Առաջին պարտություններից հետո օսմանյան հրամանատարությունը սուետիահայերի դեմ է ուղղում 3 հազար զինվոր և շրջակա գյուղերից հավաքագրված 4 հազար թալանչի: Առավել ծանր մարտեր են տեղի ունենում 1915թ. օգոստոսի 19-ին՝ հակառակորդի լայնամասշտաբ հարձակման ժամանակ (տե՛ս սխեմա 2): Հրետանու կրակը զգալիորեն նպաստում է թուրքական ուժերի առաջացմանը: Ծանր կորուստների գնով հակառակորդը մոտենում է հայկական դիրքերին, և տեղ-տեղ ձեռնամարտ է սկսվում: Երկարատև մարտերից հոգնած հակառակորդը որոշում է դադարեցնել հարձակումը և վերսկսել այն վաղ առավոտյան: Այդ սխալն օգտագործվում է սուետիահայերի կողմից, որոնք վերախմբավորելով ուժերը՝ գիշերը հարձակվում են հակառակորդի վրա: Տղամարդկանց միացել էին նաև կանայք: Թուրք զինվորները հանկարծակի են գալիս և չկարողանալով դիմադրել՝ փախուստի են դիմում: Մարտադաշտից հայերը հավաքում են զգալի քանակությամբ զենք և զինամթերք:

Այս պարտությունից հետո թուրքական հրամանատարությունն ավելի է սեղմում պաշարման օղակը: Սուետիահայերի դեմ կենտրոնացվում է 15 հազարից ավելի ուժ:

Սխեմա 2

**ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ԳԵՐՈՍԱՍԱՐՏԸ 1915Թ. ԳՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ**



Մարտերը շարունակվում են մինչև սեպտեմբերի 5-ը: Այդ օրը ֆրանսիական «Գիշեն» հաժանավը, նկատելով Մուսա լեռան գագաթին ծածանվող դրոշները, խարիսխ է գցում և կապ հաստատում հայերի հետ: Ռազմանավի նավապետ, 2-րդ կարգի կապիտան Բրիսոնից հայերը խնդրում են իրենց տեղափոխել Կիպրոս կամ այլ տեղ, իսկ եթե դա հնարավոր չէ, գոնե փրկել միայն կանանց ու երեխաներին, իսկ տղամարդկանց ապահովել զենքով ու զինամթերքով: Նավապետ Բրիսոնը ժամանակ է խնդրում հրամանատարությանը նշված խնդիրը զեկուցելու և որոշումը հայտնելու համար: Ֆրանսիացիները հրետակոծում են Քերուսիե գյուղի զինամթերքի պահեստն ու զորանոցները, որից հետո ռազմանավը հեռանում է:

Օսմանյան հրամանատարության համար անսպասելի էր թշնամական տերության ռազմանավի հայտնվելը, որը կարող էր ի չիք դարձնել հայերի հետ հաշվեհարդար տեսնելու իրենց բոլոր ջանքերը, ուստի դիմում է վճռական գործողությունների: Սեպտեմբերի 7-ին ձեռնարկվում է լայնածավալ հարձակում, որը շարունակվում է մինչև երեկո: Հակառակորդը, սակայն, ոչ մի արդյունքի չի հասնում: Այդ մարտի ժամանակ սուետիահայերը «երգելով ու իրար հետ կատակելով էին մարտնչում կատաղած թշնամու դեմ»:

Հայ մարտիկների և օսմանյան ուժերի միջև ծավալված մարտերին ականատես են լինում սեպտեմբերի 9-ին վերադարձած «Գիշեն», «Թեսեքս», «Ժաննա դ'Արկ» և այլ նավերի անձնակազմերը: Աստիճանաբար, սակայն, զգացվում է հակառակորդի թվային և կրակային գերազանցությունը: Նավապետ Բրիսոնի հրամանով հաժանավի հրետանին պատասխան կրակով լռեցնում է թուրքական թնդանոթները և հարկադրում հակառակորդին նահանջել:

«Ժաննա դ'Արկ» հաժանավի վրա տեղի է ունենում հայերի վարչական խորհրդի անդամների հանդիպումը ծովակալ Դարտրիժ դյու Ֆուրնեի հետ: Նա հայերին հավատացնում է, որ ոչ մի դեպքում չի լքի նրանց: Բայց երբ ծովակալը դիմում է Կիպրոսի բրիտանական նահանգապետին՝ խնդրելով ընդունել հայերին, նա մերժում է: Անգլիական կառավարությունը դեմ էր նաև հայերին Եգիպտոս տեղափոխելուն: Այնուամենայնիվ, ֆրանսիացի ծովակալն իր անձնական պատասխանատվությամբ վճռում է հայերին տեղափոխել Եգիպտոս:

1915թ. սեպտեմբերի 12-ից սկսվում է հայերի տարհանումը: Այդ աշխատանքները ղեկավարում էր «Դեզե» հաժանավի հայազգի սպա Տիգրան Թեքեյանը: Մինչև սեպտեմբերի 14-ը «Գիշեն», «Թեսեքս», «Դեզե», «Ֆուր» և «Լ'ադմիրալ Շարնե» հաժանավերն ընդունում են 4058 հայի: Սկզբնապես նավերն են բարձրանում կանայք, երեխաները և ծերունիները: Տղամարդիկ այդ ժամանակ շարունակում էին մնալ դիրքերում՝ ապահովելով յուրայինների անվտանգ տեղափոխումը: Ֆրանսիական ռազմանավերը մուսալեռցիներին հասցնում են մինչև Եգիպտոսի Պորտ Սաիդ նավահանգիստ:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԸ

1915-ի հերոսական ինքնապաշտպանությունից հետո մուսալեռացիները տեղավորվում են Պորտ Սահիդի վրանավանդում: Չհամակերպվելով հայրենիքի կորստյան հետ՝ նրանք շարունակ դիմում էին ֆրանսիական ռազմածովային ուժերի սպա, իրենց տարհանման ղեկավարներից Շառլ Տիրան Թեքեյանին՝ ներկայացնելով Դաշնակիցների կազմում թուրքերի դեմ կռվելու ծրագիր: Ի վերջո, ռազմաճակատից մեկի հրամանատար Բենուա դ'Ազին կամավորների համար գաղթակայանում զինավարժության պարապմունքներ է կազմակերպում: 1916թ. նոյեմբերին ֆրանսիական կառավարությունը որոշում է ընդունում Արևելյան լեգեոնի կազմավորման մասին<sup>1</sup>: Մոտ 600 սուետիահայեր, որոնց թվում՝ Եսայի Յաղուբյանը, անդամագրվում են Արևելյան կամ Հայկական լեգեոնին: Նրանք հաստատվում են Կիպրոսում տեղակայված ռազմաբազայում:

Ապա երեք սպաների հետ գալիս է գնդապետ Ռոմիտոն, որը Եգիպտոսի Հայ ազգային միության հետ ձեռնամուխ է լինում լեգեոնի կազմավորմանը: Լեգեոնին անդամագրվում են նաև Առաջին աշխարհամարտի բովով անցած բազմաթիվ մարտիկներ, իսկ մինչ Մեծ եղեռնն ԱՄՆ-ում հաստատված արևմտահայ երիտասարդության շրջանում կամավորների թիվը հասնում է 10 հազարի: Բայց նավերի պակասի պատճառով միայն 1212-ին է հաջողվում հասնել Մոնարկա, ուր 1916-ի վերջին ուղարկվում է լեգեոնի առաջին գումարտակը, իսկ որոշ ստորաբաժանումներ մեկնում են պաշտպանելու Թուրքիային սահմանամերձ Կաստերելիզո և Ռուաթ կղզիները:

### **Արարայի ճակատամարտը**

1918-ի գարնանը շուրջ 4000 հայ և 1000 արաբ կամավորներից կազմված լեգեոնի երկու գումարտակները մեկնում են Պաղեստինյան ճակատ և սեպտեմբերի 14-ի գիշերը տեղաբաշխվում առաջնագծում (տես քարտեզ 9.5):

Արարայի (Ռաֆաթի) բարձունքներն անվանում էին «Թուրքերի երկրորդ Դարդանել»։ Այն ռազմաճակատի ամենաանառիկ հատվածն էր, որն անգլիական մեծաքանակ զորքերը դեպի հյուսիս առաջանալու համար 1918-ի

<sup>1</sup> Ֆրանսիական կառավարության 1916թ. նոյեմբերի 15-ի որոշմամբ սահմանվում են կամավորագրության սկզբունքները. լեգեոնին կարող էին անդամագրվել միայն հայերն ու արաբները, լեգեոնը տեղակայվելու էր Կիպրոս կղզում, ղեկավարվելու էր ֆրանսիական սպաների կողմից, բայց, որպես օժանդակ գործառնա, ֆրանսիական բանակի մաս չէր կազմելու:

Հայ մարտիկները կռվելու էին միայն թուրքերի դեմ և միայն Կիլիկիայի տարածքում, լեգեոնը կազմելու էր ստեղծվելիք Կիլիկյան հայկական պետության բանակի կորիզը: Արևմտահայության բեկորներից չվտանգելու նպատակով լեգեոնն անվանվում է ոչ թե «Հայկական», այլ «Արևելյան»:

# ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ 1917-1918ԹԹ.



մարտ-ապրիլ ամիսներին երեք անգամ ապարդյուն փորձել էին գրավել: Առանց Արարայի գրավման անհնար էր սկսել դաշնակիցների ընդհանուր հարձակումը, որի հաջող ելքի դեպքում ազատագրվում էին Լիբանանը, Սիրիան ու Կիլիկիան:


**Տեղեկանք.** «Արևելյան լեգեոնն աջում ունենալով ալժիրական, իսկ ձախում՝ հնդկական զորամասեր, առաջադրանք ստացավ գրոհել ռազմաճակատի ամենադժվարին ու ամնատշելի հատվածը: Ընդհանուր հրամանատարությունը մեծապես կարևորում էր Ռաֆաթ-Արարա բարձունքի գրավումը, որով նպատակ ուներ գերմանա-թուրքական զորքերի ուշադրությունը շեղել այս հատվածի պաշտպանության վրա՝ հեծելազորին թույլ տալով սրընթաց առաջանալ ծովափնյա Սարոնի դաշտավայրով»:

**Շմալոն Թորոսյան, «Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920թթ.»**

Լեգեոնի կորիզը մուսալեռցիներից և թուրքական բանակում ծառայած զինվորներից կազմված առաջին գումարտակն էր, բայց սեպտեմբերի 15-ին որոշվում է առաջին գծում տեղաբաշխել ԱՄՆ պանդխտած արևմտահայերից կազմված երկրորդ գումարտակը: Գերված ալժիրցի զինվորներից թուրքական հրամանատարությունն իմանում է, որ իրենց դեմ հայ կամավորներ են և պաշտպանությունն ուժեղացնում է գերմանական 600 հոգանոց ստորաբաժանումով (տե՛ս սխեմա 1):

Սեպտեմբերի 19-ի լուսաբացին Արարայի բարձունքներն ազատագրող ընդամենը 600

Սխեմա 1




ԱՐԱՐԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 1918Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19

մարտիկները շուրջ երեք կիլոմետր ձգվող հատվածում անցնում են հարձակման՝ գրավելու երեք բարձր բլրաշղթա, որոնց հետևում հակառակորդի 1600 զինվորները բազմաշեղոն պաշտպանություն էին կազմակերպել: Մարտիկները գրոհում էին Ռաֆաթը, իսկ հարևան ալժիրական և հնդկական գումարտակները՝ Քաֆր-Քասիմի և Արարայի բարձունքները: Առավոտյան ժամը 11-ին Արարայի բարձունքները գրավված էին: Լեգեոնը գրոհով ազատագրում է Ռաֆաթը (Արարան ու Ռաֆաթը միևնույն շղթայի երկու գագաթներն էին), որի անկումով ազատագրվում են Արարան ու մերձակա բարձունքները: Իսկ անգլիական հեծելազորը Սարոնի դաշտավայրով առաջացավ մինչև Հայֆա ու գրավեց Եստրելոնի դաշտը՝ կտրելով թուրքական բանակի հաղորդակցության ուղիները:

Հրամայվում է մնալ դիրքերում, բայց կամավորները շարունակում են հետապնդել հակառակորդին: Գերմանական մարշալ Լիման ֆոն Սանդերսի հրամանատարության տակ գտնվող «Իլդիրիմ» («Կայծակ») բանակը, չհամակերպվելով պարտության հետ, կեսօրից հետո վերսկսված հրետանային ու զնդացրային կրակի աջակցությամբ անցնում է հարձակման, բայց անհաջողության մատնվելով՝ երկրորդ պաշտպանական բնագիծը ևս պահել չի կարողանում: Գիշերը հակառակորդը, թողնելով նաև թնդանոթները, առանց կռվի փախչում է նաև երրորդ պաշտպանական բնագծից:

Այս հաղթանակը մահացու հարված էր թուրքական բանակին, և Պաղեստինյան ճակատում մարտական գործողություններն ավարտվում են: Թուրք-գերմանական ուժերը խուճապահար նահանջում են, անպարտելի համարվող թուրքական «Իլդիրիմ» բանակը քայքայվել ու այլևս գոյություն չունեն, և դաշնակիցներն ուժերի մի մասն սկսեցին փոխադրել արևմտյան ճակատ: Թուրքիայի անձնատվությանը մնացել էր մեկ ամսից քիչ ավելի ժամանակ:



**Պաղեստինում և Սիրիայում հարձակման անցած դաշնակիցների հետևակի անմիջական աջակցման գլխավոր միջոցը Լյուիսի ձեռքի գնդացիներն էին:**

## **Կիլիկիայի ազատագրումը**

Լեգեոնականները, Ռաֆաթ գյուղի մոտ հողին հանձնելով Արարայի խելահեղ գրոհում զոհվածներին, շարունակում են առաջանալ դեպի Կիլիկիա:

Յոթնամյա 12-ի երեկոյան լեգեոնն անապատներով 18-օրյա դժվարին երթով հասնում է Բեյրութ: Բեյրութին մոտենալիս սկսվում են հանդիպումները ցեղասպանությունը վերապրած հայ բեկորների հետ: Միջազետքի անապատներից վերադարձած հայերից ստեղծվում է ևս մեկ գումարտակ, լեգեոնը վերանվանվում է «Հայկական», իսկ Կիլիկիայում գտնվող թուրքական 2-րդ և 7-րդ բանակները Թուրքիայի անձնատվությունից հետո սկսում են նահանջել դեպի հյուսիս: Հայ լեգեոնականները շուտով մտնում են Ալեքսանդրեթ, Չորքմարզվան, ապա Կիլիկիայի սահմանին գտնվող Իսլահիե կայարան, իսկ մի քանի օր անց՝ Տարսոն և Ադանա: Եթե լեգեոնականները փոքր-ինչ ուշ մտնեին Մերսին, Տարսոն ու Ադանա, վերադարձող հայ տարագիրների ջարդ էր լինելու:

Սակայն մեծ առևտուր էր գնում Սիրիան պահպանելու և Թուրքիայում Ֆրանսիայի ունեցած տնտեսական խոշոր առանձնաշնորհումների վերականգնման դիմաց Կիլիկիան հանձնելու համար, և Հայկական լեգեոնը, որն ապահովում էր Ֆրանսիայի ներկայությունը Կիլիկիայում, 1920-ի օգոստոսի 19-ին հայտարարվում է լուծարված:

1920-ի վերջին և 1921-ի սկզբին լեգեոնականները հեռանում են Կիլիկիայից:

ՊԷձՕԷ X

**ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՉ**

## Թուրքական բանակի հարձակումը

1917թ. Ռուսաստանում կատարված հեղափոխությունների հետևանքով կովկասյան ճակատը, որն աշնանը ձգվում էր Տրապիզոնից Երզնկա, ապա Մուշ և Վանա լճի հարավային շրջանով հասնում մինչև Ռևանդուզ, սկսում է քայքայվել: Հրատապ խնդիր է դառնում ազգային զորամիավորման կազմավորումը և նրանով ճակատային գիծը զանգվածաբար լքող ռուսական զորամասերի փոխարինումը: Տարեվերջին սկսվում է Հայկական բանակային կորպուսի կազմավորումը: Կորպուսի հրամանատար է նշանակվում ռուսական բանակի փորձառու զորահրամանատար, զեներալ-մայոր Թովմաս Նազարբեկյանը, զինվորական կոմիսար՝ Դրաստամատ Կանայանը՝ Դրոն:

1918թ. փետրվարի 10-ին թուրքական զորքերը, խախտելով 1917թ. դեկտեմբերի 5-ին կնքված Երզնկայի զինադադարը, անցնում են հարձակման, որի համար «իրավական» հիմնավորում է դառնում մարտի 3-ին ստորագրված Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, ըստ որի՝ Խորհրդային Ռուսաստանը Թուրքիային էր զիջում ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Կարսի մարզը: Անդրկովկասի մահմեդականները հրաժարվում են կռվել իրենց թուրք հավատակիցների դեմ, իսկ Վրացական կորպուսը, որը դիրքավորվել էր Օլթի-Բաթում հատվածում, գրեթե առանց դիմադրության հանձնում է Բաթումը:

Մայիսի սկզբին թուրքական հրամանատարությունը կատարում է ուժերի վերախմբավորում: 6-րդ և 1-ին բանակային կորպուսներից և մի շարք այլ զորամասերից կազմավորվում է «Կարս» խմբավորումը՝ Յաղուբ Շևքի փաշայի հրամանատարությամբ: Խմբավորման գլխավոր նպատակն էր գրավել ամբողջ Արևելյան Հայաստանը, ապա Թիֆլիսը և ապահովել արշավը դեպի Բաթու և Անդրկասսայան երկրներ: Յաղուբ Շևքին իր խմբավորումը բաժանում է չորս զորախմբի<sup>1</sup>:

**Տեղեկանք.** «Ալեքսանդրապոլ-Վորոնցովկա, Ալեքսանդրապոլ-Ղարաքիլիսա, Ալեքսանդրապոլ-Վպարան, Ալեքսանդրապոլ-Սարդարապատ չորս ուղղություններն էլ իրարից բաժանված են լեռներով, հետևաբար դիվիզիաները պետք է հարձակվեին մեկը մյուսից անկախ: Այն ժամանակվա կապի միջոցների պայմաններում հիշյալ զորախմբերի գործողությունների կոորդինացիան վերին աստիճանի դժվարին գործ էր: Սա հենց թուրքերի հարձակման թույլ կողմն էր: Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ հայկական զորքերի հրամանատարությունը հիմնականում ընդունել էր ճիշտ որոշում և վերախմբավորել իր ուժերը: Հայերը հնարավորություն ունեին թուրքերին ջախջախել առանձին-առանձին: Հենց այդպիսի նպաստավոր պայմաններ ստեղծվեցին առաջին հերթին Ալեքսանդրապոլ-Սարդարապատ ուղղությամբ և Ղարաքիլիսայում»:

**Աշոտ Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս..., էջ 175-176**

<sup>1</sup> Հակառակորդի գործողությունների բնույթի և նրա մտահղացման մասին հայկական կողմի ունեցած հետախուզական տվյալների, ինչպես նաև իրավիճակի գնահատականի մասին տե՛ս հաջորդ ակնարկը:

# 1918Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ

## ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԾԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Ալեքսանդրապոլի (Գյումրի) գրավումով թուրքերի առջև բացվել էր դեպի Արևելահայաստանի սիրտը՝ Արարատյան դաշտավայր տանող ճանապարհը (տե՛ս, քարտեզ 10.1): Երևանում ևս գերիշխում էր քաղաքը թողնելու և դեպի Սևանի ավազան նահանջելու մտայնությունը: Նահանջի դեմ առաջինն ընդվզում է Գևորգ Ե կաթողիկոսը, որը կտրականապես մերժում է Սևանա կղզի տեղափոխվելու առաջարկը: Դեռևս 1918թ. մարտին Երևանի դիկտատոր ընտրված Արամ Մանուկյանի և նրա համախոհների ջանքերով Երևանի Ազգային խորհուրդը որոշում է ճակատամարտ տալ թշնամուն Սարդարապատում և Բաշ-Ապարանում:

Ճակատամարտի նախօրեին գեներալ Մովսես Սիլիկյանը և Դրոն այցելում են Ա.Մանուկյանին և իրենց համերաշխությունը հայտնում հակառակորդին վճռական հակահարված տալու հարցում: Այսպես կազմավորվում է այն եռյակը, որը վճռորոշ դեր պետք է խաղար հետագա իրադարձություններում: Կազմավորվում է Հատուկ կոմիտե, որը գլխավորում է Արամ Մանուկյանը: Մայր տաճարի զանգերն այդ օրերին անընդմեջ ղողանջում էին, և այդ ղողանջն իբրև մարտակոչ տարածվում էր Արարատյան դաշտավայրի բոլոր անկյուններում:

**Տեղեկանք.** «Ամբողջ հայ ժողովուրդը վճռել է դիմադրել: Դիմում ենք բոլոր հայ սպաներին, որպեսզի նրանք գան և կամավորական խմբերի գլուխն անցած ընդառաջեն թշնամուն: Ովքեր ցանկանում են ղեկավարի, առաջնորդի դեր ստանձնել, թող դիմեն Երևանի Ազգային խորհուրդ հենց այսօրվանից:

**Երևանի Հայոց Ազգային խորհուրդ, 21 մայիսի, 1918թ., Երևան»**



Արամ Մանուկյան  
(1879-1919թթ.)



Գեներալ  
Մովսես Սիլիկյան  
(1862-1937թթ.)

Հասարակության բոլոր գործուն ռեժերը մասնակից են դառնում համազգային պայքարին: Արագ համալրվում են կորպուսի զորամասերը: Միաժամանակ սկսվում է աշխարհագրայինների հավաքագրումը: Զինվորագրվում և Սարդարապատի ճակատամարտին մասնակից են դառնում ապագա մարշալ Հովհ. Բաղդասարյանը, Գարեգին Եպիսկոպոս Հովսեփյանը, ապագա գեներալներ Ա.Վարդանյանը, Գ.Չայլախյանը, գրող Ա.Բակունցը, հայագետներ Ա.Ղարիբյանը, Գր.Ղափանցյանը և այլք: Այսպիսով, ձևավորվում է պատկառելի ուժ՝ Երևանյան զորախմբի հրամանատար, գեներալ Մ.Սիլիկյանի գլխավորությամբ:



**Գնդապետ  
Դանիել Բեկ-Փիրումյան  
(1863-1922թթ.)**

**Առաջին մարտերն  
Արարատյան դաշտավայրում**


Դեպի Սարդարապատ շարժվող թուրքական զորախմբի կորիզը կազմում էր 36-րդ հետևակային «Գելիբոլու» (Դարդանեյան) դիվիզիան, որը թուրքական բանակի ամենամարտունակ զորամասերից էր: Զորախումբը բաղկացած էր երեք հետևակային, մեկ հրետանային գնդից, հարվածային և սակրավորների գումարտակներից, հեծյալ գնդից, քրդական 1500-ամոց հեծելազորից, հրետանային մարտկոցից, որն ուներ 40 հրանոթ:



**Գնդապետ  
Քրիստափոր Արարատյան  
(1876-1937թթ.)**

Հակառակորդին պետք է դիմակայեր գեներալ Մ.Սիլիկյանի գլխավորած Երևանյան զորախումբը, որը կազմված էր 2-րդ հրաձգային դիվիզիայից, 3-րդ հետևակային բրիգադից (Վանի 1-ին և 2-րդ գնդերը և Մակուի հետևակային գումարտակը), 2-րդ հեծյալ բրիգադի 1-ին գնդից և մի քանի առանձին զորամասերից: Հայկական զորքերի ձախ թևը պաշտպանում էին Ջեթունի հեծյալ գունդը, կամավորական երկու վաշտ և Իզդիրի աշխարհագրայինները:

ԹՈՒՐԵԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՀԱՐՉԱԿԱՆ ՄՏԱԴԱՅՈՒՄԸ  
1918Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՎԵՐԱԽՄԵԿՎՈՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ



**Տեղեկանք.** «Տարբեր տվյալներով 5500-7000 զինվորներ ունեցող հայկական զորքը Սարդարապատում պետք է հաղթահարեր 6000-9000 կանոնավոր զինվորներ և 1500-3000 քուրդ հեծյալներ հաշվվող և լավ սպառազինված հակառակորդի դիմակայությունը: Թուրքերն ունեին ռազմամթերքի պաշարներ, օգնական ուժեր ստանալու հնարավորություններ՝ գումարած թաթարների աջակցությունը: Հայկական զորքը զուրկ էր օգնության որևէ հույսից»:

**Ա.Ասրյան, Արամ Մանուկյան..., էջ 193**

Մայիսի 20-ին, ներխուժելով Արարատյան դաշտավայր, թուրքական զորքերը, առանց լուրջ դիմադրության հանդիպելու, գրավում են Արաքս և Ղարաբուրուն կայարանները: Հաջորդ օրը, առաջանալով ևս 10 կմ, նրանք գրավում են Սարդարապատ կայարանը և համանուն գյուղը, ապա Մրգաշատը: Հակառակորդը սպառնում էր գրավել Էջմիածինը, ապա Երևանը և միավորվելով Բաշ-Ապարան-Աշտարակ ուղղությամբ շարժվող 9-րդ դիվիզիայի հետ՝ առաջնալ Սևան-Դիլիջան-Ղազախ ուղղությամբ: Հայկական զորքերը հետ են քաշվում Արշալույս-Հայի Ձեյվա գծով: Հրամանատարությունը մշակում է հակառակորդի առաջխաղացումը կասեցնելու և հետ շարտելու օպերատիվ ծրագիր, որն անհապաղ գործի է դրվում (տե՛ս քարտեզ 10.2):

Հակահարձակողական գործողությունների անցնելուց առաջ զեներալ Սիլիկյանի հրամանով Սուրմալուի ճակատում մարտնչող Իգդիրի ջոկատը Դրոյի գլխավորությամբ անցնում է Արաքսի ձախ ափը՝ պայթեցնելով Կարակալայի և Մարգարայի կամուրջները: Դրանով չեզոքացվում է Երևանյան զորախմբին հանդիպակաց ափից սպառնացող հարձակման վտանգը: Իսկ Նախիջևանի կողմից հայկական ուժերի թիկունքը պաշտպանում էր հետևակային երրորդ բրիգադը՝ գնդապետ Բաղդասարյանի գլխավորությամբ:

### **Առաջին հաղթանակը**

Մայիսի 22-ի առավոտյան, հրետանային պատրաստությունից հետո թուրքական զորքերը Սարդարապատի արձակ դաշտով հարձակման են անցնում Քյորփալու և Ղուրդուղուլի (այժմ՝ Արմավիր) գյուղերի բնագծում դիրքավորված հայկական ուժերի վրա և հասնում են Ղամըշլու (այժմ՝ Եղեգնուտ): Թուրքերն առաջանում էին անբարտապան ինքնավստահությամբ, սակայն, երբ նրանց հոժ շարքերը գրեթե ամբողջությամբ ծածկել էին դաշտը, միաժամանակ որոտում են հայկական հրետանային մարտկոցները: Հրետանին, որը ղեկավարում էր գնդապետ Քր.Արարատյանը՝ Հայաստանի Հանրապետության ապագա ռազմական նախարարը, դիպուկ կրակ էր վարում հակառակորդի թե՛ գրոհող հետևազորի և թե՛ հրետանային ու գնդացրային կրակակետերի վրա: Հետագայում թուրքերը Սարդարապատում իրենց պարտությունը պատճառաբանում էին հայերի մեծաքանակ հրետանու առկայությամբ: Մինչդեռ իրականում թուրքերի 40 հրանոթի դիմաց

հայկական կողմն ունեւր ընդամենը 18-ը: Պարզապես Արարատյանի հմուտ մարտավարության շնորհիվ հրանոթները մարտի ընթացքում անընդհատ տեղափոխվում էին մի դիրքից մյուսը և տարբեր կրակակետերից հրետակոծում հակառակորդին՝ այդպիսով ստեղծելով մեծաքանակ հրետանու տպավորություն:

Հրետանու դիպուկ կրակով հակառակորդի շարքերում իրարանցում է սկսվում, նրա մարտակարգը խախտվում է: Խուճապահար ասկյարները փախչում են դեպի ելման դիրքերը: Պահը հասունացել էր, և գնդապետ Դ.Բեկ-Փիրումյանի հրամանով 5-րդ՝ «Մահապարտների» հրաձգային գունդը, Իգդիրի և պարտիզանական հետևակային գնդերը, հատուկ հեծյալ գունդը՝ աշխարհագրային ջոկատների աջակցությամբ, նետվում են հակագրոհի և հուժկու հարվածով փախուստի մատնում հակառակորդին: Ճնշելով թուրքական զորքերի հոծ պաշտպանությունը և արագ առաջանալով՝ հարձակվող հայկական զորամասերը հակառակորդին 15-20 կմ հետ են շարտում Սարդարապատ գյուղի և կայարանի դիրքերից և ազատագրում են Սրգաշատն ու շրջակա տարածքը, իսկ ճակատի հյուսիսային հատվածում՝ Կոշը և Ուջանը:

Այսուհանդերձ, գնդապետ Դ.Բեկ-Փիրումյանը, զգուշանալով, որ թուրքերը կարող են ուշքի գալ, համալրում ստանալ և հակահարձակման անցնել, վճռում է չչարունակել հակառակորդի հետապնդումը և չկտրվել ելման դիրքերից:

Խուճապահար նահանջող թուրքական զորքերը, օգտվելով այն հանգամանքից, որ հայ ռազմիկների սրընթաց գրոհին չէր հետևել կրնկակոխ հետապնդումը, կարողանում են համախմբել իրենց ուժերը և ամրանալ Արաքս կայարանում ու մերձակա բարձունքների շրջանում:


Առաջին իսկ մարտերում հայ զինվորները ծանր կորուստներ (շուրջ 500 սպանված և վիրավոր) են պատճառում հակառակորդին: 36-րդ հետևակային դիվիզիային փոխօգնության հասնելու նպատակով Վեհիբ փաշայի հրամանով թուրքական 5-րդ դիվիզիայի զորամասերը փորձում են Սուրմալուից գետանցել Արաքսը և հարվածել մեր զորքերի թիկունքին, սակայն Արաքսի ափին դիրքավորված հայկական սակավաթիվ ջոկատները հաջողությամբ կասեցնում են թուրքերի բոլոր գրոհները:

**Տեղեկանք.** «...Կեսօրից հետո 5-րդ գունդն անցավ հարձակման: Թուրքերը չդիմացան և սկսեցին հետ քաշվել: Դա բարձրացրեց զորքի և բնակչության ոգին... Բնակիչները սկսեցին խմբերով ներկայանալ՝ զենքով ու սննդամթերքով ճակատ մեկնելու համար: Համալրում եկավ ամեն տեղից, հատկապես Երևանից և Ղամարլուից»:

**Գնդապետ Քր.Արարատյանի 07. 02. 1919 զեկուցագրից**

Մայիսի 24-ին թուրքական զորքերն իրենց գրաված նպաստավոր դիրքերից հարձակում են ձեռնարկում, որը, սակայն, կասեցվում է: Կրկին դիպուկ կրակով աչքի են ընկնում հայ հրետանավորները: Այս մարտը ճակատամարտի նախորդ փուլի ավարտը նշանավորող կարևոր իրադարձություն էր, քանի որ հակառակորդի հարձակողական «պոռթկումը» հաղթահարած հայկական կողմը խլում է նախաձեռնությունը:

### 1918Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ



## **Ճակատային գրոհների փուլը**

Առաջին հաղթական մարտերից հետո հայկական զորքերը դիրքավորվում են Սարդարապատի մերձակայքում: Աջ կողմից՝ կայարանի մոտ, 5-րդ գնդի վեց վաշտերն էին, Էջմիածնի պարեկային վաշտը, Ջեյթունի գունդը, հատուկ հեծյալ գնդից մեկ էսկադրոն, Ղարաքիլիսայի գնդից մեկ վաշտ: Երկաթուղագծից հարավ կանգնած էին Իգդիրի ջոկատը, պարտիզանական գունդը, հատուկ հեծյալ գունդը, նաև երկրորդ մարտկոցի չորս հրանոթ: Պահեստային ուժերն էին՝ 5-րդ գնդի երկու վաշտ, Մակուհի գումարտակը, Երզնկայի և Խնուսի գնդերը:

Մայիսի 25-ին գեներալ Սիլիկյանի հրամանով վերախմբավորելով իրենց ուժերը՝ հայկական զորամասերը վեց կիլոմետր ձգվող ճակատով դիրքեր են գրավում թուրքական զորամասերից մոտ 700 մետր հեռավորության վրա՝ ճակատով դեպի հյուսիս: Շտաբս-կապիտան Սարգսյանի գլխավորությամբ ձևավորված զորասյունը հարձակում է գործում Արաքս-Ներքին Թալին-Մաստարա ուղղությամբ: Առաջնահերթ խնդիրը մերձակա լեռան գրավումն էր և այնտեղ ամրացած հակառակորդին հետ շարտելը: Այս ընթացքում ճակատային գրոհ է սկսվում նաև Արաքս կայարանի շրջանում ամրացած հակառակորդին իր նպաստավոր դիրքերից դուրս մղելու համար: Հայկական ստորաբաժանումների առաջխաղացմանը դիմակայել փորձող հակառակորդը բոլոր ուժերը կենտրոնացնում է գրոհները կասեցնելու համար և վերջնականապես հրաժարվում հարձակողական մարտավարությունից:

## **Հնարամիտ թևանցումը**

Թուրքական զորքերի համառ դիմադրությունը կոտրելու համար հայկական ուժերի հրամանատարությունը՝ գեներալ Մ.Սիլիկյանի գլխավորությամբ, մշակում է հնարամիտ ծրագիր, ըստ որի՝ հայկական զորքերի մի մասը պետք է թևանցեր հակառակորդին: Այդ նպատակով փոխգնդապետ Հասանփաշայանի գլխավորությամբ ձևավորվում է առանձին հարվածային զորախումբ՝ Խզնաուզի ջոկատը, որը կազմված էր Երզնկայի հետևակային գնդից, Մակուհի առանձին գումարտակից, երկու էսկադրոնից, Խնուսի գնդի մեկ վաշտից և չորս հրանոթից:

Մայիսի 27-ի լուսաբացին հարվածային զորախումբը, թևանցում կատարելով Խզնաուզ (այժմ՝ Արագած) և Կոչ գյուղերի կողմից, Շամիրամի ձորով ու լեռներով դուրս է գալիս Արաքս կայարանի մատույցները և թիկունքից անակնկալ գրոհ ձեռնարկում հակառակորդի վրա: Նրա թիկունքին Թալինի կողմից հարված է հասցնում նաև մշեցիների ջոկատը՝ Պանդուխտի (Միքայել Սերյան) գլխավորությամբ:

**Տեղեկանք.** «Կոչ գյուղի մոտ միավորելով երկու գումարտակ Հասան-փաշայանի գլխավորությամբ՝ հրամայեցի շարժվել լեռների փեշերով հյուսիս, իսկ հետո լուսաբացին շրջվել արևմուտք և դուրս գալ թուրքերի թիկունքը: Մայիսի 27-ի լույս 28-ի գիշերը այդ գումարտակները կատարել են իրենց զորաշարժը, և ժամը 1-ին թուրքերը շտապ հետ են քաշվել իրենց դիրքերից», - Մ.Սիլիկյանի նամակից Թ.Նազարբեկյանին:

**Աշոտ Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս..., էջ 183**

Առավոտյան ժամը 9-ին սկսվում է հարձակման հրետանային պատրաստությունը: Ժամը 14-ին տեղեկություն է ստացվում, որ Երզնկայի գունդը շրջանցել է թուրքական զորքերի թևը: Թուրքերի դիմահար կրակի հետևանքով փոքր-ինչ դանդաղում է Մակուի գումարտակի թևանցումը Ներքին Կալակուտ գյուղի մերձակայքում, սակայն իսկույն փոխօգնության ուղարկված Երզնկայի գնդի երկու վաշտերը շտկում են իրավիճակը:

### **Վերջնական հաղթանակը**

Երզնկայի գունդը, կտրուկ թեքվելով հարավ, դուրս է գալիս ամրացված բարձունքների թիկունքը և անմիջապես հարձակման անցնում: Միաժամանակ Սարդարապատի կողմից ճակատային գրոհի են նետվում հայկական մյուս զորախմբերը: Հակառակորդը փորձում է դիմադրել, սակայն երկկողմանի ճնշմանը երկար չդիմանալով և ծանր կորուստներ կրելով՝ լքում է դիրքերն ու խուճապահար նահանջում:

**Տեղեկանք.** «Թուրքերը խուճապահար փախչում են Կարա-Բուրուն լեռան ուղղությամբ՝ դեմ նետելով հանդերձանքը: Մեր փոքրաթիվ հեծելազորը հետապնդում է նրանց: Ջախ զորասյունը հետապնդելով թուրքերին երկաթգծի երկայնքով՝ գրավում է Արաքս կայարանը, իսկ երեկոյան՝ նաև Մաստարա կիսակայարանը: Աջ զորասյունը, որի կազմում էր նաև Երզնկայի գունդը, երեկոյան մոտենում է Մաստարա գյուղին: Պանդուխտի հեծյալները շարունակում են հետապնդել թշնամուն Կրիզլուի և Գյոզլուի վրայով, մայիսի 28-ին հասնում են Սողութլու: Թուրքերը խուճապի մեջ են: Նրանց գումարտակներն անցնում են Արփաչայի արևմտյան ափը», - Սարդարապատի ջոկատի շտաբի պետ, կապիտան Ա.Շնեուր:

**Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա, էջ 49-50**

Հաջորդ օրը, զարգացնելով հարձակումը, հայկական զորքերն ազատագրում են Արագած կայարանը, Ներքին և Վերին Թալինն ու Մաստարան: Թուրքական 36-րդ դիվիզիան ջախջախվում ու հետ է շարտվում դեպի Ալեքսանդրապոլ: Ճակատամարտում թուրքական զորքերի կորուստները կազմում էին ավելի քան 3500 զինվոր:

Սարդարապատի ճակատամարտի հաղթական ավարտի ավետիսը համաժողովրդական ցնծության ալիք է բարձրացնում Երևանում:

## ԲԱՇ-ԱՊԱՐԱՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Սարդարապատի ճակատամարտի ընթացքում պարզ է դառնում, որ թուրքական զորքերը Երևանին սպառնում են նաև մեկ այլ՝ Համամլու (Սպիտակ)-Ապարան-Աշտարակ ուղղությամբ: Մայիսի 20-ին թուրքական զորքերը գրավել էին Համամլուն և բաժանվելով երկու խոշոր զորախմբերի՝ առաջանում էին դեպի Բաշ-Ապարան և Ղարաքիլիսա (Վանաձոր): Էսադ փաշայի գլխավորած 9-րդ հետևակային դիվիզիայի խնդիրն էր առաջանալ Արագածի փեշերով, թափանցել Սարդարապատի հայկական զորքերի թիկունքը և գրավել Երևանը:

Թուրքական 3-րդ դիվիզիան, որ լիարժեք համալրված և սպառազինված էր, բաղկացած էր Դարդանելի մարտերում հռչակված 106-րդ, 107-րդ և 108-րդ հետևակային գնդերից, հրետանային երկու դիվիզիոնից, հարվածային հետևակի ու սակրավորների գումարտակից, կորպուսային հեծյալ գնդից և այլ ստորաբաժանումներից, որոնց միացել էին քրդական 1500-անոց հեծելազորը և տեղական մահմեդականներից կազմված անկանոն խմբեր:

### Առաջին ընդհարումը

Հայկական կորպուսի գլխավոր ուժերը՝ առաջին և երկրորդ դիվիզիաները, ամբողջությամբ կենտրոնացվել էին Սարդարապատի և Ղարաքիլիսայի ուղղություներում, մինչդեռ Համամլու-Բաշ-Ապարան-Աշտարակ ուղղությամբ մինչև մայիսի 23-ը կանոնավոր զորամասեր չկային:

**Տեղեկանք.** «Հայկական բանակի հրամանատարությունը ռազմաճակատի այդ հատվածում հակառակորդի գործողություններին իրազեկ լինելու, հետախուզություն անցկացնելու, իսկ անհրաժեշտության դեպքում նաև բնակչության ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով Բաշ-Ապարանի ճակատ է ուղարկում Սեդրակ Ջալալյանի և Արսեն Տեր-Պողոսյանի<sup>1</sup> գլխավորած մարտական խմբերը»:

**Յ.Գևորգյան, Դրո, էջ 228**

Տեղի աշխարհագրային ուժերը՝ Սելիքոյուղի, Դանագիրմազի (Նիգավան), Ալիքուչակի, Չամբուլի (Քասաղ), Ապարանի և շրջակա մյուս գյուղերի բնակիչներից կազմված ինքնապաշտպանական խմբերը, Սեդրակ Ջալալյանի և Արսեն Տեր-Պողոսյանի ղեկավարությամբ, պաշտպանական դիրքեր են գրավում Դավաթոյինի բարձունքներում, որտեղ և տեղի է ունենում նրանց առաջին բախումը թուրքական զորքերի առաջապահ զորամասերի հետ: Սակայն այդ փոքրա-

<sup>1</sup> Ռաֆֆու «Խենթը» վեպի հերոս Վարդանի (Խենթի)՝ Սամսոն Տեր-Պողոսյանի որդին է:

թիվ և վատ սպառազինված ուժերն անկարող էին կասեցնել հակառակորդի մեծաքանակ ուժերի առաջխաղացումը:

Սարդարապատի և Ղարաքիլիսայի ճակատներում ծավալված իրադարձությունների վրա ուշադրությունը կենտրոնացրած հայկական կորպուսի հրամանատարությունը հակառակորդի բաշապարանյան խմբավորման մասին բավարար հետախուզական տվյալներ չունեիր: Այդուհանդերձ, գեներալ Սիլիկյանը վճռում է Սարդարապատի ուժերի մի մասը Դրոյի գլխավորությամբ ուղղել դեպի Բաշ-Ապարան: Ի դեպ, իր հուշերում Դրոն նշում է, որ ինքը փորձել է տարհանոգել գեներալ Սիլիկյանին, որպեսզի վերջինս չմասնատի Սարդարապատում մարտնչող հայկական զորքերը: Սակայն գեներալ Սիլիկյանը հեռատեսութեն մերժել է Դրոյի ծրագիրը:

Դրոյի փոքրաթիվ զորախումբը՝ փոխգնդապետ Կորուկովի գլխավորած պարտիզանական հեծյալ գունդը, գնդապետ Ջալիմյանի հայկական 2-րդ գնդից մեկ հարյուրյակ, նաև գնդապետ Դոլուխանյանի 6-րդ հրաձգային գնդից մեկ գունդարտակ՝ հրետանային բրիգադի երկու լեռնային հրանոթներով, Աշտարակից դեպի Բաշ-Ապարանի ճակատ է շարժվում մայիսի 23-ին: Նույն օրը երեկոյան առաջապահ ջոկատները բախվում են հակառակորդի անարգել առաջացող զորքերին և անակնկալի բերում նրանց: Անսպասելի հարվածի հետևանքով զգալի կորուստներ կրելով՝ հակառակորդն ընկրկում է, սակայն մինչև մթնելը կարողանում է վերախմբավորել ուժերը և դիրքավորվել իր զբաղեցրած բնագծերում (տե՛ս քարտեզ 10.2):

Մայիսի լույս 24-ի գիշերը Դրոն խորհրդակցություն է անցկացնում, որտեղ որոշվում է մինչև օժանդակ զորամասերի ժամանումը պարբերական հարձակողական գործողություններով ժամանակ շահել: Սակայն նախ հարկ էր զորքերը համալրել տեղի աշխարհագրային ուժերով, քանզի ստորաբաժանումների մի մասի անձնակազմն անգամ կիսով չափ համալրված չէր:

**Տեղեկանք.** «Երբ Դրոն զորքով եկավ Ապարան, իմ 1200 զինվորներից վերցրեց 700 հոգի, լրացրեց ուրիշների զորամասերը, իսկ 500 զինվորներս և իմ չորս գնդացիները թողեց իմ հրամանի տակ», - աշխարհագրի հրամանատար Ս.Ջալալյան:

**Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա, էջ 126**

***Մարտը***

Մայիսի 24-ին Բաշ-Ապարանի ճակատում հայկական ուժերի ձախ թևում՝ Ալեքսանդրապոլի մայրուղուց մինչև Արագածի փեշերը, դիրքավորված էր 6-րդ հրաձգային գունդը, իսկ աջ թևում՝ Ալիքուչակ գյուղից դեպի Վանաձոր (Ղարաքիլիսա) ընկած անտառապատ բարձունքները վերահսկում էին պարտիզանական և 2-րդ հեծյալ գնդերի հեծելազորայինները: Կենտրոնում տեղաբաշխված էին մնացած ուժերը:

Մայիսի 25-ին հայկական ուժերը հարձակման են անցնում, ազատագրում են Ապարանը և թուրքական զորքերին հետ շարտում մինչև Ղոնդաղսազ գյուղ: Քանակական գերազանցությունը հակառակորդին հնարավորություն է տալիս համալրել զորքերը, կարգավորել մարտակարգը և հակահարձակման անցնելով՝ կարողանում է վերագրավել Ապարանը:

Նահանջելով և ամրանալով մերձակա գյուղերի շրջանում՝ Դրոյի զորախմբին հաջողվում է կասեցնել հակառակորդի առաջխաղացումը: Շուտով հայկական ուժերը համալրում են ստանում՝ 6-րդ հրաձգային գնդից երեք գումարտակ, գնդապետ Սակինի գումարտակը, շտաբս-կապիտան Իգիթխանյանի հրետանային մարտկոցը, նաև Ջհանգիր աղայի գլխավորած եզդիների հեծյալ ջոկատը:

Արդ, ժամանակն էր վճռական գործողությունների դիմելու, և Դրոն վճռում է ողջ ուժերն ուղղորդել դեպի կենտրոն և այստեղ ճեղքել հակառակորդի պաշտպանությունը: Այս հանդուգն մտահղացումը հնարավոր էր իրագործել սոսկ մեկ պայմանով՝ եթե բոլոր զորամասերը գործեին համախմբված և անձնագրի: Գիշերը՝ հորդառատ անձրևի ներքո, ևս մեկ անգամ հետախուզվում են հակառակորդի դիրքերն ու ճշտվում գալիք հարձակման ուղղությունները:

**Տեղեկանք.** «Ալազյազում ունեի մի բատալիոն, թողեցի 2 վաշտ: Էն 2 վաշտն էլ իջացրի կենտրոն: Ռեզերվնի բատալիոնից էլ 2 վաշտ ուղարկեցի կենտրոն: Ուրեմն կենտրոնում ես ունեմ 6 վաշտ: Մի բատալիոն էլ մնում ա աջ թևի վրա»:

**Դրոյի ձայնագրված հուշերից**

## **Հաղթանակը**

Մայիսի 28-ի առավոտյան սկսվում է վճռական մարտը: Անցնելով հակահարձակման՝ հայկական ուժերը հակառակորդին դուրս են մղում իր դիրքերից և հետ շարտում դեպի Ապարան:

**Տեղեկանք.** «Առավոտը անցա հակահարձակման: Թուրքերը տեղի տվին, քաշվան դեպի Բաշ-Ապարան և, բարեբախտաբար, նախագգանունքս ճիշտ էր եղել: Երբ որ Բաշ-Ապարանի վրա կատաղի կռիվ ենք տալիս, դրանք ուզեցան մանյովր անել, որ իմ թիկունքին զարկեն: Հանդիպեցին Սահակյանի վաշտին՝ տեղացիներից: Ուրեմն աջ թևս ապահով էր: Հիմա Բաշ-Ապարանի ուղղությամբ ես դրանք զարկում են, նեղում են: Դրանք երբ որ նեղն ընկան, տեսա՝ մանյովր արին՝ զարկեն, կենտրոնը պատռեն: Ես հանգամանքից օգտվեցիմք, որ ուժերը քաշենք կենտրոնի վրա»:

**Դրոյի ձայնագրված հուշերից**

Ճակատի թևերում չկարողանալով կոտրել հայ աշխարհագորայինների համառ դիմադրությունը՝ հակառակորդը մղվում է դեպի կենտրոն: Թուրքական զորքերի ճակատի կենտրոնում խմբավորված ուժերը, *կրակային պարկում* հայտնվելով և *խաչածն կրակի* տակ ընկնելով, խուճապահար փախուստի են դիմում: Այս տեսնելով՝ թևերում դիրքավորված զորքերը, երկյուղելով, որ կենտրոնի ճեղքումից հետո կհայտնվեն շրջապատման օղակում, իրենք ևս ճողպրում են Ապարանից դեպի Շիրակի դաշտավայր:

Կրնկակոխ հետապնդելով հակառակորդին՝ երեկոյան հայկական զորքերը գրավում են Դանագիրնազ գյուղը՝ թույլ չտալով, որ թուրքական զորքերն ամրանան շրջակա բարձունքների վրա: Մայիսի 29-ի առավոտյան Դրոն իր զորախմբով վերսկսված առաջխաղացման ընթացքում թուրք բանագնացից տեղեկանում է կնքված զինադադարի մասին, ինչը նշանակում էր, որ նա չէր կարող զարգացնել ձեռք բերած հաջողությունը և պարտավոր էր դադարեցնել իր զորախմբի հաղթական առաջխաղացումը:

**Տեղեկանք.** «Բաշ-Ապարանի ուղղությամբ հակառակորդը, հետ շարտվելով Ղազնաֆարի և Ղարաքիլիսայի համար մղված մարտերում, մայիսի 29-ի երեկոյան ջախջախվեց՝ դաշտում թողնելով 200 սպանված, 2 զնդացիր, հարյուրից ավելի հրացան և զինամթերք: Մեր կորուստներն աննշան են: Ձորքերի ոգին գերազանց է», - հատված Գլխավոր շտաբի հաղորդագրությունից:

**Ս.Աֆանսյան, Սարդարապատի հաղթանակը, էջ 59**

Գեներալ Նազարբեկյանը կարգադրում է դադարեցնել մարտը, ինչը հիասթափություն է առաջացնում հայկական զորքերի մեջ, որոնք, ոգեշնչված Սարդարապատում և Բաշ-Ապարանում ձեռք բերված հաջողություններից, ձգտում էին ավելի առաջանալ և ազատագրել գրավյալ տարածքները, առաջին հերթին՝ Ալեքսանդրապոլն ու Կարսը:

## **Ամփոփում**

Սարդարապատի և Բաշ-Ապարանի փայլուն հաղթանակները և Ղարաքիլիսայի հերոսական առճակատումը կտրուկ փոխեցին պատերազմի ընթացքը. ընդամենը տասն օր առաջ անարգել առաջացող հակառակորդն այժմ նահանջում էր, իսկ հայկական զորքերը պատրաստ էին շարժվել առաջ և ազատագրել Կարսն ու Ալեքսանդրապոլը, և միայն Բաթումում կնքված զինադադարը կանխեց նրանց հետագա առաջխաղացումը: Այսուհանդերձ, հենց այս զինադադարը դարձավ գրեթե 600-ամյա ընդմիջումից հետո հայոց անկախ պետականության վերահաստատման փաստացի հիմքը:

## ՉԱՆԳԵՉՈՒՐԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

### 1919թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ ՄԱՐՏԵՐԸ ԳՈՐԻՍՈՒՄ

Մարտավարական հարթությունում տարված ոչ շատ մեծ, սակայն անչափ կարևոր հաղթանակի օրինակ է Գորիսի շրջակա հայկական գյուղերի հայության ինքնապաշտպանությունը 1919թ. նոյեմբերին:

Ջանգեզուրը զավթելու նպատակով մուսավաթական իշխանությունները 1919թ. հոկտեմբերի սկզբից զորամասեր էին տեղափոխում դեպի «Գորիսի ճակատ»: Հարձակման նախապատրաստման փուլում մուսավաթականներն այդ ուղղությամբ կենտրոնացնում են հարվածային խմբավորումներ (այդ թվում՝ երկու հեծյալ գնդեր), հրետանի և ավելի քան 400 քուրդ հեծյալ: Թուրք-մուսավաթական հարձակման ղեկավարությունը ստանձնել էր Նուրի փաշան, իսկ ճակատի զորքերի հրամանատար է նշանակվում ցարական բանակի փորձառու զեներալ Շիխլինսկին: Ջանգեզուրի սահմանների մոտ ստորաբաժանումներ են կենտրոնացվում, իսկ դրանց մարտական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու գործին ներգրավվում են թուրքական բանակի մոտ երկու տասնյակ սպաներ:

**Տեղեկանք.** «Այն բանից հետո, երբ բանակը հասավ Ջաբուղի ձորեր, այսինքն՝ Ջանգեզուրի մատույցներ, նրա կազմում արդեն կար ավելի քան 15 հազար մարդ, որից 7000-ը կանոնավոր բանակի զինվորներ էին, որոնց միացել էին 5000 քուրդ և նախիջևանյան 3000 խռովարար...»:

**Ա.Սիմոնյան, 1919թ. նոյեմբերյան կռիվները Գորիսի շրջանում, ԲԵՂ, 2, 2004, էջ 20**

Հակառակորդը նախատեսում էր հիմնական հարվածը հասցնել Գորիսին, գրավել քաղաքն ու *ռազմահենադաշտի* վերածել՝ երկրամասը զավթելու համար: Ջանգեզուրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական շրջաններից մեկուսացնելու նպատակով նախատեսվում էր Նախիջևանից Վայոց ձորի ուղղությամբ շեղող հարված հասցնել:

Հոկտեմբերի 29-ին մուսավաթականները Հայաստանի դեմ ուղղված գաղտնի պայմանագիր են կնքում քենալական Թուրքիայի հետ և բազմակողմանի ռազմական աջակցություն ցույց տալու խոստումներ ստանում վերջինից:

Ջանգեզուրի հայ բնակչությունն ու այստեղ տեղակայված զորամասերը՝ հրամանատար, շտաբս-կապիտան Արսեն Շահնազյանի գլխավորությամբ, պատրաստվում են վճռական դիմադրության: Թուրք-մուսավաթական հարձակումը սկսվում է 1919թ. նոյեմբերի 5-ին՝ նախքան լուսաբացը: Անցնելով Ջանգեզուրի սահմանային Ջաբուղ գետը՝ թշնամու առաջապահ ուժերը երկու թևով

սկսում են առաջանալ Գորիսի շրջանի խորքերը: Չախ կամ արևելյան թևում մուսավաթական «վայրի դիվիզիան» էր, որն ուժերի ճնշող գերազանցություն ունենալով՝ հարձակումն իրականացնում էր Տեղ և Կոռնիձոր գյուղերի միջև լայն ճակատով: Հակառակորդն առաջին հարվածները հասցնում է Տեղ գյուղի ուղղությամբ: Հակառակորդի հրոսակախմբերին հաջողվում է գրավել Կոռնիձորը (տե՛ս քարտեզ 10.3):

Այս տեղամասում հայկական ուժերի հրամանատարը փորձառու զինվորական Խաչատուր Մալինցյանն էր: Հայկական ստորաբաժանումներն ու շրջակա գյուղերի բնակիչներից կազմված ջոկատները չորս օր շարունակ կազմակերպված դիմադրություն էին ցույց տալիս մուսավաթականների զորամասերին: Նրանց հաջողվում է կասեցնել հակառակորդի առաջխաղացումը: Իրենց փայլուն են դրսևորում հայկական միակ՝ 9-րդ լեռնային, մարտկոցի հրետանավորները, որոնք դիպուկ կրակով կարողանում են ոչնչացնել հակառակորդի գրեթե ամբողջ հրետանին:

Սիսիանի հայկական զորամասերի և աշխարհագրայինների մի մասը Պոդոս Տեր-Դավթյանի (Քաջ Պողոս) գլխավորությամբ փակում է հակառակորդի գլխավոր (շրջանցող) զորախմբի ճանապարհը և նրան ստիպում պաշտպանության անցնել: Սիսիանում տեղակայված մյուս հայկական ուժերն ուղարկվում են արևմուտքից առաջխաղացում սկսած հակառակորդին կանգնեցնելու համար: Միաժամանակ մուսավաթական շրջանցող ուժերին հարավից հարվածում է Նիկոլայ Հովսեփյանի ջոկատը: Փոքրաթիվ ջոկատին զգալի օգնություն է ցույց տալիս կապիտան Սիմոն Մելիք-Հարությունյանի (Թոփչի Սիմոն) թնդանոթային մարտկոցը:

Երկրորդ օրվա վերջին հայկական կողմը ևս մեկ անակնկալ է պատրաստում հակառակորդի համար: Սիսիանի կամավորներից կազմավորված հեծյալ ջոկատը Ջաբրոյի գլխավորությամբ ուղարկվում է մարտով հետախուզության: Ամբողջ գիշեր ռազմերթ կատարելով՝ ջոկատը լուսադեմին դուրս է գալիս Ջաբուղ-Ավդալար գծում տեղակայված մուսավաթական զորամասերի թիկունքը և անսպասելի գրոհում հակառակորդի վրա: Վերջինս չի կարողանում նույնիսկ կազմակերպված նահանջել և խուճապահար ցրվում է մի քանի ուղղություններով:

Գիշերային հաջողությունից ոգևորված հայկական ուժերը հակառակորդին դուրս են մղում նախորդ օրերին նրանց գրաված մի շարք գերիշխող բարձունքներից: Նահանջող հակառակորդին նոր դիրքերում ամրանալ թույլ չտալու համար հետապնդում է սկսվում: Սեպածև մխրճվելով հակառակորդի դիրքերի մեջ՝ հայկական փոքրաթիվ ուժերը նրանց ստիպում են այս դիրքերը ևս թողնել: Չիմանալով իրենց անելիքը՝ թուրք-թաթարական զորամասերը նահանջում են դեպի նախօրյակին գրավված Խոզնավար և Բայանդուր գյուղերը, բայց ընկնում են տեղ հասած հայկական վաշտերի կրակի տակ և հեռանում են դեպի Ջաբուղ:



Տեղ-Կոռնիձոր գծում ևս հայկական ուժերը կարողանում են գրեթե ամբողջությամբ ոչնչացնել հակառակորդի գլխավոր հարվածային ուժը հանդիսացող 2-րդ հեծյալ գունդը: Հակառակորդը կռվի դաշտում թողնում է շուրջ 500 դիակ, վիրավորների թիվը պակաս չէր 2000-ից: Ավելի քան 150 ասկյար գերի է ընկնում: Հայերի ձեռքն են անցնում մեկ թնդանոթ, 20 գնդացիր, հարուստ ռազմավար:

Այսպիսով, մի քանի օր տևած մարտերում հակառակորդը պարտություն է կրում և դուրս չպրտվում Ջանգեզուրից:

## ՆՏՊԵՇԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ՉԱՆԳԵՉՈՒՐՈՒՄ (1919Թ. ՆՈՅԵՄԲԵՐ-1920Թ. ՀՈՒՆՎԱՐ)

1919թ. նոյեմբերի սկզբին Գորիսում կրած պարտությունից հետո ձեռնարկվող սադրանքներին ներգրավվում են Ջանգեզուրի Ողջի և Գեղվա ձորեր ու Շուռնուխ ներթափանցած թուրք-թաթար քոչվորները: Այդ շրջաններն ունեին մեծ նշանակություն, քանզի այդտեղից հնարավոր էր վերահսկել Ջանգեզուրի ճանապարհները: Մարտերի ավարտից գրեթե անմիջապես հետո երկրամասի պաշտպանության գործը հանձնարարվում է տաղանդավոր ռազմական և պետական գործիչ, Ջանգեզուրի հարավային շրջանների (Կապան-Արևիք (Գեղվազ, Մեղրի)-Գողթանի կամ կրճատ՝ *Կապարգողթի*<sup>1</sup>) ռազմական ուժերի նորանշանակ հրամանատար Գարեգին Նժդեհին (Գարեգին Տեր-Չարությունյան):

1919թ. նոյեմբերի 2-ին մուսավաթական երկու վաշտ ներխուժել էր Ողջի գետի ձորը և թաթար քոչվորների օգնությամբ փակել Ջանգեզուրը Գողթանի հետ կապող ճանապարհը: Հայկական կողմի՝ ճանապարհը բացելու պահանջները մնում են անարձագանք: Նոյեմբերի 15-ի գիշերը Նժդեհի հրամանատարության տակ զործող ուժերը (մոտ 200 հոգի) հանկարծակիի են բերում հակառակորդին և առաջարկում զինաթափվել ու ենթարկվել օրինական իշխանություններին: Մերժում ստանալուց հետո սկսվում են մարտական գործողություններ, որոնց շնորհիվ առաջին իսկ օրը հակառակորդը գրեթե ամբողջությամբ ոչնչացվում է: Վերականգնվում են այդ տարածքի նկատմամբ վերահսկողությունը և խափանված հաղորդակցությունը (տե՛ս քարտեզ 10.4):


**Պատմական տեղեկանք.** «Այստեղ էլ Նժդեհը հիմնում է «Դավիթբեկյան ուխտերը», որոնց նշանաբանն էր «Հանուն հայրենիքի դավիթբեկաբար»: Ուխտի մարտական ուժերը բաժանվում էին «գայլախումբ» կոչվող փոքրաթիվ միավորների, որոնք կազմում էին «գայլավաշտեր»: Սյունեցիների ինքնապաշտպանության ոգին բարձրացնելու նպատակով նա սկսում է կրել Դավիթ Բեկի հագուստը»:

**Ռ.Համբարձումեան, Գարեգին Նժդեհ (համառոտ կենսագրական, ասոյթներ եւ կենսագրութիւն), Եր., 2003, էջ 17**

Մարտը վկայում է երիտասարդ զորավարի անվիճելի տաղանդի մասին: Հարձակման անսպասելիության, սրընթացության և հանդգնության հետևանքով Նժդեհն ուղղակիորեն կաթվածահար է անում հակառակորդին և հասնում հաղթանակի: Բավական է ասել, որ հարձակման ընթացքում հայկական կողմը զոհ

<sup>1</sup> Կապարգողթ անվանումը Նժդեհը կազմել էր նշված երեք տեղանունների առաջին վանկերի (ԿԱՊ[ան] + ԱՐ[ևիք] + ԳՈՂԹ[ն]) կցումով:

Քարտեզ 10.4



չի տալիս և ընդամենը մեկ վիրավոր է ունենում: Մարտական գործողությունների ընթացքում զոհեր չտալը և ենթակաների նկատմամբ հիրավի հայրական հոգատարությունը դառնում են զորավար Գարեգին Նժդեհի «ծեռագիրը»:

Նժդեհը շտապում է զարգացնել Ողջիում ձեռք բերված հաջողությունը: Հակառակորդի հետախուզումը տևում է յոթ օր: Ապա, դեկտեմբերի 1-8-ին իրականացվում է Գեղվա ձորի խռովարարների հենակետի ոչնչացման գործողությունը:

Նախապատրաստական միջոցառումների մասն էին կազմում նոյեմբերի 25-ի հրամանի համաձայն կազմավորվող «գայլախմբերը» (բոլոր վաշտապետերին հրամայվում է Նժդեհի մոտ ուղարկել երկուական առավել աչքի ընկնող մարտիկների): «Գայլախմբերը» զինված էին դինամիտով ու ռումբերով, որոնց պայթեցունով հակառակորդի դիրքերի ամենաթույլ տեղամասերը խոցվում էին և նա ապակողմնորոշվում ու խուճապի էր մատնվում:

Ուժերը համալրելու նպատակով Կապանի շրջանում հայտարարվում է զորահավաք, որի ժամանակ դրսևորվում է Նժդեհի կազմակերպչական ձիրքը: 24 ժամում Կապանի վաշտերն արդեն կազմ ու պատրաստ էին, իսկ զինավարժությունները տևում են ընդամենը երկու օր:

Հարձակումը սկսվում է դեկտեմբերի լույս 1-ի գիշերը: Կեսգիշերին վաշտերը ոտքի են հանվում, ժամը 1-ին սկսում առաջխաղացումը և, տրված մարտագրի համաձայն, սկսում դիրքավորվել Գեղվաձորի բարձունքների գրոհի բնագծերում: «Գայլախմբերից» մեկի պայթեցրած տակառների ազդանշանով հայկական ստորաբաժանումներն անցնում են հարձակման: Առավելագույն արդյունքի հասնելու համար նա անձամբ էր վաշտերը գրոհի



Գարեգին Նժդեհ (1920թ.)

տանում: Հակառակորդը համառ դիմադրություն է ցույց տալիս միայն առաջին երկու օրերին:

Դեկտեմբերի 7-ին հայկական ստորաբաժանումները գրավում են Գեղվա ձորի վերջին գյուղերը և փառքով ավարտում արշավանքը: Հարձակման արդյունքում բացվում է կենսական կարևորություն ունեցող Գորիս-Կապան խճուղին (տե՛ս քարտեզ 10.4):

1920թ. հունվարի 19-20-ին Նժդեհն իրականացնում է Շուռնուխի շրջանի թաթար քոչվորների հնազանդեցումը: Շուռնուխն ազատագրվում է ընդամենը մեկ օրում, հակառակորդը դուրս է քշվում շուրջ 30 գյուղերից:

Այսպիսով, 1919թ. վերջին-1920թ. սկզբին Ջանգեզուրի հերոսական կռիվներն ավարտվում են տեղացիների փայլուն հաղթանակներով: Վերջնական տեսք է ստանում միջինյան մարտավարությունը, որը հետագա հաղթանակների գրավականն էր:

## ԳՈՂԹԱՆԻ «ՊԱՏԱՆԱԿՐԱՅ ԱՐՇԱՎԱՆՔԸ»<sup>1</sup> (1920Թ. ՄԱՐՏ-ԱՊՐԻՆ)

1919թ. նոյեմբեր-1920թ. հունվար ամիսներին կրած պարտություններն ինչ-որ կերպ «փոխհատուցելու» նպատակով Նախիջևան ներխուժած թուրքական ուժերը և մուսավաթական ավազակախմբերը՝ Օրդուբադը զավթած էդիֆ բեյի գլխավորությամբ, հաշվեհարդար են սկսում այստեղի հայության հետ: Թուրք-թաթարական ուժերին ավելի սանձարձակ էր դարձրել նաև այն փաստը, որ Կապուտջուղի վրայով անցնող Գողթանի միակ ճանապարհը ձմեռը փակ էր, և նույնիսկ ցանկության դեպքում Ջանգեզուրից օգնություն չէր կարող հասնել: Ահագնացող ճնշման պայմաններում Գողթանի հայության հերթական համագումարը որոշում է շարունակել ինքնապաշտպանությունը, եթե Ջանգեզուրը ձեռք մեկնի: Հապաղել չէր կարելի...


Մարտի 8-ին Կապանի ու Գեմվազի ուժերը կենտրոնանում են Բաղաբերդում (տե՛ս քարտեզ 10.5): Նժդեհն արշավանքի նախապատրաստությունն ավարտած վաշտերի շարային ստուգատես է անցկացնում՝ նրանց հանդերձանքն ու սպառազինությունը ստուգելու համար: Ջորատեսին առանձնահատուկ խորհուրդ է հաղորդում կապանցիների անունից զինվորներին ուղարկված մարտական դրոշի հանձնման արարողությունը: Դրոշը սպիտակ կտավից էր, որի մի կողմի վրա գրված էր՝ «Ղափանը Գողթանի համար», իսկ մյուսի վրա՝ «Պատանակրաց արշավանք»:

Արշավանքի ելնող «զորքում» բոլորը գիտակցում էին առաջադրանքի բացառիկ կարևորությունը, նրա համազգային նշանակությունը: Բայց զորասյուները նոր էին ավարտել պատրաստվելը, երբ մարտի 9-ի երեկոյան Գորիսից ստացվում է գեներալ Ղազարյանի՝ արշավանքը հետաձգելու հրամանը: Հարցն այն էր, որ հետախուզության տվյալներով՝ Ջեբրայիլ-Կորյազի-նի շրջանում մուսավաթականներն ուժեր էին կենտրոնացնում հայկական ուժերի թիկունքին մի քանի ուղղությունից հարվածներ հասցնելու համար: Այդ նպատակով այստեղ էին եկել Նուրի փաշան և մուսավաթական գեներալ Մեհմանդարովը: Հայկական զինված ուժերի հրամանատարությունը գտնում էր, որ Գողթանի արշավանքն իրականացնելու դեպքում Նժդեհը չի հասցնի ժամանակին ավարտել ուժերի վերախմբավորումը: Չէր կարելի բացառել, որ

<sup>1</sup> Յուրաքանչյուր մարտիկ իր հետ վերցնում էր երկար կտոր (պատանք): Դրանից էլ ծագել է «պատանակիր» բառը, որը նշանակում է իր պատանքացու կտորը կրող (տանող) մարտիկ:

Արշավանքի մասնակիցները գիտակցում էին, որ հարձակողական գործողության գլխավոր առավելությունը սրընթացությունը պետք է լինի: Մարտական ընկերոջ զոհվելու դեպքում հարձակման արագությունը չնվազեցնելու համար՝ նրան փաթաթում էին իր իսկ բերած պատանքի մեջ և մարտի ավարտվելուց հետո թաղում նրա զոհված վայրում: Պատանակիրության գաղափարը ներմուծելով՝ Գարեգին Նժդեհը նոր մակարդակի է բարձրացրել անձնագրիության գաղափարը:

Քարտեզ 10.5



նույնիսկ ոչ մեծաթիվ զոհեր տալով՝ Կապարգողթի ուժերը չեն կարողանա պահպանել իրենց մարտունակությունը և չեն հասցնի ժամանակին վերադառնալ արշավանքից:

Նժդեհին հրամայվում է մի քանի օրում ուժերը հետ քաշել ու պատրաստվել արևելյան ճակատում հարձակմանը դիմագրավելուն: Սակայն նույն գիշերը ժամը 1-ին նա հետևյալ պատասխանն է ուղարկում Ջանգեզուրի ճակատի հրամանատարությանը. «Ձեր տված տեղեկություններից հետո Գողթանի արշավանքն ինձ համար դառնում է ավելի իմաստալից և անհետաձգելի: Հենց այս գիշեր Քաջարանում հավաքված զորքն իմ ղեկավարությամբ շարժվելու է առաջ»:

Իր վրա վերցնելով ամբողջ պատասխանատվությունը՝ Նժդեհը մարտի 10-ին սկսում է Գողթանի արշավանքը: Հինգ օր անց զորքը կենտրոնանում է Բիստ գյուղում: Մարտի 17-ին արշավանքի ելած ստորաբաժանումները հասնում են Ցղնա և այստեղ կենտրոնացնում պայթուցիկով լի տակառները:

Հարձակումը սկսվում է մարտի 20-ին (տե՛ս քարտեզ 10.5): Առաջին հարվածի հաջողությունից էր կախված ամբողջ հարձակման ընթացքը, և նախաձեռնություն ստանալու համար Նժդեհը ձգտում էր հակառակորդին ապշեցնել գործողությունների արագությամբ ու հստակ կազմակերպված փոխգործողություններով: Այդ մտահղացումը հաջողվում է իրականացնել: Դեռ լույսը չբացված գրավվում է Խարաբալիզան հինավուրց ամրոցը, իսկ ընդամենը մի քանի ժամում՝ նաև Դոյլու, Քալանթար, Դիսար, Հանսան, Վալավեր, Աղրի, Դիզա, Վանանդ և Դռնիս գյուղերը: Երեկոյան հայկական ուժերը հասնում են հինավուրց հայկական քաղաքի՝ Որդվատի (Օրդուբադ) մատույցներին և ոչնչացնում հակառակորդի պահակախումբը:

Սոտակա խնդիրը կատարված էր: Մարտավարական բոլոր կարևոր կետերը հայերի ձեռքն էին անցել, և հաջողությունը զարգացնելու համար անհրաժեշտ պայմաններ էին ստեղծվել: Թուրքերին Նժդեհի անունն այն աստիճան էր շանթահարել, որ նրանք չեն հանդգնում մարտի մեջ մտնել և մարտի 21-ին թնդանոթից մի քանի արկ արձակելով՝ նահանջում են: Հակագրոհի անդրադարձումը հնարավորություն է տալիս օրվա երկրորդ կեսին ազատագրել Գողթանի զգալի մասը:

Հարձակումը շարունակվում է նաև մարտի 21-ի լույս 22-ի գիշերը: Գիշերային մարտերում ևս հաջողությունը հայկական ուժերի կողմն էր, և նրանք կարողանում են մարտի 22-ի առավոտյան ավարտել արշավանքի խնդիրը՝ Որդվատի շրջապատում: Հարձակման ընթացքում Նժդեհի զորախումբը տալիս է ընդամենը երեք զոհ և մեկ վիրավոր:

Թվում էր՝ ավազակաբնի վերածված Որդվատին այլևս ոչինչ չի կարող փրկել, երբ հերոս պատանակիրների հրամանատարը ստանում է արշավանքը դադարեցնելու և վերադառնալու հրաման: Սուրհանդակները տեղեկացնում են, որ Նուրի փաշայի հրոսակախմբերը միանգամից երեք ուղղություններից

ներխուժել են Ջանգեզուր: Հապաղելը կործանարար կարող էր լինել: Իրական վտանգ կար, որ Որդվատի ազատագրումը շարունակելու դեպքում Կապանի վաշտերը չէին հասցնի վերադառնալ, և հակառակորդին կհանձնվեր ամբողջ Ջանգեզուրը:

Մեկ-երկու ժամում ավարտելով բոլոր նախապատրաստական միջոցառումները՝ Նժդեհը սկսում է արտակարգ արագությամբ աչքի ընկնող նոր ռազմերթ: Արդեն մարտի 25-ին Գորիսից եկած պահեստային զորամասի հետ միասին Կապարգողթի վաշտերը մարտի են նետվում: Ապրիլի 1-ին նրանց են միանում Գողթանից վերադարձած զինվորները: Չդիմանալով գրոհներին՝ հակառակորդը սկսում է նահանջել, որով սկսվում է Նժդեհյան տաղանդի հերթական դրսևորումը դարձած Բարգուշատի հաղթարշավը: Այս արշավանքով մաքրվում է Արցախի և Սյունիքի հայության միջև սեպի պես խրված տասնյակ քոչվոր մահմեդական գյուղերի արգելքը, և հայության երկու հատվածները կապվում են իրար:

Այսպիսով, թեև Գողթանի արշավանքը չհաջողվեց ավարտել Օրդուբադի ազատագրումով, սակայն այն միանշանակ հաղթական էր: Չէ՞ որ արշավանքի նպատակը ոչ միայն հակառակորդի կողմից ավազակաորջերի վերածված բոլոր բնակավայրերի ազատագրումն էր, այլև Գողթանի հայության ֆիզիկական ոչնչացման կանխումը և հայրենի հողում նրանց ապրելու իրավունքի ապահովումը:

ՊԵՏՈՒԹՅԱՆ XI

**ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՆԵՐԸ  
ԵՎ ՀԱՅ ԶՈՐԱԿԱՐՆԵՐԸ  
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ  
ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ**

**Մ**եծ Հայրենականի ճակատներում ծավալված ռազմական գործողություններին ընդհանուր առմամբ մասնակցել է մոտ 550 հազար հայազգի զինվոր, որից գրեթե 300 հազարը՝ Հայաստանից (բնակչության 20-23%-ը), իսկ մնացածները՝ այլ խորհրդային հանրապետություններից: Մարտական գործողությունների ընթացքում խորհրդային Միության հերոսի կոչման է արժանացել 103 հայազգի զինծառայող, որից երկուսը՝ կրկնակի (Ն.Ստեփանյան, Յ.Բաղրամյան), 27-ը դարձել է Փառքի շքանշանի լրիվ ասպետ, իսկ մեղավներով ու շքանշաններով պարգևատրվել է շուրջ 70 հազարը:

Մեր զեներալներն այդ պատերազմում վարել են ամենաբարձր հրամանատարական պաշտոններ: Ապագա մարշալ Յ.Բաղրամյանը եղել է ռազմաճակատների հրամանատար (1-ին Մերձբալթյան և 3-րդ Բելոռուսական), ապագա ԽՍՀՄ նավատորմի ծովակալ Յ.Իսակովը՝ ԽՍՀՄ ՌԾՈւ հրամանատարի առաջին տեղակալ, բանակի հրամանատարներ են եղել<sup>1</sup> ավիացիայի ապագա մարշալ Ա.Խանփեդյանցը (1-ին և 12-րդ օդային) և զեներալ Մ.Պարսեղովը (40-րդ), կորպուսներ են ղեկավարել Ս.Մարտիրոսյանը (50-րդ և 73-րդ հրաձգային), Յ.Մարտիրոսյանը (90-րդ հրաձգային), Բ.Առուշանյանը (14-րդ և 11-րդ գվարդիական հրաձգային), Վ.Տամրուչին (Դանուբյան, 22-րդ մեքենայացված), Յ.Բաբաջանյանը (11-րդ գվարդիական տանկային): Պատերազմի տարիներին 22 հայորդի եղել է դիվիզիայի, 25-ը՝ բրիգադի և ավելի քան 100-ը՝ գնդի հրամանատար:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարբեր ճակատներում մարտնչել է նաև մոտ 50 հազար մեր հայրենակից Սփյուռքից: Օրինակ, ԱՄՆ բանակի կազմում պատերազմին մասնակցել է 21 հազար հայ (որոնցից Ջորջ Մարտիկյանն ու Հայկ Շեքիրջյանը դարձան զեներալ), իսկ Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի բանակներում (Եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից և այլն)՝ մոտ 30 հազար: Սփյուռքահայերի հանգանակած միջոցներով ստեղծվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, որը 1944թ. փետրվարին մարտի մեջ մտավ 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի (հրամանատար՝ Յ.Բաղրամյան) 119-րդ առանձին տանկային գնդի կազմում: Իրանահայերի հանգանակած միջոցներով կառուցվեց «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյունը:

Հայրենական պատերազմին մասնակցել է հայկական 6 դիվիզիա.

76-րդ լեռնահրաձգայինը կազմավորվել է 1922թ. սեպտեմբերին և իր մարտական ուղին սկսել 1941թ. օգոստոսին՝ Անդրկովկասյան ռազմաճակատի 47-րդ բանակի առաջապահ ուժերի կազմում անցնելով Արաքսն ու շարժվելով դեպի Մարանդ-Թավրիզ: Ստալինգրադի ճակատամարտին փառահեղ<sup>2</sup> մասնակցություն ունեցած դիվիզիան 1943-ին վերանվանվել է 51-րդ գվարդիական և ավարտել պատերազմը 1945թ. մայիսին Կուռլանդական թերակղզում:

409-րդ Կիրովոգրադ-Բրատիսլավյան հրաձգային դիվիզիան կազմավորվել է 1941թ. հուլիս-օգոստոսին ՅԽՍՀ-ում, 1942թ. փետրվարին վերա-

<sup>1</sup> Նախքան ռազմաճակատի հրամանատար նշանակվելը Յ.Բաղրամյանը եղել է 11-րդ գվարդիական բանակի հրամանատարը:

<sup>2</sup> Այս մասին տե՛ս հաջորդ ակնարկը:

կազմվել հայկականի և նոյեմբերին մարտական ուղին սկսել է Կովկասի նախալեռներից՝ 1945թ. հասնելով մինչև Չեխոսլովակիա և Ավստրիա: Միակ հայկական դիվիզիան է, որը երկու՝ Կիրովոգրադ-Բրատիսլավյան պատվանուն է ունեցել:

*408-րդ հրաձգային դիվիզիան* կազմավորվել է 1941թ. օգոստոսին: Մինչև 1942թ. սեպտեմբերը պաշտպանել է խորհրդա-թուրքական սահմանը, որտեղից թուրքական զորքերի մեծ հարձակում էր սպասվում: Մարտական ուղին սկսել է 1942թ. սեպտեմբերին Նովոռոսիյսկի շրջանում: Նոյեմբերին դիվիզիան վերակազմվել է հետևակային բրիգադի:

*89-րդ թամանյան հրաձգային դիվիզիան* կազմավորվել է 1941թ. դեկտեմբերին, մարտական ուղին սկսել 1942թ. օգոստոսին Կովկասյան ճակատում և ավարտել պատերազմը 1945թ. Բեռլինում: Պատերազմից հետո տեղակայված է եղել Հայաստանում և լուծարվել 1959թ.:

*390-րդ հրաձգային դիվիզիան* կազմավորվել է 1942թ. հունվարին Կերչ թերակղզում, Ղրիմի ռազմաճակատի հայ մարտիկներով և ՀԽՍՀ-ից ժամանած համալրումով: 1942թ. մայիսին դիվիզիան վերակազմվել է: Մարտիկների մի մասը տեղափոխվել է Սևաստոպոլ, որտեղ էլ նրանք աչքի են ընկել հունիսյան մարտերի ընթացքում:

*261-րդ հայկական հրաձգային դիվիզիան* կազմավորվել է 1942թ. հոկտեմբերին ՀԽՍՀ-ում, անմիջական մարտական գործողություններին չի մասնակցել, սակայն փայլուն կատարել է ռազմավարական նշանակության առաջադրանքը՝ պաշտպանել է հայ-թուրքական սահմանը, որտեղ թուրքիան 26 դիվիզիա էր կենտրոնացրել: Ինչպես հայտնի է, այդ պետությունը ծրագրել էր գերմանացիների ռազմական հաջողության պարագայում (մասնավորապես՝ Ստալինգրադի անկումից հետո) պատերազմ հայտարարել ԽՍՀՄ-ին և ներխուժել Հայաստան:



**Խորհրդային Միության մարշալ  
Ղովհաննես Բաղրամյան  
(1897-1982թթ.)**



**Զրահատանկային զորքերի  
գլխավոր մարշալ  
Համազասպ Բաբաջանյան  
(1906-1977թթ.)**

## **76-ՐԴ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՀՐԱՉԳԱՅԻՆ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՀԱՐՉԱԿՈՒՄԸ (1942Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 19 -21)**

Վորոշիլովի անվան 76-րդ Լեռնահրաձգային (հետագայում՝ 51-րդ գվարդիական) դիվիզիան Չայրենական մեծ պատերազմի ընթացքում անցել է մոտ 7000 կմ մարտական ուղի, ազատագրել ավելի քան 600 բնակավայր, 21 զինվոր և սպա արժանացել են Խորհրդային Միության հերոսի կոչման:

1942թ. նոյեմբերի կեսերին Ստալինգրադ (Վոլգոգրադ) հասած գերմանական խմբավորումն իր բոլոր հիմնական ռեզերվները ծախսելով չէր կատարել իր առջև դրված խնդիրները և հայտնվել էր ոչ ձեռնտու օպերատիվ դրուսյունում. նրա թևերը թուլացվել էին: Դրան հակառակ, պաշտպանական մարտերի ընթացքում Խորհրդային հրամանատարությունը ռեզերվներ էր կուտակել և պատրաստվել էր վճռական հակահարձակման, որի նպատակն էր Չարավարևմտյան և Ստալինգրադյան ռազմաճակատների հարվածներով շրջապատել հակառակորդի հիմնական խմբավորումը:


Մինչ այդ Խորհրդային զորքերն իրենց օպերատիվ դիրքը բարելավելու համար իրականացրել էին մի շարք գործողություններ, որոնցից կարևոր էր 1942թ. հոկտեմբերին 76-րդ հայկական Լեռնահրաձգային դիվիզիայի (հրամանատար՝ գեներալ-մայոր Ն.Տ. Թավարքիլաձե) կողմից Դոնի աջ ափի Կլետսկայա շրջանի ռազմահենադաշտի գրավումը: Դիվիզիան, որը 1942թ. հուլիսին աչքի էր ընկել 21-րդ և 38-րդ բանակների միջև մխրճված գերմանական զորքերի առաջխաղացումը կասեցնելիս, մեկ ամիս շարունակ հերոսաբար անդրադարձում էր մեծ կարևորություն ունեցող հենադաշտն ամեն կերպ վերացնել ձգտող հակառակորդի գրոհները:

Չարավարևմտյան ռազմաճակատի հարվածային խմբավորման՝ 21-րդ բանակի գլխավոր հարվածը որոշվում է հասցնել ձախ թևում՝ հայկական դիվիզիայի, ինչպես նաև նրա աջ հարևանների՝ 293-րդ և 63-րդ հրաձգային դիվիզիաների ուժերով: Դիվիզիայի ձախից հարձակվելու էր Դոնի ռազմաճակատի 65-րդ բանակի 27-րդ հրաձգային դիվիզիան: Գլխավոր ուղղությամբ (76-րդ և 293-րդ դիվիզիաների տեղամասերում) հաջողության զարգացման խնդիրը դրվեց բանակի շարժական խմբի վրա, որը բաղկացած էր 1 տանկային և 1 հեծյալ կորպուսներից:

Որպեսզի պարզ լինի հայկական դիվիզիայի առջև դրված մարտական խնդրի կատարման կարևորությունը՝ նշենք, որ 21-րդ բանակի շտաբի 1942թ. նոյեմբերի 15-ի մարտական հրամանով դիվիզիան ուժեղացվում է մեկ տանկային, վեց հրետանային և ականանետային, մեկ գվարդիական ականանետային («Կատյուշաների») և մեկ զենիթային գնդերով: Ուժեղացման զորամասերի անձնակազմը գրեթե հավասար էր դիվիզիայի անձնակազմին:

Դիվիզիան պետք է ճեղքեր հակառակորդի պաշտպանությունը Կարաժենսկիի հարավի ձորակից մինչև Կլետոսկայայի հարավային արվարձանի մեքենատրակտորային կայան տեղամասուն և գրավեր Վլասով, Սելիվանովո բնագիծը: 196,7 և 218,8 միշով բարձունքների բնագծուն դիվիզիայի զորամասերը պետք է իրենց մարտակարգերի միջով թողնեին տանկային և հեծյալ կորպուսների ուժերը, որոնք, հաջողությունը զարգացնելով, պետք է գրավեին Դոն գետի անցումները և թույլ չտային հակառակորդի նահանջը դեպի արևմուտք (տե՛ս սխեմա 1).

Սխեմա 1



Տեղանքը բաց էր. Դոն գետի ափերից բացի, մնացած ամբողջ տարածքն անտառազուրկ էր: Մեծաթիվ ձորակների և հեղեղատների թեք լանջերը, ինչպես նաև աշնանային ճամփախափանքը դժվարացնում էին զորքի տեղաշարժերը: Լրացուցիչ խոչընդոտ դարձավ հարձակումից մի քանի օր առաջ սկսված Դոնի սառցակալումը:

Հակառակորդը հիմնական ջանքերը կենտրոնացրել էր առաջին պաշտպանական դիրքի հենակետերի և դրանց առաջին խրամուղու պահպանման վրա: Հետևաբար, պաշտպանության հաջող ճեղքման համար անհրաժեշտ էր հասցնել հզոր սկզբնական հարված: Այդ նպատակով գնդերի մարտակարգը դասավորվել էր մեկ էջելոնով՝ առանձնացնելով համազորային ռեզերվներ (գնդերում ավտոմատավորների վաշտ): Մարտակարգի այսպիսի դասավորությունը հնարավորություն տվեց 20 հրաձգային վաշտ ունենալ դիվիզիայի գրոհող զորքերի առաջին գծում, որով ապահովվում էր հրազենի առավելագույն օգտագործումը: Կանխատեսելով հակագրոհները՝ դիվիզիայում ստեղծվել էր հրետանային-հակատանկային ռեզերվ:

### ***Մարտական գործողությունների ընթացքը***

Հարձակողական գործողությունների նախերգանքը նոյեմբերի 18-ին գնդերի հետախուզական ջոկատների ուժերով իրականացված մարտով հետախուզությունն էր, որն օգնեց հակառակորդի մասին առավել ամբողջական պատկերացում կազմել: Նոյեմբերի 19-ին, ժամը 7<sup>30</sup>-ին սկսվեց գրոհի հրետանային պատրաստությունը, որը տևեց 1 ժամ 20 րոպե: 8<sup>50</sup>-ին հայկական հետևակային ստորաբաժանումները սլացան գրոհի:

76-րդ դիվիզիան հակառակորդի պաշտպանությունը ճեղքում էր երկու հրաձգային գնդով՝ գլխավոր հարվածը հասցնելով Կլետսկայա, Սելիվանովո ճանապարհի երկայնքով: Չորս ժամում դիվիզիայի զորամասերն առաջացան 3 կմ ու սկսեցին հակառակորդի երկրորդ դիրքերի ճեղքումը (տես սխեմա 2):

Հակառակորդը ժամը 13-ին երկու հակագրոհի իրականացրեց: Հակագրոհների սկզբին խորհրդային հրետանու զգալի մասը (հատկապես 293-րդ դիվիզիայի տեղամասում) հետ էր մնացել հետևակից և չկարողացավ մասնակցել հակագրոհի անդրադարձմանը: Հայկական դիվիզիայի տեղամասում իրավիճակն ավելի բարենպաստ էր, և հաջողությունը զարգացնելու նպատակով այստեղ մարտի մտցվեց բանակի շարժական խումբը՝ 4-րդ տանկային կորպուսը: Կորպուսի ձախ զորասյան (102-րդ տանկային և 4-րդ մոտոհրաձգային բրիգադները) հետ դիվիզիան անդրադարձրեց հակագրոհը:


Ավելի քան մեկ տասնյակ աջակցող զորամասեր ունեցող դիվիզիայի հարձակումը հսկայական ընդգրկում ունեցող մարտական գործողության վերածվեց: Պատահական չէր, որ ժամը 16-ին հայկական դիվիզիայի հարձակման

հատվածում մարտի մտցվեց նաև 3-րդ գվարդիական հեծյալ կորպուսը: Հակառակորդի ստորաբաժանումները շրջապատվելու սպառնալիքի տակ ընկան և նոյեմբերի լույս 20-ի գիշերը սկսեցին շարժվել հարավ: Հայկական դիվիզիան կարողացավ լուծել ոչ միայն հակառակորդի ջախջախման խնդիրը, այլև հասավ գլխավոր նպատակին՝ հակառակորդին հովհարածն նահանջ հարկադրել ու ցրել նրա ուժերը:

Նոյեմբերի 20-ի առավոտյան հայկական դիվիզիայի զորամասերը դասավորվեցին շարասյուններով և անցան հակառակորդի հետապնդմանը: Դիվիզիան, հաղթահարելով Վլասով և Սելիվանովի բնակավայրերում ռումինական առանձին ստորաբաժանումների դիմադրությունը, գրավեց այս բնակավայրերը և նոյեմբերի 20-ի երեկոյան ամրացավ թիվ 2 ֆերմա, 200,2 միշով բարձունք, թիվ 1 ֆերմա բնագծում՝ խորանալով մինչև 20 կմ (տես սխեմա 2):

Սխեմա 2

76-ՐԴ ՀԱՅՎԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՀԱՐՉԱԿՈՒՄԸ 1942Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-ԻՆ



Հարևանների ձեռքբերումներն ավելի համեստ էին: Ձախից Դոնի ռազմաճակատի 65-րդ բանակի 27-րդ հրաձգային դիվիզիան, հայկական դիվիզիայի հաջողությունն օգտագործելով, նոյեմբերի 20-ի երեկոյան առաջացավ ընդամենը 10 կմ: Հայկական դիվիզիայի հարձակման տեմպին չհասցնելով՝ ի վերջո հետ մնաց նաև ճեղքման տեղամասի կենտրոնում գտնվող 293-րդ դիվիզիան:

Այսպիսով, երկօրյա անընդհատ մարտերի ընթացքում 293-րդ դիվիզիայի հետ համատեղ հայկական դիվիզիայի զորամասերը ճեղքեցին հակառակորդի պաշտպանությունը նրա ամբողջ մարտավարական խորությունում և անդրադարձրին հակառակորդի ռեզերվների հակազրոհները: Ընդհանուր ջանքերի արդյունքում նոյեմբերի 20-ի երեկոյան հակառակորդի խմբավորման աջ թևը շրջանցվեց արևելքից ու հարավ-արևելքից, իսկ 333-րդ հրաձգային դիվիզիայի դեպի Վերին Չերենսկի հարձակումով հակառակորդի նահանջի ուղիները փակվեցին: Հայկական դիվիզիան 5-7 կմ խորության վրա ապահովեց բանակի շարժական խմբի մարտի մտնելը և նրա հաջողությունն օգտագործելով՝ ավարտեց հակառակորդի պաշտպանության մարտավարական գոտու ճեղքումը: Հարձակման միջին տեմպը կազմեց 9-10 կմ/օր:

Հայկական դիվիզիայի հարձակման արդյունքում 21-րդ բանակի հրամանատարությունը հնարավորություն ստացավ Մանոյլին, Մայրոփսկի շրջաններ դուրս բերել իր շարժական խմբերը, որոնք 5-րդ տանկային բանակի զորքերի հետ հասան Դոն գետի բնագիծը և Ստալինգրադյան ռազմաճակատի շարժական զորքերի հետ նոյեմբերի 23-ին փակեցին հակառակորդի ստալինգրադյան 330 հազարանոց (22 դիվիզիա) խմբավորման շրջապատման օղակը: Գերմանական զորքերը ջախջախիչ պարտություն կրեցին: Այդ նույն օրը հայկական դիվիզիան արժանացավ գվարդիականի կոչման, իսկ շրջապատված հակառակորդի ոչնչացման գործողության ժամանակ աչքի ընկնելու համար 1943թ. հունիսի 19-ին պարգևատրվեց Լենինի շքանշանով:

1943թ. հուլիս-օգոստոս ամիսներին 51-րդ գվարդիական վերանվանված դիվիզիան մասնակցեց Կուրսկի աղեղի ճակատամարտին և փայլեց Բելգորոդ-Բոգոդոլխովյան գործողության ընթացքում: 1944-45թթ. 1-ին Բելոռուսական ռազմաճակատի կազմում դիվիզիան աչքի ընկավ Վիտեբսկի մոտ գերմանական խմբավորման շրջապատման ժամանակ, որի համար արժանացավ «Վիտեբսկյան» պատվանվանը, իսկ մարտական ուղին ավարտեց 1945թ. մայիսին Կուռլանդական թերակղզում շրջապատված հակառակորդի խմբավորման ոչնչացումով:

## **89-ՐԴ ԵՎ 409-ՐԴ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՉՎԱՅԻՆ ԴԻՎԻԶԻԱՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ (1943Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ)**

1942թ. նոյեմբերին Ստալինգրադի մատույցներում գերմանական զորքերի շրջապատում սկսվում է արմատական բեկումը Երկրորդ համաշխարհային պատերազմում, որին հասնելու գործում էական էր Կովկասի պաշտպանության նշանակությունը: Թուրքիան Խորհրդային Միության սահմանին էր մոտեցրել 26 դիվիզիա, ամեն բոլոր սպառնում էր ներխուժել Անդրկովկաս: Այդ վտանգը կանխելու գիտակցությամբ էին հայ մարտիկները ֆաշիստական հորդաների դեմ ամենուրեք մարտնչում՝ հատկապես Կովկասում, որը հասկանալի վերապահումներով կարելի է հայոց հողի համար պայքար համարել:

Կովկասի և Անդրկովկասի նավթային ռեսուրսներին տիրանալ ձգտող գերմանական զորքերի ձախողված հարձակումը, որը պատմության մեջ մնացել է որպես Կովկասի ճակատամարտ (1942թ. հուլիսի 25-1943թ. հոկտեմբերի 9), ընդունված է բաժանել երկու շրջանի.

\* *պաշտպանական* (1942թ. հուլիսի 25-ից մինչև 1943թ. հունվարի սկիզբ), որի ընթացքում Խորհրդային զորքերը ժամանակավորապես նահանջեցին և պաշտպանական համառ մարտերով արյունաքամ արեցին թշնամուն,

\* *հարձակողական* (1943թ. հունվարի սկզբից մինչև 1943թ. հոկտեմբերի 9), որի ընթացքում ավարտվեց գերմանաֆաշիստական խմբավորման ջախջախումը:

Խորհրդային Միությունում ստեղծված նոր զորամիավորումների մեջ առաջիններից էր Հայաստանում կազմավորված 409-րդ դիվիզիան, որը 1942թ. փետրվարին վերակազմվում է հայկականի: Այդ դիվիզիայի կազմավորման գործում մեծ է հայկական ազգային դիվիզիաների ստեղծման ջատագով, հրամանատար, գնդապետ Արտաշես Վասիլյանի ավանդը: Նա, ի դեպ, 1942թ. հոկտեմբերին նշանակվեց 89-րդ դիվիզիայի հրամանատար և երկրորդ հայկական դիվիզիայի լեգենդար մարտական ուղու սկզբնավորողներից մեկը դարձավ:

1942թ. նոյեմբերին գնդապետ Վ.Գլադկովի հրամանատարությամբ դիվիզիան մեկնում է ճակատ և մարտերի մեջ մտնում Անդրկովկասի ռազմաճակատի հյուսիսային խմբավորման 44-րդ բանակի կազմում՝ Մոզդոկի շրջանում: Դրանով սկսվում է հայկական այս դիվիզիաների մարտական ուղին:

1941թ. դեկտեմբերին կազմավորվում է հայկական դիվիզիաներից ամենանշանավորը՝ 89-րդ հայկական հրաձգայինը: 1942թ. օգոստոսին դիվիզիան ճակատ է մեկնում 9-րդ բանակի կազմում և պաշտպանության անցնում Գրոզնու մատույցներում՝ Թերեք գետի բնագծում: Այս մարտերից հետո դեպի Մալգոբեկ վերախմբավորված դիվիզիան 58-րդ բանակի կազմում գերմանական 50-րդ դիվիզիայի դեմ 75-օրյա համառ մարտեր է վարում:

Թեժ մարտերի ժամանակ հրամանատար նշանակված գնդապետ Ա.Վասիլյանին էր վստահվելու գլխավորել դիվիզիայի 1943թ. հունվարյան հարձակումը և կիսել այդ դժվարին գործողության համար պատասխանատվությունն ու պատիվը:

**Տեղեկանք.** Երեք հայկական դիվիզիաներից բացի, Կովկասյան ճակատում գործող 31-րդ, 61-րդ, 320-րդ, 394-րդ դիվիզիաների և 28-րդ, 38-րդ, 107-րդ և 155-րդ բրիգադների, ինչպես նաև Ստալինգրադում քաղաքային մարտեր վարող 136-րդ և 138-րդ դիվիզիաների անձնակազմի կեսից ավելին հայեր էին:

### **Հունվարյան հարձակումը**

#### ***Առաջին «ցատկը»***

1943թ. հունվարին խորհրդա-գերմանական ճակատում հակառակորդի համար անբարենպաստ իրադրություն էր ձևավորվել, և հարձակման որոշում է կայացվում: Ծրագրված հարձակման կիզակետում էին 89-րդ (58-րդ բանակի կազմում) և 409-րդ (44-րդ բանակի կազմում) հրաձգային դիվիզիաները (տե՛ս քարտեզ 11.1):

Ընդհանուր հարձակման համար նպաստավոր բնագծեր գրավելու խնդրով գործողություններ են սկսում առաջապահ ստորաբաժանումները, որոնք երեկոյան հասցնում են կատարել իրենց առջև դրված խնդիրը և նպաստում են գլխավոր ուժերի՝ Մալգոբեկի արևմտյան ծայրամասը հասնելուն: Հունվարի 2-ի երեկոյան Մալգոբեկն ազատագրվում է: Շարունակելով առաջխաղացումը՝ հունվարի 4-ին դիվիզիան ազատագրում է Համիդիե բնակավայրը:


Համիդիեի մոտ մի շարք հաջող գործողություններ կանխորոշում են դիվիզիայի հետագա հարձակման հաջողությունը: Մասնավորապես, 400-րդ գունդը շրջապատում և ոչնչացնում է հակառակորդի մեկ ուժեղացված վաշտ, իսկ 531-րդ հրետանային գնդի երրորդ դիվիզիոնը դիպուկ կրակով ոչնչացնում է չորս հրետանային, երկու ականանետային մարտկոց, 10 ծանր գնդացիր, մեկ ավտոհավաքակալան, վեց դիտակետ, երեք տանկ և մի քանի ամրացված կրակակետ:

Դիվիզիայի զորամասերը զարգացնում են հաջողությունը, կոտրում հակառակորդի դիմադրությունը և մեկ ցատկով թերեքի աջ ափով հասնում Մայսկի ավան, գետանցում թերեքն ու հունվարի 9-ին ազատագրում Պրոխլադնի քաղաքը, որտեղից հարձակումը շարունակվում է դեպի Նովոպավլովսկ և հունվարի 13-ին հարձակման այս փուլն ավարտում Պոդգորնայայում:

Ուժեղ ցրտերի պայմաններում իրականացվող հարձակումն այնքան սրընթաց էր, որ դիվիզիայի թիկունքը սկսում է հետ մնալ առաջ սլացող զորամասերից: Այդուհանդերձ, հարձակումը չի դադարեցվում, և անցնելով Գեորգիևսկ, Միներալնիե վոդի և Ստավրոպոլ քաղաքներով՝ դիվիզիան ազատագրում է բազմաթիվ բնակավայրեր:

Հունվարյան հարձակման առաջին իսկ օրերից 89-րդ դիվիզիայից աջ՝ Մոզդոկի շրջանի Շեֆետովո, Իսպիրով, Ստարի Խոխլաչով բնակավայրերի մեր-

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ ԿՈՎԿԱՄԻ ՀԱՄԱՐ 1943Թ.



ծակայքի բնագծում հարձակում է սկսում 409-րդ հայկական հրաձգային դիվիզիան, որի զորամասերն առաջին հարվածը հասցնելու էին այդ բնակավայրերի ուղղությամբ: Ի դեպ, մարտավարական նկատառումներով դիվիզիայի զորամասերի ակտիվ գործողությունները սկսվել էին դեռևս դեկտեմբերի 31-ին: Առաջին մարտերում հակառակորդին ջախջախելով՝ դիվիզիան հնարավորություն է ստանում մտնել Մոզդոկ, որը Կովկասյան ճակատում սկսված հարձակման առաջին մեծ հաջողություններից էր:


Սկսվում է հաջողության զարգացումը՝ հակառակորդի կրնկակոխ հետապնդումը: Հարձակման այս փուլում 409-րդ դիվիզիան ազատագրում է տասնյակ բնակավայրեր, այդ թվում՝ Գեորգիևսկ, Մինվոդի, Ստավրոպոլ քաղաքները: Խորհրդանշական է, որ ազատագրվող բնակավայրերի մի մասը ստվար հայ ազգաբնակչություն ուներ: Բնակավայրերի մի մասի ազատագրման ժամանակ 44-րդ բանակի ձախթևյան 409-րդ դիվիզիայի զորամասերը սերտորեն համագործակցել են հարևան 58-րդ բանակի աջթևյան՝ 89-րդ դիվիզիայի հետ, համատեղ ուժերով կան թևային հարվածներով աջակցել միմյանց (տե՛ս քարտեզ 11.2):

Մասնավորապես, գերմանացիները Մոզդոկի մոտ մի շարք կարևոր բնագծեր պահպանելու նպատակով հակազորոհի են անցնում 409-րդ դիվիզիայի 677-րդ հրաձգային գնդի (հրամանատար՝ մայոր Միքայել Գրիգորյան) դեմ: Գնդի մարտիկների համառ դիմադրության պատճառով հակառակորդի հակազորոհը կասեցվում է: Ավելին, ստեղծված իրավիճակից օգտվելով՝ մայոր Մ.Գրիգորյանը 3-րդ գումարտակի ուժերով (հրամանատարի տեղակալ՝ կրտսեր լեյտենանտ Ա.Սիրունյանի գլխավորությամբ) հակառակորդի խմբավորման ձախ թևին հասցված հարվածով կարողանում է ստեղծել շրջապատման սպառնալիք և գրեթե դիմադրության չհանդիպելով՝ գրավում է տեղանքի այն հատվածը, որը պաշտպանելու համար հակառակորդը պատրաստ էր կատաղի հակազորոհների:

Այս հաջողությամբ 677-րդ հրաձգային գունդն իր վրա է սևեռում հակառակորդի Մալգոբեկ-մոզդոկյան խմբավորման ուշադրությունը: Հյուսիսում անհաջողության մատնված և անկանոն նահանջի արդյունքում ծայրահեղ անբարենպաստ իրավիճակում հայտնված հակառակորդը ռեզերվները նետում է դեպի հյուսիս և վճռական պահին չի կարողանում նախատեսած բոլոր ուժերով դիմակայել 400-րդ գնդի իրականացրած շրջապատմանը, որի մասին նշել ենք վերևում: Պակաս կարևոր չէ փաստը, որը 677-րդ գնդի հայրենակիցների օրինակը ոգևորիչ և, միաժամանակ նաև պարտավորեցնող էր 400-րդ գնդի մարտիկների համար<sup>1</sup>: Նախաձեռնությունից զրկված և ուժերի անարդյունավետ վերախմբավորումների վրա մեծ ժամանակ կորցրած հակառակորդը չի համարձակվում շարունակել դիմադրությունն այս շերտում ու հապշտապ նահանջում է:

<sup>1</sup> Շեշտենք, որ 89-րդ դիվիզիայի 400-րդ և 409-րդ դիվիզիայի 677-րդ հրաձգային գնդերը հարևան չէին: Հետևաբար, խոսքն օպերատիվ փոխգործողության մասին է:

89-րդ եվ 409-րդ դիվիզիաների շարժման ուղիները



## **Փետրվարյան հարձակումը**

### **Երկրորդ «ցատկը»**

1943թ. հունվարի վերջին սկսվում է հարձակման երկրորդ փուլը: Հունվարի 26-ին Նովոալեքսանդրովսկում կենտրոնացած 89-րդ դիվիզիան շարունակում է առաջխաղացումը: Սկսվում է դիվիզիայի զորամասերի երկրորդ «ցատկը», որը նույնքան տպավորիչ էր, որքան նախորդը: Համաձայն հրամանատարության մտահղացման՝ դեպի Ազովի ծովափ հասցվող հարվածով պետք է երկփեղկվեր հակառակորդի «Ա» բանակախմբի ամբողջ օպերատիվ դասավորությունը: Հակառակորդի ուժերի մասնատումից հետո նրանց մի մասը հարկադրված էր լինելու նահանջել դեպի հյուսիս, մյուսը՝ դեպի արևմուտք և հարավ-արևմուտք:

58-րդ բանակի կազմում հարձակումը շարունակող 89-րդ դիվիզիան, դեպի արևմուտք-հյուսիս-արևմուտք շարժվելով, ազատագրում է Կրասնոդարի երկրամասի տասնյակ բնակավայրեր: Կովկասի ուղղությամբ ուժերի օպերատիվ մասնատում թույլ չտալու համար հակառակորդը սկսում է կատաղի դիմադրություն ցույց տալ: Հատկապես համառ մարտեր են ծավալվում Կանևսկայա ստանիցայի համար, որը կարևոր նշանակություն ուներ: Հարցն այն է, որ Ազովի ծովի արևելյան ափը ճահճապատ է, և ծովափին մոտ տարածքներում վերախմբավորումներ իրականացնելու և մարտական տեխնիկայի շարժի համար պիտանի ճանապարհներ չկան: Ծովափից շուրջ 25 կմ հեռավորության վրա գտնվող Կանևսկայան երկաթուղային և ավտոճանապարհային կարևոր հանգույց էր, որով կտրվելու էր հակառակորդի երկու մեծ խմբավորումների կապը:

Կանևսկայայի ազատագրումով դիվիզիան ավարտում է երկրորդ «ցատկը» և փետրվարին կենտրոնանում Կանևսկայայի շրջակա Ռուգաչ և Գարբուզովո Բալկա բնակավայրերի բնագծում: Այստեղից սկսվում է հարձակման շարունակումը՝ Պոդի-Նովոջերիլովկա բնագծում ամրանալու համար:

Հայկական դիվիզիայի հարձակումով հակառակորդի օպերատիվ դասավորությունը վերջնականապես մասնատվելու էր: Այդ թույլ չտալու համար հակառակորդը դիմում է կատաղի հակագրոհների: Դիվիզիան հայտնվել էր ռազմավարական առումով կարևոր իրադարձությունների կիզակետում, և Նովոջերիլովկայից հակագրոհող հակառակորդի հաջողության դեպքում վերջինս կարող էր ձախողել 58-րդ բանակի ամբողջ հարձակումը: Հակագրոհի կասեցումը դեկավարում է դիվիզիայի հրամանատարն անձամբ:

Հակագրողը կասեցվում է: Ավելին, հայկական զորամասերը հակագրոհի անդրադարձման պահին նկատելիորեն բարելավվում են իրենց դիրքերը, սակայն հաջողությունը ձեռք է բերվում թանկ գնով. մարտում զոհվում են գնդապետ Ա.Վասիլյանը, որը շարժվում էր դիվիզիայի առաջապահ 390-րդ հրաձգային գնդի հետ, գնդի հրամանատար, մայոր Գ.Իսախանյանը, նույն գնդին տրված դիվիզիոնի (531-րդ հրետանային գնդի երկրորդ դիվիզիոն) հրամանատար Ի.Դանիլինը և ուրիշներ:

1943թ. փետրվարի կեսից դիվիզիան ավարտում է փառահեղ հարձակումը և ուղարկվում հանգստի ու համալրման՝ միաժամանակ կատարելով Ազովի ափի՝ մինչև Եա գետի լիմանն ընկած հատվածը ծովային դեսանտի իջեցումից պաշտպանելու խնդիրը:

Փետրվարի վերջին դիվիզիայի հրամանատար է նշանակվում գնդապետ<sup>1</sup> Նվեր Սաֆարյանը, որի հմուտ ղեկավարմամբ դիվիզիան նախ աչքի էր ընկնելու Թաման թերակղզու համար մղվող մարտերում և արժանանալու էր «Թամանյան» պատվանվանը, ապա հասնելու էր Բեռլին, որտեղ, ի նշանավորումն փառապանծ հաղթանակի, մեր հաղթանակած զինվորները պարելու էին հայոց քոչարին:

409-րդ դիվիզիան գործում էր հայրենակիցների հիմնադրած և հայոց հինավուրց մայրաքաղաքի անունով կոչված Արմավիր քաղաքի ուղղությամբ: Դիվիզիան հունվարի վերջին տասնօրյակում մասնակ-



**89-րդ դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Նվեր Սաֆարյան (1905-1982թթ.)**



**409-րդ դիվիզիայի 684-րդ գնդի մարտիկները Ղնեպրն անցնելուց հետո (1943թ. նոյեմբեր): Կենտրոնում՝ մայոր Աշոտ Զարուբյունյանը**

<sup>1</sup> Զետագայուն՝ գեներալ-մայոր:

ցում է Արմավիրի ազատագրմանը, ապա հաջողությունը զարգացնում դեպի Կրասնոդար:

Փետրվարի 14-ին, երբ Ազովի ծովափին հասած 89-րդ դիվիզիան ուղարկվել էր համալրման, 409-րդ դիվիզիայի զորամասերը դժվարին մարտեր էին մղում Ստարո-Վոլչանսկ բնակավայրի համար, որն ազատագրվում է փետրվարի 17-ին: Հաջորդ օրը համարձակ ռազմերթով դիվիզիան գրավում է Ստարո-Նիժնե-Ստեբելևսկայա կայարանը, ապա մարտերի մեջ մտնում Նովոնիկոլևսկայա և Իվանովսկայա բնակավայրերի համար:

Հետագայում 409-րդ դիվիզիան փառքով է պսակում իր անունը. 1943թ. նոյեմբերին անցնում է Դնեպրը, ազատագրում Կիրովոգրադը, իսկ հետո նաև Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավան:

Այսպիսով, 89-րդ և 409-րդ հայկական հրաձգային դիվիզիաները շուրջ երկու ամսում մարտերով անցան ավելի քան 800 կմ և մասնակցեցին ավելի քան երեք տասնյակ քաղաքների ու հարյուրավոր բնակավայրերի ազատագրմանը:

ՊԵՏՈՒԹՅԱՆ XII

# ԱՐՁԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

**1988** թ. փետրվարին սկսվում է Արցախի տարածքի զգալի մասն ընդգրկող ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու շարժման նոր փուլը: Խորհրդային օրենսդրության առավելագույն պահպանումով իրականացվող այդ գործընթացին ադրբեջանցիները պատասխանում են Սունգայիթում փետրվարի 26-29-ին իրականացված հայկական ջարդերով, որն անակնկալ էր նույնիսկ ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների համար, սակայն քայքայման եզրին հայտնված միության ղեկավարներն անցնում են նմանատիպ իրադրությունում հայտնված Ադր. ԽՍՀ-ի կողմը:

Կենտրոնական իշխանությունների աջակցությունը ստացած Բաքվի կոմունիստական իշխանիկները նոր հարձակման են անցնում. Ադրբեջանի հայաշատ վայրերում իրականացվում են ջարդեր և հայ բնակչության տեղահանություն, իսկ 1988թ. աշնանը հայաթափվում են Շուշիի շրջանը, Դաշտային Արցախի մեծ մասը, ինչպես նաև Նախիջևանի տարածքում մնացած վերջին հայկական գյուղը՝ Զնաբերդը:

1989թ. օգոստոսին փակվում է Գորիս-Ստեփանակերտ ավտոճանապարհը, իսկ ինքնաթիռային թռիչքների դադարեցումով մարզն արտաքին աշխարհին կապող միակ ուղին են դառնում Հայաստանից իրականացվող ուղղաթիռային թռիչքները: Դեկտեմբերի 1-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ԼՂԻՄ Ազգային խորհրդի միացյալ նիստում ընդունվեց «Խորհրդային Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» պատմական որոշումը:

*1990թ. հունվարին Բաքուն ևս դատարկվում է հայերից: Հայաստանից էլ հեռանում են ադրբեջանցիները: Հակամարտությունը վերջնականապես փոխում է բնույթն ու ձեռք բերում պատերազմների բնորոշ գծեր, մասնավորապես՝ հակամարտության գիծ:*

Արցախը և Ադրբեջանը գտնվում էին ԽՍՀՄ կազմում, այդ պատճառով էլ ինքնապաշտպանական ջոկատների ձևով պայքարի կազմակերպումը թելադրված էր ծավալվող պատերազմի պահանջներով և այս փուլում միակ ընդունելի տարբերակն էր: Բացի այդ, 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից հետո ծայրահեղ ծանր վիճակում էր գտնվում ՀԽՍՀ-ն: Փաստորեն, պատերազմ չհայտարարած Ադրբեջանը Հայաստանի նկատմամբ սկսում է կիրառել պատերազմին հատուկ ռազմավարական քայլ՝ շրջափակում, որի հետևանքով աղետի գոտու շինարարությունը սկսում է դանդաղել: Աղետի գոտու գրեթե 500 հազարանոց բնակչությունը և մոտ 350 հազար փախստական դատապարտվում են տնակներում ապրելու հեռանկարին:

## **Դաշտային Արցախի և Բերդաձորի ենթաշրջանների հայաթափումը**

1990թ. հունվարի 12-14-ին Ազատ, Գետաշեն և Մանաշիդ բնակավայրերի վրա իրականացված հարձակումներով, իսկ փետրվար-մարտ ամիսներին՝ Ազատ և Կանո գյուղերի հայաթափումով սկիզբ է դրվում Հյուսիսային Արցախի հայության բռնի տեղահանմանը: Այս ամենը Հայաստանի և Արցախի սահմաններձ շրջանների բնակչությանը ստիպում է դիմել զինված ինքնապաշտպանության: Սկսվում է կամավորական շարժում, որի հիմքի վրա Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների անկախության հռչակումից հետո ստեղծվում է հայկական բանակը:

1990թ. մայիսի 27-ին խորհրդային զորքերի հրահրած խոշոր ընդհարման հետևանքով զոհվում են 23 ազատամարտիկ և խաղաղ բնակիչներ, բազմաթիվ մարդիկ վիրավորվում են: Այդ ողբերգությունը մինչև ցերեպ վերջնականապես օտարացնում է հայ ժողովրդին և խորհրդային բանակին:

1991թ. ապրիլի 30-ին սկսում է իրականացվել տխրահռչակ «Օղակ»<sup>1</sup> գործողությունը՝ մինչև մայիսի 18-ը հայաթափելով Հյուսիսային Արցախի Գետաշեն և Մարտունաշեն բնակավայրերը, Հադրութի շրջանի ծայրամասային գյուղերը և Շուշիի շրջանի Բերդաձորի ենթաշրջանը: Արցախում հայաթափվում է 23 հայկական գյուղ:

Բնութագրական է Գետաշենի վերջին մարտը, որը սկսվում է ապրիլի 30-ին, ժամը 5<sup>00</sup>-ին և շարունակվում մի քանի օր: Հարձակումը սկսվում է շրջակա բարձունքներից հասցվող հրետանային հարվածով, որին հետևում է հարձակումն ավելի քան 100 միավոր զրահատեխնիկայով և մարտական ուղղաթիռներով<sup>2</sup>:


Ոգևորված այս արդյունքներից՝ Ադրբեջանի ղեկավարությունը, խորհրդային բանակի ստորաբաժանումների միջոցով շարունակելով ռազմական գործողությունները Շահումյանի շրջանում, մեծաքանակ կորուստների գնով կարողանում է հայաթափել Էրքեջ, Բուզլուխ և Մանաշիդ գյուղերը<sup>3</sup>, սակայն վերիշենի մատույցներում ադրբեջանցիները կամավորական ջոկատների կողմից ծանր հակահարված են ստանում:

Օգոստոսի 23-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունում է Հայաստանի անկախության հռչակագիրը, որով ՀԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն (ՀՀ, կրճատ՝ Հայաստան):


<sup>1</sup> Անվանումը պատմության մեջ մնացել է ԽՍՀՄ զինված ուժերի, ՆԳ նախարարության զորքերի և Ադրբեջանի միլիցիայի հատուկ ջոկատայինների հաղորդագրությունների «Կոլցո» («Օղակ») ծածկանունով:

<sup>2</sup> Գետաշենցիներն ունեին 1 ձեռքի գնդացի, 4-5 ավտոմատ, ինչպես նաև մոտ 150 որսորդական իրացան, սակայն դրանք ՀՏ և ՀՕՊ միջոցներ չեն:

<sup>3</sup> Այս մասին տես սույն գլխի առաջին ակնարկը:




Արարատի շրջանի Երասխավան գյուղի վրա հարձակումը հետ մղելիս՝ 1990թ. հունվարին զոհվեց ԶԶ ազգային հերոս Սովսես Գորգիսյանը



ԶԶ ազգային հերոս Ջիվան Աբրահամյան (1961-1991թթ.)



Գետաշենի ինքնապաշտպանության հրամանատար, ԶԶ ազգային հերոս Թաթուլ Կրպեյան (1965-1991թթ.)



Գետաշենի ինքնապաշտպանության մասնակից Սիմոն Աշիկյոյան (1939-1991)

**Տեղեկանք.** «Հայաստանի Հանրապետությունն իր անվտանգությունը և սահմանների պաշտպանությունն ապահովելու նպատակով ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ»:

**Հատված ԶԶ Անկախության հռչակագրից**

Այս իրավական հիմքի վրա սեպտեմբերի 20-ին ստեղծվում է ԶԶ ներքին զործերի նախարարությունը կից Հատուկ գունդը՝ ԶԶ զինված ուժերի առաջնակը և ապագա կանոնավոր բանակի կորիզը: Այն ուներ 26 վաշտ, որոնք կռվել են ԶԶ և ԼՂՀ գրեթե բոլոր ճակատներում, իսկ գումարտակի հրամանատար Ջիվան Աբրահամյանին հետմահու շնորհվել է ԶԶ ազգային հերոսի կոչում:

*1991թ. սեպտեմբերի 2-ին հռչակվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, իսկ սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի Հանրապետության անկախությունը:*

1991թ. դեկտեմբերի վերջին ԼՂՀ-ում տեղակայված ԽՍՀՄ ներքին զորքերի ստորաբաժանումները, իսկ մարտին՝ նախկին խորհրդային 366-րդ գունդը հեռանում են Արցախից: Դրան զուգահեռ՝ իրավիճակն անմիջապես սրվում է, քանի որ Արցախն ու Ադրբեջանը մնում են դեմ հանդիման: Թեև Ադրբեջանն ուներ թվական բազմապատիկ զերակշռություն և իր տարածքում տեղակայված նախկին խորհրդային 4-րդ բանակի աջակցությունը, նախաձեռնությանն իսկույն տիրում են ԼՂՀ ինքնապաշտպանական ջոկատները, որոնք հայաստանյան կամավորական ջոկատների հետ միասին սկսում են Արցախի տարածքում գտնվող ադրբեջանական հեռակետերի աստիճանական ոչնչացումը:

1992թ. հունվարի 28-ին ստեղծվում են ԶԶ պաշտպանության նախարարությունը և առաջին



**Գեներալ-լեյտենանտ  
Նորատ Տեր-Գրիգորյանց**



**Գեներալ-գնդապետ  
Սիբայել Հարությունյան**



**Գեներալ-գնդապետ  
Յուրի Խաչատուրով**

երեք զորամասերը: Նրանցից բացի, Պաշտպանության նախարարության կազմում ընդգրկվում է նաև Սահմանապահ գնդի վերակազմավորված Հատուկ զուևնդը: ՀՀ պաշտպանության նախարար է նշանակվում Վազգեն Սարգսյանը, զինված ուժերի գլխավոր շտաբի պետ՝ այսօր պահեստի գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանը: Փետրվարի 24-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում է ընդունում ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի (ԻՊՈւ) ստեղծման մասին: Ինքնապաշտպանության կոմիտեի (ԻՊԿ) նախագահ է նշանակվում այսօր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ԻՊՈւ հրամանատար՝ այսօր պահեստի գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը, շտաբի պետ՝ այսօր պահեստի գեներալ-մայոր Ֆելիքս Գզոյանը: Հետագայում Արկադի Տեր-Թադևոսյանին փոխարինում է Սամվել Բաբայանը:

Այս ընթացքում Հայրենիքի կանչով արդեն Հայաստան էին եկել և ՀԲ-ում ծառայության անցել նախկին խորհրդային բանակի հայ սպաներ, ովքեր հսկայական ներդրում են ունենում ինչպես մարտական գործողությունների նախապատրաստման և վարման, այնպես էլ կանոնավոր զինված ուժերի ստեղծման գործում: Նրանք են՝ այսօր գեներալ-գնդապետներ Գուրգեն Դալիբալթայանը, Միքայել Հարությունյանը, Յուրի Խաչատուրովը, Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանը, գեներալ-լեյտենանտներ Նորատ Տեր-Գրիգորյանցը, Հրաչ Անդրեասյանը, Անատոլի Զինկիչը, Մկրտիչ Աբրահամյանը, Էնրիկո Ապրիանովը, Միքայել Գրիգորյանը, Մուրադ Սարգսյանը, Ստեփան Միրզոյանը, Վալերի Գրիգորյանը, Հայկազ Բաղմանյանը, Ստեփան Գալստյանը, գեներալ-մայոր Արտուշ Հարությունյանը և ուրիշներ:

1992թ. վերջին տասնօրյակը գոյամարտում ուժերի հետագա լարման նոր փուլի սկիզբն է դառնում. հունվարի 21-ի լույս 22-ի գիշերը լռեցվում է Կրկժան (Կարկառաշեն) թաղամասում ամրացած ադրբեջանական Օմոնի հենակետը, իսկ 24-26-ը շարունակվում է Քարինտակ գյուղի հերոսամարտը: Փետրվարի 26-ին ազատագրվում են Խոջալուն և նրա մերձակայքում գտնվող օդանավակայանը, մայիսի 8-ին՝ Շուշի բերդաքաղաքը՝ Ստեփանակերտի բնակչությանը փրկելով դանդաղ ոչնչացման սպառնալիքից: Շուշիի ազատագրումով ավարտվում է Արցախյան ազատամարտի կամավորական շրջանը:

Միաժամանակ, սկսվում է զինված ուժերի զորատեսակների և կենտրոնական ենթակայության զորամասերի ձևավորումը, զինվորական ավիացիայի և ՀՕՊ համակարգի ստեղծումը: Պատկերացնելու համար, թե զորատեսակների ստեղծումը որչափ դժվարին գործընթաց էր, նշենք, որ օդուժի բարբարոսական ռմբակոծություններին ենթարկվող ԼՂՀ-ում ՀՕՊ իրական համակարգ ընդհանրապես չկար: Ի դեպ, մինչ մայիսյան հաղթական զինադադարի հաստատումը ոչնչացվել է օդային հարձակողական շուրջ երեք տասնյակ միջոց:

Խոջալուն և Շուշին կորցնելուց հետո Ադրբեջանում սկսված ներքաղաքական ճգնաժամի արդյունքում Բաքվում իշխանության է գալիս Ադրբեջանի ժողովրդական ճակատը, որի ղեկավար Ա.Էլչիբեյն ընտրվում է պետության նա-

խագահ: Նա կարճ ժամանակում կենտրոնացնում է բոլոր ուժերը, Գյանջայուն (Գանձակ) տեղակայված նախկին խորհրդային 23-րդ դիվիզիայի վարձկան ստորաբաժանումների և շուրջ 150 միավոր զրահատեխնիկայի աջակցությամբ անցնում հզոր հարձակման: Հակառակորդը գրավում է Շահունյանի շրջանը, ապա Սարտակերտի շրջանի մեծ մասը, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ Արծվաշենը:



**ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի նախագահ (1993-1994թթ.) Ռոբերտ Քոչարյանը (ձախից առաջինը) Մոնթե Մելքոնյանի, Բակո Սահակյանի և Սամվել Բաբայանի հետ**



**Սերժ Սարգսյան  
ԼՂՀ Պաշտպանության  
կոմիտեի նախագահ  
(1989-1993թթ.)**



**Լևոն Տեր-Պետրոսյան  
ՀՀ առաջին նախագահ  
(1991-1998թթ.)**



**Աշոտ Մանուչարյան  
ՀՀ նախագահի ազգային  
անվտանգության  
հարցերով գլխավոր  
խորհրդական (1992թ.)**

Ծանր մարտերի և հերոսական դիմադրության գնով ճակատի գիծն աշնանն ի վերջո կայունանում է Առաջաձորի ենթաշրջանում, իսկ ռազմաճակատի մյուս հատվածներում հակառակորդը որևէ լուրջ հաջողության չի հասնում. ընդհակառակը, հատկապես Մարտունու շրջանում կորցնում է ռազմավարական վերջին հենակետերը: Ամռան-աշնան ամիսներին հակառակորդը զգալի հաջողությունների է հասնում նաև Լաչինի մարդասիրական միջանցքում, սակայն հոկտեմբերին, անցնելով հակահարձակման, հայկական ուժերը վերագրավում են կորցրած դիրքերն ու ապահովում Գորիս-Ստեփանակերտ ավտոճանապարհի անվտանգությունը:

1993թ. հունվարից մինչև մարտի վերջն ազատագրվում է Մարտակերտի շրջանի տարածքի մեծ մասը, մարտի վերջին և ապրիլի առաջին օրերին փայլուն իրականացվում է Քելբաջարի՝ պատմական Քարվաճառի ազատագրման գործողությունը: Դրանից հետո ԻՊՈւ-ն ձեռնամուխ են լինում Արցախի շուրջ անվտանգության գոտու ձևավորմանը: Յուլիսի 23-ին ոչնչացվում են Ադրբեջանի մեծությամբ չորրորդ քաղաքի՝ Ադդամի հենակետերը, իսկ օգոստոսից մինչև նոյեմբեր՝ Ֆիզուլու, Ղուբաթլուի և Ջանգելանի հենակետերը՝ ապահովելով Արցախի հարավային հատվածի և Սյունիքի անվտանգությունը:

*1993թ. նոյեմբերին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը վերակազմավորվում են ԼՂՀ պաշտպանության բանակի (ՊԲ):*

Ադրբեջանում վերստին սկսված ներքաղաքական ճգնաժամի և լիակատար քաոսի պայմաններում իշխանության է գալիս փորձառու պետական գործիչ, խորհրդային տարիներին Ադրբեջանի ղեկավար Յ.Ալիևը, որը, ունենալով նաև արտաքին և առանձնապես Թուրքիայի անթաքույց աջակցությունը, կարճ ժամանակում սպառազինության, հատկապես զրահատեխնիկայի մեծաքանակ



**ՀՀ պաշտպանության առաջին նախարար Վազգեն Սարգսյան (1959-1999)**



**Գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյան**

գնումներ իրականացնելով, ինչպես նաև հավաքագրելով մի քանի հազար վարձկաններ, դեկտեմբերի 18-ից հզոր հարձակում է ձեռնարկում բոլոր ճակատներում և Մարտակերտի, Օմարի լեռնանցքի ու հարավարևելյան ուղղություններում հասնում ժամանակավոր հաջողությունների: Սակայն հունվարի վերջին այդ հարձակումը հայկական ուժերի անձնուրաց կմվի շնորհիվ ձախողվում է, և իրավիճակը բոլոր ռազմաճակատներում կայունացվում է:

Անցնելով հակահարձակման՝ հայկական ուժերը փետրվարի 18-ին ազատագրում են Օմարի լեռնանցքն ու ոչնչացնում հակառակորդի քելբաջարյան խմբավորումը, ապա հարավարևելյան ու արևելյան ուղղություններում իրականացնում դիրքերի բարելավմանը միտված մի շարք փայլուն գործողություններ՝ ոչնչացնելով բազմաթիվ հենակետեր: Ապրիլի 12-ին Մարտակերտի ճակատում անցնելով հակահարձակման, այսօր պահեստի գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանի հրամանատարությամբ գործող 5-րդ կամավորական բրիգադի ստորաբաժանումներն ազատագրում են Մատաղիսը, իսկ երկու օր անց՝ Թալիշը: Մարտակերտի արևելյան հատվածում և Աղդամի ուղղությունում ծանր մարտերով առաջ էին շարժվում նաև ԼՂՀ ՊԲ ստորաբաժանումները՝ ազատագրելով Մարտակերտի դաշտային հատվածում 1992թ. զավթած վերջին բնակավայրերը:

# ԲՈՒՉԼՈՒԽ, ՄԱՆԱՃԻՂ ԵՎ ԷՐՔԵՋ ԳՅՈՒՂԵՐԻ ԱՉԱՏԱԳՐՈՒՄԸ (1991Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-18)


Գետաշենի անկումից հետո առանձնահատուկ կարևորություն է ստանում Շահումյանի շրջանի հայկական գյուղերի պաշտպանության խնդիրը: Դրա համար դեռևս 1989թ. այստեղի գյուղերում կազմավորված ջրկատներին օգնելու է շտապում ռազմական համբավ ձեռք բերած «Մեծն Տիգրան» աշխարհագորային գունդը, որի հրամանատարն էր Արմենակ Արմենակյանը: Լարված իրադրության առաջին պատասխաններից է դառնում Վալերի Բաղյանի գլխավորությամբ Ազգային խորհրդի ձևավորումը, ինչպես նաև ինքնապաշտպանության շտաբի ստեղծումը (ուժերի հրամանատար է նշանակվում Շահեն Մեղրյանը):



Շահումյանի շրջանի ինքնապաշտպանության ղեկավար Շահեն Մեղրյան (1952-1993թթ.)

Հմտորեն կազմակերպված ինքնապաշտպանության շնորհիվ Շահումյանի շրջանում պաշտպանական գործողությունները բավական հաջող էին, սակայն «Օղակ» օպերացիայի ընթացքում մարտերը սաստկանում են: Փոքրաթիվ և մարտական տեխնիկա չունեցող ինքնապաշտպանական ուժերը չեն կարողանում խոչընդոտել շրջանի գյուղերի լիակատար շրջափակմանը: Ադրբեջանցիները գրավում են շրջանի հյուսիսարևմտյան Բուզլուխ, Մանաշիղ և Էրքեջ գյուղերը: Դրանց ազատագրման գործողությունն իրականացվում է սեպտեմբերի 14-18-ին:

Գործողությանը մասնակցում էր Արցախի Շահումյանի ու Մարտակերտի և ՀԽՍՀ տարբեր շրջանների 120 ազատամարտիկ՝ Ֆելիքս Գզոդյանի, Շահեն Մեղրյանի



Վլադիմիրովի 14,5 մմ տրամաչափի տանկային գնդացիրը (ԿՊՎՏ) ունի նաև հետևակի աջակցության համար նախատեսված տարբերակ՝ հաստոցի վրա: Ինքնապաշտպանական ջրկատների համար այս գնդացիրը հաճախ լրացնում էր հրետանու պակասը:

և Մոնթե Մելքոնյանի ղեկավարությամբ: Գրոհող ջոկատներն ունեին ՀՄՍ 1-ի «Գրոհ» տիպի 73 մմ տրամաչափի հարթափող հրանոթ և մեկ ԿՊՎՏ գնդացիր:

Մարտավարության տեսանկյունից ուշագրավ էր սեպտեմբերի 14-ին կազմակերպված գիշերային մարտը, որով պայմանավորվում է ամբողջ հարձակման հաղթական ելքը:

Խնդիրն այն էր, որ մարտի նախօրյակին ադրբեջանցիները հասցրել էին ինժեներական առումով լավ ամրապնդել դիրքերը և ամրանալ հայաթափված գյուղերից հարավ և հարավ-արևելք՝ Շամփրապտուկ ու հարևան բարձունքների վրա: Նրանց պաշտպանությունը կազմակերպված էր տեղանքը հնարավորինս օգտագործելով, որն ուղղակի բացառում էր ճակատային հարվածով հաջողության հասնելու հնարավորությունը: Բացի այդ, հակառակորդը մեծաթիվ էր (հայկական կողմի տվյալներով՝ հակառակորդի խմբավորումը նվազագույնը 140 հոգանոց էր), ուներ 1 հետևակի մարտական մեքենա (ՀՄՍ), 1 զրահափոխադրիչ (ՁՓ), 2 խոշոր տրամաչափի և 2 ձեռքի գնդացիրներ:



**Մոնթե Մելքոնյան**  
(Ավր,  
25 նոյեմբերի 1957թ. -  
12 հունիսի 1993թ.)

### **Հաղթանակը**

Մարտի մտահղացման հիմքում դրվում է հակառակորդին ապակողմնորոշելը: Այդ նպատակով հարձակումը սկսվում է գիշերը և իրականացվում թևերից ու ոչ կենտրոնից, ինչպես ակնկալում էր հակառակորդը: Թևերի վրա միաժամանակյա գրոհով նախատեսվում էր շրջապատման սպառնալիք ստեղծել: Այս նպատակին էր ծառայելու նաև ադրբեջանցիների թիկունք ուղարկված շրջանցող ջոկատը, որին հրամայվում է գրավել Բուզլուխից դեպի ադրբեջանցիների դիրքերը տանող ճանապարհը և կտրել առաջին գծի ստորաբաժանումների մատակարարման հիմնական ուղին:

Հատկապես բարդ էր շրջանցող ջոկատի խնդիրը, որի իրականացման համար ընտրվում է 12 կամավոր: Այս ջոկատը հարձակման նախորդ օրը հակառակորդի համար աննկատ կարողանում է



**Գեներալ-մայոր**  
**Ֆելիքս Գգոյան**

գրավել ճանապարհի՝ իրեն ցույց տրված հատվածը, իսկ մարտի ընթացքում ոչնչացնում դեպի ադրբեջանական դիրքերը շտապող ՈւԱԶ տիպի մեկ և զինամթերքով բեռնված բեռնատար երկու ավտոմեքենա:

Ադրբեջանցիների գործողությունները շարունային էին, հետևաբար՝ կանխատեսելի: Այդ պատճառով լրացուցիչ պարզաբանման կարիք ունի դիրքերին օգնության եկողների ճանապարհը շրջանցող ջոկատով փակելու հարցը: Խնդիրը հետևյալն էր. զավթված հայկական գյուղերում ամրանալու նպատակով սկզբնական շրջանում հակառակորդն առավելագույն քանակով զինապաշար էր կուտակում դիրքերում՝ դրանք հենակետերի վերածելով: Այդ կրակակետերն էին ազատամարտիկների առաջին ոչ մեծ գրոհների թիրախները: Գիշերային հարձակումներով կրակակետերը լռեցրած ազատամարտիկները հաճախ չէին հասցնում ամրանալ նոր բնագծերում, բայց նույնիսկ նահանջելով՝ նրանք իրենց հետ տանում էին որպես ավար վերցված զինամթերքը:


Ադրբեջանցիները «կռահել» էին, որ զինամթերքի սուր կարիք զգացող հայկական ջոկատների համար այդ պաշարին տիրանալը պակաս կարևոր չէ: Մեծաքանակ սպառազինության կորուստը կանխելու նպատակով նրանք պարզամիտ հնարքի են դիմում. կրակակետերում պահվող զինամթերքի քանակը նվազեցվում է, բայց մոտակա բնակավայրերում ստեղծվում են զինապահեստներ՝ օգնության հասնելու պատրաստ պահվող բարձրված հերթապահ ավտոմեքենաներով:

Հակառակորդի պաշտպանության թիկունքում ճանապարհային ցանցի վերլուծությունը վկայում էր, որ այսպիսի բազային բնակավայրի դեր կարող է կատարել Բուզլուխը (տե՛ս սխեմա 1): Գյուղի դպրոցը գորանոցի վերածած ադրբեջանական ստորաբաժանման և կրակակետերի միջև կապը կտրելու խնդիրն էլ դրված էր շրջանցող ջոկատի վրա:

Ի՞նչ ուժերը թևային գրոհներով հակառակորդին դուրս են շարտում բարձունքներից: Կենտրոնում հարմար դիրքեր զբաղեցրած և գրոհի պատրաստված ադրբեջանական ամենամեծաթիվ ստորաբաժանումը փաստացի անգործության է մատնվում: Ավելին, թևերում և թիկունքում սկսված փոխհրաձգության սաստկացումից խուճապի մատնվելով՝ այն առաջինն է թողնում դիրքերն ու նահանջում:

Շուտով խուճապը փոխանցվում է մյուս ստորաբաժանումներին, որոնք թեև հանկարծակիի էին եկել, բայց փորձում էին շարունակել դիմադրությունը: Նահանջի սկզբից ևեթ հակառակորդը հայտնվում է մարտավարական առումով ծայրահեղ իրավիճակում, քանի որ մինչև Բուզլուխի ու Մանաշիդի տներին հասնելը՝ անհնար էր լինելու կասեցնել գազաթներից գրոհող ինքնապաշտպանական ջոկատների առաջխաղացումը: Նախքան լուսաբացը հակառակորդը դուրս է մղվում բոլոր բարձունքներից և սկսում անկազմակերպ հետ քաշվել Բուզլուխից, իսկ սեպտեմբերի 15-ին ստիպված առանց դիմադրության թողնում է նաև Մանաշիդը: Բարձունքները պաշտպանող ադրբեջանցիների խու-

Սխեմա 1



ԲՈՒՋԼՈՒԽ, ՍԱՆՍՈՒՂ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԳՅՈՒՂԵՐԻ ԱՉՍԱԳՐՈՒՄԸ 1991Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-18

Ճապի մասին է վկայում այն փաստը, որ հայկական կողմն առաջին մարտում տալիս է 3 զոհ, իսկ ադրբեջանցիները՝ 15: Փախչող հակառակորդից առգրավվում է նաև զգալի քանակությամբ ռազմավար:

Դժվար է գերազնահատել այս բարձունքների օպերատիվ նշանակությունը, քանի որ դրանով ձախողվում էր հյուսիսում հակառակորդի ռազմական գործողությունների ամբողջ համակարգը, և բնական է, որ հակառակորդը ոչ մի կերպ չէր ցանկանում հաշտվել տարածքների կորստի հետ: Համալրում ստանալով՝ նա կատաղի հակազորիներ է սկսում: Սեպտեմբերի 15-ի երեկոյան և 16-ին Ինքնապաշտպանական ուժերը երեք գրոհ են կատարում:

Ջարգացնելով հաջողությունը՝ սեպտեմբերի 18-ին ազատագրվում է նաև Էրբեջը:

Ամբողջ գործողությունն, այսպիսով, ավարտվում է Ինքնապաշտպանական ուժերի հաղթանակով, որի գրավականը եղան հանկարծակիության գործոնը, շրջանցող ջոկատի նպատակասլաց օգտագործումը և մարտի ճիշտ կազմակերպումը: Այդ ամենի շնորհիվ հնարավոր եղավ փոքրաթիվ ուժերով ջախջախել թվապես գերակշռող հակառակորդին:

Սա առաջին ծրագրված և կազմակերպված մարտական գործողությունն էր, երբ ազատագրվեցին զավթված տարածքներ: Այս հարձակման ընթացքում էր, որ Արցախյան գոյամարտի իր մկրտությունն է ստանում ՀՀ ազգային և ԼՂՀ հերոս, լեգենդար Մոնթե Մելքոնյանը՝ Ավոն:

# ՇՈՒՀԻԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ (1992Թ. ՄԱՅԻՍԻ 8-9)

1991-ի նոյեմբերից ի վեր Շուշիից արձակվող հրթիռները (մինչև 1992-ի մայիսի 8-ը՝ շուրջ 15.000 արկ և հրթիռ) ավերում էին ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտը:

1992թ. փետրվարի 27-ին՝ Խոջալուի ազատագրման հաջորդ օրը, ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի հրամանատար, գեներալ-մայոր Արկաղի Տեր-Թադևոսյանի ղեկավարությամբ կայանում է խորհրդակցություն: Հաշվի առնելով, որ Շուշիի մատույցները երիզող կրակակետերն ունեն շուրջ 35 կիլոմետր ձգվածություն, որոշվում է ստեղծել հարվածային խմբավորումներ և քաղաքը գրոհել չորս ուղղությամբ: Արցախի Ինքնապաշտպանության ուժերի հետախուզությունն արդեն ճշտել և արձանագրել էր բոլոր նշանակետերը՝ հակառակորդի շտաբները, հենակետերը, հրետանային կայանքները, ազդականչերը և անցկացրել քարտեզի վրա, կատարել բոլոր հաշվարկները: Ըստ հետախուզության տվյալների, Շուշիում տեղակայված էր 2.800 հոգանոց ադրբեջանական խոշոր զորախումբ, այդ թվում նաև Ադրբեջանում ամենամարտունակը համարվող «777» գունարտակը, որ կազմված էր «աֆղանցիներից»: Զորախմբի



Արցախյան ազատամարտի հերոս  
Արկաղի Տեր-Թադևոսյան (Կոմանդոս)



Գեներալ-գնդապետ  
Գուրգեն Դալիբալթյան



Գեներալ-լեյտենանտ  
Լեոնիդ Մարտիրոսով



Վալերի Զիբեյան  
(1956-1995թթ.)



Աշոտ Դուլյան  
(Բեկոր, 1959-1992թթ.)

հրամանատարը Մեհմեդովն էր, որը 1992թ. հունվարի 26-ին ջախջախիչ պարտություն էր կրել Քարինտակում և հիմա ցանկանում էր իրեն արդարացնել:

Հայ հրետանավորները Շուշին բաժանեցին երեք մասի՝ համազարկային կրակով հատված առ հատված խփելու համար, որպեսզի մեծ տարածք խոցվեր, ապա նշանակետերի վրա աշխատեցին բոլոր կայանքները: Իսկ առաջին գծից երկու կիլոմետր հեռավորության վրա՝ Սղնախի ու Քարինտակի միջև, դաշտային հոսափտալ տեղակայվեց:



**Գեներալ-գնդապետ  
Սեյրան Օհանյան**

**Գործողության  
Նախապատրաստումը**

Շուշիի գրավումը նախատեսվել էր ապրիլին, բայց եղանակային պայմանների և այլ գործոնների պատճառով մի քանի անգամ հետաձգվեց: Ապրիլին Ստեփանակերտ եկան ՀՀ պաշտպանության նախարարի 1-ին տեղակալ և զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Գուրգեն Դալիբալթայանը, զինված ուժերի գլխավոր շտաբի օպերատիվ վարչության պետ Լեոնիդ Մարտիրոսովն ու այլ բարձրաստիճան զինվորականներ:

Պատրաստվել էր տեղանքի մակետը, որի վրա ջոկատների հրամանատարների և հրետանավորների հետ պլանավորում և մշակում էին ապագա գործողությունները: ՀՀ զինված ուժերում Շուշիի ազատագրման ժամանակ առաջին անգամ ստեղծվեց հրետանու խմբավորում՝ կազմված երեք «Դ-30» հաուբիցներից, երեք 120 միլիմետրանոց ականանետերից, համազարկային կրակի երկու «Գրադ» (ԲՄ-21) ռեակտիվ կայանքներից և մեկ «ԿՍ-19» 100 միլիմետրանոց հրանոթից: Հետևակի հետ էլ մի քանի 82 միլիմետրանոց ականանետեր կային:

Ապա ընտրեցին հրետանու կրակադիրքերը և որոշեցին, թե կրակելուց հետո որ կայանքն ուր պիտի տեղափոխվի: Շուտով ստացվեցին կապի առաջին քսան «Ալինկո» դյուրակիր գերկարճալիք ռադիոկայանքները, որոնք գրոհի նախօրեին բաժանվեցին ջոկատների հրամանատարներին: Դրանցով կապ էր ապահովվում վերադաս հրամանատարության, իսկ ԼԴՀ պայմաններում իրենց լիովին արդարացրած խորհրդային «Ռ-159» դյուրակիր ռադիոկայաններով՝ ենթակա ստորաբաժանումների հետ: Շուշիի ազատագրումը ԼԴՀ Ինքնապաշտպանության ուժերի համար կապի կազմակերպման առումով առաջին դասական գործողությունն էր: Դրա նախապատրաստությունը տևեց շուրջ մեկ ամիս:

Շուշիի ադրբեջանական զորախմբի ինժեներական-սակրավորական ծառայությունը բավական թույլ էր: Հակառակորդը համոզված էր, որ պետք է գրավի Ստեփանակերտը և ականապատմանը լուրջ ուշադրություն չէր դարձրել: Մեր

կողմից Շուշիի գրոհին ավելի քան քսան սակրավոր մասնակցեց, իսկ մի խումբը գրոհի նախօրեին շրջանցում կատարելով՝ Ջառիսլուի ուղղությունում բազմաթիվ ականներ էր տեղադրել: Բացի այդ, Շուշիի ազատագրմանը հատկապես Քոսալար-Ջանհասան հատվածում հարձակման ինժեներական ապահովման մեծ աշխատանք նախորդեց:

Հրետանավորները կրակադիրքեր մեկնեցին ապրիլի 24-ին: Մի քանի անգամ «Պատրաստություն համար 1» տվեցին, բայց կրակի հրաման չեղավ: Ապրիլի 28-ին եղանակային պայմանների պատճառով «դադար» տվեցին:


### **Ազատագրման գործողությունը**

Մայիսի 8-ի գիշերը, ժամը 2.30-ին տրվեց հարձակման հրամանը, և երկու հազար մարտիկ չորս ուղղությամբ սկսեց բերդաքաղաքի գրոհը (տե՛ս սխեման): Ստեփանակերտի ուղղությունը ղեկավարում էր գնդապետ Վալերի Չիթչյանը, Շոշ գյուղի ուղղությունը՝ ազատամարտիկ-հրամանատար, այսօր պահեստի գնդապետ Արկադի Կարապետյանը, Լիսագորի ուղղությունը՝ Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարի տեղակալ Սամվել Բաբայանը, իսկ Ջանհասան-Քոսալարի ուղղությունը՝ ՀՀ պաշտպանության ապագա նախարար Սեյրան Օհանյանը: Պահեստագործի հրամանատարն էր փոխգնդապետ Յուրա Հովհաննիսյանը՝ «26-ի Յուրան»<sup>1</sup>:

Մարտիկները համբուրվեցին, հրաժեշտ տվեցին միմյանց ու գնացին Հասանաբադի մոտ գտնվող կրակադիրքեր՝ հավատացած, որ հաղթելու են: Համագարկային կրակի առաջին կայանքը, արձակելով 40 հրթիռները, մեկնեց վերալիցքավորման: Ապա մեկնեցին պահեստային կրակադիրք՝ Խնածախի շրջակայք, և սկսեցին կրակով օգնել գրոհողներին: 40 ռոպեանոց նախապատրաստությունը կատարյալ անակնկալ էր թուրքերի համար: Հակառակորդը հիմնականում կրակում էր Շուշիի բանտի մերձակայքից (այնտեղից երեք «Գրադ» կայանք էր «աշխատում»), որին Քարինտակի կողմից պատասխանում էին 100 միլիմետրանոց «ԿՍ-19» հրանոթով: Ապա կարգադրվեց Աղզամի վրա 40 հրթիռ արձակել՝ այնտեղից հնարավոր հարձակումը կանխելու նպատակով:

Հակառակորդը բետոնե բլոկներով փակել էր գլխավոր ճանապարհը, և տանկերը շրջանցեցին այդ հատվածը: Հակառակորդը բլոկների շուրջը հող էր լցրել և ականապատել: Սակրավորները մաքրեցին տեղանքը, և զորքերը շարունակեցին ճանապարհը: Ամեն ինչ հարթ էր ընթանում, սակայն խփվեց դարաբաղյան ուժերին պատկանող տանկը, և թվաց, թե գործողությունը վտանգվել է: Բայց Արկադի Տեր-Թադևոսյանը հրամայեց դիմանալ ու սպասել: Առավոտյան ժամը 4-ին գրոհը շարունակելու հրաման տրվեց:

<sup>1</sup> Ձոհվել է 1993թ. հունիսին, Մարտակերտ քաղաքի ազատագրման մարտերում:



ՇՈՒՇԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ 1992Թ. ՄԱՅԻՍԻ 7-9 ԵՎ ԴԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԴԵՊԻ ԼԻՍԱԳՈՐ

Ինքնապաշտպանության ուժերի կապի պետ, հետագայում գեներալ-մայոր Արթուր Փափազյանը թեև վիրավորվել էր, սակայն հարձակողական գործողության ընթացքում կարողացավ անխափան կապ ապահովել հրամանատարության և բոլոր ստորաբաժանումների միջև: Վերջին գրոհի հրամանն Արկադի Տեր-Թադևոսյանը բոլոր զորքերին անձամբ հաղորդեց՝ հորդորելով կատարել վերջին ճիգը Շուշին ազատագրելու համար: Ու ջոկատներն առաջ գնացին:

## **Հաղթանակը**

Առավոտյան ազատագրվեցին Քոսալարի և Ջանհասանի բարձունքները: Կեսօրին քաղաքի պաշտպանությունը հյուսիսից և արևելքից ճեղքվեց: Աշոտ Ղուլյանի (Բեկոր) վաշտն առաջիններից էր, որ մտավ քաղաք: Կռիվներն արդեն մղվում էին Շուշիի շուկայում և քաղաքի կենտրոնական մասում: Իսկ Քիրս լեռան ուղղությամբ գործող կամավորական ջոկատները, գրավելով կարևոր բարձունքները, սկսեցին վերահսկել Շուշի-Լաչին (Բերձոր) ավտոճանապարհը, ինչը խուճապ առաջացրեց հակառակորդի շարքերում: Երևացին ադրբեջանական ինքնաթիռները և ուղղաթիռները, բայց ապարդյուն... Հակառակորդն արդեն տարբեր ճանապարհներով փախչում էր ազատագրվող բերդաքաղաքից:

Մայիսի 10-ին Ստեփանակերտի երկնքում հայտնվեց ադրբեջանական զինված ուժերի Սու-25-ը, որն ադրբեջանցի օդաչու Վազիֆ Կուրբանովը (ի դեպ, 1992թ. հունիսի 13-ին «Ստրելա-2» և ՋՍՈւ 23/4 կայանքներով խոցվեց Ասկերանի երկնքում) մեկ ամիս առաջ Սիթալչայի ռազմական օդանավակայանից փախցրել էր Եվլախ, և ԼՂՀ մայրաքաղաքն առաջին անգամ ենթարկվեց օդային հարվածի: Բայց զոհեր չեղան: Այդ ռմբահարումը Ստեփանակերտի օդային ռմբակոծումների նախերգանքն էր:

Նույն օրն ադրբեջանական բանակը մի քանի տասնյակ տանկերի և զրահամեքենաների աջակցությամբ հզոր հարձակում ձեռնարկեց Ասկերանի հատվածում, անգամ մտավ սահմանամերձ մի քանի բնակավայրեր, բայց հետ չպրտվեց:

Չնայած հակառակորդի տանկերն ու շարժական հրետանին հասցրել էին հեռանալ, բայց Շուշիում թողել էին վեց հրետանային կայանք և հազարավոր արկեր ու հրթիռներ: Իսկ առջևում Բերձորի (Լաչին) ազատագրումն էր...

## **Ամփոփում**

Շուշիի ազատագրումը ռազմաքաղաքական և հոգեբանական առումով շրջադարձային նշանակություն ունեցավ: Այս հաղթանակի շնորհիվ ազատագրվեց նաև Բերձորը, ինչը թույլ տվեց վերականգնել ցամաքային կապը Հայաստանի Հանրապետության հետ և այդպիսով միացնել երկու հայկական պետությունները: Վերացվեցին նաև Ստեփանակերտին, Քարինտակ և Շոշ գյուղերին ուղղված սպառնալիքները: Շուշիի ազատագրումը կարևոր էր նաև ազգային-հոգևոր առումով, քանի որ բերդաքաղաքն իր ճարտարապետությամբ, Ղազանչեցոց եկեղեցով և այլ մշակութային հաստատություններով հայ մշակութային կենտրոններից մեկն է:

## ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ (1993Թ. ՓԵՏՐՎԱՐ-ՀՈՒՆԻՍ)

1992թ. հունիսի 12-ին ադրբեջանական բանակը վարձկան անձնակազմերով, տանկերի աջակցությամբ լայնածավալ հարձակման անցավ Արցախի հյուսիսում և գրավելով ԼՂՀ Շահումյանի շրջանը, մի քանի ուղղություններով զարգացնելով հարձակումը՝ տիրացավ Մարտակերտի շրջանի մեծ մասին: Վտանգվեց Գանձասարի վանքը, իսկ հակառակորդի զրահատեխնիկան հասավ Ստեփանակերտ տանող ավտոմայրուղու մատույցներին: ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի և ՀՀ կամավորական ջոկատների ուժերի գերլարումով այս հարձակումը կասեցվեց, և փոփոխական հաջողությամբ մարտերից հետո ճակատի գիծը կայունացավ Առաջաձորի ենթաշրջանի մատույցներում:



Լեոնիդ Ազգալոյան  
(1942-1992թթ.)

### *Պաշտպանությունից անցում հակահարձակման*

1993թ. հունվարի 10-ին հակառակորդը ձեռնարկում է կատաղի հարձակում ողջ Մարտակերտից մնացած Առաջաձորի ենթաշրջանի ուղղությամբ, որը, սակայն, ձախողվում է: Փետրվարի 5-ին ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերը և ՀՀ կամավորական ջոկատները պաշտպանությունից անցնում են հակահարձակման, սկսում Մարտակերտի շրջանի ազատագրումը: Հարցն այն է, որ հակառակորդի 1992-ի ամառային-աշնանային լայնածավալ հարձակումից հետո վարձկանները հեռացել էին՝ թուլացնելով Ադրբեջանի զինված ուժերը, իսկ ԼՂՀ-ում սկսել էին կանոնավոր բանակ ստեղծել, զորատեսակներում մարտական ուսուցում իրականացնել:

Փետրվարին պարզվում է, որ անցած ամիսները կողմերը տարբեր կերպ էին օգտագործել: Մասնավորապես, Մարտակերտի պաշտպանության ծանր ամիսներին դեռ գեներալ-մայոր Քրիստափոր Իվանյանը, որը նշանակվել էր ԼՂՀ ԻՊՈւ հրամանատարի խորհրդատու, ապա՝ ԼՂՀ պաշտպանության նախարարի տեղակալ, կազմավորում է հրետանավորների պատրաստման ուսումնական կենտրոն: Ձևավորվում են նաև կենտրոնական ենթակայության դիվիզիոնները: Այդ և նման այլ քայլերը մեծապես նպաստում են արդյունավետ կազմակերպելու հակահարձակումը: Մարտակերտի պաշտպանական շրջանի ինժեներական վաշտն աշնան վերջին ականապատել էր ճակատի գիծը: Իսկ հակառակորդը հիմնականում ճանապարհներն էր ականապատել:

Հակաօդային պաշտպանության ապահովումն ավելի վաղ էր սկսվել: Միայն հունվարի 15-ին ԼՂՀ ՀՕՊ կայանքների անձնակազմերն այստեղ հակառակորդի երեք ինքնաթիռ էին ոչնչացրել և գերել երկու վարձկան օդաչու: Հունվարի 20-ին «Կրուզ» համալիրի հաշվարկը ոչնչացնում է ևս մեկ Սու-25 ինքնաթիռ:

Արցախի Մարտակերտի շրջանի հյուսիս-արևմուտքում, Սարսանգի ջրամբարի սկզբնամասում գտնվող Գետավան, Չափա բնակավայրերն ազատագրվում են Լեոնիդ Ազգալոյանի նախապատրաստած ռազմական գործողության փայլուն իրականացման շնորհիվ:

### **Ազատագրումը**

Ըստ ԼՂՀ ԻՊՈւ հրամանատարության օպերատիվ պլանի, հարձակումը պետք է իրականացվեր Վաղուհաս-Ջազլիկ-Թալիշ, Չլդրան-Դրմբոն-Կուսապատ-Մարտակերտ և Սրխավենդ-Բաշ Գյունեփայա-Մանիքլու-Ջանյաթաղ-Գյուլաթաղ-Մարտակերտ ուղղություններով (տե՛ս քարտեզ 12.1): Հակահարձակմանը մասնակցում էին Կենտրոնական պաշտպանական շրջանի, 54-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակի և ՀՀ կամավորական ջոկատները: Սակրավորները, ստուգելով ճանապարհը, մեկ օրում հասնում են Չլդրան, իսկ գիշերը, ճակատի գծից կտրվելով, անցնում Դրմբոն և նույն գիշեր վերադառնում Չլդրանի մերձակայք՝ երկրորդ անգամ արդեն զորքերի հետ գնալու առաջ, ապա սկսում են աշխատել Կճողուտի ուղղությամբ:

Ադրբեջանական օդուժը չի կարողանում իրական աջակցություն ցուցաբերել իր խուճապահար նահանջող զորքերին: Իսկ հակահարձակման առաջին փուլի ավարտին՝ մարտի 20-ին, «ՕՍԱ-ՕԿ» ՀՕՊ հրթիռային կայանքով Կուսապատի մերձակայքում խոցվում է հակառակորդի ուղղաթիռը:

Սրխավենդ - Բաշ Գյունեփայա - Օրթա Գյունեփայա - Մանիքլու - Ջանյաթաղ ուղղությամբ գործող Ասկերանի, Մարտունու և Կենտրոնական պաշտպանական շրջանների և 54-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակի ստորաբաժանումները փոխհամաձայնեցված գործողությունների շնորհիվ փետրվարի 6-ին մտնում են Սրխավենդ և հետապնդելով նահանջող հակառակորդին՝ ազատագրում նաև Բաշ Գյունեփայան:

Փետրվարի վերջին օրերին ճակատի մի երկար հատվածում Ինքնապաշտպանության ուժերի ստորաբաժանումներին փոխարինում է 5-րդ կամավորական բրիգադը, որը դիմակայում է Սարսանգի ջրամբարի ուղղությամբ հակառակորդի հակահարձակմանը և ապա շարժվելով առաջ՝ մասնակցում Մեհմանա, Մեծշեն, Ջանյաթաղ, Գյուլաթաղ, Մաղավուզ, Ջազլիկ, Ունուղլու, Կուսապատ և Մոխրաթաղ գյուղերի ազատագրմանը: Այդ մարտերում իրենց լավագույնս են դրսևորում Ազատագրական բանակի (հրամանատարներ՝ Լեոնիդ Ազգալոյան և Վլադիմիր Բալայան) մարտիկները:



Մարտակերտ քաղաքի ուղղությամբ առաջանալիս մարտիկները պայթեցրին Քարվաճառ (Քելբաջար) տանող ճանապարհը, որպեսզի այս ուղղությու-  
նից հակառակորդն օգնական ուժեր չստանար:

Քարվաճառի ազատագրումից հետո պաշտպանության ինժեներական ապահովման մեծ աշխատանք կատարվեց նաև Մարտակերտ քաղաքը հսկող բարձունքների շղթաներում, ուր փոփոխական հաջողությամբ ծանր մարտեր էին ընթանում, և սակրավորների տեղադրած ականները հակառակորդին մարդկային ուժի ու տեխնիկայի մեծ կորուստներ պատճառեցին:

### **Հաղթանակը**

Փետրվարյան հակահարձակման առաջին իսկ օրն անցնելով Կիչանի թի-  
կունք և ծանր կորուստներ պատճառելով հակառակորդին՝ Ինքնապաշտպա-  
նության ուժերը, երեք ուղղությամբ զարգացնելով հարձակումը, մեկ շաբա-  
թում ազատագրում են Չլդրանը, Ղազանչին, Պողոսագոմերը, Դրմբունը, Վա-  
ղուհասը, Չափարը, Ջարդախաչը, Հաթերքը և վերահսկողություն սահմանում  
Մարտակերտ-Քարվաճառ ռազմավարական նշանակության ավտոճանապար-  
հի վրա: Փետրվարի երրորդ տասնօրյակում ազատագրվում են Հարությունա-  
գոմերը, Կճողուտը, Գյուլաթաղը, Ջանյաթաղը, Մանիքլուն, Չինգյաթաղը, ապա  
Գետավանը, Հաթերքը (ուր հակառակորդը մեծաքանակ ուժեր և շուրջ 30 միա-  
վոր զրահատեխնիկա էր կենտրոնացրել), Ջագլիկը, Ումուղլուն:

**Տեղեկանք.** «Մարտակերտի ճակատում իրադրությունը փրկելու հա-  
մար ադրբեջանական հրամանատարությունը կատարեց զորքերի վե-  
րախմբավորում: Մարտի սկզբներին հյուսիսային ռազմաճակատի  
առաջնային գծում հակառակորդը հայկական ուժերի դեմ հանեց 2-րդ  
բանակային կորպուսի զորամասերը և ուժեղացված ստորաբաժանում-  
ների հետևյալ կազմը. 1-ին և 3-րդ մոտոհրաձգային բրիգադները, 3-րդ  
առանձին տանկային բրիգադը, ներքին զորքերի բրիգադը, Քելբաջարի  
ինքնապաշտպանական գունդը, հատուկ նշանակության գումարտակը,  
Ղազախի, Բարդայի և Մինգեչաուրի մոտոհրաձգային գումարտակները,  
ռազմական ոստիկանության գումարտակը, 2-րդ բանակային կորպուսի  
հրետանային զորամասերը, ՀՕՊ ուժերը և Ադրբեջանի ռազմաօդային  
ուժերի մարտական ուղղաթիռների ստորաբաժանումները»:

**Ա.Հասրաթյան, «Պաշտպանության բանակի  
պաշտպանական շրջանները դարաբաղյան պատերազմի  
գլխավոր ռազմագործողություններում»**

Սակայն Մարտակերտի ճակատում անգամ մեծաքանակ ուժերի կենտրոնա-  
ցումը հակառակորդին չի փրկում պարտությունից: Մարտի 3-ին Ինքնապաշտ-  
պանության ուժերն ազատագրում են Սարսանգի հիդրոհանգույցը, մարտի

վերջին՝ Մեծշենը, Մաղավուզը, Սոխրաթաղը, Յակոբ Կամարին... Իսկ մարտի 21-ին Մարտակերտի ճակատի հրետանու աջակցությամբ 5-րդ կամավորական բրիգադի ստորաբաժանումներն ազատագրում են ռազմավարական նշանակության «Պուշկի յալ» բարձունքը: Մարտակերտի հյուսիսում ռազմաճակատի գծի համեմատական կայունացումը և ամուր պաշտպանության կազմակերպումը հնարավոր էին դարձնում Առաջաձորի ենթաշրջանի և ազատագրված գյուղերի բնակչության վերադարձը:

### ***Ամփոփում***

Այս հաղթանակի շնորհիվ ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերը գերիշխող դիրքեր են գրավում Քարվաճառի (Քելբաջար) և Մարտակերտ շրջկենտրոնի ուղղություններում՝ կանխորոշելով Քելբաջարի անկումը: Ազատագրման ժամանակ հնարավոր է դառնում հարձակումը զարգացնել այնտեղից և հատկապես Գետավան-Չարեքտար ուղղությունից, իսկ Մարտակերտ շրջկենտրոնի ազատագրման ժամանակ վերանում է ավտոմայրուղով Ներքին Յոռաթաղի ուղղությամբ թիկունքից շրջկենտրոնին հարվածելու վտանգը: Նաև ի չիք են դառնում Սարսանգի ջրամբարին վերստին տիրելու հակառակորդի հույսերը, և տարածաշրջանի համար կենսական նշանակություն ունեցող ջրային պաշարները շարունակում են լիովին վերահսկել Ինքնապաշտպանության ուժերը:

Այս հաղթանակը վերացնում է նաև Առաջաձորի ենթաշրջանի, ըստ այդմ՝ Գանձասարի վանքի գրավման, ինչպես նաև Կիչանի ուղղությունում պաշտպանական գիծը ճեղքելով թիկունքից Ասկերանին հարվածելու և Ստեփանակերտ-Մարտակերտ ավտոճանապարհի Սեյդիշեն-Ստեփանակերտ հատված դուրս գալու վտանգը:

## **ՔԱՐՎԱՃԱՌԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

1993-ի գարնան սկզբին հայկական ուժերը երեք ուղղությամբ գրոհում են Վարդենիսից դեպի արևելք, Բերձորի (Լաչին) միջանցքի հյուսիսին և Մարտակերտի արևմուտքին սպառնացող Քարվաճառի դիրքերի համակարգը: Վերջինիս հետ էին հարաբերվում Լաչինի միջանցքում մղվող մարտերը, վտանգվում էր Մարտակերտի շրջանի փետրվարին սկսված ազատագրման գործողության հետագա զարգացումը, և սպառնալիք էր ստեղծվում Վարդենիսին: Արևմտյան ուղղություներում գործողությունը ղեկավարում էին ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Գուրգեն Դալիբալթայանն ու ՀՀ պաշտպանության նախարարի 1-ին տեղակալ, գեներալ-լեյտենանտ Հրաչ Անդրեասյանը, Մարտակերտի ճակատից՝ Մարտունու պաշտպանական շրջանի հրամանատար Ավոն՝ Մոնթե Մելքոնյանը, իսկ միջանցքի կողմից՝ ՀՀ սահմանապահ զորքերի հրամանատար Յուրի Խաչատուրովը (ապագա գեներալ-գնդապետ և ՀՀ ՁՈւ գլխավոր շտաբի պետ):

### ***Հետախուզություն և հարձակման նախապատրաստում***

Վարդենիսին սպառնացող կրակակետերի հրետանային հետախուզությունն իրականացվում է հունվարին: Իսկ մարտին սկսվում են հրետանու՝ հիմնականում ԲՄ-21, Դ-20, Դ-30 և ինքնագնաց հրետանային կայանքների կրակադիրքերի զբաղեցումն ու նախապատրաստումը երեք՝ Ջողի, Ազիզլուի և Ջարքենդի ուղղություններում:

Արևմտյան ճակատի հրետանու գործողությունները համակարգում էր հրթիռային զորքերի և հրետանու վարչության շտաբի պետ, գնդապետ Լևոն Միքայելյանը: Մարտակերտում տեղաբաշխված 5-րդ կամավորական բրիգադի հետախուզության վաշտը՝ բրիգադի շտաբի պետ, փոխգնդապետ Յուրա Հովհաննիսյանի անմիջական ղեկավարությամբ, իրականացնում է արևելյան ճակատի դժվարին և մեծածավալ հետախուզությունը, իսկ հարձակման ժամանակ, որպես հարվածային ստորաբաժանում, առաջինը ճեղքում ճակատի գիծը:

Արևմտյան ուղղությունում հարձակմանը մասնակից զորքերի դասավորության որոշումից անմիջապես հետո, 1993-ի դաժան ձմռանը բարձրադիր այդ հատվածում կապավորների ջանքերով մեկ ամսում ամենուր գծալարային կապ է անցկացվում: Մարտակերտի ճակատում ևս նման համակարգ էր ստեղծվել, ինչի շնորհիվ գործողության նախօրեին ապահովվում է կապի գաղտնիությունը:

1992-ի վերջին ադրբեջանական հրամանատարությունը փորձել էր Վարդենիսը դարձնել օդային հարվածների թիրախ, բայց հաջողության չէր հասել: Դրանից հետո Քարվաճառի սահմանագծում երկու «ՕՍԱ-ՕԿ» կայանքներ են տեղակայվում, իսկ 1992թ. դեկտեմբերի 11-ին Վարդենիսի օդային տարածքում ոչնչացվում է հակառակորդի ՄԻԳ-25 ինքնաթիռը:

## ***Մտահղացման առանձնահատկությունները***

Մարտակերտ քաղաքը դեռ չէր ազատագրվել, Պուշկի յալի և հեռուստաաշտարակի բարձունքներում ծանր կռիվներ էին, և հակառակորդը չէր սպասում, թե հայկական ուժերը կգրոհեն Քարվաճառը: Բացի այդ, հակառակորդին անակնկալի բերելու համար Աղդաբանի կողմից շրջանցիկ ճանապարհ է կառուցվում: Հակառակորդի համար անսպասելի էր նաև, որ հայկական ուժերը վաղ գարնանը կկարողանան հաղթահարել լեռնային և ձյունով ծածկված այդ տարածքները: Այնինչ, այդ հատվածում հանգամանակի հետախուզություն էր իրականացվել, և ադրբեջանական զորախմբին հարվածն անսպասելի ուղղությունից է հասցվում:

Միաժամանակ, 5-րդ կամավորական բրիգադի ստորաբաժանումներն ու ինքնապաշտպանության ուժերի հրետանու մի մասը մնում են պաշտպանելու Մարտակերտի ողջ ճակատն ու հատկապես Դրմբոն և Կուսապատ տանող ճանապարհը, որպեսզի հակառակորդը չկարողանար անցնել Քելբաջարը գրոհող զորքերի թիկունքը:


Լաչին-քելբաջարյան զորախմբին լիակատար գաղտնիության պայմաններում նախապատրաստված համաժամանակյա հարված է հասցվում արևմտյան՝ Վարդենիսի, արևելյան՝ Մարտակերտի և հարավային՝ Բերձորի (Լաչին) մարդասիրական միջանցքի ուղղություններից: Բաց է թողնվում միայն դեպի Օմարի լեռնանցք տանող նահանջի ճանապարհը:

## ***Ազատագրման գործողությունը***

Քարվաճառի շրջանի ազատագրման գործողությունը սկսվում է 1993թ. մարտի 27-ին: Հրետանային պատրաստությունը տևում է շուրջ 40 րոպե: Չդիմանալով մի քանի ուղղություններով զարգացող սրընթաց հարձակմանը՝ հակառակորդը սկսում է նահանջել: Միայն մի անգամ է հրետանային հարված հասցվում Օմարի լեռնանցքի ուղղությամբ: Հարցն այն է, որ օգտվելով խաղաղ բնակչության անվտանգ հեռանալու համար հարձակումը կանգնեցնելուց, հակառակորդը փորձում է ծանր տեխնիկան դուրս բերել ընկնող շրջանից: Ճանապարհի վրա ռեակտիվ հրետանու մեկ համազարկի արձակումով այդ փորձը ձախողվում է:

Հարձակումը զարգանում էր նաև Մարտակերտի ուղղությունից, և Ինքնապաշտպանության ուժերի շտաբը նախօրեին տեղափոխվում է Դրմբոն: Մարտի 27-ից մինչև մարտի 30-ը ոչնչացնելով Աղդաբանի, Չարեքտարի, Նարեշտարի, Թազաքենդի, Բաղրլուի, Քեչիլդայայի և Չորմանի հենակետերը՝ ղարաբաղյան ուժերը ճեղքում են հակառակորդի պաշտպանությունը և սկսում զարգացնել հարձակումը՝ հընթացս ազատագրելով Դադիվանքը: Հակառակորդը խուճապահար փախչում է (տե՛ս քարտեզ 12.2):

### ՔԵԼԲԱՋԱՐԻ ՇՐՋԱՆԻ ԱՁԱՏԱԳՐՈՒՄԸ (1993Թ. ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ)



Գործողության սկզբում ուղղաթիռների օդակը, որի հրամանատարը Բորիս Բաբայանն էր, Չարեքտարի ուղղությունում օդից հրթիռային հարվածներով ոչնչացնում է հակառակորդի հակատանկային միջոցները, և մեր զորքերին հնարավորություն տալիս ճեղքելու պաշտպանությունը: Իսկ հետո, երբ ադրբեջանական բանակը բնակչությունից առաջ ընկած՝ փախչում էր, անձնակազմերից մեկը վերստին օդ է բարձրանում՝ հիվանդանոց հասցնելով վիրավոր ադրբեջանուհուն:

Քարվաճառի ազատագրման ժամանակ հակառակորդի օդուժն անկարող էր եղել աջակցել իր անկանոն փախչող զորքերին, իսկ ապրիլի 2-ին կորցնում է զորքերի Լաչին-քելբաջարյան խմբավորման հրամանատարությանը տեղափոխող գերբեռնված ուղղաթիռը: Ապրիլի 2-ին գրավվում է կենտրոնական՝ Քարվաճառը Գանձակին (Գյանջա) կապող ճանապարհի խաչմերուկը, իսկ երեք օր անց հայկական ուժերն արդեն դիրքավորվում էին Օմարի լեռնանցքում: Խուճապահար դեպի Գանձակ փախչող բանակը մեծաքանակ ռազմավար է թողնում:

## ***Ամփոփում***

Քարվաճառի ազատագրման արդյունքում բացվում է ԼՂՀ-ն ՀՀ-ին կապող երկրորդ ցամաքային ճանապարհը, վերացվում է երկար սահման ունեցող Վարդենիսին սպառնացող վտանգը: Բացառվում է նաև հակառակորդի Լաչին-քելբաջարյան, միրբաշիրյան և աղդամյան զորախմբերի համաձայնեցված գործողություններով երեք ուղղությունից ևս մեկ մեծածավալ հարձակման հնարավորությունը, որով 1992-ի ամռանը հնարավոր էր դարձել տիրանալ Մարտակերտի տարածքի մեծ մասին և սպառնալ ԼՂՀ մայրաքաղաքին:

Քարվաճառի ազատագրման շնորհիվ ապահով են դառնում Արցախի հյուսիսարևմտյան սահմանները՝ ԻՊՈւ հրամանատարությանը թույլ տալով այս հատվածում ազատված ուժերը նետել ճակատի մյուս հատվածներ, իսկ ամռանը փայլուն իրականացնել Մարտակերտ քաղաքի ազատագրման և Աղդամի կրակակետերի ոչնչացման խոշոր գործողությունները:

## ՄԱՐՏԱԿԵՐՑ ՔԱՂԱՔԻ ԱՉԱՏԱԳՐՈՒՄԸ (1993Թ. ՀՈՒՆԻՍԻ 27)

Քարվաճառին հաջորդած մյուս խոշոր գործողությունը Մարտակերտ քաղաքի ազատագրումն է: Այն նաև ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի իրականացրած հրետանային ամենամեծ օպերացիան է, որին նախորդել էր նախապատրաստական մեծ աշխատանք: Մասնավորապես, հարձակման նախօրեին բոլոր կրակակետերը նշանափործված էին: Պաշտպանական շրջանն ուժեղացվել էր կենտրոնական ենթակայության խառը հրետանային դիվիզիոններով, «Դ-20»-ի երկու և համազարկային կրակի «ԲՄ-21» («Գրադ») կայանքների մեկական մարտկոցներով: Իսկ ՀՏ «Ֆագոտ» ռեակտիվ կայանքներն ու S-12 հրանոթներն ապահովում էին հարձակման հակատանկային պաշտպանությունը:

Հունիսի 13-ին սկսված գործողության ընթացքում Մարտակերտի պաշտպանական շրջանն ուժեղացվել էր Ասկերանի, Մարտունու, Կենտրոնական պաշտպանական շրջանների, Շուշիի գնդի, կենտրոնական ենթակայության ստորաբաժանումներով և հայաստանյան կամավորական ջոկատներով:

### *Ապատեղեկատվական գործողություն*

ԼՂՀ ՊԲ հրետանու պետ, հրետանու պաշտոնաթող գեներալ-մայոր Գեորգի Գասպարյանի ղեկավարությամբ բաց տեքստով խոշոր ռադիոխաղ է անցկացվում ամբողջ հրետանին շտապ Հաղորդ տեղափոխելու «թեմայով»: Սկսվելով երեկոյան ժամը 17.00-ին՝ այն ավարտվում է գործողությունից մեկ ժամ առաջ:

Պաշտպանության բանակի կապավորները ճշտել էին հակառակորդի հրետանու ռադիոկապի բոլոր հաճախականությունները, և հարձակման ժամանակ ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի մարտիկներից Գրիգորի Անդրյանը, մտնելով նրանց ռադիոթեր, մաքուր ադրբեջաներենով հաղորդելով կոորդինատները, հրետանուն կարգադրում է կրակել... յուրայինների վրա, ինչը մեծ շփոթի և խուճապի պատճառ է դառնում:

Ականանետային դիվիզիոնի հրամանատար, մայոր Սուրեն Անտոնյանն<sup>1</sup> ականանետային երկու մարտկոց գաղտնի դիրքավորում է հեռուստաաշտարակի շրջանում, հետևակից շուրջ երկու կիլոմետր առաջ և լավ քողարկելով ու հանդես բերելով բացառիկ ինքնատիրապետում, մինչ անհրաժեշտ պահը՝ հաջորդ կեսօր, իր տեղը չի մատնում: Հակառակորդի միրբաշիրյան զորախմբի փոխգործողությունն Աղդամում տեղակայված զորքերի հետ չեզոքացնելու

<sup>1</sup> Չոհվել է 1994թ. մարտի 18-ին Օմարի ճակատում, հրետանային հետախուզության ժամանակ:

նպատակով պայթեցվում է Քենգեռլի գյուղի մերձակայքում գտնվող կամուրջը, որը մեծ դժվարություններ է ստեղծում այդ ուղղությամբ գործող ադրբեջանական ուժերի հետագա գործողությունների համար:

### **Հաղթանակը**


Խաչենագետից մինչև Մաղավուզ ձգվող ճակատում և հատկապես քաղաքը երիզող բարձունքներում հակառակորդն ականադաշտերով և արգելափակոցներով հագեցած բազմաէջելոն պաշտպանություն էր ստեղծել: Սակայն դա չի խանգարում, որպեսզի հայկական ուժերը գրավեն նշված բնագծերն ու հունիսի 26-ին հասնեն ազատագրված Հակոբ Կամարիից մինչև հեռուստաաշտարակ ձգվող բնագծին:

Հաջորդ օրը վաղ առավոտյան հետևակը երկու հիմնական ուղղությամբ սկսում է հարձակումը, որի հրետանային պատրաստությունը տևում է 45 րոպե (տե՛ս քարտեզ 12.3): Լուսավորող արկեր չկային, և հրետանավորները կողմնորոշվում էին պայթյունների առկայծումով: Կենտրոնական պաշտպանական շրջանի ստորաբաժանումները գրոհում են Պուշկի յալն ու Փափրավենդը, Մարտակերտի գունդն առաջանում է Գեդագբուրունի ուղղությամբ, իսկ երբ Մարտակերտի շրջանի ինքնապաշտպանության կազմակերպիչներից Վլադիմիր Բալայանի<sup>1</sup> ջոկատի մարտիկները հասնում են շրջկենտրոնի վերին մասը, թաքստոցում դիրքավորված մարտկոցները նրանց աջակցում են ականանետային կրակով: Գունարտակի զոհված հրամանատար Սերուժան Մոսիյանի մարտիկներն էլ Լեոնարիսի ձախ մասում հարձակվողների թիկունքը պաշտպանում էին ճեղքումից: Ավելի ձախ «եղմիկներն» էին՝ գրավյալ Շահումյանի շրջանում պարտիզանական պայքար ծավալած մարտիկները Սերգեյ Չալյանի հրամանատարությամբ, որոնք հրետանային կրակի աջակցությամբ հասնում են Մատաղիս: Մինչև կեսօր ազատագրվում է Մաղավուզի քարհանքերի ձախ մասը, ապա ականանետերն են ապահովում հետագա հարձակումը: Հրետանին կրակի գիծն ընդամենը 100 մետր առաջ պահելով՝ աջակցում է հարձակվող հետևակին:

ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի հրետանին կրակով ապահովեց երեք գնդի և մի քանի առանձին գունարտակների հարձակումը մեծ ճակատում, տարբեր ժամանակներում իրականացվող և բավական բարդ գործողության ընթացքում: Դա առաջին նման խոշոր գործողությունն էր, որի ընթացքում համագործակցություն իրականացվեց հրետանու, մյուս զորատեսակների և մեծաթիվ հետևակի միջև զանազան ուղղություններում: Քաղաքը երիզող ռազմավարական նշանակության բարձունքները երեկոյան լրիվ ազատագրված էին:

<sup>1</sup> Զոհվել է 1992թ. հունիսի 9-ին, Չալյու գյուղի պաշտպանության մարտերում:

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԳՅՈՒՂԵՐԻ ԱՁԱՏԱԳՐՈՒՄԸ (1993Թ.)



1993թ. հակառակորդը Մարտակերտի ճակատում չորս ռազմական ինքնաթիռ և մեկ ուղղաթիռ էր կորցրել: Հունիսի 27-ին ադրբեջանական օդուժը չկարողացավ լուրջ օդային աջակցություն ցույց տալ իր զորքերին, որոնք, չկարողանալով դիմակայել մի քանի ուղղություններից սրընթաց զարգացող հարձակմանը, նահանջում են: Մարտակերտ շրջկենտրոնը երիզող բարձունքների՝ Պուշկի յալի և հեռուստաաշտարակի ազատագրումով քաղաքի մեծ մասը հայտնվում է արցախյան ուժերի վերահսկողության տակ: Ադրբեջանցիները Մարտակերտ քաղաքի մատույցներում հսկայական ռազմավար են թողնում, իսկ նրանց պաշտպանական ամրությունների զգալի մասը հողին էր հավասարվել: Հունիսի 1-ին հարձակման ընդհանուր շրջագծում ազատագրվում է նաև Լեռնարիսը:



**Գեներալ-մայոր  
Սերգեյ Չալյան**

### **Ամփոփում**

Ներքին Հռոմաթաղի ուղղությամբ ադրբեջանցիների հակահարձակման փորձերը վերջանում են նրանց կողմից զրահատեխնիկայի և կենդանի ուժի մեծ կորուստներով: Պարտված հակառակորդի հրամանատարության տարօրինակ վարքագծի վկայությունն է քաղաքային այգու և կարուսելի ականապատումը: Հատկանշական է, որ ԻՊՈւ սակրավորները 1992թ. ամռանը նահանջելիս՝ քաղաքում ականներ չէին տեղադրել, որովհետև հավատում էին Մարտակերտի ազատագրմանը:

Մարտակերտ քաղաքի դիրքն այնպիսին էր, որ կամ հակառակորդը պետք է այն վերստին հետ գրավեր, կամ էլ առջևում գտնվող հակառակորդի կրակակետի լռեցմամբ ճակատի գիծը պետք է առաջ գնար: Իրականացավ վերջինը, և շրջկենտրոնի ազատագրումը բացեց Արցախի զինված ուժերի ճանապարհը՝ նաև հարթավայրում մարտական գործողություններ իրականացնելու և Ադրանի կրակակետերը լռեցնելու համար:



**Մարտակերտի  
ազատագրման մարտերում  
զոհված հերոսների թվում  
էր «Խաչակիրներ» ջոկատի  
հրամանատար  
Կարո Քեիքեջյանը  
(1962-1993թթ.)**

## ԱՂՂԱՄԻ ԿՐԱԿԱԿԵՏԵՐԻ ԼՈՒՅՈՒՄԸ

Շուշիի ազատագրումից հետո Ստեփանակերտն ավերելու դերակատարությունը փոխանցվում է Աղղամին, որտեղից խփում էին 152 մ հեռահար հրանոթներով՝ միաժամանակ փորձելով ճեղքել Ասկերանի ուղղության պաշտպանությունը և ուղիղ գծով մտնել Ստեփանակերտ: Շուշիից հետո գերխնդիր է դառնում Աղղամի կրակակետի լռեցումը, իսկ քանի որ Հաղորդից բացի, ԼՂԲԸ բոլոր շրջանները սահմանակից էին Աղղամին, գործողությունը համաբանակալին ընդգրկում է ստանում:

### Ազատագրումը

1993-ի ամռանը ԼՂԲ Ինքնապաշտպանության ուժերը մի քանի ուղղություններով սկսում են Աղղամը շրջապատող հենակետերի լռեցման գործողությունը:

Ընդհանուր հարձակմանը նախորդում են դիրքային իրավիճակի բարելավման դժվարին գործողություններ, որոնցից հիշատակելի են հատկապես Աղղամ-Մարտակերտ սահմանագծում մղված հաջող մարտերը և կարևոր բարձունքների գրավումը: Այդ մարտերում էլ, Մարզիլու հենակետը ոչնչացնելիս, հունիսի 12-ին գրավում է Մարտունու պաշտպանական շրջանի հրամանատար, փոխգնդապետ Սոնթե Մելքոնյանը:

Հունիսի 20-ին ազատագրվում է Փոլադլուն, որը ճանապարհային կարևոր հանգույց էր: Հակառակորդը չէր հաշտվում Աղղամի կորստի հետ, ինչի վկայությունը Շեղիի մարտերն էին, ուր մեր ականները թշնամուն նաև զրահատեխնիկայի կորուստներ են պատճառում: Քաղաքի մատույցները ևս չի ականապատում՝ մինչև վերջին պահը հուսալով, թե ինքն է անցնելու հարձակման:

«Ուղտի մեջք» կոչվող բարձունքի հետևից հակառակորդը հրետակոծում էր Ստեփանակերտը: Առհասարակ, Աղղամի ազատագրման ժամանակ մեծաքանակ հրետանի էր կենտրոնացվել, ու պատերազմի ընթացքում հրետանային ամենազանգվածային կրակն է վարվել: Ինքնապաշտպանության ուժերի հրետանավորները պատասխանում էին, բայց քանի որ հրետանու զգալի մասը դեռ Մարտակերտում էր, հրետանավորները կարողանում են այդ կայանքները Կիչանում այնպես տեղաբաշխել, որ կարողանային և՛ հարվածել Աղղամին, և՛ դիմագրավել նաև Մարտակերտից հնարավոր հարձակմանը:

Հակառակորդին մոլորեցնելու համար սակրավորները սկզբում պայթեցնում են Մարաղայի մոտի կամուրջը, իսկ երբ հարձակումը զարգանում էր, անցնելով լրիվ չազատագրված ու կրակի տակ գտնվող տարածքով, պայթեցնում Աղղամ-Մարտակերտ կամուրջը, որպեսզի Միր Բաշիրից հասնելիք օգնությունը դանդաղեր և բնակչությունն ու զորքը խուճապի մատնվեին: Աղղամն ու Մարտունին միմյանց կապող կամուրջն էլ դիմադրության վերջին պահերին հակա-

ռակորդն է փորձում պայթեցնել, բայց համընդհանուր խուճապի պայմաններում այդ անել չի կարողանում:

Առաջնահերթ խնդիրն «Ուղտի մեջքի» գրավումն էր. առանց դրա անհնար էր գրավել Աղդամը: Սկզբուն ազատագրվում է Շորբուլաղի բարձունքը, ապա աջ կողմում զարգացնելով հարձակումը և դիմելով թևանցման՝ Ինքնապաշտպանության ուժերը սկսում են շրջապատել հակառակորդին:

Այս գործողությունը նաև վկայում է, որ և՛ պլանավորման ու կրակի կառավարման, և՛ կրակային խոցման ասպարեզներում, կենտրոնական ենթակայության հրետանուց զատ, բարձր մակարդակի է հասել նաև Ինքնապաշտպանության ուժերի ողջ գնդային հրետանին:

### **Հաղթանակը**

152 մմ հրանոթների կրակից քաղաքում մեծ հրդեհ է բռնկվում, որը երեք-չորս օր չէր մարում: Միայն հետո է պարզվում, որ վառվել է Աղդամը սնուցող հիմնական գազամուղը:

Հակառակորդը փորձում է օդից աջակցել քաղաքի պաշտպանությանը, բայց ապարդյուն: Աղդամի ազատագրման գործողության հակաօդային պաշտպանությունն իրականացնում էին երեք «ՕՍԱ-ՕԿ» մարտական մեքենաներ, որոնք հուլիսի 21-ին ինքնաթիռ են խփում, իսկ հաջորդ օրը՝ ուղղաթիռ:

Աղդամում խորհրդային ժամանակներում ինժեներական զորամաս էր տեղակայված, որի պահեստներում եղածը հակառակորդը որքան էլ ծախսել, բայց դեռ բավական սպառազինություն ու զինամթերք մնացել էր: Հակառակորդը նույնիսկ շարժվող ինժեներական տեխնիկան չէր հասցրել տանել: Վերցվում են նաև տանկի բազայի վրա տեղադրված տրալներ (ակամազերծող մեքենաներ), որոնք հաջողությամբ կիրառվում են Մարտակերտի ճակատում:

## **ԱՐՃԱՆԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ (1993Թ.)**

Ադրբեջանը կորցնելուց հետո, վերախմբավորելով ուժերը, ադրբեջանցիները ԼՂՀ հարավում փորձում են դիմել վճռական գործողությունների, սակայն Ինքնապաշտպանության ուժերը նրանց կանխող հարված են հասցնում: Արդեն օգոստոսին Լաչինի միջանցքի հարավային թևում և Արցախի հարավում ԼՂՀ Ինքնապաշտպանական ուժերն ու ՀՀ կամավորական ջոկատները Լաչինի միջանցքին, Սյունիքին ու ԼՂՀ հարավին սպառնացող թշնամական հեռակետերը ոչնչացնելու խնդիր են ստանում (տե՛ս քարտեզ 12.4):

Ծավալվում են ծանր մարտեր դժվարահաղթահարելի տեղանքում, ուր հակառակորդը լուրջ դիմադրություն էր ցուցաբերում: Օգոստոսի 15-ին Կենտրոնական և 1-ին պաշտպանական շրջանի ստորաբաժանումներն ազատագրում են Ցորը, ապա Բանագուրն ու Առաքյուլը, ինչից հետո մարտական գործողությունները տեղափոխվում են Ֆիզուլի-Չաբրայիլ-Ղուբաթլու հատված: Քայլ առ քայլ ազատագրելով 1991-ին բռնազավթված գյուղերն ու ոչնչացնելով շրջանին սպառնացող հեռակետերը՝ Մանվել Գրիգորյանի ղեկավարած 5-րդ կամավորական բրիգադի ստորաբաժանումները, Ֆիզուլին շրջանցելով հյուսիսից, արևմուտքից և հարավից, հայտնվում են քաղաքի թիկունքում. միայն նահանգի ճանապարհին էր բաց թողնվել:

### ***Ազատագրումը***

Ղուբաթլուի ուղղությունում հակառակորդը թեև հզոր պաշտպանական բնագծեր ուներ, սակայն նահանջում է: Լաչինի միջանցքի ուղղությամբ առաջ շարժվող զորքերը, ոչնչացնելով դիմադրության օջախները, շուտով գրավում են Կուրբանթեփեի լավ ամրացված բնագծերն ու առժամանակ դիրքավորվում այստեղ, իսկ մյուս ուղղությունում մեր ուժերը, շարունակելով զարգացնել հարձակումը, մոտենում են հիմնական ավտոճանապարհին և Բաշարաթին, ուր հակառակորդը լուրջ դիմադրություն է ցույց տալիս: Սակայն հրետանային հզոր աջակցության շնորհիվ այս հեռակետն ի վերջո նույնպես ազատագրվում է:

Հարավային ռազմաճակատի ողջ երկայնքով խուճապահար նահանջող ադրբեջանական զորքերին օդային աջակցություն ցուցաբերելու հակառակորդի փորձն ավարտվում է անհաջողությամբ. օգոստոսի 16-ին և 17-ին ոչնչացվում է Ադրբեջանի ռազմաօդային ուժերի երկու ինքնաթիռ:



**Տեղեկանք.** «Օգոստոսի 22-ին 1-ին և 2-րդ պաշտպանական շրջանների ստորաբաժանումների ճնշման ներքո ադրբեջանական 160-րդ գնդի, 702-րդ մեխանիզացված բրիգադի և Ադրբեջանի այլ տարածքներից այստեղ տեղափոխված թարմ ստորաբաժանումները հարկադրված էին թողնել Ֆիզուլի քաղաքը և շուրջ 1380 քառակուսի կիլոմետր տարածք ունեցող համանուն շրջանը: Հարձակողական մարտերը հաջողությամբ էին ընթանում նաև Ջաբրայիլի ուղղությամբ... Օգոստոսի 23-ին դարաբաղյան զորքերը մտան Լենքորանի գումարտակի կողմից պաշտպանվող Ջաբրայիլ շրջկենտրոն, իսկ երկու օր հետո հայկական ուժերի վերահսկողության տակ ընկավ 1050 քառակուսի կիլոմետր մակերես ունեցող համանուն շրջանի տարածքը»:

**Ա.Հասրաթյան, «Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները դարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում»**

Ֆիզուլու և Ջաբրայիլի անկումից հետո 1-ին և 2-րդ պաշտպանական շրջանների ստորաբաժանումները հարձակումը զարգացնում են Ղուբաթլուի ուղղությամբ: Շրջկենտրոնը շրջապատված էր, բայց բնակչության նահանջ թույլ տալու համար ԻՊՈւ հրամանատարությունը ստիպված էր երկու օրով կանգնեցնել հարձակումը, և շրջկենտրոնն ազատագրվում է օգոստոսի 31-ին: Ռազմավարական նշանակության հենակետի կորստյան դիմաց հակառակորդն անգորությունից վերստին փորձում է վրեժխնդիր լինել խաղաղ բնակչությունից, սակայն թանկ գին է վճարում. ԻՊՈւ ՀՕՊ ստորաբաժանումները Ստեփանակերտի երկնքում ոչնչացնում են մեկ ռմբակոծիչ, իսկ Մարտակերտի ճակատում մեկ ուղղաթիռ: Օգոստոսյան հաղթանակների արդյունքում սեպտեմբերի սկզբին հայկական ուժերի դիրքերը որոշ հատվածներում ընդամենը 4-5 կիլոմետր էին հեռու Արաքսից:

Ղուբաթլուի անկումից հետո Ադրբեջանի և ԼՂՀ-ի միջև կնքվում է կրակի դադարեցման մասին համաձայնագիր, և պայմանավորվածություն է ձեռք բերվում մինչև սեպտեմբերի 10-ը երկու ղեկավարների հանդիպման վերաբերյալ: Դրա արդյունքը լոկ կարճատև հրադադարն էր:

Փորձելով տիրել նախաձեռնությանը՝ հոկտեմբերի 10-ին Ադրբեջանը հարձակում է ձեռնարկում Կույջակ և Սաֆարշա բնակավայրերի ուղղությամբ (տե՛ս քարտեզ 12.4): Սակայն նույն օրը հայկական ուժերը գրավում են այդ հենակետերը, իսկ երկու օր անց՝ Նուզգյարն ու Շեյբեյը, և շարունակում զարգացնել հարձակումը: Հոկտեմբերի 24-ին Ինքնապաշտպանության ուժերը, մի քանի ուղղություններով զարգացնելով առաջխաղացումը, ճնշում են հակառակորդի խոշոր և կարևոր հենակետերից մեկը՝ Հորադիզի երկաթուղային հանգույցը: Վերջինս հարավային ռազմաճակատում թշնամու բանակը սնուցող հիմնական ուղին էր:

## **Հաղթանակը**

Մեր ուժերի գործողությունների արդյունքում Ջանգելանի, Ջաբրայիլի և Ղուբաթլուի դեռևս չազատագրված տարածքներում գտնվող ադրբեջանական զորքերը հայտնվում են շրջափակման օղակի մեջ: Իսկ նոյեմբերի 1-ին ազատագրվում են Ջանգելան շրջկենտրոնն ու հարակից հենակետերը. ադրբեջանական բարոյալքված բանակը Ջանգելանում և Մինջևանում այլևս անկարող էր լուրջ դիմադրություն ցուցաբերել: Փախչելով՝ հակառակորդը միայն Մինջևանում 14 վազոն զենք-զինամթերք է թողնում: Իսկ նախօրեին ԻՊՈւ ՀՕՊ ստորաբաժանումները «Իգլա» զենիթահրթիռային դյուրակիր համալիրով Ջանգելանի հատվածում ոչնչացնում են հակառակորդի ևս մեկ ռազմական ուղղաթիռ:

Արցախի հարավարևելյան սահմաններին սպառնացող հենակետերի ազատագրման ժամանակ զորամասային օղակի կապավորները, համագործակցելով միմյանց հետ, կարողանում են փայլուն իրականացնել կապի ապահովումը: Իսկ տարածքների ազատագրումից հետո կապավորները ձեռնամուխ են լինում մեկ այլ գործողության. դեռ խորհրդային ժամանակներից Ֆիզուլիից Կապան ձգվող ստորգետնյա խոշոր կապուղի կար, որը հակառակորդը վնասել էր: Այն արագ գտնվում է, նորոգվում, և այդպիսով ապահովվում է ուղիղ կապ Սյունիքի և ազատագրված տարածքների պաշտպանությունն իրականացնող զորամասերի հետ:

Հայկական ուժերի ամառային-աշնանային փայլուն հաղթանակների արդյունքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շուրջ ձևավորվում է անվտանգության գոտին, և մինչև դեկտեմբերի երկրորդ կեսը հաստատվում է հարաբերական խաղաղություն: Այն ընդմիջվել է միայն նոյեմբերի վերջին, երբ Սիսիանի կամավորները ծանր մարտերի արդյունքում ոչնչացրել են Խուդափերինի կամրջի մերձակա բարձունքներում գտնվող հակառակորդի վերջին հենակետը:

## **Ամփոփում**

Այսպիսով, ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի և ՀՀ Ջինուժի ու կամավորական ջոկատների՝ օգոստոսին սկսած հաղթարշավով ոչ միայն ազատագրվեցին 1991-ին տխրահռչակ «Օղակ» գործողության ընթացքում հայաթափված գյուղերը, այլև լրիվ ոչնչացվեցին Սյունիքում Գորիսի, Կապանի, Մեղրու, իսկ ԼՂՀ-ում՝ Հադրութի և Մարտունու շրջանների բնակավայրերին սպառնացող թշնամական հենակետերը:

## Պայմանական նշաններ



Հետևակի (մի քանի զորատեսակներից բաղկացած բանակների) հարձակում (գրոհ)<sup>1</sup>



Հեծելազորի հարձակում (գրոհ)



Մարտական գործողությունները երկրորդ փուլում (հեծելազորի գրոհը՝ միաթև սլաքով)



Մարտական գործողությունները երրորդ փուլում (հեծելազորի գրոհը՝ միաթև սլաքով)



Հետևակի գրոհի կամ զորաշարժի շարունակման ուղղություն (հեծելազորը՝ միաթև սլաքով)




Հարձակումը կասեցվել է (հայոց բանակի դաշնակից ուժեր և հակառակորդի նշանը համապատասխան գույնով, հեծելազորը՝ միաթև սլաքով)



Հետևակային ուժերի նահանջ (հայոց բանակի դաշնակից ուժերի և հակառակորդի նահանջի նշանը համապատասխան գույնով, հեծելազորը՝ միաթև սլաքով)



Հետևակի մարտակարգը մարտադաշտում (հայոց բանակի դաշնակից ուժերի և հակառակորդի մարտակարգի նշանը համապատասխան գույնով)



Հետևակի հարձակումը (գրոհը) մարտական գործողության (ճակատամարտի նշված փուլի) ավարտին (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում)



Հեծելազորի մարտակարգը մարտադաշտում (հայոց բանակի դաշնակից ուժերի և հակառակորդի մարտակարգի նշանը համապատասխան գույնով)

<sup>1</sup> Մարտավարական բոլոր նշանները գունավորված են հետևյալ սկզբունքով՝ հայոց բանակ և համատեղ ուժեր՝ կարմիր, հայոց բանակի դաշնակիցները՝ նարնջագույն, հակառակորդ՝ կապույտ:




Հետևակի գրոհի անցման բնագիծն ու գրոհի ուղղությունը (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում)



Թեթևազեն հետևակի կամ ծանրազեն հետևակի երկրորդական նշանակություն ունեցող զորամասերի ուժերով հասցվող ոչ մեծ հարվածների ուղղությունը



Հեծելազորի կենտրոնացման տեղամաս



Հարձակում իրականացնող հետևակային զորամասի ջախջախում (հեծելազորը՝ միաթև սլաքով)



Պայմանագրի կնքման վայր



Անրոցի կամ այլ տեսակի անրության պաշարում



Լեռներ (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում)



Հրամանատարական դիտակետ (զորավարի վրան)




Անրոցներ կամ անրացված բնակավայրեր (միայն սխեմաների վրա)




Ճակատամարտի վայր (միայն քարտեզների վրա)



Մայրաքաղաքներ (ներառյալ՝ այդ պատմական ժամանակաշրջանում մայրաքաղաք չհանդիսացող քաղաքներ)



Այլ բնակավայրեր



Վիճելի (կամ՝ ռազմական գործողությունների հետևանքով ռազմակալված) տարածք: Նշվում է վիճարկող պետությունների գույներով:




Բանակի երթակարգը (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում): Կարող են առանձին ցույց տրված լինել մարտավարական առումով կարևոր այլ բաղկացուցիչներ, որոնց առանձնացումը կարևոր է իրավիճակի առավել ամբողջական բացատրության համար



Ջետակի (մի քանի զորատեսակներից բաղկացած բանակի) հարձակման մոտակա խնդիր (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում)



Ջետակի (մի քանի զորատեսակներից բաղկացած բանակի) հարձակման հետագա խնդիր կամ հարձակումը շարունակելու ուղղություն (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում)



Ջետակի (մի քանի զորատեսակներից բաղկացած բանակի) խմբավորումը կամ անկանոն դասավորությունը գրոհ իրականացնելու նպատակով (հայոց բանակի, դաշնակից ուժերի և հակառակորդի նշանը՝ համապատասխան գույնով, հեծելագործ՝ միաթև սլաքով)



Չորիզոնի կողմերը (միայն այն ճակատամարտերի սխեմաների վրա, որոնցում ընդունված կարգը (հյուսիսը՝ սխեմայի վերևի կողմում) խախտված է)




Նետածգության (տեգածգության, պարսաքարերի նետման և թեթևագեն հետևակի ստորաբաժանումների կողմից հասցվող այլ կարգի խոցման) հիմնական ուղղություն (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում)



Հրամանատարական նավ (միայն սխեմաներում և սխեմատիկ պատկերներում): Նշվում է մարտակարգում նավի համարը և այլ կարևոր տեղեկատվություն: Առագաստը և հրամանատարական դրոշը գունավորվում են ըստ ընդունված կարգի



Մարտին մասնակցած մյուս նավերը (միայն սխեմաներում և սխեմատիկ պատկերներում): Մարտակարգում նավի համարից բացի կարող է նշվել նաև նավում գտնվող ստորաբաժանման կազմը, ցույց տրվել նավի ցռուկը և այլն



Գումակ: Բեռներ տեղափոխող ու անասնահոտեր արածեցնող անձնակազմի տեղը զորքի երթակարգում (ներառյալ՝ բեռների անվտանգությունն ապահովող զինված ստորաբաժանումները): Գունավորվում են ըստ ընդունված կարգի



Ոչ ռազմական կառույցի պարիսպ կամ այլ տիպի ցանկապատ:



Պաշտպանական բնագծեր, դաշտային ամրություններ և դիրքեր (հայոց բանակի, դաշնակից ուժերի և հակառակորդի նշանը՝ համապատասխան գույնով):

**Նշումների համար**

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ  
2014

*Նախագծի ղեկավար և հեղինակ*  
**Գագիկ Հարությունյան**

*Հեղինակային խմբի ղեկավար*  
Սուրեն Մարտիկյան

*Ռազմական խմբագիր*  
Վահան Կարապետյան

*Հեղինակային խումբ*  
Սուրեն Մարտիկյան  
Արտակ Մովսիսյան (պ.գ.թ.)

Վահան Մկրտչյան

Ռուբեն Սահակյան (պ.գ.դ.)  
Տիգրան Դևրիկյան  
Արծրուն Հովհաննիսյան (պ.գ.թ.)

*Ռազմական քարտեզների հեղինակներ*  
Սուրեն Մարտիկյան  
Արտակ Մովսիսյան

*Քարտեզագիր*  
Տիգրան Վարդանյան

*Քարտեզագրական հիմք*  
Վազգեն Ղազարյան

*Ձեռքերի գծանկարիչ*  
Թագուհի Հնայակյան

*Տեխնիկական խմբագիրներ*  
Խոնարհիկ Քարաուղլանյան  
Լուսինե Բաղդասյան

*Ձևավորում և էջադրում*  
Արմեն Բարիշյան